ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction - Administration : 32, Rue de Trévise, Paris 9e

Fondé en 1925 — Tél. : PRO. 86-60

R. C. Seine 57 A 2731 — C. C. P. PARIS 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա եւ գաղութներ, տարեկան 3000 ֆր. վեցամս. 1600

Արտասահման՝ տարեկան 3500 ֆրանք : Հատը 12 ֆր.

ԿԻՐԱԿԻ 1 ԴԵԿՏԵՄԲԵՐ ▨ DIMANCHE 1er DECEMBRE 1957

33ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8057 — 33e ANNEE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 13ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3858

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ԺԱՄԱՆԱԿ Է, ՈՐ ՍՔԱՓԻՆՔ

Խօսելով Ֆրանսական ձայնասփիւռին «Միջպետական փոխանականութիւններ»ու չարքին մէջ Վոսփորի Արձագանգները անունով Թրքական բաժինի մը հաստատման մասին, կը դրէինք (Յառաջ, 8 Մարտ) :—

« Իսկ ի՞նչ կ'ըսենք մեծ :

Պատահականութեան ձգած ենք ամէն բան : Տարին հանի մը անգամ հայկական պատարագը կը ձայնասփռուի : Երբեմն ալ հայկական երգապնակներ կը լսուին, ըստ բախտի : Ատով կը գոհանանք ու հանգիստ կը ճնանանք » :

Ու յիշելով հիւսիսային եւ հարաւային Ամերիկաներն ու Լիբանանը, ուր մեր հայրենակիցները ունին իրենց Հայկական փառը, կը թելադրէինք, որ գոնեպան կազմակերպութիւններ իրարու մօտ գալով, պիտանի ուժերը դործի մղելով, դիմեն պատկան իշխանութեանց՝ Ֆրանսայի մէջ եւս ունենալու համար նման լրատուութիւնք մը :

Շատ համեստ էր մեր պահանջը, չըսելով թէ մէկ ժամ, այլ fաnորդ ժամ :

Կը հրաւիրէինք մանաւանդ մեր երիտասարդները — նոր սերունդ եւ ուսանող— որ հրապարակ գան եւ ցոյց տան իրենց ջնորհքը :

Ի վերջոյ ունինք այս երկրին մէջ ծրնած, ուսում առած եւ բնիկ տեղացինեբուն հաւատար ամէն իրաւունք վայելող երիտասարդութիւն մը, որ չատնոյ պլած անցած է չափահասութեան տարիքը :

Այս սերունդը ինչո՞վ կ'արդարացնէ իր հայկական ծագումը :

Կը ճանչնանք բազմաթիւ երիտասարդներ, որոնք բարձր դիրքերու տիրացած են եւ սկսած համբաւ չինել : Ոմանք նոյնիսկ բարեկամութիւն հաստատած են պաշտօնական անձնաւորութեանց հետ եւ յարաբերութեանց լայն շրջանակ մը բացած :

Ինչո՞ւ համար ի նպաստ հայութեան չօգտագործէին անոնք իրենց կապերը :

Գիտենք, որ չատ դժուար է հայկական բաժին մը ունենալ Ֆրանսական ձայնասփիւռին մէջ : Հրեաները յաջողած են կրօնական գետնի վրայ ունենալ իրենց չաբաթական «Լոյ՛ Իսրայէլ»ը : Ֆրանսայի Հրեաներուն թիւն է նուազագոյն 300·000 հոգի : կան ուրիչ օտարազգիներ ալ, որ Հայերուն չափ կամ մեզմէ աւելի թիւ մը կը ներկայացնեն Ֆրանսայի մէջ :

Եթէ հնարաւոր չըլլայ Ֆրանսայի աղդային ձայնասփիւռին մէջ անկիւն մը ապահովել, կարելի է փորձել «Լիւքսէմպուրկը» եւ «Եւրոպա թիւ 1»ը :

Մինչ մենք կը սպասէինք, որ մեր երիտասարդները պիտի յաջողէին Հայկական բաժին մը մտցնել Ֆրանսական ձայնասփիւռին մէջ, աչխատակից մը ահազանդ կը հնչեցնէ թէ Ցունաստրէն սկսեալ պիտի դադրեցնեն նոյնիսկ հայկական պատարագին ձայնասփռումը : Այս փոքրիկ մըխիթարութենէն ալ պիտի դրկեն Ֆրանսահայութիւնը : (Յառաջ, 26 Նոյ·) :

Պատճա՞ռ : Որովհետեւ ժողովուրդը անտարբեր է եւ իր նամակներով չի քաջալերեր Ֆրանսական ձայնասփիւռի այն կազմակերպութիւնը, որ կը դբաղի «հայկական պատարագ»ով, որ մեր եկեղեցական դմայլելի երգեցողութեանց միջոցաւ հայ ազդին եւ անոր դարաւոր մշակոյթին փառաբանութիւնը կ'ընէ, որ ո՛չ միայն Ֆրանսայի, այլ — մինչեւ Մերձաւոր Արեւելք — օտար երկիրներու ժողովուրդներուն կը ծանօթացնէ մեր քաղաքակրթութիւնը :

Ժամանակ է, որ սթափի՛նք մեր թմրութենէն եւ գործի լծենք մեր երիտասարդութիւնը : Հրապարակ քաչե՛նք բոլոր բարեմտին եւ օգտակար տարրերը, որոնք կրնան փոքրիկ ծառայութիւն մը մատուցանել մեր բազմաչարչար ժողովուրդին՝ այս հիւրընկալ երկինքին տակ :

ՀՐԱՆՏ – ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԱԼԺԵՐԻՈՅ ՕՐԷՆՔԸ ՔՈՒԷԱՐԿՈՒԵՑԱՒ

200Ի ԴԷՄ 269 ՁԱՅՆՈՎ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԻՆՔԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆ ԱՒ՝ 200Ի ԴԷՄ 267 ՁԱՅՆՈՎ

Ուրբաթ գիչեր Ազդ· ժողովը երկու անդամ վաստահութիւն տուաւ Վարչապետ Կայեսի, առաջին անդամ սեպտեմբեր վերջ դրուած էր Ալժերիոյ հիմնական օրէնքը, որ պատճառ դարձած էր արդէն նախորդ դահլիճին տապալման :

Ժողովը առիթ տուաւ սակայն բուռն վէճերու եւ միջամտութիւններու : Վարչապետ Կայեսի, առաջին անդամ սեպտեմբեր վերջ դրուած էր Ալժերիոյ հիմնական Օրէնքին անհրաժեշտութիւնը : Շեշտեց մանաւանդ թէ Ֆրանսաներբեքանկախութիւն չի չնորհեր Ալժերիոյ եւ որեւէ ձեւով ալ դլուխ-դլխի չիկրնար նսեմել եւ բանակցիլ Աղդային Ատատադրական ճակատին հետ : Կայեսի յիչեց նաեւ որ Ֆրանսան ընդառաջ չի կըրնար երթալ Մարոքի եւ Թունուզի առաջարկին, եւ թէ լաւագոյն կ'ըլլայ որ այս վերջիններս հասկցնեն իրենց չահը կը պահանջէ որ ականջալուր ըլլան Ֆրանսական առաջարկներուն :

Վարչապետէն հետք խօսք առաւ Մենեէս Ֆրանս : Նախկին Վարչապետը ընդունեց որ ուղիղ պարպել Հիմնական-Օրէնքին թերի կողմերը : Նախ քան իրեն, այդ օրէնքին հիմնական սխալը Իսլամներու մասնակցութեան պակաս ն է· յետոյ Մենեէս – Ֆրանս կը գտնէ թէ Հիմնական Օրէնքին կարգադրութիւնները անհիլնական չեն եւ ենթակայ այդպիսի պայմաններու որ անորոչ ապագայի մը կը մնան :

Մենեէսի ճառը միչտ կ'ընդմիջուէր ծայրայեղ – ազատագրականներէն եւ բուժամականներէն, բայց նախկին վարչապետը չարունակեց, յիչելով թէ 1947ի կանոնագիրը Ալժերիոյ համար աւելի լաւ էր եւ եթէ իրագործուէր չատ աւելի լաւ կ'ըլլար քան Հիմնական Օրէնքը : Այս յայտարարութիւնը առիթ տուաւ որ Սուսթել եւ Լաքոստ բուռն միջամտութիւնները ընեն եւ աւելի եւս մթնոլորտը տաքցուի : Ընկերվարական երեսփոխան մը պատասխանելով Մենեէսի յայտարարութեան բաւ· — «եթէ այդպէս էր ինչո՞ւ դուք չգործադրեցիք (47ի ծրագիրը) երբ իչխանութեան դլուխն էիք » :

Մենեէս·— «կը յիչեցնեմ որ ճիշդ դործադրելիք առենն էր որ գահլիճս տապալեցաւ ...» :

Պ· Մենեէս Ֆրանսին անկարելի եղաւ սակայն խաղաղ միջավայրի մը մէջ վերջացնել իր ճառը, իր դէմ աղերսութիւնը բուժամականներէն անցած էր արդէն եւ տարածուած, ամբողջ Ազդ· ժողովին մէջ Մենեէսին կողքին կը մնային միայն համայնավարները եւ ընկերվարական փոքրամասնութիւնը :

Մենեէսի եղրակացութիւնը լսել դրեթէ անկարելի կ'ըլլայ, Խօրհ երեսփոխանը երեք անդամ կը սկսի նախադասութիւնը·— « Իմ հայրենասիրական ամբողջ թափովս ... », բայց ապմուկը կը չատնայ, մինչ համայնավարները կը ծափահարեն : Խորհրդութիւնը վերահաս – տատելու համար նախադահ Լը Թրոքէռ հինդ վայրկեան դադար կուտայ երեսփոխաններուն :

Ճայնարդ խօսողն է Ժակ Սուսթել : Ազ – ժերիոյ նախկին կուսակալը հակասութիւն մը կը տեսնէ Հիմնական Օրէնքին եւ արտաքին նախարար՝ Փինոյի յայտարարութեանց միջեւ : Կ'ուղէ հասկնալ թէ ի՞նչ

ԱՁՔՆՀԱՒՈՒԸ ԱՌՈՂՋԱՑԱՒ

Ուրբաթ օր Նախագահ Այդընհաուըր մեկնեցաւ կեթիսպուրկի իր ապարանքը՝ հանդստանալու համար : Միացեալ Նահանգներու Նախագահին առողջութիւնը բոլորովին բարելաւուած է եւ միջազգային քաղաքական շրջանակները հանդստացած են : Նիւ Եորքի սակարանն ալ, որ կարեւոր անկում մը արձանագրած էր Այդընհաուըրի հիւանդութեան առաջին օրն իսկ, վերապտաւ իր բնական վիճակը :

Այդընհաուըր չատ արագ ապաքինում մը ունեցաւ եւ բժիչկները որեւէ անպատեհութիւն չեսան որ մինչեւ իր ամբանոցը ճամբորդէ :

Հաւանական է որ նախագահը մօտ մէկ չաբաթ մնայ կեթիսպուրկի ապարանքը :

րսել կ'ուզէ Փինօ երբ ազատ ընտրութիւններու մասին կը խօսի :

Վաստահութեան քուէարկութենէն առաջ խօսք կ'առնէ նաեւ Ժորժ Պիտօ, որ խօսքի իր սովորական վարպետութեամբ կը պատասխանէ մասամբ Մենեէս Ֆրանսի : « կարելի չէ չարունակաբար յանցաւոր պահել իր երկիրը» կ'ըսէ նախկին վարչապետը :

Եւ Պիտօ կը չարունակէ·— «1954ին երբ Մենեէս Ֆրանս վարչապետ էր կը յայտարարէր «Ալժերիան Ֆրանսական նահանգ է եւ ոչ մէկ կառավարութիւն կրնայ ընդունիլ որ անկախ Հանդապետութենէն » : Անմիջապէս միջամտելով Մենեէս կ'ըսէ· «Ձեմ հերքեր 54ին, 55ին բաժնելս, բայց մէկ պայմանով, որ ընդունիք թէ եթէ իմ դահլիճս կարենար 1947ի կանոնադիրը դործադրել այս դէպքերը չէին պատահեր» :

Պիտօ·— « Ձեր յայտարարութիւնները պայմանաւոր չէին, կ'ըսէիք Ալժերիան Ֆրանսան է եւ ոչ թէ Ֆրանսան է եթէ ...» , Պիտոյի այս պատասխանը կ'ընդունուի բուռն ծափահարութիւններով ծայրայեղ – ազ, ազ եւ կեդրոնի երեսփոխաններուն կողմէ : Եղրակացնելով Պիտօ կը յիչէ Էմիլսոնի մէկ խօսքը· — « Ան որ ոտքի կը մնայ պաչտպանելու համար իր դատը, ամբողջ աչխարհը իր կողքին կ'ունենայ դինքը պաչտպանելու համար» :

Խօսք կ'առնէ նաեւ Ֆ· Միթերան : Դիւերան նիստին քանի մը երեսփոխանի կարճ ճառերէն ետք, ժամը տասնին վարչապետը կը պատասխանէ եղած հարցումներուն, եւ ժամը 11ին կը սկսի քուէարկութիւնը : Քուէի իրաւունք ունին միայն ներկայ երեսփոխանները :

Վերջապէս 269 թեր եւ 200 միայն դէմ (համայնավար, արմատական, քանի մը ընկերվարական) ձայնով Ալժերիոյ Հիմնական Օրէնքը քուէարկուեցաւ : 267 ձայնով ալ քուէարկուեցաւ ընտրութեան օրէնքի բարեփոխումը :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԻՏԱԼԻՈՅ մէկ հօթանասուն հազար ուսանողներ որոչեցին երկու օրուան դասադուլ ընել՝ բողոքելու համար համալսարանին եւ դիտական փնտռտուքներուն պետութեան յատկացուած նիւթական օժանդակութեան անբաւարարութեան դէմ :

ԵԳԻՊՏՈՍԻ մէկ ոստիկանութիւնը տաս ժամ տեւող հարցաքննութիւն մը ըրաւ « Ռանժ » բեռնատար նաւուն նաւաստիներուն, որոնք կը նաւարկէին Հարաւ· ափրիկեան ղրօչի մը տակ : Եգիպտոսի իշխանութիւնները կը կարծեն թէ այս նաւը կը պատկանի Իսրայէլացիներուն եւ տակաւին 15 օր առաջ կը կոչուէր « Քիւն » եւ կը կրէր իսրայէլեան ղրօչակ :

ԵՐԵՔ ԵՐԳ

—o—

1

Ձնծաղիկը ելաւ ձիւնից, —
Քո այտե՛րը, ֆո այտե՛րը ·
Մանուշակը ժպտաց անքիծ , —
Քո աչքե՛րը, ֆո աչքերը :

Առուի ափին ուռին չահել, —
Քո հասա՛կը, ֆո հասա՛կը ·
Աչուշ հովից դող է առել, —
Քո նազա՛նքը, ֆո նազա՛նքը :

Արեւ ելաւ դէմի սարից, —
Քո ժպի՛տը, ֆո ժպի՛տը ,
Ամպը եկաւ, ծածկեց նորից ,—
Ա՛խ, ֆո սի՛րտը, պաղ ֆո սիրտը ...

2

Մոլորուե՛լ եմ, մոլորուել եմ
Քո նազերի ծովերի մէջ,
Քո մազերի անտառի մէջ,
Քո նախատի ձիւների մէջ,
Մոլորուե՛լ եմ, մոլորուե՛լ եմ :

Մոլորուե՛լ եմ, մոլորուե՛լ եմ
Քո յօնքերի շանթերի մէջ,
Քո աչքերի գիշերի մէջ,
Թարթիչներիդ փշերի մէջ
Մոլորուե՛լ եմ, մոլորուե՛լ եմ :

Ձիւնից դուրս գամ՝ դէմս ծովն է,
Քո անտառն է, ֆո գիշերն է,
Դէպի սիրտդ ճամբան ո՞րն է,
Մոլորուե՛լ եմ, մոլորուե՛լ եմ ...

3

Աղբիւր եմ ես, կուգամ սարէն,
Կուգամ սարէն, կուգամ բարէն,
Կուգամ ելման ու վա՛ր կ'երթամ ·
Դու չես հասնի, վարա՛ր կ'երթամ :

— Աղբիւր ես դու, սարէն կուգաս,
Սարէ՛ն կուգաս, բարէ՛ն կուգաս ,
Ես ջրուոր եմ՝ էդ սարերէն,
Էդ ժայռերէն բար կը բերեմ ,
Քեզ կը բանտեմ, քեզ կը տանեմ ,
Արտերիս մէջ քեզ կը հանեմ
Դու գլգլա՛ս իմ արտի մէջ,
Իմ արտի՛ մէջ, իմ արտի մէջ...

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ

ՀԱՄԱՁՆԱՎԱՐ ՉԻՆԱՍՏԱՆԻ Պատերազմական նախարարը, որ Մաօ Ցէ Թունկի մեկնելէն վերջ ալ Մոսկուա մնաց, Մ· Միութեան Պատերազմական նոր նախարար մատնչալ Մալինովսկին հրաւիրեց Չինաստան : Մոսկուայի դիւանագիտական շրջանակներուն կարծիքը այն է, թէ Մ· Միութեան եւ համայնավար Չինաստանի միջեւ զինուորական կարեւոր համաձայնութիւն մը պիտի կնքուի :

Չիլիի եւ Վենեզուելայի միջեւ դիւանագիտական յարաբերութիւնները խզուեցան : Պաշտօնական դեկոյցի մը մէջ, Չիլիի կառավարութիւնը կը յայտնէ թէ Վենեզուելայի իր դեսպանը եւս կանչեց :

Իծնիի մէջ մարոքցի ապստամբները դադրեցնելու համար, սպանական օդանաւային ուժերը ռմբակոծած են այն շրջանները՝ որոնք կը պանուին ըմբոստներուն ձեռքը : Մարոքի արքայական բանակը միջամտութիւն չէ ըրած :

ԻՏԱԼԱՑԻ դիւանագէտ մը՝ Սփինելլի ՄԱԿի Եւրոպայի դիւանին անօրէնութեան ընդհանուր քարտուղարի փոխանորդ նչանակուեցաւ՝ Համմարչոլտի որոչումով :

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԳԵՐՄԱՆԻՈՅ Հանրապետութեան Նախագահ Հէօս, որ Հռոմ պատած էր, Պոնն վերադարձաւ :

(Լուրերու շար·ը կարդալ Դ· էջ)

ՇԱՐԺԱՆԿԱՐ

“ԴԱՌՆ ՅԱՂԹԱՆԱԿ”

Նիքոլաս Բէյ, այս անունով ժապաւէնին բեմադիրը, կը պատկանի արուեստագէտներու այն դպրոցին, որ կը ձգտի յեղաշրջում մը կատարել շարժանկարի մինչ այդ չօշափած նիւթերուն ներկայացման մէջ։ Այդ դպրոցին աչքառու դէմքերէն էլիա Գազան, Րոպէր Ալտրիխ, Տէլմէր Ման, Տէլմէր Տէվս եւ նոյն ինքն Նիքոլաս Բէյ, այս վերջին տարիներու ընթացքին, իրենց արտադրութիւններով նոր չունչ մը մտցուցին ամերիկեան շարժանկարին մէջ։ Ընկերային հարցերը ինչպէս նաեւ հոգեկան կամ հոգեխոտա – բանական վերլուծումները կարեւոր դեր մը խաղացած են այս արուեստագէտնե – րուն առեղծագործութեանց մէջ ։

Բրնէ Հարտիի այս վէպը ժապաւէնի վերածելով, Նիքոլաս Բէյ յաջողած է առաջին պատկերէն մինչեւ վերջինը մատնիտացնել հանդիսատեսը ։

Հիւսիսային Ափրիկէի մէջ պատահած պատերազմական դրուագ մըն է, զոր կը պատկերացնէ այս ժապաւէնը։ Անգլիա – կան ջոկատ մը հրաման ստացած է յար – ձակելու գերման հրամանատարութեան կեդրոնատեղիին վրայ, կարեւոր փաս – տաթուղթեր ձեռք ձգելու համար։ Այս վտանգաւոր ձեռնարկը կը յանձնուի հր – բամանատար Պրէնտին։ Անոր պիտի րն – կերանան տասնեակ մը դինուորներ, ինչ – պէս նաեւ երիտասարդ տեղակալ Լէյթը։

Երբ ջոկատը տեղ կը հասնի, հրամա – նատար Պրէնտ քաջութիւնը չունենար իր ձեռքի դաշոյնով, սպանելէ գերման պա – հակ մը։ Երիտասարդ տեղակալը տեսնե – լով հրամանատարին դողդոջ ձեռքը, ինքը յանձն կ'առնէ պահակը մեռցնելու խիստ դործը։ Այս միջադէպէն վերջ ձեռնարկը յաջող կերպով կը դործադրուի եւ ջոկատը ճամբայ կ'ելլայ դէպի իր բանակատեղին ։

Մինչեւ հոս Նիքոլաս Բէյ տարած է ա – նուրանալի յաղթանակ մը։ Ան գիտցած է յաջող կերպով պատկերացնել պատերազ – մական չքնաղ մը մթնոլորտը։ Մարդկա – յին վախը, սարսափը, եւ հերոսութիւնը դանազան դրուագներու մէջ պատկերաց – ուած են այնքան հարազատօրէն որ կա – րելի չէ բեմադրութեան մասին խօսիլ ։ Եւ շարժանկարի բեմադիրին համար կա – րեւոր առաքինութիւն մըն է իր բեմա – դրութիւնը ցոյցուն չդարձնելը ։

Բայց ժապաւէնին երկրորդ կէսին մէջ Նիքոլաս Բէյ կը սկսի փլիսոփայել։ Ան իրրեւ խորունկ մտածող արուեստագէտ չուզէր իրենց պարզութեանց մէջ ներկա – յացնել դէպքերը, առանց չօշափելի ի – մաստ մը տալու անոնց։ Այս ժապաւէնով ալ Նիքոլաս Բէյ ուզած է ցոյց տալ մե – զի, որ պատմութեան առջեւ ներկայաց – ուող հերոս մը յաճախ չի տարբերիր հա – սարակ անձրադործէն։ Այս պարագային այդ հերոսը հրամանատար Պրէնտն է։ Թէ ի՞նչպէս։ Հրամանատարը ամէն առտուն միջոց ի գործ կը դնէ անհետացնելու հա – մար տեղակալ Լէյթը։ Չէ՞ որ տեղակալը միակ վկան էր որ իր վախկոտութեան ա – կանատես եղած էր։ Անոր անհետացու – մով միայն կարելի է փրկել իր դինուրա – կանի պատիւը։ Այս ոճիրին դործադրու – թիւնէն վերջ Պրէնտ կը պարզեւադրուի հերոսի չքանչանով։ Ահա ինչու «Դառն Յաղթանակ»։

Դէմ չեմ, կուրքեր տապալելու դպա – տին, նոյն քուրձը, նոյն խարազը ։

Այսպէս, կը կրկնենք ինչ որ սորվեր ենք տարիներ առաջ։ Կը քալենք կ'ելլենք թանք մեռելներու պէս, ականջ խցած եւ աչք խփած։ Աչակերտական արտասանու – թիւն դարձաւ ազգապահպանում հոլովել, դպրոցական ճարտասանութեան ձեւ ա – ռաւ բառնցք բարձրացնել ճուլման վը – տանգին դէմ եւ ... լաւ մարկ ըրէք այս – տեղ,— ժամանակին, կը բաւէր յանդ կազմել Մասիս լերան անուամբ՝ բանաս – տեղծ հոչակուելու համար համազդային չափանիշով, այսօր պիները ա՛նքան ին – կած են Հայոց մաքի անդաստանին մէջ, որ բաւական է էջմիածին պռոալ... քու – նի մէջ՝ յայտարարուելու համար ազգա – սէր հարիւր տոկոսով։

Քիչ մը փիւտէօր, եղբայրք պատուա – կանք։ Մանաւանդ քիչ մը ցած խօսեցէք այդպիսի նիւթերու մասին՝ յանուն ա – մօթխածութեան։ Վերջապէս ամէնքս նոյն տարիքը չունինք, եւ եօթանասունոց պառաւներ չենք։ Ի վերջոյ, կրօնական համայնք չէ՛ այս ժողովուրդը, որ ա՛զգ էր ժամանակին՝ իր պատմութեամբ եւ քաղաքակրթութեամբ, ու վճռած է ա՛զգ պառնալ նորէն՝ հաղորդակից մնալով օր – ուան մտաւորական յեղաշրջումներուն ։ Հաւատացէք որ երբեմն կ'ամչնամ որ Հայ եմ՝ երբ կը լսեմ խելացնոր ազմուկը, որ կը բարձրանայ անխմաստ աղաղակներով, ժամանակավրէպ բացատրութիւններով եւ պառաւական պահանջներով ։ Գիտեմ թէ ո՛վ կայ խամճիկային այս թատերա – խաղին բեմին եռեւ, — այնքան օտար՝ որքան չնական ստուերներ, — բայց դե – րակատարներուն մէջ ամէնէն զզուելին – րը այն կարգ մը նոր հարուստներն են, ո – րոնք կ'ուզեն պատմութեան մէջ մտնել՝ միաժամանակ չմտալով իրենց մտաւորա – կան ազքատութեան ստորագրագութեան ցաւը ծածկել նիւթական հարստութեամբ եւ... էջմիածնասիրութեամբ ։

Կ'ուզէի որ Հայ դրագէտը, — կոչումով եւ պատրաստութեամբ արժանի այդ ան – ուան, — ոտքի կանգնէր պահ մը եւ հար – ցընէր իրրեւ իրաւագէտ ։

— Հայրենակիցնե՛ր, որո՞ւն ապրանքը որո՛ւ կը ծախէք այսպէս։ Հին Աթէնքն ալ ունէր իր լումայափոխները եւ բովի – ճայքի վաճառականները ապրանքու վը – բայ, բայց բովանդակ Ելլադան մնաց եւ կը մնայ Արիստոտէլներու, Պղատոններ – րու, Պինդարոսներու, Եսքիլէսներու, Եւրիպիդէսներու անկապուտ հարստու – թիւնը ։

Երկա՛ր տեւեց այս առուծախը, — մին ծախեց Ապր. Սահմանադրութիւնը յանուն ... էջմիածնասիրութեան, միւսը՝ ըմ – պիւռքը՝ յանուն ... միասնականութեան, բայց ոչ այն որ կը ծախէր Սահմանա – դրութիւնը՝ դիտէր թէ ի՛նչ յիմարութիւն կը գործէր, ոչ ալ այն որ կը ծախէր Սիփւռքին ազատութիւնը։ Արդ, Սահմա – նադրութեան ջնջումը պայմանաւորուած չէ երբեք Օսմ. կայսրութեան փլուզու – մով, վասնզի Հայոց Ազգ. Սահմանա – դրութիւնը Ողի է մխայն։ Գալով այն վէ – ճին, որու մէջ չատ կը հոլովեն թեմ բա – ոը, կը թուի թէ էջմիածնի մէջ գաղա – փա՛ր չունին թեմ բառին նշանակութեանց մասին, կամ դէթ կը չփոթեն տարբերու – թիւնը, զոր թեմ բառը կ'արտայայտէ « Շիրակի թեմ » (Հայրենական հոդ) եւ « Հիւս. Ամերիկայի թեմ» (օտար երկիր) բացատրութիւններով ։

Ցաւալի կէտը այս չէ, սակայն։ Ոչ ալ այն թէ կաթողիկոսը մէկ է եղեր կամ չորս, — մեր ժողովուրդը, որ չորս կա – թողիկոս ալ ունեցեր է միաժամանակ գա – հակալ, չարունակեր է «Հայր մեր»ը ար – տասանել ինչպէս եթէ մէկ բլլար կաթո – ղիկոս կամ չորս, ու ծառացեր այն ա – տեն միայն՝ երբ արդիւնք են աղօթել « ազգիս Հայոց ազատութեան համար », հասկցա՞ք, Մարկո՛ս։

Ցաւալին այն է այս վէճերուն մէջ, որ եկեղեցականը, էջմիածնականը, Հայաստա – նականը, միասնականականը խումբ մը սէր – ակներ կը սպառեն ազգային ուժը, մեր գերագո՛յն խոչընդոտներուն հանելու կամ – քը, յիշեցնելով ինչ որ պատահած է, ժամանակին, Պոլսոյ մէջ, երբ մեր խեղճ պատրիարքները ու մի քանիկ չհասկնգիր ամիրաներ զզուրաուք կը խաղային եկե – ղեցիին չուրջ, բեմին եռեւ ունենալով՝ օտար ստուերներ, այնքան չնական, որ – քան օտար ։

Հարկ է որ ներկայացնեմ ապէտը, նկա – բագրելով հրապարակը եւ պարիսպները.. քանդելու հրաւէր կարդալէ առաջ ։

Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

ՔԱՆԴԵՆՔ

ՉԻՆԱԿԱՆ ՊԱՐԻՍՊՆԵՐԸ

Ա.

Հետզհետէ կը խորանայ տարակարծու – թիւնս ։

Սովորութիւն մը, որ ինձի յիշատակ կը մնայ մանկութենէս, կը բռնէ զիս ու կը հարցաքննէ ամէն երեկոյ, հապա ան – կողին մտած.

— Ի՞նչ ըրիր այսօր եւ ի՞նչ սորվե – ցար ։

Հիմա, տարակարծութիւնս քանի կը խորանայ, նոյն հարցաքննիչը կու գայ կը կշռէ նաեւ ամէն տեսակէտ, որ կ'ուզել – նայ ծանօթ դանձանակին մէջ ։

— Չի բաւեր, կ'ըսէ դիչերուան այցե – լուն, չի բաւեր վաստկիլ գաղափար մը աւելի։ Կարեւորն այն է թէ ի՛նչ ծանրու – թիւն ունի օրուան այդ վաստակը ։

Ծանրութիւն բառը, այսպէս, կ'ակնար – կէ նորութեան։ Այսինքն բան մը որ կը փոխոխէ արժէքներու դասակարդութիւ – նը։ Վասնզի քրջահաւաքի մախաղ չէ մարդկային միտքը, որ ուռի պիւղի գդի – բին պիտցած բաներով, մեծ մօրս խելա – ցութեան յիշատակներով կամ սրճարան – ներու մէջ չատ գործածական գաղափար – ներով, մեր ժամուն գետնի խոխրներուն չափ մաշած ու հինցած ։

Այսպէս է որ սորվեցայ թէ բաւական չէ նոր կօշիկ մը դնել տարին մէկ, եր – կու, ի՛նչ գիտնամ՝ Թերեւս երեք կամ չորս անգամ (տարի հաշիւը կինները գի – տեն), նոր հագուստ կարել տաղաւարէ տաղաւար, չքնաղեսնին ձեւը փոխել ե – զանակէ եզանակ՝ հետեւելով Լուվրի, Սամարիթէնի, Փրէնթանի կամ Կալըրի Լաֆայէթի նորաձեւութեանց ։

Մարդկային միտքն ալ կը պահանջէ նոր պղեսաւորում։ Կանչել քրջահաւաքը եւ Մառշէ օ Փիւս դրկել այն գաղափարները, որոնք հինցած են այլեւս, մաշած, մգլո – ւած, զառամած։ Մաքրել մտածման թա – դուհին սենեակը, նորոդ դարդարել, օր – ուան չորով լուսաւորել, վերջապէս ոռո – դել թարմութեամբ եւ կենդանութեամբ ։

Նոյն ձեւով՝ յեղաշրջել ժողովուրդին հոդին, փոխել մտածման պարունակին կահաւորումը։ Վերջապէս հարստացնել մտքի անդաստանը ժամանակին բարիքնե – րով ։

Վասնզի միտքն է միայն որ ապնիւ է, եւ վա՛յ անոր որ կը սիրէ ամէնայն հո – գածութեամբ եւ զոհողութեամբ հագուե – ցընել իր ոտքը, բայց ոչ երբեք միտքը ։

Ախո՛ս, իմ տարակարծութիւնս կը խորանայ անոր համար, որ մենք, Հա – յերս, հետաքրքրուած չենք միտք հադ – ուեցնելու խնդիրներով՝ այնքան որքան կը սիրենք հագուեցնել մեր ... ոտքը ։

Հայկական միտքը հագած է ինչ որ կը հագնէր հարիւր տարի առաջ։ Նոյն ցնցո – տին, նոյն քուրձը, նոյն խարազը ։

Այսպէս, կը կրկնենք ինչ որ սորվեր ենք տարիներ առաջ։ Կը քալենք կ'ելլենք թանք մեռելներու պէս, ականջ խցած եւ աչք խփած։ Աչակերտական արտասանու – թիւն դարձաւ ազգապահպանում հոլովել, դպրոցական ճարտասանութեան ձեւ ա – ռաւ բառնցք բարձրացնել ճուլման վը – տանգին դէմ եւ ... լաւ մարկ ըրէք այս – տեղ,— ժամանակին, կը բաւէր յանդ կազմել Մասիս լերան անուամբ՝ բանաս – տեղծ հոչակուելու համար համազդային չափանիշով, այսօր պիները ա՛նքան ին – կած են Հայոց մաքի անդաստանին մէջ, որ բաւական է էջմիածին պռոալ... քու – նի մէջ՝ յայտարարուելու համար ազգա – սէր հարիւր տոկոսով։

Քիչ մը փիւտէօր, եղբայրք պատուա – կանք։ Մանաւանդ քիչ մը ցած խօսեցէք այդպիսի նիւթերու մասին՝ յանուն ա – մօթխածութեան։ Վերջապէս ամէնքս նոյն տարիքը չունինք, եւ եօթանասունոց պառաւներ չենք։ Ի վերջոյ, կրօնական համայնք չէ՛ այս ժողովուրդը, որ ա՛զգ էր ժամանակին՝ իր պատմութեամբ եւ քաղաքակրթութեամբ, ու վճռած է ա՛զգ պառնալ նորէն՝ հաղորդակից մնալով օր – ուան մտաւորական յեղաշրջումներուն ։ Հաւատացէք որ երբեմն կ'ամչնամ որ Հայ եմ՝ երբ կը լսեմ խելացնոր ազմուկը, որ կը բարձրանայ անխմաստ աղաղակներով, ժամանակավրէպ բացատրութիւններով եւ պառաւական պահանջներով ։ Գիտեմ թէ ո՛վ կայ խամճիկային այս թատերա – խաղին բեմին եռեւ, — այնքան օտար՝ որքան չնական ստուերներ, — բայց դե – րակատարներուն մէջ ամէնէն զզուելին – րը այն կարգ մը նոր հարուստներն են, ո – րոնք կ'ուզեն պատմութեան մէջ մտնել՝ միաժամանակ չմտալով իրենց մտաւորա – կան ազքատութեան ստորագրագութեան ցաւը ծածկել նիւթական հարստութեամբ եւ... էջմիածնասիրութեամբ ։

Կ'ուզէի որ Հայ դրագէտը, — կոչումով եւ պատրաստութեամբ արժանի այդ ան – ուան, — ոտքի կանգնէր պահ մը եւ հար – ցընէր իրրեւ իրաւագէտ ։

— Հայրենակիցնե՛ր, որո՞ւն ապրանքը որո՛ւ կը ծախէք այսպէս։ Հին Աթէնքն ալ ունէր իր լումայափոխները եւ բովի – ճայքի վաճառականները ապրանքու վը – բայ, բայց բովանդակ Ելլադան մնաց եւ կը մնայ Արիստոտէլներու, Պղատոններ – րու, Պինդարոսներու, Եսքիլէսներու, Եւրիպիդէսներու անկապուտ հարստու – թիւնը ։

Երկա՛ր տեւեց այս առուծախը, — մին ծախեց Ապր. Սահմանադրութիւնը յանուն ... էջմիածնասիրութեան, միւսը՝ ըմ – պիւռքը՝ յանուն ... միասնականութեան, բայց ոչ այն որ կը ծախէր Սահմանա – դրութիւնը՝ դիտէր թէ ի՛նչ յիմարութիւն կը գործէր, ոչ ալ այն որ կը ծախէր Սիփւռքին ազատութիւնը։ Արդ, Սահմա – նադրութեան ջնջումը պայմանաւորուած չէ երբեք Օսմ. կայսրութեան փլուզու – մով, վասնզի Հայոց Ազգ. Սահմանա – դրութիւնը Ողի է մխայն։ Գալով այն վէ – ճին, որու մէջ չատ կը հոլովեն թեմ բա – ոը, կը թուի թէ էջմիածնի մէջ գաղա – փա՛ր չունին թեմ բառին նշանակութեանց մասին, կամ դէթ կը չփոթեն տարբերու – թիւնը, զոր թեմ բառը կ'արտայայտէ « Շիրակի թեմ » (Հայրենական հոդ) եւ « Հիւս. Ամերիկայի թեմ» (օտար երկիր) բացատրութիւններով ։

Ցաւալի կէտը այս չէ, սակայն։ Ոչ ալ այն թէ կաթողիկոսը մէկ է եղեր կամ չորս, — մեր ժողովուրդը, որ չորս կա – թողիկոս ալ ունեցեր է միաժամանակ գա – հակալ, չարունակեր է «Հայր մեր»ը ար – տասանել ինչպէս եթէ մէկ բլլար կաթո – ղիկոս կամ չորս, ու ծառացեր այն ա – տեն միայն՝ երբ արդիւնք են աղօթել « ազգիս Հայոց ազատութեան համար », հասկցա՞ք, Մարկո՛ս։

Ցաւալին այն է այս վէճերուն մէջ, որ եկեղեցականը, էջմիածնականը, Հայաստա – նականը, միասնականականը խումբ մը սէր – ակներ կը սպառեն ազգային ուժը, մեր գերագո՛յն խոչընդոտներուն հանելու կամ – քը, յիշեցնելով ինչ որ պատահած է, ժամանակին, Պոլսոյ մէջ, երբ մեր խեղճ պատրիարքները ու մի քանիկ չհասկնգիր ամիրաներ զզուրաուք կը խաղային եկե – ղեցիին չուրջ, բեմին եռեւ ունենալով՝ օտար ստուերներ, այնքան չնական, որ – քան օտար ։

Հարկ է որ ներկայացնեմ ապէտը, նկա – բագրելով հրապարակը եւ պարիսպները.. քանդելու հրաւէր կարդալէ առաջ ։

Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

ՅՈՒՇԵՐ

ՊՈՄՏՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԱՍԻՆ

(1902 — 1906 Թ. Թ.)

—o—

Կոմիտաս վարդապետը պարապմունք – ներէն ժամանակ չպատ լուրջ եւ խստապա – հանջ էր։ Բայց երբ նկատում էր յոգնա – ծութիւն խմբի մէջ, մի հաճելի կատակով ձիծաղացնում էր բոլորիս եւ կրկին թար – մացնում խմբի տրամադրութիւնը ։

Ամէնից զարմանալին նրա լսողութիւնն էր եւ չափ տալը երգի կատարման ժա – մանակ։ Ութսուն հոգի միաժամանակ եր – գելիս մի փոքրիկ սխալն անգամ չէր վրի – պում նրա լսողութիւնից. անմիջապէս զգաստացնում էր երգը եւ մատով ցոյց տալիս երգողին, որը կէս, նոյնիսկ մի քառորդ աստիճան ցածր կամ բարձր էր վերցրել նոտան։ «Այ դու, դուռնաչի» ա – ռելով, նորից կրկնել էր տալիս երգը։ Չափ տալիս լարւում էր ամբողջ մարմը – նով եւ հոգով։ Այնպիսի երգեր, ինչպի – սիք են «Լօ լօ»ն, «Գութանի երգը» եւն., ուր կան արագ եւ դանդաղ չափեր, միա – ժամանակ, բասերին, տենորներին, ալ – տերին, դիսկանտներին առանձին – ա – նձին նշան էր անում ձեռքերով, գլխի ...ումով եւ հայեացքով։ Օրինակ՝ ալ – ձեռքով տալիս էր կէս բախում, ձախով մէկ ութերորդական, գլխի թեթեւ շար – ժումով մէկ ամբողջական եւ այլն, մա – նաւանդ այն դէպքերում, երբ երգը կա – տարւում էր ոչ թէ քառաձայն, այլ ու – թաձայն, մինչեւ իսկ տասներկու ձայ – նով։ Այդպիսի բարդ ներդաշնակութեան հասնելը ամենահմուտ խմբավարներին էլ դժուարութեամբ է յաջողւում ։

Խումբը ելոյթներ էր ունենում բոլոր հանդիսաւոր ժողովատարութիւնների ժամանակ ձեմարանի համերգների դահ – լիճում եւ մեծ ժողերի ժամանակ Մայր Տաճարում ։

Առանձին չքով ու ոգեւորութեամբ էր կատարւում ձեմարանում Վարդանանց Տօնը եւ ձեմարանի տարեդարձը, որոնց ներկայ լինելու համար զալիս էին բազ – մաթիւ հիւրեր Թիֆլիսից, Երեւանից եւ այլ քաղաքներից ։

Այդ ժողհանդէսների զարդն էր Կո – միտաս վարդապետը իր երդեցիկ խմբով։

×

Աչնան օրերն էին։ Թիֆլիսի համա – նդրկովկասեան երդեցիկ խմբերի առու – դատեսին փառաւոր յաղթանակ տանելուց յետոյ Կոմիտաս վարդապետի խմբի ա – նունը հոչակուել էր ամէնուրեք։ Երեւա – նից եւ Բաքուից նա հրաւէր առացաւ հա – մերգ տալու ։

Երեւանի այն ժամանակուայ լաւագոյն թատերասրահը այժմեայ «Սպալի տան » թատրոնն էր, որը պատկանում էր Ջան – փոլատեաններին։ Համերգից երկու օր ա – ռաջ բոլոր տոմսերը վաճառուած էին ։ Թատրոնի դահլիճը, պատշգամբը, մի – ջանցքները լինքն էին ունկնդիրներով ։ Համերգն սկսելուց երկու ժամ առաջ էլ – միածնից մեր խումբը հասել էր Երեւան եւ Կոմիտաս վարդապետի խիստ կարգա – դրութեան համաձայն, մենք հանդստա – նում էինք բեմի յետեւի սենեակներում ։ Կարգադրուած էր սառը ջուր չխմել, հաց ու պանիր, մրգեղէն, քաղցրեղէն չուտել համերգից առաջ, այլ խմել մի մի բաժակ եփած, բայց դոլացած կաթ, մէջը լցրած մի քանի կաթիլ կոնեակ։ Երեկոյեան ժա – մը ութին վարագոյրը բացուեց եւ երե – ւանի հասարակութիւնը բեմի վրայ տե – սաւ 90 հոգուց բաղկացած ձեմարանի երդեցիկ խումբը՝ Կոմիտաս վարդապետի դլխաւորութեամբ ։

Առաջին համարը երգեցինք «Գարուն ա ձուն ալ արել». մնացածների հերթակա – նութիւնը լաւ ձեմ չի չուռմ, բայց միաս է, որ երգեցինք «Սոնա եար», «Շողեր չան», «Կալի երգը», «Ալագեազ սարն ամպել ա», «Խումար պահէ», «Գնա, գնա, պա – լիս եմ», «Կուժն առա, ելայ սարը», «Իմ չինարի եարը», իսկ վերջը՝ «Լօ լօ»ն ։

Ամէն մի համարից յետոյ դահլիճը թն – դում էր ծափահարութիւններից։ Իսկ «Լօ լօ»յից յետոյ ծափերի այնպիսի փոթորիկ բարձրացաւ դահլիճում, որ ստիպուած ե – զանք երկրորդ, երրորդ անգամ կրկնել ։ Համերգից յետոյ Կոմիտաս վարդապետը կարգադրեց չգրուել եւ մի քանի րոպէ մնալ, որպէսզի կոկորդները, ձայնալա – րերը հանդստանան եւ դրսի սառը օդից չմանդուեն ։

Սակայն դահլիճը չարունակում էր թն – դալ ու լուում էին բացատկութիւններ։ Մի երկու րոպէ չանցած, երեք հոգի, յանձնաժողովի նախագահի գլխաւորու – թեամբ, մտան բեմ եւ պատկառանքով մօտենալով Կոմիտասին, ասացին հետեւ – եալը ։

— Ամբողջ հասարակութիւնը խռնար – հարար խնդրում է հայր Կոմիտաս վար – դապետից երգել մի երգ ։

Երկար թախանձանքից յետոյ, կոմի – տասը տուեց իր համաձայնութիւնը ։

Վարագոյրը քաշեցին, բեմը բացուեց ։ Ամբողջ թատրոնը չնչատհ ուշադրու – թեամբ հետեւում էր Կոմիտասի չար – ժումներին։ Նա մօտեցաւ դաշնամուրին, նստեց աթոռի վրայ եւ ձեռքերը դրեց ստեղների վրայ ու մի պահ սիրեց հան – դիսաւոր լռութիւն... Այդ մի վայրկեան էր, երբ բոլորս էլ կախարդուել էինք այդ մեծ մարդու հմայքով ։

Ս. ԲԱՂԻՐԵԱՆ

(5 Շար.)

ԿՅՈՒՆՔԻ

Վ.

ՆՈՒՀ ՎԱ ԺՂՏՈՊՉԸ

Իսայի մի քանի տարի առաջ ամառանոց էր գնացել Ծաղկաձորում և այնտեղ ծանոթացել էր Նելլի անունով մի աղջկան հետ, որ ամառանոցում էր ապրում իր հարազատների հետ։ Նելլին գեղեցիկ աղջիկ էր, ուսումնասիրում էր բանաստեղծությունը, և Իսային, որ ինքն էլ սիրում էր գրել, հաճույքով էր կարդում նրան իր ստեղծագործությունները։ Ամառանոցում նրանք ամեն օր միասին էին լինում, միասին էին զբոսնում, միասին էին կարդում։ Իսային թվում էր, թե Նելլին էլ է սիրում իրեն։ Ամառանոցի վերջին օրերին Իսային որոշեց Նելլիին խոստովանել իր սերը։ Նելլին ուշադիր լսեց նրան, հետո ասաց.

— Ես քեզ չեմ կարող սիրել, որովհետև ես ուրիշին եմ սիրում։

Իսային ասաց, որ ինքն էլ գիտեր այդ, որ Նելլին ուրիշին է սիրում, և որ ինքն էլ ուրիշին է սիրում։ Նելլին հարցրեց նրան, թե ինչ է անում այդ ուրիշը, և Իսային պատասխանեց, որ նա ուսանող է։

— Ուրեմն դու էլ ուսանող ես, — ասաց Նելլին։

— Ոչ, ես ուսանող չեմ, — պատասխանեց Իսային։

— Ուրեմն ինչ ես անում, — հարցրեց Նելլին։

Իսային ասաց, որ ինքը ոչինչ չի անում, և Նելլին ասաց, որ ինքն էլ չի սիրում ոչինչ չանող տղաներին։

Իսային ասաց, որ ինքն էլ ուսանող է լինելու, և Նելլին ասաց, որ ինքն էլ չի սիրում ուսանողներին։

Իսային ասաց, որ ինքն էլ գրում է, և Նելլին ասաց, որ ինքն էլ չի սիրում գրողներին։

Իսային ասաց, որ ինքն էլ նկարիչ է լինելու, և Նելլին ասաց, որ ինքն էլ չի սիրում նկարիչներին։

Իսային ասաց, որ ինքն էլ երաժիշտ է լինելու, և Նելլին ասաց, որ ինքն էլ չի սիրում երաժիշտներին։

Իսային ասաց, որ ինքն էլ ճարտարապետ է լինելու, և Նելլին ասաց, որ ինքն էլ չի սիրում ճարտարապետներին։

Իսային ասաց, որ ինքն էլ ռազմական է լինելու, և Նելլին ասաց, որ ինքն էլ չի սիրում ռազմականներին։

Իսային ասաց, որ ինքն էլ ծովագնաց է լինելու, և Նելլին ասաց, որ ինքն էլ չի սիրում ծովագնացներին։

Իսային ասաց, որ ինքն էլ ինժեներ է լինելու, և Նելլին ասաց, որ ինքն էլ չի սիրում ինժեներներին։

Իսային ասաց, որ ինքն էլ ֆիզիկոս է լինելու, և Նելլին ասաց, որ ինքն էլ չի սիրում ֆիզիկոսներին։

Իսային ասաց, որ ինքն էլ քիմիկոս է լինելու, և Նելլին ասաց, որ ինքն էլ չի սիրում քիմիկոսներին։

Իսային ասաց, որ ինքն էլ մաթեմատիկոս է լինելու, և Նելլին ասաց, որ ինքն էլ չի սիրում մաթեմատիկոսներին։

Իսային ասաց, որ ինքն էլ աստղագետ է լինելու, և Նելլին ասաց, որ ինքն էլ չի սիրում աստղագետներին։

Իսային ասաց, որ ինքն էլ կենսաբան է լինելու, և Նելլին ասաց, որ ինքն էլ չի սիրում կենսաբաններին։

Իսային ասաց, որ ինքն էլ ճանապարհորդ է լինելու, և Նելլին ասաց, որ ինքն էլ չի սիրում ճանապարհորդներին։

Իսային ասաց, որ ինքն էլ ֆիզկուլտուրնիկ է լինելու, և Նելլին ասաց, որ ինքն էլ չի սիրում ֆիզկուլտուրնիկներին։

Իսային ասաց, որ ինքն էլ ֆուտբոլիստ է լինելու, և Նելլին ասաց, որ ինքն էլ չի սիրում ֆուտբոլիստներին։

Իսային ասաց, որ ինքն էլ հոկեյիստ է լինելու, և Նելլին ասաց, որ ինքն էլ չի սիրում հոկեյիստներին։

Իսային ասաց, որ ինքն էլ բռնցքամարտիկ է լինելու, և Նելլին ասաց, որ ինքն էլ չի սիրում բռնցքամարտիկներին։

Իսային ասաց, որ ինքն էլ ձկնորս է լինելու, և Նելլին ասաց, որ ինքն էլ չի սիրում ձկնորսներին։

Իսային ասաց, որ ինքն էլ որսորդ է լինելու, և Նելլին ասաց, որ ինքն էլ չի սիրում որսորդ

ՉԵԽՈՍԼՈՎԱԿԻՈՅ անտեսական կեան – քին մէջ կարեւոր փոփոխութիւններ կը նախատեսուին, ապակեղրոնացման նոր ծրագիրին պատճառով, որ գործադրու – թեան պիտի դրուի 1958ի սկիզբը: Բազ – մաթիւ նախարարութիւններ պիտի վերչ – չուին . պիտի պակսի նաեւ պաշտօնեա – ներուն թիւը :

ՄՈՍԿՈՒԱՅի մէջ երեք օր յաջորդաբար տեղի ունեցող համաձայնաւոր երկիրներու անտեսական հարցերու մասնագէտներու ժողով մը, կը հաղորդէ մամուլի, «Թաս» գործակալութիւնը :

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԳԵՐՄԱՆԻՈՅ Արտաքին նախարար Ֆոն Պրենթանօ յայտարարեց , թէ Ատլանտեան Ուխտին մէջ վերջերս ի – րաւունքով պետութիւն մը չի կրնար ըլ – լալ, քանի որ այս կազմակերպութիւնը պետութեանց դաշնակցութիւն մը չէ , այլ՝ ուխտ մը :

ԱՆԳԱՐԱՅի մօտերը ամերիկեան պին – ուորական քաղաքարժակ օդանաւ մը չախչախուեցաւ. ութ օդաչուներուն երե– քը սպաննուած է, երեքը՝ ծանրօրէն վի– րաւորուած ու երկուքը՝ անվնաս ազա – տած :

ԱՆԳԼԻԱԿԱՆ պատերազմական նոր տի– պի օդանաւ մը փորձի ատեն չախչախուե– ցաւ. օդաչուն սպաննուած է :

ԿՈՍՏԱՆԴԻՆի մէջ (Ալժերիա) պատա – հած ոդոպռմներուն հետեւանքով 16 հոգի խեղդամահ եղած է, որոնց տասնըմէկը՝ դինուորական : Կեմայի մէջ ութ խլամ քաղաքացիներ, իսկ Ժեմափի մէջ ալ հինգ հոգի կորսուած են ջուրի հոսանքներուն մէջ. այս վերջիններուն մարմինները չէ գտնուած : Հինգ հազար հոգի անապաս – տան մնացած է :

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Այրի Տիկին Էլիզ Գահվէճեան, Տէր եւ Տիկին Մարտիկ Գահվէճեան եւ զաւակը, Տէր եւ Տիկին Մինաս Պօղոսեան եւ զա – ւակները, Տէր եւ Տիկին Գրիգոր Մես – տաճեան, իրենց խորին չնորհակալու – թիւնները կը յայտնեն ամէն անոնց, ո – րոնք անձամբ, նամակով, հեռագրով, ծաղկեպսակով եւ նուիրատուութեամբ յարգանք եւ ցաւակցութիւն յայտնե – ցին իրենց ամուսնոյն , հօր, աներսօր՝ Պ. Ռուբէն Գահվէճեանի մահուան առ – թիւ, որ տեղի ունեցաւ 25 Նոյ., իր րը– նակարանին մէջ, Մարսէյլ: Այս առթիւ հետեւեալ նուիրատուութիւնները եղած են փոխան ծաղկեպսակի :

Ա. ՄՇԱԿՈՑԹի ՏԱՆ

Տէր եւ Տիկին Մ. Տէյիրմէնճեան եւ որ– դի երեք հազար ֆրանք, Տէր եւ Տիկին Մ. Գահվէճեան երկու հազար, Այրի Տի– կին Զարուհի Պօյաճեան, Այրի Տիկին Զապէլ Պօյաճեան, եւ Օր. Մառօ Պօյա – ճեան երեք հազար ֆրանք :

Տէր եւ Տիկին Հ. Կուրթիկեան երկու հազար, Տէր եւ Տիկին Մ. Պօղոսեան հինգ հազար, Այրի Տիկ. Ա. Պօղոսեան 2500 , Տէր եւ Տիկ. Ա. Համալեան հազար, Տէր եւ Տիկին Ա. Սարաֆեան հազար ֆրանք:

Բ) ՊՈՄՈՆի ԺՈՂՈՎԱՐԱՆԻՆ

Այրի Տիկին Ի. Գահվէճեան տասը հա– զար ֆրանք, Տէր եւ Տիկին Մ. Գահվէ – ճեան երեք հազար ֆրանք :

Գ) ՄԱՐՍԷՅԼի ԺՈՂՈՎԱՐԱՆԻՆ

Այրի Տիկին Ի. Գահվէճեան տասը հա– զար ֆրանք, Տէր եւ Տիկին Մ. Գահվէ – ճեան, Տէր եւ Տիկին Մ. Պօղոսեան հինգ հազարական ֆրանք, Տէր եւ Տիկին Գ. Մէչտուճեան տասը հազար, Այրի Տիկ. Ա. Պօղոսեան 2500, Տէր եւ Տիկին Զ. Պալապանեան երկու հազար, Պ. Մ. Պօ– ղոսեան, Տէր եւ Տիկին Մ. Գուլումեան հազարական ֆրանք :

Գումար՝ Մէկոյթի Տան 19·500 ֆր., Պոմոնի ժողովարանին՝ 13·000, Մար – սէյլի ժողովարանին 36·500 ֆրանք :

Վերոյիշեալ նուիրատուութեան դու – մարները ստանալ 25 րիւ Պէնուար, Պ. Մինաս Պօղոսեանէ փոխան ընկալագրի :

Ց. ԿԱՊ. ՀԱՋի Փարիզի մասնաճիւղին տարեկան պարահանդէսը 28 Դեկտեմբեր, Շաբաթ կէսօրէ վերջ ժամը չորսէն մին– չեւ կէս գիշեր, Օթէլ Լիւթէսիայի սր – բահներուն մէջ:

Imprimé sur les presses du journal HARATCH
17, Rue Bleue, 17 — PARIS (9e)

«ՅԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՐՍԷՅԼ.— Տէր եւ Տիկին Ս. Տէր – ակերեան իրենց աղջկան Հեղինէի Պ. Սե – պուհ Ճանիկեանի հետ ամուսնութեան առթիւ հազար ֆրանք կը նուիրեն «Ճա – ռաչ»ին :

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ

ԵՐԵԿՈՆ ՍԷՆ – ՇԱՄՈՆԻ ՄԷՋ

Այս Շաբաթ (Դեկտ. 7), ժամը 21էն մինչեւ լոյս, տեղւոյն Սալ տէ Ֆէթի մէջ: Մասնակցութեամբ՝

ANDRÉ MALIAN ET SES RYTHMES

Պիւֆէ, պիւվեթ, fօթիյօն եւ խաղեր : ՀԱՃԵԼԻ ՄԹՆՈԼՈՐՏ :

ՃԵԴՈՒՄ.— Սերաստիոյ Նահանգային Մուրատ Ուսումնասիրացի ընդհ. ժողովի թղթակցութեան մէջ (Ուրբաթ, 29 Նոյ., Գ. էջ) 4րդ սիւնակ.— «Ամերիկայի Սե – բաստացիներու Վերաչինաց Միութիւնը » պիտի ըլլայ «Ամերիկայի Սերաստիոյ Հայրենակցական Միութիւնը»: Նախա – վերջին պարբերութեան մէջ Տիկին Ճա – րութիւնեան պիտի ըլլայ Տիկին Միւնա – եան :

ԴՊՐՈՑԱՍԷՐ Տիկնանց Վարժարանի վարչութիւնը չնորհակալութեամբ առա – ցած է. Տէր եւ Տիկին Մարտիրոս Իպէ – պաշեան արժէքաւոր դաշնակ մը: Տէր եւ Տիկին Սանոյեանէ երկու հազար ֆր. ողջագեալ Գոհար Վասպանցիի մահուան առթիւ: Տիկին Նկատար Գասպարեանէ հազար ֆր. իր ամուսնոյն մահուան առ – թիւ : Տիկին Մարիամ Թօփալեանի մահուան առ – թիւ :

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Եկեղեցիին վարչութիւնը կը ծանուցա – նէ թէ՝ իր հիմնած հայերէն լեզուի եւ հայրենագիտութեան դասընթացքը վեր – ակած է, դասախօսութեամբ ճեռնհաս ուսուցիչի մը, Բարեզործականի սրահին մէջ, ինչպէս նախորդ տարիները, 19ա , Րիւ Վանթիւր, ժամը 19–21, ամէն երեք – շաբթի եւ ուրբաթ : Ծնողները կը հրա – ւիրուին օգտուիլ առիթէն՝ արձանագրե – լով երկու սեռէ եւ ամէն տարիքէ իրենց զաւակները, դասերու պահերուն :

ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ

Օգնութեան Մարմնի Ֆեռանվիլիէի օ – դափոխութեան կայանին կը նուիրեն.—

Պ. Ա. Մալաճեան երկու հազար ֆր., Տէր եւ Տիկին Գ. Նաւասարդեան (Փօ) 1200, Տիկին Օտապաշեան հազար, Պ. Պիպալեան վեց հարիւր :

Հայ կարմիր Խաչի Օդն. Մարմնի փա – րիզի դարմանատան կը նուիրեն. —

Տէր եւ Տիկին Տէր Գէորգեան հազար ֆրանք, Պ. Խաչատուրեան հազար, Պ.Զ. Զաքարեան հինգ հարիւր ֆրանք :

ՇԱՒԻԼԻ ԵԿԵՂԵՑԻ

Շաւիլի կրօն. Ընկերակցութեան վար – չութիւնը եւ Երիտ. եկեղեցաչէն յանձ – նախումբը կը ծանուցանեն թէ Դեկտ. 15– ին, կիրակի օր տեղի պիտի ունենայ նո – րակառոյց եկեղեցւոյ օծումը եւ անդրա– նիկ Ս. պատարագը ճեռամբ կաթողիկո– սական պատուիրակ՝ եւ Փարիզի Առաջ – նորդ Գեր. Տէր Սերովբէ Եպիսկ. Մա– նուկեանի :

Սկիզբ ժամերգութեան ժամը 8, օծում ժամը 10, Ս. պատարագ 10·30:

Կը հրաւիրուի հաւատացեալ ժողովուր– դը : Ճաւարտ Ս. պատարագի կատմա – կերպուած է ճաշ մը Վերսայլ Օթէլ տը Ֆրանսի չքեղ սրահին մէջ (Փլաս տ'Արմ, րիւ Բոլպէր) :

Այս ճաշին մասնակցիլ փափաքողներէն կը խնդրուի արձանագրուիլ մինչեւ Դեկ– տեմբեր վեց եւ ստանալ սեղանակիցի մասնաւոր քարթը , (ճաշարժին 3000 ֆր): Վերոյիշեալ թուականէն վերջ ոչ մէկ արձանագրութիւն պիտի ընդունուի :

Արձանագրութեան համար դիմել Փա – րիզի եկեղեցւոյ դիւանատունը,

Պ. Հրաչ Զուլաքեանի՝
14, Rue Maréhal Foch Viroflay

Պ. Զաւէն Յովհաննէսեանի
31. Rue de Général Léclerc, Versailles

կամ

ASSOCIATION CULTUELLE DES ARMÉNIENS DE CHAVILLE
C. C. P. Paris 14827-18

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

1958ի "ԳՈՅԱՄԱՐՏ" ՕՐԱՑՈՑՅՑ-ԱԼՊՈՄԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ. Ց. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ՄԱՐՍԷՅԼԻ ՇՐՋԱՆԻ

ԸՆՏԻՐ ԹՈՒՂԹՈՎ 14 ՄԵԾԱԴԻՐ ԷՋԵՐ

Շէեղ ճկարներ, մեծ մասը անտիպ: Գրական եւ պատմական նիւթերով ճոխ բովանդակութիւն .

— ԳԵՂԱՋԱՐԴ ԵՒ ԳՈՒՆԱՒՈՐ ԿՈՂՔ —

Բացառիկ խնամքով եւ ճաշակով պատրաստուած այս օրացոյց–ալպոմը *պիտի կազմէ զարդը՝ ամէն հայ տան:*

ԳԻՆ 500 ՖՐԱՆՔ Այժմէն ապահովեցէք ձեր օրինակը

Փարիզի համար դիմել՝ LIBRAIRIE H. SAMUELIAN, 51, Rue Monsieur-le- rince, PARIS - 6e

ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԱԿԱՆ ՊԱՐԵՐՈՒՄ ԵՒ ՆՈՒԱԳԻ ԲԱՑԱՌԻԿ ԵՐԵԿՈՅ
12, Դեկտեմբեր, Հինգշաբթի ժամը 8·45ին .

THEATRE DE PARIS, 15, Rue Blanche, Métro : Trinité ou Blanche

ԱԼԻՍ ՊՕՅԱՃԵԱՆ

Կը պարէ ու կը դեկավարէ իր պատրաս տած երկսեռ պարախումբը
Մասնակցութեամբ նուագախումբի զոր կը դեկավարէ

ԱՐԱ ՊԱՐԹԵԻԵԱՆ

Տոմսերու դիները են 800, 600, 500, 400 *եւ* 300 *ֆրանք*
Սառնալու համար դիմել՝
Etabl. O. B. 83, Rue d'Aboukir, Paris - Tél. CEN. 48-69 *եւ ներկայացման օրը թատրոնին կիյձէն:*

ՇԱՒԻԼԻ ԵԿԵՂԵՑԻՒՆ

—o—

Ցարաթիւն քհյ. Ճորթոյեան եւ երե– ցուհին երկու հազար ֆր. կը նուիրեն Տիկ. Մարիամ Թօփալեանի մահուան առ– թիւ :

ՍՏԻՊՈՂԱԿԱՆ

Կը փնտռուի մէկ կամ երկու սենեակ , խոհանոցով վարձու, Փարիզի մէջ կամ արուարձանները :

Դիմել Թերթիս վարչութեան :

ԾՆՈՒՆԴ ԵՒ ԿԱՂԱՆԴ Ձեր սեղանները զարդարեցէ՛ք
ԱՄԷՆ ՏԵՂ ՓՆՏՌԵՑԷՔ **ՊՈՍՏՈՐ**
ՀՐԱՇԱԿԱՒՈՐ ՀԷԼՎԱՆ ԵՒ ԼՈՒՔՈՒԻՍԸ
ԲԺԻՇԿՆԵՐՈՒ ԿԱՐԾԻՔՈՎ ԱՆՈՆՔ ԿԸ ՊԱՐՈՒՆԱԿԵՆ ՄԵԾԱԳՈՅՆ ՁԱՓՈՎ ԳՈԼ (ֆալտրի)
Անհրաժեշտ մանուկներու համար եւ օգտակար չափահասներուն ու ծերերուն
որոնց կը պարգեւէ աշխոյժ եւ եռանդ

ՊՈՍՏՈՐԻ ԱՐԴԻԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԳԵՐԱԶԱՆՑԷ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ ԻՍԿ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾՆԵՐԸ

2, Rue Louis Astoin - Marseille

Արտածման համար մասնաւոր պայմաններ

Décoration — Agencement de Magasin

ANCIENS ÉTABLISSEMENTS

J. PAICHOUX et E. THION

149, RUE NATIONALE, PARIS 13E — TÉL : GOB. 19 52

SERRURERIE D'ART ET DE BATIMENT

Tous Travaux de Fer Forgé

Հիմնադիր–Տնօրէն ԳՐԻԳՈՐ ԹԵՒԱՆԵԱՆ

ՁԱՆԳԱՐԱՆ ԵԱՐ


Ֆրանսական – Հայկական եւ կովկաս– եան ընտիր կերակուրներ

4, RUE ROBERT-ETIENNE
(Rue Marbeuf) PARIS - 8e
TÉL. : BAL. 31-21
ՇԱՆ ԶԷԼԻԶԷԻ ՍՐՏԻՆ ՎՐԱՑ
Métro : F. D. Roosevelt

Հաճելի մթնոլորտ

Առաջնակարգ կովկասեան խորոված – ներ, «չաշլիք», «քարսքի»

Bar Américain



ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction - Administration : 32, Rue de Trévise, Paris 9e

Fondé en 1925 — Tél. : PRO. 86-60

R. C. Seine 57 A 2731 — C. C. P. PARIS 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա եւ գաղութներ, տարեկան 3000 ֆր. վեցամս. 1600

Արտասահման՝ տարեկան 3500 ֆրանք : Հատը 12 ֆր.

ԵՐԵՔՇԱԲԹԻ 3 ԴԵԿՏԵՄԲԵՐ MARDI 3 DECEMBRE 1957

33ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8058 — 33e ANNEE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 13ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3859

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻՆ ՆՊԱՍՏԸ

Հաւատարիմ իր երկչներու աւանդու – թեան, Հ. Յ. Դ. Մարսիլիոյ շրջանի Նոր Սերունդը՝ հաստատակամութեամբ մը, որ ինահատանքի ու չնորհաւորութեան արժանի է, հրապարակ հանած է արդէն 1958ի Գոյամարտ Օրացոյցը :

Այս ձեռնարկը չուրջ երեսուն տարուան անցեալ մը ունի : Երբ տակաւին չէր կազմուած Հ. Յ. Դ. Նոր Սերունդը — որուն հիմը դրուեցաւ 1945ին Փարիզի մէջ — , Մարսիլիոյ մեր հայրենակիցները ունէին իրենց Հ. Յ. Դ. Պատանեկան Միութիւնը, որ տարիներով հայրենասիրական օրամակար աշխատանք կատարեց Ֆրանսայի հարաւային շրջանի հայ երիտասարդութեան մէջ :

Անիկա իր Յար. Շահրիկեան Ակումբով եւ հարուստ ըրպաբանով մեծապէս օժանդակեց՝ հայրենասիրութեան կրակը վառ պահելու համար մեր պատանիներու հոգիին մէջ :

Ու 1929ին առաջին անգամ ըլլալով հր – րապարակ հանեց իր Օրացոյցը՝ Գոյա – մարտ անունով : Մարսիլիոյ պատանիներ իրենց նախաձեռնութեան եւ զոհողութեան ոգիով արժանի հանդիսացան ո՛չ միայն կուսակցական վերին մարմիններու չնորհաւորութեան, այլ հայ ժողովուրդի դնահատանքին ու քաջալերութեան :

Գոյամարտը ամէնէն աւելի փնտռուած օրացոյցը եղաւ Ֆրանսայի չրջանին մէջ՝ Մարսէյլէն մինչեւ Փարիզ :

Այն աւանդոյն պատանիները չատոնց ընտանիքի հայր դարձան եւ այժմ մեծ մասամբ անոնց զաւակներն են, որ կը չարունակեն իրենց հայրերու աւանդութիւնը՝ կազմակերպուելով իրենք Հ. Յ. Դ. Նոր Սերունդ եւ հրատարակելով ա՛յնքան սիրելի Գոյամարտ Օրացոյցը :

Այս անգամուան Օրացոյցը բացառիկ հանգամանք մը կը ներկայացնէ՝ կրկնակ տեսակէտներով : Նախ՝ իրրեւ յուցում եւ տպաւորութիւն կը վերապահէ իր նախորդները : Կողքի դունաւոր նկարը՝ գործ արուեստագէտ Փիրայր Փայամեանի՝ կը ներկայացնէ խորհրդանչանը Հայաստանի՝ իր ալեխառն գոյգ Մասիսներով եւ հնամենի տաճարներով, դեղարուեստական սքանչելի համադրութեամբ մը :

Ներսի էջերը զարդարուած են մեզմէ յաւէտ բաժնուած մեծ մտաւորականներու, հանրային գործիչներու, դիւանագէտներու, կաններու, անմոռանալի դէմքերու գու – նաւոր նկարներով եւ դեղեցիկ խօսքերով : Նախագահ Ուիլսընն ու Սէվրի դաչնագիրը, էջմիածնի եւ Կիլիկիոյ կաթողիկոսները նոյնպէս իրենց տեղն ունին սքանչակ չքեղ Թուղթի վրայ տպուած այս Օրացոյցին մէջ :

Երկրորդ բացառիկ հանգամանքն այն է, որ 1958ի Օրացոյցին ամբողջ հասոյթը պիտի յատկացուի Փարիզի Հայ Մշակոյթի Տան, որուն նկարը եւս հրատարակուած է :

Ցուզիչ է պզտիկները, զոր յատցած են մեր Նոր Սերնդականները՝ իրենց օժան – դակութեան բաժինը բերելու համար այն մեծ ձեռնարկին, որ դեղեցիկ սկզբնաւորութիւն մը ունեցաւ արդէն իր տպարա – նով եւ որ չնորհիւ հայ ժողովուրդի բոլոր դաստակարգերու լումաններուն, մօտիկ ապագային պիտի դառնայ Փարիզի հայութեան ժամադրավայրը :

Նոր Սերունդ եւ Մշակոյթի Տուն : Ի՜նչ արտաուչ զուգորդութիւն : Մէկը լրա – յուցիչ միւսին : Հայ Մշակոյթը պէտք ունի նոր սերունդին : Իսկ նոր սերունդին համար անհրաժեշտ է Մշակոյթի Տունը :

Վա՜ էքերնիդ կատա՛ր, երիտասարդ բնկերներ :

ՀՐԱՆՏ – ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՎԱՐՉԱՊԵՏ ԱՏԸՆԱՈՒԸՐ ՓԱՐԻԶ ՁԻ ԳԱՐ

—o—

ՖՈՆ ՊՐԵՆԹԱՆՕ ՊԻՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՓԱՐԻԶԻ ԵՒ ԼՈՆՏՈՆԻ ՄԷՋ

—o—

Նախագահ Այզընհաուըրէն եաք, Արեւմտեան Գերմանիոյ Վարչապետ Ատըն – աուըր երեք օրէ ի վեր հիւանդացած է եւ յետաձգուած է Լոնտոն այցելութիւնը, որ պիտի կատարէր Դեկտեմբեր 5–7ին :

Թէեւ պաշտօնապէս կը հաղորդուի թէ Վարչապետին առողջական վիճակը բարելաւուած է, սակայն այս ուղղութեամբ եկած լուրերը հակասական են : Բժիշկ – ները իսորհուրդ տուած են իր զաւակնե – րուն որ այցելութիւն չտան իրենց հօր, առ այժմ : Միւս կողմէ յետաձգուած են Արեւմուտքի բոլոր ժամադրութիւնները՝ անորոշ ժամանակով, յատկապէս՝ Լոն – տոն այցելութիւնը : Այս պարագան ցոյց կուտայ թէ ծերունի Վարչապետին առող – ջական վիճակը մտահոգիչ է :

Արեւմուտքի Լոնտոն այցելութեան յետաձգումը ցաւ պատճառած է Արեւմտեան Գերմանիոյ չրջանակներուն մէջ, որով – հետեւ վերջերս հսպարտութեամբ կը յայտնէին, թէ Պրքրինկմի պալատին մէջ ճաշի հրաւիրուած ղերման առաջին դե – կամարն էր ան :

Արտաքին նախարար Ֆոն Պրենթանօ պի – տի փոխարինէ զան ու երկու օրուան հա – մար Լոնտոն երթալով պիտի իսորհրդակ – ցի Վարչապետ Մաքմիլլընի եւ Արտաքին նախարար Լոյտի հետ :

Այս լուրը հաճելի չհնչեցաւ նաեւ անգ – լիական չրջանակներուն, որոնք կը մտա – ծէին թէ Արեւմուտքի հետ Ատլանտեան Ուխտի ժողովին առաջ համաձայնութիւն մը պիտի կարենային դոյացնել՝ նոյն տե – սակէտները պաշտպանելու համար : Գեր – մանիոյ որոշումները ընդունելի դարձնե – լու դժուարին պարտականութիւնը ներ – կայս պիտի կատարէ Ֆոն Պրենթանօ, անդլիացի դիւանագէտներուն քով :

Գերմանիա եւ Անդլիա ունին նաեւ դժ – ուարին այլ հարց մը՝ որ Արեւմուտքի Լոնտոն այցելութեան գլխաւոր պատճառն էր : Անդլիա կը մտածէ Գերմանիոյ մէջ հաստատած իր ուժերը եւս քաշել· այս տեսակէտը բավմաթիւ անհամաձայնու – թիւններ ծագած են երկու երկիրներու միջեւ : Ատլանտեան Ուխտի ժողովին մէջ այս հարցը կրնայ արծարծուիլ :

Քաղաքական չրջանակները հարց կու տան, թէ ի՞նչ պիտի ըլլայ Փարիզի ժո – ղովը՝ առանց Այզընհաուըրի եւ Ատըն – աուըրի : Պոնի կարծիքը այն է, թէ Վարչապետը մինչեւ Փարիզ դալու ի վի – ճակի պիտի չըլլայ :

Պաշտօնական չրջանակները կ'ուզեն հա – ւատացնել թէ մինչեւ ժողովին Թուականը Ատլնաուըը կ'առողջանայ· միւս կողմէ սակայն կը յիշատակուի թէ ան 82 տա – րեկան է և թեթեւհիւանդութիւն մը կրնայ լրջօրէն մտահոգիչ դառնալ :

Արեւմտեան Գերմանիոյ Արտաքին նա – խարար Ֆոն Պրենթանօ արդէն նչանակ – ուած է Ատլնաուըրի փոխանորդ՝ Ատլան – տեան Ուխտի ժողովին, որ տեղի պիտի ունենայ Դեկտեմբեր 16ին :

Փարիզի ժողովին մասնակցելիք երկու կառավարական անդամներուն՝ Նախագահ Այզընհաուըրի եւ վարչապետ Ատլնա – ուըրի հաւանական բացակայութենէն եաք՝ ժողովին Թուականը փոխելու մա – սին պաշտօնական ոչ մէկ զրոյց չկայ տա – կաւին :

ՀԱՄԸՐՇՈԼՏ ԱՐԱԲՆԵՐՈՒ ՄՕՏ

ՄԱԿի ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆԸ ԿԱՍԿԱԾԵԼԻ Է

—o—

Ինչպէս գրած էինք, ՄԱԿի ընդհանուր քարտուղար Տակ Համըրչոլտ պէտք գնաց, ուրիկ անցած Ամման : Պիտի հան – դիպի նաեւ Իսրայէլ եւ Դամասկոս :

Համըրչոլտի այս ճամբորդութիւնը կը դուգադիպի ՄԱԿի որոշումով պաղեստինի բաժանման տասնեւրորդ տարեդարձին :

Այս առիթով, կը կարծուի թէ կացու – թիւնը աւելի պիտի լարուի Միջին Արե – ւելքի մէջ եւ Արաբներու տեսութիւնը նորոգուի՝ Իսրայէլի դէմ : Հակառակ այս բոլորին, Համըրչոլտ նախընտրեց երթալ եւ այցելել հակառակորդ ճակատներու մայրաքաղաքները :

Ճորդանանի կառավարութիւնը լաւ ըն – դունելութիւն մը կազմակերպած էր ՄԱԿի քարտուղարին համար : Ամմանի լատպոյն պանդոկին դեղեցկադոյն սեն – եակները եւ Հիւսէյն թագաւորի անձնա – կան ինքնաչարժը դրուած են անոր տրա – մադրութեան տակ : Քաղաքավարական այս վերաբերումը սակայն՝ ոչինչ փոխած է Ճորդանանի որդեդրած դիրքին մէջ :

Ճորդանան արաբական կարգ մը պե – տութեանց դէմ ըլլալով հանդերձ՝ միշտ կը մնայ Իսրայէլի թշնամի : Ու մինչ ա – մերիկացի դիւանագէտները կը կարծեն թէ Համըրչոլտ պիտի յաջողի Միջին Ա – րեւելքի լարուածութիւնը մեղմացնել՝ Ամման կը մտահոգի անոր յաջողութեան վրայ :

Հակառակ դինադադարի յանձնախում – բին եւ ՄԱԿի ձեռք առած միջոցներուն, Իսրայէլի հետ սահմանային կռիւները կը չարունակուին միշտ եւ Արաբներն ու Հրեաները դիրար կ'ամբաստանեն՝ իրա – րու դէմ բողոքագիրներ ներկայացնելով : Ճորդանանի կառավարութիւնը կը մեղադրէ դործակալ դինադադարի յանձնախումբին նախագահին հետ, առարկելով թէ ան

(Շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ՊՈՒՐԿԻՊԱՅԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

—o—

Թունուզի Տեղեկատուութեան նախա – րարութիւնը դեկոյց մը հրատարակեց, յայտնելով թէ ան «Ասոսիէյթըտ Փրես»ի թղթակիցին Պուրկիպայի հետ ունեցած տեսակցութեան արդիւնքն է :

Մամուլի այս գործակալութեան թղթա – կիցին կողմէ հարցասղուելով, կայ – ետաի կողմէ Թունուզեմարոքեան միջա – մտութեան առաջարկին մասին Պուրկի – պա ըսած է. — Կայետաի յայտարարու – թիւնները թիւրիմացութիւնները ցրուե – ցին եւ ճշդեցին պատասխանատուութիւն – ները՝ Ալժերիոյ պատերազմին չարունա – կութեան համար : Վարչապետ Կայետաի այն հաստատումը թէ «պիտի չընդունինք Ալժերիոյ անկախութիւնը», ցոյց կուտայ որ ընարութեանց եւ դինադադարի առա – ջարկներով Ֆրանսա նպատակ չունի Ալ – ժերիան ձգելու : Ալժերիացիները դէնքի դիմեցին՝ իրենց անկախութիւնը իրակա – նացնելու համար : Զեմ հասկնար, թէ դի – նադադար մը ինչպէս կրնայ ըլլալ՝ այն – քան ատեն որ Ալժերիոյ անկախութիւնը չէ իրականացած : Այս պայմաններուն մէջ պատերազմը պիտի չարունակուի՝ այն – քան ատեն որ Ֆրանսա չէ հասունցած Ալ – ժերիոյ անկախութիւն տալու համար : Այդ պարագային միայն կարելի է խոր – հրդակցիլ եւ ոչ թէ դինադադարի, այլ՝ խաղաղութեան համար· արդար խաղա – դութիւն մը՝ հիմնուած ալժերիացի ժողո – վուրդին հայրենիք մը ունենալու իրա – ւունքին վրայ :

Թունուզի Հանրապետութեան Նախա – գահը տեսակցութիւն մըն ալ չնորհած է «Ֆիկառո»յի Թղթակիցին եւ պատասխա – նած կարգ մը հրատապ հարցերու :

Թունուզի Ֆրանսական դաղութին մա – սին խօսելով, Պուրկիպա ըսած է, թէ ինք համաձայն է, որ այդ դաղութը մնայ. — կը տեսնէք, ըսած է ան, ամէն ինչ կ'ը – նենք որ մեր երկիրը դան Ֆրանսացի ար – հեստագէտներ, բժիշկներ եւ դասատու – ներ : Ֆրանսերէնը, արաբերէնին հետ, պաշտօնական լեզուն է :

Ֆրանքեւթունուզեան գործակցութեան մասին ըսած է.— 26 տարուան մեր պայ – քարին մէջ միշտ համաձայն եղած ենք Ֆրանքեւթունուզեան գործակցութեան :

—o—

ՍՊԱՆԻԱՑԻՆ դինուորական կարեւոր ու – ժեր զրկուեցան Իֆնի, զսպելու համար մարոքցի ապստամբները : Երկու Ֆրան – սացի լրագրողներ, որոնց արտօնութիւն տրուած էր այցելել խռովութեանց վայ – րը՝ կը յայտնեն թէ սպանական օդանաւ – ներ կը չարունակեն ռմբակոծել Թիլուէն եւ Ապուտա դիւղերը, ուր կերտնացած են ըմբոստները : Ռմբակոծիչ նոր օդանաւներ զրկուած են հարաւային Մարոք :

ՓԵՇՏԱՅԻ մէջ սկսած է հունգարական յեղափոխութեան հերոս՝ զօրավար Մալէ – թերի եւ բարձրաստիճան այլ դինուորա – կաններու դատավարութիւնը :

Ամբ Օրթ

ԳՈՅԱՄԱՐՏ

Հրապարակ ելած են Հ. Յ. Դ. Նոր Սերունդի պատի օրացոյցները՝ «Գոյա – մարտ» : Ընդհանրական գոյամարտին պզ – տիկ մէկ փուլը, եթէ կ'ուզէք :

Պատկերազարդ, գունաւոր եւ չքեղ տը – պագրութեամբ՝ այս տարուան «Գոյա – մարտ»ները ռնինախընթաց են ամէն տե – սակէտէ : Խնամուած բովանդակութիւն : Այժմէական հարցերու եւ մարտական կուսակցութեան անցեալին հետ կապ ու – նեցող լուսանկարներ՝ մեծադիր էջերու վրայ : Պատգամներ՝ անհետացած դէմ – դերէ : Տանօթութիւններ :

Մէկ խօսքով, կատարեալ գործ մը, որ կոչուած է տարի մը ամբողջ հոգեկան եւ նաշակի գոհացում տալու՝ ամէն Հա – յու :

Լաւ գործ մը, մեր օրերուն, խանդա – վառութեան աղբիւր է բոլորիս համար : «Գոյամարտ»ը արդէն հիացումի առար – կայ դարձած է տարեց թէ երիտասարդ սերունդին :

Կրնայ ըլլալ, որ շատեր տարօրինակ գտնեն այսքան խանդավառութիւն՝ օրա – գոյցի մը համար : Լա՛ւ օրացոյցի մը հա – մար :

Տարօրինակ չէ սակայն :

Չէ՞ որ մեր կեանքին մէջ, գոյամարտի ամբողջ տեւողութեան, հո՛ս թէ այլուր՝ հայերէն գործ մը լոյսի նշոյլ մըն է Հա – յուն համար : Հայկականէն աւելի՝ հայե – րէնի՛ն է որ ուշադրութիւն կը դարձնենք այսօր, բանի որ վերջ ի վերջոյ մայրենի – ով կ'իմաստաւորուի մեր պայքարը :

Եւ «Գոյամարտ» օրացոյցները հայերէ – նո՛վ խմբագրուած են :

Հասոյթը՝ ամբողջութեամբ յատկաց – ուած է Մշակոյթի Տան (Փարիզ) :

Ցետոյ, հայերէն «Գոյամարտ»ներու ներկայութիւնը՝ հայ տուներէն ներս, « հրատարակութիւն՝ Նոր Սերունդի » մակագրութեամբ, ապացոյց մը չէ՞, թէ հայերէնը կ'ապրի նաեւ այս ափերուն վր – րայ, հինին թէ նորին համար, հաւասա – րապէս ··· :

ԱՐՄԵՆԱԿ

Վ. ՓԱՓԱՋԵԱՆԻ "ԻՄ ՅՈՒՇԵՐԸ"

Երրորդ եւ վերջին հատորն է Պ. Փափազեանի «Ցուչէր»ուն, ձօնուած նորա հաս սերունդին, որպէսզի իրազեկ ըլլան անցեալ սերունդին կատարած գլխին եւ պարապ չթողուն մեկնողներուն տեղը :

Ապրուած կեանք մըն է որ կը ներկայացուի սոյն գործով կարելի անկողմնակալութեամբ, վաւերապրելու բոլանդակութեամբ, որպէս առաջնակարգ պատմաբաններու խուզարկութեան : Պատկան մարդիկ Եւրոպայի մէջ հրատարակեցին իրենց յուշերը նախորդ պատերազմէն յետոյ, ինչպէս անցեալ դարուն, մեծ դիւանագէտներ Թալէյրան, Մեթեր-Նիխ, Կիզոյ : Պատմաբանին կը մնայ քննել զանոնք, բաղդատել, դասաւորել եղելութիւնները, ճշդել անկողմնակալութիւնը, հասկնալ գործունէութեան չարժառիթները, յետոյ բացատրել : Դժուարին գործ մեր օրերուն համար, ժամանակը սահելուէ, սերունդներ գալու են անցեալը դատելու համար :

Ռուսիա խաղաղութիւնը կը պահէր Կովկասի մէջ, երեք ժողովուրդներու միջեւ : Երեք հանրապետութիւնները ալ հարիւ կազմուած, իրարմէ կ'ուզէին խլել սահմանակից հողամասեր : Վրաստանի ձգտումն էր տիրապետողի դիրքը գրաւել Անդրկովկասի մէջ : Հայաստան սիրած էր իր սահմանները պաշտպանել Վրաստանի դէմ, Ադրբէյճանի եւ Թուրքիոյ դէմ : Պայքարը միայն զէնքով չէր, այլ նաեւ տնտեսական եւ անգութ, ա-նանց նկատի առնելու դրացի երկրին սովը, տնտեսական վատթարութիւնը :

Երկրին մէջ ալ Վրաստան կ'աշխատէր միատարը բնակչութիւն մը ունենալ, ուստի հալածել սկսաւ տարիներէ ի վեր հոն հաստատուած Հայերը :

Վրացիներու քաղաքական պատրաստութեան, ճարպիկութեան դէմ Հայերը կը մնային անզօր, որովհետեւ «վեց դարէ ի վեր կորսուած էին պետականութիւն ծառներու լուծը ծանր արժած էր թէ' բարոյապէս եւ թէ' քաղաքական հասուցնութեան տեսակէտէ» : Ծառը քաղաքական դէմքեր կովկաս այցելելով կը տեսնէին Հայուն եւ Վրացին տարբերութիւնը : կենսագործութիւնը : Անոնց ամենէն ճարպիկութիւնը եղաւ առաջին առիթով զերմանական ուղղութիւն որդեգրել, որովհետեւ ունէին ազնուական սեռունդ մը, պատրաստուած քաղաքական կեանքի :

Պ. Փափազեան այնուհետեւ կը ներկայացնէ Ադրբէյճանի դատապրութիւնները Հայաստանի դէմ : Վրացիներ կը յափշտակեն ռուս բանակին դինամթերքը, Ադրբէյճանն ալ կ'իւրացնէ անգլիական կառավարութեան կողմէ Հայաստանի տրուած ռազմամթերքէն կարեւոր մաս մը իրեւ բանգիթի իրաւունք :

Վրանգը միայն դրացիներէն չէր սակայն, Հայաստանի Թաթարներէն եւ հայ համայնավարներէն կը կազմակերպուէր ներքին վտանգը : Ասով մէկտեղ յուսալից էին ամէնը, չաւեր ալ կը մեկնէին երկիր, չէնցնելու համար մօտալուտ ապագայի մէջ կազմուելիք հայրենիքը :

Փարիզի մէջ կը գումարուի Ազգային Համագումարը, բազկացած կեդրոնախոյս անհատներէ, բժիշկ, գրագէտ, բանաս-տեղծ, ուսուցիչ : Նշան Տ. Սահակեանի համար գրուած է ամփակալար, ինչ որ սըխալ է : Վկայեալ գիւղատանեաց Պոլոնեայի համալսարանէն, բնիկ Երզնկացի, սեփական թղթակիցն էր «Ազատամարտ»ի : Ունէին արեւելահայի եւ արեւմտահայի նախապաշարումներ, կուսակցական մը-տածողութիւններ, կը յիշեն անուշա Ազգ. Խորհրդի մէջ տեղի ունեցած վէճերը : Շատով երեւան պիտի գան Հայաստանի Հանրապետութեան եւ Ազգ. Պատուիրակութեան հակամարտութիւնները, երբ Ազգային Համագումարը պիտի սկսի : Այլ խնդիր պիտի նկատուէր արեւելահայերու հարցը, այլ նաեւ Թրքահայ հարցը, լուծումն ալ տարբեր պիտի ըլլար :

Դաւրեան Սրբազան կը պնդէ յամառութեան, որ Կիլիկիան ալ Հայաստանի սահմաններուն մէջ առնուի, որպէսզի ելք ունենայ Միջերկրականի վրայ : Զոյգ պատուիրակութիւնները խորհրդային վերաժողովին կը ներկայացնեն յիշատակագիր մը եւ « Ծովէ Ծով » Անկախ, Ազատ, Միացեալ Հայաստանի մը քարտէսը : Մինչդեռ Պօղոս փաշա համաձայնութիւն մը կնքած էր միայն Ֆրանսական կառավարութեան հետ, Կիլիկիոյ մէջ ինքնավար Հայաստան մը հաստատելու, Ֆրանսայի հովանաւորութեան տակ : Պատուիրակներու ոչ – դաշնակցական անդամները կը պահանջէին Կիլիկիան, հակառակ էին եւ ռուս սահմաններէն հեռու մնալ ուզէին :

Ծառը բազմաթիւ հայասէր կազմակերպութիւններ եւ անհատներ, պետական դէմքեր կ'աշխատէին ի նպաստ հայկական դատին : Բարեկամ է ծերունի Վենիզելոս, որ խորհուրդ տուած է «չափաւոր ըլլալ պահանջներու մէջ, բաւականանալ ոսկի տեղ մը ունենալով» :

Ֆերիա եւ Իզղեթ փաշաներ համաձայն են հողային դիջումներ ընելու Հայաստանի : Հրապարակ կուգան Պոնտոսի Ցոյները, Քիւրտերը կը ներկայանան Շեվրիֆ փաշայով : Հարցը կը կնճռոտի ալ աւելի : Քեմալական չարժումը, պետութեանց անհամաձայնութիւնը վերջ կուտան ամէն բազձանքի :

Ամերիկայի մէջ կ'աշխատին ամերիկեան հողատարութիւնն ապահովել : Նախագահ Ուիլսըն համամիտ է, պիտի ղրկուին ամերիկեան պատուիրակներ, տեղւոյն վրայ ուսումնասիրելու կարելիութիւնները : Ամերիկեան ծերակոյտը կը մերժէ հողատարութիւնը, Քեմալական չարժումը համակրութիւն կը գտնէ Ս. Միութենէն, Սեւրի դաշնագրէն դժգոհ պետութիւններէն : Քեմալական յաղթանակը Սեւրէն Լոզան փոխադրել կուտայ Թուրքիոյ հարցը : Ներքին ան-համաձայնութիւններ պատուիրակներու միջեւ, հայասէրներու աշխատանք, ամէն դիմում ամէն կողմ ապարդիւն կը մնան :

Ֆրանսացիները կը պարպեն Կիլիկիան : Անգլիա քաղաքական տեսակէտով երկդիմի, անորոշ, մարզասիրական դեմքի վրայ անմրցելի կը մնայ, գերման Ռոր-պախի վկայութեամբ : Հարիւրաւոր Հայեր անգլիական չոգենաւերով կը փոխադրուին Պոլսէն դուրս :

Պատուիրակութեան անդամներ, հայաչէրներ կը դիմեն Լոզան : Անկախութեան, Միացեալէն հրաժարելով դիմում պիտի կատարեն ինքնավար Ազգ. Օճախի մը համար : Հարիւրաւոր բողոքագրեր, անձնական դիմումներ կը կատարուին, կը յուսան թէ դիմումները ապարդիւն պիտի չըլլան :

Վիքթոր Պերար, հայ հարցին ի նպաստ աշխատող մը, կը թելադրէ Կիլիկիոյ կողմը դարձնել իրենց ուշը, որովհետեւ հոն աւելի ամուր հող կարելի է գտնել քան ռուս ազդեցութեան գօտիին մէջ գտնուող նահանգներուն մէջ : Անգլիացիներ կ'ուզեն օճախը տեղաւորել Կիլիկիոյ մէջ, Ֆրանսացիներ արեւելեան նահանգներու մէջ : « Արեւմտեաններու մէջ ալ Թուղ հակառակներ կան, կը վախնան կուլ եր-թալէ ռուս մոլոքին : Ուշչինկիրէնէն ալ կը հազորդուի, թէ ամերիկեան կառավարութիւնը հրահանգած է Զայդին, բողբոջելու հայկական հարցով, հայ օճախ-ին : Ծովակալ Պրիսթոլ, Ամերիկայի Պոլսոյ դեսպանը բացատական դիրք կը բռնէ հայկական հարցի հանդէպ : Կրկին անգամ կը դիմեն սակայն ծովակալին : Կը յուսան ոգոքել Ամերիկացիին քար սիրտը : Ամերիկացի Պիրսթեա կը յիշէ ծովակալին խօսքը . «Հայերը ոչ միայն անմիտ եղան, այլ նաեւ անհաւատարիմ, համակրեցան Ցոյներուն, յոյներէն կոխին մէջ, իրենց խռովարար ընթացքով իրենց վրայ հրաւիրեցին կոտորած եւ տարագրութիւն...» :

Ներքին ճակատի վրայ պայքար պոյտ պատուիրակութեանց միջեւ : Պօղոս Նուպար կը պնդէ, որ ազգային հարցը բաժանուի Հայ Հանրապետութեան Հայաստանի հարցէն : Օտարներ կը միջամտեն համաձայնութեան համար : Լոզանի ժողովին առջեւ պատուիրակութիւնները կը հանդերձեն : Կ'երեւի, թէ նորէն անհամաձայն են, որովհետեւ ժողովէն ետք, 2 Սեպտեմբեր 1924ին, Փրնեւի մէջ համերաշխութեան կոչ կ'ուղղեն Հայերուն : Երկրին մէջ կարգապահութիւնը կը պակսի, բանակին մէջ «սպաներու միջեւ անկեղծ, մտերմական յարաբերութիւն չըստեղծուեցաւ : Անկանոն ուժերը (նախկին կամաւորներ) դժուարութեամբ կ'ենթարկուէին զինուորական կարգապահութեան : Մեր բանակի ձախողանքներուն մէջ այս հանգամանքները աննշան դեր չկատարեցին » :

Պերլինի վեհաժողովին առեն հայ պատուիրակութիւնը ցոյց տուաւ աններդաշնակ դործունէութիւն : Զօպանեան, հիացող մը Ուրխանեանի եւ Նարպէյի, կը դրէր . «Պերլինի մէջ հայ պատուիրակները ցուցաբերեցին հայկական նկարագրի բացատական դիծերը» : Ուրխանեան մեկնեցաւ Պերլինէն բողոքելով, Լոզանէն կը հեռանան պատուիրակութեանց նախագահները, բողոքագիր մը յղելէ յետոյ :

Գործը կը վերջանայ վաւերագրերու չարքով մը (307էն 424), որոնցմէ ամենը նորութիւն են եւ չհեղեան : Պատմութեան ատաղձներ են, հայ պատմութեան ամենէն ողբերգական շրջանին վերաբերող, հայ քաղաքական ուղղութիւնը ցոյց տալու, արիւնոտ էջերէն մէկը ներկայացնող :

ԽՈՐԻՆ ԳԱՒԻՒՔԵԱՆ

ՀՐԱՏԱՊ ՊԱՀԱՆՋ ՄԸ

Կրեմլինի ներկայ մենատէրը՝ Ն. Ա. Բուչչեւ, նման իր հոդեհօր՝ Ստալինի, կը սնուցանէ նուաճողական ծրագիրներ : Կրեմլինի վարիչները բազմիցս յայտարարած են որ իրենց կէտ – նպատակը՝ ոչ համայնավար երկիրները խորհրդային իշխանութեան ներքեւ առնելն է, այլ խօսքով, նման խորհրդային երկիրներու բազմամիլիոն ժողովուրդներուն, ապատ մարդկութիւնը պիտի դերիվարուի «պարտիա»յի մը ահարկու եւ չարագէտ բռունցքին ներքեւ :

Այնքան ժամանակ որ ապատ աշխարհը ի նպաստ իրեն կը պահէր ուժերու դերակշռութիւնը, այս կէտ – նպատակը կը մնար պատրանքի սահմաններուն մէջ : Սակայն Սպուտնիկին եռքը՝ ներկայ ո-րևէ ուրն, ուր ակնյայտնի կը դառնան Խորհրդային Ռուսաստանի պետական յաղ նուաճումները, պատրանքը կարող է իրողութիւն դառնալ :

Դեռ եւս թարմ է բոլորին յիշողութեան մէջ, Ուրչչեւի «ներսէն համաստա-ռած դերեզմանավայր մը դարձնելու » եւ « յաղթող պատերազմը ամերիկեան ցամաքամասին օգային պաշտպանութիւնը ապահոված, Զօր. Փարթրիճ կը յայտարէր թէ իր տրամադրութեան ներքեւ դանուած բատարները ի վիճակի չեն ճըգնդելու ռուս. հողէն արձակուած որեւէ

ՅՈՒՇԵՐ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԱՍԻՆ

(1902 — 1906 Թ. Թ.)

Ահա հնչեցին զմայլիչ ակորդները եւ Կոմիտաս վարդապետն սկսեց «Անուշ-նիկ» : Ինչպիսի թաւչային փափկութիւն ձայնի ինչպիսի խորութիւն ապրումներու, ինչպիսի դրսեւորում վշտի, կարօտի ու տենչանքի... Մինչեւ վերջին «Տօ լամ, անուշ»ը էլեկտրականացրել էր բեմն ու դահլիճը ...

Վարագոյրն իջել, Կոմիտաս վարդապետն ու խումբը դնացել էին արդէն բեմից, իսկ դահլիճում դեռ չարունակում էր ծափերի որոտը :

Ճեմարանում, սովորաբար, հանդէս-ները կազմակերպւում էին տօների կապակցութեամբ : Բացի Վարդանից եւ Ճեմարանի հիմնադրութեան տարեդարձի տօներից, հանդէսներ կազմակերպւում էին նաեւ նոր տարուայ առթիւ, Բարեկենդանին, Ս. Մեսրոպի տօնին եւ Կաթողիկոսի (Սրխմեան Հայրիկն էր այն ժամանակ) անուանակոչութեան առթիւ եւն. : Հանդէսները սովորաբար բացւում էին « Տէր, կեցո զու զհայս» մաղթերգով, որի կատարմամբ եւ Կոմիտասի ղեկավարութեամբ : Ճեմոյ կատարւում էր զեղուում սեւէ դասատուի կողմից օրուան պատշաճ, ապա երգեր, արտասանութիւններ կամ ներկայացում, յետոյ խմբական պարեր եւ մենապարեր : Մեծ տօները վերջանում էին նաեւ հանդիսաւոր ճաշով վանքի մեծ սեղանատանը : Երբեմն, հանդէսների կամ ճաշի ժամանակ, ներկաների խնդրանօք, Կոմիտաս վարդապետը երգում էր սրեւէ երգ, որը լսում էր մեծ ուշադրութեամբ եւ զոհունակութեամբ :

Այդ հանդէսներին, բացի ճեմարանի վարչութիւնից եւ բարձրաստիճան հոգեւորականներից, ներկայ էին լինում նաեւ պատուակալ հիւրեր ուրիշ քաղաքներից եւ արտասահմանից : Եթէ պատահէր, որ Սրխմեան Հայրիկն էլ ներկայ լինէր հանդիսաւոր ճաշի, մեծ սեղանատանը, Կոմիտաս վարդապետն անպայման երգում էր «Հայաստան, երկիր դրախտավայր»ը, Հայրիկի սիրած երգը : Հայրիկ սիրելապոյն անձն էր, որին խորին ակնածութեամբ ու անկեղծութեամբ յարգում էր Կոմիտաս վարդապետը :

×

1903 Յունուարի աշնան սկիզբն էր Կովկասեան փոխարքայ Գալիցինի հրամանով Երեւանի նահանգապետը զօրքերով չրջապատել էր Էջմիածնի Վեհարանը եւ պահանջում էր Սրխմեան Հայրիկից դանձարանի բանալիները և եկեղեցական կալուածների յանձնումը ցարական պետութեանը :

Դէպքը յուզել էր ամբողջ Հայութեանը եւ Կովկասի քաղաքներից, մանաւանդ Բարատեան գաւառի քաղաքներից եւ գիւղերից հազարաւոր Հայեր էին հաւաքուել Էջմիածնում՝ իրենց բողոքը յայտնելու Ցարին :

Սրխմեան Հայրիկը մերժում է յանձնել բանալիները եւ հրամանը կատարել : Կաթողիկոսի այդ անվեհերութիւնը յուզում է զուրսը ալեկոծուող բազմութեանը, որը բացագանչում է. «Կեցցէ Հայրիկը, կեցցէ մեծ Հայրենասէրը» : Ի վերջոյ նահանգապետը հրամայում է չարդել դանձարանի դուռը եւ պարտնակութիւնը չատապով տեղափոխել Երեւան :

Նահանգապետի հեռանալուց յետոյ վեհարանից սկսեցին մէկ – մէկ դուրս գալ միաբանները եւ տխուր, ղլխիկոր ցրուել դէպի իրենց բնակարանները :

Այդ օրը մենք, մի քանի ճեմարանականներ, նորաչէն Թանգարանի պատրէ-զամբն էինք բարձրացել եւ դիտում էինք բոլորը, ինչ կատարուում էր վանքի բակում, Վեհարանի առաջ : Տեսանք, թէ ինչպէս Կոմիտաս վարդապետն էլ դուրս եկաւ Վեհարանից եւ գլխիկոր ու անսո-վոր քայլերով ուղղուեց դէպի իր բնակարանը : Երեւում էր, որ նա իր կեանքի թախծալից եւ յուզումնալից օրերից մէկն է ապրում :

Պատանի հասակից նրան որդեգրել, խնամել եւ մինչեւ տասեւհինը խնամատար էր եղել Սրխմեան Հայրիկը : Դրա համար էլ, բացի խորին երախտապարտութիւնից, Կոմիտաս վարդապետը վեհ ակնածութեամբ սիրում եւ յարգում էր ծերունի Կաթողիկոսին որպէս հարազատի, ուստի, բնականօրէն, Կաթողիկոսի այդ օրուան վիշտը խորապէս յուզել էր նաեւ Կոմիտաս վարդապետի զգայուն հայրենասէրի հոգին :

Մի քանի երգիչներ ցանկութիւն յայտնեցին նեցինք դնալ Կոմիտաս վարդապետին այցելութեան : Բայց խորհելով, որ այդ օրուայ դէպքերը չափազանց վատ ազդած կը լինեն նրա տրամադրութեան վրայ, յետաձգեցինք մեր այցը հետեւեալ օրուան :

Յաջորդ օրը չորս հոգով, Խոսրով Փախչանեանը, Յակոբ Յարութիւնեանը, Սուրէն Տէր – Գրիգորեանը եւ ես գնացինք Կոմիտաս վարդապետի մօտ :

Երբ մտանք պարտէզ – բակը եւ սան-դուղքներով բարձրացանք պաշտամբ, լսեցինք ներսից խօսակցութեան ձայները : Անժամանակ համարելով, ուզում էինք յետ դառնալ, երբ լսեցինք Կոմիտաս վարդապետի ձայնը .

— Չը՛, զուռնաչինե՛ր, էդ ո՞ւր էք փախչում :

Ս. ԲԱՂԻՐԵԱՆ

(6 Շար.)

ԿՅՆՔԻ

Վ.

ԱՀԱՍՏԱՆ ԲԱՀ ՀՈՂ

Ո՞րն է ամենաերջանիկ ժամանակը մարդու կյանքում։ Ոմանք կասեն՝ մանկությունը, որովհետև այդ ժամանակ մարդ ոչ մի հոգս չունի, ոչ մի վշտի մասին չգիտե, ոչ մի դժբախտություն չի ճանաչում։ Ուրիշներ կասեն՝ պատանեկությունը, որովհետև այդ ժամանակ մարդ ամեն բանից հուսադրվում է, ամեն բանի մեջ գեղեցիկ կողմեր է տեսնում, ամեն բանից մեծ հաճույք է ստանում։ Ոմանք էլ կասեն՝ ամուսնությունը, որովհետև այդ ժամանակ մարդ ունենում է իր սրտի ընտրյալին, որի հետ միասին նա կարող է ապրել իր սրտի ուզած պես։ Ես էլ կասեմ

Իսրայէլի մօտ մարդ է։ Դժուարին կա – յուքիւն մը Համբրչոլտի համար՝ մանա – ւանդ այս չրջանին, երբ սահմանային մի – ջադէպեր յաճախակի դարձած են։

Յորդանանի եւ Իսրայէլի միջեւ Սկա – բիւս լեռը վէճի առարկայ դարձած է հի – մա։ Յորդանանցիք փակած են անոր ճամ – բան՝ զինուորական կարեւոր ուժեր կեդ – րոնացնելով այնտեղ։ Զինադադարի յանձնախումբին համաձայնութեամբ՝ այդ լեռը կը պատկանէր Իսրայէլի։ Այ – սօր, երբ Համբրչոլտ երուսաղէմ հասնի՝ կառավարութիւնը թղթածրար մը պիտի ներկայացնէ իրեն, որուն առաջին կէտն է հրեայ զինուորական ուժեր Սկոբիւս լեռը դրկելու պարագան։ Իսրայէլ կ'ա – ռարկէ նաեւ, որ Յորդանան արգիլեալ գօտի հռչակած է սուրբ վայրերը։

Եթէ անակնկալ մը չպատահի՝ Համբր – չոլտ Եչ. օր պիտի երթայ Սուրիա, արար դեկավարներու հետ խորհրդակցելու հա – մար։ Բաղմաթիւ հարցեր կան, որ կրնան արծարծուի Դամասկոսի տեսակցու – թեան ընթացքին. Իսրայէլ – Սուրիա սահմանային նոր կռիւները եւ թուրքիւ – սուրիական լարուածութիւնը, մանա – ւանդ՝ երբ Սուրիա կը մտածէ Սանճակը պահանջել։

Մակի ընդհանուր քարտուղարին խոր – հրդակցութեանց պլխաւոր կէտերն մէկն ալ արաբ տարագիրներու խնդիրն է, որ բոլոր պետութեանց մտահոգութեան ա – ռարկան դարձած է։

Մինչ Համբրչոլտ արաբեւիսրայէլ լար – ուածութիւնը մեղմացնելու համար Մի – չին Արեւելք կը դոնուի, Թել Ավիվէն կը հայտարարեն թէ Յորդանանցիք կրակ բա – ցած են Իսրայէլի հողամասին վրայ ու եւս մղուած։ Զեռնաւումբեր ալ արձակ – ուած են։

× Գահիրէէն կը հաղորդեն, թէ Դեկ – տեմբեր հինգին Նախագահ Նասը կարե – ւոր ճառ մը պիտի խօսի։ Եգիպտական մամուլին համաձայն մանրամասնութիւն – ներ պիտի տայ երկրին ճարտարարուես – տականացման ծրագրին չուրջ եւ Մոս – կուա-Գահիրէ տնտեսական դործակցու – թեան մասին։

Միւս կողմէ, Գահիրէի ձայնասփիւռը յայտարարեց թէ Գ. օրուան Ժրնեւի ժո – ղովը՝ Ֆրանքեւեգիպտական խորհրդակ – ցութեանց արդիւնքը պիտի ճշդէ։ Ձայ – նասփիւռը աւելցուց նաեւ, թէ երկու պատուիրակութիւնները կատարեալ հա – մաձայնութիւն մը զոյացուցած են բոլոր կէտերուն վրայ. չեն համաձայնած միայն Սուէզի ջրաման առիթով եղած նիւթա – կան վնասներու եղիպտական պահանջքին վրայ։

—o—

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՆԱԽԱԳԱՀ ԱՃԶԸՆՀԱՈՒՐԸ առողջու – թիւնը վերադտած ըլլալով վերադարձած է Ուոչինկթըն եւ ներկայ եղած կառավա – րութեան ժողովին։

ՀԱՄՊՈՒՐԿի մէկ պարտէզին մէջ խոր – հրդաւոր առարկայ մը ինկած է, ահա – կին ազմուկ բարձրացնելով։ Սպուտնիկի հրթիռին մնացո՞րդը արդեօք, հարց կու – տան պիտական չրջանակները։ Առարկան սկսած է ուսումնասիրուիլ պիտուններու կողմէ։

ՃԱՔԱՐԹԱՑԻ մէջ Ինտոնեզիոյ Հան – րապետութեան Նախագահին դէմ մահա – փորձ մը կատարուեցաւ. եօթը հոդի ըս – պանուեցաւ, սակայն Նախագահը ապա – տեցաւ ստոյգ մահէ։

Ա. ՄԻՈՒԹԵԱՆ նախկին Արտաքին նա – խարար Շեպիլով վերադարձած է Մոս – կուա եւ կ'աշխատի Գիտութիւններու Ա – կադեմիային տնտեսական հաստատու – թեան մէջ։

ԼՈՆՏՈՆԻՆ կը հաղորդեն, թէ Զըրչիլ ոտնած է իր 83րդ տարեդարձը՝ մտերչալ Մոնկոմըրիի հետ։

ՊԵՆԻԱՄԻՆՕ ՃԻԼԻ, իտալացի նչանա – ւոր երգիչը մեռաւ առջի օր, 67 տարե – կան հասակին, Իտալիոյ մէջ։

ՄՈՍԿՈՒԱՅԻ եռվոլալու դեսպանատան մէջ ընդունելութիւն մը տրուած է, որուն ներկայ եղած են Խրուչչեւ, Բուլգանին, Միկոյեան եւ մտերչալ Մալինովսկի։

ՀՈՒՆԳԱՐԻՈՑ համայնավար կուսակ – ցութեան կեդրոնական Կոմիտէն մօտերս ժողով մը պիտի դումարէ Փեչտայի մէջ, ուր Քատար պիտի հաղորդէ Մոսկուայի մէջ իր ունեցած խորհրդակցութեանց ար – դիւնքը։ Այս ժողովէն ետք Հունգարիոյ քաղաքականութիւնը կրնայ փոփոխու – թեան ենթարկուիլ։

ՑՈՒՇԱՏԵՏՐ

ԱԼՖՈՐՎԻԼ.— Հ. Յ. Դ. Ս. Մինասեան ենթակոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները այս ուրբաթ, ժամը 21–ին, ծանօթ հաւաքատեղին։ Ներկայ կ'ըլ – լայ Շրջ. կոմիտէի ներկայացուցիչը։ Կը խնդրուի ճշդապահ ըլլալ։

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ

ԵՐԵԿՈՆ ՍԷՆ – ՇԱՄՈՆԻ ՄԷՋ

Այս Շաբաթ (Դեկտ. 7), ժամը 21էն մինչեւ լոյս, տեղւոյն Սալ տէ Ֆէթի մէջ։ Մասնակցութեամբ՝

ANDRÉ MALIAN ET SES RYTHMES

Պիւֆէ, պիւվեթ, ֆօթիյօն եւ խաղեր։ ՀԱՃԵԼԻ ՄԹՆՈԼՈՐՏ։

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՅԿԵՐՈՅԹԸ
ՄԱՐՍԷՅԼ

22 Դեկտեմբեր, կիրակի ամբողջ օրը, Պոմոնի Ս. Սահակ եկեղեցւոյ սրահին մէջ։

Հայկական համադամ կերակուրներ, նուագ, երգ, արտասանութիւն եւ ուրախ մթնոլորտ։

Ճաշագին 1000 ֆրանք։

Տեղերը ապահովել Համազգայինի ան – դամներուն մօտ։

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

ԼԻՈՆ.— Եկեղեցականը յանձնախումբը չնորհակալութեամբ առած է հետեւեալ նուէրները, ի նպաստ Լիոնի եկեղեցւոյ չինութեան։ Մարսէյլի մէջ ընտանեկան հաւաքոյթի մը ընթացքին հաւաքուած է չինութեան համար 26.000 ֆրանք։ Տէր եւ Տիկին Ադամեանէ հազար ֆրանք։ Մարսէյլէն Տիկին Ազնաւուրեան իր զաւ – կին Տիկին Արշալոյսի մահուան 8րդ տա – րելիցին առիթիւ կը նուիրէ չինութեան 8000 ֆրանք։ Նիմէն Տիկին Սաթենիկ Վառվառեան հինդ հազար, Տէր եւ Տիկ. Միքայէլ Տէր Յակոբեան հանդուցեալ Սաղաթէլ Փափազեանի մահուան քառա – սունքին առիթիւ երեք հազար ֆրանք։

×

ՄԱՐՍԷՅԼ.— Տէր եւ Տիկին Սեւնէք – րիմ Տէրտէրեան, իրենց աղջկան Հէ – ղինէ Տէրտէրեանի եւ Պ. Սեպուհ Ճանիկ – եանի ամուսնութեան առիթիւ կ'ընեն հե – տեւեալ նուէրները.— Պուլվար Օտտոյի Ս. Յակոբ եկեղեցիին հազար ֆրանք, Պուլվար Օտտոյի Ֆ. Կ. Խաչին հազար, Սերաստիոյ Մուրատ Ուսումնասիրացի Պուլվար Օտտոյի մասնաճիւղին հազար, Սերաստիոյ Վերաչինաց Միութեան հա – զար։

Ֆ. Կ. Խաչի Սերաստիոյ Մուրատ Ու – սումնասիրացի եւ Սերաստիոյ Վերաչի – նաց նուիրուած դումարները ստանալ Պուլվար Օտտոյի Թաղականութիւնէն։

ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ

ՄԱՐՍԷՅԼ.— Պուլվ. Օտտոյի Ս. Յա – կոբ եկեղեցիի Թաղականութիւնը չնորհակալութեամբ առած է հետեւեալ դու – մարները փոխան ծաղկեպսակի, հան – գուցեալ Գարեգին Գազանճեանի մահուան առիթիւ։ Տիկին Ս. Գարբիէլեան հինդ հարիւր ֆրանք Արծիւ Մարզական միու – թեան եւ 500 ֆր. Ֆ. Կ. Խաչի Պուլվար Օտտոյի մասնաճիւղին։ Պ. Էքսիւզեան հազար ֆրանք Աղքատախնամին։ Պ. Ս. Ղարիպեան հազար ֆրանք Արծիւ Մար – զական միութեան եւ հազար ֆրանք տեղւոյս Ազգ. վարժարանին, Պ. Ս. Հայ – րապետեան 500 ֆր. եկեղեցիին պայծա – ռութեան։

— Այրի Տիկին Հռիփսիմէ Թումպուլ – եանի մահուան առիթիւ, փոխան ծաղկե – պսակի Պ. Ա. Յակոբեան հազար ֆրանք Պուլվար Օտտոյի Ֆ. Կ. Խաչին։ Արծիւ Մարզական միութիւնը հազար ֆրանք տեղւոյս Ազգ. վարժարանին։ Պուլվար Օտտոյի Ֆ. Կ. Խաչի մասնաճիւղը հազար ֆրանք տեղւոյս Ազգ. վարժարանին։

Այս առիթիւ Թաղականութիւնը իր յա – ւակցութիւնները կը յայտնէ Գազանճեան եւ Թումպուլեան ընտանիքներուն։

Imprimé sur les presses du journal HARATCH
17, Rue Bleue, 17 — PARIS (9e)

ԼՈՑՍ ՏԵՍԱԼ

1958ի "ԳՈՅԱՄԱՐՏ" ՕՐԱՑՈՑՑ-ԱԼՊՈՄ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ. Յ. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ՄԱՐՄԻՑԻ ՇՐՋԱՆԻ
ԸՆՏԻՐ ԹՈՒՂԹՈՎ 14 ՄԵԾԱԴԻՐ ԷՋԵՐ
Շէեղ ճկարներ, մեծ մասը անտիպ։ Գրական եւ պատմական նիւթերով ճոխ բովանդակութիւն
— ԳԵՂԱՋԱՐԴ ԵՒ ԳՈՒՆԱՒՈՐ ԿՈՂՔ —
Բացառիկ խնամքով եւ ճաշակով պատրաստուած այս օրացոյց-ալպոմը պիտի կազմէ զարդը՝ ամէն հայ տան։
ԳԻՆ 500 ՖՐԱՆԳ — Այժմէն ապահովեցէք ձեր օրինակը
Փարիզի համար դիմել՝ LIBRAIRIE H. SAMUELIAN, 51, Rue Monsieur-le-Prince, PARIS - 6e

ՏԱՐԵԿԱՆ ՇՔԵՂ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ
ՍԻՓԱՆ-ՊՈՄԻՏԱՍ ԵՐԳԱՀԱՆՈՒՄԲ
ԿԻՐԱԿԻ, 15 ԴԵԿՏԵՄԲԵՐ ԺԱՄԸ 16ԷՆ 23
SALONS DES AMBASSADEURS (Champs - Elysées)
ORCHESTRE BACHICHA
Սեղանները ապահովել՝ հեռաձայնելով Պ. Աբմանի Սանթրալ 36-23։
ՄՈՒՏՔ 500 ՖՐԱՆՔ

ՇԱԽԻԼԻ ԵԿԵՂԵՑԻ

Շաւիլի կրօն. Ընկերակցութեան վար – չութիւնը եւ երիտ. եկեղեցականը յանձ – նախումբը կը ծանուցանեն թէ Դեկտ. 15–ին, կիրակի օր տեղի պիտի ունենայ նո – րահաստոյց եկեղեցւոյ օծումը եւ անդրա – նիկ Ս. պատարագը ձեռամբ կաթողիկո – սական պատուիրակ՝ եւ Փարիզի Առաջ – նորդ ԳԵՐ. ՏԷՐ ՍԵՐՈՎԲԷ ԵՊԻՍԿ. ՄԱ – ՆՈՒԿԵԱՆԻ։

Սկիզբ ժամերգութեան ժամը 8, օծում ժամը 10, Ս. պատարագ 10.30։

Կը հրաւիրուի հաւատացեալ ժողովուր – դը։ Յաւարտ Ս. պատարագի կազմա – կերպուած է ճաշ մը Վերսայլ Օթէլ տը Ֆրանսի չքեղ սրահին մէջ (Փլաս տ'Արմ, րիւ Քոլպէր)։

Այս ճաշին մասնակցիլ փափաքողներէն կը խնդրուի արձանագրուիլ մինչեւ Դեկ – տեմբեր վեց եւ ստանալ սեղանակիցի մասնաւոր քարթը, (ճաշագին 3000 ֆր)։

Վերոյիշեալ թուականէն վերջ ոչ մէկ արձանագրութիւն պիտի ընդունուի։

Արձանագրութեան համար դիմել Փա – րիզի եկեղեցւոյ դիւանատունը,

Պ. Հրաչ Զուլոքեանի՝
14, Rue Maréhal Foch Viroflay

Պ. Զաւէն Յովհաննէսեանի
31, Rue de Général Léclerc, Versailles

կամ

ASSOCIATION CULTUELLE DES ARMÉNIENS DE CHAVILLE
C. C. P. Paris 14827-18

ԿԸ ՓՆՏՌՈՒԻՆ

× Երեւանէն Սահակ Գուլումճեան կը փնտռէ իր հայրը Յակոբ Գուլումճեան, Պ. Սահակ Գուլումճեան իր կնոջ եւ զաւակներուն հետ կը բնակի Երեւան ուր ներգաղթած է 1948ին։

× Հայաստանէն Տիկին Վիքթորիա Ճրոյեան կը փնտռէ իր զարմիկը Յովհան – նէս Ագաեան։

× Հայաստանէն Տիկին Արաքս Հով – հան կը փնտռէ իր եղբայրը Վարդան Ենովքի Հովհաննը, ծնած Նոր Պայազիտ 1925ին։

× Շնորհիկ Յակոբեան կը փնտռէ իր եղբօր որդին (Գլճեան), Սարգիս Կարա – պետեան, Կ. Պոլսեցի որ 1921էն ի վեր կը պտնուի Ֆրանսա։

× Հայաստանէն Անահիտ Պետրոսի Գէորգեան կը փնտռէ իր զաւակը Համ – լէտ Բագրատի Գէորգեանին, ուսանող ե – ղած է Երեւանի նկարչական վարժարանը։ 1942ին զացած է ռազմաճակատ եւ այդ օրուանէն ոչ մէկ լուր ունի։

× Հայաստանէն Մարիամիկ Պարտիզ – պանեան կը փնտռէ իր եղբայրը Պուրսա – ցի Հաճի Յակոբ Պարտիզպանեանի, կնոջը Լուիզին Սեպուհ վարժապետի աղջիկը եւ զաւակները։

Այս փնտռտուոց հետեւեալ անձերու հաս – ցէները գիտցողներէն կը խնդրուի տեղե – կացնել Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցւոյ դի – ւանատունը, 15 Րիւ Ժան Կուժօն, Փարիզ (8)։

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԼՍԱՐԱՆ

Հերթական դասախօսութիւնը այս չո – րեքշաբթի դիշեր Քատէի սրահին մէջ, ժամը 21ին։ Կը խօսի Պ. Վ. Մելիքեան։ Նիւթ՝ «Խրիմեան Հայրիկը մեր քաղաքա – կան պատմութեան մէջ»։ Իր մտահոգ յիանամեակին առիթիւ։ Կը խնդրուի ճշդա – պահ ըլլալ։


ՄԱՐՍԷՅԼԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Եկեղեցիին վարչութիւնը կը ծանուցա – նէ թէ՝ իր հիմնած հայերէն լեզուի եւ հայրենագիտութեան դասընթացքը վեր – սկսած է, դասախօսութեամբ ձեռնհաս ուսուցիչի մը, Բարեզործականի սրահին մէջ, ինչպէս նախորդ տարիներ, 19ա, Րիւ Վաւիթիւր, ժամը 19–21, ամէն երեք – շաբթի եւ ուրբաթ։ Ծնողները կը հրա – ւիրուին օգտուիլ առիթէն՝ արձանագրե – լով երկու սեռէ եւ ամէն տարիքէ իրենց զաւակները, դասերու պահերուն։

ՍՏԻՊՈՂԱԿԱՆ

Կը փնտռուի մէկ կամ երկու սենեակ, խոհանոցով վարձու, Փարիզի մէջ կամ արուարձաններր։

Դիմել թերթիս վարչութեան։


Նոր կատարելագործում կօշիկի կրունկներու պատրաստութեան մէջ

Առաջին հայ հաստատութիւնը որ յա – ջոդած է մաքիէր փլաստիմի եւ ալիւ – մինիումի միացումով չինել անբիկ (էնեա – սապլը) եւ ճկուն կօշիկի կրունկներ ամէն բարձրութեամբ։

Դիմել՝
VANPLAST
(Վ Ա Ն Լ Է Ա Ն)
7, RUE GODOT DE MAUROY
Tél. : OPE. 01-08
Առաւօտները հեռաձայնել՝ ITA 33-38

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction - Administration : 32, Rue de Trévise, Paris 9e

Fondé en 1925 — Tél. : PRO. 86-60

R. C. Seine 57 A 2731 — C. C. P. PARIS 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա եւ գաղութներ, տարեկան 3000 ֆր. վեցամս. 1600

Արտասահման՝ տարեկան 3500 ֆրանք: Հատը 12 ֆր.

ՋՈՐԵՔՇԱԲԹԻ 4 ԴԵԿՏԵՄԲԵՐ

MERCREDI 4 DECEMBRE 1957

33ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8059 — 33e ANNEE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 13ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3860

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՀՈՎԻՒ, ՀՕՏ ԵՒ ՈՉԽԱՐ

Հովիւը Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա.ն է: Հօտը՝ Միացեալ Նա – հանդիներու թեմը: Իսկ ոչխարը (անշուշտ « մոլորեալ » կամ «կորուսեալ » խմա – ուով) Ամերիկայի Ազգային Թեմն է, որ անցեալ Հոկտեմբերի սկիզբը կապուեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսու – թեան:

Այս «հովուապահութեան» հեղինակի խ – րատունքը կը պատկանի, — հետեւողու – թեամբ Աւետարանի — Էջմիածինի խորհ – րդարանի: Մայր Աթոռի պաշտօնա – թերթը իր 1957 Փետր. – Մարտի միաց – եալ թիւին մէջ պատասխանելով Ցակոր Եպս. Յովհաննէսի ծանօթ սրտի խօսքերուն, ի մէջ այլոց կը գրէր·

« Նախ ասում էք թէ «այս հատուածը կը սպասէ, որ Ամենայն Հայոց կաթողի – կոսը փնտռէ գիւնը»: Ուստի ընդունում էք, թէ այդ հատուածը «կորուսեալ ոչ – խարի» է նման, եւ հովիւն է, որ պէտք է նրան փնտռի: Բայց դրանից յետոյ աւելացնում էք· «Մայր Աթոռը այդ կէ – սերէն մէկուն միացած, միւս կէսին դէմ՝ դիրք բռնած է»: Դրանով ի՞նչ էք ուզում ասել, ո՞վ ո՞ւմ պէտք է փնտռի: Երկուից մէկն է ճիշդ: Կա՛մ այն է, որ բաժան – ուած հատուածն է, որ պէտք է փնտռուի, դառնալ եւ վերադարձուի ամբողջին՝ հո – տին, եւ կամ հօտն է, որ իր հովիւով մէկտեղ պէտք է դնայ, միանայ «կորած ոչխար»ին:

Հանրածանօթ է Աւետարանի «կորուս – եալ ոչխար»ի առակը «եթէ լինիցի մար – դոյ հարիւր ոչխար»... (Մատթէոս, ԺԸ· 12):

Այսինքն հարիւր ոչխար ունեցող մարդ մը եթէ մէկ ոչխարը կորսնցնէ, միթէ՞ իննսունեւիններն լերան վրայ կամ անապա – տին մէջ ձգելով մոլորեալը փնտռելու չերթար: (Նոյնը տես՝ Ղուկաս, ԺԵ· 4):

Հակառակ այս չատ բնորոշ առակին, « Էջմիածին »ի խմբագիրը կ'ուզէ արդա – րացնել Վազգէն Ա.ր, ըսելով, որ ա՛չ թէ Ամենայն Հայոց կաթողիկոսը իրրեւ Հով – ուապետ պէտք է երթար փնտռէր իր կո – րուսեալ ոչխարը (ինչ որ համաձայն պի – տի բլլար Աւետարանի առակին), այլ այս վերջինն է, որ պէտք է փնտռէր Հովիւը:

«Կորուսեալ» որակուած «ոչխար»ը քա – նի՜ցս փնտռած է Հովիւը, բայց անիկա միշտ ալ մերժած է իր փարախին մէջ ընդունիլ զայն: «Կորուսեալ»ը դրեթէ քա – ոտրդ դար հաւատարմօրէն փարած է այդ փարախին եւ ուրիշ տէր չէ փնտռած: Բայց իրարու յաջորդող Հովիւները երբէք չեն ուզած ընդունիլ զայն իրենց փարա – խին մէջ: Ի վերջոյ անտէր մնացած ոչ – խարը «դայլերու ճարակ չըլլալու համար» դարձ է ուրիշ բարի Հովիւ մը:

Փաստերը պերճախօս են եւ աւելորդ է կրկին յիշեցնել զանոնք:

Աւետարանը կ'ըսէ· « Հովիւ ըլլ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց»: (Յովհ· Ժ· 11):

Վազգէն Ա· իրրեւ քրիստոնեայ Հով – ուապետ պէտք է հետեւէր Յիսուսի խօս – քերուն:

Անցած տարի երբ արտասահման եկաւ, առաջին անգամ պէտք է երթար Ամերի – կա՝ փնտռելու իր «կորուսեալ ոչխար»ը: Զէ՞ որ դարձեալ Աւետարանին մէջ կը գր – ուած է· «Ոչ ուրեք առաքեցայ՝ եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայելի (Մատթէոս ԺԵ· 24): Որպէսզի յետոյ հպարտութեամբ յայտարարէր «Ուրախ եղերուք ընդ իս, զի գտի, զոչխարս իմ զկորուսեալ» (Ղուկաս, ԺԵ· 4):

Սպասելով, որ յատուկ կոնդակով իր դիրքը ճշդէ Մեծի Տանն Կիլիկիոյ կա – թողիկոսութեան հանդէպ, ինչպէս կը խոստանայ Վազգէն Ա· կարգ մը յայտա – րարութիւններ երեր է նաեւ Եգիպտոսի

ՕՐՈՒԱՆ ԴԻՊՔԵՐԸ

ՓԱՐԻԶԻ ԺՈՂՈՎԸ

ԱՁԳԸՆՀԱՒՈՒԼԸ ԵՒ ԱՏԸՆԱՒՈՒԼԸ ՊԻՏԻ ՄԱՍՆԱԿՑԻ՞Ն

Ինչպէս պրած էինք Դեկտեմբեր 16ին պիտի սկսի Ատլանեան Ուխտին ժողովը, Փարիզի մէջ: Նախագահ Այզընհաուըրի հրաւիրագրութիւնը եւ Վարչապետ Ատլն – աուրըի «մտահոգիչ վիճակը» մեծ յու – զում պատճառած էին քաղաքական շրջա – նակներուն մէջ, նկատելով որ երկուքն ալ պիտի մասնակցէին ժողովին եւ մեծ կարեւորութիւն կ'ընծայուէր անոնց փա – րիզ ներկայութեան:

Մինչ Ուրիւինկթընէն հպարտզեցին թէ Այ – զընհաուըրի առողջական վիճակը բաւա – լուած է եւ Նախագահը բժիշկներու արտօնութիւնը ուրած է Փարիզ գալու համար, Պոնէն կը հպարտրէն թէ Վարչա – պետ Ատլնաուըրը անկողինը լքած է եւ ոչ մէկ անպատեհութիւն կայ որ Ատլան – տեան Ուխտի ժողովին չմասնակցի:

Այզընհաուըր կնթզղըրկի իր ապարա – կէն Սպիտակ Տուն վերադարձած է ար – դէն եւ մասնակցած կառավարութեան նիստին, ուր կը քննուէր Ատլանեան Ուխտի ամերիկեան պատուիրակութեան ներկայացնելիք ծրագիրը: Արտաքին նա – խարար Տըլլըս բացատրութիւններ տուած է:

Երէկ Նախագահը մասնակցեցաւ նաեւ ժողովի մը, ուր կառավարութեան ծրա – գիրը պաշտօնապէս ներկայացուեցաւ Խորհրդարանի ղեկավարներուն:

Այզընհաուըր յաջողելու համար Դէ – մոկրատներու օժանդակութեան պէտք ու – նի: Ներկայիս դումարուող ժողովները նպատակ ունին Խորհրդարանի ղեմոկրատ ղեկավարներու դործակցութիւնը ապա – հովելու: Ա· Մութէան դէմ պայքարը դօրացնելու համար՝ Ամերիկայի ծրագիրն է համապատասխանութիւն ստեղծել բոլոր ճակատներու վրայ, արտաքին թէ ներ – քին: Ատլանեան Ուխտի ժողովին մէջ ամերիկեան պատուիրակութիւնը պիտի աշխատի այս ուղղութեամբ, անկէ ա – ռաջ սակայն պիտի տպահովէ Միացեալ Նահանգներու դեմոկրատ կուսակցու – թեան լայն աջակցութիւնը՝ կառավարու – թեան:

(Շարունակութիւնը կարդալ Դ· էջ)

Թղթակցին:

Ընելէ վերջ թէ «Անթիլիասի այս քայլը ոտնձգութիւն է մեր եկեղեցական կա – նոններուն դէմ, որոնք կը պարծադրուին մեր եկեղեցւոյ թշնամիներուն կողմէ», աւելցուցած է թէ Միացեալ Նահանգնե – րու երկու հարիւր հազար Հայերուն հա – րիւրին տասնրիվիզ տոկոսը միայն կը կազմեն այն եկեղեցիները, որոնք անջա – տուեցան Էջմիածնէն (Մարմարա, 25 Նոյեմբեր):

Այս թիւն ու տոկոսը ցոյց կուտան թէ Մայր Աթոռի դահակալը որքան սխալ տե – ղեկութիւններ ունի Ամերիկայի Ազգային Թեմի եկեղեցիներու եւ հաւատացեալնե – րու քանակին մասին: Ա՛լ չենք խօսիր ս – րակին մասին, որուն ո՛րքան բարձր բլլա – լուն ապացոյցը տեսանք վերջերս դանա – դան շրջաններու մէջ (Պոսթըն, Տիթրոյթ, Ֆիլատելֆիա), ուր «մոլորեալ» կոչուած – ները իրարու հետ մրցումի եւած էին՝ նոր կառուցուելիք եկեղեցիներուն առաջ նուէրներ տալու համար:

Ամբողջ քառորդ դար արհամարհուած «ոչխար»ը տեսնելի դարձած է հիմա «հօ – վիւ»ին, որուն «հօտ»ը ո՛չ թէ 15 այլ 50 տոկոսով պակասած է:

Ո՞վ է յանցաւորը:

ՀՐԱՆՏ – ՍԱՄՈՒԷԼ

Օր ը Օրէն

ԱՁԳԻՆ « ԴԱՍԱՏՈՒՆԵՐԸ»

— Աղբա՛ր, մեր ազգը մարդ ըլլալիք չունի··· Եկէք ըսուած բանը չունինք ··· Դիւանագէտ չենք, բաղաքագէտ չենք, իրարու խօսք չենք հասկնար ··· Ատոր համար ալ մեր ազգային գործերը տակ – նուվրայ վիճակի մէջ են··· Ասոր վերջը ո՞ւր պիտի երթայ··· ե՞րբ պիտի արթըն – նանք: ···

Լուսացնցուղ դահլիճներու թաւշապատ բազմոցներուն վրայ փռուած «ազգասէր»– ներուն շրթունքին վրայ է այս ճառը, տարին տասներկու ամիս:

Այս «ազգասէր»ներն են որ ազգին սբ – խալներն ու սայթաքումները խոշորացոյ – ցին տակ կը դնեն եւ կը մոռնան անոր «նիշդ»երը:

Դարձեալ, այս «ազգասէր»ներն են որ կը տեսնեն միայն մե՛ր յանցանքները, բայց «վրայէն կ'անցնին» Մեծ ազգերու գործած պարտապանաց սխալներուն, ո – րոնցմէ, կարծեմ, մենք ալ տուժեցինք, երէկ:

Այս «ազգասէր»ներուն կարծիքով, յան – ցաւորը մե՛նք ենք, եթէ այսօր, տուն – տեղ չունինք եւ Անդաստան կը կարդանք աշխարհի չորս ծագերուն վրայ:

Մե՛նք ենք յանցաւորը, եթէ, այսօր, մեր հայրենիքը մեր ձեռքէն ելեր գացեր է եւ իսկեր է օտար պետութեան մը ձեռ – քը ···

Մե՛նք ենք յանցաւորը, եթէ եկեր ու մեզ ջարդեր են կամ աոեր տարեր են մեր ունեցածն ու չունեցածը ···

Ուրիշներո՞ւ մեղք չունինք·· Քա՛ւ լիցի: Եթէ մենք, հելօփիկ մը, մեր տեղը նրս – տած ըլլայինք ու «Դաշնակցական խումբ» երգած չըլլայինք, այս փորձանքը բաց – ուած չէր ըլլար մեր գլխուն:

Այս «ազգասէր»ները ամէն տեղ են: Ընդհանրապէս, հարստութեամբ յղփա – ցած ու շփացած մարդիկ, որոնք միայն դաս տալ գիտեն, բայց դաս առնել չեն գիտեր: Ամբաստանել գիտեն, բայց չեն լսած «մեղմացուցիչ դէպք յանցանաց» բացատրութիւնը:

Այս «իմաստո՛ւն»ները, ի հարկէ, ի – մացան թէ ինչ սխալներ գործուեցանվեր – ջերս, Ուղիինկբրնի մէջ: Մէկ օրուան մէջ չորս սխալ:

Երեքշաբթի առտու արտաքին պաշտօ – նատան ներկայացուցիչներէն մէկը յայ – սարարեց թէ դեկավարեալ ռումբերը եւ «արբանեակ»ները հակակշիռի տակ առ – նելու Ռուսական «առաջարկ»ը ընդունելի չէր:

Երեքշաբթի իրիկուան դէմ, արտաքին նախարարը յայտարարեց թէ այդ առա – ջարկը ընդունելի էր:

Չորեքշաբթի, նախարարը, յաւելուա – ծական յայտարարութիւն մը ըրաւ — « ընդունելի է, պայմանաւ որ մաս կազ – մէ Զինաթափութեան Ծրագրին»: Այլա – պէս···

Այս երեք հակասական յայտարարու – թեանց կողքին, ուրիշ սխալ մըն ալ — այս անգամ դիւանագիտական:

Արտաքին նախարարը կ'արտայայտուէր առաջարկի մը մասին, որ տակաւին, պաշտօնապէս ներկայացուած չէ: Խրուշ – չեւ, լրագրողի մը հետ զրոյց մը ունե – ցաւ: Հակակշիռ բառը բերնէն փախցուց: Բայց, Խրուշչեւ Մոսկուայի կառավարու – թեան անդամ չէ, այլ կուսակցութեան քարտուղարն է: Իր խօսածն ալ բաղա – խական նաւ մը չէր:

×

Նմոյշ մըն էր որ տուի: Գիտեմ, ազգին «իմաստո՛ւն»ները պիտի ըսեն·

— Ատիկա ի՞նչ կապ ունի մեր անձնա – կան գործերուն հետ ···

Որեւէ կապ չունի: Բայց, ըսել կրնայ տալ մեզի·

— Եթէ Մեծերը, այնքա՛ն փորձառու, այս տեսակ վրիպումներ կ'ունենան, մե՞նք ինչպէս չունենայինք մեր սայթա – քումները:

Մեր երէկուան սխալները կ'արդարա – նան մեր անփորձութեամբ եւ մեր միա – մտութեամբ: Մեզի սիրահարա՞ծ ազգե – րուն մեզի հանդէպ գործած «սխալ»նե՞րը ինչով կ'արդարանան:

Այսմասին ալ կը մտածե՞ն, ազգին «դասատու»ները ···

ԵՒՐՈՊԱՑԻ

ԱԼԺԵՐԻՈՅ ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԷՆՔԸ

Ինչպէս ծանօթ է, Ապր· Ժողովը վըս – տահութիւն յայտնեց Կալեսի կառավա – րութեան, որ պարծադրէ Ալժերիոյ Հիմ – նական Օրէնքը:

Թունուզ եւ Մարոք հակառակ էին որ – դէն այս ծրագրին:

Այս ուղղութեամբ Ազատագրական Ճա – կատի Գահիրէի դրասենեակը մամուլին յանձնեց յայտարարութիւն մը, ուր կ'ըս – ուի թէ Հիմնական Օրէնքը ոչ մէկ նո – րութիւն կը բերէ եւ Ալժերիացիները պի – տի չարունակեն իրենց պայքարը՝ մինչեւ որ իրականանայ յեղափոխութեան նպա – տակը: Ալժերիացի ժողովուրդը, կ'ա – ւելցնէ ան, չի կրնար հետեւիլ այդ օրէնք – քին, որովհետեւ ինք կ'ուզէ որոշել իր ճակատագիրը: Մենք դէնքի դիմեցինք՝ մի եւ անդաժանելի Ալժերիոյ անկախու – թիւնը ձեռք ձգելու համար, սակայն Հիմ – նական Օրէնքը համապատասխան չէ այս նպատակին:

Միւս կողմէ, Ալժերիոյ Ապր· ճակատը լռտանի մէջ զեկոյց մը հրատարակեց, ուր կ'ըսուի թէ Ալժերիոյ Հիմնական Օ – րէնքը չի կրնար գործադրուիլ, նոյնիսկ՝ եթէ զէնքի ուժով պարտադրուի: Ալժե – րիացի ժողովուրդը հետ պիտի մղէ զայն եւ պիտի չարունակէ իր պայքարը՝ մին – չեւ որ իր ինքնավարութիւնը չէ ճանչցուած տակաւին:

Միւս կողմէ, կը յայտնուի թէ Մակի մէջ Ալժերիոյ հարցին քննութիւնը հաւա – նաբար յետաձգուի յառաջիկայ տար – ուան:

ՄԱՐՈՔԻ ՍՊԱՆԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ՝ ՎՏԱՆԳԻ ՄԷՋ

Իֆնիի մէջ, սպանական Մարոք, խռո – վութիւնները կը չարունակուին: Սպա – նիոյ Արտաքին նախարարութիւնը յայտ – նեց թէ կրնար կը չարունակուի Մարոքցի անկարդներուն հետ:

Նոյն պրիւրին համաձայն սպաստամբ – ները Իֆնիէն 160 քիլոմեթր անդին քշ – ուած են 16 դոհ տալով եւ աւելի քան՝ 50 վիրաւոր: Վերջին օրերուն անկարդներու յարձակումները մեղմացած են ու երեք հազար սպանացի վայրէջուներ դրկուած են Իֆնի:

Միւս կողմէ, երէկ առաւօտ Փարիզի ճանչնափիւռը, լուրը առնելով անդլիա – կան պրիւրներէ, հաղորդեց թէ Մարոք – ցիները ամէն մէջոցի կը դիմեն, որպէս զի սպանական օժանդակ ուժերը ցամաք չկարենան էլլել՝ Մարոքի մէջ: Եթէ այս – պէս չարունակուի, Իֆնիի սպանական ուժերը պիտի բնաջնջուին սպաստամբնե – րու կողմէ:

Փարիզի Օփերային եւ Քոմէտի Ֆրան – սէզի աշխատաւորները Բշ· օր գործա – դուլի մէջ էին: Տասը առ հարիւր աշխա – տավարձի յաւելում կը պահանջեն:

ՏԵՍԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ ԽՈՐԷՆ ԱՐՔ.Ի ՀԵՏ

ԽՄԲ.— Գոսբոռնի մեր պաշտօնակիցը՝ «*Հայրենիք*» օգտուելով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթ. Պատուիրակ Խորէն Արք.ի ներկայութենէն տեսակցութիւն մը ունեցած է շահեկան հարցերու շուրջ :

ՀԱՐՑ.— Սրբազան Հայր, ծանօթ ենք ձեր առաքելութեան, որ պատմական մըն–նալու սահմանուած է : Կը հաճի՞ք բացատրել, թէ ի՞նչու Ամերիկահայ Ազգ. կեդր. Վարչութեան դիմումին այսքան ուշ, մօտ ութ ամիս ետք պատասխանեց Վեհ. Կաթողիկոսը :

ՊԱՏԱՍԽԱՆ.— Դիմումը եղած էր 1957 Փետրուար 24ին : Ուշացումը հետեւանք էր այն պարզ իրողութեան, որ վեհափառը ուզեց խնդիրը ուսումնասիրել իր ամբողջութեանը մէջ եւ օգտակար որոշում մը ընել : Այս ուսումնասիրութիւնը, չատ բնական է, կատարէր երկար ժամանակի :

Հ.— Ի՞նչ տպաւորութիւն թողուց ամերիկահայութեան այս դիմումը հոն՝ Լիբանանի եւ Սուրիոյ մէջ :

Պ.— Տպաւորութիւնը եղաւ չատ լաւ ու արտասովիչ անոնց վրայ, որոնք կիլիկիոյ Ս. Աթոռին հաւատարիմ կը մնան : Դան անշուշտ քիչ թիւով դժգոհ տարրեր ալ, որոնցմէ չատերը կրնան լուսաբանուիլ հետզհետէ :

Հ.— Ի՞նչ է վերջին կացութիւնը հոն՝ մասնաւորաբար Սուրիոյ մէջ : Ապագային ներքին ճակատին վրայ կը չարունակ–ուի՞ն դեռ այսպէս կոչուած՝ «համախմբականո»ներու խռովութիւնները :

Պ.— Այդ խռովութիւնները դադարած չունին. մէկ քանի թերթեր միայն կ'ապ–մրկեն, հակնալի պատճառներով : Ժողովուրդը արեւէ խնդիր չունի եւ չատ դոհ է. չնչին խմբակ մը միայն կայ, որ նախապէս ալ արդէն «ընդդիմադիր» էր : Իսկ այն քանի մը հանրային դէմքերը, որոնք առաջին օրերուն թիւրիմացու–թեան մատնուած էին, լուսաբանուելով ձեռնթափ եղած են. ոմանք ալ, իրակա–նութիւնը ճանչնալէ ետք, եկան վեհա–փառին մօտ եւ այժմ լաւ յարաբերու–թեան մէջ են :

Հ.— Ի՞նչ է դիրքը այն չէզոքներուն, որոնք պահ մը միացած էին «համախմբականո» ճակատին :

Պ.— Չէզոքները անդրադարձան դէպ–քերու բնոյթին, զգացին որ համայնա–վարութեան դոհ կ'ըլլան, ու քաչուեցան խռովարարներու ճակատէն : Մէկ քանին ալ եկան ու չնորհաւորեցին վեհափառին քնարութիւնը :

Հ.— Ի՞նչ է վիճակը Դամասկոս ա–պաստանած եկեղեցականներուն, որոնք վտարուեցան Անթիլիասի Միաբանութե–նէն :

Պ. Ողբալի : Ատ եպիսկոպոսը առին տարին եւ առանց խօսելու յայտարա–րին, թէ Կիլիկիոյ Աթոռը Դամասկոս փո–խադրած են, մինչ ծերունի ու քայքայ–ուած մարմին մըն էր միայն փոխադրը–ուածը : Վտարուած միաբանները, զոհ՝ կիրքերու եւ ղեղուկութեանց, ցրուած են, Փառէն Եպիսկ. վախճանած է, Երուսա–ղէմի մէջ. Դերձնիկը զրկած է թափա–ռական, եւ ձայները կուգայ Հնդկաստանէն կամ Աւստրալիայէն, ուրիշներ, անհէր մնացած, ցիրուցան եղած են. չորս հո–գի ալ հովանաւորուած են Բարեգործա–կանի կողմէ, որ, դժբախտաբար, միշտ հովանաւորած է այդ հակաեկեղեցական չարժումը եւ միշտ քաջալերած. հիմա ալ այդ չորս ըմբոստ նախկին միաբանները կերպով մը ապրեցնելու համար պաշտօնի կոչած է իր գրասենեակին մէջ :

Հ.— Բարեգործականի կեդրոնը (Նիւ Եորք) արդեօք լաւ ունի՞ իր Մասնաճիւ–ղերուն գործունէութենէն :

Պ.— Կը կասկածիմ, բայց մեր ուշ–ադրութեան կը պարմանամ, որ տեղեկութիւն չունի :

Հ.— Կը հաճի՞ք քանի մը խօսքով ըսել, թէ Բարեգործականի Մասնաճիւղերը ինչ դեր կը կատարեն, ինչ «բարի» գործեր կ'ընեն տղին ու եկեղեցիին :

Պ.— Բարեգործականի մասնաճիւղերը չատ գէշ դեր կը կատարեն Լիբանանի, Սուրիոյ եւ Կիպրոսի մէջ. իրենց տխուր գործունէութեամբ առաջին գծի վրայ կու–գան, որովհետեւ ռամկավարներուն եւ նման տարրերուն ձեռքը գործիք գարձած են

Շատ կը ցաւիմ, որ այս Մեծ Միութիւ–նը, որ «Հայ Բարեգործական Ընդհանուր Միութիւն» անունը կը կրէ եւ պէտք է համազգային ըլլայ, իր դերը չի կատա–րեր արժանաւորապէս կամ չատ գէշ կեր–պով կը կատարէ : Ոչ թէ «ընդհանուր», այլ մասնաւոր Միութիւն մը գարձած է, իրեն յատուկ նպատակներով :

Ահա թէ ինչու կը գարմանամ Բարե–գործականի կեդրոնի անդիտութեան մա–սին : Չեմ կրնար պնդել, թէ կեդրոնը ծա–նօթ է իր Մասնաճիւղերուն գործունէու–թեան, բայց միեւնոյն ատեն կը խորհիմ, թէ անկարելի է որ կեդրոն մը տեղեակ չըլլայ իր մասնաճիւղերու գործունէու–թեան եւ հակակշիռ չդործադրէ :

Հ.— Բարեգործականի կեդրոնը կը կատարէ՞ իր նիւթական չանձնառութիւն–ները Կիլիկիոյ Կաթողիկոսարանին հան–դէպ :

Պ.— Դժբախտաբար՝ ոչ : Կաթողիկո–սական ընտրութեան թուականէն սկսեալ Բարեգործականը մերժեց վճարել Անթի–լիասի դպրեվանքին իր ըրած յատկացու–մը, ինչպէս նաեւ մերժեց կատարել Մել–քոնեանի կտակը :

Առաջինը՝ հինգ հազար տոլար եւ երկ–րորդը՝ հազար անգլ. սթերլին :

Այսիկա չատ տխուր արարք մըն է : Դպրեվանքի աչակերտութիւնը կարելի՞ է դրկել տարիներու ընթացքին եղած չատ–կացումէն, պարզ այն պատճառով, որ ընտրեալ Կաթողիկոսը իրեն՝ Բարեգոր–ծականի ուղած անձնառութիւնը չէ . եւ չեսոյ՝ ի՞նչ իրաւունքով կտակի մը յստակ տրամադրութիւնը չի գործադրե–ուիր : Կը նշանակէ, թէ Բարեգործականի կտակները նոյն ոգիով կը գործադրուին. ո՞ւր կը մնայ այն առեն կտակարար բա–րերարներու կամքը :

Աւելցնենք նաեւ, որ Բարեգործականը դադրեցուց իր նպաստը՝ Լիբանանի ազ–գային աղքատիկ վարժարաններուն :

Չեմ ուզեր աւելին ըսել, բայց խոր–պէս կը ցաւիմ, որ, ինչպէս կը տեսնէք, Բարեգործականը իր ընդդիմութիւնը կա–թողիկոսարանէն դատ տարածած է նոյն–իսկ ազգային վարժարաններուն եւ ազ–գատիկ ուսանողներուն վրայ : Գայե՞լ է ասիկա «Ազդային» անունով մկրտուած Միութեան մը համար :

Հ.— Ի՞նչ պիտի ընէք, եթէ Բարեգոր–ծականը չարունակէ իր այս ցաւալի ընդ–դիմութիւնը եւ չվճարէ, առանց կտակի արդիւնքի իսկ կարեւորութիւն տալու :—

Պ.— Եթէ Բարեգործականը չարունակէ չվճարել, ոչնչ ըլլայ հայ ժողովուրդը : Անցնող երկու տարիներուն հայ ժող–ովուրդը վճարեց, հոգալով թէ դպրեվան–քի եւ թէ Լիբանանի ազգային աղքատիկ վարժարաններու ծախքերը : Օրհնեալ ժո–ղովուրդ է հայը, եւ իր գոհաբերու–թեամբ պիտի ազատէ Հայր



ԴԱՎԱՓԱՍԿՈՂԱՍՊԱՆՈՒ

ՊԱ.

— Դու ամ ասում, ընկեր Ղազար, որ ես ոչ մի ուշադրություն չեմ դարձնում ընկերների կարիքների վրա։ Ես ամեն ինչ անում եմ, որ ընկերներին ոչ մի բանի կարիք չզգան։ Ես ամեն ինչ անում եմ, որ ընկերները ոչ մի բանից չդժգոհեն։ Ես ամեն ինչ անում եմ, որ ընկերները ոչ մի բանից չնեղանան։ Ես ամեն ինչ անում եմ, որ ընկերները ոչ մի բանից չտրտնջան։ Ես ամեն ինչ անում եմ, որ ընկերները ոչ մի բանից չնեղվեն

Ամերիկեան ծրագիրը, որ պիտի ներ – կայացուի Ատլանտեան Ուխտին, պատ – րաստուած է արդէն:

Զինուրական.— Համապարծակցութիւ – նը ունէր հաստատուն դեմնի վրայ դնելու համար, Միացեալ Նահանգներ պիտի ա – ռաջարկեն իրենց գաչնակիցներուն տալ հիւլէական դէնքեր, հրթիռներ՝ որոնց համար մասնաւոր կայաններ պիտի հաս – տատուին եւ ռազմանիւթ՝ յատկապէս հրթիռներուն համար: Անկլիա այս առա – ջարկը ընդունած է արդէն. Ֆրանսա միտքը յայտնած է, հիւլէական ռազ – մանիւթերու պատրաստութիւնն ալ ինք ստանձնելով:

Ճարտարարուեստական.— Կարեւոր ա – ռաջարկներ՝ եւրոպական ճարտարար – ուեստին համար, գաչնակիցներու դոր – ձակցութեամբ զարկ տալու համար անոր յառաջդիմութեան:

Գիտական.— Դաչնակից երկիրներու մէջ պիտական փոխատուքներու կեդրոն – ներ պիտի հաստատուին՝ տարբեր ճիւ – դերու համար: Զարկ պիտի տրուի պի – տութեան եւ թուաբանութեան ուսուց – ման:

Քաղաքական.— Այս ճակատին վրայ դործակցութիւնը ունէի կանոնաւորելու համար « դեսպաններու ժողով »ներ պի – տի ըլլան Ուաշինկթընի եւ այլ մայրա – քաղաքներու մէջ:

Սպիտակ Տան խորհրդակցական ժո – ղովներուն մասնակցած է նաեւ Դեմոկ – րատ պարագլուխ Սթիվինսըն: Յարդ կը կարծուէր թէ ան ալ պիտի մասնակցէր Դեկտեմբեր 16ի ժողովին, սակայն երէկ յայտարարած է թէ իր տեսակէտը պիտի յայտնէ Տըլլըսի. միաժամանակ փափաք յայտնած է, որ Ատլանտեան Ուխտի ժո – ղովը յայտնի փոխադարձ վստահութիւն ստեղծել դաչնակիցներուն միջեւ: Սթի – վենսըն ներկայիս Տըլլըսի քաղաքական խորհրդատուն է:

Միւս կողմէ, Արեւմտեան Գերմանիոյ պաշտօնական շրջանակները կը յայտնեն, թէ Ադենաուըը պիտի մասնակցի Փարիզի ժողովին: Արտաքին նախարար Ֆոն Պրենթանօ այսօր Լոնտոն կ'երթայ, Գեր – մանիոյ մէջ հաստատուած բրիտանական ուժերուն չուրջ ծագած տարակարծու – թեանց մասին Մաքմիլընի հետ խորհր – դակցելու համար: Երկու երկիրներու մի – ջեւ անհամաձայնութիւն ծագեցաւ, երբ Արեւմտեան Գերմանիա Լոնտոնի իմա – ցուց, թէ իր հողամասին վրայ հաստատ – ուած անդլիական բանակին ծախսերուն ուիսի մասնակցի մինչեւ 1958 Մարտ: Մինչդեռ, Անկլիա կը պատրաստուէր պա – հանջել՝ նկատելով որ տրուած դումարը անբաւարար էր:

Կրնայ ըլլալ, որ հարցը դրուի նաեւ Ատլանտեան Ուխտի ժողովին առջեւ:

—o—

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԿՈՆՔՈՒՐԻ դրական մրցանակին արժանացաւ Բոժէ Վայան «Օրկնքը» վէպին համար: Նոյն օրը Թէօֆրաստ Ռընոտօ մրցանակը տրուեցաւ Միշէլ Պիւթորի « Փոխոխում » վէպին համար: Առանձին կը խօսինք այս գործերուն մասին:

ՍԱԿԱՐԱՆ (Դեկտ. 2).— Ձայլ ռակի՝ 573·000, նափոլէոն 4150, դուխց· 3940, անպլ· 4980, քսան տոլարնոց 20·120, թղ – թադրամ (զուգահեռական չուկայ) սթեր – լին 1280, տոլար 489, դուխց· 116·25, պեզօ· 9·75, լիր 0·77, մարք 117:

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ — ՓԱՐԻԶ

« Ահարոնեան » խումբի դասընթացք – ները վերսկսած են ամէն չորեքշաբթի ի – րիկուն, ժամը 20·30ին, Ապգ· Տան մէջ:

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԼՍԱՐԱՆ

Հերթական դասախօսութիւնը այս չո – րեքշաբթի դիչեր Քատէի սրահին մէջ, ժամը 21ին: Կը խօսի՝ Պ. Վ. Մելիքեան: Նիւթ՝ «Խրիմեան Հայրիկը մեր քաղաքա – կան պատմութեան մէջ»: Իր մահուան յիսնամեակին առթիւ: Կը խնդրուի ճշդա – պահ ըլլալ:

Imprimé sur les presses du journal HARATCH
17, Rue Bleue, 17 — PARIS (9e)

Այրի Տիկին Նիկողոսեան եւ զաւակը, Տէր եւ Տիկին Հայկ Սերենկիւլեան, Տէր եւ Տիկին Վաղդէն Սերենկիւլեան եւ ընտանեկան պարագաները, խոր ցաւով կը ծանուցանեն իրենց ամուսնոյն, հօր, եղ – բօր, մօրեղբօր եւ պզտիկանին՝

ՆԻԿՈՂՈՍ ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ երկուշաբթի, Դեկտեմբեր 2ին, Առլի մէջ, 67 տարեկա – նին:

ԹԱՂՄ.— Մեր ցաւակցութիւնները Տէր եւ Տիկին Հայկ Սերենկիւլեանի եւ ընտա – նեկան պարագաներուն:

ՑՈՒՇԱՏԵՏՐ

ԱԼՖՈՐՎԻԼ.— Հ· Ց· Դ· Ս· Մինասեան ենթակոմիտէն ընդհ· ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները այս ուրբաթ, ժամը 21ին, ծանօթ հասցէին: Ներկայ կ'ըլլայ Շրջ· կոմիտէի ներկայացուցիչը: Կը խնդրուի ճշդապահ ըլլալ:

ԿՐՃՆՈՎԼԸ.— Հ· Ց· Դ· Նոր Սերունդի ժողովը, այս ուրբաթ, ժամը 9ին, դպրո – ցի սրահին մէջ:

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ
ԵՐԿՈՆ ՍԷՆ – ՇԱՄՈՆԻ ՄԷՋ

Այս Շաբաթ (Դեկտ· 7), ժամը 21էն մինչեւ լոյս, տեղւոյն Սալ տէ Ֆէրթի մէջ:
Մասնակցութեամբ՝

ANDRÉ MALIAN ET SES RYTHMES

Պիւֆէ, պիւվեթ, fօթիյօն եւ խաղեր:
ՀԱՃԵԼԻ ՄԹՆՈԼՈՐՏ:

ՏՕՆԱՓԱՌ
ՍԱՄՈՒԷԼ – ՄՈՒՐԱՏԵԱՆ
ՎԱՐԺԱՐԱՆ
Կիրակի, 22 Դեկտեմբեր

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Ֆ· Կապ· Ֆաչի Տէսինի Ապգ· դպրոցի կրթ· Մարմինը չնորհակալութեամբ կը – տացած է Տէսինէն Տէր եւ Տիկին կարօ Պօղոսեանէ դպրոցին հազար Ֆրանք: Լիո – նի եկեղեցիին՝ հազար, Պ· Սապաթիչ Փա – փազեանի մահուան քառասունքին առ – թիւ: Եկեղեցւոյ դումարը ստանալ պան – ձապահէն:

×

Մարսէյլի Ապգ· – Որբ· Մխիթեան վարչութիւնը չնորհակալութեամբ ստա – ցած է հետեւեալ նուէրները: Պ· Յովհ· Իօքմիւլեանէ, փոխան ծաղկեպսակի ողբ· Գարեգին Գալանճեանի մահուան առթիւ հազար Ֆրանք:

Տիկին Նոյեմզար Ազամեանէ հազար, Պ· Արտաշէս Նազդաչեանէ հազար, Պ· Յակոբ Փափազեանէ հազար, Պ· Մխքայէլ Քէչէեանէ հինգ հարիւր, Պ· Մինաս Փա – պազեանէ հինգ հարիւր, փոխան ծաղկե – պսակի ողբացեալ Տիկին Իսկուհի Պան – ճկեանի մահուան առթիւ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

«Շանթ» Դրական – Գեղարուեստական ընկերակցութիւնս, հովանաւորութեամբ Հ· Ց· Դ· Պոմոնի «Զաւարեան» ենթակո – միտէին, Սահակ Մեսրոպ սրահին մէջ նախաձեռնած է դրագարան – ընթերցա – րանի մը հաստատման: Իր տրամադրու – թեան տակ ունի արդէն որոշ քանակու – թեամբ գիրք եւ նիւթական պիւտճէ:

Ընկերակցութիւնը կոչ կ"ընէ հայ հե – դինակներուն, օրաթերթերու խմբագրու – թեանց, Վենետիկի եւ Վիէննայի Մխի – թարեան միաբանութեան, Փարիզի «Հայ Գրագէտներու Բարեկամ» Ընկերութեան, Գահիրէի «Յուսաբեր» հրատարակչակա – նին, Պէյրութի Համազգայինի հրատա – րակչականին, Ամերիկայի « Հայրենիք »ի ամառհիրի խմբագրութեան եւ հայ հրա – տարակչականին որոնք իրենց տրամա – դրելի գիրքերով օժանդակեն ընկերակ – ցութեանս այս նուիրական ձեռնարկին:

Արտասահմանի թերթերէն կը խնդ – րուի արտատպել: Դրադարանի ընթերցա – րանի բացումը եւ օրերը պիտի յայտա – րարուի «Յառաջ»ի մէջ:

Ընկերակցութեանս հասցէն,

Վաղարշակ Տէր Վարդանեան, 20 բիս Տիգօար, Մարսէյլ,

Սերժ Սարգիսեան 340 Շրմէճ տր Սէճ Ժիւլիէճ, Մարսէյլ:

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

1958ի "ԳՈՑԱՄԱՐՏ" ՕՐԱՑՈՑՑ-ԱԼՊՈՄԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ· Ց· Դ· ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ՄԱՐՍԷՅԼԻ ՇՐՋԱՆԻ

ԸՆՏԻՐ ԹՈՒՂԹՈՎ 14 ՄԵԾԱԴԻՐ ԷՋԵՐ

Շէեղ ճկարներ, մեծ մասը անտիպ: Գրական եւ պատմական նիւթերով նոյն բովանդակութիւն

— ԳԵՂԱՋԱՐԴ ԵՒ ԳՈՒՆԱՒՈՐ ԿՈՂՔ —

Բացառիկ խնամքով եւ ճաշակով պատրաստուած այս օրացոյց-ալպոմը *պիտի կազմէ զարդը՝ ամէն հայ տան:*

ԳԻՆ 500 ՖՐԱՆՔ — Այժմէն ապահովեցէք ձեր օրինակը

Փարիզի համար դիմել՝ LIBRAIRIE H. SAMUELIAN, 51, Rue Monsieur-le-Prince, PARIS - 6e

ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՐԵՐՈՒԻ ԵՒ ՆՈՒԱԳԻ ԲԱՑԱՌԻԿ ԵՐԵԿՈՅ
12, Դեկտեմբեր, Հինգշաբթի ժամը 8·45ին

THEATRE DE PARIS, 15, Rue Blanche, Métro : Trinité ou Blanche

ԱԼԻՍ ՊՕՅԱՃԵԱՆ

կը պարէ ու կը դեկավարէ իր պատրաստած երկսեռ պարախումբը
Մասնակցութեամբ նուագախումբի զոր կը դեկավարէ

ԱՐԱ ՊԱՐԹԵԻԵԱՆ

Տոմսերու դիներն են 800, 600, 500, 400 *եւ* 300 *Ֆրանք*
Աոտնակալ համար դիմել՝
Etabl. O. B. 83, Rue d'Aboukir, Paris - Tél. CEN. 48-69 *եւ ներկայացման օրը թատրոնին կից:*

ԾՆՈՒՆԴ ԵՒ ԿԱՂԱՆԴ Ձեր սեղանները զարդարեցէ՛ք
ԱՄԷՆ ՏԵՂ ՓՆՏՐԵՑԷՔ **ՊՈՍՓՈՐ**
ՀՈՋԱԿԱՒՈՐ ՀԷԼՎԱՆ ԵՒ ԼՈՒՔՈՒՄԸ
ԲԺԻՇԿՆԵՐՈՒ ԿԱՐԾԻՔՈՎ ԱՆՈՆՔ ԿԸ ՊԱՐՈՒՆԱԿԵՆ ՄԵԾԱԳՈՑՆ ԶԱՓՈՎ
ԳՈԼ (ֆալորի)
Անհրաժեշտ մանուկներու համար եւ օգտակար չափահասներուն ու ծերերուն
— որոնց կը պարգեւէ աշխոյժ եւ եռանդ —
ՊՈՍՖՈՐԻ ԱՐԴԻԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԳԵՐԱԶԱՆՑՔ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ ԻՍԿ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾՆԵՐԸ
2, Rue Louis Astoin - Marseille
Արտածման համար մասնաւոր պայմաններ

ԱՆԱՐԱՏ ՅՂՈՒԹԵԱՆ ՕՐԸ ԱՌՆՈՒՎԻԼԻ ՄԷՋ

—o—

Առնուվիլի Առաքինապարտ Քոյրերը կը տօնեն Անարատ Յղութեան Օրը, կիրակի, 8 Դեկտեմբերին:

Այս առթիւ տեղի կ'ունենայ հանդիսա – ւոր պատարագ տեղւոյս Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, առաւօտեան ժա – մը 11ին:

Ճեմ պատարագի կազմակերպուած է ճաշ մը նախկին հաւատարիմ ասնուհի – ներուն եւ իրենց փոքրիկներուն համար:

Փարիզի եւ արուարձաններու հին ա – շակերտուհիներէն անոնք որ կը փափա – քին ներկայ ըլլալ այս հանդիսութեան, բարեհաճին երկտողով մը իմաց տալ կամ հեռաձայնել՝ Սէօր Արմէնիէն, 73 Ավրնիւ Հաւրի Պարպիւս, Առնուվիլ լէ Կոնէս: Հեռաձայն 179 Առնուվիլ:

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՏՈՒՆ
SOCIÉTÉ ANONYME
Դրամագլուխ՝ 8·000·000
Siège Social : 32, Rue de Trévise, Paris
—o—
Avis de Convocation
Բաժնեհարները կը հրաւիրուին վարչա – կան խորհուրդին կողմէ հերթական ընդ – հանուր ժողովի, ուրբաթ, Դեկտեմբեր 13, 1957, ժամը 18ին, կեդրոնատե – ղին՝ Փարիզ, 32 բիս տր Թրէվիզ, դրա – կելու համար օրակարգի հետեւեալ նիւ – թերով· — Վարչական խորհուրդին եւ հաշուեքննիչին զեկոյցը 1952ի տարեչր – ջանին համար:
— Հաշիւներու վաւերացում:
— Հրաժարում եւ ի հարկին նշանակում վարչութեան անդամներու:
— Հաշուեքննիչի նշանակում:
— Զանազան հարցեր:
Ի դիմաց
Վարչական Խորհուրդի՝
ՍԱՐԱՖԵԱՆ
Article paru aux affiches parisiennes les 23-24-25 Novembre

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Եկեղեցիին վարչութիւնը կը ծանուց – նէ թէ՝ իր հիմնած հայերէն լեզուի եւ հայրենագիտութեան դասընթացքը վեր – սկսած է, դասախօսութեամբ ձեռնհաս ուսուցիչի մը, Բարեկործականի սրահին մէջ, ինչպէս նախորդ տարիներ, 19ա, Բիւ Վանթիւր, ժամը 19–21, ամէն երեք – շաբթի եւ ուրբաթ: Ծնողները կը հրա – ւիրուին օգտուիլ առիթէն՝ արձանագրե – լով երկու սեռէ եւ ամէն տարիքէ իրենց զաւակները, դասերու սրահերուն:

ՇԱՒԻԼԻ ԵԿԵՂԵՑԻ

Շաւիլի կրօն. Ընկերակցութեան վար – չութիւնը եւ երիտ. եկեղեցւոյն յանձ – նախումբը կը ծանուցանեն թէ Դեկտ. 15– ին, կիրակի օր տեղի պիտի ունենայ նո – րակառոյց եկեղեցւոյ օծումը եւ անդրա – նիկ Ս· պատարագը ձեռամբ կաթողիկո – սական պատուիրակ՝ եւ Փարիզի Առաջ – նորդ ԴԵՐ· ՏԷՐ ՍԵՐՈՎԲԻ ԵՊԻՍԿ· ՄԱ – ՆՈՒԿԵԱՆԻ:

Սկիզբ ժամերգութեան ժամը 8, օծում ժամը 10, Ս· պատարագ 10·30:

Կը հրաւիրուի հաւատացեալ ժողովուր – դը: Ցաւարտ Ս· պատարագի կազմա – կերպուած է ճաշ մը վերապահ Օթել տը Ֆրանսի չքեղ սրահին մէջ (Փլաս տ'Ազմ, բիւ Քոլոզէր):

Այս ճաշին մասնակցիլ փափաքողներէն կը խնդրուի արձանագրուիլ մինչեւ Դեկ – տեմբեր վեց եւ ստանալ սեղանակիցի մասնաւոր քարթը, (ճաշարկին 3000 ֆր):

Վերոյիշեալ թուականէն վերջ ոչ մէկ արձանագրութիւն պիտի ընդունուի:

Արձանագրութեան համար դիմել փա – րիզի եկեղեցւոյ դիւանատուներ,

Պ· Հրաչ Զուլաքեանի՝
14. Rue Maréhal Foch Viroflay
Պ· Զաւէն Յովհաննէսեանի
31. Rue de Général Léclerc, Versailles
կամ
ASSOCIATION CULTUELLE DES ARMÉNIENS DE CHAVILLE
C. C. P. Paris 14827-18

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 — Téléph. : PRO. 86 - 60
R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա եւ գաղութներ, տարեկան 3000 ֆր. վեցամս. 1600
Արտասահման՝ տարեկան 3500 ֆրանք : Հատը 12 ֆր.

ՀԻՆԳՇԱԲԹԻ 5 ԴԵԿՏԵՄԲԵՐ
JEUDI 5 DECEMBRE 1957

33ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8060 — 33e ANNEE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 13ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3861

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՀԱՄԸՐՇՈԼՏԻ ՊՏՈՒՅՏՆԵՐԸ

—o—

Միացեալ Ազգերու կազմակերպութեան քնդհանուր քարտուղարին պատրաստած Մերձաւոր Արեւելքի մայրաքաղաքներուն մէջ, ցոյց կուտան թէ խաղաղութեան ապառնացող վտանգները բոլորովին չեն անհետացած դեռ :

Տակ Համըրշոլտի յանկարծակի ճամբորդութեան բուն պատճառը Ծորդանանի խռովայոյզ վիճակին էր : Գահիրէի ճայնատուորը չէ դադրեցուցած իր յարձակումները Հիւսէյն թագաւորին դէմ, որ անցեալ Ապրիլին մեծ վտանգէ մը ազատեցաւ :

Ծորդանան արուեստական երկիր մըն է : Անգլիա ստեղծեց զայն համաչխարհային առաջին պատերազմի վարդապետին՝ իշխանական գահ մը ապահովելու համար Էմիր Ապտուլլահի, Շէրիֆ Հիւսէյնի անդրանիկ զաւկին, որ 1916 – 18 իր եղբօր Էմիր Ֆէյսալի հետ բրիտանական բանակի կողքին կռուած էր Թուրքիոյ դէմ :

Ֆէյսալ Էմմէվի խալիֆաներու մայրաքաղաքին՝ Դամասկոսի մէջ բազմած՝ փորձած էր իր մականին տակ կազմել արաբական մեծ թագաւորութիւն մը : Զօրավար Կուրոյի զօրագունդերը Սուրիոյ մէջ պարտութեան մատնեցին պին – քը : Անգլիա իր հովանաւորեալը պաշտպանելու համար Ֆէյսալը նահեցուց Ապապատեան խալիֆաներու մայրաքաղաք Պաղտատի գահին վրայ :

Էմիր Ապտուլլահի սրտուած հոգեմասը կը կոչուէր Անդրյորդանան եւ կը վայե – լէր Անգլիոյ նիւթական եւ դինուորական օժանդակութիւնը : 1948 Մայիս 15ին երբ Անգլիա լքեց Պաղեստինի հոգատարու – թիւնը, այս վերջինի հողերէն կարեւոր մաս մը կցուեցաւ Անդրյորդանանի, որ դարձաւ պարզապէս Յորդանան, միւս – նալով պատմական գետին արեւմտեան ափերուն՝ Այսրյորդանանի ալ հողերուն, մինչեւ Երուսաղէմի հին քաղաքամասը : Էմիր Ապտուլլահն ալ դարձաւ թագաւոր : Բայց քանի մը տարի վերջ սպաննուեցաւ Երուսաղէմի պատմական մզկիթին՝ Մէհճիտի Աքսայի առջեւ :

Ծորդանան քանի մը տարի առաջ թօ – թափեց անգլիական հովանաւորութիւնը՝ արաբ ազգայնականներու դրդումով : Ճամբեց կլոդ փաչան՝ որ Արաբական Լեգէոնին հոգին էր եւ մերժեց ընդունիլ Անգլիոյ դրամական աջակցութիւնը : Եգիպտոս, Սուրիա եւ Սէուտի Արաբիա խոստացան իրենք ստանձնել Ծորդանանի էմիրայոյզին բացը դոցելու հոգը : Սակայն բացի վերջինէն, միւսները ո՛չ մէկ օժանդակութիւն ըրին : Ընդհակառակն թշնամական վերք բոնեցին թագաւորին դէմ :

Ծորդանան իր անկախութիւնը կը պահէ՝ շնորհիւ իր բնակիչներու եւ բանակի կարգապահութեան : Պէտվիները, որոնք բնակչութեան ոգեմունակ տարրը կը կազմեն, կանգնած են թագաւորին կող – քին : Պաղեստինի եկուոր բնակիչներն են, որ խռովայոյզ վիճակի մէջ կը պահեն երկիրը :

Մեծ բան կախուած է նաեւ Ծորդանանի անմիջական դրացիներէն — Սուրիա, Իրաք, Սէուտի Արաբիա եւ Իրաք : Վեր – ջին երկուքը բաթէականի կապէր կը պահեն Հիւսէյն թագաւորին հետ եւ վեր – ջին անգամ պաշտօնապէս յայտնեցին, որ վտանգի մը պարագային իրենք անմիջապէս իրենց բանակով պիտի պաշտպանեն պայն : Այս պատրաստութիւնը ուղղուած է այն երկիրներուն, որոնք յարձակողական ծրագիրներ կը սնուցանեն Ծորդանանի դէմ :

Պաղեստինի արաբ գաղթականներու հարցը ամէնէն ուժգին ժամադրութիւն կը պատճառէ ո՛չ միայն Իսրայէլի, Ծորդանանի եւ արաբական միւս երկիրներուն, այլ նաեւ Միացեալ Ազգերու կազմակերպութեան, որ դրեթէ տասը տարիէ ի վեր նիւթական ահագին օժանդակութիւն կ'ընէ անոնց :

Համըրշոլտի առաքելութեան նպատակն էր յուծման եզանակ մը գտնել այն դառն հարցերուն, որոնք Մերձաւոր Արեւելքը մշտապէս խռովայոյզ վիճակի մէջ կը պահեն :

ՀՐԱՆՏ – ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԱՊՐՈՒՍՏԸ ԿԸ ՍՂԷ

—o—

ՀԱՑԻ, ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ, ՇԱՔԱՐԻ ԵՒ ԹԵՐԹԵՐՈՒ ԴԻՆԸ ՊԻՏԻ ԲԱՐՁՐԱՆԱՅ

Առջի օր Ազգ. Ժողովին մէջ սկսաւ քըն – նարկել երկրին տնտեսութիւնն ու եկե – մտքը. հաւասարակշռելու կոչուած ծր – րագիրը : Այս ուղղութեամբ միայն մէկ յօդուած կայ ծրագրին մէջ, որուն համար վարչապետ կայեան վստահութեան քուէ պահանջեց :

Ծրագրին մէջ երկու բարեփոխումներ եղած են Պուտճէի եւ Կուսիւի (անկախ) կողմէ : Երկու երեսփոխաններն ալ մտա – հոգուած են ճարտարարուեստով :

Քուէարկութիւնը պիտի ըլլայ այս ա – ռաւօտ, ժամը 9·30ին (հինգշաբթի) :

Առջի օրուան վիճաբանութեանց ըն – թացքին, երբ երկրին պիւտճէն բարելա – ւելու հարցը կը քննուէր, անկախ երես – փոխան Փրթի առաջարկեց որ ապրանս – ցուած հաստատութիւններու եկեր – ներու միջոցաւ ծախուին, որմէ պիտի գոյանար 34 միլիառ ֆրանք :

Վարչապետ համաձայն չէր այս տե – սակէտին եւ յայտնեց թէ կառավարու – թիւնը վստահութեան քուէ կ'ուղէ միայն ծրագրին համար :

Ազգ. Ժողովին մէջ քննուած է նաեւ դռնապաններու պարագան : Յարդ դրս – նապաններու համար սահմանուած օրէն – քը, իր ամբողջութեան մէջ անբաւարար նկատուեցաւ : Միայն առեւտրական տու – ներու դռնապանները չարաթէական հան – դիստի ժամեր ունէին, մինչդեռ բնակա – րաններու մէջ աշխատողները ղրկուած էին անկէ : Հակառակ անոր որ անարդա – րութիւն նկատուեցաւ հարցին այս ձեւի բանաձեւումը, մասնաւորապէս Աչիա – տանքի եւ Ապահովութեան յանձնախում – բին տեղեկագիրով, այսուհանդերձ օրէն – քը բարեփոխուեցաւ : Ակռէ եօք դռնա – պանները կը նկատուին իրրեւ վճարովի գործաւորներ եւ չարաթէական հանգիստի իրաւունք ունին :

ԱՊՐԱՆՔՆԵՐՈՒ ՍՂՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս ծանօթ է, կառավարութիւնը 90 միլիառ ֆրանք պիտի խնայէ դանազան նախարարութեանց տալիք իր օժանդա – կութիւնը զեղչելով : Հետեւաբար, այս 90 միլիառը պիտի գոյանայ նոր յաւելում – ներով :

Պիտի սղեն. հետեւեալ ապրանքները. — Շաքար՝ ութ ան հարիւր (հօթը ֆրանք քիլոյի դլուխ) : Շոքոլա՝ աւելի քան 15 ան հարիւր յաւելում, անուշեղէն՝ 15 ան հարիւր, խմորեղէն՝ 15 ան հարիւր, խո – պի միս՝ երեսուն ֆրանք յաւելում (քի – լօն), չարժանկարի տոմսերը՝ 10 ան հա – րիւր յաւելում, կազ՝ 2 – 8 ան հարիւր, ելեկտրականութիւն՝ չորս ան հարիւր, սափրիչներու դիները՝ 10 – 15 ան հա – րիւր :

Գանի մը օրէն, հացին դինը պիտի բարձրանայ չորս ան հարիւր. փոխանակ 57ի՝ պիտի ծախուի 61 ֆրանքի (քիլօն) :

Տեղական բոլոր օրաթերթերը պիտի ծախուին քսան ֆրանքի. հինգ ֆրանք յաւելում՝ իւրաքանչիւր թիւի վրայ :

Օր ը Օրէն

ՊԷՏՔ Է ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

—o—

Յառաջի անցեալ շաբթուան թիւերէն մէկուն մէջ հրատարակուած էր կոչ մը՝ ուղղուած մեր ընթերցողներուն, խնդրե – լով անոնցմէ իրենց բողոքի խօսքը ըսել փրանս. ձայնասփիւռէն չջնջելու համար հայկական պատարագներու պարբերական ձայնասփռումները : Թերթին եկած պա – տասխանները ղրկուած են արդէն «պատ – կան» իշխանութեան :

Կիրակի օր ալ խմբագրականով մը անդրադարձած էինք այս նիւթին :

Այսքանը լաւ : Սակայն «շֆանշանին» միւս կողմն ալ կայ : Ընթերցող մը — Ս. Վ.— արդար գտնելով, արտայայտուած փափաքը եւ միանալով հանդերձ բողոքի ձայն բարձրացնողներուն, նոյնիսկ ար – դար մտահոգութիւն մը կը յայտնէ :

— Քանիցս մտիկ ըրած եմ, մեծ ուշա – դրութեամբ եւ խոր յուզումով մեր ան – ւնման երգեցողութիւնները, սակայն ամէն անգամ սրտաբեկ տպաւորութեամբ մը հեռացած եմ ձայնասփիւռէ : Երբեմ կատարեալ, ներդաշնակ պատա – րագի մը երգեցողութեան ունկնդիր չեմ եղած, միշտ անխնամ, անհարազատ եւ պակասաւոր բան մը եղած է ներկայաց – ուածը, ըլլայ կաթողիկէ, ըլլայ լուսաւորչական : Երբեմն չեմ հասկնար նոյնիսկ թէ ո՞ր պատարագն է, եկմա՞լեան, Կոմիտա՞ս, որովհետեւ միշտ խառն է նոյնիսկ եկեղեցիներու մէջ երգուած – ները :

Ուրիշ նոյնման կարեւոր խնդիր մըն է երգեհոնի ընկերակցութիւնը : Մեր եկե – ղեցին վերջերս որդեգրած է նուագարա – նի ընկերակցութիւնը, որով պատարագը ձայնագրող վարպետները իրենք չէ որ նուագարանին ընկերակցութիւնը դաշնա – ւորած են : Որո՞նք ըրած են այդ աշխա – տանքները եւ ի՞նչ աստիճանի հարազատ եղած են այդ դաշնաւորումները եւ մեր անուման շարականներուն ո՞րքան համար – ժէք :

Ասոնք նկատի առնուելիք պարագաներ են, եւն. եւն.:.

Մեր նամակագիր ընթերցողը մեծ մա – սամբ իրաւունք ունի :

Միշտ հապճեպով, վերջին վայրկեանին կ'ըլլան նման կարգադրութիւններ մեր մէջ :

Հասկնալի են յայտնուած մտահոգու – թիւնները, եթէ կ'ուզենք որ ֆրանսական ձայնասփիւռը «պահ» յատկացնէ մեզի ?, մեր եկեղեցական կամ աշխարհիկ երգե – ցողութեան, գիտնանք անոնց արժէքով ներկայանալ օտարին : Բծախնդիր ընտ – րութեամբ, պատրաստուած ու մանա – ւանդ պահենք անոնց հարազատութիւնը :

Անոնք դարերու խորէն կ'արձագանգեն մեր սրտերուն մէջ, պէտք է որ նոյնիսկ ախորժով գգուեն օտարին ալ ականջը :

ՆՈՃԻ

ԼԱՐՈՒԱԾ ԿԱՑՈՒԹԻՒՆ ՀՈԼԱՆՏԱՑԻ ԵՒ ԻՆԴՈՆԵԶԻՈՅ ՄԻՋԵՒ

ՀՈԼԱՆԴԱՑԻ ԸՆԴԱՆԻՔՆԵՐ ԱՄՍԹԵՐԴԱՄ ԿԵՐԹԱՆ

Հոլանտայի եւ Ինդոնեզիոյ միջեւ տա – րիներէ ի վեր գոյութիւն ունեցող տար – կածութիւնները լուրջ բնոյթ ստացան : Երկու երկիրներու միջեւ կացութիւնը լարուած է ներկայիս՝ Հոլանտական Նոր – Գինէ պատճառով : Հարիւրաւոր Հոլանտացի ընտանիքները ձմրան եկած են արդէն դէպի Ամսթերդամ : Ինդոնե – զիոյ մէջ գտնուող 55·000 Հոլանտացի – ներն ալ կը մտածեն հեռանալ անկէ ու վերադառնալ իրենց հայրենիքը :

Ինդոնեզիոյ մէջ ընդհանուր գործադուլ մը չդիտցաղերծուեցաւ՝ ընդդէմ Հոլան – տայի. Հոլանտացիներուն 24 ժամ արգիլ – ուած էր դուրս ելլել երկրէն. միաժա – մանակ արգիլուած էր անոնց մուտքը : Երկրին մէջ արգիլուեցան նաեւ Հոլան – տական նաւային եւ օդանաւային ընկե – րութիւնները :

Խիստ միջոցներ ձեռք առնուած են նա – եւ Հոլանտերէն հրատարակութիւններուն դէմ. նոյնիսկ՝ արգելք դրուած է շար – ժանկարի ժապաւէններուն տակ գոյու – թիւն ունեցող Հոլանտերէն բացատրու – թիւններուն վրայ :

1958 Յունուար մէկին. — Երկաթուղիի Բ. կարգի տոմսերուն վրայ աւելի քան 9 ան հարիւր յաւելում պիտի ըլլայ, իսկ Ա. կարգի տոմսերուն վրայ՝ աւելի քան 15 ան հարիւր : Ապրանքներու փոխադրու – թեան համար (երկաթուղիով) տասը ան հարիւր յաւելում :

Մեթրոյի եւ հանրակառքի տոմսերուն վրայ՝ քսան ան հարիւր : Հանրակառքի տետրը (fառնիէ) պիտի արժէ 240 ֆր. : Մեթրօ, Ա. կարգ՝ 360 : Բ. կարգ՝ 240 ֆրանք :

Պիտի աւելնան նաեւ կառքերու (չորս ան հարիւր), եւեկտրական տաքսիներու (4–6 ան հարիւր), խմիչքներու եւ այլ պիտոյքներու գիները :

Երկաթուղիի, մեթրոյի եւ հանրակառ – քի չարաթէական տոմսերուն վրայ յաւե – լում պիտի չըլլայ :

Հոլանտական հաստատութիւններու մէջ աշխատող բանուորները մերժած են աշ – խատիլ. արգիլուած է դնել Հոլանտական արեւ ապրանք : Աւելին՝ այն հաս – տատութիւններուն մէջ ուր Հոլանտացի աշխատաւորներ կային, Ինդոնեզիացի դնորդները մերժեցին առեւտուր ընել :

Ամսթերդամի թերթերը ծանր յարձա – կումներ կը գործեն Ինդոնեզիոյ կառա – վարութեան վրայ եւ կը մեղադրեն Մի – ացեալ Նահանգները որ ոչ մէկ միջոցի դիմեց այս բոլորին առաջքն առնելու հա – մար : Կառավարութիւնը պաշտօնական ոչ մէկ յայտարարութիւն ըրած է տակաւին, բայց Ինդոնեզիա հաստատուած 55·000 Հոլանտացիներու պարագան մտահոգիչ է : Զանգուածային տեղափոխութեան ո – ըչում մը չէ տրուած. այս հարցը պիտի քննուի այն առեն՝ երբ կացութիւնը ծան – րանայ : Այսուհանդերձ տեղւոյն Հոլան – տական գաղութը սկսած է արդէն պատ – րաստութիւններ տեսնել, պետական կամ անհատական միջոցներով Հոլանտա վե – րադառնալու համար :

Ինդոնեզիոյ մէջ Հոլանտա ունի երեքէն հինգ միլիառ ֆլորին արժողութեամբ հաստատութիւններ : Անկախ անկէ, այս ձեւով մեծ վնաս մը կը հասնի Հոլանտա – յի առեւտուրին : Յարդ, Ինդոնեզիոյ մէջ պրեթէ միայն Հոլանտական ապրանքներ կը ծախուէին :

Քաղաքական չըլլանակներու կարծիքը այն է, թէ Հոլանտական Ինդոնեզիան այլ եւս պատմութեան անցած է :

—o—

ԱԽՍՏՐԻՈՑ վարչապետ Ռաապ պաշ – տօնապէս յայտարարեց, թէ յառաջիկայ գարնան Մոսկուա պիտի երթայ : Միւս կողմէ կը յայտնեն, թէ աւստրիական կա – ռավարութիւնը որոշեց երբորդ կայան մը հաստատել եւրոսլաւ տարաղրկներու համար, որոնք կը չարունակեն տահմանը անցնել եւ ապաստան խնդրել Վիէննայի կառավարութենէն : Նոյեմբերի ընթաց – քին միայն 451 հոգի փախած է Եուկո – սլաւիայէն :

(Լուրերու շար.ը կարդալ Գ. էջ)

ԼԵԶՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԽՄԲ.— Հրաչեայ Կոստանեան, «Բանասիրական գիտութիւնների թեկնածու», համալսարանական ձեւով կը ներկայացնէ լեզուաբանական աշխատանքները, որոնք կատարուած են կամ ծրագրուած՝ Հայաստանի մէջ: Այդ աշխատանքներէն մէկ քանին մանաւանդ հայագէտ ամբողջութեամբ՝ կուտանք ամբողջու – թեամբ.—

Տարէց տարի ծաւալում են լեզուաբանական պիտահետազօտական աշխատանքները Հայաստանում: Լայն հնարաւորութիւններ են առեղծւում հայագիտութեան զարգացման համար, որի հիմքում ընկած է հայ ժողովրդի հնագոյն եւ հարուստ լեզուն:

Հայագիտութեան առաջնակարգ խնդիրներից մէկն է ժամանակակից հայերէնի պիտական քերականութեան բարձակող – մանի եւ խոր մշակումը: Այս կարեւոր գործին ձեռնամուխ են եղել Գիտութիւնների Ակադեմիայի լեզուի բաժանմունքի արդի հայերէնի մասնագէտները: Արդէն աւարտել են ձեւաբանութեան եւ շարա – հիւսութեան վերաբերեալ ուսումնասի – րութիւնները:

Հայերէնի պիտական քերականութեան մշակման եւ ամբողջացման մեծ չափով նպաստում են լեզուի ուսումնարանի հրատարակած մենագրութիւնները: Լոյս են ընծայուել Ա. Մուրվալեանի Հայերէնի քառապաշարը, Վ. Առաքելեանի Հայերէնի հնչիւնաբանութիւնը, Ս. Աբրահամեանի ժամանակակից հայերէնի դերբայների մենագրութիւնները: Պատրաստ են տպագրութեան Զ. Քեհեուղ խօսքի մասերը, Բայերի ձեւաբանական եւ շարահիւսական կիրառութիւնները եւ այլ աշխատութիւններ: Շարունակուել է արդի հայերէնի չարահիւսութեան հարցերի ուսումնասիրութիւնը:

Հայոց լեզուի քերականութեան ուսումնասիրութեան բնագաւառում նշանակալից երեւոյթ հանդիսացաւ բազմահատոր հայագէտ հանդուցեալ Հրաչեայ Աճառեանի Լիակատար բերականութիւն Հայոց լեզուի՝ համեմատութեամբ 562 լեզուների՝ մեծածաւալ աշխատութեան նախածութեան, առաջին, երկրորդ եւ երրորդ հատորների հրատարակութիւնը: Մնացած հատորները լոյս կը տեսնեն մինչեւ 1960:

Պէտք է նշել որ մեզ մօտ դեռ եւս չեն առեղծուել հայերէնի համեմատական եւ պատմական քերականութեան վերաբերեալ աշխատութիւններ: Հայերէնի պատմական քերականութիւնը կազմելու աշխատանքին ձեռնամուխ են եղել համալսարանի Հայոց լեզուի եւ ընդհանուր լեզուաբանութեան ամպիոնները, իսկ պատմական քերականութեան մշակման հարցով զբաղած է Պ. Ա. Ս. Ղազրեանը:

Մօտ յիսունի հասնող բարբառների եւ տեղական բազմաթիւ խօսուածքների պատրաստութիւնը իրաւամբ հիմք են տալիս հայերէնը համաբերելու աշխարհի՝ բարբառներով ամենահարուստ լեզուներից մէկը: Հայ բարբառների հաւաքման եւ պիտանի ուսումնասիրութեան աշխատանքներ սկսուել են դեռ եւս անցեալ դարի 50ական թուականների վերջերից, սակայն մինչեւ այժմ բոլոր հայ բարբառներն ու տեղական խօսուածքները չեն յայտնաբերուած եւ ուսումնասիրուած: Այնինչ դրանք օրէց օր ձուլւում են համաժողովրդական ընդհանուր լեզուի մէջ եւ մեր աչքի առաջ անհետանում: Հասկանալի է որ բարբառների ուսումնասիրութիւնը գիտական հրատապ, անյետաձգելի խնդիր է համարում: Յատկապէս կարեւոր է հայ բարբառների քարտէսը: Հրատարակուել է հայ բարբառների այն բառամթերքը, որ տեղ չի գտել մինչեւ այժմ լոյս տեսած բառարաններում ու բարբառագիտական աշխատութիւններում: Այս բառամթերքի ուսումնասիրութիւնը նոր լոյս կը սփռի մի շարք բառերի առուգաբանութեան, ձեւափոխութեան եւ իմաստափոխութեան վրայ:

Պատրաստուում են հրատարակման Կիլիկիայի, Սվեդիայի, Արաբկիրի, Մար – աշի, Մշոյ, Կարճեւանի, Հաւարիկի բարբառների ուսումնասիրութեանը նուիրուած մենագրական աշխատութիւններ: «Հայ բարբառներ» մատենաշարով ամէն տարի լոյս կը տեսնի 2 – 3 բարբառագիտական աշխատութիւն: Պատրաստ է տպագրութեան Հր. Աճառեանի Հայ բարբառների դասակարգումը տեսաբանական աշխատութիւնը, որի մէջ հանդամանօրէն քննուած են հայ բարբառների պատմութիւնը, բառապաշարը եւ քերականական կառուցուածքը: Ուսումնասիրուում է Արարատեան բարբառը, որ ընկած է հայ ազգային լեզուի կազմաւորման հիմքում:

Ուշագրաւ երեւոյթ հանդիսացաւ Ա. Ղարիբեանի Հայ բառարագիտութիւն արժէքաւոր աշխատութեան հրատարակութիւնը:

Յառաջիկայում մեծ թափ են առնելու նաեւ բառարանա – գրական աշխատանքները: Լրիւ կազմուած է Ռուս – հայերէն բառարանը, որ բաղկացած է չորս տեսակ հատորներից եւ իր մէջ ամփոփում է 100·000 բառ, արտայայտութիւն եւ դարձուածք: Արդէն լոյս են տեսել բառարանի առաջին եւ երկրորդ հատորները: Վերջնական խմբագրւում են երրորդ եւ չորրորդ հատորները, որոնք հիմնաւորում են Լենինգրադում կազմուող «Արդի ռուսերէնի բացատրական բառարանի» հետ: Արդէն սկսուած են Հայ – ռուսերէն բառարան (երկու հատորանոց) կազմելու աշխատանքները: Պատրաստ են տպագրութեան Իրանից հայրենադարձ ակադեմիկոս Հանդուցեալ Ա. Աբրահամեանի Պարսկերէն – հայերէն – ռուսերէն բառարանը եւ Պահլաւերէն – պարսկե – րէն – հայերէն – ռուսերէն – անգլ – ւն մեծարժէք բառարանը: Սկսուել են մանաւանդ միջնակարգ հայերէնի բացատրական բառարան կազմելու աշխատանքները: Արդէն հաւաքուած են շուրջ 80 հազար բառ, արտայայտութիւն: Այդ բառարանը կ'ունենայ տեսական ու գործնական մեծ նշանակութիւն:

Գիտահետազօտական աշխատանքներին զուգընթաց մեծ տեղ է յատկացուելու լեզուաբանական եւ հայագիտական արժէքաւոր աշխատութիւնների վերահրատարակութեան: Նախատեսուում է չորս հատորով լոյս ընծայել ակադեմիկոս Գ. Ղափանցեանի աշխատութիւնները, որոնք նուիրուած են Փոքր Ասիայի եւ Հայաստանի պատմութեան, մշակոյթին, ինչպէս եւ ընդհանուր լեզուաբանութեան ու հայագիտութեան հարցերին: Հեղինակը պատմական, լեզուաբանական եւ ազգագրական հարուստ փաստերի հիման վրայ հիմնաւորում է հայ ժողովրդի եւ հայերէնի ծագման ու յետագայ զարգացման հարցերը, պարզում է Հայոց, փոքրասիական, հնդեւրոպական, կովկասեան եւ Նիմական լեզուների լեզուական փոխադրութիւնների հարցը: Գր. Ղափանցեանի գիտական աշխատութիւնների առաջին հատորը, որ իր մէջ ամփոփում է հեղինակի պատմա – լեզուաբանական ուսումնասիրութիւնները, վերջերս լոյս տեսաւ ռուսերէն լեզուով:

Մի գրքով լոյս են ընծայուելու Մ. Աբեղեանի Աշխարհաբարի շարահիւսութիւնը եւ Հայոց լեզուի տեսութիւնը աշխատութիւնները, որոնք վաղուց սպառած են եւ որոնց կարիքը խիստ զգայուում է: Հայերէն թարգմանուելու եւ հրատարակուելու են նշանաւոր հայագէտներ Հիւբշմանի Հայերէնի բերականութիւնը եւ Ա. Մէյեէի Ակնարկներ հին հայերէնի պատմութեան արժէքաւոր ուսումնասիրութիւնները:

ՀՐԱՉԵԱՑ ԿՈՍՏԱՆԵԱՆ

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԸ ԽՈՐԷՆ ԱՐՔ.Ի ՀԵՏ

(Բ. եւ վերջին մաս)

Հ.— Սրբազան Հայր, լսեցինք, որ Սուրիոյ խորհրդարանը պրպտեր է «համախմբականի»ներու պահանջած «անկախ համայնք»ի մը կազմութեան հարցով: Գիտենք թէ մէկէ աւելի անպամներ մեր ժուեցաւ այդ անմիտ ու ապազուիտ գործումը: Կրնա՞ք լուսարանել այդ կէտը. կրնա՞ն «անկախ համայնք» կազմել, ինչպէս յայտարարեցին իրենց թերթերը:

Պ.— Այդ խռովարարներու դիմումները մերժուեցան, քանի որ գործու եղող օրէնքներու: Պետութեան հիմնական, Սահմանադրական օրէնքը թոյլ չի տար նման պահանջի մը իրականացումը:

Հ.— Բայց չէ՞ որ Սուրիոյ վարչապետը արդէն մը չէ պատճ առանձին համայնք կազմելու:

Պ.— Այո, արդէն չկայ. բայց յիշեցէք նաեւ որ Վարչապետը ուզած էր նախ այդ «համայնքին» կանոնադիրը: Քանի եղած օրէնքի մը, կարելի է որեւէ առեն նոր համայնք մը կազմել, պայմանաւ առկայն, որ ան որեւէ կապ չունենայ արդէն գոյութիւն ունեցող համայնքի մը հետ: Այսպէս, մեր պարագային, եթէ նոր համայնք մը կազմուի, ան չի կրնար հայ համայնքին պատանդը ունենալ, չի կրնար նաեւ Հայ Առաքելական Եկեղեցւոյ անունը ունենալ. չի կրնար մեր կրօնականները սքեմն իսկ գործածել. չի կրնար մեր կաթողիկոսին անունը գործածել, մեր ծէսերն ու սովորութիւնները որդեգրել:

Այն առեն կրնան բոլորովին տարբեր, ոչ – հայ համայնք մը կազմել, այսպէս՝ օրինակ, Մորմոններու նման համայնք մը, առանց որեւէ կապ ունենալու հայ համայնքին, եկեղեցիին եւ կաթողիկոսութեան հետ:

Հ.— Ուրեմն, պիտի դադրի՞ն հայ ըլլալէ:

Պ.— Ճիշդ այդպէս: Կրնան նոր դաւանանք մը որդեգրել, իրրեւ նոր համայնք:

Հ.— Համախմբական կոչուածները եկեղեցի ունի՞ն:

Պ.— Ոչ մէկ եկեղեցի ունին կամ կրնան ունենալ: Բոլոր եկեղեցիները ալ ենթակայ են Ազգ. Առաջնորդարանին: Փոզո – մուրդն ու քահանաները կը դիմեն Առաջնորդարան, իրենց կարիքները համար: Ամէնէն թիւու հակառակորդն իսկ ստիպուած է Առաջնորդարան դիմելու, իր դաւանելու կարգադրութեան համար — ծը – նունդ, կնունք, պսակ, թաղում եւայլն, Առաջնորդարանի հրամանով տեղի կ'ունենան:

Հ.— Ի՞նչ վիճակի մէջ է Կիլիկիոյ Կաթողիկոսարանի ներքին կեանքը:

Պ.— Կաթողիկոսարանի ներքին կեանքը որեւէ ժամանակէ աւելի լաւ վիճակի մէջ է: Կազմակերպուած է. գոյութիւն ունի իսկական Մխարանութիւն մը, վեհ. Հայրապետի իմաստուն դեկավարութեան տակ: Խաղաղութիւն կը տիրէ, փոխադարձ յարգանքի մթնոլորտի մը մէջ:

Հ.— Դպրեվանքը...

Պ.— Դպրեվանքը 50 աշակերտ ունի. կան հինգ սարկաւագներ, եւ Ցունիսին ձեռնադրուելիքան ութ սրեղաներ: Տպարանը լաւ վիճակի մէջ է. «ՀԱՄԿ»ը կանոնաւոր կերպով եւ հարուստ բովանդակութեամբ լոյս կը տեսնէ: Անոր կողքին կայ «Գլաձոր»ը, որ Դպրեվանքի Սանեցուն հրատարակութիւնն է:

Հ.— Կը քաջալերուի՞ն այս հրատարակութեան հետ:

ՅՈՒՇԵՐ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ՄԱՍԻՆ

(1902 — 1906 Թ. Թ.)

—o—

Շաւերը քաշւում էին մեներկելուց եւ Կոմիտաս վարդապետը չսիրեց նրանց, իսկ մօտ 25 – 30 հոգի երգեցին իրենց միջավայրի երգերից, ամանք էլ արտասանեցին երգիծական ոտանաւորներ իրենց բարբառով: Բոլոր էլոյթները լսում էինք լուրջ ուշադրութեամբ, իսկ Կոմիտաս վարդապետը լսում եւ մատիտով ծոցատետրի մէջ արագօրէն հայկական ձայնանիշերով նշումներ էր անում: Ես իմ հերթին երգեցի Զանգեզուրի Ինձորեակ գիւղի, իմ ծննդավայրի հոռովելը՝ դռթաններգը, որը լսել էի մեր գիւղի դաշտերում վար ու ցանքի ժամանակ: Կոմիտասը որ երգը որ դուր էր գալիս, այն կրկնել էր տալիս եւ անմիջապէս ձայնագրում: Իմ երգածն էլ կրկնել տուեց եւ ձայնագրեց:

Մեներկներից յետոյ սկսեցինք ժողովրդական կլոր պարերը երգերով, եւ ապա չարժական խաղերը:

Այս բոլորի ժամանակ Կոմիտաս վարպետը բարձր արտադրութեամբ մէկ – ոտխուռում, մէւսին կատակով պատասխանում, երբորդին մեզ կշտամբում էր եւ առհասարակ մասնակցում մեր ուրախ ժամանցին:

Երբ մեր բոլորի արտադրութիւնը բարձրացաւ համարձակութեան աստիճանին, չըվազատեցինք մեր սիրելի ղեկավարին եւ յամառօրէն խնդրեցինք, որ մի բան էլ ինքը երգի մեզ համար:

— «Մոկաց Միրզէ», — ձայնեցին մի քանի հոգի:

— «Միրանի ծառ»ը, — դոչեցին ուրիշներ:

— Հայր սուրբ, որը դուք կը կամենաք, — ասաց մեծամասնութիւնը:

Հէնց այդ րոպէին ձեմարանի տնտես Մեսրոպ Աբովեանը, որը մեզ հետ եկել էր, յայտարարեց, որ ճաշի սեղանը պատրաստ է:

— Ոչ, ոչ, չենք ուզում: Մինչեւ հայր Կոմիտասը չերգի, մենք ճաշի չենք նստելու, — բացագանչեցինք բոլորս:

Կոմիտաս վարդապետը տեսնելով, որ մենք յամառ կերպով խնդրում ենք, ըստ կրտսեց երգել «Հով արէք, սարեր ջան, հով արէք»ը, Նրա հարուստ ձայնի ալիքները տարածուելով Ղոի այգու բուրաստանում, յուզմունքով արձագանգում էին նաեւ բոլորիս սրտում ...

Ճաշի ժամանակ, ուրախ եւ առատ սեղանի չուրջը մեր զուարճախօսութիւններին մասնակցում էր նաեւ հայր Կոմիտասը:

Ճաշից յետոյ, մի ժամ էլ հանգստացանք կանաչեւէտ այգում, ապա ճանապարհ ընկանք դէպի ձեմարան:

Ճանապարհին, Կոմիտաս վարդապետի թոյլտուութեամբ եւ նրա տպաւորուր աշակերտ Յոսրով Փախչանեանի ղեկավարութեամբ, քայլելիս երգում էինք «Լօ – լօ»ն: Երջակայ այլինների եւ տնեցիկ դուրս էին եկել լսելու եւ, դիտելու ճեմարանցիների ուրախ չքերթը:

Այդ օրը անմոռանալի մի օր էր մեծ Կոմիտասի հետ միասին ...:

×

Ինչպէս ամէն մի ժողովուրդ, այնպէս էլ հայ ժողովուրդը ունեցել է, եւ մինչեւ այսօր էլ ունի զանազան ծոնական օրեր, որոնց ընթացքում կատարւում են համապատասխան հանդէսներ, ուխտատեղիներ, ճաշեր, խնջոյքներ, ծիսակատարումներ եւ խաղեր: Բոլոր դէպքերումն էլ ծոնակատարման հանդէսի էական մասը կազմում են խօսքը, երգը, նուագը եւ պարը, որոնց միջոցով ժողովուրդն արտայայտում, դրսեւորում է իր վշռի կամ ցնծութեան, սիրոյ եւ այլ ապրումները: Սակայն արտայայտման այդ միջոցները չեն մնում քարացած իրենց ձեւով ու բովանդակութեամբ, այլ ժամանակի ընթացքում ժողովուրդը նորանոր ստեղծագործութիւններով յաւելումներ է անում հնի վրայ, ձեւափոխում, նոր իմաստ մտցնում, համապատասխան իր զարաշրջանի ոգուն, կենցաղին եւ պահանջներին:

Նման աւանդական սովորութիւնների շարքին են պատկանում Բարեկենդանը, Նաւասարդը, Վարդանանց եւ Թարգմանչաց ծոնները, Աստուածածնի, Համբարձման եւ Վարդավառի ծոնները, որոնցից ամանք իրենց ծագմամբ զուտ հին ժողովրդի դեռ եւս հեթանոսական դարերից:

Բացի կրօնական բնոյթ կրող այդ ծոնակատարութիւններից, յայտնի են բոլորին նաեւ կենցաղային բնոյթ կրող ծոնակատարումներ, ինչպէս օրինակ, հարսանիքի, բերքահաւաքի, սար գնալու, խոտհարի, վար ու ցանքի, յաղթանակի եւ այլ ծոնները: Ահա այդ ժողովրդական ծոնակատարումները եւ կենցաղային դէպքերն էին այն ազբիւրները, որոնցից յարեցնում էր իր ստեղծագործական ծարաւը Կոմիտաս վարդապետը:

×

Աստուածածնի ծոնն էր, իշխանածնից տասներկու կիլոմեթր դէպի հարաւ, Խաժաւրնարիս գիւղի մօտ գտնուող հին – նաւուրց վանքի չորս բոլորը բռնուած էր հազարաւոր ուխտաւորների բազմութեամբ:

Ս. ԲԱՂԻՐԵԱՆ

(8 Տար.)

ԿՈՏՈՐԱԾ

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

— Հիրավի, ասում էր մարդու ներսից մի ձայն, որ ես ոչ միայն ստիպված եմ ինձ համար գտնել ապրելու միջոցներ, այլև ուրիշների համար ևս: Ես չեմ կարող ինձ թույլ տալ ամեն օր ծանր աշխատանքի մեջ անցկացնել տասներկու ժամ, որպեսզի ստանամ հինգ ռուբլի, որոնցից երեքը պետք է տրվի տանտիրուհուս, մնացած երկուսով ես պետք է ապրեմ ամբողջ շաբաթը, ինչպես նաև հագնվեմ, կոշիկներ գնեմ և այլն

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՎԱՐՇԱՒԱՅԻ պատժական տաեանը մէկէն երեք տարուան բանտարկութեան դատապարտեց վեց ուսանողներ ու երիտասարդ դործաւոր մը : Դատապարտեալներու ձերբակալուած էին անցեալ Հոկտեմբերին, երբ բազոքի ցոյց մը կ'ընէին ուսանողական չարաթաթերթի մը արդիման դէմ :

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ Արտաքին նախարար Տրլբս Ալանտեան Ուխտի ժողովէն առաջ պիտի դայ Փարիզ, նախապատրաստական աշխատանքներուն ներ – կայ բլլալու համար :

ՇՈՒԻՑԻ դինուորական հրամանատար դօրավար Աքերման յայտարարեց թէ իր երկիրը հիւլէական զէնքերու կարիք ունի եւ նկատելով որ պանդք դուբսէն չի կրնար ստանալ՝ պիտի պատրաստէ իր պետնականներուն միջոցաւ :

ԵԳԻՊՏԱԿԱՆ մամուլին համաձայն Խ. Միութեան Պատերազմական նոր նախարար մտադրեալ Մալինովսկի 1958 Յուլի – սին Եգիպտոս պիտի այցելէ, ներկայ բլլալու համար Եգիպտոսի անկախութեան տարեդարձին տօնակատարութեանց :

ՄԱՐՈՔԻ թագաւոր Մուհամէտ Ե. անցեալ երկուշաբթի այցելած է Հոլի – վուտ ու ներկայ եղած չարժանկարի ժապաւէնի մը պատրաստութեան : Խօսակցած է նաեւ կարդ մը դերասաններու հետ :

ԱՅՋԸՆՀԱՒՐԸրի եւ Աարնաւուրդի ա – ռաջնական վիճակը հետզհետէ կը բարելաւուի : Կը կարծուի թէ պետական երկու դէմքերը պիտի կարենան ներկայ բլլալ Փարիզի ժողովին :

ՖԼՈՐԻՏԱՑԻՆ հասած լուրերուն համաձայն, Միացեալ Նահանգներ առջի օր արձակած պէտք է բլլան իրենց արուեստական առաջին արբանեակը :

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԳԵՐՄԱՆԻՈՑ դրամատէրներու խումբ մը երկու միլիոն մարքի փոխատուութիւն մը ըրաւ Պելժիոյ :

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Կը խնդրուի ստիպողաբար այն բաժանորդէն որ 10·000 ֆրանքի մանուտ մը դրկած է ՐՈԱՆԷՆ (Լուսաւոր) անմիջապէս իր անունը եւ հասցէն հաղորդել թերթիս վարչութեան : Անուշադրութեամբ դրկուած է «Յառաջ»ի անունը եւ հասցէն :

ՄԱՐՍԷՅԼԻ

Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

Կիրակի 14ին, Շաբաթ երեկոյ ժամը 21էն մինչեւ լոյս Ալհամպրայի մէջ

Մանրամասնութիւնները մօտ առենէն :

ՏԷր եւ Տիկին Յարութիւն Արիէլ Ա – ճէմեան եւ զաւակները (Պրուքլին, Նիւ Եորք), Տէր եւ Տիկին Յակոբ Աճէմեան եւ զաւակները (Վիէն, Իզէր), խոր կսկիծով կը ծանուցանեն իրենց մօր եւ մեծ մօր՝

ԱՅՐԻ ՏԻԿ. ԱՆՆԻԿ ԱՃԷՄԵԱՆԻ

(Ծն. Գալփաճեան, Եփեճցի, Պուրսա)

մահը որ տեղի ունեցաւ 76 տարեկանին, 30 Նոյեմբեր, Շաբաթ օր, Լիոնի Կրանժ-Պլանշի հիւանդանոցը :

Յուղարկաւորութիւնը կատարուելու է Դեկտեմբեր, երկուշաբթի օր, առաւօտեան ժամը 9ին, յետ հայկական Ս. Պատարագի, հիւանդանոցի մատրան մէջ :

Մարմինը փոխադրուելու է կիւոթիէրի նոր գերեզմանը :

Կը խնդրուի ներկայիս իբրեւ մահազդ ընդունիլ :

Վիէն.— Հ. Յ. Դ. «Անի» կոմիտէի բոլոր ընկերները, Նոր Սերունդի կազմը, Ֆ. Կ. Խաչի ընկերուհիները իրենց խորին ցաւակցութիւնը կը յայտնեն ընկեր Ահարոնի, Աստուր, ընկերուհի Արշալոյս Մազաքեանին եւ պարագաներուն, իրենց մօր, մեծ մօր Այրի Տիկին ՄԱՐԻԱՄ ՄԱՂԱՔԵԱՆի կսկծալի մահուան առթիւ :

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ԿՐԸՆՈՂԸ.— Կապոյտ Խաչի մասնաճիւղի Մանուկներու Օրատոյ ասոնածոտ հանդէսը մեծ պատրաստութեամբ Յունուար 19ին, Րիւ Ժէի օթարին մէջ :

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԱԼՖՈՐՎԻԼ.— Հ. Յ. Դ. Ս. Մինասեան ենթակոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները այս ուրբաթ, ժամը 21–ին, ծանօթ հաւաքատեղին : Ներկայ կ'ըլլայ Շրջ. Կոմիտէի ներկայացուցիչը : Կը խնդրուի ճշդապահ ըլլալ :

ԿՐԸՆՈՂԸ.— Հ. Յ. Դ. Նոր Սերունդի ժողովը, այս ուրբաթ, ժամը 9ին, դպրոցի սրահին մէջ :

ՎԱԼԱՆՍ.— Հ. Յ. Դ. Շրջ. կոմիտէին ընդհ. ժողովը, այս չարաթ, ժամը 20·30–ին, Ահարոնեան ակումբը : Կարեւոր օրակարգ : Բոլոր ընկերներուն ներկայութիւնը պարտաւորիչ է :

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Կապոյտ Խաչի Պանէլօ Քաշանի մասնաճիւղը չնորհակալութեամբ առացած է Տէր եւ Տիկին Փափազեանէ երկու հատոր Քրանք, փոխան ծաղկեպատկի իրենց մօրաքրոջ Տիկին Նեկտար Պապատասրեանի մահուան առթիւ, նոյն առթիւ Տէր եւ Տիկին Թօրանեանէ երկու հատոր (իրենց մեծ մօրաքրոջ) :

×

Այրի Տիկին Փերուզ Այվազեան, Այրի Տիկին Մարի Պզտիկեան, ինչպէս նաեւ Տէրտաուրեան, Պզտիկեան, Այտնեան, Պաղտասարեան ընտանիքները իրենց խորին չնորհակալութիւնները կը յայտնեն Լիոնի քահանայ հայրերուն, Ազգ. Միութեան, Հ. Յ. Դ. կեդր. եւ Շրջ. կոմիտէներուն, Լիոնի Վարդանեան եւ Տէսինի իր ընկերներուն, Ֆ. Կ. Խաչին եւ բոլոր անոնց, որոնք անձամբ, դրաւոր, ծաղկեպատկով և նուիրատուութիւններով սպակիս եղաւ իրենց ամուսնոյն, եղբօր եւ աղդականին ԹԱԳՒՈՐ ԱՅՎԱԶԵԱՆի մահուան :

ՏԱՐԵԿԱՆ ՄԵԾ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Մարսէյլի Ամասիոյ Հայր. Միութեան Շաբաթ, 7 Դեկտ. ժամը 9էն մինչեւ լոյս, Ալհամպրայի չքեղ սրահներուն մէջ

340 Պուլվ. Շավ,

avec Robert Gonzalez et son Orchestre

Հաճելի անակնկալներ եւ լաւագոյն մթնոլորտ :

Մուտք 500 ֆրանիֆ :

Ապահովել սեղանները կանխաւ. Տիկին Արփինէ Շէ վէթէր, 34 րիւ Թափի վէր, Պ. Յար. Զէքէմեան, հեռաձայնել Փրատօ 78·61, Պ. Տիկրան Զօրիքեան. 5 Ավրնիւ Քամիլ Փէլլեթան :

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

ՎԱԼԱՆՍԻ Ազգ. Միութիւնը եւ Հոգաբարձութիւնը կը ծանուցանէ թէ այս կիրակի առաւօտ հանդիսաւոր Հոգեհանդիստ պիտի կատարուի Հայ Առաք. Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ՝

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿի

մահուան յիսնամեակին առթիւ :

Ժողովուրդը կը հրաւիրուի իր ներկայութեամբ յարգել երջանկայիշատակ Կաթողիկոսին յիշատակը :

ԱՆԱՐԱՏ ՅՂՈՒԹԵԱՆ ՕՐԸ ԱՒՒՆՈՒՎԻԼԻ ՄԷՋ

Աւնուվիլի Առաքինագարդ Հայրերը կը տօնեն Անարատ Յղութեան Օրը, կիրակի, 8 Դեկտեմբերին :

Այս առթիւ տեղի կ'ունենայ հանդիսաւոր պատարագ տեղւոյս Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, առաւօտեան ժամը 11ին :

Յետ պատարագի կազմակերպուած է ճաշ մը նախկին հաւատարիմ տանուհիներուն եւ իրենց փոքրիկներուն համար :

Փարիզի եւ արուարձաններու հին աշակերտուհիներէն անոնք որ կը փափաքին ներկայ ըլլալ այս հանդիսութեան, բարեհաճին երկտողով մը իմաց տալ կամ հեռաձայնել՝ Սէօր Աբմէնիէն, 73 Ավրնիւ Համիդ Պարպիւս, Աւնուվիլ լէ Կոնէս : Հեռաձայն 179 Աւնուվիլ :

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

1958ի "ԳՈՅԱՄԱՐՏ" ՕՐԱՑՈՑՑ-ԱԼՊՈՄԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ. Յ. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ՄԱՐՄԻՆԱՅԻ ՇՐՋԱՆԻ

ԸՆՏԻՐ ԹՈՒՂԹՈՎ 14 ՄԵԾԱԴԻՐ ԷՋԵՐ

Շքեղ ճկարներ, մեծ մասը անտիպ : Գրական եւ պատմական նիւթերով . ճոխ բովանդակութիւն

— ԳԵՂԱՋԱՐԴ ԵՒ ԳՈՒՆԱՒՈՐ ԿՈՂՔ —

Բացառիկ խնամքով եւ ճաշակով պատրաստուած այս օրացոյց–ալպոմը պիտի կազմէ զարդը՝ ամէն հայ տան :

ԳԻՆ 500 ՖՐԱՆՔ

Այժմէն ապահովեցէք ձեր օրինակը

Փարիզի համար դիմել՝ LIBRAIRIE H. SAMUELIAN, 51, Rue Monsieur-le-Prince, PARIS - 6e

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ

ԵՐԵԿՈՆ ՍԷՆ – ՇԱՄՈՆԻ ՄԷՋ

Այս Շաբաթ (Դեկտ. 7), ժամը 21էն մինչեւ լոյս, սեղանի Սալ տէ Ֆէթի մէջ : Մասնակցութեամբ՝

ANDRÉ MALIAN ET SES RYTHMES

Պիւֆէ, պիվեթ, fօթիյօն եւ խաղեր : *ՀԱՃԵԼԻ ՄԹՆՈԼՈՐՏ :*

ՊԱՏԱՐԱԳ ԱԼՖՈՐՎԻԼԻ ՄԷՋ

Ալֆորվիլի Ս. Պօղոս Պետրոս եկեղեցւոյ հովուապետութիւնը կը ծանուցանէ բարեպաշտ ժողովուրդին թէ, այս կիրակի, կաթողիկոսական պատուիրակ՝ ՍԵՐՈՎԲԷ ԵՊԻՍԿ. ՄԱՆՈՒԿԵԱՆ հրաւիրուած է Ս. Պատարագի մատուցման եւ քարոզով մխիթարելու հաւատացեալնե – րը :

Ս. Պատարագէն ետք, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի թաղիս բոլոր ննջեցեալներու յիշատակին :

Այս առթիւ Ս. Պատարագը պիտի երգեն խաչակիր մանուկները, առաջնորդութեամբ Տօքթ. Լ. Համբարձումեանի, որ պիտի վարէ նաեւ երգեհոնը :

Սկզբնաւորութիւն ժամերգութեան ժամը ութին, Ս. Պատարագ՝ ժամը 10ին :

ԴԻՒԱՆ

ՇԱՒԻԼԻ ԵԿԵՂԵՑԻ

Շաւիլի Կրօն. Ընկերակցութեան վարչութիւնը եւ երիտ. եկեղեցաչէն յանձնախումբը կը ծանուցանեն թէ Դեկտ. 15–ին, կիրակի օր տեղի պիտի ունենայ նուրբակառոյց եկեղեցւոյ օծումը եւ անդրանիկ Ս. պատարագը ձեռամբ կաթողիկոսական պատուիրակ՝ եւ Փարիզի Առաջնորդ Գեր. Տէր ՍԵՐՈՎԲԷ ԵՊԻՍԿ. ՄԱՆՈՒԿԵԱՆի :

Սկիզբ ժամերգութեան ժամը 8, օծում ժամը 10, Ս. պատարագ 10·30 :

Կը հրաւիրուի հաւատացեալ ժողովուրդը : Յաւարտ Ս. պատարագի կազմակերպուած է ճաշ մը Վերսայլ Օթէլ տը Ֆրանսի չքեղ սրահին մէջ (Փլաս տ'Ամ, րիւ Քոլպէր) :

Այս ճաշին մասնակցիլ փափաքողներէն կը խնդրուի արձանագրուիլ մինչեւ Դեկտեմբեր վեց եւ առանձ սեղանակիցի մասնաւոր քարթը, (ճաշարին 3000 ֆր) :

Վերոյիշեալ թուականէն վերջ ոչ մէկ արձանագրութիւն պիտի ընդունուի :

Արձանագրութեան համար դիմել Փարիզի եկեղեցւոյ դիւանատունը,

Պ. Հրաչ Զուլաքեանի՝

14. Rue Maréhal Foch Viroflay

Պ. Զաւէն Յովհաննէսեանի

31. Rue de Général Léclerc, Versailles

կամ

ASSOCIATION CULTUELLE DES ARMÉNIENS DE CHAVILLE

C. C. P. Paris 14827-18

AVe. NIEL

TAILLEUR H. & D.

COUTURE CONF.

b. Mag. av. Logt b. aménagé

chauff. cent, PAS 49-98

ՏՕՆԱԾԱՌ

ՍԱՄՈՒԷԼ – ՄՈՒՐԱՏԵԱՆ

ՎԱՐԺԱՐԱՆ

Կիրակի, 22 Դեկտեմբեր

ԿՐ ՓՆՏՌՈՒԻՆ

× *Երեւանէն Կիւլիւզար Նալպանտեան, ծննալ Գափլանեան կը փնտռէ իր մօրաքրոջ Հոխոխիմէ Ժամկոչեանին, Աֆիոն Գարահիսարցի եւ զաւակները Յարութիւնն, Հոխոխիմէ եւ Նուարդ Ժամկոչեաններ, կը կարծուին որ Փարիզ կը գտնուին :*

× *Հայաստանէն Անթառամ Մելիքեան կը փնտռէ իր մօրաքրոջ տղաները Վազգէն եւ Յարկէ Մոքոյի Ամիրեան, որոնք 1914ին կը գտնուին եղեր Պաղտատի որբանոցը, իրենց մօր անունն է Եւգինէ, հօր անունը Մուքօ, իսկ հօրեղբօր անունը Ամիրխոփօ :*

Այս փնտռուող հեռաւոր անձերու հարցնողները դիտցողներէն կը խնդրուի տեղեկացնել Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցւոյ դիւանատունը, 15 Րիւ Ժան Կուժօն, Փարիզ (8) :

LE CLUB

DANCING


51, Rue Grignan, MARSEILLE

Tél. FE 27-66

Լաւագոյն ընդունելութիւն վերապահուած է հայկական կազմակերպութեանց եւ հայ ընտանիքներուն սրահը վարձելու համար :

Երեկոյթ, պարահանդէս, նշանտուք, ամուսնութիւն եւայլն :

Տնօրինութիւն՝ ԷՏԻ ԹՈՒՐՆԷԼ



Նոր կատարելագործում կօշիկի կրունկներու պատրաստութեան մէջ

Առաջին հայ հաստատութիւնը որ յաջողած է մաքիէր փլաստիքի եւ պլիւ–մինիումի միացումով չինել անբիկ (էնֆասապլը) եւ ճկուն կօշիկի կրունկներ ամէն բարձրութեամբ :

Դիմել՝

VANPLAST

(Վ. Ա. Ն Լ. Ե Ա Ն)

7, RUE GODOT DE MAURDY

Tél. : OPE. 01-08

Առաւօտները հեռաձայնել՝ ITA.33-38

Imprimé sur les presses du journal HARATCH

17, Rue Bleue, 17 — PARIS (9e)

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 — Téléph. : PRO. 86 - 60
R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա եւ գաղութներ, տարեկան 3000 ֆր. վեցամս. 1600
Արտասահման՝ տարեկան 3500 ֆրանք: Հատը 12 ֆր.

ՈՒՐԲԱԹ
6
ԴԵԿՏԵՄԲԵՐ
VENDREDI
6 DECEMBRE
1957

33ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8061 — 33e ANNEE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 13ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3862

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ԱՐԱԲ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ

—o—

Մերձաւոր Արեւելքի մէջ անկարելի է տեւական խաղաղութիւն հաստատել, մինչեւ որ չկարգադրուի Պաղեստինի ա–րաբ գաղթականներուն խնդիրը :

Այս կնճռոտ խնդիրը որոշ չափով կը յիշեցնէ Հայկական ցաւոտ Հարցը :

Օսմանեան կայսրութեան փլատակնե–րէն ծնան վեց արաբական պետութիւն–ներ, որոնցմէ Իրաք, Սուրիա, Լիբանան, Պաղեստին եւ Ցորդանան Ազգերու Դաշ–նակցութեան Ուխտին համաձայն ժամա–նակ մը մնացին Անգլիոյ եւ Ֆրանսայի հոգատարութեան տակ, վերջնական ան–կախութիւն ստանալէ առաջ :

Առկախ մնացած Էրպաղեստինի հարցը : Անգլիա որոշած ըլլալով լքել հոգատա–րութիւնը, Միացեալ Ազգերու կազմա–կերպութիւնը 1947ի աշնան որոշեց եր–կուքի բաժնել Պաղեստինը, մէկ մասը Ա–րաբներուն, միւսը՝ Հրեաներուն :

Արգիլելու համար Իսրայէլի անկախ պետութեան ստեղծումը, Արաբները չատ աշխատեցան, որ բաժանման ծրագիրը չքուէարկուի, սակայն խորհրդային պատուիրակին քուէն վճռական դեր խա–ղած : Այդ պատճառով ալ ճիշդ տասը տա–րի առաջ արաբական բոլոր երկիրներուն մէջ բուռն ցոյցեր տեղի ունեցան Իսր–հրդային Միութեան դէմ :

Միեւնոյն ատեն Արաբները սկսան կա–մաւորներ արձանագրել Պաղեստինի պաշտպանութեան համար :

Կիրքերը ա՛յնքան լարուած էին, որ երբ 1948 Մայիս 15ին անգլիացի վերջին պին–ուորը հրաժեշտ տուաւ Սուրբ Վայրե–րուն, կռիւը պայթեցաւ Արաբներուն եւ Իսրայէլացիներուն միջեւ :

Պատերազմի ամէնէն տաք օրերուն ե–րուսաղէմի նշանաւոր միւֆթին էլ Հաճ Ամին — որ ժամանակ մը չատ խօսեցնել կուտար իր վրայ — թելադրեց Արաբնե–րուն, որ հեռանան իրենց տուներէն եւ երթան ապաստանին դրացի արաբ եղբայ–րական երկիրները :

Թելադրեալ տարագրութիւն մը սկսաւ : Կրակին մէջէն խուճապահար կը փախչէին անդէն մարդիկ, կիներ ու երախաներ՝ կեանքերնին ապահովելու համար : Բազմա–թիւ հայ ընտանիքներ ալ միացան փա–խստականներու կարաւանին :

Կռիւները վերջացան ի նպաստ Իսրա–յէլի : Կնքուեցաւ զինադադար մը, որ ա–հա՛ տասը տարիէ ի վեր կը չարունակուի եւ դեռ հաշտութիւն չէ կայացած : Գաղ–թականները ապաստանեցան Ցորդանան, Կազա, Լիբանան եւ Սուրիա :

Ցորդանան, որ մեծադոյն ժառանգորդն եղաւ Պաղեստինի, 511·000 գաղթական–ներ ունի իր հողին վրայ, Կազայի չրջա–նին մէջ 220·000 է անոնց թիւը :

Միացեալ Ազգերու կազմակերպութիւնը ստանձնած է չուրջ մէկ միլիոնի հասնող այս գաղթականներուն հոգատարութեան գործը տասը տարիէ ի վեր : Մասնաւոր կազմակերպութիւն մը (ՄԱԿի պատերազ–մական գաղթականներու Գործակալու–թիւն) տարեկան 65 միլիոն տոլար կը ծախսէ այս գաղթականներու բնակարա–նին, ապրուստին եւ կրթութեան համար :

ՄԱԿի 84 անդամներէն 23ը միայն խոս–տացած էին օգնել արաբ գաղթականնե–րուն, սակայն իրականին մէջ տասնեակ մը պետութիւններ են որ նիւթապէս կ'օ–ժանդակեն : Մեծադոյն նպաստը կուտան Միացեալ Նահանգները, Անգլիա, Ֆրան–սա եւ Քանատա :

Գործակալութեան կեդրոնը կը գտնուի Պէյրութ՝ Լիւնէսքոյի չէնքին մէջ եւ ունի 155 պաշտօնեաներ :

Այս գաղթականները փուչի վրայ նըս–տած են : Շատ քիչեր միայն վերջնական կերպով տեղաւորուած են հիւրընկալ եր–կիրներու մէջ : Ստուար մեծամասնութի–ւնը կը սպասէ այն երջանիկ օրուան, երբ հնարաւոր պիտի ըլլայ վերադառնալ եւ տէր դառնալ հայրենի, սեփական «օջա–խ»ին : Ու այդ օրը կ'ուշանայ : Ճիշդ ինչ–պէս մեզի համար :

ՄԱԿի ընդհ. քարտուղար Տակ Համըր–շոլտ պիտի կրնա՞յ երկու կողմին համար ալ ընդունելի ու պատուաւոր լուծում մը գտնել :

Կասկածելի է :

ՀՐԱՆՏ – ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՆԵՐՔԻՆ ՀՈԳԵՐ

—o—

ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ ՊԻՏԻ ՀՐԱԺԱՐԻ՞Ն

Նախարարները ներկայիս պրպտած են երկրին ներքին հոգերով : Անշուշտ ան–համաձայնութիւններ կան կուսակցու–թեանց միջեւ, սակայն նախարարներու մէջեւ համաձայնութիւն գոյացած է ար–դէն եւ Քլիմէնի պարտականութիւն տր–ուած է, որ մինչեւ չաբթու վերջ 1958ի պիւտճէին ծրագիրը ներկայացնէ Ազգ. Ժողովի դիւանին : Եթէ պիւտճէն պատրաստ չըլլայ մինչեւ այն ա–տեն՝ առաւելագոյնը մինչեւ յաջորդիկայ չաբթու սկիզբը պիտի պատրաստուի եւ ներկայացուի :

Տնտեսական հարցին չուրջ համաձայ–նութիւն գոյացած է ուրեմն. այսուհան–դերձ, կարգ մը կէտեր կան, որոնց հա–մար նախարարաց ժողով մը պիտի դու–մարուի : Պիւտճէի ընդհանուր ծրագրին մէջ տակաւին կը պակսի մօտ քսան մի–լիառ ֆրանք : Նախարարաց նոյն ժողովը պիտի պրպտի նաեւ պաշտօնեաներու աչ–խատավարձի յաւելման հարցով :

Մինչ տեղական կարգ մը թերթեր յա–ւատես էին առջի օր, Ընկերվարականնե–րու պաշտօնաթերթին ու փարիզի ձայ–նասփիւռը կը յայտնէին թէ լուրջ տապ–նասփիւռը կը յայտնէին թէ լուրջ տապ–նապ մը ծայր տուած է կառավարութեան մէջ եւ այնուհետեւ դումարուած նախա–րարաց խորհուրդը լուծում մը չէր կրցած գտնել :

Տագնապը ծայր տուած է ապրուստի ոգութեան հետեւանքով : Ընկերվարական նախարարները ընդդիմացած են դիներու յաւելման որոշումին, յատկապէս՝ ու–տեստեղէններու մարդին մէջ :

Ընկերվարական կուսակցութիւնն ու նախարարները չեն ընդունիր տրուած ո–րոշումը. յայտարարուած էր, թէ նոր տուրքեր պիտի չդրուին, սակայն 90 մի–լիառի նոր տուրք մըն է դրուած՝ բան–ուրներուն վրայ. եթէ գործաւորներուն աչխատավարձը չաւելցնար եւ կը սղէ ապրուստը՝ կը նշանակէ թէ նոր ձեւի տուրքին զոհերը բանուորներն են :

Այս տեսակէտէն, Ընկերվարականները դղրդացուցին կառավարութիւնն ու նա–խարարները :

Ըստ երեւոյթին, Վարչապետ Կայեատ ընթացք չէ տուած Ընկերվարականներու բողոքին :

Երկկ, հինգշաբթի ընկերվարական դե–կավարներն ու խորհրդարանական խմբ–ակցութիւնը ժողով մը դումարեց : Միւս կողմէ, ձայնասփիւռն ու կարգ մը թեր–թեր կը հաղորդէին, թէ ընկերվարական նախարարները իրենց հրաժարականը ներկայացուցած են Վարչապետ Ֆելիքս Կայեատի :

Այս լուրը եթէ իրականութիւն դառ–նայ՝ ծանր տագնապ մը կրնայ ծագիլ կա–ռավարութեան մէջ :

Օր ը Օր ին

«ՎԵՀՐ ԵԻ ԵՍ...»

Վերջապէս Պոլսոյ Հայոց պատրիար–քարանն ալ հրատարակութեան տուաւ իր վաւերաթուղթերը, որոնք կը լուսաբանեն Անթիլիասի տագնապին ծագումը : Յա–րական եւ հիթլերական կառավարու–թեանց գաղտնի վաւերաթուղթերուն հր–րատարակութենէն ետքը, գնահատելի է Պոլսոյ Հայոց Պատրիարքարանին փութ–կոտութիւնը :

Հիմա հասկցանք թէ ո՛վ է ադէտին պա–տասխանատուն :

Պատերազմին սկիզբը, ամէն մարդ այն համոզումն ունէր թէ Ռուզվէլթը միայն կրնայ արգիլել պատերազմին ծաւալու–մը : Ցետոյ, սակայն, յայտնի եղաւ թէ Ռուզվէլթ շահագրգռուած է պատերազ–մով եւ ոչ թէ խաղաղութեամբ :

Նմանօրէն, Անթիլիասի տագնապին րս–կրգբնական օրերուն, շատեր կը կարծէին թէ Պոլսոյ պատրիարքը կրնայ հաշտա–րար դեր կատարել եւ ձեւ մը գտնել տագնապին լուծման համար :

Բայց ահա կը հաստատուի բոլորովին տարբեր իրողութիւն մը :

Մեր պատրիարքը, որ շատ կը սիրէ նա–մակ գրել աջ ու ձախ, կը տեսնուի թէ «յայսմաւուրեան» նամակներով մեծ ջանք է թափեր հաշտեցնելու այն՝ որու գլխուն կը թափէ ամէն վիրաւորանք, նոյնիսկ ... սպառնալիք : Հաշտեցնելու փորձը այսպէս կ'ըլլայ հարկաւ, բոլորո–վին նորօրինակ : Միտդ ի՞նչ է, մա՛րդ Աստուծոյ,— չե՞ս հարցներ, կարդալով իր նամակները :

Ըսին թէ ցաւ մը ունի մեր պատրիար–քը, — կ'ուզէր փոխել իր աթոռը : Կրր–նայ ըլլալ, հետեւցնելով այն պտոյտնե–րէն, որոնց ընկերակից կը գրուի իր կենսագրութիւնը կամ կը հաստատուի տեղ մը տիտիկ չընող մարդու իր նկարա–գիրը : Տարբեր է իմ կարծիքս,— էջմիա–ծնի կաթողիկոս նշանակուելու կամ Անթիլիասի կաթողիկոս ընտրուելու պարա–գան կը ներկայացնէ այնպիսի դժուարու–թիւններ, որոնց պիտի չկարենար յաղ–թահարել իր անհատական միջոցներով : Ահա թէ ինչո՛ւ հետեւեցաւ դիւրին նամ–բուն :—

Աթոռակից ըլլալ եւ, իրրեւ գեր – կա–թողիկոս, յայտարարել, անարգել, ըս – պառնալ Միջնադարը յիշեցնելու ձեւով եւ գրել :

«Վեհր եւ ես...» :

Մնացածը կարդացէք հրատարակուած իր նամակներուն մէջ : ԱՐԱՋ

ԱՐԱԲՆԵՐԸ ԵՒ ՍՊԱՆԻԱ

—o—

Մարոքի գահաժառանգը՝ Մուլայ Հա–սան, յայտարարեց թէ իր միջամտութիւ–նը առաջարկած է Ֆրանքոյի, իֆնիի ա–պըստամբներուն հարցը կարգադրելու համար : Ցորդանանի Հիւսէյն թագաւորէն ետք, Արաբներու կողմէ եղած միջամտու–թեան երկրորդ առաջարկն է ասիկա, ո–րուն աւելի մեծ կարեւորութիւն կ'ընծայ–ուի, գահաժառանգ Հասան մարոքցի ա–պրստամբներէն կը խնդրէ, որ վատահու–թիւն ունենան Մուհամէտ Ե. թագաւորին վրայ, իրենց հարցը դիւանագիտական ճամբով կարգադրելու համար, պայմա–նաւ որ Սպանիա հրաժարի Մարոքի Թէք–նա չրջանէն :

Թէքնա 26·000 քառ. քիլոմեթր տարա–ծութեամբ անապատային չրջան մըն է, որ կը գտնուի Մարոքի եւ սպանական Ռիո տէ Օրո գաղութին միջեւ. բնակչու–թիւնը՝ մօտ հինգ հազար հոգի : Այս չըր–ջանը Սպանիոյ կողմէ գրաւուած է 1916–ին եւ միացուած սպանական Մարոքին :

1956ին Սպանիոյ եւ Մարոքի միջեւ հա–մաձայնութիւն մը կնքուեցաւ, որ Թէքնա պիտի վերադարձուէր Ռապաթի կառա–վարութեան : Այնուհետեւ, Սպանացիք անընդունելի պայմաններ՝ դրած են, ո–րուն պատճառով հարցը մնացած է առ–կախ վիճակի մէջ. ասկէ զատ, տակաւին կար Մարոքի պատկանող երկու փոքր չրջաններու պարագան, որոնց հարցը, նմանապէս, չէ կարգադրուած տակաւին : Արդ, եթէ Սպանիա զոհացում տայ Մա–րոքի առաջարկներուն, Ռապաթի իշխա–նութիւնները կը խոստանան Իֆնիի ա–պըստամբները հանդարտեցնել : Մուհա–մէտ Ե. այս առիթով յայտարարած է.— կը ցաւինք Իֆնիի միջադէպերուն համար եւ կը յուսանք թէ խաղաղ լուծում մը պիտի գտնենք :

Մինչ այս մինչ այն, Մատրիտի պատե–րազմական նախարարութիւնը կը հաղոր–դէ թէ Իֆնիի ապստամբները անդամա–հատած են եւ կարգ մը չրջաններուն մի–չեւ զինուորները հաղորդակցութիւնը վե–րահաստատած են : Թիւրզայի չրջանին մէջ բախում մը պատահած է, որմէ ետք ըմբոստները յանձնուած են : Սպանական բանակը տուած է 9 զոհ եւ 21 վիրաւոր : Միւս կողմէ, օժանդակ նոր ուժեր ղրր–կուած են Իֆնի : Ներկայիս այդ չրջանին մէջ կան 12·000 սպանացի զինուորներ, մեծ մասը՝ վայրաչուն :

ՀՈԼԱՆՏԱ ԵՒ ԻՆՏՈՆԵԶԻԱ

Հոլանտա մեծապէս մտահոգուած է Ին–տոնեզիոյ իր գաղութով : Լա Հէյի կառա–վարութիւնը նաւային օտար բնակու–թիւններու հետ համաձայնութիւններ կը կնքէ արդէն, պէտք եղած պարագային Ինտոնեզիային Հոլանտա զանգուածային տեղափոխութիւն կատարելու համար : Բաները մը յայտարարեց, թէ ձախար–թայի մէջ խորհրդակցութիւններ եղած են՝ տեղափոխութեանց մասին :

Վաթսուն հազարի մօտ Հոլանտացիներ կան Ինտոնեզիոյ մէջ, որոնք պիտի փո–խադրուին իրենց հայրենիքը :

Մինչ հոլանտական իշխանութիւնները լրջօրէն մտահոգուած են իրենց հայրե–նակիցներուն ճակատագրով, Ինտոնեզիոյ վարչապետը յայտարարեց, թէ այդ ուղ–ղութեամբ մտահոգուելու հարկ չկայ եւ Ինտոնեզիոյ ժողովուրդին յայտնեց՝ թէ պէտք է յարգել մարդոց ապաստութիւնը. ոչ ոքի ապահովութիւնն ու ինչքերը վր–տանգի պէտք է ենթարկուին : Իր կարգին Ինտոնեզիոյ Տեղեկատուութեան նախա–րարը յայտարարեց, թէ Նոր – Կինէի ա–պատգրման համար ձեռք առնուած մի–ջոցները հոլանտական կառավարութեան դէմ են միայն եւ ոչ թէ այդ հողերուն վրայ գտնուող Հոլանտացիներու դէմ, որոնց ոչ մէկ վտանգ կը սպառնայ. «մենք արկածախնդրութիւն չենք փորձեր» ա–ւելցուց ան :

—o—

ԵՈՒԿՈՍԼԱՒԻԱ. պիտի ճչդէ իր քաղա–քական դիրքը. այս առիթով Թիթօ պիտի խորհրդակցի Միացեալ Նահանգներու դեսպանին հետ :

ԳԱՀԻՐԷի մամուլը Անգլիոյ մէջ չրջող ջրածին ռումբեր կրող ամերիկեան օդա–նաւներուն մասին խօսելով, կը յայտնէ թէ այդպիսի օդանաւներ Մէյրին Արեւելքի մէջ ալ կը չրջին : Մոսկուայի «Կարմիր Աստղ» թերթն ալ գանգատ կը նկատէ նոր պատերազմի հրձիգներ :

ԱՆԳԼԻՈՑ մէջ երկաթուղիի ծանր ար–կածի մը զոհ գնաց 63 հոգի : 198 ծանր վիրաւորներ կան :

ՊԵԼԿՐԱՏԻՆ կը հաղորդէն թէ Եուկո–սլաւիա պիտի գործադրէ հնգամեայ ծրա–գիր մը՝ երկրին տնտեսութեան համար :

(Լուրերու շար.ը կարդալ Դ. էջ)

(1902 — 1906 թ. թ.)

Մեկնարան տասնվեցերորդ հոդվածի

Հարկատու տեղերի գործադիր կոմիտեները, հարկատու տեղերի բնակչության ներկայացուցիչների ժողովները և հարկատու տեղերի գործադիր կոմիտեների նախագահները, որոնք հարկատու տեղերի բնակչության ներկայացուցիչների ժողովների կողմից ընտրվում են հարկատու տեղերի գործադիր կոմիտեների նախագահներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների անդամներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների քարտուղարներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հաշվապահներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների գանձապահներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային գործակալներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային տեսուչներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների օգնականներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների հաշվապահներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գանձապահներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների վարիչներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների գրագիրներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հաշվապահներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների գանձապահներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային գործակալներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային տեսուչներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների օգնականներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների հաշվապահներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների գանձապահներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների գրագիրներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների վարիչներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների հարկային գործակալներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների հարկային տեսուչներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների օգնականներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հաշվապահներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների գանձապահներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների գրագիրներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների վարիչներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային գործակալներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային տեսուչներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների օգնականներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հաշվապահներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների գանձապահներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների գրագիրներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների վարիչներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային գործակալներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային տեսուչներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների օգնականներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հաշվապահներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների գանձապահներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների գրագիրներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների վարիչներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային գործակալներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային տեսուչներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների օգնականներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հաշվապահներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների գանձապահներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների գրագիրներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների վարիչներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային գործակալներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային տեսուչներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների օգնականներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հաշվապահներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների գանձապահներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների գրագիրներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների վարիչներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային գործակալներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային տեսուչներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների օգնականներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հաշվապահներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների գանձապահներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների գրագիրներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների վարիչներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային ինսպեկտորների հարկային գործակալներ, հարկատու տեղերի գործադիր կոմիտեների հարկային ինսպեկտորների գրասենյակ

Երկու ամիս առաջ, 15·592 ձայնի առա – ւելութեամբ երեսփոխան ընտրուած էր :

Հակահամայնավար՝ բայց ոչ Մաքար – թիի կառավարութեամբ, Նիքսըն յաւ հան – տէս է : Այզընհաուըր երբ փոխ նախագահ մը պիտի ընտրէր, առաջին ատիթով մը – տածեց Նիքսընի մասին :

Պայքարը սուր էր՝ Դեմոկրատներուն հետ :

Հակառակորդ թևերը անմիջապէս հրատարակեցին լուր մը, որուն համա – ձայն Նիքսըն 16·000 (7 միլիոն ֆրանք) տոլար ստացած էր կարգ մը գործատէրե – րէ՝ իր ընտրութեան քարոզչութիւնը ը – նելու համար :

Արդարեւ, Ամերիկայի մէջ օրէնքի դէմ է, որ թեկնածու մը անձնապէս դրամ առնայ :

Նախագահ Այզընհաուըրի ունեցած կարծիքը չփոխուեցաւ, սակայն Նիքսըն բարեփոխուեցաւ հետզհետէ. հակահա – մայնավար կը մնայ, բայց Եւրոպա, Ա – սիա եւ Ափրիկէ կատարած իր ճամբոր – դութիւններէն ետք՝ աղգամոլութենէն հասաւ միջազգայնականութեան, ամե – րիկեան ըմբռնումով : Շահեցաւ նաեւ Սեւամորթներուն համակրանքը :

Ներկայիս, Նիքսըն կը համարուի Մի – ացեալ Նահանգներու ամէնէն վարպետ քաղաքագէտներէն մին : Ծանօթ է Այզըն – հաուըրի տեսակէտներուն ու մինչեւ Դեկ – տեմբեր 16 եթէ Նախագահը առողջանա – լով չկարենայ Փարիզ գալ՝ Նիքսըն պիտի փոխարինէ զայն Ատլանտեան Ուխտի ժո – ղովին մէջ :

Թ. Ա. Թ.

ԹԱԳՒՈՐ ԱՅՎԱԶԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Լիոն, (Յառաջ).—Տեբեւաթափ : Ցամ – բօրէն, բայց տարուէ տարի, հին սե – րունդին համեստ թէ մտաւորական ներ – կայացուցիչները կ'անհետանան :

Փարիզ մեկնելէ առաջ իրեն վիճակուած էր «Դաշնակցութեան Օրուան» նախագա – հութիւնը : Աւա՛ղ, մեր սիրելի Թագուորը վերջին խօսքը պիտի ըսէր իր պաշտելի ժողովուրդին. իր կարապի երգը եղաւ ան :

Դէպքերու բերումով առիթը չունեցանք իրեն ողջերթ մատնելու՝ երբ Փարիզ կը մեկնէր :

Մեզմէ հեռու մեռաւ ան ու չկրցանք ներկայ ըլլալ իր Թաղման արարողու – թեան :

Հ. Ց. Դ. Լիոնի «Վարանդեան» կոմի – տէն ու իր բոլոր ընկերները, խորապէս յուզուած այս կորուստէն, կազմակեր – պած էին յարկանքի երեկոյթ մը, որ տե – ղի ունեցաւ Նոյեմբեր 25ին, «Ցոյներու սրահ»ին մէջ :

Զուգադիպութեամբ մը մեր մէջ կը գտ – նուէր նաեւ ընկեր Վ. Իշխանեան :

Ճանուն Հ. Ց. Դ. «Վարանդեան» կո – միտէի, ընկեր Ս. Փողհարեան երեկոյթը բացուած յայտարարելով, ներկաները հրաւիրեց վայրկեան մը յոտնկայս լռու – թիւն պահել : Այնուհետեւ, հակիրճ դի – ծերու մէջ ներկայացուց ընկեր Թագուորի կենսագրականը, չեչոր դնելով երեսուն տարիէ ի վեր Լիոնի մէջ կատարած անոր կուսակցական եւ հասարակական գործու – նէութեան վրայ, եզրակացնելով, — Թագուորի անձին մէջ կարելի էր գտնել համեստութեան եւ մարդասիրութեան մարմնացումը :

Օրուան բանախօսն էր ընկեր Միսաք – Միրզէ, որ ըսաւ.— Ընկեր Թագուորը ճանչցայ իր ուսուցչութեան շրջանին, Ցունաստանի մէջ. իր աշակերտը եղած եմ : Փոքր հասակիս՝ անոր անձին մէջ գտայ անձնուիրութեան ու մարդասիրա – նի ոգին. մաղթենք, որ Նոր Սերունդա – կիները իրենց ազգային դիտակցու – թեամբ անդարձ մեկնող ընկերներու օրի – նակին հետեւին, անոնց ձգած պարապ տեղերը լրացնելով :

Պարոն Վարժապետեան վեր առաւ Թագուորի մտաւորական արժանիքը եւ հետեւեալ նկարագիրը :

Իրրեւ նախկին պաշտօնակից՝ Պ. Ադէք – սանդր Կիւլպէնկեան ներկայացուց ոդ – բացեալ Թագուորի ազգասիրական աշխա – տանքը, յայտնելով՝ թէ անոր նշանաբա – նը եղած էր. — ծառայել իր պատկանած ժողովուրդին :

Խօսք առաւ ընկեր Վ. Իշխանեան եւ չուրջ երեք քառորդ ժամ խօսեցաւ Թագ – ւոր Այվազեանի Պոլսէն մինչեւ Ֆրանսա տարած կուսակցական աշխատանքին մա – սին, դրուագներ ալ պատմելով անոր կեանքէն : Կուսակցական խոր հաւատք ունէր եւ կարգապահական ոգի : Ողբաց – եալին ընկերային ըմբռնումներուն մասին խօսելով, ընկեր Վ. Իշխանեան յայտնեց, թէ կուսակցական ժողովներէն ներս Թագուորի անձին մէջ եսը գոյութիւն չու – նեցաւ — քիչ առաջ «ոչ եւս է» խօսքը արտասանուեցաւ. ես հակառակ եմ այդ խօսքին. Թագուորները կը մահանան, բայց անոնց գործն ու յիշատակը կը մը – նան միշտ անթառամ :

Վերջին խօսքը տրուեցաւ Վռամշապուհ քահանային, որուն ցաւակցական քանի մը կարճ խօսքերէ ու պահպանիչէն ետք երեկոյթը փակուեցաւ :

Ներկաներու փափաքին վրայ փոխան ծաղկեպսակի նուէրներ եղան՝ ի նպաստ Փարիզի Մշակոյթի Տան «Շ. Միսաքեան» սրահին. գոյացաւ՝ քսան հազար ֆր. : Նուիրատուներուն ցանկը պիտի հրատա – րակուի թերթին մէջ :

Ս.Փ.

ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Բազմաթիւ մարզասէրներու ընկե – րակցութեամբ ու մեծ յոյսով ճամբայ ելանք դէպի Սէն Քանթէնի մարզադաշ – տը (170 քիլոմեթր) :

Դժուար էր յաղթանակել, սակայն չը – նորհիւ մեր մարզիկներուն եռանդին՝ պարտութեան մատնեցինք մեր հզակա – ւոր հակառակորդը :

Խաղին սկիզբին, Թաւչանճեան դլուխի դեղեցիկ հարուածով կը վառնէ Սէն Քանթէնի բերդը : Թուրխի զեկավարու – թեամբ, հակառակորդը կը կազմակեր – պուի : Քիչ ետք ուժգին հարուածով մը Սէն Քանթէնի յառաջապահը կը վառնէ Ալֆորվիլի բերդը : Բարեբախտաբար մեր երիտասարդ բերդապահը վարպետօրէնկը տիրանայ գնդակին :

Խաղին քաններորդ վայրկեանին, մեր տղաքը սխալ մը կը դործեն ու դատաւո – րը «քու ֆրան» կը սուլէ : Ուժգին էր հարուածը եւ հակառակ մեր տղոց կանգ – նած պատնէշին, Սէն Քանթէն կը նչա – նակէ առաջին կէտը :

Շուտով կը տիրապետենք խաղին եւ մեր աչ ծայրը կը նշանակէ չատ դեղեցիկ կէտ մը :

Երկրորդ կիսախաղին մեր տղաքը յար – ձակողականի կ'անցնին : Ցաջորդաբար, Թոթոյեան, Սրապ եւ ուրիշներ, ուժգին հարուածներով գնդակը կը դրկեն բերդին շրջանակին վրայ :

Ի վերջոյ Սրապի մէկ յարձակողակա – նին չնորհիւ, Փեթրիւս կը նշանակէ Ալ – ֆորվիլի Բ. կէտը : Հակառակորդը, քա – ջալերուած իր 1500է աւելի մարզասէրնե – րէն, կը նետուի բուռն յարձակողականի : Կը պաշտպանուինք, բայց խաղը լրանալէ տասը վայրկեան առաջ, երբ մեր բերդը վտանգուած անդամ չէր, դատաւորը չա – փազանց խիստ փէնալթի մը կը սուլէ մեր դէմ, հակառակորդը իր Բ. կէտը կը նը – շանակէ : Խաղը կը վերջանայ հաւասար արդիւնքով (2–2) : Տեղի կ'ունենայ կէս ժամուան յաւելեալ խաղ մը :

Այս անդամ մեր տղաքը կ'օգտագործեն իրենց զերազանցութիւնը եւ կը նչանա – կենք մեր երրորդ կէտը : Հակառակորդը իր վերջին ճիգը կը թափէ. յառաջապահ թէ յետապահ կը նետուին մոլեդին յար – ձակողականի : Սրապ կ'անցնի մեր պաշտ – պանողական գծին մէջ եւ Սէն Քանթէնի ջանքերը ապարդիւն կ'ըլլան :

Այսպէս Ալֆորվիլի Հայ Մարզականը պարտութեան մատնեց Սէն Քանթէնի խումբը եւ իրաւունքը չահեցաւ մրցելու Քուփ տը Ֆրանսի Զ. մրցումներու չար – քին մէջ, ընդդէմ Միւլհուզի հզակաւոր խումբին (64րդ տը ֆինալ) :

Այս կիրակի Ալֆորվիլի մարզապաշտին վրայ ախոյենական մրցում՝ ընդդէմ Ան – կէնի : Բազմութեամբ եկէք քաջալերել ու ծափահարել մեր մարզիկները :

Ֆ. ՈՒԶՈՒՆԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ – ՄԱՐԶԱԿԱՆ

Կիրովականի մէջ տեղի ունեցած են Ե – րեւանի, Լենինականի եւ Կիրովականի թեթեւ ծանրութեամբ մարզիկներու հան – դիպումները : Երեք քաղաքներու տարե – կան այս մրցումներուն մէջ խմբական ա – ռաջնութիւնը չահած են Երեւանի մար – զիկները :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ըմբշամարտի հաւաքական խումբը մեկնած է Լենինկրատ, միջ – մի – ութենական մրցումներու մասնակցելու համար : Ազատ ըմբշամարտի հայկական հաւաքական խումբն ալ մօտ ատենէն պի – տի երթայ Քիեւ :

ԵՐԵՒԱՆի եւ Գրոզնի հեծանաւորդները ընկերական հանդիպումներ ունեցած են Երեւանի «Սպարտակ»ի արշաւարանին մէջ : Երկօրեայ այս մրցումներուն մէջ խմբական առաջնութիւնը չահած են Երե – ւանցիները :

ԵՐԵՒԱՆի «Սպարտակ» ակումբին մէջ երեք օր յաջորդաբար տեղի ունեցած են Հայաստանի գանազան շրջաններու մրը – ցումները, որոնց մէջ Երեւանցիները պարտուած են :

ՀԱՅԱՍՏԱՆի Ֆութպոլի ախոյենական մրցումներուն մէջ առաջնութիւնը չահած է Լենինականի «Կարմիր դրօշ» խումբը : Այս ձեւով Հայաստանի 1957ի Ֆութպոլի ախոյեան հռչակուած է Լենինականի խումբը :

ԵՐԵՒԱՆի մէջ Նոյեմբեր 15 – 19 տեղի ունեցած են Հայաստանի Վոլեյպոլի ախո – յենական մրցումները : Առաջնութիւնը չահած է Երեւանի խումբը :

ԵՐԵՒԱՆ քաղաքի 1957ի պասկէթի ա – խոյենութիւնը չահած է «Աչխատանքա – յին» տղամարդկանց խումբը : Կիներու մէջ՝ «Բուրեվեստիկ» խումբը :

ԿԱՐԴԱՑԷՔ ՏԱՐԱԾԵՑԷՔ «ՅԱՌԱՋ»Ը

ԿԱՅԾԵՐ

ԻԲ.

ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ

Ամէն տեղ տիրում էր խորին լռութիւն, բոլորը հանդատանում էին : Արթուն էր միայն վտակը, որի ափի մօտ պառկած էի. ես լսում էի նրա խուլ – մեղմամղ – ձական խոխոջմունքը, նա անդադար վա – զում էր եւ վազում, նա քուն եւ հան – դստութիւն չունէր : Ահա, հովասուն զե – փիւռը փափուկ թեւքը քսեց իմ երեսին, եւ չուացնելով անցաւ. կարծես, ուզում էր ասել «տես, ես էլ արթուն եմ» :

Աչքս զարձրի դէպի աստղազարդ եր – կինքը : Նայում եմ : Այո, դեղեցիկ են Աստուծոյ լուսաւորները : Որոնում եմ նը – րանց մէջ իմ աստղը, երկար որոնում եմ, բայց չեմ գտնում : Ահա երկու աստղեր. նրանք ծանօթ են ինձ. ես շատ անգամ տեսել եմ նրանց, համբուրել եմ... շատ անգամ նրանք նայել են ինձ վրայ ջերմ քնքշութեամբ... : Ես ճանաչում եմ ձեզ, սիրուն աստղեր, դուք նմանում էք Աս – նայի տխուր եւ արտասուալի աչքերին, որպէս այն վերջին դիշերը, երբ նա բաց արաւ իմ բանտի դուռը եւ ասաց՝ «փա – խիր, Ֆարհատ» : Ահա, երկու աստղեր եւս. ինչպէս հպարտ եւ ինքնահաւան կեր – պով փայլում են նրանք. նմանում են նը – րանք Մարոյի լի կրակով աչքերին, երբ նա հրացանը ձեռին կանգնած, ժպտում էր այն սարսափելի բոպէում, երբ ես չաղախուած էի պարանի արիւնով :

Սիրում եմ ձեզ դեղեցիկ աստղեր : Ա – հա անցաւ մի սեւ ամպ եւ ծածկեց իմ տեսութիւնից նազելի աչիկները ... :

— Ախ, Սօնա. . ախ, Մարօ ... :

— Ի՞նչ է, լսելի եղաւ մի ձայն եւ իմ առջեւ նկարուեցաւ մի պատկեր, որպէս կերպարանքը դիշերային ուրուականի :

Մի սարսուռ վազեց բոլոր մարմնիս մէջ :

— Ես եմ, Ֆարհատ :

— Ախ, Մարօ ... :

Երեւակայեցէք իմ ուրախութիւնը, ու – րախութիւնը լի վառուած կրքերով մի պատանիի, որ դիշերային լռութեան մէջ, հեռու մարդկային բնակութիւնից, դըտ – նում է նրան, որին սիրում է :

Մարօն նստեց իմ մօտ, իմ ձեռքը ա – ռեց իր երկու ափերի մէջ, եւ դրեց իր ծնկի վրայ : Նա ուրախ, որպէս միշտ, սկսեց պատմել՝ թէ առաւօտեան իր հօ – րից իմացաւ, որ իմ առողջութիւնը վատ էր. նա վազեց դէպի եղբօր ագարակը, տեսաւ, ես այնտեղ չկայի : Այնտեղից չտապեց դէպի արտը Հասոյի մօտ. եղ – բօրից այսքանը իմացաւ, թէ նա տեսել էր ինձ կէսօրից առաջ, բայց չդիտէր՝ ուր կամ որ կողմը դնացի : Նա երկար որոնեց ինձ, մինչեւ արեւը մտաւ եւ օրը մթնեց. յետոյ նրան հանդիպեց մի բօշայ կին, որն ասաց, թէ տեսել էր ինձ «քանդուած մատուռի մօտ» :

— Դու ճանաչում է՞ս այն կնկան, հար – ցըրի ես :

— Երկրորդ անդամն է, որ տեսնում եմ նրան պատասխանեց Մարօն :

— Առաջին անդամն է՞րբ էր :

— Երկու տարի առաջ : Ես տեսայ նրան միեւնոյն հազուստով, որպէս այսօր, էլի այն փոքրիկ երեխան իր հետն էր, որին այսօր տեսայ : Ինչ լաւ երեխայ է, Ֆարհատ, այնքան սիրտս սիրեց նրան, որ բռնեցի երեսը պաչ արի : Ախար մեղք է անօրէնի երեսը պաչ անելը. նրա ճա – կատին մեռոն չէ քսած. բայց ես նրան պաչ արի– նա այնպէս լաւ երեխայ էր :

— Ո՞րտեղ դու տեսար նրան երկու տարի առաջ :

Մարօն նկատելով, իր պատմութիւնը հետաքրքրում էր ինձ, չարունակեց :

— Ես տեսայ նրան այս ձորի մէջ, այս մատուռի մօտ, նա խօսում էր կարոյի հետ, ի՞նչ էր խօսում, ես չիմացայ, նրա համար որ, նրանց լեզուն չէի հաս – կանում : Քանի օրից յետոյ կարօն ան – յայտացաւ մեր տանից. մենք չիմացանք թէ ուր գնաց : Քանի տարի էր նրանից ո – չինչ լուր չունէինք : Կարոյի գնալուց յե – տոյ, այն կինն էլ չերեւաց : Այս անգա – մին, երբ կարօն կրկին լուս ընկաւ, բո – չան էլի ման է գալիս, մեր կողմերում :

— Այն ժամանակ Ասլանը եւ Սպօն կարոյի հետ է՞ին :

— Չէ, նրանք չկային : Այս անգամ յետ գարձան միասին : Երկու չաբաթէ, ինչ որ եկել են :

— Դու այսօր կարոյին չէ՞ս տեսել :

— Ես քեզ ասեցի, որ տանից դուրս եմ եկել առաւօտեան, մինչեւ հիմա էլ սար, ձոր չեմ թողել, գո եանէն ման եմ եկել : Հիմա ի՞նչպէս է քէփդ, դու ողջ օրը հաց չես կերել. ինչ գիժ տղայ ես, Ֆարհատ :

— Կարօն լաւ տղայ է, այսպէս չէ՞ :

— Լաւ տղայ է, բայց ... :

Նա կտրեց իր խօսքը, եւ բոպէական լռութիւնից յետոյ չարունակեց .

— Գիտե՞ս, Ֆարհատ, քանի օրից յե – տոյ Կարօն իր ընկերների հետ գնալու են մի տեղ, դու նրանց հետ չգնաս :

— Ի՞նչու չպէտք է գնամ :

ՐԱՖՖԻ

(Շար.)

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՄՈՍԿՈՒԱՑԻՆ պաշտօնապէս կը հաղորդեն, թէ առաջին Սպուտնիկին հրը թիւը տարանջատուած է :

ԼՈՆՏՈՆի մէջ Արեւմտեան Գերմանիոյ եւ Անգլիոյ Արտաքին նախարարներուն խորհրդակցութիւնը դրական արդիւնքի մը չէ հասած : Բաները մը յայտարարեց, թէ Գերմանիոյ մէջ հաստատուած անգլիացի զինուորներու պարագան եւ Պոնի կառավարութեան նիւթական վճարումին հարցը պիտի դրուին Ատլանտեան Ուխտի ժողովին մէջ :

ՊՈՆԷՆ կը հաղորդեն թէ Ատլանտեան առողջական վիճակը բարելաւուած է եւ վարչապետ ճեռնարկած է իր աշխատանքներուն :

ԻՏԱԼԻՈՅ մէջ համաձնաւոր երեսփոխան Նովելա Համաձնաւոր եւ ձախ – ընկերվարական չարժումին ընդհանուր քարտուղար ընտրուած է : Նովելա համաձնաւոր պարագլուխ մըն է եւ ցարդ կը վարէր խառնական բանուորական դաշնակցութեան ընդհանուր քարտուղարի պաշտօնը :

ԳԵՐՄԱՆԻԱՑԷՆ արտաքսուած Հրեաները, որ իսրայէլ հաստատուած էին, սկսած են վերադառնալ իրենց ծննդավայրը : Մէկ տարիէ ի վեր, ամէն ամիս մօտ եր – կու հազար Հրեաներ Հարաւ. Ամերիկա – յէն եւ իսրայէլէն կ'երթան Արեւմտեան Գերմանիա : Պոնի կառավարութիւնը վերնատուն հաստատումներ կ'ընէ Հրեաներուն :

ՅՈՐԴԱՆԱՆի Խորհրդարանը միաձայն նուիրեամբ որոշեց, որ Ամմանի ձայնասփիւռէն եգիպտոսի դէմ կատարուող յարձակումները վերջ գտնեն : Յորդանանի Պառերազմական նախարարը այս ուղղութեամբ յայտարարեց, թէ Ամմանի ձայնասփիւռը իր յարձակումները պիտի դադրեցնէ, երբ Սուրիա եւ եգիպտոս տան առաջին օրինակը :

ԹՈՒՐԻՈՅԷն կը հաղորդեն թէ ճափոն եւ Ֆ. Միութիւն առեւտրական խորհրդակցութիւնները, որ երկու ամիսէ ի վեր տեղի կ'ունենային, վերջացած են : Երբ կառավարութիւնը վաւերացնէ՝ համաձայնութիւնը պիտի ստորագրուի, որմէ ետք ճափոն երեսուն միլիոն տոլար արժողութեամբ ապրանք պիտի արտածէ դէպի Ֆ. Միութիւն, ուրկէ 15 միլիոն տոլարի ներածում պիտի ընէ միայն :

ԳԱՀԻՐԷՆ կը հաղորդեն, թէ Ֆ. Միութեան անտեսական օժանդակութեան չը – նորհիւ, չուտով պիտի սկսին գործադրել եռամեայ ծրագիր մը, փոխանակ՝ հընդամեայի : Այս ձեւով եգիպտոսի ճար – տարարուեստը աւելի պիտի յառաջդիմէ :

ՍԱԿԱՐԱՆ (Դեկտ. 4).— Զօյլ ոսկի՝ 575·000, նափոլէոն 4180, դուխց· 4000, անգլ· 5030, քսան տոլարնոց 20·320, թղթադրամ (դուզահեռական չուկայ) սթերլին 1310, տոլար 493, դուխց· 118, պելժ· 9·45, լիր 0·80, փեսեթա 8·40 :

ՑՈՒՇԱՏԵՏՐ

ԱԼՖՈՐՎԻԼ.— Հ. Յ. Դ. Ս. Մինասեան ենթակոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները այս ուրբաթ, ժամը 21–ին, ծանօթ հաւաքատեղին : Ներկայ կ'ըլլայ Շրջ. Կոմիտէի ներկայացուցիչը : Կը խնդրուի ճշդապահ ըլլալ :

ԿՐՆՈՊԼ.— Հ. Յ. Դ. Նոր Սերունդի ժողովը, այս ուրբաթ, ժամը 9ին, դպրոցի սրահին մէջ :

ՎԱԼԱՆՍ.— Հ. Յ. Դ. Շրջ. կոմիտէին ընդհ. ժողովը, այս չաբաթ, ժամը 20·30–ին, Ահարոնեան ակումբը : Կարեւոր օրակարգ : Բոլոր ընկերներուն ներկայութիւնը պարտաւորիչ է :

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ

ԵՐԵԿՈՆ ՍԻՆ – ՇԱՄՈՆԻ ՄԷՋ

Այս Շաբաթ (Դեկտ. 7), ժամը 21էն մինչեւ լոյս, տեղւոյն Սալ տէ Ֆէթի մէջ : Մասնակցութեամբ՝

ANDRÉ MALIAN ET SES RYTHMES

Պիւֆէ, պիւվեթ, fօքիյօն եւ խաղեր :
ՀԱՃԵԼԻ ՄԹՆՈԼՈՐՏ :

ՄԱՐՍԷՅԼ

"ՀԱՄԱԶԳԱՅԻՆ"Ի

ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՆԵՐԸ

Նիւթ՝ ԵՂԻՇԷ ԶԱՐԵՆՑ

(Ծննդեան 60ամեակին առթիւ)

Այս երկուշաբթի իրիկուն Պոմոնի և – կեղեցւոյ սրահը, ժամը 21ին :

Կը նախագահէ՝

Պ. ՄԻՀՐԱՆ ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

Կը խօսի՝ ԿԱՐԱՊԵՏ ՓՕԼԱՏԵԱՆ

Կ'արտասանեն՝ Օր. Մ. Իշխանեան եւ Պ. Յովհ. Տէր Վարդանեան :

Ջութակ՝ Յ. Իշխանեան եւ Հ. Գըլըճեան :

Ունկնդրութիւն Հայաստանէն եկած նոր երգապնակներու (Զարենցի «Գովք Հայաստանին» եւ ուրիշներ) :

×

Նոյն երեկոն Զորեքշաբթի իրիկուն, Սէն Լուի մէջ :

ՏՕՆԱԾԱՌ

ՍԱՄՈՒԷԼ – ՄՈՒՐԱՏԵԱՆ
ՎԱՐԾԱՐԱՆ
կիրակի, 22 Դեկտեմբեր

ժամը 16 – 22 :

Գեղարուեստական ճոխ բաժին, պատրաստուած աշակերտներու կողմէ :

Կը ներկայացուի Շիրվանզատէի
ՍԿԶԲՈՒՆՔԻ ՄԱՐԴԸ
կատակերգութիւն մէկ արար

Երգ, պար, արտասանութիւններ :
Հայկական համեղաճաշակ չքասեղան :

ՊԱՏԱՐԱԳ ԱԼՖՈՐՎԻԼԻ ՄԷՋ

Ալֆորվիլի Ս. Պօղոս Պետրոս եկեղեցւոյ հովտբարձութիւնը կը ծանուցանէ բարեպաշտ ժողովուրդին թէ, այս կիրակի, կաթողիկոսական պատուիրակ՝ ՍԵՐՈՎԲԷ ԵՊԻՍԿ. ՄԱՆՈՒԿԵԱՆ հրաւիրուած է Ս. Պատարագի մատուցման եւ քարոզով մխիթարելու հաւատացեալները :

Ս. Պատարագէն ետք, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի թաղիս բոլոր ննջեցեալներու յիշատակին :

Այս առթիւ Ս. Պատարագը պիտի երգեն խաչակիր մանուկները, առաջնորդութեամբ Տօքթ. Լ. Համբարձումեանի, որ պիտի վարէ նաեւ երգեհոնը :

Սկզբնաւորութիւն ժամերգութեան ժամը ութին, Ս. Պատարագ՝ ժամը 10ին :

ԴԻՒԱՆ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

ՎԱԼԱՆՍի Ազգ. Միութիւնը եւ Հոգաբարձութիւնը կը ծանուցանէ թէ այս կիրակի առաւօտ հանդիսաւոր հոգեհանգիստ պիտի կատարուի Հայ Առաք. Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ՝

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿի

մահուան յիսնամեակին առթիւ :

Ժողովուրդը կը հրաւիրուի իր ներկայութեամբ յարգել երջանկայիշատակ կաթողիկոսին յիշատակը :

ԼՈՑՍ ՏԵՍԱԼ

1958ի "ԳՈՅԱՄԱՐՏ" ՕՐԱՑՈՑՑ-ԱԼՊՈՄԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ. Յ. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ՄԱՐՄԻՆԻ ՇՐՋԱՆԻ

ԸՆՏԻՐ ԹՈՒՂԹՈՎ 14 ՄԵԾԱԴԻՐ ԷՋԵՐ

Շքեղ ճկարներ, մեծ մասը անտիպ : Գրական եւ պատմական նիւթերով ճոխ բովանդակութիւն

— ԳԵՂԱՋԱՐԴ ԵՒ ԳՈՒՆԱԽՈՐ ԿՈՂՔ —

Բացառիկ խնամքով եւ ճաշակով պատրաստուած այս օրացոյց-ալպոմը *պիտի կազմէ զարդը՝ ամէն հայ տան :*

ԳԻՆ 500 ՖՐԱՆՔ

Այժմէն ապահովեցէք ձեր օրինակը

Փարիզի համար դիմել՝ LIBRAIRIE H. SAMUELIAN, 51, Rue Monsieur-le-Prince, PARIS - 6e

ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՐԵՐՈՒԽ ԵՒ ՆՈՒԱԳԻ ԲԱՑԱՌԻԿ ԵՐԵԿՈՅ
12, Դեկտեմբեր, Հինգշաբթի ժամը 8·45ին

THEATRE DE PARIS, 15, Rue Blanche, Métro : Trinité ou Blanche

ԱԼԻՍ ՊՕՅԱՃԵԱՆ

Կը պարէ ու կը դեկավարէ իր պատրաս տած երկսեռ պարախումբը
Մասնակցութեամբ նուագախումբի զոր կը դեկավարէ

ԱՐԱ ՊԱՐԹԵՒԵԱՆ

Տոմսերու գիները են 800, 600, 500, 400 եւ 300 ֆրանք
Սրահներու համար դիմել՝
Etabl. O. B. 83, Rue d'Aboukir, Paris - Tél. CEN. 48-69 *եւ ներկայացման օրը Թատրոնին կից էն :*

ԾՆՈՒՆԴԻ ԵՒ ԿԱՂԱՆԴԻ Ձեր սեղանները զարդարեցէ՛ք
ԱՄԷՆ ՏԵՂ ՓՆՏՈՒԵՑԷՔ
ՊՈՍՏԱՓՈՐ
ՀՈՒԶԱԿԱՒՈՐ ՀԻԼՎԱՆ ԵՒ ԼՈՒՔՈՒՍԸ
ԲԺԻՇԿՆԵՐՈՒ ԿԱՐԾԻՔՈՎ ԱՆՈՆՔ ԿԸ ՊԱՐՈՒՆԱԿԵՆ ՄԵԾԱԳՈՅՆ ՁԱՓՈՎ
ԳՈԼ (Ֆլորի)
Անհրաժեշտ մանուկներու համար եւ օգտակար չափահասներուն ու ծերերուն
— որոնց կը պարգեւէ աշխոյժ եւ եռանդ —
ՊՈՍՏԱՓՈՐԻ ԱՐԴԻԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԳԵՐԱԶԱՆՑԷ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ ԻՍԿ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾՆԵՐԸ
2, Rue Louis Astoin - Marseille
Արտածման համար մասնաւոր պայմաններ

ՀՐԱՒԷՐ ՎԻՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ

Ցարդելի հայրենակիցներ, նկատելով որ Հայ Ազգ. առաժամայ վարչութեան վեց ամսուայ շրջանը լրացած է, Վիճնի հայութիւնը կրկին կը հրաւիրենք այս կիրակի կէսօրէ վերջ ժամը երեքին «Սէրքըլ Կաթ.»ի սրահը :

Տեղւոյն վրայ տեղեկութիւններ պիտի տրուին եղած աշխատանքներու մասին վարչութեան կողմէ : Տեղի պիտի ունենայ նոյ քուէարկութեամբ նոր վարչութեան ընտրութիւնը : Ներկաներու թիւը մեծամասնութիւն պիտի նկատուի :

ԱՌԱԺԱՄԵԱՅ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԱՆԱՐԱՏ ՅՂՈՒԹԵԱՆ ՕՐ ԱՌՆՈՒՎԻԼԻ ՄԷՋ

Առնուվիլի Առաքինապարդ Քոյրերը կը տօնեն Անարատ Յղութեան Օրը, կիրակի, 8 Դեկտեմբերին :

Այս առթիւ տեղի կ'ունենայ հանդիսաւոր պատարագ տեղւոյս Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, առաւօտեան ժամը 11ին :

Ցետ պատարագի կազմակերպուած է ճաշ մը նախկին հաւատարիմ սանուհիներուն եւ իրենց փոքրիկներուն համար :

Փարիզի եւ արուարձաններու հին աշակերտուհիներէն անոնք որ կը փափաքին ներկայ ըլլալ այս հանդիսութեան, բարեհաճին երկտողով մը իմաց տալ կամ հեռաձայնել՝ Սէօր Արմէնիէն, 73 Ավընիւ Հանրի Պարպիւս, Առնուվիլ լէ Կոնէս : *Հեռաձայն* 179 Առնուվիլ :

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

Գրիգոր Կոտելեքեան, որ պատերազմէն առաջ Քրէօզէօ (Սոն է Լուար) իսկ պատերազմի ընթացքին Մարսէյլի շրջակայքները տեղափոխուած է : Տեղեկացնել իր սանահօր Արմենակ Կոստանեանի տուն՝ Աբրահամ Կոստանեանի, որ կիպրոսէն վերջերս Ֆրանսա եկած է : Հասցէն Զաթիկեանի սրճարանը, 20 պիս, Րիւ տը լա Տէֆանս, Իսի լէ Մուլինօ :

ՇԱԻԻԼԻ ԵԿԵՂԵՑԻ

Շաւիլի Կրօն. Ընկերակցութեան վարչութիւնը եւ Երիտ. Եկեղեցաչէն յանձնախումբը կը ծանուցանեն թէ Դեկտ. 15–ին, կիրակի օր տեղի պիտի ունենայ նոր բակաւոյց եկեղեցւոյ օծումը եւ անդրանիկ Ս. պատարագը ձեռամբ կաթողիկոսական պատուիրակ՝ եւ Փարիզի Առաջնորդ Գեր. Տէր ՍԵՐՈՎԲԷ ԵՊԻՍԿ. ՄԱՆՈՒԿԵԱՆի :

Սկիզբ ժամերգութեան ժամը 8, օծում ժամը 10, Ս. պատարագ 10·30 :

Կը հրաւիրուի հաւատացեալ ժողովուրդը : Ցաւարտ Ս. պատարագի կազմակերպուած է ճաշ մը վերապահ Օքէյ տը Ֆրանսի չքեղ սրահին մէջ (Փլաս տ'Արմ, րիւ Քոլպէր) :

Այս ճաշին մասնակցիլ փափաքողներէն կը խնդրուի արձանագրուիլ մինչեւ Դեկտեմբեր վեց եւ ստանալ սեղանակիցի մասնաւոր քարթ, (ճաշակին 3000 ֆր) :

Վերոյիշեալ թուականէն վերջ ոչ մէկ արձանագրութիւն պիտի ընդունուի :

Արձանագրութեան համար դիմել Փարիզի եկեղեցւոյ դիւանատունը,

Պ. Հրաչ Զուլաքեանի՝
14. Rue Maréhal Foch Viroflay

Պ. Զաւէն Յովհաննէսեանի
31. Rue de Général Léclerc, Versailles

կամ

ASSOCIATION CULTUELLE DES ARMÉNIENS DE CHAVILLE
C. C. P. Paris 14827-18

AVe. NIEL
TAILLEUR H. & D.
COUTURE CONF.
b. Mag. av. Logt b. aménagé
chauff. cent, PAS 49-98

Imprimé sur les presses du journal HARATCH
17, Rue Bleue, 17 — PARIS (9e)

"ՅԱՌԱՋ"Ի ԳԻՆԸ

Կառավարութեան եւ մամուլի սեմտի – քայի որոշումով, բոլոր տեղական օրաթերթերու գինը պիտի բարձրանայ 20 ֆրանքի :

ՅԱՌԱՋ եւս պարտաւոր է հետեւիլ այս կարգադրութեան, մանաւանդ որ թուղթի, ելեկտրականութեան եւ այլ գիներու բարձրացումը մեծ դժուարութեանց առջեւ կը դնեն թերթիս վարչութիւնը :

ՅԱՌԱՋի նոր գիները պիտի ըլլան· — Հատավաճառ՝ 15 ֆրանք, տարեկան բաժնեգին (Ֆրանսա եւ գաղութներ) 3500 ֆրանք, վեցամսեայ 1900 ֆրանք, արտասահման 4000 ֆրանք :

ՄԻՆՉԵՒ ԴԵԿՏԵՄԲԵՐ 31 մեր բաժանորդները կրնան օգտուիլ հին սակէն :

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Վիէն.— Հ. Յ. Դ. «Անի» կոմիտէն եւ բոլոր ընկերները իրենց խորին ցաւակցութիւնը կը յայտնեն ընկեր Յակոբ Ա. ՃէմՃեանին, Տիկին Աճէմեանին, ցաւակից ներուն եւ պարագաներուն իրենց մօր, եւ մեծ մօր՝ Այբի Տիկին Աննա Աճէմեանի կսկծալի մահուան առթիւ :

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 — Téléph. : PRO. 86 - 60
R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա եւ գաղութներ, տարեկան 3000 ֆր. վեցամս. 1600
Արտասահման՝ տարեկան 3500 ֆրանք : Հատը 12 ֆր.

ՇԱԲԱԹ
7
ԴԵԿՏԵՄԲԵՐ
SAMEDI
7 DECEMBRE
1957

33ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8062 — 33e ANNEE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 13ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3863

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ԱՐՏԱԿԱՐԳ ՁԻԳԵՐ

—o—

Ֆելիքս Կայեատի կառավարութիւնը մէկ չաբթուան ընթացքին յաջողեցաւ երկու անգամ վստահութեան քուէ ստանալ Ազգային ժողովէն, երկու ամէնէն կարեւոր խնդիրներու՝ Ալժերիոյ Հիմնական Օրէնքին եւ ելմտական ծրագրին առթիւ, որոնք պատճառ դարձած էին կի Մոլէի եւ Պուրժէս – Մոնուրիի դահլիճներու անկումին :

Եւ սակայն հակառակ խորհրդարանի վաւերացումին, այս երկու հարցերուն մասին ալ կառաւրեալ համերաշխութիւն չկայ ո՛չ միայն հանրային կարծիքին մէջ, այլ նաեւ կարգ մը պաշտօնական շրջանակներու մօտ :

Ելմտական ծրագիրը Ֆրանսայի ամէնէն այժմէական ներքին խնդիրն է :

Տարեվերջը կը մօտենայ եւ կառավարութիւնը տակաւին Ազգային ժողովի սեղանին վրայ չէ դրած 1958ի ելմտացոյցը, որ ըստ օրինի պէտք է ներկայացուի Դեկտեմբեր 31էն առաջ :

Մինչ այդ, եկող – գացող կառավարութիւնները ամիսներէ ի վեր նախապատրաստական աշխատանքներ կը տանին՝ կարելի եղածին չափ քիչ բացով ելմտացոյց մը կազմելու համար :

Պուրժէս – Մոնուրիի կառավարութեան օրով՝ Ֆելիքս Կայեատ իրրեւ ելմտական նախարար յաջողած էր սկզբունքով 540 միլիառ ֆրանքի դեղչ մը քուէարկել տալ 1958ի ելմտացոյցին համար :

Ֆելիքս Կայեատ իր նախարարական յայտարարութեան մէջ կը խոստանար հարիւր միլիառի նոր դեղչ մը եւս ընել :

Վերջացող չաբթուան ընթացքին քանի-մը միջնախարարական ժողովներ ու-մարուեցան՝ ելմտացոյցի ծախքերու բաժինը պակասեցնելու եւ հասոյթի պարբեր-ները աւելցնելու համար :

Հինգշաբթի օր խորհրդարանը քուէարկեց 101 միլիառի նոր տուրքեր : Իսկ կառավարութիւնը կը յուսայ 250 միլիառի խնայողութիւն մը եւս ընել : Ասկէ զատ կը ծրագրէ Միացեալ Նահանգներէն եւ Միջազգային Հիմնադրամէն 450 – 500 միլիոն տոլարի (շուրջ 210 միլիառ ֆր.) փոխառութիւն մը կնքել :

Ելմտացոյցի վերջնական օրինագիծին մէջ ծախքերու բաժինը որոշուեցաւ 5300 միլիառ ֆրանք, իսկ բացը 600 միլիառը պիտի չանցնի :

Ելմտական նախարարին ամէնէն կարեւոր որոշումն էր «ճշմարտութեան գոյ-ծողութիւն» բառածը, որուն հետեւանքով դիներու բարձրացում առաջ եկաւ :

Կառավարութիւնը 1952 Օգոստոս 31էն ի վեր տարեկան 90 միլիառ ֆրանքի զանազան նպաստներ կուտար եւ կարգ մը ձեռնարկներ ալ տուրքէ ազատ կը կացուցանէր, պարզապէս թոյլ չտալու համար, որ գիները բարձրանան եւ պատճառ դառնան երաչխաւորեալ նուազագոյն աշխատավարձի յաւելման :

Ջնջելով այդ յատկացումները, ճիշդ է որ կառավարութիւնը 90 միլիառի խնայողութիւն մը կ'ընէ, սակայն ապրուստի անհրաժեշտ զանազան նիւթերու սպեղը մեծապէս կ'ազդէ աշխատաւորներու քօ-սակին վրայ :

Ընկերվարական նախարարները հակառակ են գիներու յաւելման եւ կը սպառնան զահլիճէն քաշուիլ : Միւս կողմէ բաւարար չեն զաներ պաշտօնեաներու ամսականին վրայ ըլլալիք յաւելումը, որուն համար ելմտական նախարար Ֆիմլէն 45 միլիառ կը նախատեսէ : Ու կը պահանջեն նոր տուրքեր դնել մեծ չափերու ապահովող ձեռնարկներու վրայ :

Նոր տուրքեր հաստատելու դէմ են վարչապետն ու նախարարներու մեծամասնութիւնը :

Գիներու նախատեսուած յաւելումէն վերջ, կառավարութիւնը թոյլ պիտի տայ, որ նոր յաւելումներ կատարուին : Այս առթիւ կազմուած է երեք հոգինոց «Փրկութեան կոմիտէ» մը, որուն տրամադրութեան տակ դրուած է քսան միլիոն տոլար : Այս եռապետութիւնը իրաւունք պիտի ունենայ ի հարկին արտասահմանէն ներածումներ կատարելու, որպէսզի ապրուստի համար կենսական՝ անհրաժեշտ նիւթերը նոր յաւելումներ չկրեն ներքին հրապարակին վրայ :

Կառավարութիւնը զինուած խորհրդարանի լիազօրութիւնով՝ արտակարգ ճիգեր պիտի փորձէ, կացութիւնը աւելի եւս չծանրացնելու, մանաւանդ Ֆրանքը փրկելու համար :

ՀՐԱՆՏ – ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՎԱՐՉԱՊԵՏԸ ԿԸ ՍՊԱՌՆԱՅ ՀՐԱԺԱՐԻԼ

—o—

ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐՈՒՆ ԴԻՐՔԸ ԼՈՒՐՋ ՏԱԴՆԱՊ ՄԸ ՍՏԵՂԾԵՑ

Ազգ. ժողովին մէջ Արտակարգ Իրաւասութեանց Հարցի շուրջ 187ի դէմ 233 ձայնով վստահութեան քուէ տրուեցաւ կառավարութեան, մինչ լուրջ տպնդում մը ծայր առած էր արդէն՝ Ընկերվարականներու որդեդրած դիրքին պատճառով :

Կացութիւնը յարուցած վիճակ մը ստացաւ : Ընկերվարական կուսակցութեան պաշտօնաթերթը խիստ յօդուածներ հրատարակեց, մինչ նախարարները կը պատնային խումբով մեկնիլ. կառավարութեան հետ համաձայն չեն առօրեայ պիտոյքներու սղութեան համար եւ կ'առաջարկեն, որ փոխանակ ապրանքներու գիները բարձրացնելու՝ տուրքերը աւելցուին, այդ ձեւով, կարելի պիտի ըլլար նաեւ պետական պաշտօնեաներու ամսականները աւելցնել :

Ընկերվարականներու պաշտօնաթերթը վճռապէս դէմ էր որեւէ խորհրդակցութեան՝ այնքան ատեն որ կառավարութիւնը չէր հրաժարած այս որոշումէն :

Կի Մոլէ եւ Կայեատ տեսակցութիւն մը ունեցան այս ուղղութեամբ, որ արդիւնք չտուաւ : Վարչապետը մեծամասնութեան դեկավարներու ժողով մը գումարեց Մաթինեանի մէջ : Գլխաւոր օրակարգն էր պետական պաշտօնեաներու պարագան :

Առաջին նիստը բաւական չեղաւ՝ որ հարցը լուծուէր : Ժողովէն ետք, ելմտական յանձնախումբին դեկուցարերը՝ Լէնար, յայտարարեց թէ համաձայնութիւն մը գոյացած էր ընկերութիւններու տրուելիք կառավարական նպաստին վրայ :

Պաշտօնեաներու ամսականի յաւելման հարցը յետաձգուած էր յաջորդ նիստին :

Կուսակցութեանց բոլոր ներկայացուցիչներն ալ այն տեսակէտը ունին՝ թէ ներկայ պայմաններու մէջ ծայր տալիք տպնդում մը լուծումը չատ դժուար պիտի ըլլար :

Միւս կողմէ, ելմտական նախարար Ֆիմլէն յայտարարեց թէ առաջին նիստին մէջ հիմնական համաձայնութիւն մը չէր գոյացած :

Կացութիւնը բարդացաւ այն առիւն երբ Անկախներն ալ պայման դրին : Մինչ Ընկերվարականները սղութեան դէմ ըլլալով կ'առաջարկեն որ տուրքերը աւելնան, Անկախները ո՛չ մէկ յաւելում կ'ընդունին՝ տուրքերու վրայ :

Այս պայմաններու մէջ, վարչապետ կայեատ յայտարարեց, թէ նպատակ չունի նախապահելու դահլիճի մը՝ ուր մեծամասնութիւն չկայ : Եթէ ընկերվարական կամ չափաւորական նախարարները հրաժարին՝ առանց այլեւայլի վարչապետը պիտի ներկայացնէ իր հրաժարականը :

Չատ, որ նոր յաւելումներ կատարուին : Այս առթիւ կազմուած է երեք հոգինոց «Փրկութեան կոմիտէ» մը, որուն տրամադրութեան տակ դրուած է քսան միլիոն տոլար : Այս եռապետութիւնը իրաւունք պիտի ունենայ ի հարկին արտասահմանէն ներածումներ կատարելու, որպէսզի ապրուստի համար կենսական՝ անհրաժեշտ նիւթերը նոր յաւելումներ չկրեն ներքին հրապարակին վրայ :

Կառավարութիւնը զինուած խորհրդարանի լիազօրութիւնով՝ արտակարգ ճիգեր պիտի փորձէ, կացութիւնը աւելի եւս չծանրացնելու, մանաւանդ Ֆրանքը փրկելու համար :

ՀՐԱՆՏ – ՍԱՄՈՒԷԼ

Օր ըն Օրին

ՉԿԱՆ ՈՒ··· ՉԿԱՆ 1

—o—

Վերջին թղթաբերով ստացուած «Սով. Հայաստան»ի մէջ հրատարակուած է ուշագրաւ նամակ մը՝ խմբագրութեան ուղղուած :

Նամակը գրողն է Ս. Յարութիւնեան «Նոյեմբերեան շրջանի Ղոշղորթան գիւղի դպրոցի աշխարհագրութեան դասատու» :

Ի՞նչ կ'ուզէ որ ըլլայ այս նամակը :

Առաջին անգամ ըլլալով այս դասատուն լրագնաշուրջին փառաբանութիւնը չի հիւսեր խորհրդային «դրախտ»ին, կոլխոզին ու սովխոզին : Այլ, կը մատնանշէ տխուր երեւոյթ մը, որմէ լուր չունէիք :

Նոյնութեամբ կ'ընդօրինակենք նամակին առաջին հատուածը. անշուշտ՝ մեր ուղղագրութեան վերածելով. — «Երրորդ ամիսն է, ինչ սկսուել է ուսումնական տարին, բայց մինչեւ այժմ շրջանում չեն ստացուել եոթներորդ, ութերորդ եւ իններորդ դասարանների աշխարհագրութեան դասագրքերը» :

Եւ, կը բացատրէ թէ ի՞նչ դժուարին կացութեան մատնուած են ուսուցիչները՝ դասաւանդութիւնները չընդհատելու համար : Նախ՝ բերանացի բացատրութիւն-ներ տուած են, յետոյ ծանօթագրութիւններ՝ Խ. Հայաստանի աշխարհագրութեան մասին, ինչ մը պատմութիւն եւ հէքեաթ, բայց գրքերը չկան ու չկան···

Ի՞նչ ըսել աշակերտներուն :

Կը փորձեն ուրուագծային հարթէսներ եւ աշխարհագրական գործնական աշխատանքներու յարմար պիտոյքներ գտնել՝ աշակերտութիւնը զբաղեցնելու համար : Սակայն, այդպիսի բաներ ալ չկան երկրին մէջ :

Խեղճ ուսուցիչը կոչ կ'ուղղէ Լուսաւորութեան նախարարութեան եւ հրատարակական տան՝ որ ամէն տարի հրատարակուած ու հրատարակելի գիրքերու երկար – բարակ ցանկեր կը հրատարակէ, էականը··· մոռնալով :

Արդեօք աշխարհագրութեան դասագիրքերն ու գործնական աշխատանքներու յարմար առարկաներըՄոսկուա՞ զրկուած են, իբրեւ տուրք հոկտեմբերեան յեղափոխութեան հառասամեակին ···

Բայց, գիտենք նաեւ, թէ հանի մը ամիս առաջ, Հայաստանի նախարարները, հրատարակիչներն ու ուսուցիչները յաջորդական ժողովներ կը գումարէին՝ ուսեալներէն լեզուի յարմար դասագիրքերու պատրաստութեան համար :

Տիւսապաշտութեան իրենց արկածախնդրութեան մէջ, կ'երեւի թէ մոռցած են հայերէնն ու Հայաստանի ··· աշխարհագրութիւնը :

ԱՐՄԵՆԱԿ

ԾԱՆՐ ԿԱՑՈՒԹԻՒՆ ԻՆՏՈՆԵԶԻՈՅ ՄԷՋ

ՀՈԼԱՆՏԱՑԻՆԵՐՈՒ ԱՐՏԱՔՍՈՒՄԸ ՈՐՈՇՈՒԵՑԱՒ

—o—

Կացութիւնը հետզհետէ աւելի կը ծանրանայ Ինտոնեզիոյ մէջ : Ինտոնեզիոյ Արտաքին Նախարարը Հոլանտայի դիւանագիտական ներկայացուցիչին յայտնեց, թէ այլեւս հարկ էր փակել երկրին մէջ գտնուող դեսպանատուները : Միւս կողմէ, Արդարութեան Նախարարը յայտարարեց, թէ անդորձ Հոլանտացիները անմիջապէս պէտք է հեռանան երկրէն : Հրամանը ի գործու է՝ յայտարարուած վայրկեանէն սկսեալ : Կը քննուի նաեւ Հոլանտացի պաշտօնեաները Ինտոնեզիացիներով փոխարինելու պարագան :

Պաշտօնական յայտարարը Հոլանտացի – ներուն կ'արգիլէ դիւանագիտական որեւէ գործունէութիւն :

Որոշուած է նաեւ, որ բոլոր Հոլանտացիները հեռանան Ինտոնեզիայէն : Այս ուղղութեամբ Լա Հէյլի կառավարութիւնը հարկ եղած միջոցները սկսած է ձեռք առնել :

Առաջին ազդակով հոլանտական Ք. Լ. Մ. օդանաւային ընկերութիւնը Ինտոնեզիոյ իր ութ հարիւր պաշտօնեաները, իրենց ընտանիքներով միասին պիտի փոխադրէ Հոլանտա : Այս որոշումը տրուեցաւ ընկերութեան անօրինութեան եւ ձախքերթայի կազմին միջեւ տեղի ունեցած հեռաձայնային խօսակցութենէ մը ետք :

Ինտոնեզիոյ Արդարութեան նախարարը մամուլի ասուլիս մը տալով յայտարարեց, թէ երկրին մէջ գտնուող 50·000 Հոլանտացիները եթէ անմիջապէս չպարտին՝ պիտի արտաքսուին. այս որոշումը ի գործու է՝ Հոլանտացի մասնագէտներուն համար :

—o—

Անգլիոյ մէջ պատահած երկաթուղիի արկածին մեռելներուն թիւը հետզհետէ կը բարձրանայ : Բոլոր վիրաւորներուն ալ վիճակը ծանր կը նկատուի : Երէկ առաւօտ մեռելներու թիւը հարիւրէն աւելի էր :

(Լուրերու շար.ը կարդալ Դ. էջ)

ԱՆՑԵԱԼԸ

—o—

Կը խորհիմ թէ, որոշ տարիքէ մը ետք, մարդ առաւելապէս իր անցեալով կ'ապրի քան ներկայով։ Միամտութիւն չէ՞ ապագայի ծրագիրներ մշակել, երբ այնքան մօտ է «Ամենայն Սրբոց»ը իր նորաբաց գերեզմաններով։

Անցեալը անչունչ, անկենդան իրակա – նութիւն մը չէ երբեք, ոչ ալ պատկեր մը, խմբանկար մը՝ որուն կերպարանք – ները ժժգունած, սրբուած ըլլան ժամա – նակի մոխիրներուն տակ։ Անիկա այնքան կ'ապրի, որքան մենք կեանքի բարա – խումները կը զգանք մեր արիւնին մէջ։ Անոր ձայնը կը զրկէ մեզ մշտարթուն մնալու եւ ազօթամբոյնջ ողջունելու ա – ռաւօտեան արդար արեգակը։ Անոր հրա – պոյրը, մինչեւ իսկ տրտմաթախիծ ու ցաւագին, խորունկ եւ թափանցող է կախարդանքի մը չափ։ Անոր գիծը կան – խահասօրէն գիտակից պատանեկութենէ մը մեկնելով՝ կը հասցնէ մեզ երիտա – սարդութեան հրեղէն սահմանը՝ ուր մեր կեանքին ամենագեղեցիկ օրերը ապրե – ցանք։ Կը բաւէ յիշել ինչ որ առեղօք մեր էութեան անհաչիւ ընծայումն եղաւ տեն – չանքի եւ միրոյ աստուածներուն, օրհ – ներգելու համար երջանկութեան մինչեւ մը չի բխիր արդէն։ Պատմութիւն մըն է կեանքը՝ որուն վախճանը առաջին իսկ է – ջէն յայտնի է ընթերցողին։ Պատմութիւն մը՝ որուն բոլոր դրուագները, իրենց ընդհանուր գիծերով կը պարզուին մեր աչքերուն առջեւ, — մանկութիւն, չա – փահասութիւն, ալեւոյթ եւ գերեզման, — մինչեւ իր վերջին երգը անթափանցելի ներդաշնակութեան մը լուսահեւ կշռոյթը կը հոսեցնէ մեր էութեան մէջ։

Անցեալը ամբողջապէս կը գրաւէ մեր ապրած կեանքը։ Ներկան նոր գծուած ուղին է՝ որուն ծայրը կը տեսնենք ար – գէն։ Անակնկալներ, սպասումներ չեն խռովեր մեր հոգին։ Գիտենք թէ գայն ե – զերող մթամած ծառերուն վրայ կ'իջնէ գիշերը՝ որ թերեւս անառաւօտ ըլլայ։ Բայց ինչ փոյթ. վախ չունինք մեր կը – մախային առաջնորդէն՝ որուն ցրտա – սարսուռ չունչը կը զգանք մեր ոսկորնե – րուն մէջ։

Ինչ հրապոյր կրնային ունենալ մեր օ – րերը, եթէ չյիշենք որ առեղօք լուսավառ երկինք մը կը կամարուէր հայրենի լեռ – ներուն վերեւ։ Պարէզները խունկ կը բուրէին տաճարներու պէս եւ ալբիւրնե – րը կը կարկաչէին ոսկեծիծաղ։

Կեանքը ամբողջութիւն մըն է առաւե – լապէս իր անցեալով։ Մեռելները՝ որ ա – նոր բնակիչներն են, աստեղաթեւ հոգա – եղները որ կը չնչեն, անոնք՝ որ ժայ – ռերու ադամանդին մէջ իրենց հոգիին դրօշմը դրին անջնջելի գիծերով, մեզ ա – ւելի եղբայրօրէն կը չրջապատեն՝ քան ողջերը։

Ինչ կարելի է սպասել ապագայէն։ Բաց գիրք մըն է անիկա։ Էջ մը դարձնելով թերեւս «վախճան»ը դտնենք մեր դոգա – հար մատներուն տակ։ Բայց կրնանք վե – րբստին ընթեռնուլ ամբողջ մատեանը, յամենալ անոր գեղեցիկ եւ անմոռանալի դրուագներուն վրայ. հոն՝ ուր երջան – կութեան վարդերը կը ծաղկին. հոն՝ ուր արեւային ջերմութիւն ունին տենչավառ մարմինները եւ սիրատոչոր չրթները կը մրմնջեն անդրժելի երդումին դալտնիքը։

Սուտ, հազար անգամ սուտ իսկ ըլլան այս երգերը, անոնք չատ աւելի քաղցրա – հնչուն են հիմա, անցեալին յաւիտենա – կան ղրօյցին մէջ հիւսուած։

ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹ

ԻՏԱԼԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻՆ Զ. ԵՒ Է. ԴԱՐԵՐՈՒՆ

—o—

Իտալիոյ Հայ Մշակութային Միու – թեան հրաւէրով, «Բազմավէպ»ի երիտա – սարդ խմբագիր Հ. Ներսէս վրդ. Տէր Ներսէսեան բանախօսեց «Հայերէն լեզուն Զ. եւ Է. դարերուն» նիւթին չուրջ, Նո – եմբեր 23ի գիշերը, Հայկ. Տան մէջ։

Նախ՝ ակնարկ մը հինգերորդ դարու մեր դրականութեան, որով ցոյց կուտար Ոսկեզար յորջորջումին էական եւ գըլ – խաւոր չարժառիթը, լեզուն, իր կատա – րելագոյն ձեւով։ Թարգմանական դրակա – նութեան արժէքը կը ներկայացուէր հա – մեմատական եղրահանգութիւններով, ո – րոնք հսկայական արժէքներ կը դառնան մեր աչքին։ Գործնական օրինակ մը. առնենք չորս Աւետարանները. փոքրագիր տպագրութեամբ, դրպանի չափով, 400 էջ։ Նոյնը փոխադրեցէք մագաղաթի վր – րայ. կ'ունենաք չուրջ հազար էջ, իւրա – քանչիւրը 30 × 40 հարիւրորդամեդր մե – ծութեամբ։ Ու խորհիլ որ այս չորս Ա – ւետարանները ամբողջ Աստուածաչունչին հազիւ մէկ աստիճորդ մասը կը կազմեն։ Իսկ ամբողջ Աստուածաչունչն ալ Ոսկե – դարու թարգմանութեանց քառասունէն մէկը։

Հինգերորդ դարու երկրորդ կէսը, ար – դէն մեղի կը ներկայացնէ հայերէն մը, որ տակաւ կը հեռանայ Մեսրոպեան լե – զուէն եւ անոր գլխաւոր յատկանիշներէն։ Ցայտուն եւ խօսուն օրինակներ, ներկա – յացուած ժողովրդական եւ ամէնուն հասկնալի ու մերձենալի ձեւերով, կազ – մեցին անցքի կամուրջը դէպի Զ. եւ է. դարեր։

Եւ ահա լեզուի մեր պատմութեան մէջ նոր յայտնութիւն մը, յունարէն լեզուի բառամթերքին ու քերականութեան վրայ չափուած ու ձեւուած հայերէն մը, զոր սովոր ենք կոչել յունաբանութիւն. հա – յերէն մը զոր հասկնալու համար հարկ է քաջ յունարէն գիտնալ. եւ նոյնիսկ որոշ չափով տեղեակ ըլլալ իմաստասիրական գիտութեանց։

Լեզուի այս նորօրինակ ընթացքը կը ծագի իմաստասիրական եւ քերականական նիւթերու մերձեցումէն ու միչոցումէն։

Ե. դարուն հազիւ այդ բարձրութեան կը հասնէինք եղնիկով, երբ արդէն քա – ղաքական վերիվայրումներ կը կասեցնէին այդ ընթացքը։ Յաջորդ սերունդը չունե – ցաւ այն վարպետութիւնը թարգմանական արուեստին, ինչպէս ոսկեդարուն, եւ ա – հա նմանողական, ծառայական, սորվա – միա նմանողութեան դպրոցը։

Ցայտուն օրինակներ անոր բառամթեր – քէն, ածանցումներէն, բառակազմութե – նէն եւ գլխաւորապէս քերականական տարրերէն՝ եկան ժողովրդականացնելու այս գիտելիքները։

Բայի մասին խօսելով, Հայր Ներսէս բաւ թէ ոսկեդարեան բային քառասուն ձեւերը, այս չրջանին վերածուած էին 160ի, ուրմէն բայ մը կ'ունենար 160 ներ – գործական եւ նոյնքան ալ կրաւորական ձեւ։ Հրամայական եղանակն անգամ կ'ու – նենայ իր անկատարը, կատարեալը, ա – պառնին ու յարակատար։

Ներկայացուց այդ չրջանի լեզուին ան – ցուցած կազմաւորման զանազան փուլե – րը, որոնք կը յայտնուին յաջորդական թարգմանութիւններով։

Մատման մասին խօսելով մանրամասն բացատրեց թէ ինչպէս չատ մը տարրեր ծնունդ կ'առնեն նոյնինքն ոսկեդարու հայերէնէն, ընդհանրացումով կամ ալ յաջորդական յեղաչրջումով։

Նիւթը աւելի եւս հետաքրքրական դար – ձնելու նպատակով, մասնայատուկ ծան – րացումով անդրադարձաւ եւ չեչտեց այս լեզուին դուած ընդունելութիւնը հայե – րէնի մէջ. ու զատորոշեց բառեր, որոնց համազօրը չկար Ոսկեդարուն, կամ կար, բայց պահանջուած ուժը չունէր. հետե – ւարար անհետացան, ու մնացին մինչեւ այսօր մեր աչխարհաբարի մէջ անոնց յունարան ձեւերը. եւ նոյնիսկ այնքան չատցան՝ որ կը կազմեն աչխարհաբարի մէկ հարստութիւնը, գիտական մարզին մէջ։

Այսպէս բազմաթիւ քերականական բա – ռեր. ենթակայ, ապաթարց, մակբայ, չաղկապ, տրամաբանել, բաղադրել, ա – պացոյց, ներկայ, մականուն, եզակի, յոգնակի, ներածութիւն, արտածում, ներչնչում եւն.։

Ասոր հակառակ, բազմաթիւ յունարան բարդութիւններ ու ձեւեր, հետզհետէ ան – հետացան ու յաղթեցին ոսկեդարեան ձե – ւերը։ Այսպէս անհետացան յարահետե – ւանք, որը գանուում էր Արագի լերան հա – րաւային ստորոտում։

Մեր խումբը Արագի սարից Ծաղկա – վանք իջաւ առաւօտեան ժամը 10ին, երբ ուխտաւորների բազմութիւնը փռուել էր արդէն Ծաղկավանքի դալարապատ հով – տում։ Մատաղի կրակների ծուխը կապ – տագոյն չղարչով հովանի էր կապել հով – տի ու ըլուրների վրայ։ Մատաղցու գառների ու ոչխարների մայիւնները, ձիերի խրխնջիւնը, դհոլի ու զուռնայի, երգի ու պարի հնչիւնները լսուում էին չատ հեռուից։

Որքան մեծ եղաւ մեր ուրախութիւնը, երբ Մողնի վանքի վանահօրից իմա – ցանք, որ Բիւրականից այդտեղ գալու էր նաեւ Կոմիտաս վարդապետը։

Այդ տարիներին, ամառուայ չոգ ա – միսներին, Բիւրականում հանգստանում էր Պրիմեան Հայրիկը, որին այցելու – թեան էր գնում նաեւ Կոմիտաս վարդա – պետը։ Այս ամառն էլ գտնուելով Բիւ – րականում, Ծաղկավանքի տօնը առիթ էր գառնում Կոմիտաս վարդապետին՝ այդ – տեղ գալու։

Զանցած երկու ժամ, Կոմիտաս վար – դապետը եկաւ ուղղով իր չորս ուղեկից – ների հետ։ Մենք ընդառաջ գնացինք։ Մեզ տեսնելով եւ իմանալով մեր պատրի նպատակը, Կոմիտաս վարդապետը չատ ուրախացաւ եւ ասաց.

— Ապրէք, տղաներ, լաւ միտք էք յղացել չրջադայելու մեր պատմական վայրերում, ծանօթանալու մեր ժողովր – դի նիստ ու կացին. զովում եմ ձեր ե – ռանդը։ Այսօրուայ տօնախմբութեան հե – տաքրքրական կողմը մեզ համար ոչ թէ կերուխումն է, այլ այն երգերն ու պա – րերը, նուագներն ու խաղերը, որոնց միջոցով հայ գեղջուկն արտայայտում է իր կենսական ապրումները։ Ահա ու – սէք, ինչպէս են խմբեր կազմել ահել, չահել, հարս ու աղջիկ ներ, երիտասարդ տղաներ, երգում են ու պարում, արտերը բաց անում։ Եթէ բոլորս միասին խմբո – վին սկսենք չրջել գիտելու համար, չա – տերը նկատելով մեզ, գեղջկական ամօթ – խածութիւնից պէտք է կամ զադարեցնեն երգն ու պարը, կամ այնպէս ազատ չըզ – գան իրենց, ինչպէս կարող են զգալ ա – նոնց մեր ներկայութեան։ Իսկ մեզ հա – մար հետաքրքիր է տեսնել եւ լսել նրանց առանց կաչկանդումների, ազատ, հա – մարձակ ու արտաբաց։ Ուստի, հարկա – ւոր է, որ մենք բաժանուենք երկեակների ու աննկատելիօրէն մօտենանք ուխտա – ւորների խմբերին, նրանց ուրախ ժա – մանցը դիտելու, լսելու համար։ Իսկ ժա – մը հինգի մօտ կը հաւաքուենք այ, էն խաչքարի մօտ, որտեղ աչտարակցի Օ – հաննէսի մատաղի օջախն է. այնտեղ կը հանդստանանք եւ ապա կը ճանապարհ – ուենք դէպի տուն։

Այդպէս էլ արինք։ Կոմիտաս վարդա – պետը, Տաճատ սարկաւագի եւ լսարանցի Վ. Տէր Առաքելեանի հետ միասին, իսկ մնացածներս երկեակներով ցրուեցինք ուխտաւորների ծով բազմութեան մէջ։

Այստեղ էլ այնպէս էր, ինչպէս Աստ – ուածածնի տօնին. ամէն կողմ օջախների չուրջը երգ ու պար, նուագ ու խաղ, մրցումներ եւ այլն։ Երկու ժամից աւելի մենք եռանդագին, ամենայն հետաքրք – րութեամբ դիտեցինք, լսեցինք ու մաս – նակցեցինք ուխտաւորների ժամանցին։ Երբեմն – երբեմն էլ դիտում էինք Կոմի – տաս վարդապետին, թէ ինչպէս նա լարուած ուչադրութեամբ (նման առիթ – ներով վեդար չէր դնում, որ աչքի չընկ – նի), մատիան ու տետրակը ձեռին, մօտե – նում էր այս կամ այն խմբին եւ նչումներ էր անում լսածի ու տեսածի մասին։

Ժամը 5ին բոլորս հաւաքուեցինք աչ – տարակեցի Օհաննէսի օջախի մօտ։ Օհան – նէսը պատրաստել էր ճոխ, առատ մա – տաղասեղան։

Արեւն արդէն թեքուել էր դէպի մայ – րամուտ, երբ մենք թողինք Ծաղկավանքի հովիտը եւ Կոմիտաս վարդապետի զըլ – խաւորութեամբ հասանք մինչեւ Մողնի, որտեղից բաժանուեցինք. նա իր ուղե – կիցներով գնաց դէպի Բիւրական, իսկ մենք, Օշականի ու Աչտարակի միջով, ուղղուեցինք դէպի էջմիածին։

×

Կոմիտաս վարդապետը միայն տօնա – կատարութիւնների ժամանակ չէր, որ հաւաքում, ուսումնասիրում եւ մշակում էր ժողովրդական երգերն ու պարերը։ Նա չատ չրջապատութիւններ է կատարել Հայաստանի գանազան գաւառներում։ Նրան ծանօթ էին ոչ միայն հայ չինակա – նի կենցաղի, նիստ ու կացի, սովորու – թիւնների աւանդութիւնները, այլեւ հա – րեւան եղբայրակից ազգերի՝ Քրդերի, Ե – զիդիների, Տաճիկների, Ասորիների եր – գերն ու պարերը, սովորութիւնները։ Նշանդրէքի, հարսանիքի, սաւրորների, դաչտային աչխատանքների եւ ուրիչ դէպքերը չէին վրիպում նրա ուչադրու – թիւնից։ Ամէն դէպքում էլ նա նիւթ էր գտնում իր ստեղծագործական աչխա – տանքի համար։

Ճեմարանում եւ վանքում ծառայում էին չատ տաճկահայեր, որոնք 1896 թը – ւականի թիւրքական ջարդերից փախչե – լով ապաստան էին գտել Հայաստանում։ Նրանցից չատերը տարիքաւոր մարդիկ է – ին, գաղթած Մոկաց աչխարհից, Սասու – նի, Շատախի, Վանի, Մշոյ գաւառնե – րից, եւ որոնք գիտէին չատ հետաքրքիր աւանդութիւններ, առածներ, պատմու – թիւններ, ու երգեր։

Ես չատ լաւ եմ յիչում քեռի Նա – խոյին, քեռի Մանուկին եւ ուրիչներին, որոնց տրած պատմութիւնները հետա – քրքրութեամբ էինք լսում ճեմարանի ու – սանողներս։

Կոմիտաս վարդապետն ու Մանուկ Ա – բեղեանը (այն ժամանակ մեր դասատուն) չատ անգամ հրաւիրում էին այդ ծերու – նիներին եւ լսում նրանց պատմածները։ «Սասունցի Դաւիթ» դիւցազնավէպի մը վարիանտը Մանուկ Աբեղեանը դրանց պատմածից է գրի առել ու մշակել։

Ս. ԲԱՂԻՐԵԱՆ

(10)

ՅՈՒՇԵՐ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ՄԱՍԻՆ

(1902 — 1906 թ. թ.)

—o—

Մինչեւ այսօր էլ յիչում եմ այդ ծո – ցաւեւորում նչած մի քանի երգերի ու պարերի անունները, նոյնիսկ քառեակնե – րի խօսքերը, որովհետեւ յաճախ դրանք երգել ենք ճեմարանում տօների ժամա – նակ։

×

Ամրան սկիզբներին, երբ տրւում էին արձակուրդները, ճեմարանի ուսանողնե – րից չատեր, իրենց ծննդավայրի հեռաւո – րութեան պատճառով, մնում էին էջ – միածնում։ Բայց չոգերի պատճառով չա – տերին ուղարկում էին ամարանոց՝ Սե – ւան, Գեղարդ, Ղրչաղ, Բիւրական եւ այլ վանապատական վայրեր։ Պատահում էր, որ բարձր դասարաններից լսարաններից մի քանի հոգի խումբ էին կազմում եւ ճանապարհորդում դէպի Հայաստանի պատմական վայրերը, մինչեւ անգամ Ա – րեւմտեան Հայաստանի գաւառները։

1904 թուականի ամառը մի խումբ ու – սանողներով այդպիսի մի արչաւ կազ – մակերպեցինք դէպի Ալագեազի ու Ապա – րանի կողմերը։ Անցանք Օշական, Աչտա – րակ, Մողնի, Օհաննավանք, Ալիքուչակ, բարձրացանք Արագի լերան կատարը հիւ – սիսային կողմից, այդ տեղից դիտելու Արարատեան դաչտը։

Էջմիածնից դուրս էինք եկել երեքչաբ – թի օրը ոտքով, իսկ Շաբաթ օրը ցերեկ – ուայ ժամը 2ին գտնուում էինք Արագի լե – րան կատարին։

Հովիւներից լսեցինք, որ յաջորդ օրը, կիրակի, Ծաղկավանքի տօնն է եւ բազ – մաթիւ ուխտաւորներ պէտք է գան։ Այդ մասին բոլորովին մոռացել էինք մենք եւ – ոեցինք դիչերել հովիւների մօտ ու ա – տեան լուսարացին էջնել Ծաղկա – վանք, որը գտնուում էր Արագի լերան հա – րաւային ստորոտում։

Մեր խումբը Արագի սարից Ծաղկա – վանք իջաւ առաւօտեան ժամը 10ին, երբ ուխտաւորների բազմութիւնը փռուել էր արդէն Ծաղկավանքի դալարապատ հով – տում։ Մատաղի կրակների ծուխը կապ – տագոյն չղարչով հովանի էր կապել հով – տի ու ըլուրների վրայ։ Մատաղցու գառների ու ոչխարների մայիւնները, ձիերի խրխնջիւնը, դհոլի ու զուռնայի, երգի ու պարի հնչիւնները լսուում էին չատ հեռուից։

Որքան մեծ եղաւ մեր ուրախութիւնը, երբ Մողնի վանքի վանահօրից իմա – ցանք, որ Բիւրականից այդտեղ գալու էր նաեւ Կոմիտաս վարդապետը։

Այդ տարիներին, ամառուայ չոգ ա – միսներին, Բիւրականում հանգստանում էր Պրիմեան Հայրիկը, որին այցելու – թեան էր գնում նաեւ Կոմիտաս վարդա – պետը։ Այս ամառն էլ գտնուելով Բիւ – րականում, Ծաղկավանքի տօնը առիթ էր գառնում Կոմիտաս վարդապետին՝ այդ – տեղ գալու։

Զանցած երկու ժամ, Կոմիտաս վար – դապետը եկաւ ուղղով իր չորս ուղեկից – ների հետ։ Մենք ընդառաջ գնացինք։ Մեզ տեսնելով եւ իմանալով մեր պատրի նպատակը, Կոմիտաս վարդապետը չատ ուրախացաւ եւ ասաց.

— Ապրէք, տղաներ, լաւ միտք էք յղացել չրջադայելու մեր պատմական վայրերում, ծանօթանալու մեր ժողովր – դի նիստ ու կացին. զովում եմ ձեր ե – ռանդը։ Այսօրուայ տօնախմբութեան հե – տաքրքրական կողմը մեզ համար ոչ թէ կերուխումն է, այլ այն երգերն ու պա – րերը, նուագներն ու խաղերը, որոնց միջոցով հայ գեղջուկն արտայայտում է իր կենսական ապրումները։ Ահա ու – սէք, ինչպէս են խմբեր կազմել ահել, չահել, հարս ու աղջիկ ներ, երիտասարդ տղաներ, երգում են ու պարում, արտերը բաց անում։ Եթէ բոլորս միասին խմբո – վին սկսենք չրջել գիտելու համար, չա – տերը նկատելով մեզ, գեղջկական ամօթ – խածութիւնից պէտք է կամ զադարեցնեն երգն ու պարը, կամ այնպէս ազատ չըզ – գան իրենց, ինչպէս կարող են զգալ ա – նոնց մեր ներկայութեան։ Իսկ մեզ հա – մար հետաքրքիր է տեսնել եւ լսել նրանց առանց կաչկանդումների, ազատ, հա – մարձակ ու արտաբաց։ Ուստի, հարկա – ւոր է, որ մենք բաժանուենք երկեակների ու աննկատելիօրէն մօտենանք ուխտա – ւորների խմբերին, նրանց ուրախ ժա – մանցը դիտելու, լսելու համար։ Իսկ ժա – մը հինգի մօտ կը հաւաքուենք այ, էն խաչքարի մօտ, որտեղ աչտարակցի Օ – հաննէսի մատաղի օջախն է. այնտեղ կը հանդստանանք եւ ապա կը ճանապարհ – ուենք դէպի տուն։

Այդպէս էլ արինք։ Կոմիտաս վարդա – պետը, Տաճատ սարկաւագի եւ լսարանցի Վ. Տէր Առաքելեանի հետ միասին, իսկ մնացածներս երկեակներով ցրուեցինք ուխտաւորների ծով բազմութեան մէջ։

Այստեղ էլ այնպէս էր, ինչպէս Աստ – ուածածնի տօնին. ամէն կողմ օջախների չուրջը երգ ու պար, նուագ ու խաղ, մրցումներ եւ այլն։ Երկու ժամից աւելի մենք եռանդագին, ամենայն հետաքրք – րութեամբ դիտեցինք, լսեցինք ու մաս – նակցեցինք ուխտաւորների ժամանցին։ Երբեմն – երբեմն էլ դիտում էինք Կոմի – տաս վարդապետին, թէ ինչպէս նա լարուած ուչադրութեամբ (նման առիթ – ներով վեդար չէր դնում, որ աչքի չընկ – նի), մատիան ու տետրակը ձեռին, մօտե – նում էր այս կամ այն խմբին եւ նչումներ էր անում լսածի ու տեսածի մասին։

Ժամը 5ին բոլորս հաւաքուեցինք աչ – տարակեցի Օհաննէսի օջախի մօտ։ Օհան – նէսը պատրաստել էր ճոխ, առատ մա – տաղասեղան։

Արեւն արդէն թեքուել էր դէպի մայ – րամուտ, երբ մենք թողինք Ծաղկավանքի հովիտը եւ Կոմիտաս վարդապետի զըլ – խաւորութեամբ հասանք մինչեւ Մողնի, որտեղից բաժանուեցինք. նա իր ուղե – կիցներով գնաց դէպի Բիւրական, իսկ մենք, Օշականի ու Աչտարակի միջով, ուղղուեցինք դէպի էջմիածին։

×

Կոմիտաս վարդապետը միայն տօնա – կատարութիւնների ժամանակ չէր, որ հաւաքում, ուսումնասիրում եւ մշակում էր ժողովրդական երգերն ու պարերը։ Նա չատ չրջապատութիւններ է կատարել Հայաստանի գանազան գաւառներում։ Նրան ծանօթ էին ոչ միայն հայ չինակա – նի կենցաղի, նիստ ու կացի, սովորու – թիւնների աւանդութիւնները, այլեւ հա – րեւան եղբայրակից ազգերի՝ Քրդերի, Ե – զիդիների, Տաճիկների, Ասորիների եր – գերն ու պարերը, սովորութիւնները։ Նշանդրէքի, հարսանիքի, սաւրորների, դաչտային աչխատանքների եւ ուրիչ դէպքերը չէին վրիպում նրա ուչադրու – թիւնից։ Ամէն դէպքում էլ նա նիւթ էր գտնում իր ստեղծագործական աչխա – տանքի համար։


Ճեմարանում եւ վանքում ծառայում էին չատ տաճկահայեր, որոնք 1896 թը – ւականի թիւրքական ջարդերից փախչե – լով ապաստան էին գտել Հայաստանում։ Նրանցից չատերը տարիքաւոր մարդիկ է – ին, գաղթած Մոկաց աչխարհից, Սասու – նի, Շատախի, Վանի, Մշոյ գաւառնե – րից, եւ որոնք գիտէին չատ հետաքրքիր աւանդութիւններ, առածներ, պատմու – թիւններ, ու երգեր։

Ես չատ լաւ եմ յիչում քեռի Նա – խոյին, քեռի Մանուկին եւ ուրիչներին, որոնց տրած պատմութիւնները հետա – քրքրութեամբ էինք լսում ճեմարանի ու – սանողներս։

Կոմիտաս վարդապետն ու Մանուկ Ա – բեղեանը (այն ժամանակ մեր դասատուն) չատ անգամ հրաւիրում էին այդ ծերու – նիներին եւ լսում նրանց պատմածները։ «Սասունցի Դաւիթ» դիւցազնավէպի մը վարիանտը Մանուկ Աբեղեանը դրանց պատմածից է գրի առել ու մշակել։

Ս. ԲԱՂԻՐԵԱՆ

(10)



ԿԱՅՔԱՐ

ՀԱ.

ՂՎՎՓՎՈՁՎՍՓՁՈՊՈՂ

— Ա՛խ... ախ... ես չեմ... ես չեմ նեղանում քեզանից, Ասյա ջան... Ես գիտեմ, որ դու ինձ շատ ես սիրում... Ես էլ քեզ շատ եմ սիրում... Ես ուզում եմ, որ դու միշտ ուրախ լինես... Ես ուզում եմ, որ դու միշտ ժպտաս... Ես ուզում եմ, որ դու միշտ ծիծաղես... Ես ուզում եմ, որ դու միշտ երջանիկ լինես... Ես ուզում եմ, որ դու միշտ սիրես ինձ... Ես ուզում եմ, որ դու միշտ ինձ համբուրես... Ես ուզում եմ, որ դու միշտ ինձ գրկես... Ես ուզում եմ, որ դու միշտ ինձ ասես, որ ինձ շատ ես սիրում... Ես ուզում եմ, որ դու միշտ ինձ ասես, որ ես քո միակ սերն ես... Ես ուզում եմ, որ դու միշտ ինձ ասես, որ ես քո միակ երջանկությունն ես... Ես ուզում եմ, որ դու միշտ ինձ ասես, որ ես քո միակ կյանքն ես... Ես ուզում եմ, որ դու միշտ ինձ ասես, որ ես քո միակ աստվածն ես... Ես ուզում եմ, որ դու միշտ ինձ ասես, որ ես քո միակ տիրակալն ես... Ես ուզում եմ, որ դու միշտ ինձ ասես, որ ես քո միակ թագավորն ես... Ես ուզում եմ, որ դու միշտ ինձ ասես, որ ես քո միակ կայսրն ես... Ես ուզում եմ, որ դու միշտ ինձ ասես, որ ես քո միակ ցարն ես... Ես ուզում եմ, որ դու միշտ ինձ ասես, որ ես քո միակ սուլթանն ես... Ես ուզում եմ, որ դու միշտ ինձ ասես, որ ես քո միակ խանն ես... Ես ուզում եմ, որ դու միշտ ինձ ասես, որ ես քո միակ բեկն ես... Ես ուզում եմ, որ դու միշտ ինձ ասես, որ ես քո միակ էմիրն ես... Ես ուզում եմ, որ դու միշտ ինձ ասես, որ ես քո միակ շեյխն ես... Ես ուզում եմ, որ դու միշտ ինձ ասես, որ ես քո միակ մոլլան ես... Ես ուզում եմ, որ դու միշտ ինձ ասես, որ ես քո միակ ռաբբին ես... Ես ուզում եմ, որ դու միշտ ինձ ասես, որ ես քո միակ աստվածն ես... Ես ուզում եմ, որ դու միշտ ինձ ասես, որ ես քո միակ տերն ես... Ես ուզում եմ, որ դու միշտ ինձ ասես, որ ես քո միակ կուռքն ես... Ես ուզում եմ, որ դու միշտ ինձ ասես, որ ես քո միակ սատանան ես... Ես ուզում եմ, որ դու միշտ ինձ ասես, որ ես քո միակ դևն ես... Ես ուզում եմ, որ դու միշտ ինձ ասես, որ ես քո միակ չարն ես... Ես ուզում եմ, որ դու միշտ ինձ ասես, որ ես քո միակ չարիքն ես... Ես ուզում եմ, որ դու միշտ ինձ ասես, որ ես քո միակ մեղքն ես... Ես ուզում եմ, որ դու միշտ ինձ ասես, որ ես քո միակ ամոթն ես... Ես ուզում եմ, որ դու միշտ ինձ ասես, որ ես քո միակ անեծքն ես... Ես ուզում եմ, որ դու միշտ ինձ ասես, որ ես քո միակ նզովքն ես... Ես ուզում եմ, որ դու միշտ ինձ ասես, որ ես քո միակ հայհոյանքն ես... Ես ուզում եմ, որ դու միշտ ինձ ասես, որ ես քո միակ հայհոյախոսություն

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

Իֆնիի մէջ կացութիւնը միշտ լարուած կը մնայ։ Սպանացի 12·000 զինուորները պատրաստ են մարոքցի անկարգները ճնշմանին դուրս վտարել, եթէ անոնք չարունակեն յարձակումները գործել։ Միւս կողմէ, Ռապաթի ազգայնական տարրերը կը յայտարարեն, թէ Իֆնիի ապստամբները յաղթանակեցին։ Այս հարցին չուրջ, տեղական թերթերն ալ յստակ բան մաճեւ մը չեն կրնար տալ, նկատելով որ լուրերը հակասական են։ Ռապաթի սպանական դեսպանը, որ ցարդ լուութիւն կը պահէր, յայտարարեց թէ Մադրիտի կառավարութիւնը տրամադիր էիֆնիի հարցին չուրջ մարոքցի ղեկավարներու հետ խորհրդակցելու։ Ինչպէս յանոթի է, դահաժառանգ Մուլայ Հասան իր միջամտութիւնը առաջարկած էր Սպանիոյ կառավարութեան։

ՄԱՏՐԻՏԻ մէջ Սպանիոյ եւ Ֆրանսայի ներկայացուցիչներուն միջեւ տարաձայնութիւն մը կրնայ ուեւտրական համաձայնութիւն մը կրնքուելու։ քանի միլիառի փոխանակու թիւն մը պիտի ըլլայ երկու երկիրներու միջեւ։

ԻՏԱԼԻՈՅ մէջ ընկերային դժուարութիւններ ծագեցան։ Առջի օր թղթատարները մերժեցին նամակները ցրուել։ երէկ՝ պետական պաշտօնեաները չաչխատեցան։ այսօր՝ հոդամշակները գործադուլի մէջ են։

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԳԵՐՄԱՆԻՈՅ մէջ 2209 ձեռարկութիւններ գերմանական հպատակութիւն ուզեցին։ Ցարդ 8085 հոգի գերմանական հպատակութիւն խնդրած է, որոնց 247ը՝ Ֆրանսացի։

ԵԳԻՊՏՈՍի Նախագահ Նասրի հրաւէրին բնդառաջելով Ֆրանսայի յառաջդիմական կուսակցութեան նախագահ փիէր Քոթ Գահիրէ գնաց։

ԼԵՀԱԿԱՆ Խորհրդարանի հինգ անդամներէն բաղկացած պատուիրակութիւն մը, որ քանի մը օրէ ի վեր Լոնտոն կը գտնուի, վարչապետ երթալէ առաջ Փարիզ պիտի հանդիպի։

ԹՈՒՐՔԻՈՅ խորհրդարանը 133ի դէմ 403 ձայնով վաւերացուց կառավարութեան ծրագիրը։

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ երկու նաւատորմիղներ ապատութիւն ընտրած են ու ներկայիս կը գտնուին Ուոչինկթըն։

ՓԵՇՏԱՅի Ֆրանսական հաստատութեան քարտուղարուհին՝ Տիկին Չալբօ ձերբակալուած է հունգարական կառավարութեան որոչումով։

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԳԵՐՄԱՆԻԱ պիտի հասնին չուտով, ամերիկեան նոր օդանաւներ՝ ժամական 1600 քիլոմեթր արագութեամբ։

ՍԱԿԱՐԱՆ (Դեկտ. 5).— Զոյլ ոսկի 577 հազար, նախորդէն 4220, դուից· 4020, անդլ· 5020, քսան տոլարնոց 20·320, թղթադրամ (զուգահեռական չուկայ) լիրեթերին 1320, տոլար 495, դուից· 118·50, պելժ· 9·85, լիր 0·77, մարք 118·50, քրուզերօ 5·25։

ՆՈՒԻՐ

Պ. Յովհ· Թոսթալեան «Յառաջ»ի մէջ ցոյով հազար Ֆրանք կը նուիրէ Ֆ· Կ· Նաչի Փարիզի կարօտեալներուն։

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

ՎԱՒԱՆՍի Ազգ· Մխիթարեան եւ Հոգաբարձութիւնը կը ծանուցանէ թէ այս կիրակի առաւօտ հանդիսաւոր Հոգեհանդիստ պիտի կատարուի Հայ Առաք· Ս· Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ՝

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿի

մահուան չորհամեակին առթիւ։

Ժողովուրդը կը հրաւիրուի իր ներկայութեամբ յարգել երջանկայիշատակ Կաթողիկոսին յիշատակը։

ՄԱՐՍԷՅԼԻ

Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

Դեկտեմբեր 14ին, Շաբաթ երեկոյ ժամը 21էն միչեւ լոյս Ալհամպրայի մէջ

Մանրամասնութիւնները մօտ առենէն։

Imprimé sur les presses du journal HARATCH
17, Rue Bleue, 17 — PARIS (9e)

"ՅԱՌԱՋ"Ի ԳԻՆԸ

Կառավարութեան եւ մամուլի սեւեռի – եալի որոշումով, բոլոր տեղական օրաթերթերու գինը պիտի բարձրանայ 20 փրանկի։

ՅԱՌԱՋ եւս պարտաւոր է հետեւիլ այս կարգադրութեան, մանաւանդ որ թուղթի բարձրացումը մեծ դժուարութեանց առջեւ կը դնեն թերթիս վարչութիւնը։

ՅԱՌԱՋի նոր գիները պիտի ըլլան։ — Հատավաճառ՝ 15 փրանկ, տարեկան բաժնեգիր (Ֆրանսա եւ գաղութներ) 3500 փրանկ, վեցամսեայ 1900 փրանկ, արտասահման 4000 փրանկ։

ՄԻՆՉԵՒ ԴԵԿՏԵՄԲԵՐ 31 մեր բաժանորդները կրնան օգտուիլ հին սակէն։

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՄԱՐՍԷՅԼ

"ՀԱՄԱԶԳԱՅԻՆ"Ի

ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՆՆԵՐԸ

Նիթ՝ ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ

(Ծննդեան 60ամեակին առթիւ)

Այս երկուշաբթի իրիկուն Պամոնի և – կեղեցւոյ սրահը, ժամը 21ին։

Կը նախագահէ՝

Պ· ՄԻՀՐԱՆ ԱՆԴՐԻԱՍԵԱՆ

Կը խօսի՝ ԿԱՐԱՊԵՏ ՓՕԼԱՏԵԱՆ

Կ'արտասանեն՝ Օր· Մ· Իշխանեան եւ Պ· Յովհ· Տէր Վարդանեան։

Զուարճ՝ Յ· Իշխանեան եւ Հ· Գըլըճեան։

Ընկերվարութիւն Հայաստանին եկած նոր երգապնակներու (Զարենցի «Գովք Հայաստանին» եւ ուրիշներ)։

×

Նոյն երեկոն Զօրեքշաբթի իրիկուն, Սէն Լուի մէջ։

ՀՐԱՒԻՐ ՎԻՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ

Այլեւս թանգարան պիտի դրուին հին պէնքերը: Հրթիռներն ու հիւլէական եւ ջրածին ռումբերն են որ չարժման մէջ պիտի դրուին նոր պատերազմի մը պարագային: Ո՛չ մէկ ճիւղի մէջ մարդկային ստեղծագործ միտքը այնքան յառաջդիմութիւն արձանագրած է տասը տարիէ ի վեր, որքան կարճ ատենէն մեծ թիւով մարդիկ սպաննելու եւ տասնեակ հազարաւոր քիլոմեթր տարածութեան վրայ անզարմանալի աւերներ գործելու ճարտարարուեստին մէջ:

Փարիզի ժողովը կը բացուի արեւմտեան աշխարհին համար չատ աննպաստ պայմաններու մէջ: Խորհրդային գիտութեան զերակայութիւնը մեծապէս կը մտահոգէ Ատլանտեանի ուխտակիցները, որոնք պիտի պահանջեն Ամերիկայէն, որ ջնջեն Մաք Մահոնի օրէնքը եւ դաշնակիցներուն հաղորդեն հիւլէական եւ այլ դիտական նորութեանց գաղտնիքները :

Արեւմուտքը խորհրդային վտանգին դէմ պաշտպանուելու համար պարտաւոր է սերտացնել յարաբերութիւնները դաշնակիցներու միջեւ եւ մոռնալ մանր մունը վէճերը :

Սուէզի դէպքը 1956ի աշնան կարեւոր ճեղք մը բացած էր Ատլանտեանի ուխտակիցներուն միջեւ: Մ. Նահանգները ծառացած էին Անգլիոյ եւ Ֆրանսայի դէմ: Թունուզին զէնք հայթայթելու համար Ամերիկա եւ Անգլիա միացած էին՝ ընդդէմ Ֆրանսայի: Բարեբախտաբար Ալժէրիոյ հարցին մէջ սրբագրելով իրենց սխալը՝ անոնք կանգնեցան իրենց վաղեմի ու հաւատարիմ դաշնակցի կողքին :

Վտանգուած է նաեւ Պալքանեան Ուխտը: Կիպրոսի վէճը որ կրկին ՄԱԿի սեղանին վրայ է, կը չարունակէ թունաւորել զայն, կը զրկէ Թուրքիոյ յարաբերութիւնները: Իսկ երրորդ ուխտակիցը՝ Եուկոսլաւիա որ չատ մօտեցած էր արեւմուտքի, հետզհետէ կը հեռանայ անկէ եւ կը սիրաբանի Մոսկուայի հետ: Մարեշալ Թիթօ պաշտօնապէս յայտարարեց թէ կը հրաժարի ամերիկեան օժան – դակութենէն՝ նուաստացուցիչ պայմաններու չենթարկուելու համար :

Մեծ յոյսեր դրուած են Փարիզի խորհրդաժողովին վրայ՝ ամրապնդելու համար արեւմտեան դաշնակիցներու ճակատը :

Առանց այդ ամրապնդումին, միշտ վտանգուած պիտի մնայ աշխարհի խաղաղութիւնը :

ՀՐԱՆՏ – ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՆԵՐՔԻՆ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ՀՈԳԵՐ

—o—

ՋՕՐ. ՏԸ ԿՈՉ ՏԵՄՆՈՒԵՑԱՒ ՄԱՌԵՇԱԼ ԺԻՒԿՈՒՆԻ ՀԵՏ

Ինչպէս գրած էինք, առջի օր Նախարարաց ժողով մը պիտի գումարուէր, քննելու համար օրակարգի հրատապ հարցեր : Ժողովը օր մը յետաձգուեցաւ: Երէկ, յաջորդական երկու նիստեր պիտի գումարէին նախարարները, զբաղելու համար պիւտճէի եւ Հիւս. Ափրիկեան հարցերով: Ժողովը կրնայ չարունակուիլ նաեւ այսօր՝ չորեքշաբթի :

Հակառակ անոր որ Ընկերվարականները որեւէ տագնապի առջեւ կը մերժեն հրաժարիլ՝ պետական պաշտօնեաներու ամսականներուն վրայ իրենց պահանջած յաւելումէն, կառավարութիւնը կը մտածէ նախ 54 միլիառի բացը դոնել: Այս ձեւով, դժուար թէ կարելի ըլլայ լուծել պետական պաշտօնեաներու աշխատավարձի յաւելման խնդիրը: Մանաւանդ՝ երբ Ատլանտեան Ուխտի ժողովին թուականն ալ կը մօտենայ (Դեկտ. 16): Փարիզի մէջ տեղի ունենալիք «գագաթ»ներու այս հանդիպումը, ապահովաբար պատճառ մը ըլլայ, որ պիւտճէի հարցին քննութիւնը յետաձգուի. հետեւաբար՝ կարելի պիտի չըլլայ նաեւ յատակ որոչում մը տալ պաշտօնեաներու աշխատավարձին մասին:

Նախարարները մտահոգող միւս հարցն է Ֆրանքեւթունուգեան եւ Ֆրանքեւալժերիական տարակարծութիւնները: Մինչ ՄԱԿի առջեւ կը քննուի Ալժերիոյ պարագան, Ֆրանքեւթունուգեան խորհրդակցութիւն մը անխուսափելի կը նկատուի : Կառավարութիւնը կ'աշխատի, որ Հիւս. Ափրիկէի երկիրներուն հետ դժուարութիւնները հարթուին:

Վարչապետ Կայեառի դժուարին դոր – ծերէն մէկն ալ Ատլանտեան Ուխտին ներկայացուելիք Ֆրանսական թղթածրարին պատրաստութիւնն է :

Նախարարաց յառաջիկայ ժողովն ալ պիտի զբաղի այս հարցով: Ծանօթ է, որ Ատլանտեան Ուխտի երկիրներուն պետական դեկավարներու հանդիպումին պիտի քննուին մասնաւորապէս դինուորական հարցեր :— Հիւլէական զէնքերու պատրաստութիւն, Ուխտին անդամ երկիրներու կողմէ միջերկրային հրթիռներու դործածութիւն, եւ– րոպական երկիրներու մէջ հեռաւար (թէլէկիտ) հրթիռներու արձակարաններու կառուցում, եւն. :

Մինչ վարչապետ Կայեառ այս ուղղութեամբ կառավարութեան տեսակէտին պատրաստութեան վրայ կ'աշխատի, անդին զօրավար Տը Կոլ տեսակցութիւն մը ունեցաւ Մառեշալ Ժիւկինի հետ, ապահովարար, զինուորական երկու դեկավարները խօսակցած են Ատլանտեան Ուխտի ժողովին մէջ քննուելիք ռազմական հարցերուն չուրջ :

Օր ը Օրէն

ԱԶՆՈՒԱԿԱՆ ՄԱՐԴԻԿ ...

—o—

— Ո՞ւր ես, Տիկին Շոֆոլա, մէջտեղ – ուաւիքը չկաս... Իմացայ որ ամառը Քալիֆորնիա գացեր էիր, հանդերձ ընտանեօք ...

— Այո՛... երկու ամիսի չափ այնտեղ էինք... Յետոյ, Ֆրանսա անցանք ... Նիս, Քան, Փիռենէ... Սմանչելի ժամանակ անցուցինք: Մոնթէ Քարլոյի խազինօն ալ տեսանք ... Ան իմ՛նչ փառաւոր տեղ է... Բայց, մարդու բան չըսես, համար տոլար կորսնցուցինք մէկ, երկու վայրկեանէն ...

— Ամա՛ն դուն ալ, հոգիդ ողջ ըլլայ .. Աղաղ ջուրի պէս դրամ կը վատնի ես – դեր ...

— Այո՛, շիտակ է ... Է՛հ, դո՞ւն իմ – տոր ես... Այս տարի ալ Ֆլորիտա պիտի երթա՞ք ...

— Կարծեմ պիտի երթանք ... Ա՛լ երկուքս ալ անանկ տարիքի մը հասեր ենք որ ձմեռները ցուրտ տեղեր չենք կրնար մնալ... Բայց, Կաղանդէն ետք պիտի երթանք ...

— Կաղանդ ըսիր միտքս ինկաւ: Այս տարի, մերինը միտքը դրեր է որ աղջկանս *վիլօն* մը առնէ, տղուս ալ *Քրայսլըր* մը...

— Բեզի՞ ինչ պիտի առնէ ...

— Մատանիի մը պէտք ունիմ: Սանկ ուր, սասը կարատնոց բան մը...

— Ըսէ՛ թող առնէ... Մերինն ալ ինծի քատիլյաքմը նուիրելու միտք ունի եղեր.. Հարսիս բան մը տալ կ'ուզեմ/ *Քրիսմըսի* առթիւ... Ի՛նչ առնեմ, չեմ գիտեր... Ամէն բան ունի ...

— Չէ՛ մը տուր, լմնինայ երթայ... Ամէնէն դիւրին գործն է:

— Ես ալ այդպէս կը կարծեմ :

— Շատ լաւ աղջիկ է... Տղո՞ւս ինչ առնեմ... Ի՞նչ կ'ըսես անոր ալ չէ՛ մը տա՞մ ...

— Տո՛ւր, անշուշտ... Ես ալ նուէրներ առնելու եմ ասոր անոր: Անցեալները վեր վար հաշիւ մը ըրի, երկու հազար տոլարի մը պէտք ունիմ ...

— Եթէ այդքանով կ'ազատիս, բախտաւոր ես...

×

— Սօնա, այս շաբթու ժողով մը ըներ՞նիք ...

— Այո՛, շատ ատեն չունինք ... Աչխդ բանաս գոցես՝ Կաղանդ, Ծնունդ ... Անցեալ տարի ուշ շարժեցանք ... Գի – տե՞ս ինչ ...

— Ի՞նչ...

— Այս տարի խումբ խումբ տուները պտտելու ենք որ ինչ մը աւելի ժողվենք.. Սանկ երեխական հոգի ...

— Ես պատրաստ եմ... Տունէ տուն պտտելով առիթը կ'ունենանք մեր ընկերուքեանն ցպատակները երկարօրէն բացատրելու ...

— Առաջ հարուստներո՞ւն դուռը պիտի զարնենք թէ.ո՛չ – հարուստներուն :

— Հարուստները, աս մէկ, երկու ամիսը շատ զբաղած կ'ըլլան... Մենք ոչ–հարուստներուն կը դիմենք ...

— Շատ ճիշդ ըսիր... Հարուստին խիղճը միշտ արթնայ, որքը անօթի կը մեռնի, Աստուած անպատաս ընէ մեր ազգին ո՛չ – հարուստները, ազնուական մարդիկ, ամէնին ալ ...

ԵՒՐՈՊԱՑԻ

ԱԼԺԵՐԻՈՅ ՀԱՐՑԸ ՄԱԿԻ ՄԷՋ

Ինչպէս գրած էինք, չաբաթներէ ի վեր Ալժերիոյ հարցը կը քննուէր ՄԱԿի քաղաքական յանձնախումբին կողմէ: Ծանօթ է, որ այս յանձնախումբին մէջ կարելի չեղաւ հարցին լուծում մը դտնել : Այսուհանդերձ մեքսիկեան եւ այլ պատուիրակութիւններ կ'աշխատին ընդունելի առաջարկ մը պատրաստել:

Ալժերիոյ խնդիրը ներկայացուեցաւ ՄԱԿի համագումարին, ուր Մարոքի թագաւորը խօսք առաւ.— խորապէս յուզուած ենք, տեսնելով որ մեր դրացի Ալժերիոյ մէջ կը չարունակուի պատերազմ մը, որ հետզհետէ աւելի մահաւդիչ կը դառնայ: Մուհամէտ Ե. մաղթեց, որ խորհրդակցութիւններ սկսին երկու կողմերու միջեւ, ՄԱԿի սկզբունքներուն համաձայն հարցը լուծելու համար: Մարոքի թագաւորը իր ճառին մէջ նպաստաւոր կարծիք յայտնեց ժողովուրդներու ինքնավարութեան իրաւունքին, յուսալով որ խմաստութեամբ լուծուի Ալժերիոյ ցաւալի հարցը, արեան հեղեղին վերջ մը դնելու համար :

Բայց ասոի Մուհամէտ Ե. վախք յայտնեց, որ ՄԱԿը ըլլայ բոլոր ժողովուրդներուն համար հանդիպումի վայր մը: Մարոքի թագաւորը իր ճառին մէջ երբեք չանդրադարձաւ Իֆնիի դէպքերուն, որոնք հետզհետէ մտահոգիչ դառնալ սկսան, սպանական մարոքանաւերու Մարոք երթալէն ի վեր :

ԱԼՖԻ ՔԱՄԻ որ ներկայիս Սթոկհոլմ կը գտնուի, Նոպէլեան մրցանակը ստանալու համար, մամուլի ասուլիս մը տուաւ եւ Ալժերիոյ մասին խօսելով, ըսաւ թէ հարցը լուծելու համար արաբ եւ ֆրանսացի անձնաւորութիւններու դաշնակցութիւն մը պէտք էր կազմել: Ջուլի – ցերիոյ նման դաշնակցութիւն մը կարելի չէ, ըսաւ ֆրանսացի դրադէտը :

ԱԼԺԵՐԻՈՅ մէջ վերջին երկու օրերու ընթացքին 270 ապստամբ սպաննուեցաւ ու 70 հոգի ձերբակալուեցաւ :

"ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՐՁԱԿԱՐԱՆՆԵՐԸ ԿՐՆԱՆՔ ՔԱՆԴԵԼ"

Կ'ԸՍԷ Ա. ՄԻԿՈՅԵԱՆ

—o—

ՋՕՐ. ՆՈՐՍԹԱՍ.— ԱՆԿԱՐԵԼԻ Է

Յունաստանի յառաջդիմական կուսակցութեան պաշտօնաթերթը ութ սիւնակի վրայ դրուած խորագիրով հրատարակած է Ա. Միութեան փոխ – վարչապետ Ա. Միկոյեանի յայտարարութիւնները՝ իր թղթակիցին :

Նախ՝ Միկոյեան ըսած է, թէ Յունաստան ոչ մէկ վտանգի ենթակայ է, Ալպանիոյ, Պուլկարիոյ եւ Ռումանիոյ կողմէ.— Այս երկիրները, ըսած է ան, ինչպէս ընկերվարական որեւէ երկիր, խաղաղութեան կողմնակից են եւ չեն սպառնար որեւէ այլ երկրի... Յունաստան եթէ չէզոք քաղաքականութեան մը հետեւի, պիտի ստանայ Ա. Միութեան օժանդակութիւնը, որ աւելի նուազ պիտի չըլլայ Սուրիոյ ու Եգիպտոսի տրուած օգնութենէն: Այս օժանդակութիւնները կ'ըլլան, որպէսզի որեւէ վտանգի մը պարագային՝ իւրաքանչիւր երկիր պաշտպանէ իր անկախութիւնն ու հողային ամբողջականութիւնը: Ա. Միութիւն, չանդիտանար, որ կրնայ յարձակում մը կրել իր սահմանագլուխներուն չուրջ հաստատուած ամերիկեան հրթիռներու արձակարաններուն կողմէ: Այսուհանդերձ, մենք գիտենք թէ ո՛ր կէտերուն վրայ հաստատուած են այդ արձակարանները եւ այն պարագային՝ երբ Միացեալ Նահանգներ յարձակում մը դործեն Ռուսիոյ վրայ, հեռաւար հըր – թիռներու այդ բոլոր խարխխները պիտի քանդենք, ո՛ւր որ ալ գտնուին անոնք :

Միւս կողմէ, Ատլանտեան Ուխտի ընդհանուր հրամանատար զօրավարնորսթատ յայտարարեց, թէ պատերազմի մը պարագային անկարելի է որ Ա. Միութիւն կարենայ փճացնել ամերիկեան հազարա–

(Շարունակութիւնը կարդալ .Դ. էջ)

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՆՈՒԻՐԱԿՆԵՐ

(1936 ԱՊՐԻԼ 8 ԵՒ 1957 ՀՈԿՏ. 17)

Ապրիլ քան քանի տարի առաջ էր, Ամերիկայի մեր եկեղեցական տաղնապի փոթորկայոյզ օրերուն, 1936 Ապրիլ 8ին, երբ Ամերիկա ժամանեց Կաթողիկոսական Նուիրակ Գարեգին Արքեպիսկ. Յովսէփեան :

Իր երկար ճամբորդութեան ընթացքին, Նուիրակը ուր որ կանգ առաւ, Պուլկարիա, Ռումանիա, Ֆրանսա, Եգիպտոս, Պաղեստին, Իրաք եւ Յունաստան, հաչտութեան, համերաշխութեան եւ միաս-նականութեան մասին խօսեցաւ: Ու երբ, պառակտումէն աւելի քան երեք տարի ետք, Ամերիկա ժամանեց, սիրոյ ու խաղաղութեան ձիթենին ձեռքը, խանդավառութեամբ ողջունեցինք իր մուտքը մեր մէջ, այն հաստատ ակընկալութեամբ, որ պառակտում, վէճեր ու պայքարներ, քէն ու ատելութիւն, իբր տխուր փակագիծ մը մեր կեանքին մէջ, պիտի դառնան այլեւս անցեալի սեփականութիւն, եւ մենք նոր-բէն ձեռք պիտի մեկնենք իրարու :

Այս հաւատքն ու համոզումը՝ նաեւ այն պատճառով, որ այդ օրերուն Լուսաւորչի դահին վրայ բազմած էր մաքուր, անկաշառ, արի ու մեծ հայրենասէր Վեհափառ Տէրն Ա., որ յետոյ խեղդամահ եղաւ բոլշեւիկներու ձեռքով, դառնալով Հայ. Եկեղեցիին Մեծ Նահատակը: Իսկ իր Նուիրակը՝ Գարեգին Արքեպիսկ., պատկերն էր ե. դարու Ղեւոնդ Երէցներու, թէեւ դրքի ու դրչի մեծարժէք մշակ, բայց 1918 Յունուար Մայիսեան օրերուն, եղաւ նաեւ զինուոր մը, վազեց ռազմադաշտ՝ դէպի Սարդարապատ, ապա՝ տարիներ ետք՝ դէպի Կարս, մեր հայրենիքի ու հաւատքի մեծ թշնամի Թուրքերուն դէմ կռուելու համար :

Դժբախտաբար, չարդարացան մեր յոյսերը: Եւ ասոր պատճառը ոչ Տէրն Ա. էր, ոչ ալ իր Սրբազան Նուիրակը, այլ այն խայտարղէտ բազմութիւնը— ամէնքս, հնչակ ու յառաջդիմական, որոնք, իրրեւ վարձկանները բոլշեւիկ իշխանութեան, ոչխարային համակերպութեամբ կը կատարէին Մոսկուայի իրենց տէրերուն կամքը: Իսկ այդ կամքն էր՝ մշտապէս բաժան ու պառակտուած պահել գաղութներն ու Հայ. Եկեղեցին :

Նուիրակ Գարեգին Արքեպս. Յովսէփեան, հազիւ նաւէն դուրս եկած, չըրջապատուեցաւ «Հայաստանասէր» կոչուած հոսանքին կողմէ: Անոր թոյլ չըրջուեցաւ, որ տեսակցութիւններ ունենայ ուրիշ հոսանքի կամ օրինաւոր Ազգ. Կեդր. Վարչութեան ներկայացուցիչներուն հետ, որոնք ուղեցին անոր այցի երթալ եւ Ամերիկա ժամանման առթիւ բարի գալուստ մաղթել: Մինչ «Բանուոր»ի ու « Պայքար»ի Թղթակիցները ամէն օր տեսակցութիւններ կ'ունենային Նուիրակին հետ, «Հայրենիք»ի Թղթակիցը հապճեպ յայտնեցաւ Ապրիլ 20ին միայն տեսնել զայն եւ մեզ չհաղորդող կարգ մը հարցերու մասին պատասխաններ ստանալ իրմէ :

Նուիրակի ժամանումէն առաջ ու մանաւանդ յետոյ, հակառակորդ մամուլի օրկանները՝ «Պայքար», «Երիտ. Հայաստան», «Բանուոր» ամէն օր անէծք կը կարդային անոնց գլխուն, որոնք միամտաբար Նուիրեան մասին կը խօսէին ու կը գրէին: Զափազանց բնորոշ էր այն տեսակցութիւնը, զոր ունեցաւ Նուիրակին հետ «Պայքար»ի Թղթակիցներէն մէկը, Բողոքական Եկեղեցիի զաւակ «պատուելի» Տիքիճեան, որուն Թղթակցութիւնը, վերջին վար առելութիւն ու թոյն, լոյս տեսաւ նոյն թերթի Ապրիլ 17ի թիւին մէջ :

Մինչ Նուիրակը խոր ցաւով ու յուզումով մատնանշած էր Հայ Եկեղեցիի անբաղձալի վիճակը եւ չեչտած, որ միահամուռ ջանքերով իրերհասկացողութիւն պիտի ստեղծուի, բողոքական Տիքիճեան դիտել տուած էր, թէ «դեռ տաք են Մեծ Նահատակին մարմնին վէրքերը » եւ թէ «Հայաստանեայց Առաքել. Ս. Եկեղեցիի բարձրաստիճան պաշտօնեաները չեն կրնար այնքան թեթեւօրէն դարձնել մեր պատմութեան սեւագոյն էջը եւ ընել արուեստական կարգադրութիւններ » :

Եւ բողոքական Տիքիճեանն ու իր բոլշեւիկ գործակիցները յաջողեցան, որ Սրբազան Նուիրակը չկարենայ «արուեստական» կարգադրութիւններ ընել, այլ պահէր «վէրքը բաց ու տաք», որպէսզի պայթէր վերջապէս: Այդ օրերուն Տիքիճեանները եւ այս օրուան Գալֆայեաններըը չէին մոռնար «իրենց նահատակն ու անոր վէրքերը » բայց ղիւրութեամբ մոռցած էին ամէնաւար ծանօթ ոճրագործի մը՝ ձան Նազարեանի Փրաւիտեանի մէջ օրը ցերեկով բացած վէրքերը, որոնց դոհ գնաց տարաբախտ Ղեւոնդ վրդ. Մարդուկէսեան :

×

Հոկտ. 17ին, Ամերիկա ժամանեց ուրիշ բարձրաստիճան հոգեւորական մը, յանձին Բարեչնորհ Տէրն Արք. Բարոյեանի, որ Նուիրակն է Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետ Վեհ. Ջարեհ Ա.ի փայտլեանի:

Պոսթընի մէջ ան ընդունուեցաւ խուռն ու խանդավառ բազմութեան մը կողմէ : Ան արդէն իր առաջին Պատարագը մատոյց Հոկտեմբեր քսանին եւ կատարեց առաջին Օծումը Մեծադոյն Պոսթընի Ս. Մատթէոսեան եկեղեցիի: Նորակառոյց եկեղեցիի կամարներուն ներքեւ հաւատացեալներու մեծ բազմութիւն մը խոր դոհունակութեամբ ու ցնծութեամբ լսեց Տանն Կիլիկիոյ Հայրապետ Ջարեհ Ա.ի անունը: Լսեց նաեւ անոր առաջին կոնդակը, որ ի լուր աշխարհի կը յայտարարէր, թէ Ամերիկայի մեծ թեմը կ'առնէ իր կաթողիկոսական իշխանութեան ներքեւ :

Լուսաւորչէն մինչեւ այսօր մենք ունեցած ենք Ամենայն Հայոց Կաթողիկոս : Բայց մեր Ամենայն Հայոցը երբեք մէկ վայրի հետ կապուած չէ եղեր: Մեր քաղաքական իշխանութեան կեդրոնը եղած է նաեւ կեդրոնը քրիստոնէական Հայրապետութեան: Եւ այսպէս, մէկ օր ան եղած է էջմիածինը, ապա՝ Դուինը, Ալթամարը, Անին, Սիսը, Եւայլն: Եւ լաւ է, որ այդպէս եղած է: Այլապէս, թշնամին մեր երկրին տիրելէ, մեր քաղաքական իշխանութիւնը խորտակելէ ետք, խորտակած պիտի ըլլար նաեւ մեր եկեղեցիի անկախութիւնը: Մինչ մենք, դարերու ընթացքին, հայրապետանիստ նոր Աթոռներ ունենալով, պահէր ենք մեր եկեղեցիի անկախութիւնը:

Ցաւալին այն է, որ լման 25 տարի մենք մնացինք օդին մէջ կախուած ; միամտօրէն հաւատալով, որ էջմիածնի մէջ Լուսաւորչի Գահին վրայ բազմած մեր բարձրաստիճանները պիտի դիտնան պահել իրենց անկախութիւնը: Զանդրադարձանք, որ Զէօրէքճեանները եւ Պալճեանները չեն կրնար Մօրէն Առաջին ըլլալ . . . :

Զարեհ Ա. Հայրապետի կոնդակը լսելու առեն , ակամայ յիշեցի էջմիածնէն 1948 թ.ին Նոր Տարուան առթիւ Ամերիկա ղրկուած մէկ ուրիշ կոնդակ, ուր մեղի՝ Հայ. Եկեղեցիի « խորթ ու անհարազատ» զաւակներուս մասին դրուած էր հետեւեալը .

— « Հայ Ազգային Եկեղեցւ դարաւոր անցեալը ճշմարտապատում վկայաբանում է, որ վաղ թէ ուշ, անջատեալներին սպասում է դաւանափոխութեան եւ ազգային դիմազրկման անփառունակ վախճանը: Իսկ Հայաստանեայց Ազգային Եկեղեցին, ազատագրուելով հոգւով անհարազատ տարրերից, է՛լ առաւել հաստատուն եւ վստահ շարունակել է իր բազմադարեան փառապանծ ուղին » :

Մինչ 17րդ դարու սկիզբը, Լեհաստանի մէջ, հայ գաղութը պառակտած եւ դայն դէպի քայքայում ու կործանում առաջնորդած ամբարտաւան ու ամբարիշտ Նիկոլ Թորոսովիչները կրնային տառապրել այսպիսի կոնդակ մը: Նիկոլները թաղեցին Լեհաստանի չէն ու բարգաւաճ հայ գաղութը : Բայց մեր օրերու Նիկոլները չհասան ու պիտի չհասնին երբեք իրենց չար նպատակին :

Հակառակ դաւերու եւ ահաւոր սադրանքներու, ամերիկահայ գաղութը մնաց արի, զգաստ եւ, յանուն Հայ. Եկեղեցւոյ չհերուն, պայքարի առաջին դիծերուն վրայ: Ան ոչ միայն չդիմեց դէպի « դաւանափոխութիւն ու ազգային դիմազրկում », այլ, ընդհակառակն, իրրեւ արթուն պահակ, միշտ ալ իր խարազանը չշեղուց երեսին անոնց, որոնք չարու-նակ Ազգ ու Եկեղեցի կը հոլովէն, բայց իրապէս կը փորեն հիմերը Ազգի ու Եկեղեցիի :

Վեհ. Ջարեհ Ա. Կաթողիկոս եւ իր արժանաւոր Նուիրակը՝ Բարեչն. Տէրն Արք. Բարոյեան, մեր առջեւ կը բանան նոր ու լուսաւոր հորիզոն մը: Կը մնայ որ դիտակցաբար կամ անդիտակցաբար, Ամերիկայի մէջ եւ դուրսը, Նիկոլ Թորոսովիչներու ճանկը ինկած ուրիշ հատուած մը օր առաջ իր դիրքը ճշդէ :

Մ. ՕԶԱՆԵԱՆ

ՕՐՈՒԱՆ ՇԱՐԺՈՒՄԻՆ ՀԵՏ

ԻՆՏՈՆԵԶԻԱ

ՆԵՐՔԻՆ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ

ՁԱԿԱՏՆԵՐՈՒ ՎՐԱՅ

Ինչպէս զրած էինք, կացութիւնը սկսած է ծանրանալ Ինտոնեզիոյ մէջ, ուր կէ պիտի արտաքսուին վաթսուն հազար Հոլանտացիներ: Երիտասարդ այս Հանրապետութեան վրայ ուշադրութիւն կեդրոնացաւ, երբ Նոյեմբեր 30ին մահափորձ մը սարքուեցաւ Նախագահ Սոքարնոյի դէմ: Հանրապետութեան Նախագահը ապահովութեամբ մահէ, սակայն 9 հոգի զոհուեցաւ ստոյգ մահէ, իսկ 150 հոգի վիրաւորուեցաւ: Այս պարագան ցոյց կուտայ, թէ երկրին մէջ հակամարտ ուժեր կան :

Քաղաքական խմբակցութեանց միջեւ տարակարծութիւններ գոյութիւն ունէին, արդէն, երբ անցեալ Մարտ 14ին կառավարութիւնը իր հրաժարականը կը ներկայացնէր: Տնտեսական անհամաձայնութիւններ կային, որոնք ստացան քաղաքական նկարագիր, պատճառ դառնալով որ 1955 Սեպտեմբերին կատարած առաջին ընտրութիւններէն ետք կազմուած առաջին կառավարութիւնը տապալի :

Նոր կառավարութեան կազմութիւնը դժուարութեանց բախեցաւ. համայնավարներու մասնակցութեան դէմ զօրաւոր չարժում մը կար, որուն հետեւանքով համայնավարները սպառնացին ընդհանուր գործադուլ մը չղթայազերծել :

Խորհրդակցութիւնները ի դերեւ ելան, որմէ ետք Հանրապետութեան Նախագահը հակաստհմանադրական միջոցներու դիմելով՝ ինք կազմեց կառավարութիւնը : Նախագահին որոշումով, դահլիճին կողքին կազմուեցաւ նաեւ Ազգ. Խորհուրդ մը՝ զանազան կազմակերպութեանց ներկայացուցիչներով : Քննադատութիւններուն պատասխանելով՝ Սոքարնօ ըսաւ թէ չէր կրնար անտեսել վեց միլիոն համայնավար քուէները . . . :

Ազգ. Խորհուրդին կազմութիւնը ընդդիմադրութիւնը զօրացուց: Մահմետական կանոնները եւ յատկապէս նախկին փոխնախագահ Հաթա համայնավարներու որեւէ ձեւի մասնակցութեան դէմ էին: Այս

դեցիի :

Վեհ. Ջարեհ Ա. Կաթողիկոս եւ իր արժանաւոր Նուիրակը՝ Բարեչն. Խորէն Արք. Բարոյեան, մեր առջեւ կը բանան նոր ու լուսաւոր հորիզոն մը: Կը մնայ որ դիտակցաբար կամ անդիտակցաբար, Ամերիկայի մէջ եւ դուրսը, Նիկոլ Թորոսովիչներու ճանկը ինկած ուրիշ հատուած մը օր առաջ իր դիրքը ճշդէ :

Մ. ՕԶԱՆԵԱՆ

ԵՂԻՇԷ ՋԱՐԵՆՑ

(ԾՆՆԴԵԱՆ ՅԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)

Ունի մէկէ աւելի քերթուածներ, որոնք ինքնակենսագրութիւններ են, բանաստեղծօրէն տրուած :

Մեր այդ վիտցածներուն վրայ կուգան աւելնալ նոր ծանօթութիւններ, նոր վկայութիւններ :

Զէ՞ք կարծեր թէ Զարենցի տաբօրինակ ճակատագրին մաս կը կազմէ նաեւ սա տաբօրինակ պարագան, որ նոյն այս տարուան ընթացքին, իր ծննդեան վաթսունամեակին, զանազան վայրերու մէջ, առանց կանխամտածումի, լոյս կը տեսնեն ուսումնասիրութիւններ :

Այնպէս կը պատահի որ այս տարուան ընթացքին լոյս կը տեսնէ ողբացեալ Վահան Նաւասարդեանի հրաշալի մէկ գործը, Զարենցի մասին: Դարձեալ այնպէս կը պատահի որ այս տարուան կը զուգադիպին «Լէ Քայիէ տիւ Սիւտ»ի թարգմանութիւններն ու ուսումնասիրութիւնը:

Ու նաեւ կը բացուին լեզուները Հայաստանի մէջ: Ի՛նչ որ պահած էինչատեր քսան տարիէ ի վեր իրենց սրտերուն մէջ, կը պարպեն այսօր: Ինչէ՛ր, ինչէ՛ր կը պատմեն: Իր գրչի առաջին ընկերներէն մինչեւ աշակերտները: Կուսակցականը, դերասանը, նկարիչը ու մանաւանդ գրականներն ու բանաստեղծները: Սիպերիայէն վերադարձած՝ Գուրգէն Մահարին, Վաղարշակ Նորենցը, Հմայեակ Սիրասը, Գեղամ Սարեանը, Արաքսին, Հ. Գրիգորեանը, Զարեանը (Ռուբէն Զարեանը, եւ ոչ թէ Նայիրի Զարեանը, միակ համբրը, այն որուն վրայ կը ծանրանան մեծադոյն մեղքերը, ոչ միայն Զարենցի դժբախտութեան, այլ եւ միւս անհետացողներուն) :

Այդ բոլոր յուշերը, վկայութիւններն ու վերլուծումները կը լուսաւորեն Զարենցի տաբօրինակ անձը, կը բացատրեն նաեւ հարցեր, զորս կը դուշակէինք, բայց ճշդիւ չէինք դիտեր: Ամէն պարագայի մէջ « Տանթէական Առասպել»ի հեղինակը այդ վկայութիւններու լոյսին տակ, մեզի կը ներկայանայ աւելի մեծցած, անհունօրէն աւելի համակրելի :

Կ'ուզեմ այստեղ արձանագրել անոնցմէ քանի մը հատը :

Բոլոր վկաներն ալ համաձայն են էջի մը չուրջ: Այն թէ ոչ միայն ամէնէն օժտուածն էր Զարենցը, այլ նաեւ ամէնէն պատրաստուածը: Լաւատեղեակ էր հայ հին թէ նոր գրականութեան, ուսուցակա-նին նոյնպէս: Թարգմանութիւններով ծանօթ՝ նաեւ եւրոպական բոլոր գլուխգործոցներուն: Զարենցը եղած է խորհրդահայ գրականութեան իրական առաջնորդը, մղիչ ուժը:

Գրականութեան բոլոր մարզերուն, գործօն մասնակցութիւն բերած, փընտռած, սահմանած, բացատրած բանաստեղծութեան եւ առհասարակ արուեստի նոր ըմբռնումները: Նորերուն ուղեցոյց տուած, պաշտպանած տաղանդ ունեցողները: Իր քերթուածներուն մէջ մեծամիտ, ինքնահաւան կարծուղ այս բանաստեղծը, եղած է եղբայրական, անկեղծ, անաչառ ընկեր մը: Ամբողջ հոգիով նուիրուած հայ գրականութեան, տալու մը պէս ուրախանալով ուրիշներու յաջողութիւններով, նոյնիսկ իր հակառորդներուն : Ապրած է, պայքարած, մի միայն լաւ գրականութեան յաղթանակին ի խնդիր :

Ունեցած է բանաստեղծութեան խոր ըմբռնումը ու միշտ փնտռած նոր ուղիներ, արտայայտութեան նոր ձեւեր :

Առանց թերագնահատելու վաւերական հին արժէքները: Կը վկայեն թէ 1924ին Զարենցը կը պահանջէր վերհրատարակել Վարուժանը, Սիամանթօն, Մեծարենցը:

Գիտենք թէ որքա՜ն բարձր կը դասէր Նարեկացին, Բուլգակը: Ձիշ՝ կը դնահատէր Թումանեանը, Տէրեանը :

Ահա Թումանեանի մասին.

«Նա մեծ էր աւելի , քան եղաւ : — Երկրիմի նման ընդարձակ ,
Ովկեանի նման՝ իր ոգին ընդգրկել էր
կեանքը աւերգր :—
Եւ ոգու ափերին նստած՝ նա նայում էր
հայեացքով պայծառ
Եւ որսում էր երգեր ու խոհեր, եւ տեսնում էր չքնա՛ղ երազներ . . » :

Ահա ուրիշ քառեակ մը.

Նա մեծ էր հողո՛վ, արի՛ւնով : — Ար-
մատներ ուներ նա հողում :
Իր երգերը — գեղջուկ Նայիրցու բըր-
տիճով էր նա ողողում :
Հանճարեղ երգերում նրա — իր երկրի
արի՛ւն էր շողում :
Նա մեծ էր հողո՛վ, արիւնո՛վ .— Ար-
մատներ ուներ հողում :

Իսկ Տէրեանի մասին, հոս կ'ուզեմ արտագրել Ռուբէն Զարեանի վկայութիւնը: Ցատկանշական է ան շատ մը տեսակէտներով :

« Սեղանի վրայ մի տեար կար, որից Զարենցը գետհրատի փոքրիկ բլանկների վրայ ուսանաւորներ էր արտագրում : Հարցրի, թէ ինչ է անում եւ չէ՞մ կարող օգնել իրեն :

— Զէ՛ :

Ինչ յետոյ գլուխը բարձրացրեց :

— Տէրեան սիրո՞ւմ ես :

Զսպասեց պատասխանիս :

Կ. ՓՕԼԱՏԵԱՆ

(3 Շար.)

ԿՅԱՆՔԻՑ

Թիվ 19

ՎԱՎԻԿ ՂՎԻՃՅՂՅԱՆ

Ալսուհետև ամեն ինչ ինձ համար սկսեց ավելի ու ավելի ձանձրալի դառնալ: Ես ձեզատ էի տեսնում միայն ամեն կիրակի, երբ ես ու մայրիկս գնում էինք եկեղեցի: Իսկ այդ մի օրը, որ մենք կարող էինք միասին անցկացնել, մայրիկս ինձ ոչ մի տեղ չէր թողնում: Նա ասում էր, որ ես պետք է տանը մնամ և հոգ տանեմ տատիկիս մասին, որ նա հիվանդ է: Ես ինքս էլ գիտեի, որ տատիկս հիվանդ է, և ինձ ոչ մի հաճույք չէր պատճառում նրան հոգ տանելը: Ես ատում էի նրա ձեռքերի հոտը, նրա հագուստի հոտը, նրա սենյակի հոտը: Ես ատում էի նրա ձայնը, երբ նա ինձ հրամայում էր, թե ինչ անեմ: Ես ատում էի նրա ամբողջ էությունը: Ես ատում էի նրան, որովհետև նա ինձ ստիպում էր ամեն կիրակի տանը մնալ:

Ես ատում էի նաև մեր հարևանուհուն՝ տիկին Ռոզին, որովհետև նա միշտ ինձ էր նայում, երբ ես ու մայրիկս գնում էինք եկեղեցի: Ես ատում էի նաև մեր հարևանուհու աղջկան՝ Ռոզիին, որովհետև նա ինձ նայում էր, երբ ես ու մայրիկս գնում էինք եկեղեցի: Ես ատում էի նաև մեր հարևանուհու տղային՝ Ջեքին, որովհետև նա ինձ նայում էր, երբ ես ու մայրիկս գնում էինք եկեղեցի: Ես ատում էի նաև մեր հարևանուհու ամբողջ ընտանիքը, որովհետև նրանք ինձ նայում էին, երբ ես ու մայրիկս գնում էինք եկեղեցի: Ես ատում էի նաև մեր հարևանուհու շանը, որովհետև նա ինձ նայում էր, երբ ես ու մայրիկս գնում էինք եկեղեցի: Ես ատում էի նաև մեր հարևանուհու կատվին, որովհետև նա ինձ նայում էր, երբ ես ու մայրիկս գնում էինք եկեղեցի: Ես ատում էի նաև մեր հարևանուհու ձկնիկներին, որովհետև նրանք ինձ նայում էին, երբ ես ու մայրիկս գնում էինք եկեղեցի: Ես ատում էի նաև մեր հարևանուհու ծաղիկներին, որովհետև նրանք ինձ նայում էին, երբ ես ու մայրիկս գնում էինք եկեղեցի: Ես ատում էի նաև մեր հարևանուհու ամբողջ տունը, որովհետև նա ինձ նայում էր, երբ ես ու մայրիկս գնում էինք եկեղեցի: Ես ատում էի նաև մեր հարևանուհու ամբողջ փողոցը, որովհետև նա ինձ նայում էր, երբ ես ու մայրիկս գնում էինք եկեղեցի: Ես ատում էի նաև մեր հարևանուհու ամբողջ թաղամասը, որովհետև նա ինձ նայում էր, երբ ես ու մայրիկս գնում էինք եկեղեցի: Ես ատում էի նաև մեր հարևանուհու ամբողջ քաղաքը, որովհետև նա ինձ նայում էր, երբ ես ու մայրիկս գնում էինք եկեղեցի: Ես ատում էի նաև մեր հարևանուհու ամբողջ նահանգը, որովհետև նա ինձ նայում էր, երբ ես ու մայրիկս գնում էինք եկեղեցի: Ես ատում էի նաև մեր հարևանուհու ամբողջ երկիրը, որովհետև նա ինձ նայում էր, երբ ես ու մայրիկս գնում էինք եկեղեցի: Ես ատում էի նաև մեր հարևանուհու ամբողջ մայրցամաքը, որովհետև նա ինձ նայում էր, երբ ես ու մայրիկս գնում էինք եկեղեցի: Ես ատում էի նաև մեր հարևանուհու ամբողջ մոլորակը, որովհետև նա ինձ նայում էր, երբ ես ու մայրիկս գնում էինք եկեղեցի: Ես ատում էի նաև մեր հարևանուհու ամբողջ արեգակնային համակարգը, որովհետև նա ինձ նայում էր, երբ ես ու մայրիկս գնում էինք եկեղեցի: Ես ատում էի նաև մեր հարևանուհու ամբողջ գալակտիկան, որովհետև նա ինձ նայում էր, երբ ես ու մայրիկս գնում էինք եկեղեցի: Ես ատում էի նաև մեր հարևանուհու ամբողջ տիեզերքը, որովհետև նա ինձ նայում էր, երբ ես ու մայրիկս գնում էինք եկեղեցի: Ես ատում էի նաև մեր հարևանուհու ամբողջ անսահմանությունը, որովհետև նա ինձ նայում էր, երբ ես ու մայրիկս գնում էինք եկեղեցի: Ես ատում էի նաև մեր հարևանուհու ամբողջ հավերժությունը, որովհետև նա ինձ նայում էր, երբ ես ու մայրիկս գնում էինք եկեղեցի: Ես ատում էի նաև մեր հարևանուհու ամբողջ ժամանակը, որովհետև նա ինձ նայում էր, երբ ես ու մայրիկս գնում էինք եկեղեցի: Ես ատում էի նաև մեր հարևանուհու ամբողջ տարածությունը, որովհետև նա ինձ նայում էր, երբ ես ու մայրիկս գնում էինք եկեղեցի: Ես ատում էի նաև մեր հարևանուհու ամբողջ էությունը, որովհետև նա ինձ նայում էր, երբ ես ու մայրիկս գնում էինք եկեղեցի: Ես ատում էի նաև մեր հարևանուհու ամբողջ գոյությունը, որովհետև նա ինձ նայում էր, երբ ես ու մայրիկս գնում էինք եկեղեցի: Ես ատում էի նաև մեր հարևանուհու ամբողջ ոչնչությունը, որովհետև նա ինձ նայում էր, երբ ես ու մայրիկս գնում էինք եկեղեցի: Ես ատում էի նաև մեր հարևանուհու ամբողջ անգ

ւոր արձակարանները, որոնցմով չըլլա – պատուած է իր հոդամասը ։ — Խորհր – դային յարձակում մը, ըսաւ ան, ըլլայ հրթիռներով թէ այլ ձեւով, պատճառ պիտի ըլլայ որ վայրկենապէս քանդուի Ռուսիոյ մեծ մասը։ Յարձակողը, աւել – յուց Նորսթատ, կրնայ քանդել ամերիկ– եան արձակարանները, սակայն այնքան շատ են անոնք՝ որ մէկ հարուածով կա – րելի չէ փճացնել զանոնք ...

Ալանտեան Ուխտի ընդհանուր հրա – մանատարին յայտարարութիւնը, որ ան– ուղղակի պատասխան մըն է Ա. Միկոյ – եանի, ցոյց կուտայ նաեւ թէ ժամանակին հետ արձակարանները պիտի աւելնան, եւ մինչեւ որ Ռուսերը անոնցմէ քանի մը հատ փճացնեն՝ հիմնայատակ կործանած պիտի ըլլան իրենք ։

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՄՈՍԿՈՒԱՅի մէջ Ֆրանքեւխորհրդային առեւտրական գործակցութեան խորհրը – դակցութիւնները սկսան ։

ԱՏԼԱՆՏԵԱՆ ՈՒԽՏի ընդհանուր քար – տուղար Սփաք առաջարկեց, որ յառա – ջիկայ Մարտին զինուորական համագու– մար մը ըլլայ ։

ԿԻՊՐՈՍի մէջ նոր խռովութիւններ է – գան, որոնց ընթացքին ութսուն հոգի վի– րաւորուեցաւ եւ 125 հոգի ձերբակալուե– ցաւ։ Միւս կողմէ, Անգլիա ՄԱԿի քաղա– քական յանձնախումբին յայտարարեց, թէ պատրաստ է կղզիին մասին Թուրքիոյ եւ Յունաստանի հետ խորհրդակցելու հա– մար ։

ԹՈՒՐՔԻՈՑ վարչապետ Մենտերէս յայտարարեց, թէ Միացեալ Նահանգներ ընդունած են Անգարայի խնդրանքը եւ Թուրքիոյ պիտի տան հեռավար (թէլէ – կիպէ) հրթիռներ։ Թուրք սպաներ պիտի երթան Ամերիկա՝ հրթիռներու գործա – ծութեան վարժուելու համար ։

ԱՐԵՒՄՏ. ԳԵՐՄԱՆԻՈՑ վարչապետ Ա– տենաուըը Դեկտեմբեր 14ին փարիզ պի – տի գայ, Ատլանտեան Ուխտի ժողովին նախապատրաստական աշխատանքներուն ալ մասնակցելու համար ։

ՈՒՈՇԻՆԿԹՐՆԷՆ կը հաղորդեն, թէ Եուկոսլաւիոյ կառավարութեան առա – ջարկին վրայ Ամերիկա պիտի դադրեցնէ զինուորական օժանդակութիւնը ։

ԱՆԳԼԵՒԱՄԵՐԻԿԵԱՆ համաձայնութիւն մը կնքուեցաւ, Մեծն Բրիտանիոյ մէջ հեռավար հրթիռներու արձակարաններ հաստատելու համար, այս լուրը անա – կընկալ մը ստեղծեց Փարիզի քաղաքական շրջանակներուն մէջ ։

ՄՈՍԿՈՒԱՅի «կուսակցական կեանք» թերթը կը գրէ թէ համայնավար կու – սակցութեան 20րդ համագումարէն ի վեր բազմաթիւ «ընկեր»ներ արտաքսուած են շարքերէն։ Կրնան ուրիշներ ալ արտաք – սուիլ ։

ՃԱՓՈՆԻ եւ Արաբիոյ միջեւ համա – ձայնութիւն մը կնքուեցաւ՝ քարիւղի փնտռտուքներու շուրջ։ Ճափոնական ըն – կերութիւն մը Արաբիոյ մէջ 7.400 քառ. քիլոմեթր տարածութեան վրայ պիտի կատարէ իր փնտռտուքները ։

Ֆ. ՄԻՈՒԹԻՒՆ երկուքուկէս միլիոն սթերլին արժէքով ոսկի ղրկեց Անգլիա ։

ՓԱՐԻԶ – ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ

Ահարոնեան խումբի դասընթացքը այ – սօր չորեքշաբթի ժամը 20.30ին, Ազգ. Տան մէջ ։

Հայերէնի դասընթացքները կուտայ՝ ընկերուհի Մաւիէն Մկրտիչեան ։

"ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐ"Ը

Ֆ. կապ. Խաչի կեդր. վարչութիւնը, Փարիզի շրջանի իր տասը մասնաճիւղե – րով կը տօնէ «Մանուկներու Օր»ը, Յուն– ուար 2ին, ժամը 15 – 19, Սօսիէթէ Սավանքի մեծ սրահին մէջ, 8 Րիւ Տաճ– քոն, մեթրօ Սէն Միշէլ կամ Օտէօն ։

Մանրամասնութիւնները յաջորդով ։

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԼՍԱՐԱՆ

Հերթական դասախօսութիւնը այս չո – րեքշաբթի կիւրը ժամը 21ին, Քաաէլ սրահը։ Շարունակութիւնը նախորդ դա – սախօսութեան, այսինքն վիճաբանու – թիւններ Խրիմեան Հայրիկի քաղաքական ուղեգիծի մասին։ Հաւաքոյթը պիտի կա – կըսի ճիշդ ժամը 9ին։

ՄԱՐՍԷՅԼ

"ՀԱՄԱԶԳԱՅԻՆ"Ի ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՆԵՐԸ

ՆԻԹ՝ ԵՂԻՇԷ ԶԱՐԵՆՑ

(Ծննդեան 60ամեակին առթիւ)

Զօրեքշաբթի իրիկուն, Սէն Լուի մէջ ։ կը նախագահէ՝

Պ. ՄԻՀՐԱՆ ԱՆԴՐԻԱՍԵԱՆ

կը խօսի՝ ԿԱՐԱՊԵՏ ՓՕԼԱՏԵԱՆ

Կ'արտասանեն՝ Օր. Մ. Իշխանեան եւ Պ. Յովհ. Տէր Վարդանեան ։

Ջութակ՝ Յ. Իշխանեան եւ Հ. Գըլըճ– եան ։

Ընկերդութիւն Հայաստանէն եկած նոր երգապնակներու (Զարենցի «Գովք Հա – յաստանին» եւ ուրիշներ)։

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՅԿԵՐՈՑԾՔԸ

ՄԱՐՍԷՅԼ

22 Դեկտեմբեր, կիրակի ամբողջ օրը, Պոմոնի Ս. Սահակ եկեղեցւոյ սրահին մէջ ։

Հայկական համադամ կերակուրներ, նուագ, երգ, արտասանութիւն եւ ուրախ մթնոլորտ ։

Ճաշագին 1000 ֆրանք ։

Տեղերը ապահովել Համազգայինի ան – դամներուն մօտ։

ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Ֆ. Կ. Խաչի կեդր. վարչութիւնը իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ ըն– կերուհի Տիրուհի Սէրէնկիւլեանի եւ իր պարագաներուն, իր եղբօր Նիկողոս Նի – կողոսեանի մահուան տխուր առթիւ ։

ՇԱԻԻԼԻ ԵԿԵՂԵՑԻ

Շաւիլի Կրօն. Ընկերակցութեան վար– չութիւնը եւ երիտ. եկեղեցաչէն յանձ – նախումբը կը ծանուցանեն թէ Դեկտ. 15– ին, կիրակի օր տեղի պիտի ունենայ նո – րակառոյց եկեղեցւոյ օծումը եւ անդրա– նիկ Ս. պատարագը ձեռամբ կաթողիկո– սական պատուիրակ՝ եւ Փարիզի Առաջ – նորդ Գեր. Տէր Սերովբէ Եպիսկ. Մա– նուկեանի։

Սկիզբ ժամերգութեան ժամը 8, օծում ժամը 10, Ս. պատարագ 10.30։

Կը հրաւիրուի հաւատացեալ ժողովուր– դը։ Ցաւարտ Ս. պատարագի կազմա – կերպուած է ճաշ մը վերապահ Օթէլ տը Ֆրանսի չքեղ սրահին մէջ (Փլաս տ'Արմ, րիւ Քոլպէր)։

Օրուան եւ օծման արարողութիւնները եւ հրաւիրեալ դպիրներու կողմէ երգուե– լիք բազմաձայն պատարագի երգեցողու – թիւնը պիտի ղեկավարէ երաժշտապետ Պ. Նշան Սերոբեան ։

Արձանագրութեան համար դիմել Փա – րիզի եկեղեցւոյ դիւանատունը,

Պ. Հրաչ Զուլաքեանի՝

14. Rue Maréchal Foch, Viroflay

Պ. Զաւէն Յովհաննէսեանի

31, Rue de Généra! Leclerc, Versailles

կամ

ASSOCIATION CULTUELLE DES ARMÉNIENS DE CHAVILLE

C. C. P. Paris 14827-18

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՏՈՒՆ

SOCIÉTÉ ANONYME

Դրամագլուխ՝ 8.000.000

Siège Social : 32, Rue de Trévise, Paris

Avis de Convocation

Բաժնեէրերը կը հրաւիրուին վարչա– կան խորհուրդին կողմէ հերթական ընդ– հանուր ժողովի, ուրբաթ, Դեկտեմբեր 13, 1957, ժամը 18ին, կեդրոնատե – ղին՝ Փարիզ, 32 րիւ տը Թրէվիզ, գրա – ղելու համար օրակարգի հետեւեալ նիւ– թերով. — Վարչական խորհուրդին եւ հաշուեքննիչին զեկոյցը 1952ի տարեշր – ջանին համար ։

— Հաշիւներու վաւերացում ։

— Հրաժարում եւ ի հարկին նշանակում վարչութեան անդամներու ։

— Հաշուեքննիչի նշանակում ։

— Զանազան հարցեր ։

Ի դիմաց

վարչական խորհուրդի՝

ՄԱՐԱՖԵԱՆ

Article paru aux affiches parisiennes les 23-24-25 Novembre

ՑՈՒՇԱՏԵՏՐ

ԱՆԻԷՒ – ՊՈՒԱ ՔՈԼՈՄՊի Ա.րամ ևն – թակոմիտէի եւ Շ. Միսաքեան խումբի ժողովը այս Զօրեքշաբթի, ժամը 21ին, սովորական հաւաքատեղին, (149պիս, Ավընիւ տ'Արժանթէօյ)։

Ներկայ կ'ըլլայ Շրջ. կոմիտէի ներկա – յացուցիչը ։

ՓԱՐԻԶ.— Հ. Յ. Դ. «Ռուբէն» Ուս. Միութեան հերթական ժողովը այս չո – րեքշաբթի, ժամը ճիշդ 21ին, Րիւ Պլէոյի հաւաքավայրը։ Պարտաւորիչ ներկայու – թիւն ։

ՓԱՐԻԶ.— Հ. Յ. Դ. «Փոթարիկ» խումբի ժողովը այս Հինգշաբթի, ժամը 21ին, սովորական հաւաքատեղին – կա – րեւոր օրակարգ ։

ՄԱՐՍԷՅԼ.— Սէն Ժերմէն Հ. Յ. Դ. Հայաստան ենթակոմիտէն ժողովի կը հրաւիրէ ընկերները այս Շաբաթ երե – կոյեան ընկեր Սիմոնեանի բնակարանը ։ Խիստ կարեւոր օրակարգ։ Բոլոր ընկերը – ներու ներկայութիւնը պարտաւորիչ է ։

ԱՆԻԷՒ– ՊՈՒԱ ՔՈԼՈՄՊ.— Ֆ. Կ. Խա– չի մասնաճիւղը ընդհ. ժողովի կը հրա – ւիրէ իր շրջանի անդամուհիները այս Հինգշաբթի, ժամը 15ին, Տիկին Ինճէճեա– նի բնակարանը, 57 րիւ Հօշ Գոլոմպ։

ՏԱՐԵԿԱՆ ՇՔԵՂ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

ՍԻՓԱՆ-ՊՈՄԻՏԱՍ ԵՐԳԱՀԱՆՈՒՄԲ

ԿԻՐԱԿԻ, 15 ԴԵԿՏԵՄԲԵՐ ԺԱՄԸ 16ԷՆ 23

SALONS DES AMBASSADEURS (Champs - Elysées)

ORCHESTRE BACHICHA

Սեղանները ապահովել՝ հեռաձայնելով Պ. Արմանի Սանթրալ 36-23։

ՄՈՒՏՔ 500 ՖՐԱՆՔ

ԼՈՑՄ ՏԵՍԱԻ

1958Ի "ԳՈՅԱՄԱՐՏ" ՕՐԱՑՈՑՑ-ԱԼՊՈՄԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ. Յ. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ՄԱՐՍԷՅԼԻ ՇՐՋԱՆԻ

ԸՆՏԻՐ ԹՈՒԼՈՒՄՈՎ 14 ՄԵԾԱԴԻՐ ԷՋԵՐ

Շքեղ ճկարներ, մեծ մասը անտիպ։ Գրական եւ պատմական նիւթերով ճոխ բովանդակութիւն

— ԳԵՂԱՋԱՐԴ ԵՒ ԳՈՒՆԱՒՈՐ ԿՈՂՔ —

Բացառիկ խնամքով եւ ճաշակով պատրաստուած այս օրացոյց–ալպոմը պիտի կազմէ զարդը՝ ամէն հայ տան։

ԳԻՆ 500 ՖՐԱՆՔ Այժմէն ապահովեցէք ձեր օրինակը

Փարիզի համար դիմել՝ LIBRAIRIE H. SAMUELIAN, 51, Rue Monsieur-le-Prince, PARIS - 6e

ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՐԵՐՈՒՆ ԵՒ ՆՈՒԱԳԻ ԲԱՑԱՌԻԿ ԵՐԵԿՈՅ

12, Դեկտեմբեր, Հինգշաբթի ժամը 8.45ին

THEATRE DE PARIS, 15, Rue Blanche, Métro : Trinité ou Blanche

ԱԼԻՍ ՊՕՅԱՃԵԱՆ

Կը պարէ ու կը ղեկավարէ իր պատրաս տած երկսեռ պարախումբը

Մասնակցութեամբ նուագախումբի զոր կը ղեկավարէ

ԱՐԱ ՊԱՐԹԵԻԵԱՆ

Տոմսերու դիները են 800, 600, 500, 400 եւ 300 Ֆրանք

Ստանալու համար դիմել՝

Etabl. O. B. 83, Rue d'Aboukir, Paris - Tél. CEN. 48-69 եւ ներկայացման օրը թատրոնին կիչէն։

ALHAMBRA MAURICE CHEVALIER

ԴԵԿՏԵՄԲԵՐ 18ԷՆ ՍԿՍԵԱԼ

ԿՈՎԿԱՍԵԱՆ - ԽՈՐՀՐԴԱՅԻՆ

ՊԱՐԱԽՈՒՄԲ

Ամէն իրիկուն ժամը 21ին

Յերեկոյթ կիրակի եւ տօնական օրերը

Գին 300 ֆրանկէն սկսեալ

Կարելի է հիմակուընէ վարձել

Décoration — Agencement de Magasin

ANCIENS ÉTABLISSEMENTS

J. PAICHOUX et E. THION

149, RUE NATIONALE, PARIS 13E TÉL : GOB. 19 52

SERRURERIE D'ART ET DE BATIMENT

Tous Travaux de Fer Forgé

Փարիզի Հաճնոյ Հայր. Միութեան մեծ պարահանդէսը Մարտ 30ին, Սէրֆլը Մի– լիթէռի մէջ։

Imprimé sur les presses du journal HARATCH

17, Rue Bleue, 17 — PARIS (9e)

ՀԻՒԱՆԴԱՊԱՀՈՒՀԻ ԿՈՒՉՈՒԻ

Հայկական ծերանոցներուն համար վը – կայեալ հիւանդապահուհի մը կը փըն – տռուի (պետական վկայականով)։ Բնա – կարան եւ անուղղ ապահովուած են։ Դիմել Աղքատախնամի գրասենեակը ։ 32, Րիւ տը Թրէվիզ, Փարիզ (9)։

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 — Téléph. : PRO. 86 - 60

R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա եւ գաղութներ, տարեկան 3000 ֆր. վեցամս. 1600

Արտասահման՝ տարեկան 3500 ֆրանք: Հատը 12 ֆր.

ՀԻՆԳՇԱԲԹԻ 12 ԴԵԿՏԵՄԲԵՐ

JEUDI 12 DECEMBRE 1957

33ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8066 — 33e ANNEE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 13ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3867

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՄԻԱՑԵԱԼ ՃԱԿԱՏ

—o—

Ալանտեան խորհրդաժողովի նախա – պատրաստական աշխատանքները տեղա – պին առաջ կը տարուին :

Դեկտեմբեր 16 – 18՝ երեք օր տեւելիք ժողովներու ընթացքին՝ փալէ տըՇայեոյի մէջ քննութեան առարկայ պիտի դառնան չորս գլխաւոր խնդիրներ .

Ա) Գործնականացում Ալանտեան գի – նակցութեան .

Բ) Անդամ ազգերու իրարմէ կախում ունենալու հարց .

Գ) Բաշխում Ալանտեան կազմակերը – պութեան դինեալ ուժերու :

Դ) Գիտական եւ փորձառական հետա – զօտութիւններ եւ զանոնք հաւաքական սեփականութիւն դարձնելու խնդիր :

Ալանտեան Ուխտը քաղաքականէ ա – ւելի զինուորական նպատակներ կը հե – տապնդէ : Տասնեւհինգ պետութիւններ զինակցած են՝ պարզապէս բոլշեւիկեան թափանցումին առջեւ թումբ կանգնելու համար, Եւրոպայի եւ Մերձաւոր Արե – ւելքի մէջ :

Եւրոպայի զանազան երկիրները պիտի օժտուին ամէնէն արդիական զէնքերով : Ամերիկան մեծ քանակութեամբ արտա – բած է այս զէնքերը — հրթիռներ, հիւ – լէական եւ ջրածին ռումբեր : Միւս ուխտակիցները եւս մնացած են այդ մար – գին մէջ :

Միացեալ Նահանգներու պատերազմա – կան նախարար Մըք Էլրոյ չէջապոոյի եւած է դէպի Եւրոպայի գլխաւոր մայ – րաքաղաքները՝ խորհրդաժողովի բա – ցումէն առաջ զինուորական որոշ համա – ձայնութիւններ կնքելու համար մեծ դաշ – նակիցներու հետ :

Առաջին հանգրուանը եղաւ Լոնտոն, ուսկից անցաւ Գերմանիա եւ չուտով պի – տի դայ Փարիզ :

Լոնտոնի մէջ համաձայնութիւն կնքած է անգլ. կառավարութեան հետ՝ հրթիռ արձակելու յատուկ չորս կեդրոններ հաստատելու համար բրիտանական հո – գին վրայ, երեքը Անգլիոյ, մէկը Ամերի – կայի հակակշռին ենթակայ : Ասոնց չինութիւնը պիտի արժէ երեսուն միլիառ ֆրանք :

Ալանտեան խորհրդաժողովի նախօր – եակին կնքուած այս համաձայնութիւնը մեծ զարմանք պատճառեց Ֆրանսայի մէջ, ուր պաշտօն. չրջանակները վերապահ դիրք բռնած են եւ իրենց տեսակէտը պի – տի պարզեն ժողովի ընթացքին :

Վրդովում առաջ եկած է նաեւ զանա – զան խմբակցութեանց մէջ, որոնք «բա – ցարձակապէս կը դատապարտեն» անգ – լիական կառավարութիւնը :

Ամերիկա կը ծրագրէ նաեւ նման խա – րիսխներ հաստատել Եւրոպայի ուրիշ կէ – տերուն վրայ :

Խորհրդային Միութեան փոխ – վար – չապետ Անաստաս Միկոյեան այս պատ – րաստութեանց ակնարկելով, յայտարա – րած է յունարէն թերթի մը թղթակցին՝ թէ «Խ. Միութեան սպայակոյտը դիտէ այդ խարխխներուն ուր գտնուիլը : Ու աւելցուցած է թէ Ռուսիոյ դէմ ամերիկ – եան յարձակումի մը պարագային, ա – նոնք բոլորն ալ քարուքանդ պիտի ըլլան ամենավերջին դրութեամբ հրթիռներու միջոցաւ : Պիտի քանդուին նաեւ անոնց չուրջ գտնուող ընդարձակ տարածու – թիւններ » :

Ամերիկեան մանրանկար արբանեակի ձախողութենէն վերջ Կրեմլինի վարիչնե – րը աւելի յանձնապաստան եւ սպառնա – կան դարձած են :

Ու մինչ բոլշեւիկեան ճակատը միաճոյլ զանգուած մը կը ներկայացնէ՝ ենթակայ միակ կեդրոնի մը հրամանին՝ զինուորա – կան խիստ կարգապահութեամբ, արեւ – մտեան ճակատը չատ հեռու է միացեալ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԱԶԳ. ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ԺՈՂՈՎԸ

Անցկութեամբ կը սպասուէր Գշ. օր – ուան Նախարարաց Ժողովի արդիւնքին : Արդարեւ, Վարչապետ Կայեառ յաջողե – ցաւ քանի մը օրէ ի վեր իր կառավարու – թեան սպառնացող տագնապը լուծել : Ըն – կերվարական նախարարներուն եւ ելմը – տական նախարարին տարակարծութիւն – ները հարթուած են արդէն եւ համաձայ – նութիւն մը գոյացած՝ պետական պաշ – տօնեաներու ամսականի յաւելման չուրջ :

1958 Յունուար մէկէն սկսեալ, պաշ – տօնեաները տարեկան տասը հազար Ֆր.ի պարգեւ մը պիտի ստանան : Մայիս մէ – կէն սկսեալ այդ տասը հազարը պիտի ա – ւելնայ պաշտօնական իրենց աշխատա – վարձքին վրայ. այս ձեւով պետական պաշտօնեաներու տարեկան նուազագոյն աշխատավարձքը պիտի բարձրանայ 210 հազար Ֆրանքի : Այս թուականէն սկսեալ հանգստեան թոշակներն ալ պիտի աւել – նան :

1958 Օգոստոս մէկին դարձեալ տասը հազարի պարգեւ մը պիտի տրուի պաշ – տօնեաներուն եւ Նոյեմբեր մէկին տա – րեկան նուազագոյն աշխատավարձքը պի – տի բարձրանայ 220·000ի :

Թոշակառուները դարձեալ պիտի օգ – տուին երկրորդ այս յաւելումէն :

Որոշումը տրուած է արդէն եւ այս ձե – ւով 1958ի պիւտճէին բացը 74 միլիարի կը բարձրանայ :

Ելմտական նախարարը յայտարարեց, թէ 54 միլիառը տակաւին չէր գտնուած եւ համաձայնեցաւ անոր վրայ 18 միլիառ եւս աւելցնել :

Ընդհանուր պիւտճէին վրայ սակայն՝ ոչ մէկ փոփոխութիւն : Բայը վեց հարիւր միլիառէն աւելի պիտի չըլլայ եւ ծախքե – րը՝ 5·300 միլիառը պիտի չանցնին :

Ձիշդ է, որ ընկերվարական նախարար – ները որոշ յաղթանակ մը տարին կառա – վարութեան մէջ, ի դին հրաժարման ըս – պառնալիքներու : Տեղական մամուլը հարց կուտայ ներկայիս, թէ այս յաջո – ղութենէն ետք Ընկերվարականներու մէջ դոյութիւն ունեցող ընդդիմադիր չար – ժումը զինաթափ պիտի չըլլա՞յ արդեօք :

Արդարեւ, յառաջիկայ չաբաթ եւ կի – րակի Փիւբոյի մէջ տեղի պիտի ունե – նայ ընկերվարական Ազգ. Խորհուրդին ժողովը : Այժմէն յայտնի է արդէն, որ քննադատութիւններ պիտի ըլլան : Կաս – թոն Տեֆէո եւ իր համախոհները կը մե – ղադրեն կուսակցութեան վարիչ մարմինը որ չէ յարգած համաձայնութիւնը եւ Ազգ. Խորհուրդի յաջորդական նիստերուն մէջ տրուած որոշումները, յատկապէս՝ ըն – կերային եւ անտեսական մարզերու մէջ : Ալժերիոյ հարցին մէջ կուսակցութեան դեկավար մարմնին քաղաքականութիւնը քննադատեց նաեւ Տէֆերէօ, քանի որ Վարչապետ Կայեառի Ալժերիոյ Հիմնա – կան Օրէնքի չի համապատասխաններ ի – րենց համաձայնութիւնները որոշումներուն :

Այնպէս կ'երեւի, թէ Փիւբոյի ժողովը փոթորկոտ պիտի ըլլայ. ընդդիմադրի – ները բազմաթիւ կէտերու մէջ պիտի բազմապատկեն իրենց յարձակումները՝ վարիչ մարմնին վրայ :

Կուսակցութեան ընդհանուր քարտու – ղար կի Մոլէ չանդիտանար այս պարա – գան :

Մամուլի ասուլիս մը տալով նախկին վարչապետ կի Մոլէ խստօրէն քննադա – տեց մամուլը, հետաքրքիրն ու ճայնաս – փիւռը, որ իրենց հաղորդումներով ըն – կերվարական կուսակցութիւնը կը ներ – կայացնեն իբրեւ տուրքի մոլի, ունենա – լով մէկ մտասեւեռում միայն՝ պետական պաշտօնեաներու աշխատավարձքը :

ՄԱՏԼԱՆՏԵԱՆ ՈՒԽՏԻ ԺՈՂՈՎԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ՝

ԲՈՒԼԿԱՆԻՆ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ԴԱՇԻՆՔ Կ'ԱՌԱՋԱՐԿԷ ԱՅՋԸՆՇԱՈՒԸՐԻ

—o—

ԱՄԵՐԻԿԱՑԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՇԱԲԱԹ ՕՐ ՓԱՐԻՋ ԿՈՒԳԱՑ

Ատլանտեան Ուխտի «Մեծ»երուն հան – դիպումին աշխատանքները մեծ թափով յառաջ կը տարուին : Արեւմտեան Գեր – մանիոյ Վարչապետ Ատընաուըրին հետ՝ չաբաթ օր Փարիզ կը հասնի նաեւ Միաց – եալ Նահանգներու Նախագահ՝ Այզըն – հաուըր, ժողովին մէջ ամերիկեան պատ – ուիրակութիւնը դեկավարելու համար : Արտաքին նախարար Տըլըս պիտի ներկա – յացնէ ամերիկեան թեզը :

Տըլըս Փարիզ պիտի հասնի ուրբաթ օր եւ տեսակցութիւն մը պիտի ունենայ Վարչապետ Կայեառի հետ : Ժողովէն ա – ռաջ հանդիպում մը պիտի ունենան նաեւ Արտաքին նախարար Փինօ, զօրավար Նորսթատ, ամերիկեան պատուիրակու – թեան դեկավարները եւ Վարչապետ Կայ – եառ :

Մամուլի ասուլիսի մը մէջ, Արտաքին Նախարար Տըլըս ճշդեց կարգ մը կէտեր՝ որոնք պիտի քննուին Ժողովին մէջ :

1.— Դաշնակիցներու միջեւ քաղաքա – կան յաճախակի խորհրդակցութիւնները սովորութիւն մը պէտք է ըլլան :

2.— Ամերիկա պատրաստ է իր դաշնա – կիցներուն ներկայացնելու իր արտաքին քաղաքականութիւնը՝ բոլոր ճակատներու վրայ :

3.— Թունուզի հարցին չուրջ խորհըր – դակցութիւններ եղած են ու այնպէս կը թուի թէ համաձայնութիւն գոյացած է արդէն :

4.— Օժանդակութիւն՝ Մերձ. Արեւել – եան ու միջերկրականեան երկիրներուն :

5.— Պիտի լուծուին նաեւ Ալժերիոյ ու Կիպրոսի հարցերը, որոնք կրնան մեծ վը – նաս մը հասցնել՝ այս պայմաններուն մէջ :

6.— Արդիական զէնքերու պատրաս – տութիւնը եւ Արեւմտեան Գերմանիա :

Մինչ այս մինչ այն, Խ. Միութիւն նա – մակներ ղրկեց Արեւմտեան Գերմանիա, Հնդկաստան եւ Ամերիկա :

Պոնի խորհրդային դեսպանը Արտաքին Նախարար Ֆոն Պրենթանոյի յանձնած է մառեչալ Բուլգանինի 12 էջերէ բաղկա – ցած նամակը :

Խորհրդային քաղաքական չրջանակնե – րէն այս ուղղութեամբ քաղուած տեղե – կութեանց համաձայն, Բուլգանին աղդա – բարութիւն մըն է որ կ'ընէ Ատընաուըրի, որպէսզի Գերմանիոյ մէջ հաստատուելիք ամերիկեան արձակարանները չընդունի : Ռուսերը, այս առիթով Գերմանիոյ վե – րամիացման հարցն ալ կ'արծարծեն :

Հնդկաստանի Վարչապետ Նեհրուի յանձնած նամակին մէջ, Բուլգանին պատրաստակամութիւն կը յայտնէ՝ 1958 Յունուար մէկէն սկսեալ հիւլէական փոր – ձերը դադրեցնելու համար :

Մեծ կարեւորութիւն կ'ընծայուի մա – ռեչալ Բուլգանինի Նախագահ Այզընհա – ուըրի ղրկած նամակին : 15 էջերէ բաղ – կացած այս նամակին մէջ, Բուլգանին Խ. Միութիւն — Ամերիկա բարեկամութիւն կ'առաջարկէ, հիւլէական եւ ջրածին փորձերը կ'ուզէ դադրեցնել անմիջապէս եւ Արեւելք – Արեւմուտք բարեկամու – թեան մը համար՝ ռուսեւամերիկեան դե – կավարներու անմիջական հանդիպում մը :

Այս ուղղութեամբ Միացեալ Նահանգ – ներ տակաւին պաշտօնական բացատրու – թիւն մը չտուին :

Ատլանտեան Ուխտի ժողովի նախօրեա – կին, կը կարծուի թէ Խ. Միութիւն նա – մակներ պիտի ղրկէ նաեւ Անգլիա, Ֆը – րանսա եւ Ուխտի կարեւոր անդամնե – րուն :

Նամակներու ճդած առաջին տպաւորու – թիւնը այն է, թէ Ռուսերը կը մտածեն ձախողութեան մատնել Փարիզի ժողովը :

—o—

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՄԷՋ ամե – րիկեան Պատերազմական նախարարու – թեան քարտուղարը յայտարարեց,—Պեր – լինը պիտի պաշտպանենք՝ համայնավա – րական որեէ յարձակումի մը պարագա – յին :

(Լուրերու շար.ը կարդալ Դ. էջ)

ԳՈՒՐԳԵՆ Մ. ԱԼԷՄՇԱՀԻ

Մահուան տասնամեակին ի յիշատակ՝ հոգեհանգստեան Պատարագ պիտի մա – տուցուի Ս. Ղազարի մէջ, Յաւաչիկայ կիրակի, Դեկտեմբեր 15, ժամը 10ին :

Կը հաղորդուի վասն աղօթակցութեան :

Դեկտեմբեր 14ին տասներորդ տարին կը փակեմ իր անողոք ճակատագրովը կնճռուած դամբարանին առջեւ :

Հոգեհանգիստ մը Ս. Ղազարի Մենաս – տանին մէջ, ուր ինքը յաւէտ կը հանգչի, անշուշտ կը թարմացնէ իր կորուստին ցաւը : Բայց մեր անզօր վրդովումը բա – ւական պիտի չըլլար իր արժէքը յաւեր – ժացնելու, եթէ մեր ամէն մէկ հաւաքոյ – թին ներկայ չըլլար ան՝ իր թարմագեղ երգերով :

Ձիշդ է որ կանուխ բաժնուեցաւ ինք, մեր աշխարհէն, այն կեանքէն որ համա – դրութիւնը ըլլալով լաւին ու վատին, տառապանքին ու երջանկութեան, փառ – քին ու զրկանքին, Գուրգէնին պիտի սահմանէր, վստահ ենք, լաւագոյն բա – ժինը :

Ան պիտի կրնար ունենալ այդ բոլորը իր երաժշտագէտի տաղանդով, արուես – տագէտի ճաշակով, իր ընկերական բնա – ւորութեամբ եւ հաճելի հաղորդականու – թեամբ, մարդկային զգացումներով : Լա – ւը վատէն աւելի, յարաբերական երջան – կութիւնը՝ տառապանքէն աւելի, փառը՝ զրկանքէն աւելի չուալելու անսահման գոհունակութիւնը այն մարդկային ընկե – րութեան մէջ, զոր կը սիրէր ինք :

Գուրգէն Ալէմշահը կ'ողբանք ոչ միայն անոր համար որ կորսնցուցինք երիտա – սարդ տարիքին, ոչ միայն որովհետեւ կը սպասէինք նոր վկայութիւններ իր ե – րաժշտի տաղանդէն, այլ եւ որովհետեւ արդէն իսկ արժէք էր ան՝ մեր հայկական երգին համար. արժէք մը որուն գովքը կը հիւսեն Նաղերով եւ *Իմ Երգով* մեր բո – լոր երգիչները, ամէն օր :

Կիրակի, Ս. Ղազարի մէջ կատարուե – լիք հոգեհանգիստը ծխացող պտղունց մը խունկ է անուշաբոյր, բոլորին սրտէն բարձրացող :

Նոճի

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՏԱՆ

ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ ՍՐԱՀ

Համակիր մը՝ Ս. Տ. — 50·000

ՕՐԱԹԵՐԹ ՀԱՅԿԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱՑ ՀԱՍՈՒՆՔԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ

ԲՂԽԵԼ ՀԱՂԹՎԵՑ

(ԾԱՂԿԱՊԱՏՈՒ ՊԱՏՄՎԱԾՔ)

— Ի՞նչպէս կրնայ չլինել։ — Սկսաւ մտածել իր պատմելիքին։ — Տէր-Մուրատ ամառ մը մեր գիւղը եկաւ։ Ամառնային ցեղ մը էր։ Ինչ որ ալ ըլլայ, մենք ալ մեր ամառնային ցեղերը ունինք։ Ամառ մը, երբ ես տասներկու տարեկան էի, չմոռնաս, մի՛ դասատու ունեցայ։ Տէր-Մուրատ։ Ինչպէս կ՚ուզես կոչէ զայն։ Ես ալ կ՚ուզեմ այդպէս կոչել։ Տէր-Մուրատ։ Ան ինծի համար ամէն ինչ էր։ Ամէն ինչ։ Ինչպէս ըսի, ես տասներկու տարեկան էի։ Ան ալ քսանհինգ տարեկան։ Ինչպէս կ՚ուզես կոչէ զայն։ Ես ալ կ՚ուզեմ այդպէս կոչել։ Քսանհինգ տարեկան



Ես մի ղոնա էնչ քաղ եմ իր ղոնա, որ ինձ ղոնա էնչ քաղ եմ իր ղոնա։ Ինչո՞ւ ես ղոնա իմ ամուսինը, ինչո՞ւ ես ղոնա իմ ընկերուհիներին։ Ինչո՞ւ ես ղոնա ամեն մարդու, որ ինձ մոտ է գալիս։ Ես ուզում եմ, որ դու ինձ միայն ղոնա։ Ես ուզում եմ, որ դու ինձ միայն սիրես, ինձ միայն պաշտես, ինձ միայն երկրպագես։ Ես ուզում եմ, որ դու ինձ միայն ղոնա։

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

Նիւ Եորքի մէջ առջի օր ներքնընթացի (մեթրօ) վարիչները զործադուլ ըրին։

Գաւիրիի մէջ Դեկտեմբեր 26ին Ասիոյ միասնականութեան կոմիտէն ժողով մը պիտի գումարէ, ասիական հարցեր քննելու համար։

Հռոմի մէջ յառաջիկայ չաբաթ Ա.Միութիւն եւ Իտալիա առեւտրական համաձայնագիր մը պիտի առորագրեն։

Կիպրոսի մէջ Յոյներու եւ Թուրքերու միջեւ բախումները կը չարունակուին։ Թուրք ոստիկան մը մահափորձի ենթարկուեցաւ, ծանրօրէն վիրաւորուելով։ Ցունական հասատատութիւնները յարձակում կրեցին Թուրքերու կողմէ։ Յոյն ուսանողները զասադուլ հռչակեցին եւ բողոքի ցոյց մը կազմակերպեցին Նիկոսիոյ մէջ։ ոստիկանութիւնը ստիպուեցաւ արտասուաբեր ռումբեր զործածել՝ զանոնք ցրուելու համար։

Իգնիի մէջ սպանական ուժերը ցարդ տուած են 62 մեռեալ եւ 124 վիրաւոր, կը հաղորդէ Մատրիտի ճայնասփիւռը։

Գաւիրիի ճայնասփիւռը կը հաղորդէ թէ եգիպտական զէնքեր հասած են Թունուզ։

Ամմանէն սուրիացի երկու զիւանագէտներ արտաքսուեցան։

Լոնտոնի խորհրդարանական դեսպանը տեսակցութիւն մը ունեցող Արտաքին Նախարար Լոյտի հետ։

Ֆրանսացի նախկին վարչապետ Փինէ, որ անձնական պտոյտ մը կը կատարէր, առջի օր Սպանիա զնաց։

Վարշաւացի մէջ Լեհաստանի Արտաքին նախարարը տեսակցութիւն մը ունեցաւ Միացեալ Նահանգներու հիւպատոսին եւ Անգլիոյ ու Ֆրանսայի դեսպաններուն հետ։

Սպուտնիկ առաջինը հազար անգամ շրջեր է երկրի շրջանը ըրաւ։ Ցունուարի ըսկիզբը պիտի տարանջատուի։

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Սեբաստիոյ Նահանգային Մուրատ Ուսումնասիրաց Միութեան Մարսէյլի մասնաճիւղը, չնորհակալութեամբ ստացած է երկու հազար ֆրանք Պ. Կ. Ճանիկեանի որդւոյն ամուսնութեանը առթիւ եւ կը յայտնէ իր սրտագին բարեմաղթութիւնները նորապսակ ամոլին։

ՀԻՒԱՆԴԱՊԱՀՈՒՀԻ Կ'ՈՒԶՈՒԻ

Հայկական ծերանոցներուն համար վը կայեալ հիւանդապահուհի մը կը փընտուի (պետական վկայականով)։ Բնակարան եւ սնունդ ապահովուած են։ Դիմել Աղքատախնամի զրասենեակը։ 32, Րիւ տը Թրէվիզ, Փարիզ (9)։

ՇԱԻԻԼԻ ԵԿԵՂԵՑԻ

Շաւիլի կրօն. Ընկերակցութեան վարչութիւնը եւ երիտ. եկեղեցաչէն յանձնախումբը կը ծանուցանեն թէ Դեկտ. 15ին, կիրակի օր տեղի պիտի ունենայ նոր-բակառոյց եկեղեցւոյ օծումը եւ անդրանիկ Ս. պատարագը ձեռամբ կաթողիկոսական պատուիրակ՝ եւ Փարիզի Առաջնորդ Գեր. Տէր Սերովբէ Եպիսկ. Մանուկեանի։

Սկիզբ ժամերգութեան ժամը 8, օծում ժամը 10, Ս. պատարագ 10·30։

Կը հրաւիրուի հաւատացեալ ժողովուրդը։ Ցաւարտ Ս. պատարագի կազմակերպուած է ճաշ մը Վերսայլ Օթել տը Ֆրանսի չքեղ սրահին մէջ (Փլաս տ'Արմ, րիւ Ռոլպէր)։

Օրուան եւ օծման արարողութիւնները եւ հրաւիրեալ դպիրներու կողմէ երգուելիք բազմաձայն պատարագի երգեցողութիւնը պիտի ղեկավարէ երաժշտապետ Պ. Նշան Սերգոյեան։

Արձանագրութեան համար դիմել Փարիզի եկեղեցւոյ դիւանատունը,

Պ. Հրաչ Զուլաքեանի՝
14, Rue Maréchal Foch, Viroflay

Պ. Զաւէն Յովհաննէսեանի
31, Rue de Général Leclerc, Versailles

կամ
ASSOCIATION CULTUELLE DES ARMÉNIENS DE CHAVILLE
C. C. P. Paris 14827-18

Imprimé sur les presses du journal HARATCH
17, Rue Bleue, 17 — PARIS (9e)

"ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐ"Ը

Ֆ. կապ. Խաչի կեդր. վարչութիւնը, Փարիզի շրջանի իր տասը մասնաճիւղերով կը տօնէ «Մանուկներու Օր»ը, Ցունուար 2ին, ժամը 15 – 19, Սօսիէթէ Սավանթի մեծ սրահին մէջ, 8 Րիւ Տանթոն, մեթրօ Սէն Միշէլ կամ Օտէօն։

Մանրամասնութիւնները յաջորդով։

×

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

Կրընոպլի Ֆ. կապ. Խաչի դպրոցի տոնածառը տեղի պիտի ունենայ Ցունուար հինգին, Րիւ Ժէլի սրահը։

ՑԱԻԱԿՑՈՒԹԻՒՆ

Ֆ. Կ. Խաչի Մարսէյլ քաղաքի վարչութիւնը ցաւակցութիւն կը յայտնէ Տէր եւ Տիկին Սէրէնկիւլեանի եւ իրենց պարագաններուն, իրենց եղբօր ողբացեալ Նիկողոսեանի կսկծալի մահուան առթիւ, եւ փոխան ծաղկեպսակի երկու հազար ֆր. կը նուիրէ Մշակոյթի Տան։

× *Ֆ. Կ. Խաչի Մարսէյլ քաղաքի վարչութիւնը չնորհակալութեամբ ստացած է Տէր եւ Տիկին Զէօրէքճեանէ հինգ հազար ֆրանք, իրենց զաւկին զինուորութենէ վերադարձին առթիւ։*

LE CLUB

DANCING
51, Rue Grignan, MARSEILLE
Tél. FE 27-66

Լաւագոյն ընդունելութիւն վերապահուած է հայկական կազմակերպութենէն եւ հայ ընտանիքներուն սրահը վարձելու համար։

Երեկոյթ, պարահանդէս, նշանտուք, ամուսնութիւն եւայլն։


Տնօրինութիւն՝ ԷՏԻ ԹՈՒՐՆԷԼ

ԳՆՈՒՄ ԵՒ ՎԱՃԱՌՈՒՄ

Ցարկաբաժին, խանութ, հող, չէնք, ընդունելութիւն եւ խորհուրդներ՝ Հայու մը կողմէ

ԱՄԷՆ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

AGENCE LEVET
9, Boulevard des Italiens, PARIS 2e
Téléphone : RIC. 36-75



Նոր կատարելագործում կօշիկի կրունկներու պատրաստութեան մէջ

Առաջին հայ հաստատութիւնը որ յաղթած է մաթիէռ փլասթիքի եւ ալիւմինիումի միացումով չինել անբիծ (էնֆասապլը) *եւ ճկուն կօշիկի կրունկներ ամէն բարձրութեամբ։*

Դիմել՝

VANPLAST
(ՎԱՆԼԵԱՆ)
7, RUE GODOT DE MAUROY
Tél. : OPE. 01-08

Առաւօտները հեռաձայնել՝ ITA 33-38

ՆՈՒԻՐՆԵՐ

Տիկին Սաթենիկ Տէր Դաւթեան իր արկածէն ապաքինման առթիւ հետեւեալ նուիրները կ'ընէ։—

«Ցառաջ»ի բարգաւաճման	10·000
Կապ. Խաչի կայանին	10·000
«Հայ – Բոյժ»ին	5·000
«Դպրոցասէր»ին	5·000

(Տառնալ «Ցառաջ»էն)։

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՊՈՄՈՆԻ ՄԷՋ

Պոմոնի Ս. Սահակ – Մեսրոպ եկեղեցւոյ թաղականութիւնը կը յայտարարէ Մարսէյլի յարգոյ հասարակութեան թէ այս կիրակի առաւօտեան ժամը 11ին Պոմոնի եկեղեցւոյ մէջ տեղի պիտի ունենայ հոգեհանդստեան պաշտօն հայ մեծ բանաստեղծ Ա. Իսահակեանի հոգւոյն։

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Եկեղեցիին վարչութիւնը կը ծանուցանէ թէ՝ Երիմեան Հայրիկի մահուան յիսնամեակի հոգեհանդիստին առթիւ վաղը պուրականի Հայր. Միութեան Մարսէյլի կեդր. վարչութեան կողմէ չնորհակալութեամբ ստացած է երեք հազար ֆրանք եկեղեցիին բարեզարդութեան համար։

Ս. ՑԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻ

Մարսէյլ.— Պուլվար Օտտոյի Ս. Ցակոր եկեղեցւոյ թաղականութիւնը կը յայտարարէ թէ այս կիրակի Ս. Ցակոր եկեղեցւոյ տօնախմբութեան առթիւ հանդիսաւոր Ս. Պատարագ եւ հոգեհանդստեան պաշտօն պիտի կատարուի եկեղեցւոյհիմնադիր բարերարներու, ինչպէս նաեւ բազմարդիւն առաջնորդ՝

ՏԷՐ ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊՍ. ՊԱԼԱՓԵԱՆԻ

եւ համայն թաղիս հին եւ նոր ննջեցելոց հոգւոյն համար։

Տեղի պիտի ունենայ աւանդական մաղ – օրհնութիւնը ու բաշխումն, մասնակցութեամբ բոլոր բարեպաշտ թաղեցիներու։

Այս առթիւ պիտի պատարագէ եւ քարոզէ թաղիս հոգեւոր հովիւ Տէր Պսակ քահանան։

ՑՈՒՇԱՏԵՏՐ

Փարիզ.— Հ. Ց. Դ. «Փոթարիկ» խումբի ժողովը այս Հինգշաբթի, ժամը 21ին, սովորական հաւաքատեղին – կարեւոր օրակարգ։

Մարսէյլ.— Սէն Ժերոմի Հ. Ց. Դ. Հայաստան ենթակոմիտէն ժողովի կը հրաւիրէ ընկերները այս Շաբաթ երեկոյեան ընկեր Սիմոնեանի բնակարանը։ Խիստ կարեւոր օրակարգ։ Բոլոր ընկերներու ներկայութիւնը պարտաւորիչ է։

Ռոնովիլ.— Հ. Ց. Դ. «Վարդան» ենթակոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները այս կիրակի, ժամը 15ին, ծանօթ հաւաքատեղին։ Ներկայ կ'ըլլայ Շրջ. կոմիտէի ներկայացուցիչը։ Բացակաները նկատի պիտի առնուին։

Անիէր-Պուա Քոլոմպ.— Ֆ. Կ. Խաչի մասնաճիւղը ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր չրջանի անդամուհիները այս Հինգշաբթի, ժամը 15ին, Տիկին Ինճէեանի բնակարանը, 57 բիս Հօզ Պոլոմպ։

Մարսէյլ.— Հ. Ց. Դ. «Քրիստափոր» ենթակոմիտէի վարչութիւնը ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր բոլոր ընկերները, այս կիրակի ժամը ճիշդ 15ին, Ահարոնեան ակումբին մէջ։ Բոլոր ընկերներուն ներկայութիւնը պարտաւորիչ է։

Համաձայրեր. Հայր. Միութեան վալանսի մասնաճիւղը ժողովի կը հրաւիրէ իր բոլոր անդամները այս չաբաթ երեկոյ ժամը 21ին, Պ. Սիմոնեանի սրճարանը։

ԺՈՂՈՎԻ ՀՐԱՒԻՐ

Ֆ. Կ. Խաչի Փարիզի մասնաճիւղի ընդհ. ժողովը այս չաբաթ կէսօրէ վերջ ժամը 3·30ին, ընկերուհի Պաքրճեանի աչխատանոցը, 58 Րիւ տ'Ափուբիր, մեթրօ Սաւթիէ։ Ոչ ոքի հրաւէր չի ղրկուիր։ Կը խնդրուի ճշդապահ ըլլալ։ Խիստ կարեւոր օրակարգ։

ՍԵԲԱՍՏԻՈՑ ՄՈՒՐԱՏ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՑԻ ԽՆԴՈՑՔԸ

Դեկտեմբեր 22ին, ժամը 16էն 21, Խը – բիմեան սրահը (Իսի)։

Մանրամասնութիւնները յաջորդով։

Լոցս տեսար

1958ի "ԳՈՑԱՄԱՐՏ" ՕՐԱՑՈՑՑ-ԱԼՊՈՄԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ. Ց. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ՄԱՐՍԷՅԼԻ ՇՐՋԱՆԻ

ԸՆՏԻՐ ԹՈՒՂԹՈՎ 14 ՄԵԾԱԴԻՐ ԷՋԵՐ

Շէեղ ճկարներ, մեծ մասը անտիպ։ Գրական եւ պատմական նիւթերով ճոխ բովանդակութիւն

— ԳԵՂԱՋԱՐԴ ԵՒ ԳՈՒՆԱՒՈՐ ԿՈՂՔ —

Բացառիկ խնամքով եւ ճաշակով պատրաստուած այս օրացոյց-ալպոմը պիտի կազմէ զարդը՝ ամէն հայ տան։

ԳԻՆ 500 ՖՐԱՆՔ — Այժմէն ապահովեցէք ձեր օրինակը

Փարիզի համար դիմել՝ LIBRAIRIE H. SAMUELIAN, 51, Rue Monsieur-le-Prince, PARIS - 6e

ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՐԵՐՈՒՄ ԵՒ ՆՈՒԱԳԻ ԲԱՑԱՌԻԿ ԵՐԵԿՈՅ
12, Դեկտեմբեր, Հինգշաբթի ժամը 8·45ին

THEATRE DE PARIS, 15, Rue Blanche, Métro : Trinité ou Blanche

ԱԼԻՍ ՊՕՅԱՃԵԱՆ

Կը պարէ ու կը ղեկավարէ իր պատրաս տած երկսեռ պարախումբը

Մասնակցութեամբ նուագախումբի զոր կը ղեկավարէ

ԱՐԱ ՊԱՐԹԵԻԵԱՆ

Տոմսերու դիներն են 800, 600, 500, 400 *եւ* 300 *ֆրանք*

Ստանալու համար դիմել՝

Etabl. O. B. 83, Rue d'Aboukir, Paris - Tél. CEN. 48-69 *եւ ներկայացման օրը թատրոնին կիչէն։*

ՕԳՏՈՒԵՑԷՔ ԲԱՑԱՌԻԿ ԱՒԹՔԷՆ

CAMEL — ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՄՕՏ՝ 102, BD. VOLTAIRE, PARIS-XI՝

ԿԸ ԾԱԽՈՒԻՆ՝ ԻՐԵՆՑ ՍԵՓԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԵՂՈՂ,

Անգլիական եւ Աւստրիական կերպասներէ, նորաձեւ LODEN

ՎԵՐԱՐԿՈՒՆԵՐ ԵՒ AUTOCOATS ՆԵՐ

(*Զանազան գոյներ*) 8000էն 12·500 *ֆր.*

Իրենց մօտ կարելի է գտնել նաեւ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿԻ ՆՈՐ ԵՒ ԳՈՐԾԱԾՈՒԱԾ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ խիստ մատչելի գիներով։

SMOKINGի ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ։ Մեծաքանակի համար մասնաւոր սակացոյց

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 — Téléph. : PRO. 86 - 60

R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա եւ գաղութներ, տարեկան 3000 ֆր. վեցամս. 1600

Արտասահման՝ տարեկան 3500 ֆրանք : Հատը 12 ֆր.

ՈՒՐԲԱԹ
13
ԴԵԿՏԵՄԲԵՐ
VENDREDI
13 DECEMBRE
1957

33ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8067 — 33e ANNEE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 13ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3868

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՊԱՅԾԱՌԱՆԱՅ

« Կլոր սեղան»ի խորհրդակցութիւննե – րը կրցան հաչտեցնել ընկերվարական – ներն ու անկախները, որոնք ամուր կե – ցած էին իրենց տեսակէտներուն վրայ : Ելմտական նախարար Ֆելիքս Գայլլ որոշ ճկու – նութիւն մը ցոյց տուաւ զոհացնելու հա – մար ընկերվարական նախարարները : Իսկ վարչապետ Ֆելիքս Կայլառ յաջողեցաւ իրաւարարի դեր կատարել՝ նախարա – րական նոր տաղնապի մը առաջքն առնե – լու համար :

Աւելի քան մէկ ամիսէ ի վեր Խորհուրդ – դարանի ելմտական յանձնախումբը, դահ – լիճը, ազգային ժողովը, կառավարական կուսակցութեանց վարիչները հաղարու – մէկ ձեւեր կը փորձեն՝ քիչ բացով եւ – մտացոյց մը կազմելու համար : Ցոյս կար, որ չարթնու սկիզբը ելմտական ծրա – գիրը դրուէր Ազգ. Ժողովի օրակարգին վրայ, սակայն պաչտօնեաներու ամսա – կանի յաւելման խնդրին յապաղումը ար – գելք եղաւ ատոր :

Ինչպէս գրեցինք արդէն, ընկերվարա – կանները կը պահանջէին, որ պետական պաչտօնեաներու ամսականները Ցունուար մէկէն սկսեալ տասը հազար Ֆրանքի յա – ւելում կրեն : Այսինքն 200·000էն բարձ – րանան 210·000ի : Իսկ Ցունիս մէկէն ըս – կըսեալ տասը հազարի յաւելում մը եւս ըլլայ :

Ելմտական նախարարը սկիզբը կ'ընդու – նէր միայն առաջին յաւելումը, որ պե – տութեան պիտի արժէ 18 միլիառ Ֆր. : Այս գումարը կարելի պիտի ըլլայ հայ – թայթել զեղչելով կարգ մը հանրօգուտ ձեռնարկներ եւ 15ի փոխարէն քսան ա – հարիւր յաւելում մը ընելով երկաթուղիի առաջին կարգի գիներուն վրայ : Կը մեր – ժէր սակայն Ցուլիսի յաւելումը, որ պի – տի արժէ 36 միլիառ Ֆրանք եւ զոր ճա – րելու համար պիտի ստիպուի նոր տուր – քեր հաստատել : Իսկ անկախները հակա – ռակ են նոր տուրքերու : Բայց հոս ալ ի վերջոյ տեղի տուաւ :

Պաչտօնեաներու ընդհանուր դաչնակ – ցութիւնը իր կողմէ անբաւարար կը գտնէ 210·000ը եւ կը պնդէ անմիջական 220000ի վրայ, վերջնական պահանջն ըլլալով 240 հազար Ֆրանք :

Ընկերվարական կուսակցութեան Ազ – գային Խորհուրդը արտակարգ ժողով պի – տի գումարէ կիրակի օր՝ այս հարցին եւ յարակից խնդիրներու չուրջ վիճելու հա – մար :

Մինչ այդ ելմտացոյցը դեռ չէ ներկա – յացուած Խորհրդարանին եւ դժուար թէ անիկա վաւերացուի տարեզլուխէն առաջ, ինչպէս կը պահանջէ օրէնքը :

Միւս կողմէ օրերը չուտ կը սահին եւ պետական պարտքերը վճարելու պայմա – նաժամը կը հասնի :

Առանց արտաքին փոխառութեան դիմե – լու, անկարելի է, որ կառավարութիւնը կարենայ յարգել իր բոլոր յանձնառու – թիւնները : Միացեալ Նահանգներն ու Գերմանիա տրամադիր են փոխ դրամ տալու Ֆրանսայի :

Ակէ զատ, ելմտական նախարարն ու Պանք տը Ֆրանսի տնօրէնը Փարիզի մէջ բանակցութիւններ կը վարեն Միլլազդա – յին Հիմնադրամի նախագահ Փէր Ճաքոպ – սոնի հետ՝ 262 միլիոն տոլարի նոր կան – խավճար մը ստանալու համար :

Սակայն Ճաքոպսոն խիստ պայմաններ կ'առաջարկէ : Նախ կը պահանջէ որ ել – մտացոյցի բացը վեց հարիւր միլիառէն աւելի պակաս ըլլայ : Ո՛չ մէկ վճարում պիտի կատարուի՝ մինչեւ որ 1958ի ելմտացոյցը չվաւերացուի : Վճա – րումները մաս մաս պիտի ըլլան՝ ոչխարին համաձայն : Ցետոյ պիտի քննուի նաեւ թէ «հարիւրին քսանի գործողութիւն»ը ինչ հետեւանք ունեցաւ Ֆրանսայի արտաքին առեւտուրին վրայ : Կառավարութիւնը

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԲՈՒԼԳԱՆԻՆԻ ՆՈՐ ՆԱՄԱԿԸ ԱՆԳԼԻՈՅ ԵՒ ՖՐԱՆՍԱՅԻ

ԱԶԳԸՆՀԱՒՈՒՐԻ ՑԱՆՁՆՈՒԱԾ ՆԱՄԱԿԸ

Ատլանտեան Ուխտի «Մեծ»երու հան – դիպումին քանի մը օր մնացած, Մ. Մի – ութիւն կը փորձէ ի նպաստ իրեն կարծիք մը պատրաստել Արեւմուտքի մէջ :

Հաղիւ թէ Նախագահ Այզընհաուըրի Փարիզ գալու որոշումը յայտնի եղած էր, Բուլգանինի մէկ նամակը հասաւ Սպի – տակ Տուն :

Այնուհետեւ, յաջորդաբար նամակ ըս – տացան Արեւմտեան Գերմանիոյ, Հնդ – կաստանի, Անգլիոյ եւ Ֆրանսայի վար – չապետները :

Փարիզի խորհրդային դեսպանը անձնա – պէս յանձնեց Բուլգանինի նամակը՝ վար – չապետ Կայլառի : Երկու դիւանագէտնե – րու խօսակցութիւնը տեւեց մօտ քառորդ ժամ :

Լրագրողներու կողմէ հարցապնդուե – լով, խորհրդային դեսպանը յայտարա – րեց, թէ Վարչապետ Կայլառի ուղղուած նամակին պարունակութիւնը բոլորովին տարբեր էր Այզընհաուըրի եւ Ատլնաուր – րի ղրկուած նամակներու պարունակու – թենէն. — Այս նամակը մասնաւորապէս Ֆրանսայի ուղղուած է, բայց ան, եւ կը պարունակէ խաղաղութեան ու բարեկա – մութեան վերաբերեալ խօսքեր :

Դեսպանը աւելցուց, թէ կրնայ ըլլալ որ չուտով հրատարակուի նամակը :

Անգլիոյ Վարչապետ Մաքմիլլընի ղրր – կուած նամակն ալ մօտաւորապէս նոյն ի – մաստը ունի :

Ուշագրաւ են Այզընհաուըրի ղրկուած բարեկամական նամակն ու Ատլնաուրի յանձնուած սպառնագիրը : Դիւանագէտ – ներու կարծիքը այն է, թէ Խրուշչեւ կ'ու – զէ ձախողութեան մատնել Ատլանտեան Ուխտի ժողովը :

Բուլգանին Միացեալ Նահանգներու կ'առաջարկէ Արեւելք – Արեւմուտք հան – դիպում մը : Ժամանակը չէ, կ'ըսէն Ա – մերիկացիք : Բուլգանինի նամակին պա – տասխանը պիտի տրուի՝ Ատլանտեան Ուխտի ժողովէն ետք :

Ինչպէս կը տեսնուի, ժողովին աչխա – տանքները ձախողութեան մատնելու խոր – հրդային ծրագիրը հաղիւ թէ ուշադրու – թիւն գրաւած է Արեւմուտքի կողմէ, քա – նի որ նամակին պատասխանն անդամ կը յետաձգուի : Ամերիկեան թերթերն ալ մեծ արձագանգ չտուին այս նամակին : Ուղիղնկրըն Փոսթ թերթը, թէեւ երեք սիւնակի վրայ, սակայն չատ կարճ ձեւով տուած է լուրը, մինչ «Նիւ Եորք Թայմզ», որ մեծ խորագիրներով կը հաղորդէր ներքնընթացի (մեթրօ) վարիչներուն գործադուլը, հաղիւ թէ պզտիկ անկիւն մը գտած է, էջին տակը, լուրը տալու

(Շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ծրագրած է նոր սեղմումներու ենթարկել ներածումները, որոնց գումարը ամսական 120 միլիառի կը հասնի ներկայիս, ինչ որ չատ կը նկատուի :

Պանք տը Ֆրանսը կարգադրած է վճա – րումը 54 միլիոն արտաքին պարտքին, որուն պայմանաժամը կը լրանայ Դեկտ. 31ին : Սակայն Ցունուար 15ինը կարելի պիտի չըլլայ հատուցանել՝ առանց դուր – սէն կատարուելիք փոխառութեան :

Ներքին ճակատին վրայ կառավարու – թիւնը կարեւոր որոշումներ տուաւ սղու – թեան դէմ պայքարելու եւ ապրուստի անհրաժեշտ կարգ մը նիւթերու գիները պակսեցնելու համար :

Կացութիւնը կը պայծառանայ հետզհե – տէ :

ՀՐԱՆՏ – ՍԱՄՈՒԷԼ

Օր ըն Օրին

ՄԻ ՁԱԽ, ՄԻ Ա.Ջ ...

Լսեցիք անշուշտ :

Միացեալ Նահանգները հեռավար (թէլէ – կիտէ) հրթիռները վլիտի տան Թուրքիոյ : Լուրը պաշտօնապէս հաղորդուեցաւ նաեւ Անգարայի մէջ, Վարչապետ Մենտերէսի բերնով :

Խեղճե՛ր... երկրին տնտեսական խայ – խայման առջեւ կուրացած, մինչ նարինջն ու թուղթը, շաքարն ու իւղը անգտանելի դարձած են, այլ ուտեստեղէններու եւ առօրեայ պիտոյքներու կարգին, բան գործ ձգած, հրթիռ կը փնտռեն : Հեռա – վա՛ր հրթիռներ :

Թուրք սպաներ ալ Ամերիկա պիտի եր – թան այդ հրթիռներու գործածութեան վարժուելու համար :

Տարօրինակ է, որ Թուրքիա մեծ դաշ – նակից մը գտած է միշտ, իրեն բան մը սորվեցնելու համար :

Սորվեցնողներ գտած է, բայց... սոր – վողներ չէ գտած :

Ատենին, երբ Գերմանիոյ դաշնակիցն էր, գերմանացի զինուորներ ռազմագի – տական դասեր պիտի տային թուրք սպա – ներուն : Դասատուներուն առաջին գործը եղած է կարգի շարել *մչմչմաճիկ*ները եւ ֆալել սորվեցնել անոնց : Դժուարութիւնը ծագած է հոն՝ երբ Թուրքերու մռնկոլ – եան գանկին մէջ չէ տեղաւորուած, թէ ո՞ր կողմը աջ է եւ ո՞ր կողմը՝ ձախ :

Վերջապէս, Թուրքերը, իրենք միջոցը գտած են՝ աջին սոխ եւ ձախին սխտոր կապելով :

Եւ, ձախ – աջին տեղ, սկսած են կրկ – նել :

— Սո՛խ, սխտո՛ր... սո՛խ, սխտո՛ր... մինչ բանա՞կը թրքականոն, սկսած է եր – թալ յառաջ՝ մի՛ ձախ, մի՛ աջ ...

Ըստ երեւոյթին, նոյն կացութեան պի – տի մատնուին նաեւ Ամերիկացիք, մռն – կոլեան այդ գանկերուն մէջ հրթիռներու գործածութեան եղանակը տեղաւորելու համար :

Այս անգամ, «սոխ – սխտոր»ի տեղ ու – րիշ բացատրութիւն մը պէտք է գտնել սակայն, քանի որ այդ... գիտութեան վկայականը ստացած ըլլալ կը թուին՝ Քառասուն տարուան ընթացքին :

Ներկայիս, թուրք սպաներու մտքին մէջ լաւ տեղաւորուած պէտք է ըլլայ եր – կու անուն.— Իսմէթ եւ Մենտերէս :

Հետեւաբար, Ամերիկացիք կրնան օգ – տագործել զանոնք, ձախին Իսմէթ, աջին՝ Մենտերէս ըսելով բանակը յառաջ տա – նելու համար ... : ԱՐՄԵՆԱԿ

ԿԻՊՐՈՍԻ ԽՌՎՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ

ՖՐԱՆՍԱ՝ ԱՆԳԼԻՈՅ ԿՈՂՔԻՆ

Կիպրոսի մէջ խռովութիւնները կը չա – րունակուին : Ուսանողները բողոքի յա – ջորդական ցոյցեր կը կազմակերպեն եւ ոստիկանութիւնը զաւազաններու եւ ար – տասուաբեր ռումբերու կը դիմէ, զանոնք ցրուելու համար :

Կիպրոսի խռովութիւնները սկսան՝ Մակի մէջ այս հարցին քննութիւնը սեղան դրուելէ ետք եւ կը չարունակուին : Վեր – ջին երեք օրերու ընթացքին 183 հոգի վի – րաւորուած եւ 218 հոգի ձերբակալուած է :

Անգլիացի զինուորները կը շրջին յու – նական եւ թրքական թաղերուն մէջ, կարգը պահելու համար : Մինչ ժողո – վուրդը կը քարկոծէ զինուորական կառ – քերը :

Առջի գիշեր, Թուրքերը յարձակում գործած են Նիկոսիոյ յունական մէկ գիւ – ղին վրայ : Թուրքերը զինուած էին բա – հերով ու բիրերով : Երկու Ցոյներ ծան – րօրէն վիրաւորուած են :

Կիպրոսի ոստիկանութեան տարեկան տեղեկագիրէն ի յայտ կուգայ, թէ կըղ – զիին մէջ 1956ին 194 հոգի սպաննուած էր, 59 բանակային, քսան ոստիկան եւ 115 քաղաքացի : Իսկ խռովութիւններու նիւ – թական վնասը եղած է երկուքուկէս մի – լիոն սթերլին :

Մակի քաղաքական յանձնախումբին մէջ Կիպրոսի հարցին քննութիւնը կը չարու – նակուի : Ֆրանսա թիկունք կը կանգնի Անգլիոյ : Առջի օր յանձնախումբին Ֆը – րանսայի ներկայացուցիչը դէմ արտա – յայտուեցաւ Կիպրոսի հարցին լուծման համար Ցունաստանի բերած առաջարկին եւ աւելցուց, թէ վստահութիւն պէտք էր ու – նենալ անգլիական կառավարութեան վը – րայ, որ այս հարցին միակ դատաւորը կրնայ ըլլալ :

———o———

ՊՈՒԼՆՈՍ ԱՅՐԼԻՍԻ մէջ (Արժանթին)

մօտ քսան հազար հոգի ցոյց մը կազմա – կերպեց, «կեցցէ Փերոն» աղաղակելով : Ոստիկանութիւնը միջամտած է եւ կռիւի բռնուած՝ ցուցարարներուն հետ :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՓԱՐԻԶԻ Պատժական Ատեանը ցկեանս տաժանակիր աշխատանքի դատապարտեց Ալի Շէքալի սպաննիչը՝ Պէն Սատոք :

ՓԱՌԻՍՏԱՆԻ Վարչապետը իր հրաժա – րականը ներկայացուց : Հանրապետու – թեան Նախագահը Շնուտիկարի առաջար – կեց, որ կառավարութիւնը կազմէ :

ՀՈՒՆԳԱՐԻՈՅ մէջ ապստամբութեան ընթացքին կարտինալ Մինձենթիին ազա – տող հրամանատարը զնդապետ Պէլա Քիրալի, զինուորական ատեանին վճիռով :

ԵԳԻՊՏՈՍԻ կրթական նախարար Քա – մալ Էլտին Հիւսէյն իր հրաժարականը ներկայացուց Նասրի : Եգիպտական Ազգ. Ժողովին մէջ նախարարին եւ կառավա – րութեան միւս անդամներուն միջեւ տա – րակարծութիւն մը ծագած էր :

ԻՐԱՔԻ նախկին վարչապետ Նուրի Սա – յիտ, որ ներկայիս Ուշինկթըն կը դես – նուի, տեսակցութիւն մը ունեցած է Նա – խագահ Այզընհաուըր եւ Տըլլըսի հետ : Նախկին վարչապետը խօսած է արաբե – խարայէլ հարցին կարգադրութեան մա – սին :

ԻՏԱԼԻՈՅ համաչնաւար կուսակցութեան կեդրոնական Կոմիտէին մէջ, Թոլլիաթի, որ «խրուչչեւեան» մըն է, Մոսկուա իր ճամբորդութեան տեղեկագիրը ներկայա – ցուցած է եւ յաղթանակ տարած՝ «սթա – լինեան»ներու վրայ : Կեդր. Կոմիտէի ժո – ղովին պաչտօնական արդիւնքը տակաւին չէ հաղորդուած :

ՍԷՐՎԱՆԹԷՍի «Տոն Քիշոթ»ին մէկ տպագրութիւնը, նկարազարդուած՝ Սալ – վատոր Տալիի կողմէ, կը նկատուի աչ – խարհի ամէնէն սուղ գիրքը, ծախուած՝ տասը միլիոն Ֆրանքի : Գրքին ցուցա – դրութիւնը սկսած է Ժաքմար – Անտրէ Թանգարանին մէջ, 158, Պուլվար Հոսման :

ՀԻՐՈՇԻՄԱՅի վրայ 1945 Օգոստոս վե – ցին հիւլէական ռումբ նետած զնդապե – տը՝ Էթբըլի, դողութեան համար դատա – րան կանչուած է : Բժիչկները բազմաթիւ տեղեկութիւններով հաստատած են, թէ Էթբըլի հիւլէական ռումբը նետելէն ի վեր, հա – ւասարակշռութիւնը կորնչուցած է եւ հոգեբոյժներու խնամքին յանձնուած : Էթբըլի հերոսի չքանչան ստացած ան – ուանի զինուորական եւ մեծահարուստի զաւակ է : Իր ստացած ամսականներուն ձեռք չի զարներ եւ կը նախընտրէ դողու – թեամբ ապրիլ :

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԵՒՐՈՊԱՅԻ ՄԷՋ

Եւրոպական երկիրներու մէջ քաղաքական մտահոգութեանց վրայ կ'աւելնայ կրթական մտահոգութիւնը: Ազգերուն թիւը հետզհետէ կ'աւելնայ, դասա – խօսներու թիւը քիչ է, իւրաքանչիւր դասարան խճողուած է: Ուսուցիչներու թիւը համեմատական չէ դասարաններու թիւին, ծանրաբեռնուած են ուսուցիչները եւ մանաւանդ բաւարար վճարում չեն ստանար: Այս ամէնը պիւտճէի հարց է Անգլիոյ մէջ, Ֆրանսայի մէջ, Իտալիոյ մէջ:

Այս տարուան պետական քննութեանց մէջ ձախողած են հազարաւոր աշակերտներ թէ Ֆրանսայի մէջ եւ թէ Իտալիոյ մէջ: Թիւերը մտահոգիչ են: Հոգերան – ներ կ'ուսումնասիրեն հոգերանական պատճառները, մանկավարժներ՝ մեթոտներ եւ ծրագիր: Որակեալ ուսուցիչներու թիւը կը պակսի, կը մեղադրուին ուսուցիչներ:

Ամէն կողմէ կ'առաջարկուի բարեփոխել ծրագիրները, մեղմացնել կրթական դըրութիւնը, չափաւորել պաքալորէայի քննութիւնները, որոնք մղձաւանջն են թեկնածուներուն եւ ընտանիքներուն: Կը կրկնուի թէ միշտ տղուն միտքը զարգացրեէ աւելի կազմելու է դաստղութիւնը, դարբնելու է նկարագիրը: Կը վերադառնան Մոնթեսորի, որ կը կրկնէր Պլու – տարքոսի խօսքը· « Միտքը վառարան մըն է՝ տաքցնելու է զայն, անօթ մը չէ լեցնելու համար»: Դպրոցը մտազաթի համար պատրաստելու չէ, մարդ եւ քաղաքացի պատրաստելու է:

Իւրաքանչիւր վարչամեւի առաջին մըտահոգութիւնն է փոխել ծրագիր եւ մեթոտ բաղձացուած անհատը պատրաստելու համար: Իշխանապետական վարչա – ձեւերու տապալումով նոր ծրագիրներ կը մշակուին, նոր ժամանակի իրաւակարգին եւ ըմբռնումներու համաձայն:

Նափոլէոն 1808ին ստեղծեց դպրոցական միակ դրութիւն մը, այնուհետեւ ուսուցման բազմաթիւ ճիւղեր ներմուծուեցան դրութեան, կեդրոնացման տեղ ապակեդրոնացումն սկսաւ: Լիսէն կը մնար աղնուապետական, նախակրթարանը ձրի եւ պարտաւորիչ համեստ դասակարգի համար էր: Լանժըէն յանձնախումբը պատրաստեց ծրագիր մը, որուն ոգին էր «դպրոցին ռամկավարացումը»: Բոլոր տղաքը պիտի ուսանին պետական կեդրոնացումով, որովհետեւ բոլոր տղաներ, ընդունակութիւնները, բոլոր նկարագիրները դրուելու են ընկերութեան ծառայութեան մէջ: Պետութիւնը պիտի կատարէ ընտրութիւններ եւ պիտի ուղղէ իւրաքանչիւր տղայ որոշ մասլարէգի մը իր ընդունակութեան համաձայն: Նախկին դրութիւնը, դասակարգային էր, կը Թոյլատրէր դասակարգի մը պետական բարձր դպրոցներ յաճախելը, մինչդեռ համեստ դասակարգի պատկանող տղան, նիւթական միջոցներէ զուրկ, եւ սակայն ընդունակ, անկարող էր արժեւորելու իր կարողութիւնները ու բարձրանալու ընկերային աստիճաններէն վեր: Միջակ կարողութեան տէր երիտասարդներ լաւագոյն պաշտօններ կը ստանային, որովհետեւ նիւթապէս լաւագոյն պայմաններու մէջ դաստուելով՝ կրցած էին աւելի ուսանիլ՝ մինչդեռ ուրիշներ աւելի օգտակար պիտի ըլլային ընկերութեան՝ աւելի օժտուած ըլլալով, բայց չէին կրցած անհրաժեշտ ուսումն ստանալ:

Ֆրանսայի մէջ 1944էն ի վեր եօթերորդ անգամն է, որ կրթական բարեփոխման նոր ծրագիր մը կը ներկայացուի Երեսփոխանական ժողովին: Կրթական նախարարին ծրագիրը կ'առաջարկէ հիմնական փոփոխութիւն ուսուցման ծրագրի, որովհետեւ երկիրը պէտք ունի մասնագէտներու: Առաջին տեղը պիտի դրաւէ դիտութեան ուսուցումը, որովհետեւ դիտական մրցակցութեան շրջանի մը մէջ կ'ապրինք: Կըրթութիւնը պարտաւորիչ պիտի ըլլայ մինչեւ 16 տարեկան: 11 – 13 տարեկան աշակերտներու քննութեամբ պիտի որոշուին ուսանողներու հետեւելիք ճիւղերը՝ ճըշդելով այսպէս ընդունակութիւնները: Պետութիւնը պիտի ստանձնէ աղքատիկ ուսանողներու ծախսերը: Դաստիարակութիւնը պիտի չարունակուի միչտ, «պիտի կատարուի ազդին մնայուն դաստիարակութեան ճիգ մը»:

Ազգ. դաստիարակութեան յանձնախումբին տեղեկաբեր Իբրոլիդ Տիւքոս կը չեչտէ մասնագիտական եւ ընդհանուր ուսուցման պէտքը: «Տեքարդի, Փասթէօրի, Հանրի Փուանքարէի երկրին մէջ պատրաստելու է դիտուններու բանակ մը, ուր կարելի ըլլայ գտնել հազարաւոր ճարտարագէտներ, ուսուցչասեռներ, բայց մի-անգամայն ամէն Ֆրանսացի մշակուած մարդ մը ըլլալու է: Տեղեկաբերը կը յիչէ չափազէտ Լանժըւենի խօսքը.— « Մչակոյթը անհատին համար միջոց մըն է մարդկային մնալու, հակառակ արհեստին մեքենականութեան եւ ընկերային պարտադրանքներուն »:

Նախորդ պատերազմէն յետոյ արմատական – ընկերվարական էրիոյ կը կրկնէր Ռընանէն ետք, թէ ուսուցումը դի – տական ըլլալու է այլեւս եւ ոչ թէ գուտ դասական: «Դաստիարակութեան արդիւքն ըլլալու է այնպէս մը, որ երիտասարդը կարելի չափով դիտնայ, ինչ որ մարդկային միտքը գտած է տիեզերքի իրականութեան մասին»: Ռընան «Դիտութեան Ապագան» գործով, գրուած երիտասարդութեան առեն եւ հրատարակուած կէս դար յետոյ, կը նախատէ սէր դիտութեան յառաջդիմութիւնները եւ դիտական ուսումներու աւագ կարեւորութիւնը: Կը հրաւիրէր երիտասարդութիւնը ճիգի, լուրջ աշխատանքի: Լուի՛ը Կրան, Լիսէի մրցանակաբաշխութեան հանդէսին, 1883ին, կ'արտասանէր չհեկեկալ հուսկ բանք մը. «Կեանքը որ ձեր առջեւն է պատանիներ, իրրեւ անսահման երկիր մը, ես զայն կարեցի: Միակ պատրանքը զոր դուք կ'ունենաք, ունենալ զայն եր – կար ենթադրելն է: Ոչ, չատ կարճ: Վարժուեցէք, դուք ձեզ պարտաւորեցէք ձեր մէջ զարգացնելու անձնական ճիգը: Մշակեցէք ձեր բանականութիւնը դիտութեամբ եւ գրականութեամբ: Գիտութիւնը կը հեռացնէ բարբարոսութիւնը, դպրութիւնը կը պահէ քաղաքակրթութիւնը»:

Այնուհետեւ երկրորդական տեղ մը պիտի տար դպրութեան եւ իր աշակերտներուն մէկը, դրադատ Ժիւլ լը Մեթր, Սորպոնի մէջ չոնդալից ճառով մը պիտի առաջարկէր դասական լեզուներու, յունարէնի, եւ լատիներէնի ընդումը երկրորդական վարժարաններու ծրագրէն:

Աւելի ծայրայեղ էր Պրիւնէլըը երբ կը դրէր· «Կամ բազմաթիւ աշակերտներ պատրաստելու ենք դիտական զարգացումով, որովհետեւ դիտութեամբ երկիր մը կրնայ արժէք ստանալ, իր միջազգային դիրքը պահել եւ պաշտպանուիլ եւ կամ պիտի մեռնինք»:

Կրթական նախարարութիւնը քանի մը չրջաբերականներով ուսուցիչներուն կը յանձնարարէր տղան պատրաստել ընկերային կեանքի արդի պայմաններուն: Ցոյց տալու է օգտակար ծանօթութիւններ, բայց աւելի կազմել տալու է իմացական լաւագոյն սովորութիւններ: Ուսուցումը ըլլալու է թանձրացեալ եւ կենդանի: Ծրագրի մէջ ներմուծուած են խմբովին աշխատանքը, ժամանակացոյցին մէջ տեղ տուած ենք աշակերտներու աշխատանքին դեկավարութիւնը ուսուցչին կողմէ:

Մանկապարտէզներու մէջ հաստատուած են հանդստեան սրահներ, խաղասրահներ:

Նոր դպրոցներու մէջ ուսուցումը հետզհետէ անհատական կը դառնայ, ուսուցիչը կը զբաղի իւրաքանչիւր աշակերտով: Պետական նոր ծրագիրը կ'առաջադրէ խմբական ուսուցումը: Իւրաքանչիւր դասարան պիտի ունենայ 25 աշակերտ, ոչ աւելի, որպէսզի ուսուցիչը կարենայ հետեւիլ իւրաքանչիւրին աշխատանքին, վարմունքին եւ զարգացնել իւրաքանչիւրին կարելիութիւնները: Ուսուցիչները խմբովին պիտի աշխատին, համակարգելով իրենց ճիգերը, դաստիարակութեան նպատակին իրագործելու, ծրագիրը կիրարկելու, վաղուան մարդն ու քաղաքին պատրաստելու:

Կ'առաջարկուի բարեփոխել վարժապետանոցներու ծրագիրն ու մեթոտները: Ջանազան աստիճանի ուսուցման համար յատուկ պատրաստութեամբ ուսուցիչներ պէտք են նոր նպատակին իրագործելու համար:

Գիտութեան առաջդիմութեան կը բարդուի ծրագիրը, աշակերտին աշխատանքը կը ծանրանայ: Միլանի մէջ դումարուած բժչկական համագումարն ալ աշակերտական աշխատանքը յորդեցուցիչ կը դտնէ, պատճառ անքնութեան, ջղային տկարութեան:

Բարդ է հարցը հոգեբանական, մանկավարժական եւ մանաւանդ ելեմտական կողմերով: Վիճաբանութեան պիտի դրուի ծրագիրը երեսփ. ժողովին մէջ: Բազմաթիւ երեսփոխաններ խօսք պիտի առնեն, կուսակցութեանց ներկայացուցիչներ կուսակցական տեսակէտով պիտի մօտենան հարցին, որուն լուծումը դեբազանցօրէն ազգային խնդիր մըն է, արժանի ընտանիքներու եւ պետութեան հետաքրքրութեան:

ԽՈՐԷՆ ԳԱԲՐԻԿԵԱՆ

ԸՆԿԵՐՈՋ ՄԸ ՑՒՇԱՏԱԿԻՆ

Այսպէս ուրեմն, ընկեր Թադուր Այվազեան ալ թաղեցինք: Թէեւ չարաթ – ներ անցան իր մահուան բօթէն յետոյ, բայց մենք, իր ծանօթներն ու մտերիմները տակաւին չենք հաշտուած, չենք կրնար հաշտուիլ իր կորուստին հետ... Իր առողջական վիճակը չատ լաւ չէր: Մեր ծանօթ շրջապատին մէջ ոչ ոք այնքան հոգածու էր իր անձին ու առողջութեան՝ որքան ինքը, եւ որովհետեւ անսպասելի մահն ալ պատահեցաւ մենէ հեռու՝ ահա թէ ինչու դժուար է հաւատալ, կամ հաշտուիլ անոր կորուստին հետ ...

Բայց եւ այնպէս, չկայ այլեւս ամէնուս ծանօթ եւ սիրելի ընկեր Այվազեանը: Ծնած էր 1892 թուականին, Պրուսայի Մեծ Նոր գիւղը: Իր նախնական կրթութիւնը կը ստանայ գիւղին նախակրթարանին մէջ· յետոյ ծնողքը գինքը կը ղրկեն Պոլիս՝ լման կրթութիւն ստանալու համար: «... Գնա տղաս, — կ'ըսէ ուսումնատենչ հայրը — գնա մարդ եղիր, եթէ պէտք ըլլայ ես հաց ու «զէթուն»ով ալ կ'ապրիմ ...»:

Ընկեր Այվազեան լիովին կ'արդարացնէ իր ծնողքին երազը: Փայլուն յաջողութեամբ կ'աւարտէ Պոլսոյ Կեդրոնական վարժարանը ու կը վերադառնայ գիւղ, ուսուցչական ասպարէզին նուիրուելու համար· նախ՝ իր հայրենի գիւղին, ապա երկար տարի Սէօլէօզի մէջ կը պաշտօնավարէ իբր ուսուցիչ, հանդուգնաբար Յ· Օչականի եւ ուրիշներու հետ:

Ընկեր Այվազեան, Պոլսէն մինակ բարձր կրթութեան մը վկայականը չի տանիր իր հետ, այլ նաեւ ուրիչ բան մը որ յատկապէս այն օրերուն աւելի մօտ էր աշակերտութեան, երիտասարդներու սրտին ու հոգիին: Զաւարեանի, Ակնունիներու, Շահրիկեաններու, Զարդարեաններու, Ֆաժակներու եւ այլոց չուքին ու չունչին տակ մեծցած, պարարտացած, կոփուած: Թրծուած, ապա անոնցմէ ժառանգած առաքինութիւններն ու իտէալները, իր երիտասարդի խանդավառութեամբը կը փոխանձէ չրջապատին ու իր աշակերտներուն:

պատճառ անքնութեան, ջղային տկարութեան:

Բարդ է հարցը հոգեբանական, մանկավարժական եւ մանաւանդ ելեմտական կողմերով: Վիճաբանութեան պիտի դրուի ծրագիրը երեսփ. ժողովին մէջ: Բազմաթիւ երեսփոխաններ խօսք պիտի առնեն, կուսակցութեանց ներկայացուցիչներ կուսակցական տեսակէտով պիտի մօտենան հարցին, որուն լուծումը դեբազանցօրէն ազգային խնդիր մըն է, արժանի ընտանիքներու եւ պետութեան հետաքրքրութեան:

ԽՈՐԷՆ ԳԱԲՐԻԿԵԱՆ

ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ

(ԾՆՆԴԵԱՆ ՅՕԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)

« Ամենապոէմ»ի մէջ լենինեան տեսակէտն է·

Եւ միթէ՞ դուք չգիտէք
Որ ամէն մի անյայտ բանուոր ,
Որ ձեռքով իր երկաթ է կռում ,
Հազար պոէմներ ունի
Իր հուժկու , երկաթ թոռերում :
. . . . . .
Այո՛:
Ի՞նչու միայն ես :
Թող բոլո՛րը , նրանք երգեն :
Բոլորի՛ն, բոլորի՛ն, բոլորի՛ն ,
Երգեն :

Իր երգերուն մէջ բազմաթիւ «Արուեստ քերթողականներ կան :

Ահա հատ մը·

Թէ ուզում ես երգդ լսեն
Ժամանակիդ շունչը դարձիր :
Կապուիր նեարդով իւրաքանչիւր
Քո օրերին եւ քո դարին ·
Կեանքը սիրիր լիահնչիւն
Ու մի՛ դաւիր քո ճակտին :

Ահա ուրիչ մը·

Երբ այնքան նանաչես դու յոյզերը մեր,
Որքան մժեղի մկանը ծանօթ էր Փապրին,
Այնժամ դու բաց կ'անես պոէմների
փապրիք
Եւ երէ եփուես էփոքում, կը դառնաս
Տա՛նք, Հոմեր:

Ահա նաեւ երրորդ մը, բոլորովին տարբեր ...

Ամէն տեսակ երգ երգեցի, ամէնից լաւ
տաղն է էլի,
Սայաթ – Նովի դրախտային, անմահա –
կան խո՛ղն է էլի:
. . . . . .
Բախչի միջի ծաղիկները ինչքան էլ լաւ
ջրով անես՝
Ծաղիկների ջուրը ուզած – առաւօտուայ
շաղն է էլի :
Գնա կ'ուզես Ֆրանգստան, ամենամեծ
քուչեքը տես՝
Սրտիդ ուզած տեղը միակ — սիրեկանի
թաղն է էլի :
Վա՛յ ինձ, Չարենց, լաւ իմացի, ականջ
արա սիրեկանիդ՝
Ամէն բանից լաւ ու անուշ սիրեկանի
դաղն է էլի:

Այստեղ կ'ուզեմ մէջ բերել դրուագ մը Չարենցի կեանքէն: Հմայեակ Սիրասն է պատմողը :

Քանի մը օր առաջ միասին գացեր էն Քանաքեռ: Մինչ իր ընկերները կը զբօսնուն, Չարենցը մեկուսացեր է եւ երկու ժամ լման նստած առուակի մը ափին, կը դիտէ հոսող ջուրը :

Որոշ ժամանակ յետոյ Սիրասը կը հանդիպի կրկին Չարենցին: Ահա անոնց ըրոյցը :

« Զրոյցն աչխուժացաւ, երբ Չարենցը ասաց, որ մտադիր է «Ֆաուստը» թարգմանել եւ արդէն սկսել է :

Ես ժպիտով յիչեցի ·

«Կայէն»,

«Լիր Արքայ»,

« Ֆաուստ » մի յիմար ...»

— Դու « Ֆաուստի» ո՞ր թարգմանութիւնն ես կարդացել, — հետաքրքրուեց նա :

— Առաջին մասը — Բարխուդարեանի թարգմանութեամբ, հայերէն, յետոյ ամբողջը Ֆալդկովսկու՝ առաւերէն: Իսկ դուք ո՞ւմ ես, — իմ հերթին ես դիմեցի նրան հարցով, — թէ ի՞նչ է ասուած Ֆալդկովսկու ներածութեան մէջ :

— Հապա, հապա :

— Բառացի չեմ կարող ասել, բայց միտքն այս է, եթէ միւս մոլորակներում լինէին բանական արարածներ եւ յանկարծ նային երկրագնդի բնակիչներին մասին զգալիօրէն կռմռել, ապա ոչ այլ ինչ կաբելի էր նրանց յանձնարարել քան կէօթէի « Ֆաուստը» :

— Ա՛յ, հենց դրա համար էլ — բոցավառուեցին Չարենցի աչքերը, — ուզում եմ թարգմանել «Ֆաուստը», միայն թէ առողջութիւնս ների գործը մինչեւ վերջ հասցնել :

Մի քանի րոպէ լուռ էինք երկուսս էլ: Ապա դիմեց ինձ .

— Լաւ էր, չէ՛, քանաքեռի մեր զբօսանքը, չա՛տ լաւ ...

— Հաճելի էր, հաստատեցի ես :

— Պատահե՞լ է քեզ, որ նստես առուակի կողքը, երբ նա պղտոր է, եւ այնքան նայես , որ զուլալուի :

— Շատ է պատահել :

— Ո՞րտեղ :

— Մեր Ղարաքիլիսայում, դիտես ի՞նչ գետեր, առուներ, աղբիւրներ կան ...

— Հա, սատանան տանի, դրողի ստեղծագործութիւնն էլ առուի նման է. ինչպէս պղտոր առուն, նա էլ ժամանակի ընթացքում մաքրւում, պարզւում, զուլալւում է... ա՛յ Թումանեանը, ինչքա՜ն զուլալ է, դրանով էլ մեծ է...: Մենք պիտի հասնենք նրա զուլալութեանը: Մեր դրականութիւնը նոր է, նա չատ ոլորապտոյտներ է անցել ու քանի գնայ աւելի կը զուլալուի... ա՛յ, առողջութիւն է պէտք, որ մարդ ինչ մտածել է, բոլորը գրի ... »:

Կ· ՓՕԼԱՏԵԱՆ

(5 Հար·)

ԿՅՈՒՆՔ

ՊԵՐ ՓՈՐԻ ՎԱ

1926

Իսկ ահագին վարձքին վերաբերմամբ՝ ինքնին հասկանալի է, որ նրանք ոչնչով չեն արդարացնում իրենց գոյությունը, որովհետև ամբողջ հասարակության համար նրանք ոչ միայն ոչ մի օգուտ չեն տալիս, այլև ամենամեծ վնասն են հասցնում։

— Տիկի՛ն, դուք ինձ վրա վհատեցնում եք ձեր խոսքերով։ Ես ձեզ ասում եմ, որ ես ոչ մի հանցանք չունեմ, որ ես ոչ մի մեղք չունեմ իմ վրա։ Ես ոչ մի ոճրագործություն չեմ գործել...

— Ես էլ ձեզ ասում եմ, որ դուք ոճրագործություն եք գործել, որ դուք մեղավոր եք, որ դուք ամենամեծ հանցանքն եք գործել։ Ես ձեզ ասում եմ, որ դուք ամենամեծ հանցանքն եք գործել, որ դուք ամենամեծ մեղքն եք գործել։ Ես ձեզ ասում եմ, որ դուք ամենամեծ մեղքն եք գործել։

համար :

Նոյնն էր նաեւ պարագան՝ Լոնտոնի մէջ : Անգլիական քաղաքական շրջանակ – ները, սովորականին պէս, պաղ ընդունե– լութիւն մը վերապահած էին ազապա – րանքով իրենց հասած խորհրդային նա– մակին : Մինչ, Վարչապետ Մաքմիլըն ներկայ պայմաններու մէջ, Մոսկուայի հետ խորհրդակցութիւն մը անկարելի կը նկատէ :

Ապրիլուրբի ղրկուած նամակին մէջ, Բուլգանին կ'առաջարկէ որ Գերմանիա դէմ կենայ իր հողամասին վրայ ամերիկ– եան հիւլէական խարիսխներու կառուց – ման :

Նախագահ Այզընհաուըրի ղրկուած նա– մակին մէջ, մտադիր Բուլգանին կ'ըսէ, թէ Միացեալ Նահանգներ եւ Անգլիա աշ– խարհի մէջ կ'աշխատին ստեղծել ռազմա– րոյր մթնոլորտ մը եւ փոխանակ զինա – թափութեան միջոցներուն մասին մտա – ծելու, Ամերիկա կ'ուզէ հեռաւոր (թէ– լէկիտէ) հրթիռներու արձակարաններ եւ ջրածին զէնքերու մթերանոցներ հաստա – տել Արեւմտեան Եւրոպայի երկիրներուն մէջ : Մոսկուայի համաձայն՝ ոչ մէկ կաս– կած, որ այդ երկիրները դէմ են նման ծրագիրներու, որոնք նպաստաւոր չեն ի– րենց ազգային շահերուն եւ վտանգաւոր են՝ իրենց ապահովութեան տեսակէտէն :

Մտադիր Բուլգանին կ'աւելցնէ .— Ա. Միութիւնը համաձայն է Արեւելք – Արեւ– մուտք հանդիպումի մը : Կ'առաջարկեմ Միացեալ Նահանգներ – Ա. Միութիւն դաշինք մը, երկու երկիրներու բարեկա– մական յարաբերութեանց եւ խաղաղ գործակցութեան համար :

Եզրակացութիւն.— Ա. Միութիւն, Միացեալ Նահանգներ եւ Անգլիա համա– ձայնութիւն մը՝ Լրածին ռումբի փորձե– րը դադրեցնելու համար, 1958 Յունուար մէկէն սկսեալ ու 2 – 3 տարուան հա – մար : Համաձայնագիր մը՝ վարչապետ եւ Արտաքին Ուխտի միջեւ, իրարու վրայ յարձակում չգործելու համար : Ա. Միու– թիւն, Միացեալ Նահանգներ եւ Անգլիա վերջնական համաձայնութեան մը՝ երկու Գերմանիաներուն զէնք չյանձնելու հա – մար :

Մինչ այս մինչ այն, Նախագահ Այզընհաուըր որոշումը փոխած է, եւ փոխա – նակ չաբաթի՝ ուրբաթ օր պիտի դայ Փա– րիզ, իր անձնական օդանաւով : Նախա – դահը պիտի մնայ Փարիզի ամերիկեան դեսպանատան մէջ եւ ոչ մէկ հրաւէր պիտի ընդունի : Պիտի մասնակցի Արեւ– տեան Ուխտի ժողովներուն եւ խորհըր – դակցութիւններ պիտի ունենայ Ֆրանսա– կան կառավարութեան ներկայացուցիչնե– րուն, ինչպէս նաեւ վարչապետ Կայեառի հետ :

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Ֆ. Կ. Խաչի Վիէննի վարչութիւնը չը – նորհակալութեամբ ստացած է Տէր եւ Տիկին Ս. Արամեանէ հաղար Ֆր. փոխան Ծաղկեպսակի Այրի Տիկին Մարիամ Մա– ղաքեանի մահուան առթիւ :

×

« Շանթ » Գրական Գեղարուեստական ընկերակցութիւնը չնորհակալութեամբ ստացաւ Տէր եւ Տիկին ընկեր Յակոբ Տօլպաչեանէ իրենց մօրեղբօր հանգուց – եալ Նիկողոս Նիկողոսեանի տխուր մահ– ուան առթիւ փոխան ծաղկեպսակի հինգ հազար Ֆր. իր «Շանթ» դրադարանի ֆոնտին համար :

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Այրի Տիկին Մինասեան, Տէր եւ Տիկին Նշան Մինասեան եւ զաւակները կը ծա – նուցանեն թէ հոգեհանդստեան պաշտօն պիտի կատարուի այս կիրակի առաւօտ, Ալֆորվիլի Ս. Պօղոս Պետրոս եկեղեցին, իրենց ամուսնոյն եւ հօր՝ ՅԱԿՈԲ ՄԻ – ՆԱՍԵԱՆի յիշատակին :

Կը հրաւիրուին ողբացեալին յիշատակը յարգողները :

×

Տէր եւ Տիկին Ասատուր Բաբայան եւ զաւակները կը ծանուցանեն թէ՝ այս կի– րակի Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղե– ցիին մէջ, յետ պատարագի, մասնաւոր հոգեհանգիստ պիտի կատարուի իրենց սիրելի հօր ԳՐԻԳՈՐ ԲԱԲԱՅԱՆի յիշա – տակին, իր մահուան Բ. տարելիցին առ– թիւ, ինչպէս եւ Բաբայան գերդաստա – նի համայն նոյնգեցեալներու հոգւոյն :

Կը հրաւիրուին հանգուցեալի յիշատա – կը յարգողները :

ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Հ. Յ. Դ. Պոմոնի Զաւարեան ենթակո– միտէն ողբ. Նիկողոս Նիկողոսեանի մը – խուր մահուան առթիւ իր խորին ցաւակ– ցութիւնները կը յայտնէ Տէր եւ Տիկին ընկեր Հայկ Սէրէնկիւլեանի, Տէր եւ Տիկին ընկեր Յակոբ Տօլպաչեանի, ինչ – պէս նաեւ հանդուցեալին ընտանեկան պարագաներուն :

ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ

կազմակերպութեամբ Հ. Յ. Դ. Նոր Սերունդի Քրիստախոր խումբի :

Նուիրուած ԱՒԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆի :

Պոմոնի եկեղեցւոյ սրահին մէջ

Այս երկուշաբթի, ժամը 21ին :

Կը նախագահէ Պ. Ց. ԱՂԱՑԵԱՆ

Կը խօսին.— Կ. ՓՕԼԱՏԵԱՆ, Տ. ԹԱ – ԴՈՑԵԱՆ, Ժ. ՄԻՐԻՃԵԱՆ (Նոր Սերուն– դի կողմէ) :

Արտասանութիւն եւ երգ՝ Ա. Իսահակ– եանի գործերէն :

Սրահը տաքցուած է Մուտքը ազատ է

ՏՕՆԱԽՄԲ

Ֆ. Կ. Խաչի Վիէննի մասնաճիւղի Մա – նուկներու Օրուան տօնախմբութիւնը Յունուար հինգին, կիրակի ժամը երեքին Սէրքլը Կաթոլիկ սրահը :

Երգ, արտասանութիւն, պար եւ կա – դանդ Պապայիի նուէրներու բաշխումը :

ԺՈՂՈՎԻ ՀՐԱՒԻՐ

Ֆ. Կ. Խաչի Փարիզի մասնաճիւղի ընդհ ժողովը այս չաբաթ կէսօրէ վերջ ժամը 3·30ին, ընկերուհի Պաքրճեանի աչխա – տանոցը, 58 Րիւ տ'Ապուհիր, մէթրօ Սանթիէ : Ոչ ոքի հրաւէր չի ղրկուիր : Կը խնդրուի ճշդապահ ըլլալ : Խիստ կա – րեւոր օրակարգ :

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՊՈՄՈՆԻ ՄԷՋ

Պոմոնի Ս. Սահակ – Մեսրոպ եկեղեց – ւոյ Թաղականութիւնը կը յայտարարէ Մարսէյլի յարգոյ հասարակութեան թէ այս կիրակի առաւօտեան ժամը 11ին Պո– մոնի եկեղեցւոյ մէջ տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան պաշտօն հայ մեծ բա – նաստեղծ Ա. Իսահակեանի հոգւոյն :

ՇԱԻԻԼԻ ԵԿԵՂԵՑԻ

Շաւիլի կրօն. Ընկերակցութեան վար– չութիւնը եւ Երիտ. եկեղեցաչէն յանձ – նախումբը կը ծանուցանեն թէ Դեկտ. 15– ին, կիրակի օր տեղի պիտի ունենայ նո – րակառոյց եկեղեցւոյ օծումը եւ անդրա– նիկ Ս. պատարագը ձեռամբ կաթողիկո– սական պատուիրակ՝ եւ Փարիզի Առաջ – նորդ ԳԵՐ. ՏԷՐ ՍԵՐՈՎԲԷ ԵՊԻՍԿ. ՄԱ– ՆՈՒԿԵԱՆի :

Սկիզբ ժամերգութեան ժամը 8, օծում ժամը 10, Ս. պատարագ 10·30 :

Կը հրաւիրուի հաւատացեալ ժողովուր– դը : Ցաւարտ Ս. պատարագի կազմա – կերպուած է ճաշ մը Վերսայլ Օթել տը Ֆրանսի չքեղ սրահին մէջ (Քլաս տ'Ամբ, րիւ Քոլպէր) :

Օրուան եւ օծման արարողութիւնները եւ հրաւիրեալ զպիրներու կողմէ երգուե– լիք բազմաձայն պատարագի երգեցողու – թիւնը պիտի ղեկավարէ երաժշտապետ Պ. Նշան Սերգոյեան :

Արձանագրութեան համար դիմել Փա – րիզի եկեղեցւոյ դիւանատունը,

Պ. Հրաչ Զուլաքեանի՝

14. Rue Maréchal Foch, Viroflay

Պ. Զաւէն Յովհաննէսեանի

31, Rue de Général Leclerc, Versailles

կամ

ASSOCIATION CULTUELLE DES ARMÉNIENS DE CHAVILLE

C. C. P. Paris 14827-18

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՅՏԵՐՈՑՔ

ՄԱՐՍԷՅԼ

22 Դեկտեմբեր, կիրակի ամբողջ օրը, Պոմոնի Ս. Սահակ եկեղեցւոյ սրահին մէջ :

Հայկական համադամ կերակուրներ, նուագ, երգ, արտասանութիւն եւ ուրախ մթնոլորտ :

Ճաշագին 1000 ֆրանք :

Տեղերը ապահովել Համազգայինի ան – դամներուն մօտ :

Ս. ՅԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻ

ՄԱՐՍԷՅԼ.— Գուլվար Օտտոյի Ս. Յա– կոբ եկեղեցւոյ Թաղականութիւնը կը յայ– տարարէ թէ այս կիրակի Ս. Յակոբ եկե– ղեցւոյ տօնախմբութեան առթիւ հանդի – սաւոր Ս. Պատարագ եւ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի եկեղեցւոյհիմ– նադիր բարերարներու, ինչպէս նաեւ բազմարդիւն առաջնորդ՝

ՏԷՐ ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊՍ. ՊԱԼԱՔԵԱՆի

եւ համայն Թաղիս հին եւ նոր ննջեցեալց հոգւոյն համար :

Տեղի պիտի ունենայ աւանդական մա – մաղ – օրհնութիւնը ու բաշխումն, մաս – նակցութեամբ բոլոր բարեպաշտ Թաղե – ցիներու :

Այս առթիւ պիտի պատարագէ եւ քա – րոզէ Թաղիս հոգեւոր հովիւ Տէր Պսակ քահանան :

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՄԱՐՍԷՅԼ.— Սէն Ժերմի Հ. Յ. Դ. Հայաստան ենթակոմիտէն ժողովի կը հրաւիրէ ընկերները այս Շաբաթ երե – կոյեան ընկեր Սիմոնեանի բնակարանը : Խիստ կարեւոր օրակարգ : Բոլոր ընկեր – ներու ներկայութիւնը պարտաւորիչ է :

ԱՌՆՈՒՎԻԼ.— Հ. Յ. Դ. «Վարդան» ենթակոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւի– րէ բոլոր ընկերները այս կիրակի, ժամը 15ին, ծանօթ հաւաքատեղին : Ներկայ կ'ըլլայ Շրջ. կոմիտէի ներկայացուցիչը : Բացակաները նկատի պիտի առնուին :

ՄԱՐՍԷՅԼ.— Հ. Յ. Դ. «Քրիստափոր» ենթակոմիտէի վարչութիւնը ընդհ. ժո – ղովի կը հրաւիրէ իր բոլոր ընկերները, այս կիրակի ժամը ճիշդ 15ին, Ահարոն – եան ակումբին մէջ : Բոլոր ընկերներուն ներկայութիւնը պարտաւորիչ է :

ԼԻՈՆ.— Հ. Յ. Դ. Վարանդեան կոմի – տէի բացառիկ ընդհ. ընկերական ժողովը տեղի կ'ունենայ այս կիրակի կէսօրէ վերջ ժամը չորսին (101, Ավընիւ տը Սաֆս), «Քաֆէ Սաքսի» ներքնասենեակը : Կարե – ւոր օրակարգ : Բոլոր ընկերներու ներկա– յութիւնը պարտաւորիչ :

ՓԱՐԻԶ.— Կապոյտ Աչքի մէջ – մաս – նաճիւղային ընդհ. ժողովը այս երկու – շաբթի, կէսօրէ վերջ, ժամը 16ին, Րէժա– նի սրճարանը : Կարեւոր օրակարգ :

ՀԱՄԱՅԱՐԲԵՐԴ. Հայր. Միութեան Վալանսի մասնաճիւղը ժողովի կը հրաւի– րէ իր բոլոր անդամները այս չաբաթ երե– կոյ ժամը 21ին, Պ. Սիմոնեանի սրճարա– նը :

ՏԱՐԵԿԱՒՕ ՇՔԵՂ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

ՍԻՓԱՆ-ՖՕՄԻՏԱՍ ԵՐԳԱՀՈՒՄԲԻ

ԿԻՐԱԿԻ, 15 ԴԵԿՏԵՄԲԵՐ ԺԱՄԸ 16ԷՆ 23

SALONS DES AMBASSADEURS (Champs - Elysées)

ORCHESTRE BACHICHA

Սեղանները ապահովել՝ հեռաձայնելով Պ. Արմանի Սանթրալ 36·23 :

ՄՈՒՏՔ 500 ՖՐԱՆՔ

ՀԻՒԱՆԴԱՊԱՀՈՒՀԻ Կ'ՈՒԶՈՒԻ

Հայկական ծերանոցներուն համար վը – կայեալ հիւանդապահուհի մը կը փըն – տռուի (պետական վկայականով) : Բնա – կարան եւ սնունդ ապահովուած են : Դիմել Աղքատախնամի դրասենեակը : 32, Րիւ տը Թրէվիզ, Փարիզ (9) :

ԳՆՈՒՄ ԵՒ ՎԱՃԱՌՈՒՄ

Ցարկաբաժին, խանութ, հող, չէնք, ընդունելութիւն եւ խոր – հուրդներ՝ Հայու մը կողմէ

ԱՄԷՆ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

AGENCE LEVET

9, Boulevard des Italiens, PARIS 2·

Téléphone : RIC. 36-75

Réveillons

Chez SASSOUNI

ԿԱՂԱՆԴԻ ԵՒ ԾՆՈՒՆԴԻ

Ձուարթ ու հաճելի Ձարթօնփը

(24 եւ 31 Դեկտեմբերի գիշերները)

Մի մտածէք ուր անցընելու մասին

ՍԱՍՈՒՆԻԻՆ մօտ ի հարկէ

Ուր պիտի գտնէք ճոխ ու պէսպի– սուն ուտելիքներ եւ խմիչքներ

Բոլորդ ազգականներով եւ բարե – կամներով ժամադրուեցէք

Եւրոպական եւ արեւելեան նուագ

ՍԱՍՈՒՆԻԻՆ

31. RUE D'ALEXANDRIE, PARIS - 2·

Tél. GUT. 92-65

Imprimé sur les presses du Journal HARATCH

17, Rue Bleue, 17 — PARIS (9e)

ԾՆՈՒՆԴ ԵՒ ԿԱՂԱՆԴ Ձեր սեղանները զարդարեցէ՛ք

ԱՄԷՆ ՏԵՂ ՓՆՏՐԵՑԻՔ ՊՈՍԹՈՐ

ՀՈՋԱԿԱՒՈՐ ՀԻԼՎԱՆ ԵՒ ԼՈՒՔՈՒՍԸ

ԲԺԻՇԿՆԵՐՈՒ ԿԱՐԾԻՔՈՎ ԱՆՈՆՔ ԿԸ ՊԱՐՈՒՆԱԿԵՆ ՄԵԾԱԳՈՅՆ ՁԱՓՈՎ ԳՈԼ (ֆլորի)

Անհրաժեշտ մանուկներու համար եւ օգտակար չափահասներուն ու ծերերուն

որոնց կը պարգեւէ աշխոյժ եւ եռանդ

ՊՈՍԹՈՐԻ ԱՐԴԻԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԳԵՐԱԶԱՆՑ�է ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ ԻՍԿ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾՆԵՐԸ

2, Rue Louis Astoin - Marseille

Արտածման համար մ ասնաւոր պայմաններ

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 — Téléph. : PRO. 86 - 60

R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա եւ գաղութներ, տարեկան 3000 ֆր. վեցամս. 1600

Արտասահման՝ տարեկան 3500 ֆրանք : Հատը 12 ֆր.

ՇԱԲԱԹ 14 ԴԵԿՏԵՄԲԵՐ

SAMEDI 14 DECEMBRE 1957

33ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8068 — 33e ANNEE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 13ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3869

ԻՐ ԽՕՍՔԸ

"ԱՆՁԻՆՔ ՆՈՒԻՐԵԱԼՔ"

Կատարեալ ողբերգութիւն՝ երիտասարդի մը մահը : Ինչ ազդի կամ զաւանանքի ալ պատկանի :

Ամէնէն քարացած սիրտն ալ պիղ սարսուռ մը կը զգայ, ի տես կանանչ արեւի մը խաւարման : Եթէ նոյնիսկ անչնչացած մարմինը ներկայացնէ համեստ գիւղացի մը, բանուոր կամ գինուոր :

Իսկ երբ յանկարծ կը խաւարի երիտասարդ մը՝ օժտուած բնածին կամ ստացական կարողութիւններով : Երբ կ'իյնայ գլուխ մը որ կոչուած էր ստեղծագործութեան կայծերը ցանելու իր ճամբուն վրայ ...

Այս եղաւ եղերական վախճանը ան-բախտ Գուրգէնին : Խաւարում՝ ճիշդ այն պահուն երբ ճամբուն կէսը հաղիւ կըտրած էր, իրրեւ կեանք եւ երկունք :

Գունապեղ ծաղկանները չեն որ պիտի բացատրեն ոեւէ արուեստագէտի արժէքը :

Ողջ ըլլան թէ մեռած, մտքի եւ արուեստի մշակները բազմութեանց սրտին կը խօսին իրենց ստեղծագործութիւններով : Իրենց երկունքով ու վաստակով :

Կարճ տեւեց Գ. Ալէմշահի կեանքը : Բայց, ինչ որ կրցաւ արտադրել առաջին քսանամեակի ընթացքին, արդէն ապահոված է իր տեղը՝ մեր երաժշտական պատմութեան մէջ :

Վաւերական տաղանդին եւ արժէքին հետ, հարկ է հանդիսաւորապէս արձանագրել նաեւ իր նուիրումը :

Ո՛րքան զրոյց – բրոցներ եւ արուեստագէտներ ունինք, որոնց «աչքը դուրսն է» : Քանիներ ու քանիներ՛ հետզհետէ կը քշուին օրուան հովերէն, աւելի փայլուն դիրքեր գրաւելու համար օտար անդաստաններու մէջ :

Միայն փորձութիւնը չէ որ կը շլացնէ աչքերը, այլեւ անապարձութիւնը :

Եւ երբ ազգային դիտակցութիւնն ու հպարտութիւնն ալ կծկուին, քայլերը մեքենաբար կ'ուղղուին դէպի խորթ, բայց աւելի շահաբեր ասպարէզները :

Երեւակայեցէք թէ ինչքան մթագնած պիտի ըլլար հայկական հորիզոնը՝ օտարութեան մէջ՝ եթէ չունենայինք ափ մը երաժշտագէտներ ու խմբավարներ, վառ պահելու համար հայկ. երգը :

Վառ պահել՝ տարիներու աշխատութեամբ : Կուրծք տալով յաճախ անյաղթելի դժուարութեանց առջեւ :

Վառ պահել՝ ոչ միայն երգիչներ պատրաստելով եւ երգչախումբեր կազմակերպելով, այլեւ նոր գործեր արտադրելով : Ճօրինելով, դաշնաւորելով, մոռացութենէ փրկելով : Տարածելով երկիւղ երկիւղ եւ դաղութէ դաղութ :

Անհրաժեշտ չէ անուններ յիշել, պարզելու համար «նուիրեալներու» այս շարքին յարատեւ եւ բազմարդիւն գործունէութեան բարիքները :

Անոնց մէջ կան տիպարներ որոնք վարդապետին գործը կը չարունակեն : Կը տքնին՝ պարտականութիւն մը կատարած ըլլալու գիտակցութեամբ :

« Ձայները » չատոնց մարած պիտի ըլլային, եթէ անոնք ալ վարակուէին օրուան համաճարակէն :

Ցարգանքի, յիշատակի տօները առիթ – ներ են, ոչ միայն մեր երախտագիտութիւնը յայտնելու, այլեւ կարգ մը պարտականութիւններ կատարելու համար :

Ահա կը տեսնէք,—նօսրացած կամ յոգնած են ոչ միայն երգչախումբերը, այլեւ երգիչներն ու երգչուհիները :

Մանաւանդ դուրգուրանքի եւ աչխատանքի կը կարօտի նաեւ այս ճակատը : Մանաւանդ այս ճակատը, ուր այնքան քիչ են «անձինք նուիրեալք» :

Գուրգէններու յիշատակը անթառամ կը մնայ, երբ նոյն եռանդով չարունակուի աչխատանքը, հայկական երգը քնդա – ցնելու համար ի լուր աչխարհի :

(19 – 2 – 1950) Շ.

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՆԱԽԱՐԱՐԱՑ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ԿԱՐԵՒՈՐ ՆԻՍՏԸ

—o—

ՓԻՆՕ ԿԱՌԱՋԱՐԿԷ ԸՆԴՈՒՆԻԼ ԹՈՒՆՈՒԶԻՄԱՐՈՔԵԱՆ ՄԻՋԱՄՏՈՒԹԻՒՆԸ

Առջի օր, Նախարարաց Խորհուրդը կարեւոր ժողով մը գումարեց, որ տեւեց 5 ժամ : Օրակարգին երկու գլխաւոր հարցերն էին Ալժերիա եւ Ատլանտեան Ուխտին յառաջիկայ ժողովը, որոնց մասին երկար բացատրութիւններ տուաւ Արտաքին Նախարար Փինօ :

Մ.Ա.Կի մէջ Ալժերիոյ հարցին քննութիւնը վերջացաւ՝ Ֆրանսայի ի նպաստ քուէարկութեամբ մը : Նախարարաց Խորհուրդը գոհ էր Արտաքին նախարարին ձեռք ձգած արդիւնքէն :

Փինօ, յատկապէս ալժերիական հարցին վրայ ծանրանալով, յայտարարեց թէ բանականն չէր այդքանով գոհանալ եւ հարկ էր դաս առնել Նիւ Եորքի մէջ գումարուած Մ.Ա.Կի համագումարին մէջ ծագած վիճաբանութիւններէն :

Արտաքին նախարարը յայտնեց, թէ Ալժերիոյ հարցին համար կատարուած քաղաքական այս լուծումը արդիւնք մը չի տար՝ այնքան առեն որ զինադադար չէ եղած : Այս է նաեւ փինոյի պաշտօնակիցներուն կարծիքը : Նիւ Եորքի մէջ Մուհամէտ Ե.ի եւ Մարոքի Արտաքին նախարարին հետ իր ունեցած խորհրդակցութեանց ընթացքին՝ Փինօ յաջողած է դառնք համոզել՝ որ ալժերիական հարցը Ֆրանսական հարց մըն է միայն եւ կապ ունի Ֆրանսայի հետ : Գալով Թունուզեան միջամտութեան առաջարկին՝ Արտաքին նախարարը ոչ միայն համաձայն է, այլ՝ կ'ակնկալէ ընթացք տալ անոր :

Նախարարաց Խորհուրդը համաձայն է, որ զինադադարի մը համար Թունուզ եւ Մարոք միջամտութիւն մը ընեն : Հարցկուտան սակայն, թէ Մուհամէտ Ե. ինչ պայմաններ դրած է ասոր համար :

Արտաքին նախարարը հասկցուցած է, թէ միջամտութիւնը երբ յաջողութեամբ պսակուի, կարելի է մտածել Ֆրանքեւ-մաղրէպեան հասարակապետութեան մը մասին : Սակայն, այս տեսակէտին Փինոյի հետ Վարչապետ Կայեառն ալ եթէ համաձայն ըլլայ՝ նախարարները պիտի ընդդիմանան. յատկապէս՝ Զափաւորա-կանները, որոնք դէմ են Ֆրանսա – Հիւս. Աֆրիկէ որեւէ ձեւի միասնականութեան : Բացի Զափաւորականներէն, կան նաեւ քանի մը այլ նախարարներ, որոնք հաւատք չունին Մարոքի եւ Թունուզի ղեկավարներուն վրայ եւ կը յիշեն Գուրկի-պայի արտասանած վերջին ճառը :

Այս հարցին քննութիւնը չէ վերջացած տակաւին եւ Արտաքին նախարարը պիտի աչխատի իր կապերը պահել Մարոքի եւ Թունուզի կառավարութեանց հետ, Ալժերիոյ մէջ զինադադար մը ձեռք ձգելու համար :

Օրակարգի վրայ կը գտնուէր նաեւ Ատլանտեան Ուխտին ժողովը եւ Ֆրանսայի մէջ հրթիռներու արձակարաններ հաստատելու պարագան : Նախարարաց Խորհուրդը ոչ թէ այդ արձակարաններուն հաստատումին դէմ, այլ՝ զանոնք դուրս ծածելու մասին մտածեց : Հետեւաբար՝ Ֆրանսա համաձայն է արդէն, որ հեռավար (Թէլէկիփէ) հրթիռներու արձակարանները հաստատուին իր հողամասին վրայ :

ՔՈՔ Տ'ԱՋԻՒՐի վրայ անձրեւն ու փոթորիկը մեծ աւերներ գործեցին : Նիսի մէջ երթեւեկը դադրած էր Փրոմընատ տէ զ'անկլէի վրայ :

ԲՈՒԼԳԱՆԻՆ ՅՈՅՍԸ ԴՐԱՍՏ Է ՖՐԱՆՍԱՅԻ ՎՐԱՅ

—o—

Միջազգային մամուլը եւ մասնաւորապէս ֆրանսական թերթերը մեծապէս հետաքրքրուած են մառեչալ Բուլգանինի նամակներով : Ինչպէս յանօթ է, Ա. Միութիւնը Ատլանտեան Ուխտի ժողովէն առաջ, հինգ երկիրներու նամակները ղրկեց, գրեթէ բոլորին ալ նոյն առաջարկը ընելով :

Վարչապետ Կայեառի յանձնուած նամակը բաղկացած է երկու մասէ : Ա. մասին մէջ, Բուլգանին կը զգուշացնէ Ֆրանսան՝ անպլիացի եւ ամերիկացի իր դաշնակիցներու ձեռք առած միջոցներուն դէմ : Բ. մասին մէջ առաջարկներ կ'ըլլան միջազգային լարուած կացութեան մեղմացման եւ Ֆրանք-եւ-խորհրդային դարձակութեան մը համար :

Ուշադրաւ է նամակին եղրակացութիւնը . — 1956 Մայիս 19ին հրապարակուած Ֆրանք-եւ-խորհրդային յայտարարութեան ուղղութեամբ՝ Ֆրանսա ինչո՞ւ նախաձեռնարկ չըլլայ Ատլանտեան Ուխտին մէջ առաջարկ մը ընելու՝ միջազգային խաղաղ համագործակցութեան մը համար : Այս պարագային՝ Ա. Միութիւն պատրաստ է թիկունք կանգնելու՝ անոր յաջողութեան համար :

Նամակին առաջին մասին մէջ, Մոսկուա կ'ըսէ թէ անպլեամերիկեան դարձունկութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ պատերազմի մը նախապատրաստութիւն : Այս աչխատանքները տանելու համար է որ պիտի գումարուի Փարիզի ժողովը : Իսկ եւրոպական երկիրներու մէջ հեռավար (Թէլէկիփէ) հրթիռներու արձակարաններու հաստատումը՝ պաշտպանողական ոչ մէկ նպատակ ունի :

Այնուհետեւ, Բուլգանին հարց կուտայ, թէ Ֆրանսացիք իրենք զիրենք ապահով պիտի զգա՞ն հիւլէական եւ ջրածին զէնքերու մթերանոցներով՝ երբ անոնց հրկոզութիւնը կը կատարուի օտար զօրաւարներու կողմէ : Ցետոյ, ի՞նչ կը մտածեն իրենց հողամասին վրայ հիւլէական ռումբեր կրող ամերիկեան օդանաւերու թռիչքին մասին :

Մեծ վտանգ մը պիտի ներկայացնէ նաեւ Արեւմտեան Գերմանիա՝ երբ ջրածին ռումբեր ունենայ իր տրամադրութեան տակ : Մինչեւ Արեւելքի կացութեան խառնակ վիճակն ալ յիշատակելէ հետք, կարմիր մառեչալը կ'ըսէ թէ այս բոլորը Ա. Միութեան դէմ առնուած քայլեր են, որուն հետեւանքով դիտակն ու մշակութային յարաբերութիւններ ստեղծել կարելի պիտի չըլլայ երկու աչխարհներու միջեւ :

Ինչպէս կը տեսնուի, Մոսկուա իր նամակին առաջին մասին մէջ կ'ուզէ ցոյց տալ, թէ դաշնակիցներու հետ գործակցելով Ֆրանսա կը վտանգուի : Ահա՛ թէ ինչո՞ւ կը ներկայացնէ կարգ մը առաջարկներ :

1.— Դադրեցնել հիւլէական ու ջրածին զէնքերու գործածութիւնը եւ փորձերը՝ երկու կամ երեք տարուան համար :

2.— Դադրեցնել Արեւելեան եւ Արեւմտեան Գերմանիաներու սպառազինումը :

3.— Ոչ – յարձակողական դաշինք մը՝ Վարչաւայի եւ Ատլանտեան Ուխտերուն միջեւ :

4.— Արեւելքի մէջ, ժողովուրդներու անկախութեան դէմ կատարուող միջոց – ները դադրեցնել եւ զէնք չգործածել :

Այս բոլորը իրականացնելու համար, Անգլիայէն եւ Ամերիկայէն յուսահատած՝ Ա. Միութիւն կը դիմէ Ֆրանսայի : Մանօթ են սակայն Փարիզի կառավարութեան տեսակէտները՝ որոնք դէմ են Մոսկուայի եւ Բուլգանինի առաջարկներուն :



ԳՈՒՐԳԷՆ Մ. ԱԼԷՄՇԱՀ

(1907 – 1947)

Եթէ արուեստը Հայրենիք չունի, նոյնը չէ արուեստագէտին համար, եւ հայ արուեստագէտին համար, Արարատի շուրէն անդին Հայրենիք չկայ. հայ երաժշտին համար՝ հայրենի երգէն դուրս ներշընչում չկայ :

×

Հայ երաժշտութիւնը, իր ոգիով, գեղեցկութեամբ, գոյնով եւ պարզ արուեստով կը գտնենք առաւելապէս գեղջուկ երաժշտութեան մէջ :

Այս տեսակէտէն, Կոմիտաս վարդապետի գործը անհուն է, անփոխարինելի, աննախընթաց եւ գուցէ անյաջորդ :

Վարդապետը տարիներ շրջելով, հաւաքած է բազմաթիւ ժողովրդական երգեր, զանազան փոփոխակներով, ըստ իրենց կրած ազդեցութեան՝ արեւելեան, պարսկական, քրիստական, հրդական եւայլն, եւ այս բոլորին մէջէն զտած, քիւրեղացուցած է հայկականը :

Կոմիտասի մեծագոյն արժէքը իր դաշնաւորման մէջ է. գտած է հայ երաժշտութեան երակը եւ հարազատ գեղեցկութեամբ տուած է զայն գեղջուկ երգերուն մէջ : Եւ տուած է հայ երգը իր պարզ գեղեցկութեամբ : Հակառակ երաժշտական իր մեծ զարգացումին ու գիտութեան, անիկա չխճողեց եւ՝ ինչպէս ուրիշներ ըրած են ու կ'ընեն, եւրոպական խոշոր զգեստներ չհագցուց հայ երգին :

Ոմանք, չարամիտներ կամ տգէտներ, փորձեցին նուազեցնել Կոմիտասի արժէքը, ըսելով թէ այդ-քան պարզութեամբ տուած է այն հայ երգը, որուն հետեւ աւելին չէր կրնար հասնիլ : Իրականութիւնը ճիշդ հակառակն է. մեծ արուեստագէտները միայն կրնան հասնիլ այդ-քան պարզ գեղեցկութեան, եւ Կոմիտաս վարդապետը հասած է :

×

Ես ալ իմ երաժշտութեանս հայեցի մասը վարդապետին կը պարտիմ. անոր գործերուն ընթերցումով է որ հայ երաժշտութեան յայտնութիւնն ունեցայ :

Այդպէսով է որ՝ Մեծ Վարպետին անուղղակի միջամտութեամբ, ուղիս գրած ունեցայ եւ ես դարձայ հայ երաժշտագէտ. կ'ըսեմ հայ եւ ոչ թէ հայազգի երաժշտագէտ, որովհետեւ մեծ է տարբերութիւնը այս երկուքին մէջ :

Գուրգէն Մ. Ալէմշահ

ՆԱՀԱՆՋԸ ՉԻ ՄԵՌՆՈՒ

Ֆրանսիայի իր մեջ ներքին խնդիրները տակավին չեն հոգեբանորեն մարսած, դաշնակից եւ ընկերական պետութիւնները իրենց ճշմարիտ դէմքերը ցոյց տուին։ Ֆրանսիա ամէն կողմէ մեկուսացած կը գտնուի։ Ամէն կողմ ան կը տեսնէ թշնամի դէմքեր։ Ամէն կողմ ան կը զգայ թշնամական մթնոլորտ։ Ֆրանսիա ինքզինքը կը գտնէ ինքնամեկուսացման մէջ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԿՈՀԳԱՏ
ՀԱՅԿՈՀԳԱՏ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ
ՀԱՅԿՈՀԳԱՏ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ
ՀԱՅԿՈՀԳԱՏ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՀԱՅԿՈՀԳԱՏ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ
ՀԱՅԿՈՀԳԱՏ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ
ՀԱՅԿՈՀԳԱՏ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ
ՀԱՅԿՈՀԳԱՏ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՍՈՎԵՏԱՀԱՅԱՍՏԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

«ՍՈՎԵՏԱՀԱՅԱՍՏԱՆ» ՕՐԱԹԵՐԹ

Հրատարակվում է ամեն օր, բացի երկուշաբթի և տոնական հաջորդ օրերից։

Խմբագրության և տպագրության հասցեն՝ Երևան, Աբովյան փողոց, № 5։

Հեռախոսներ՝ խմբագրության՝ 2-58-20, 2-58-21, 2-58-22, 2-58-23։

Տպաքանակը՝ 60 000։

Ստորագրված է տպագրության՝ 1-ին օրը՝ ժամը 18-ին, 2-րդ օրը՝ ժամը 17-ին։

Պատվեր՝ 1918։

Գինը՝ ամսական 1 ռուբլի 50 կոպեկ։

Ինդեքս՝ 74088։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ե. ՅՈՒԲԵՆԻ ՈՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ — Ա. Ա. ՍԱՐԻԿՈՎԻ ՀՐԱՏԱՊԱԿՈՒԹԻՒՆԸ — Ա. ՍԱՐԻԿՈՎ — ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՅՈՒԲԵՆԻ ՈՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ — Ա. ՍԱՐԻԿՈՎ — ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ — Ա. Ա. ՍԱՐԻԿՈՎԻ ՀՐԱՏԱՊԱԿ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳԵՐՄԱՆԻՈՑ Խորհրդա – րանը չարք մը հրովարտակներ հրատա – րակեց առջի օր, ծանր պատիժներ սահ – մանելով երկրէն բոլոր հեռացողներուն, ինչպէս նաև անոնց օդնողներուն։ Ներկա – յիս մօտ վեց հազար հոգի, ամէն չարաթ արեւմտեան Պերլին կը հասնին։ 1946էն ի վեր արեւելեան Գերմանիայէն արեւ – մտեան Գերմանիա անցնողներու թիւն է երկու միլիոն։

ՓԱՐԻԶԻ բոլոր դպրոցներու ուսանող – ները դասադուլի մէջ էին եշ։ օր։ Հաղա – րի մօտ աշակերտները հաւաքուած էին Րիւ Սուֆլօ՝ բողոքի ցոյց մը ընելու հա – մար։ կը կրէին պաստառներ՝ որոնց վը – րայ գրուած էր։— Նիւթական յատկեալ օժանդակութիւն՝ կրթութեան համար, համալսարանները ընդարձակեցէք, եւն.։

ԱՄԵՐԻԿԱՅԻ Դեմոկրատ պարագլուխ Սթիվենսըն տեղեկագիր մը յանձնեց Ա – տաքին նախարար Տըլըսի, որով՝ պաշտօ – նապէս վերջ կը դնէ Ատլանտեան Ուխ – տի ժողովին համար պետական խորհր – դատուի իր պաշտօնը, որ տեւեց 25 օր։ Սթիվենսըն վերադարձաւ Շիքակօ՝ փաս – տաբանի իր դրասենեակը։

ԻՆՏՈՆԵԶԻՈՑ մէջ կացութիւնը սկսած է ծանրանալ։ Նախագահ Սոքարնօ իր հրաժարականը ներկայացնելով փախած է երկրէն։ Բանակը անցած է իշխանութեան ղլուխ, իսկ հոլանտական ձախակռիւներն համաձայն՝ Սոքարնօ բանտարկուած է դինուորականներու կողմէ։ Յամենայն դէպս պաշտօնական լուր մը չկայ այս ուղղութեամբ։

ՍԱԿԱՐԱՆ (Դեկտ. 12).— Ձոյլ ոսկի՝ 570·000 նափոլէոն 4210, դուէյ· 3960, անգլ. 4950, քսան տոլարնոց 20·000, թղթադրամ (դուգահեռական չուկայ) տոլար 487, սթերլին 1300, դուէյ·117·25, լիր 0·79։

ՎԻՆՆԻ Տէր եւ Տիկին Արտաշէս Զա – քարեան եւ Որդիք, իրենց ցաւակցու – թիւնը կը յայտնեն Տէր եւ Տիկին Հայկ Սէրէնկիւլեանի, ողբ. Նիկողոս Նիկողոս – եանի մահուան առթիւ եւ փոխան ծաղկե – պակի հազար ֆր. կը նուիրեն Մշակոյ – թի Տան։

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Այրի Տիկին Մինասեան, Տէր եւ Տիկին Նշան Մինասեան եւ զաւակները կը ծա – նուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի այս կիրակի առաւօտ, Ալֆորվիլի Ս. Պօղոս Պետրոս եկեղեցին, իրենց ամուսնոյն եւ հօր՝ ՅԱԿՈԲ ՄԻ – ՆԱՍԵԱՆի յիշատակին։

Կը հրաւիրուին ողբացեալին յիշատակը յարգողները։

×

Տէր եւ Տիկին Ասատուր Բաբայան եւ զաւակները կը ծանուցանեն թէ՝ այս կի – րակի Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղե – ցիին մէջ, յետ պատարագի, մասնաւոր հոգեհանգիստ պիտի կատարուի իրենց սիրելի հօր ԳՐԻԳՈՐ ԲԱԲԱՅԱՆի յիշա – տակին, իր մահուան Բ. տարելիցին առ – թիւ, ինչպէս եւ Բաբայան ընտանեաց – նի համայն ննջեցեալներու հոգւոյն։

Կը հրաւիրուին հանգուցեալի յիշատա – կը յարգողները։

×

Պ. Գարեգին Անթրէասեան եւ զաւակ – ները, Տէր եւ Տիկին Արա Անթրէասեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Եդուարդ Անթրէասեան եւ զաւակները կը ծանուցա – նեն թէ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի այս կիրակի առաւօտ Ալֆոր – վիլի Ս. Պօղոս Պետրոս եկեղեցին իրենց հնոջ, մօր եւ մեծ մօր՝ Տիկին Արուսեակ Անտրէասեանի մահուան քառասունքին առթիւ։

Կը հրաւիրուին ողբացեալին յիշատակը յարգողները։

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՊԱՒՄՈՆԻ ՄԷՋ

Պոմոնի Ս. Մահակ – Մեսրոպ եկեղեց – ւոյ թաղականութիւնը կը յայտարարէ Մարսէյլի յարգոյ հասարակութեան թէ այս կիրակի առաւօտեան ժամը 11ին Պո – մոնի եկեղեցւոյ մէջ տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան պաշտօն հայ մեծ բա – նաստեղծ Ա. Իսահակեանի հոգւոյն։

Imprimé sur les presses du journal HARATCH
17, Rue Bleue, 17 — PARIS (9e)

ՑՈՒՇԱՏԵՏՐ

ՄԱՐՍԷՅԼ.— Սէն Ժերոմի Հ. Ց. Դ. Հայաստան ենթակոմիտէն ժողովի կը հրաւիրէ ընկերները այս Շարաթ երե – կոյեան ընկեր Սիմոնեանի բնակարանը։ Խիստ կարեւոր օրակարգ։ Բոլոր ընկեր – ներու ներկայութիւնը պարտաւորիչ է։

ԱՌՆՈՒՎԻԼ.— Հ. Ց. Դ. «Վարդան» ենթակոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւի – րէ բոլոր ընկերները այս կիրակի, ժամը 15ին, Ժանօթ հաւաքատեղին։ Ներկայ կ'ըլլայ Շրջ. կոմիտէի ներկայացուցիչը։ Բացականները նկատի պիտի առնուին։

ՄԱՐՍԷՅԼ.— Հ. Ց. Դ. «Քրիստափոր» ենթակոմիտէի վարչութիւնը ընդհ. ժո – ղովի կը հրաւիրէ իր բոլոր ընկերները, այս կիրակի ժամը ճիշդ 15ին, Ահարոն – եան ակումբին մէջ։ Բոլոր ընկերներուն ներկայութիւնը պարտաւորիչ է։

ԼԻՈՆ.— Հ. Ց. Դ. Վարանդեան կամ – ուէի բացառիկ ընդհ. ընկերական ժողովը տեղի կ'ունենայ այս կիրակի կէսօրէ վերջ ժամը չորսին (101, Ավընիւ տը Սաֆա), «Քաֆէ Սաքօ» ներքնասենեակը։ Կարե – ւոր օրակարգ։ Բոլոր ընկերներու ներկա – յութիւնը պարտաւորիչ է։

ՓԱՐԻԶ.— Կապոյտ Խաչի մէջ – մաս – նաճիւղային ընդհ. ժողովը այս երկու – շաբթի, կէսօրէ վերջ, ժամը 16ին, Ռէժա – նի սրճարանը։ Կարեւոր օրակարգ։

ՀԱՄԱՅԱՐԲԵՐԴ. Հայր. Միութեան վարանի մասնաճիւղը ժողովի կը հրաւի – րէ իր բոլոր անդամները այս չարաթ երե – կոյ ժամը 21ին, Պ. Սիմոնեանի սրճարա – նը։

ԺՈՂՈՎԻ ՀՐԱՒԻՐ

Ֆ. Կ. Խաչի Փարիզի մասնաճիւղի ընդհ. ժողովը այս չարաթ կէսօրէ վերջ ժամը 3·30ին, ընկերուհի Պաքրճեանի աչխա – տանոցը, 58 Րիւ տ'Ապուհիր, մէքրօ Սաներիէ։ Ոչ ոքի հրաւէր չի ղրկուիր։ Կը խնդրուի ճշդապահ ըլլալ։ Խիստ կա – րեւոր օրակարգ։

Հ. Մ. Ը. Մ.Ի ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ ՎԻՆՆԻ ՄԷՋ

Դեկտեմբեր 28ին, Շաբաթ իրիկուն, Սալ տէ Ֆէթի սրահներուն մէջ։

Մանրամասնութիւնները տեղւոյն վրայ

ԿԸ ՓՆԴՐՈՒԻ

Sofք· Ստեփան Էմմէճեանէ (Պոլսէն) *իր հասցէն տեղեկացնել Պ.Ցակոբ Տէմիր – ճեանի,*

GRAND HOTEL LAFAYETTE BUFFAULT
6, Rne Buffault, Paris 9· - Tél. PRO. 70-96

ՏԱՐԵԿԱՆ ՇՔԵՂ ՊԱՐԱՇԱՆԴԷՍ

Նախաձեռնութեամբ
Հ· Ց· Դ· Նոր Սերունդի Տէսինի խումբի
Այսօր Շաբաթ, ժամը 21էն մինչեւ լոյս,
Հ· Ց· Դ· Տան մէջ, 11 բիս Պուալի, Տէսին

ORCHESTRE PACHITO, BAR, BUFFET, BUVETTE

ԱՐՈՒԵՍՏԻ ԼՐԱՏՈՒ
ՍԱՐԳԻՍ ՊՕՂՈՍԵԱՆ արտասանական ե – րեկոյթներ պիտի տայ Դեկտեմբեր 14ին, Մխլանօ՝ Ապր. Տան մէջ, Դեկտ. 21ին Վիեննեակ, Մխիթարեան վարժարանը, եւ Դեկտ. 28ին Վիեննայի մէջ։

ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ
կազմակերպութեամբ Հ· Ց· Դ· Նոր Սերունդի Քրիստափոր խումբի։
Նուիրուած ԱԻԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆի։
Պոմոնի եկեղեցւոյ սրահին մէջ
Այս երկուշաբթի, ժամը 21ին։
Կը նախագահէ Պ. Ց. ԱՂԱՑԵԱՆ
Կը խօսին.— Կ. ՓՕԼԱՏԵԱՆ, Տ. ԹՈՒ – ՐՈՑԵԱՆ, Ժ. ՄԻՐԻՃԵԱՆ (Նոր Սերուն – դի կողմէ)։
Արտասանութիւն եւ երգ՝ Ա. Խաչակ – եանի գործերէն։
Սրահը տաքցուած է Մուտքը ազատ է

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ, ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ
ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Կազմակերպուած Ֆ· Կ· Խաչի Փարիզի մասնաճիւղին կողմէ
28 Դեկտեմբեր, Շաբաթ կէս օրէ վերջ ժամը 4էն մինչեւ լոյս

Լիւքէսիայի գեղեցիկ սրահներուն մէջ

Orchestre Lutetia 43, BLD· RASPAIL, MÉTRO SÈVRES-BABVLONE

Գեղարուեստական բաժին, Պ. Կարապետ Ափրիկեանի երգի ֆուարթերը
Մենապարեր՝
Օր· Թերեզ ՔԷօշկէրեան՝ *Սուրբերու պարը Խաչատուրեանի*, Օր· Անի Թարօն *Երեւանի հարսանիքը եւ եւրոպական պար մը։*

ՇԱՆՕԹ.— Տոմսերու վրայ նշանակուած է մինչեւ կէս գիշեր, բայց բոլորին ցանկութեան վրայ կարգադրուած է սրահի տնօրէնութեան հետ մինչեւ առաւօտ ժամը հինգ։

Մուտքը՝ 500 ֆրանք

Ուսանողներու համար՝ 300 Ֆրանք, ներկայանալ իրենց ուսանող· քարտերով։

Նպատակն է՝ Կապոյտ Խաչի օգափոխութեան կայանը, ինչպէս նաեւ իր կրթա – կան եւ բարեսիրական գործերը։

Հիմնադիր–Տնօրէն ԳՐԻԳՈՐ ԹԵՒԱՆԵԱՆ

ՁԱՒԱՐԱՆ ԵԱՐ


Ֆրանսական – Հայկական եւ Կովկաս – եան ընտիր կերակուրներ

4, RUE ROBERT-ETIENNE
(Rue Marbeuf) PARIS - 8e
TÉL. : BAL. 31-21
ՇԱՆ Զ'ԷԼԻԶԷԻ ՍՐՏԻՆ ՎՐԱՑ
Métro : F. D. Roosevelt

Հաճելի մթնոլորտ

Առաջնակարգ կովկասեան խորոված – ներ, «շաշլիք», «քարսքի»

Bar Américain



ՇՐԱՐՆԵՐ ԿԸ ՂՐԿՈՒԻՆ ԱՆԳԼԻՈՑ ՁԱՄԲՈՎ ԴԷՊԻ Խ· ՄԻՈՒԹԻՒՆ, ՄԷՋՆ ԸՆԱԼՈՎ ՊԱԼԹԵԱՆ ԵՐԿԻՐՆԵՐԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

Մասնաւոր արտօնութիւնը որ տրուած է մեզի ֆրանսական կառավարութեան կողմէ, մեզի թոյլ կուտայ պատասխանելու մեր բազմաթիւ յաճախորդներուն որոնք կը փափաքին ծրարներ ղրկել Հայաստան

ՏՕՆԵՐԸ ԿԸ ՄՕՏԵՆԱՆ

ՄՏԱԾԵՑԷՔ ՁԵՐ ԱԶԳԱԿԱՆՆԵՐՈՒՆ ԵՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՆ

Իրենց մեծ հաճոյք պատճառած կ'ըլլաք ղրկելով, հիմակուընէ, մեր ստեղծած վեցնմոյշ–ծրարներէն մէկը, որոնք պատ – րաստուած են մեծ խնամքով։ Մեր բոլոր ապրանքները վստահօրէն անդլիական են։

ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ ԾՐԱՐ – 20·000 ՖՐԱՆՔ	ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ – 30·000 ՖՐԱՆՔ	
Վերարկու–կերպաս 2 մեթր 75	*2 մ· 75 բուրդէ թաւիչ վերարկուի համար*	*2 մ· 75 թաւիչէ բուրդ վերարկուի համար*
Հագուստի կերպաս 2 մեթր 75	*3 մեթր աստառ*	*2 մ· 75 զուտ բուրդ քայէօրի համար*
աստառ 4 մեթր	*2 մ· 75 զուտ բուրդէ կերպաս հագուստի համար*	*5 մեթր աստառ*
2 զոյգ ճայլըն գուլպայ	*1 բուրդէ ֆառտիկան*	*1 ֆառտիկան զուտ բուրդ*
2 ֆոմպինէզոն ճայլըն	*1 զոյգ ճայլըն գուլպայ*	*1 փլէտ էֆոսէ 160×160*
2 վարտիք ճայլըն	*1 չալ բուրդէ (110×110)*	*2 զոյգ ճայլըն գուլպայ*
	6 թաշկինակ	*1 բուրդէ չալ 110×110*
ԱՅՐ ՄԱՐԴՈՑ ՀԱՄԱՐ – 20·000 ՖՐԱՆՔ	**ԱՅՐ ՄԱՐԴՈՑ ՀԱՄԱՐ – 30·000 ՖՐԱՆՔ**	**ԱՅՐ ՄԱՐԴՈՑ ՀԱՄԱՐ – 40·000 ՖՐԱՆՔ**
3 մեթր կերպաս հագուստի	*3 մեթր կերպաս զգեստի համար*	*3 մեթր կերպաս Փեճիէհագուստի համար*
3 մեթր փոփլինի շապիկի համար	*3 մեթր աստառ*	*2 մ· 75 զուտ բուրդէ կերպաս փարտը – սիւի համար*
1 ներքին ճերմակեղէն (մայօ տը ֆոր եւ մէկ էնթերլոֆ (վարտիկ)	*1 զուտ բուրդէ փուլ–օվըր*	*5 մեթր աստառ սաթէն*
2 զոյգ բուրդէ գուլպայ	*1 զոյգ կօշիկ պոֆս*	*1 փուլօվէր զուտ բուրդ*
1 զոյգ պոֆս կօշիկ	*1 ներքնազգեստ (մայօ տը ֆոր եւ էն – թերլոֆ)*	*1 զոյգ գուլպայ զուտ բուրդ*
	3 մեթր փոփլինի շապիկի	**ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ – 40·000 ՖՐԱՆՔ**
	1 զոյգ բուրդէ գուլպայ	

ՇԱՏ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԱԾ ԳԻՆԵՐ որոնց մէջ՝ մաֆս, ապահովագրութիւն, առաքման ծախքեր եւ ամէն տուրք

ՍՏԱՑՈՂԸ ՎՃԱՐԵԼԻՔ ՉՈՒՆԻ

Կարելիութիւն կայ ձեր ընտրութեամբ ծրարներ կազմել մեր ցուցակին ապրանքներով՝ ԺԱՄԱՑՈՑՑ, ԴԵՂ, ՁԵՐՄԱԿԵՂԷՆ ամէն տեսակի ՀԱԳՈՒՍՏԵՂԷՆ եւ ՀԻՒՍՈՒԱԾԵՂԷՆ

ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՑՈՒՑԱԿԸ՝ ՁՐԻ

S I C O M E X

20, RUE ROYALE, PARIS 8e
TÉL : OPE. 67-77
MÉTRO MADELEINE OU CONCORDE
C. C. P. PARIS 11964-43

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 — Téléph. : PRO. 86 - 60
R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա եւ գաղութներ, տարեկան 3000 ֆր. վեցամս. 1600
Արտասահման՝ տարեկան 3500 ֆրանք: Հատը 12 ֆր.

ԿԻՐԱԿԻ
15
ԴԵԿՏԵՄԲԵՐ
DIMANCHE
15 DECEMBRE
1957

33ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8069 — 33e ANNEE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՒ ՇՐՋԱՆ, 13ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3870

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ԹՈՒՂԹԷ ՇԵՐԵՓԸ

—o—

Խորհրդային Միութեան վարչապետ մարեչալ Բուլղանին քաղաքական իւրայատուկ մեթոտ մը ունի: Գաղտնիքները պինդը պիտի մկրտէ «նամակագիր» մակդիրով: Մասնաւոր «Թուղթէ շերեփ »ի: Իր նամակները մերթ սպառնական են, մերթ փաղաքշական: Երբեմն ալ երկու ոճերը փոխն ի փոխ կը գործածուին նոյն գրութեան մէջ:

Տակաւին չեն մոռցուած 1956ի աշնան իր սպառնական նամակները Անգլիոյ եւ Ֆրանսայի՝ ստիպելու համար զանոնք, որ պարպեն Սուէզը: Այլապէս հիւլէական հրթիռները չարժման մէջ պիտի դնէր «նախայարձակ պետութեանց» երկիրնե-րուն դէմ ... :

Անցեալ գարնան Բուլղանին կէս – պատնական նամակներ ուղղած էր Տանմարքայի, Նորվեկիոյ, Պունտեսթաղի եւ Գերմանիոյ վարչապետներուն՝ զգուշացնելով զանոնք, որ հիւլէական զէնքերու խարիսխ ու մթերանոց չդարձնեն իրենց երկիրները: Մայիս 20ին նամակ մըն ալ վարչապետ կի Մոլէի գրելով՝ նման ազդարարութիւն մը ըրած էր՝ բարեկամական չեչտերով :

Մոքերու մէջ թարմ են դեռ Մենտէրէսի ուղղուած երկու նամակները՝ Սուէզիոյ դէմ յարձակումէ զգուշացնելու համար Թուրքիոյ վարիչները :

Բուլգանինեան նոր մեթոտներուն իրա-ւունքներ անհամբեր կը սպասէին Բուլղանինի նոր նամակագրական յարձակողականին՝ Ատլանտեան խորհրդաժողովի նախօրեակին: Ճիշդ ժամանակին հասաւ այդ, դաշնակիցներու չարքերուն մէջ ի – րարանցում առաջ բերելու նպատակով :

Նախագահ Այզընհաուըր, վարչապետ Ամնաուրը, Մէքմիլլըն, Ֆելիքս Կայետ, ինչպէս նաեւ Փանտիթ Նէհրու դրեթէ միաժամանակ նոյնիսկ նամակներ ըստացան Մոսկուայէն :

Խորհրդային Միութեան վարչապետը Փալէ տը Շայեոյի պատմական հաւաքոյթէն օգտուելով՝ անդամ մը եւս կը կրկնէ իր «խաղաղասիրական» նպատակները : Միացեալ Նահանգներու նախագահին կ'առաջարկէ դադրեցնել հիւլէական փորձերը եւ դլուխ դլխի կանաչ սեղանի մը չուրջ խորհրդակցիլ՝ Ամերիկայի եւ Խ. Միութեան վէճերը խաղաղութեամբ կարդադրելու համար :

Գերմանիոյ վարչապետին ուղղած նամակին մէջ Բուլկանին կը խօսի զինաթափութեան եւ Ատլանտեան Ուխտի մասին: Միաժամանակ կ'ամբաստանէ Արեւմուտքը, որ «աչխարհակալական» նոր պատերազմ մը կը պատրաստէ : Ու կ'առաջարկէ դարձեալ միացնել Գերմանիոյ երկու մասերը :

Տարակոյս չկայ, որ կրէմլինի վարիչները իրար անցած են Եւրոպայի մէջ հիւլէական զէնքի խարիսխներ հաստատելու ամերիկեան ծրագրին առթիւ :

Ատլանտեան Ուխտին հակադրելու համար Խորհրդային Միութիւնը իր կարգին քանի մը տարի առաջ կազմակերպած էր Վարշաւայի ուխտը, մանաւանդ արբանեակ պետութեանց: Առնցմէ Լեհաստանի արտաքին նախարար Ռափացքի հոկտեմբեր երեքին ՄԱԿի ժողովին առջեւ առաջարկած էր «չէզոք գօտի»ի վերածել կեդրոնական Եւրոպան, — այսինքն Գերմանիոյ երկու մասերը, Լեհաստանն ու Չեխոսլովաքիան: Այս հողամասերը, որոնց վրայ հիւլէական խարիսխներ պէտք չէ հաստատուին, թումբ մը պէտք է կազմեն Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ :

Այս առաջարկը այժմ կ'երկրորդուի նաեւ Մոսկուայի նախկին ամերիկեան դեսպան Ճորճ Քէնընի կողմէ :

Մինչ մէկ կողմէ խաղաղասիրական հոնարհի ոստիկանապետ Բանկովիչի նկարին առջեւ :

×

Ձեմ կարծեր որ չափազանցութիւն կայ այս պատմութեան մէջ: Որովհետեւ, ամէնիս ալ գիտենք որ Արեւմտեան ազգերուն եւ Արեւմտեան բաղաքակրթութեան «բարեկամ» թիթօն ալ համայնավար է, խրուշչեւի մը չափ եւ ան ալ չի հաւատար շնորհիւով մարդոց հաւատացած բաներուն — Աստուած, Քրիստոս, եկեղեցի, աղօթք, Սաղմոս, Ալէլուիա եւ «բուրժուական վայել» ուրիշ «աւելորդաբանութիւններ »:

×

Լենին իր Ամբողջական Գործերուն 17րդ հատորին էջ 321ին վրայ գրած է.

— Ինչո՞ւ մենք բարոյականի եւ բարոյագիտութեան չենք հաւատար: Որովհետեւ անոնց մասին կը բարոզեն բուրժուաները, որոնք կ'ըսեն թէ բարոյականի պատգամները արձակած է Աստուած: Բայց մենք Աստուծոյ չենք հաւատար, որովհետեւ շատ լաւ գիտենք որ կղերականները, հոգատէրները եւ բուրժուաները Աստուծոյ անունով կը բարբառին՝ իրենց շահերը հետապնդելու համար... Մեր ըմբռնած բարոյագիտութիւնը կը բխի աշխատաւոր բազմութեանց շահերուն պաշտպանութենէն եւ դասակարգային պայքարէն ...

×

Այս դաւանաճառին առաքեալներէն մէկն ալ, Եուկոսլաւ Թիթօն, որուն գրպանը կանանչ տոլար է որ կը լեցնէ բարեմիտ Ընիբլ Սեմը, այն ակնկալութեամբ թէ աւելի որ ալ խելքը գլուխը պիտի գայ, օր մը եւ իր թեւը պիտի չտայ Մոսկուայի դէմ :

Եթէ մեզի չըլլար խաղալ «Հայր Մեր»ին հետ, պիտի ըսէինք .

— Եւ մի՛ տաներ զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի միամտութենէ ...

ԵՒՐՈՊԱՑԻ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԱՅԶԸՆՀԱՈՒԸՐ ՓԱՐԻԶ ԵԿԱՒ

—o—

ԿՐԵՄԼԻՆԻ ԿՈՉԸ՝ ՄԱԿ–ի 83 ԵՐԿԻՐՆԵՐՈՒՆ

Դիւանագիտական կարեւոր չաբաթը սկսաւ Փարիզի մէջ: Երկու օրէ ի վեր այստեղ կը գտնուին արդէն Ատլանտեան Ուխտի անդամ երկիրներու նեռկայացուցիչները, ինչպէս՝ Միացեալ Նահանգներու Արտաքին Նախարար Տըլլըս, Դանիոյ Վարչապետ Հանսըն, Իտալիոյ Արտաքին Նախարար Փելա, Արեւմտեան Գերմանիոյ Վարչապետ Ատընաուըր, Պունտեսթաղի Վարչապետ Գարտամնըիս, եւայլն :

Ու մինչ Նախագահ Քոթի եւ Վարչապետ Կայետ Օրլիի օդակայանը կ'երթային Ամերիկայի Նախագահ Այզընհաուըրի դիմաւորութեան՝ կրեմլին չբաւարարուելով Ամերիկայի, Անգլիոյ, Ֆրանսայի, Գերմանիոյ եւ Հնդկաստանի կառավարութեանց ղրկած իր նամակներով՝ կոչ մը կը հրապարակէր, ուղղուած՝ ՄԱԿի անդամ 83 երկիրներուն :

Ատլանտեան Ուխտի «մեծ»երու հանդիպումին նախօրեակին, ծանօթ է այլեւս Մոսկուայի որդեդրած ուղղութիւնը.

— Ամէն անդամ՝ երբ միջազգային հանդիպում մը ըլլայ, համագործակցութեան եւ խաղաղութեան կոչ կ'ուղղէ բոլորին : Այս անդամ՝ կ'առաջարկէ նաեւ Խ. Միութիւն – Ամերիկա բարեկամութիւն :

ՄԱԿի 83 անդամներուն եղած այս կոչը ուրիշ բան չէ, եթէ ոչ հինգ երկիրներու զեկավարներուն ղրկուած Բուլղանինի նամակին կրկնութիւնը : Միացեալ Նահանգներու դաշնակից մեծ պետութիւնները առ այժմ կը սպասեն, այդ առա-ջարկները Փարիզի մէջ քննելու եւ, ի հարկին, պատասխանելու համար անոնց :

Բայց ատի, Գելժիոյ Արտաքին նախարարը խորհրդային առաջարկներուն մէջ ժխտական կէտ մը չդտնելով, փափաք կը յայտնէր, որ Ատլանտեան Ուխտի «մեծ»երու ժողովին մէջ այս պարագան լրջօրէն քննուի :

Միւս կողմէ, Վարչապետ Կայետ եւ Արտաքին Նախարար Փինօ խորհրդակցութիւն մը ունեցան, որմէ ետք պաշտօնապէս յայտարարուեցաւ՝ թէ Ֆրանսա պիտի ընդունի որ հեռավար (թէլէկիփ) հրթիռներու արձակարաններ հաստատուին իր հողամասին վրայ : Այսուհանդերձ, կը մտածուի որ արձակարաններու դեկավարութիւնը միայն Ամերիկացիներու չյանձնուի :

Ընդհակառակն, Արեւմտեան Գերմանիոյ մամուլի դործակալութեան համաձայն, Վարչապետ Ատընաուըր հաւանութիւն պիտի չտայ որ հրթիռներու արձակարաններ կառուցանուին Դաշնակցային Հանրապետութեան մէջ :

× *Առջի օր, Փալէ տը Շայեոյի մէջ Ատլանտեան Ուխտի ներկայացուցիչներու եւ զինուորականներու խառն ժողով մը եղաւ՝ Հանրի Սփաքի նախագահութեամբ:*

× *Մոսկուայի «Կոմսոմոլսկայա Պրաւդա» թերթը խորհրդային քաղաքականութեան մասին խմբագրական մը դրելով, անդամ մը եւս*

պէշաւ ճառեր կը խօսուին եւ փաղաքշանքներ կը նամակներ կը դրուին միւս կողմէ երկուստեք սպառազինումները տենդագին եւ «հարուածային կարդով»յառաջ կը տարուին:

Ամբողջ աչխարհ ակնդէտ կը սպասէ «տասնեւհինգ»ներու ժողովի արդիւնքին՝ այն մեծ յոյսով, որ Բուլղանինի «Թուղթէ շերեփը» երկաթէ շերեփի պիտի չվերածուի երբեք :

ՀՐԱՆՏ – ՍԱՄՈՒԷԼ

Օրը Օրին

ՆՈՐ «ՀԱՑՐ ՄԵՐ»Ը

Հետեւեալ հէքեաթը կը պատմէ Անգլիոյ Աշխատաւորական կուսակցութեան «ապստամբ»ներուն կրակուրց պարագլուխը, Անայրին Պեվըն, որ Ամերիկա եկած է դասախօսելու .

— Եուկոսլաւ պաշտօնեան կը յանդիմանէ գիւղացի մը, որ եկեղեցի երթալու առաւօտուիւն չուներ :

— Ինչո՞ւ եկեղեցի չես երթար, կը հարցնէ պաշտօնեան :

—Որովհետեւ, եկեղեցի երթալու պէտք չունիմ — ես իմ տանս մէջն ալ կրնամ աղօթել, կը պատասխանէ գիւղացին :

— Ինչպէ՞ս կ'աղօթես ...

— Փալէ՛ հետս ...

Գիւղացին տուն կ'առաջնորդէ պաշտօնեան եւ իր սենեակին պատերուն վրայ աւուր ցոյց կուտայ՝ «հայր» Սթալինի, մանչուկ Թիթոյի, նախագահ Այզընհաուըրի, յայտնի դերասանուհի Ճինա Լոլոպրիճիտայի եւ Եուկոսլաւիոյ Գաղտնի Ոստիկանութեան պետին, Ալեքսանդր Բանկովիչի մեծադիր նկարները :

— Աղօթէ՛ նայիմ, կը հրամայէ պաշտօնեան ...

Ու գիւղացին կը սկսի.

— Հայր մեր, որ յերկինս ես — *կը խոնարհի Սթալինի նկարին առջեւ ...*

— եկեսցէ արքայութիւն քո, եղիցին կամք քո, որպէս յերկինս եւ յերկրի — *կը խոնարհի Թիթոյի նկարին առջեւ ...*

— Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր — *կը խոնարհի Այզընհաուըրի նկարին առջեւ ...*

— Եւ մի՛ տաներ զմեզ ի փորձութիւն— *կը խոնարհի Լոլոպրիճիտայի նկարին առջեւ...*

— Այլ փրկեա՛ զմեզ ի չարէ — *կը խոնարհի Ամնաուրի նկարին առջեւ :*

×

Ձեմ կարծեր որ չափազանցութիւն կայ այս պատմութեան մէջ: Որովհետեւ, ամէնիս ալ գիտենք որ Արեւմտեան ազգերուն եւ Արեւմտեան բաղաքակրթութեան «բարեկամ» թիթօն ալ համայնավար է, խրուշչեւի մը չափ եւ ան ալ չի հաւատար շնորհիւով մարդոց հաւատացած բաներուն — Աստուած, Քրիստոս, եկեղեցի, աղօթք, Սաղմոս, Ալէլուիա եւ «բուրժուական վայել» ուրիշ «աւելորդաբանութիւններ »:

×

Լենին իր Ամբողջական Գործերուն 17րդ հատորին էջ 321ին վրայ գրած է.

— Ինչո՞ւ մենք բարոյականի եւ բարոյագիտութեան չենք հաւատար: Որովհետեւ անոնց մասին կը բարոզեն բուրժուաները, որոնք կ'ըսեն թէ բարոյականի պատգամները արձակած է Աստուած: Բայց մենք Աստուծոյ չենք հաւատար, որովհետեւ շատ լաւ գիտենք որ կղերականները, հոգատէրները եւ բուրժուաները Աստուծոյ անունով կը բարբառին՝ իրենց շահերը հետապնդելու համար... Մեր ըմբռնած բարոյագիտութիւնը կը բխի աշխատաւոր բազմութեանց շահերուն պաշտպանութենէն եւ դասակարգային պայքարէն ...

×

Այս դաւանաճառին առաքեալներէն մէկն ալ, Եուկոսլաւ Թիթօն, որուն գրպանը կանանչ տոլար է որ կը լեցնէ բարեմիտ Ընիբլ Սեմը, այն ակնկալութեամբ թէ աւելի որ ալ խելքը գլուխը պիտի գայ, օր մը եւ իր թեւը պիտի չտայ Մոսկուայի դէմ :

Եթէ մեզի չըլլար խաղալ «Հայր Մեր»ին հետ, պիտի ըսէինք .

— Եւ մի՛ տաներ զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի միամտութենէ ...

ԵՒՐՈՊԱՑԻ

ԼԵՀԱՍՏԱՆԻ Գրողներու Միութիւնը երկար վիճաբանութիւններէ ետք ընտրեց իր նախագահը՝ Անթաուն Սլոնիմսկի: Այս առիթով կը հաղորդուի թէ Միութիւնը այլեւս զաղափարական ու քաղաքական կազմակերպութիւն մը պիտի չըլլայ: Խորհրդային թերթերը խստօրէն քննադատեցին նորընտիր նախագահը :

ԱՆԳԼԻՈՑ Վարչապետ Մաքմիլլըն Փարիզ դալէ առաջ տեսակցութիւն մը ունեցաւ Զըրչիլի հետ, Ատլանտեան Ուխտի ժողովին մասին անոր կարծիքը առնելու համար: Սովորաբար, միջազգային ժողովներու մասնակցելէ առաջ, Վարչապետ Մաքմիլլըն կը տեսնուի Զըրչիլի հետ :

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳԵՐՄԱՆԻՈՑ կառավարութիւնը բողոքեց Ֆրանսայի Արտաքին նախարարութեան, Փարիզի մէջ գտնուող Կէօթէի նախկին տունը Արեւմտեան Գերմանիոյ յանձնելու Ֆրանսական որոշումին դէմ: Մեծ դրադէտին բնակարանը (Բիւ Իէնա) որ 1937էն ի վեր Գերմանիոյ կը պատկանէր, Բ. աչխարհամարտի ընթացքին դրաւուած էր Ֆրանսական կառավարութեան կողմէ :

ՍԻԿԻԼԻՈՑ մէջ դպրոց մը փլաւ՝ 50ի մօտ աչակերտներու վրայ: 11 տղաք ու աղջիկներ մեռած են, միւսները՝ վիրաւորուած :

ԼՈՆՏՈՆ հասաւ եօթը միլիոն սթերլին ժխտողութեամբ ռուսական ոսկի, անգլիական դրամատան մը համար :

"ԵՍ ՀՈՍ ԵՄ"

ԿԸՍԷ ՍՈՔԱՐՆՕ

—o—

Ինչպէս գրած էինք, առջի օր չըլյան կ'ընդհատ ղրոյցներ՝ որոնց համաձայն Ինտոնեզիոյ Նախագահ Սոքարնօ իր հրաժարականը տուած եւ արտասահման փախած է: Լուրին աղբիւրն էր Ամսթերտամ, որ միաժամանակ կը յայտնէր թէ Հաթա իչխանութեան դլուխ անցած է :

Սակայն, Նախագահ Սոքարնօ անձամբ հերքեց այդ լուրերը, օտար լրագրողներու առջեւ յայտարարելով. «ես հոս եմ»: Խորհրդարանի ժողովին նախագահելէ ետք, Սոքարնօ մամուլին յանձնեց գրաւոր յայտարարութիւն մը, ուր կ'ըսուի .

— Ամսթերտամի մէջ չըլյող ղրոյցները կ'ըսեն թէ ես առապա՛ծ եմ: Ահաւասիկ հո՛ս եմ ես: Այնպէս կ'երեւի, թէ Ամսթերտամ իր փափաքները իրականացած կը նկատէ ...:

Միւս կողմէ, Փէքինի ձայնասփիւռը յայտարարեց, թէ նոր մահափորձ մը կազմակերպուած էր Նախագահ Սոքարնոյի դէմ. լուրը հերքուեցաւ Ինտոնեզիոյ պատասխանատուներու կողմէ :

Մինչ այս մինչ այն, Ինտոնեզիոյ կառավարութիւնը արտօնութիւն տուաւ անգլիական Պ. Օ. Ա. Ս. օդանաւային ընկերութեան, որ դրաղի Հոլանտացիներու տեղափոխութեամբ : Լոնտոն հասած են արդէն 68 կիներ ու մանուկներ՝ Ինտոնեզիայէն արտաքսուած . Հոլանտական ընկերութեան մը պաշտօնեաներուն ըն-տանիքներն են անոնք :

—o—

ՊԱՐՍԿԱՍՏԱՆի արեւմտեան չըլյանին մէջ պատահած երկրաչարժի մը հետեւանքով երեք հարիւր հոդի մեռած եւ հինդ հարիւր հոդի վիրաւորուած է :

Ե. ՉԱՐԵՆՑԻ ՈՐԲԵՈՒԹՅԱՆԸ


(ԾՆՆԴՅԱՆ 60ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ)

Չարենցի որբերգությունը ստեղծագործական ամենաբարդ խնդիրներից է։ Ինչպես հայտնի է, Չարենցը ինքն էլ մի քանի անգամ է վերադարձել այդ թեմային, ամեն անգամ նոր տեսանկյունից լուսաբանելով այն։ Ամենից առաջ պետք է նշել, որ Չարենցի որբերգությունը ոչ միայն հայ, այլև համաշխարհային գրականության մեջ ամենաանսովոր երևույթներից է։ Ինչպես հայտնի է, որբերգությունը ստեղծվել է ռուսական հեղափոխության ամենաբուռն տարիներին, երբ ամբողջ աշխարհի աչքերը ուղղված էին դեպի Ռուսաստանը, որտեղ ծավալվում էին ամենամեծ ու ամենահետաքրքրական իրադարձությունները։ Ռուսական հեղափոխությունը ոչ միայն ռուսական, այլև համաշխարհային գրականության մեջ ստեղծեց մի նոր ժանր՝ հեղափոխական պոեմը։ Այդ ժանրի ամենանշանավոր ներկայացուցիչներն են Ալեքսանդր Բլոկը, Վլադիմիր Մայակովսկին, Սերգեյ Եսենինը, Դեմյան Բեդնին, Նիկոլայ Տիխոնովը, Վսևոլոդ Իվանովը, Բորիս Պիլնյակը, Իլյա Սելվինսկին և ուրիշներ։ Այդ պոեմների մեծ մասը ստեղծվել է 1917 թվականի Հոկտեմբերյան հեղափոխության առաջին տարիներին։ Ռուսական հեղափոխական պոեմի ամենանշանավոր հատկանիշներից մեկն այն է, որ հեղինակը ինքն է հանդես գալիս որպես հեղափոխության մասնակից։ Նա ոչ թե պասիվ դիտողի դիրքերից է նկարագրում հեղափոխության ընթացքը, այլ ինքն է ներգրավված հեղափոխական գործունեության մեջ։ Ռուսական հեղափոխական պոեմի մյուս հատկանիշն այն է, որ հեղինակը ոչ միայն հեղափոխության մասնակից է, այլև նրա ակտիվ քարոզիչը։ Նա ոչ միայն նկարագրում է հեղափոխության ընթացքը, այլև ինքն է մասնակցում նրան։ Ռուսական հեղափոխական պոեմի մեջ հեղինակը ոչ միայն ներկայացնում է հեղափոխության ընթացքը, այլև ինքն է մասնակցում նրան։ Ռուսական հեղափոխական պոեմի մեջ հեղինակը ոչ միայն ներկայացնում է հեղափոխության ընթացքը, այլև ինքն է մասնակցում նրան։

Չարենցի որբերգությունը ստեղծվել է 1917 թվականի Հոկտեմբերյան հեղափոխության առաջին տարիներին։ Այդ ժամանակ Չարենցը ապրում էր Ալեքսանդրապոլում (Լենինական)։ Նա ակտիվ մասնակցություն էր ունենում հեղափոխական կյանքին։ Նա ինքն էր ասում, որ «հեղափոխությունը ինձ գտավ Ալեքսանդրապոլում»։ Նա հեղափոխության մեջ տեսավ իր ազատագրության ուղին։ Նա հեղափոխության մեջ տեսավ իր ազատագրության ուղին։ Նա հեղափոխության մեջ տեսավ իր ազատագրության ուղին։

Չարենցի որբերգությունը ստեղծվել է 1917 թվականի Հոկտեմբերյան հեղափոխության առաջին տարիներին։ Այդ ժամանակ Չարենցը ապրում էր Ալեքսանդրապոլում (Լենինական)։ Նա ակտիվ մասնակցություն էր ունենում հեղափոխական կյանքին։ Նա ինքն էր ասում, որ «հեղափոխությունը ինձ գտավ Ալեքսանդրապոլում»։ Նա հեղափոխության մեջ տեսավ իր ազատագրության ուղին։ Նա հեղափոխության մեջ տեսավ իր ազատագրության ուղին։ Նա հեղափոխության մեջ տեսավ իր ազատագրության ուղին։

Չարենցի որբերգությունը ստեղծվել է 1917 թվականի Հոկտեմբերյան հեղափոխության առաջին տարիներին։ Այդ ժամանակ Չարենցը ապրում էր Ալեքսանդրապոլում (Լենինական)։ Նա ակտիվ մասնակցություն էր ունենում հեղափոխական կյանքին։ Նա ինքն էր ասում, որ «հեղափոխությունը ինձ գտավ Ալեքսանդրապոլում»։ Նա հեղափոխության մեջ տեսավ իր ազատագրության ուղին։ Նա հեղափոխության մեջ տեսավ իր ազատագրության ուղին։ Նա հեղափոխության մեջ տեսավ իր ազատագրության ուղին։



ՄԱՐՏԻ ՎԱ

Թ9.

Ամեն անգամ, որ ես տեսնում եմ ձեզ, ես ուրախանում եմ ձեր ուրախությունից, ձեր ժպիտից, ձեր աչքերի փայլից, ձեր ամբողջ էությունից, որ ինձ համար ամենաթանկն է աշխարհում։ Ես ուրախանում եմ, որովհետև ձեր ուրախությունը ինձ համար ամենամեծ երջանկությունն է։ Ես ուրախանում եմ, որովհետև ձեր ուրախությունը ինձ համար ամենամեծ երջանկությունն է։ Ես ուրախանում եմ, որովհետև ձեր ուրախությունը ինձ համար ամենամեծ երջանկությունն է։

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԽՈՐՀՐԴԱԺԻՆ չորս դիտուններ պային Սան Ֆրանսիսքօ (Միացեալ Նահանգներ) Սթանֆըտսըրի համալսարանին մէջ Բ.օր բացուելիք դիտական համագումարի մը մասնակցելու համար :

ՄԱԿի քաղաքական յանձնախումբը քանի դէմ երեսուն ձայնով վաւերացուց Ցունաստանի առաջարկը՝ կիպրոսի հարցին չուրջ։ 25 հոգի ձեռնպահ մնաց :

ՈՒՈՇԻՆԿԲՐՆ հասած լուրերուն համաձայն, Իֆնիի կռիւներուն վերջ տալու համար «կլոր սեղան»ի ժողով մը պիտի ըլլայ՝ Մարոքի, Սպանիոյ եւ Ֆրանսայի մասնակցութեամբ :

ԹՈՒԻՈՑԻՆ պաշտօնապէս կը հաղորդէն, թէ ներկայիս ձափոնի մէջ 82·000 ամերիկացի պինուոր կայ :

ՑՈՒՆԱՍՏԱՆի մէջ երկու մահափորձեր կատարուեցան Ամերիկացիներու դէմ. չորս պինուորներ վիրաւորուեցան։ Ցոյ – ները այս միջոցին դիմած են, ՄԱԿի ժողովին մէջ կիպրոսի հարցին նկատմամբ Ամերիկայի բռնած դիրքին դէմ բողոքելու համար :

ԻՏԱԼԻՈՑ նաւաշինարաններու բան – ուորները 24 ժամուան գործադուլ մը ը – րին՝ աշխատավարձի յաւելում պահան – ջելով. եթէ գոհացում չտանան՝ գործա – դուլը աւելի երկար պիտի տեւէ :

ՆԻՒ ԵՈՐԿԻ ներքնընթացի (մեթրօ) վարիչները, որ գործադուլի մէջ էին, գործի ձեռնարկեցին :

ԱՆԴՐՕՎԵԱՆ ՖՐԱՆՍԱՑԻ մէջ քարու – ղի փնտռտուքները կատարելու համար, 45 միլիառ ֆրանք պիտի յատկացուի յա – ռաջիկայ տարի :

ԹՈՒՆՈՒԶի ելմտական նախարար Հեն – րի Նուիրա Փարիզ եկաւ, երկու երկիր – ներու ելմտական հարցերու չուրջ խոր – հրդակցելու համար :

ՄԱՐՈՔԻ թագաւորը Նիւ Եորքէն վե – րադարձաւ Ռապաթ :

ԱՆԳԼԻԱՑի ծանօթ դերասան Լորընս Օլիվիէ ժան – Լուսա Պարօն հրաւիրած է Լոնտոն՝ դեր մը խաղալու համար :

ԱՆԳԼԻՈՑ քաղաքական չրջանակներուն կարծիքը այն է, թէ կիպրոսի հարցը պէտք է որ քննուի Ատլանտեան Ուխտի ժողովին մէջ։ Ինչպէս ծանօթ է, ՄԱԿի քաղաքական յանձնախումբին մէջ Ցու – նաստանի առաջարկը ընդունուեցաւ : Ասիկա Աթէնքի դիւանագիտական կարե – ւոր մէկ յաղթանակը կը նկատուի՝ Թուրքիոյ եւ Անգլիոյ վրայ :

ՈՒՈՇԻՆԿԲՐՆի կարգ մը թերթերը կը գրեն, թէ աւելի լաւ պիտի ըլլար եթէ Միացեալ Նահանգները ընդունէին հիւ – լէական եւ Ջրածին ռումբերու փորձերը դադրեցնելու խորհրդային առաջարկը :

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽՆԴՈՑՔ–ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Կազմակերպուած՝ Ֆ. Կ. Խաչի Տէսինի Ազգ. վարժարանի Կրթ. Մարմնի կողմէ :

Հովանաւորութեամբ՝ Ֆ. Կ. Խաչի Տէ – սինի մասնաճիւղին :

Դեկտեմբեր 24ին, երեքշաբթի, փրան – սական Ծնունդի երեկոյեան, ժամը 9ին, *Հ. Ց. Դ. Տան մէջ :*

Երգ, պար ու անակնկալներ :

Ճոխ. պիւֆէ, առատ կերուխում, մատ – չելի գինիներով : Թերթանուշ (վաքլավա), ու միրգեր :

Հաճելի ժամանց : Հայկական տաքուկ մթնոլորտ :

Կը հրաւիրուի բոլորը անխտիր :

Սրահին ջերմութիւնը ապահովուած է :

Մուտքը ազատ է :

ՀԱՑԱՍՏԱՆ

ԱՄՍԱԹԵՐԹ

(Օրգան՝ Հ. Ց. Դ. Նոր Սերունդի)

Լոյս տեսած է 11րդ թիւը :

Ճոխ բովանդակութեամբ, պատկե – րազարդ :

Հայերէն եւ ֆրանսերէն :

Գինը՝ հասը 50 ֆրանք :

Տարեկան բաժնեդին՝ 450 ֆրանք :

Պատուիրու համար դիմել՝

M. K. PAPAZIAN

25, Rue Martial-Boudet, Chaville - S. et O.

ԴՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՑ

Կազմակերպութեամբ Հ. Ց. Դ. Նոր Սերունդի Քրիստախոյ խումբի :

Նուիրուած ԱՒԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆի :

Պոմոնի եկեղեցւոյ սրահին մէջ
Այս երկուշաբթի, ժամը 21ին :
Կը նախագահէ Պ. Ց. ԱՂԱՑԵԱՆ
Կը խօսին.— Կ. ՓՕԼԱՏԵԱՆ, Տ. ԹՈՒ – ԴՈՑԵԱՆ, Ժ. ՄԻՐԻՃԵԱՆ (Նոր Սերուն – դի կողմէ) :

Արտասանութիւն եւ երգ՝ Ա. Իսահակ – եանի գործերէն :

Սրահը տաքցուած է Մուտքը ազատ է

ՑԱԻԱԿՑՈՒԹԻԻՆ

Հ. Ց. Դ. Կրընոպլի Եօթնեղբայրեան կոմիտէն իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ Տէր եւ Տիկին Հայկ Սէրէն – կիւլեանի եւ պարագաներուն իրենց եղ – բօր Նիկողոս Նիկողոսեանի մահուան տը – խուր առթիւ :

×

Տիկին Սաթօ Ցակոբեան խորին ցաւակ – ցութիւն կը յայտնէ Տիկին Տ. Սէրէնկիւլ – եանի իր եղբօր Նիկողոս Նիկողոսեանի մահուան առթիւ եւ փոխան ծաղկեպսակի կը նուիրէ հազար ֆրանք, Մշակոյթի Տան եւ հազար ֆրանք Ֆ. Կ. Խաչի կայանին :

Ստանալ «Ցառաջ»էն :

×

Մ.ՕՏԷՕՆԷՆ Տէր եւ Տիկին Նչան Դար – բինեան, Պ. Նիկողոս Նիկողոսեանի մահ – ուան առթիւ իրենց խորին ցաւակցու – թիւնները կը յայտնեն Տէր եւ Տիկին Հ. Սէրէնկիւլեանին եւ Տէր եւ Տիկին Վազ – դէն Սէրէնկիւլեանին եւ այս տխուր առ – թիւ հազար ֆրանք կը նուիրեն Փարիզի Մշակոյթի տան :

Ստանալ Ցառաջ»էն :

×

Վիէն.— Այրի Տիկին Մարիամ Մաղաք – եանի եւ Այրի Տիկին Աննիկ Աճէմեանի կսկծալի մահուան առթիւ, Վիէնի Հ. Մ. Ը. Մ.ի բոլոր անդամները եւ մարզիկ – ները իրենց խորին ցաւակցութիւնները կը յայտնեն Տէր եւ Տիկին Ա. Մաղաքեանի, իրենց զաւակներուն եւ ընտանեկան պա – րագաներուն, ինչպէս նաեւ Տէր եւ Տիկին Ցակոբ Աճէմեանի, իրենց զաւակներուն եւ ընտանեկան բոլոր պարագաներուն :

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսական Բանակի Հայ Կամաւորներու եւ Մարտիկներու Միութեան վարչութեան

Ֆր. Բանակի Հայ Կամաւորներու եւ Մարտիկներու Միութեան վարչութիւնս, այսու արտակարգ ընդհ. ժողովի կը հրաւիրէ Միութեանս բոլոր անդամները ո – րոնք իրենց նիւթական եւ բարոյական պարտականութիւնները կատարած են մինչեւ 31 Դեկտ. 1956 :

Ընդհ. ժողովը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Դեկտ. 22ին, կիրակի օր ա – ռաւօտեան ժամը 9ին, Հայ Ազգ. Տան մէջ, 32 բիս Թրէվիզ, Փարիզ :

Խիստ կարեւոր օրակարգ եւ նոր վար – չութեան ընտրութիւն :

Ֆրանսական Բանակի Հայ Կամ. եւ Մարտիկներու Միութեան Վարչութիւն
(ԿՆԻՔ)

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

Կարդացէք Ծատուր Պէրպէրեանի

ԿԱՐՄԻՐ ՓՈՔՈՐԻԿԸ

(Վէպ՝ երկունքի օրերէն)

Որուն հերոսները, իրենց յանդուգն կեցուածքով ձեզ պիտի ապրեցնեն մերթ ուրախ, մերթ տխուր, բայց յաճախ ծա – փահարելի պահ մը :

Այժմէն օրինակ մը ապահովելու համար դիմել հեղինակին՝

104, Av. d'Italie, Paris 13e

կամ հայ գրավաճառներուն :

Գինը՝ 500 ֆրանք : Թղթատարի ծախ – քը գնողին հաշուոյն :

Imprimé sur les presses du journal HARATCH
17, Rue Bleue, 17 — PARIS (9e)

ՏՕՆԱԾԱՌ

ՍԱՄՈՒԷԼ – ՄՈՒՐԱՏԵԱՆ
ՎԱՐԴԱՐԱՆ
Կիրակի, 22 Դեկտեմբեր
Ժամը 16 – 22 :

Գեղարուեստական ճոխ բաժին, պատ – րաստուած աշակերտներու կողմէ :

Կը ներկայացուի Շիրվանզատէի

ՍԿԶԲՈՒՆԴԻ ՄԱՐԴԸ

Կատակերգութիւն մէկ արար

Երգ, պար, արտասանութիւններ :

Հայկական համեղաճաշակ չքասեղան :

ՑՈՒՇԱՏԵՏՐ

ՓԱՐԻԶ.— Կապոյտ Աչէի մէջ – մաս – նաճիւղային ընդհ. ժողովը այս երկու – շաբթի, կէսօրէ վերջ, ժամը 16ին, Րէժա – նի սրճարանը : Կարեւոր օրակարգ :

ԸՆԿԵՐԱԿԱՆ ՀԱՒԱՔՈՑԹ

Նոր տարուան առթիւ ընկերական հա – ւաքոյթ մը տեղի կ'ունենայ Դեկտեմբեր 22, կէսօրէ վերջ ժամը 16 – 22, 32 բիս տը Թրէվիզ : Նախաձեռնութեամբ Հ. Բ. Ը. Մ. Երիտասարդաց վարչութեան :

ՏԱՐԵԿԱՆ ՇՔԵՂ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

ՍԻՓԱՆ-ԿՈՄԻՏԱՍ ԵՐԳԶԱԽՈՒՄԲԻ

ԿԻՐԱԿԻ, 15 ԴԵԿՏԵՄԲԵՐ ԺԱՄԸ 16ԷՆ 23

SALONS DES AMBASSADEURS (Champs - Elysées)

ORCHESTRE BACHICHA

Սեղանները ապահովել՝ հեռաձայնելով Պ. Արմանի Սանթրալ 36·23 :

ՄՈՒՏՔ 500 ՖՐԱՆՔ

ՕԳՏՈՒԵՑԷՔ ԲԱՑԱՌԻԿ ԱՒԻՕՆ

CAMEL

ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՄՕՏ՝
102, BD. VOLTAIRE, PARIS-XI

ԿԸ ԾԱԽՈՒԻՆ՝ ԻՐԵՆՑ ՍԵՓԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԵՂՈՂ,

Անգլիական եւ Աւստրիական կերպասներէ, ճորաձեւ **LODEN**

ՎԵՐԱՐԿՈՒՆԵՐ ԵՒ AUTOCOATS ՆԵՐ

(Զանազան գոյներ) 8000էն 12·500 *ֆր.*

Իրենց մօտ կարելի է գտնել նաեւ
ԱՄԷՆ ՏԵՍԱԿԻ ՆՈՐ ԵՒ ԳՈՐԾԱԾՈՒԱԾ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ խիստ մատչելի գիներով :
SMOKINGի ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ : Մեծաքանակի համար մասնաւոր սակագին

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

Նիսի եւ չրջականերու Հայաստանեայց Առաքելական Կրօնական Ընկերակցու – թեան Բ. ընդհ. ժողովը տեղի կ'ունենայ 22 Դեկտ., կիրակի կէսօրէ վերջ, ժամը 15ին, Մատլէնի եկեղեցւոյ սրահը :

Օրակարգ.— Ա) Ջեկոյց հաշուեքննիչ մարմնի կողմէ : Բ) Քուէարկութիւն նոր չրջանի վարչական ընտրութեան :

Կրօն. Ընկ.եան վարչութիւնը կը հրա – ւիրէ իր բոլոր անդամ – անդամուհիները ներկայ գտնուելու սոյն ժողովին :

Ի դիմաց Կրօն.Ընկ.եան՝ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԾԱՆՕԹ.— Իւրաքանչիւր անդամ – ան – դամուհի որ Կրօն. Ընկ.եան մաս կը կազ – մէ իրաւունք ունի մասնակցելու քուէար – կութեան : Իսկ այն անդամ – անդամու – հիները որոնք բանաւոր պատճառով կը բացակային ընդհ. ժողովէն, կրնան լիա – զօրել ուրիշ անդամ – անդամուհի մը ի – րենց կողմէ քուէարկելու իրաւասու – թեամբ : Իւրաքանչիւր ներկայ անդամ – անդամուհի կրնայ ներկայացնել միայն մէկ լիազօրագիր :


ԿՂ ՓՆՏՌՈՒԻՆ

Երեւանէն վարդ. Պատուական Սիրա – կան Գրիգորեաններ, իրենց հօր անունը Սահեան, ինչպէս նաեւ Դաւիթ Պուռնազ – եան, որոնք Հայաստանէն պինուորա – գրուած են 1941 – 1942ին : Տեղեկացնել Յորէն Մնացականեանի,

544 Cuyp. St. San Francisco, California

ՀԻՒԱՆԴԱՑԱՀՈՒՀԻ ԿՈՒԶՈՒԻ

Հայկական ծերանոցներուն համար վը – կայեալ հիւանդապահուհի մը կը փըն – տռուի (պետական վկայականով) : Բնա – կարան եւ սնունդ ապահովուած են : Դիմել Աղբատախնամի գրասենեակը : 32, Բիս տը Թրէվիզ, Փարիզ (9) :



Նոր կատարելագործում կօշիկի կրունկներու պատրաստութեան մէջ

Առաջին հայ հաստատութիւնը որ յա – ջողած է մաթիէռ փլաստիքի եւ պլիւ – միհիումի միացումով չինել անբիծ (էնֆա – սապլը) եւ ճկուն կօշիկի կրունկներ ամէն բարձրութեամբ :

Դիմել՝

VANPLAST

(Վ Ա Ն Լ Ե Ա Ն)

7, RUE GODOT DE MAUROY

Tél. : OPE. 01-08

Աւտօմանները հեռաձայնել՝ ITA 33-38

Réveillons

Chez SASSOUNI

ԿԱՂԱՆԴԻ ԵՒ ԾՆՈՒՆԴԻ

Զուարթ ու հաճելի Զարթօնքը
(24 եւ 31 Դեկտեմբերի գիշերները)

Մի մոռնաք ուր անցընելու մասին

ՍԱՍՈՒՆԻԻՆ մօտ ի հարկէ

Ուր պիտի գտնէք ճոխ ու պէսպէ – սուն ուտելիքներ եւ խմիչքներ

Բոլորդ ազգականներով եւ բարե – կամներով ժամադրուեցէք

Եւրոպական եւ արեւելեան նուագ

ՍԱՍՈՒՆԻԻՆ

31. RUE D'ALEXANDRIE, PARIS - 2e

Tél. GUT. 92-65

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 — Téléph. : PRO. 86 - 60

R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա եւ գաղութներ, տարեկան 3000 ֆր. վեցամս. 1600

Արտասահման՝ տարեկան 3500 ֆրանք: Հատը 12 ֆր.

ԵՐԵՔՇԱԲԹԻ 17 ԴԵԿՏԵՄԲԵՐ

MARDI 17 DECEMBRE 1957

33ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8070 — 33e ANNEE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 13ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3871

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ԱԶԱՏ ԱՇԽԱՐՀԸ

1955ի պարնան Ժընեւի մէջ գումարուած էր Մեծերու խորհրդաժողով մը, որուն կը մասնակցէր նաեւ Կրէմլինի ներկայացուցիչը :

Մեծ յոյսեր դրուած էին այն առեն աշխարհի խաղաղութեան եւ ազգերու համերաշխութեան վրայ :

« Ժընեւի ոգի»ն ժամանակ մը այդ խաբուսիկ յոյսէ պատրանքին տակ պահեց մարդկութիւնը :

Հիասթափութիւնը չուշացաւ սակայն : Արեւմուտքն ու Արեւելքը կրկին բաժնուեցան իրարմէ : Հակոտնեայ չահեր իրարու բախեցան : Մասնաւորաբար Մեր ճաւոր Արեւելքը կոտախնձոր դարձաւ երկու ճակատներուն միջեւ :

Ժընեւէն ի վեր չատ տաք ու պաղ հո վեր եկան ու անցան երկրագունդի վրայէն : Մրցակցութիւնը երկրագունդի սահմաններն ալ գլեց ու անցաւ : «Սպուտնիկ»ներ կը թաւալին հիմա երկրիս չուրջ : Ուրիշներ ալ պիտի հետեւին անոնց : Մէկ կողմը չուզեր ետ մնալ միւսէն :

Կանաչ սեղաններու չուրջ օրն ի բուն կը խօսին զինաթափութեան, սպառազինման կրճատումին ու խաղաղութեան մասին : Սակայն անդին գիշերը ցերեկին խառնած երկուստեք անընդհատ կը սպառազինուին, նորանոր ահռելի զէնքեր կը հնարեն : Քիչ ճիգով եւ կարճ ժամանակի մէջ մեծագոյն թիւով մարդիկ սպաննելու միջոցներ կ'որոնեն :

Ա՛յս վիճակին մէջ է ահա այսօր աշխարհ, որ երկու հակամարտ ճակատներու է բաժնուած :

Մէկ ճակատը Խորհրդային Միութիւնն է, որ երկրորդ աշխարհամարտէն ի վեր մեծապէս ընդլայնած է իր ազդեցութեան չրջանակը : Մէկ կողմէն հասած է մինչեւ Մայրապոյն Արեւելք, — Չինաստան, Հիւսիսային Քորէա եւ յարակից հողամասերը : Միւս կողմէն եկած նստած է Եւրոպայի սրտին վրայ, մինչեւ Գերմանիոյ մայրաքաղաքը : Լեհաստան, Պալթեան երկիրներ, Ռումանիա, Պուլկարիա, Հունգարիա, Չեխոսլովաքիա եւ Ալպանիա ինկած են Կրէմլինի մականին տակ :

Այս ընդարձակածաւալ երկիրներու հարիւր միլիոնաւոր բնակիչները տարիներէ ի վեր ղրկուած ազատութենէ եւ մարդկային տարրական իրաւունքներէ՝ են թարկուած են կարմիր բռնակալութեան : Ցորի համբերութեամբ կը տոկան ամէն ղրկանքի : Բողոքի կամ ընդվզումի որեւէ արտայայտութիւն՝ հրապայլերու եւ գընդացիրներու կրակին մէջ կը խեղդուի վայրկեանապէս :

Միւս ճակատը կը կազմեն արեւմուտքի ժողովրդավար պետութիւնները, կեդրոնական Եւրոպայէն մինչեւ զոյգ Ամերիկաները եւ բոլոր այն երկիրները, որոնք դերծ մնացած են բոլշեւիկեան թեւարկութենէն : Ասոնք բոլորը միասին կը կազմեն ազատ աշխարհը :

Այդ ազատ աշխարհի դլխաւոր ներկայացուցիչներն են՝ Ատլանտեան Ուխտի տասնեւհինգ անդամ պետութիւններց պատասխանատու վարիչները, որ այսօր ժողովի նստած են, դլուխ դլխի տուած խորհրդակցելու համար թէ՝ ինչպէս կրնան թումբ կանդնել բոլշեւիկեան յարձակողականի դէմ : Ի'նչպէս կրնան պաշտպանել ազատասէնչ մարդկութիւնը՝ ընդդէմ վարդապետութեան մը եւ վարչաձեւի մը, որ ամէնէն առաջ թշնամի է մարդկային ազատութեան :

Փարիզը Ժընեւ չէ : Խորհրդային եւ բոլորտիքեան արբանեակ երկիրներու ներկայացուցիչներ չեն հրաւիրուած Փալէ որ Շայեոյի խորհրդաժողովին :

Սակայն Կրէմլինը իր վարչապետին՝ Բուլղանինի բերնով ողողած է արդէն հրապարակը : Մոքերու մէջ չփոթ ստեղծել կ'ուզէ՝ իր խաղաղասիրական «լօ-դունգ»ներով : Միացեալ Ազգերու կազմակերպութեան 82 անդամները կը հրաւիրէ համերաշխութեամբ եւ խաղաղ միջոցներով լուծել համաշխարհային վէճերը :

Բայց չէ՞ որ ՄԱԿը արդէն իր ստեղծուած օրէն ի վեր նոյն նպատակը կը հետապնդէ : Առանց արդիւնքի մը յանգելու :

Ցուսանք, որ մարդկութեան համար երջանկարեր ըլլայ «ազատ աշխարհ»ի Մեծերուն ժողովը, Նոր Տարիի սեմին :

ՀՐԱՆՏ – ՍԱՄՈՒԻԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

'ՖՐԱՆՍԱ ԲԱՑԱՌԻԿ ՏԵՂ ՄԸ ՈՒՆԻ ԱՄԵՐԻԿԱՑԻ ՍՐՏԻՆ ՄԷՋ''

ՑԱՑՏԱՐԱՐԵՑ ԱՑԶՔՆՀԱՒՐԸ

Ինչպէս գրած էինք Միացեալ Նահանգներու Նախագահը՝ Այզընհաուըր, չաբաթ օր հասաւ Փարիզ : Օրլիի օդակայանը զարդարուած էր Ատլանտեան Ուխտի անդամ 15 երկիրներու դրօշակներով : Ահա - պէն բազմութիւն մը գացած էր օդակայան, բարիզալուստ մաղթելու նախագահին :

Այզընհաուըրի օդանաւը հասաւ ժամը 2·54ին· քառորդ ժամ առաջ, Նախագահ Քոթի օդակայանն էր արդէն : Պետական եւ զինուորական ծանօթ դէմքեր, դիմաւորեցին Ամերիկայի Նախագահը՝ երբ վար իջաւ օդանաւին սանդուխէն : Մինչ, զինուորական պատիւներով ընդունարան կ'առաջնորդուէր Նախագահը՝ աջին կայեաւ եւ ձախին՝ Քոթի, հնչեց նախ ամերիկեան, ապա՝ Ֆրանսական ազգային քայլերգը :

Վարչապետ Կայեաւ բարիգալուստի ճառ մը խօսեցաւ, յայտնելով թէ երջանիկ է Ֆրանսան՝ իր պատասարքն ու պաշտպանը ընդունելով իր հողին վրայ :

Այնուհետեւ, խօսեցաւ Նախագահ Այզընհաուըր, որ հինգ տարուան բացակայութենէն մը ետք դարձեալ կուգար Ֆրանսա· — Այն թուականէն ի վեր, ըսաւ Նախագահը, երբ հիմնուեցաւ ամերիկեան ազգը՝ Ֆրանսա բացառիկ տեղ մը կը դրաւէ Ամերիկացիներու սրտին մէջ :

Այզընհաուըր, յուզուած, յիշեց այն մեծ դէմքերը եւ պատմական անցուդարձերը, որ Ֆրանսան դասեցին Արեւմուտքի յառաջադէմ երկիրներու չարքին, եւ Ֆրանսական մշակոյթը՝ որ ծագկած է չարունակ, պատերազմի թէ խաղաղութեան մէջ :

Ազատագրութեան չրջանը յիշելով ը - սաւ·— Ֆրանսայի պատմութեան փառաչեղ թուականներուն մէջ՝ յիշատակնե - րուս մէջ անջնջելի պիտի մնայ 1944ի Օ - գոստոսը, որ չորս տարիներ ետք, Փարիզին դարձեալ կուտար իր անկախութիւնն ու ուրախութիւնը : Այդ թուականէն 13 տարի ետք, ներկայիս Փարիզի մէջ փաստը պիտի տրուի ժողովուրդնե - րու անկախութեան եւ խաղաղութեան համար աշխատող Ատլանտեան Ուխտի անդամներուն իրերհասկացողութեան :

Դիւանագիտական եռուն գործունէու - թիւնը սկսած է արդէն Փարիզի մէջ : Վարչապետ Կայեաւ չաբաթ օր խորհրդակցութիւն մը ունեցաւ Անգլիոյ Վար - չապետ Մաքմիլլընի, ինչպէս նաեւ Իտալիոյ Արտաքին Նախարար Փելայի հետ : Կիրակի օր՝ դարձեալ խորհրդակցութիւններ, Կայեաւի, Արեւմտեան Գերմանիոյ վարչապետ Ատենաուըրի, Այզընհաուըրի, զօրավար Նորսթատի եւ Տըլլըսի միջեւ : Բոլոր երկիրներու դիւանագիտական ներկայացուցիչները, կարճ թէ երկար ժամանակով կարծիքներու փոխանակութիւն ունեցան իրարու հետ :

Երէկ, Բ· օր, կէսօրէ ետք ժամը եր - կուքին Փալէ տը Շայեոյի մէջ Նախագահ Այզընհաուըր բացումը կատարեց Ատլանտեան Ուխտի ժողովին : Առաջին առիթով խօսք առաւ Վարչապետ Ատենաուըր : Ժողովը պիտի տեւէ երեք օր :

ՕՐ ՕՐԻՆ

« ՊԷՕՃԻԿ »Ը

— Մեծ մայրիկ, տարին տասներկու ամիս դո՛ւն ինծի խրատ կուտաս, այսօր ալ ե՛ս ըեզի խրատ մը տամ ...

— Տո՛ւր նայիմ ...

— Քանի՞ տարեկան եղար մեծ մայրիկ

— կնկան մը տարիքը չեն հարցներ, ամօթ է ...

— Եօթանասունը անցածներուն կարելի է հարցնել ...

— Անա՞նկ է ... Լա՛ւ... Տէրնտասին, ութսուն ըլլալու երեք տարի կ'ուզեմ...

— Քանի՞ տարի է այս Միութեան անդամ ես...

— Քառասունը անցաւ ...

— Լա՛ւ, չե՞ս կարծեր որ ժամանակդ եկած է որ բիչ մը յոգնութիւն առնես ... Զաւակներ ունիս ... Հարսներ, փեսաներ, թոռներ ... Զգէ՛, թող բիչ մըն ալ անոնք աշխատին՝ ազգին համար ... Ես ու տեղդ ըլլամ, կը հրաժարիմ ... Ծերերը բիչ մը ետ բաշուելու են որ երիտասարդներուն ճամբայ բացուի ... Հրաժարականդ գրե՞մ ... Թուղթ ալ կայ, գրիչ ալ ...

— Ատ թուղթդ ու գրիչդ դուն ըեզի պահէ, տղաս ... Ես իմ Միութենէս չեմ հրաժարիր ... Հրաժարած օրս, կը մեռնիմ... Ես ատանկ սորված եմ, հօրմէս, մօրմէս... Ազգին համար աշխատողը, յոգնութիւն առնելու մասին մտածելու իրաւունք չունի ...

— Ատիկա գիտեմ, բայց անոնց մասին թող երիտասարդները մտածեն ...

— Ըսելը դիւրին է, *մամա*, գիտե՞ս ինչ...

— Ի՞նչ, մեծ մայրիկ...

— Չի ձգեր կոր ...

— Ո՞վ չի ձգեր... Քու գործիդ ո՞վ կրնայ խառնուիլ ...

— Սըտեղուկս, «պէօճէկ» մը կայ, կուրծքիս տակ: Ան է *քի* կը հրամայէ — «Ազգիդ ծառայէ, եթէ արբայութիւն երթալ կ'ուզես...» Հիմա հասկցա՞ր:

— Հասկցա՛յ, մեծ մայրիկ ...

×

— Քանի՞ տեսակ Ընկերութեան անդամ ես, հայրենակից ...

— Եօթը, ուր ...

— Քանի՞ տարեկան եղար ...

— Վաթսունը ինը ...

— Քանի՞ տարի է ազգին համար սիրտ, փոր կը մաշեցնես ...

— Ես ըսեմ քառասուն, դուն ըսէ յիսուն ...

— Չե՞ս կարծեր որ ժամանակը եկած է որ բիչ մըն ալ քու մասիդ մտածես ...

— Ազգը սիրող մարդուն համար ատ ժամանակը հիչ չի գար:

— Ըհը՛, ճիշդ սրտեղս բան մը կայ *քի* առտու, իրիկուն ինծի կ'ըսէ — «Մկո՛ւն, ազգդ չմոռնաս, կէս ճամբան չմնաս, Աստուած չի ներեր...

— Ո՞վ է եղեր այդ անխելք բանը ...

— Կը հասկնա՞ս, չե՞ս հասկնար, չեմ գիտեր *մամա* ըսեմ — ատիկա ազգին *պէօ - ճէկն* է... Քանի ատ *պէօճէկը* ողջ է, ես իմ ազգիս ծառան եմ ...

ԵԻՐՈՊԱՑԻ

ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԺՈՂՈՎԸ

ԿԻ ՄՈԼԷԻ ՏԵՍԱԿԻՑԸ ՅԱՂԹԱՆԱԿԵՑ

Կիրակի օր, Փլեթոյի մէջ, Ընկերվարականներու Ազգ· Խորհուրդը վերջացուց իր աշխատանքները : Կի Մոլէի տեսակէտը յաղթանակեց· ընկերվարական նախարարները պիտի մասնակցին կառավարութեան եւ կուսակցութեան քաղաքականութիւնը անփոփոխ պիտի մնայ : Սակայն, այս ընթացքով եթէ ապրուստի պայմանները աւելի դժուարանան եւ անգործութիւնը աւելնայ՝ Ընկերվարական ները իրենց դիրքը պիտի փոխեն եւ նախարարներուն պիտի թելադրեն որ հրաժարին դահլիճէն :

Կուսակցութեան դեկավարները կը մտածեն, թէ ընկերային տագնապը եւ սղութիւնը աւելի ծանր հարուած մը կըրնան հասցնել դրամին արժեզրկման, քան՝ քաղաքական տագնապը, որքան ալ վը տանգաւոր ըլլայ ան :

Կասթոն Տէֆէռ, Մարսէյլի քաղաքապետը պիտի դէմ էր Կի Մոլէի տեսակէտին եւ ուզած, բայց քաղաքավար վէճ մը ծայր տուաւ երկուքին միջեւ : Մինչ Կի Մոլէ կը պնդէ, թէ ներկայ պայմաններուն մէջ յարմար չէ որ հրաժարին ընկերվարական նախարարները, Կասթոն Տէֆէռ բնական կը դտնէ այդ հրաժարումը, նկատելով որ Թուլուզի համագումարին որոշումները չեն յարգուիր կառավարութեան մը կողմէ՝ որուն մաս կը կազմեն ընկերվարականները : Մարսէյլի քաղաքապետը քննադատեց նաեւ Ալժերիոյ Հիմնական Օրէնքը :

Ալժերիոյ ներկայ վիճակը բաւականին քննադատուեցաւ· Ռոպէր Լաքոստ, Ալժերիոյ նախարարը, յիշեց թէ երեք հարիւր մահմետականներ կ'աշխատին քաղաքապետական կազմակերպութեանց մէջ եւ միշտ մահուան վտանգին ենթակայ են :

Կի Մոլէ միջամտելով ըսաւ թէ պէտք է վստահութիւն յայտնել նախարարներուն՝ իրենց գործունէութեան համար : Իրենց անհատական գործունէութեամբ եւ տեսակէտով, ընկերվարական նախարարները պէտք է կազմակերպեն կառավարութեան քաղաքականութիւնը՝ ըստ յարմարութեան :

Հակառակ անոր որ կը կարծուէր թէ ընդդիմադիրները կրնային յաղթանակել, 908ի դէմ 2·792 ձայնով եւ 254 ձեռնպահութեամբ, Ընկերվարականները վրդովութիւն յայտնեցին նախարարներուն եւ համաձայն գտնուեցան՝ որ անոնք մասնակցին կառավարութեան :

ՇԱՒԻԼԻ ԵԿԵՂԵՑԻՆ ՕԾՈՒՄԸ

Ինչպէս գրած էինք կիրակի օր տեղի ունեցաւ Շաւիլլի Նորակառոյց եկեղեցին օծումը : Պատարագեց եւ եկեղեցին օծեց կաթ· պատուիրակ Սերովբէ Եպս· Մա - նուկեան : Հոծ բազմութիւն մը Շաւիլլէն եւ փարիզէն լեցուցած էր եկեղեցին եւ կից սրահը, չատերը չէին կրցած ներս մտնել : Ցաւարտ օծման եւ Պատարագին տեղի ունեցաւ ճաշ մը ուր հանգանակուեցաւ մէկ միլիոն ֆրանք կարճ ժամանակի մը ընթացքին :

Ցաջորդով՝ մանրամասնութիւններ :

ԻՆՏՈՆԵԶԻՈՑ կառավարութիւնը պաշտօնական հաղորդագրութեամբ մը կը յայտնէ, թէ արշիպեղագոսին երեք հարիւր ըղդիները չրջապատող ովկիանոսը մաս կը կազմէ Ինտոնեզիոյ դերիչխանութեան : Մինչ այդ, Մոսկուայի «Կարմիր Աստղ» թերթը կը գրէր, թէ Արեւմուտքը կը պատրաստուի յարձակում գործել Ինտոնեզիոյ վրայ :

ԱԻԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆԻ

ԿԵԱՆՔԻՆ ՈՒ ԳՈՐԾԸ

ԽՄԲ.— Ինչպէս գրած էիք, բանի մը շաբաթ առաջ Միլանոյի Հայ Տան մէջ տեղի ունեցաւ երեկոյ մը նուիրուած՝ Ա-ւետիք Իսահակեանի: Հայերէն եւ իտալերէն դասախօսած է Բժ. Արամայիս Սրապեան: Արտասանութիւններ ըրած են Օր. Սիմա Փափազեան եւ փոբրիկն Շաէէ Սրապեան: Այս առթիւ Արամայիս Սրապեան կարդացած է նաեւ ողբացեալ բա-նաստեղծէն հերքուածներ զոր ինք թարգմանած էր իտալերէնի:

Ստորեւ կը հրատարակենք մեր աշխատակիցին հայերէն դասախօսութիւնը:

Ա-ւետիք Իսահակեանի մահով Հայու-թիւնը կորսնցուց ոչ միայն ճշմարիտ բա-նաստեղծ մը՝ այլեւ մարդասէր մը: Կը պատկանէր այն մարդոց դասակարգին՝ որոնք, առանց ամենաղօյն չանքի կամ փնտռտուքի՝ ժամանակի ընթացքին կը դառորոշուին, դառնալով խորհրդանիշ մը, իրենց վրայ կեդրոնացնելով ազգի մը սէրն ու հետաքրքրութիւնը: Ինչո՞ւն կու-գայ հոգիներու այս փոխ յարաբերու-թեանց խաղը, որ անձնականէն կը տեղա-փոխուի հաւաքականին, որ եսէն կ'անցնի մենքին: Ա-ւետիք Իսահակեանի պարա-դային, կարելի է անվարան պատասխա-նել թէ անոր ժամանակի ընթացքին խոր-հրդանշանալու ղլխաւոր պատճառն էր իր հոգեբնախօսական խառնուածքը, որ կեն-սանիւթը կ'առնէր իր խոկ ժողովուրդին տոհմիկ բուխերիկէն, զայն լռելեայն հա-սունցնելով ներսիդին, ապա զայն ա՛լ ա-ւելի չքեղ, գրաւիչ եւ հոգենուագ թրթռ-ռացումներով վերադարձնելու համար իր ազգին զաւակներուն: Մէկ խօսքով, հան-դուցեալը հոգեպատկերն էր խոփին, ա-րօրին եւ հողին հետ գործ ունեցող իր ժողովուրդին, ու այս հոգեպատկերը չր-ջանակուած էր աստուածային ա՛յն ձօ-նով՝ որ բանաստեղծութիւնն է, զոր ան աչնան գունագեղ պտուղներու նման հա-սընցուց իր ներսիդին, ու երբ փափաքե-ցաւ տերել, ուրախանալ, խորհրդածել, երգել սէրը, սփոփանքն ու կարօտը իր հայրենիքին՝ դիմեց այդ ձօնին, որ եր-բեմն մեղմօրէն հծծեց ու երբեմն ալ, անապասելիօրէն, երգեց որոտաձայն եւ ահեղ:

Այս հակընդդէմ պատկերը կը դանենք դրեթէ բոլոր ճշմարիտ բանաստեղծնե-րուն մէջ, Քրիստոսէ առաջ ըլլայ թէ Քր-իստոսէ յետոյ: Միակ օրինակ մը՝ մեր դրական անդաստանէն. յիշեցէք քանամ-եայ Պետրոս Դուրեանի «Լճակ»ին քաղ-ցրը, տրամաւէտ մենախօսութիւնը հա-կընդդէմ անոր «Տրտունջք»ին մէջ ոտքի ելլող սպառազէն ապստամբութեան:

Իսահակեանի մէջ, բանաստեղծին դու-դահեռ կ'ընթանար արձակագիրը, բայց այդ արձակը առաւելապէս բանաստեղ-ծութիւն է, ոչ միայն իր նախընտրած նիւթերուն փոփոխակով՝ այլ այդ նիւթե-րուն մէջ չրջող հոգիին ձայներով, մեղ-մացումներով, մերձեցումներով եւ ներ-թափանցումներով. մտածումը, այսինքն խոկը, կը բանաստեղծականանայ խոր-հրդածութեան եւ վերադառնումներու քու-րային մէջ:

Ա-ւետիք Իսահակեանի մէջ զօրաւոր են ղղացական եւ ընկերային տարրերը. բայց, ինչ որ իր մէջ խոկապէս անփոփոխ մնաց, սկիզբէն մինչեւ վերջը, առանք բանաստեղծութեան առորոգելիներն են. ընկերային – դասակարգային, ըսել կ'ու-զեմ դաղափարաբանութիւններու եւ հա-մոզումներու կալուածը կրեց հիմնական յեղաշրջումներ, որոնց տեսական դրդա-պատճառները յստակ չյայտարարուեցան իրմէ. ինչ որ սփոեց իր այս կամ այն քերթուածին մէջ ըլլայ թէ արձակին, նոյնիսկ անհատներու ուղղուած նամակ-ներուն, իրրեւ պատգամ կամ դաւանանք՝ առանք կը պատկանին դրականութեան եւ դրական պատմագրութեան. թէ ինչպէս կատարուեցան իր մէջ եւ ինչ չափով, եւ, արդար ըլլալու համար, եթէ երբեք ես-կապէս կատարուեցան ընկերային – դա-սակարգային հոգեբեկումն ու հոգեփո-խութիւնը՝ տեղեակ չենք ըստ բաւակա-նի: Կ'ընդունիմ իր սրտին հիմնական բա-րութիւնը, կ'ընդունիմ իր լացը չքաւորին արցունքին առջեւ, կ'ընդունիմ եւ կը յուզուիմ երբ ականջալուր եմ իր «Արու Լալա Մահարի»ի մէջ չրջող բողոքին, ըմբոստացման ազա-ղակներուն, բայց այս բոլորը ժառանգ են բոլոր դէմած եւ զգայուն սրտերուն ու չեն կրնար մենաչնորհը ըլլալ ընկերվարա-կանին կամ համայնավարին:

Ա-ւետիք Իսահակեան ծնած է Ագնք-սանդրապոլ, 18 Հոկտեմբեր 1875ին: Սկզբնական ուսումը առած է ծննդավայ-րին ծխական դպրոցին մէջ, ապա անցած Գէորգեան ճեմարան. 1891ին, աշակեր-տական անկարգութիւններու պատճա-ռաւ, կը հարկադրուի հեռանալ ճեմարա-նէն, կը մեկնի Վիէննա, ուր կը տիրա-նայ դերմաներէնի եւ կը պաշտօնավարէ քաղքին Թանդարանին մէջ, մինչդեռ ա-տեն ազատ ունկնդիր է ոչ միայն դրա-կան, իմաստասիրական ճիւղերուն՝ այլ նաեւ բժշկական համալսարանի դասախօ-սութիւններուն. ապա կ'անցնի Լայպցիկ, ուր եւս, իրրեւ ազատ ունկնդիր՝ կը հե-տեւի տեղւոյն կենդանաբանական դասըն-թացքներուն: Հիւանդանալով, կը վերա-դառնայ հայրենիք. կը մտնէ Դաշնակցու-թեան շարքերուն մէջ. իրրեւ յե-ղափոխական կը ձերբակալուի եւ կը բանտարկուի Ռուսաստան. հուսկ փախչելով՝ պատերազմի ընթացքին կ'ա-պաստանի Ջուիցերիա, Լոզան, ասկէ Վիէննիկ, ուր կը մնայ մինչեւ 1926ի վերջերը. այս շրջանին է որ կը ծանօթա-նայ երիտասարդ Եղիշէ Չարենցին, որուն խանդոտ խօսքն ու հրաւէրը անտարակոյս մեծ դեր խաղացին որպէսզի Իսահակեան վերադառնար հայրենիք:

Չինք անձամբ ճանչնալու բախտաւո-րութիւնը ունեցայ 1925ին, Վենետիկ, Մուրատ – Ռափայէլեան վարժարանին յարկին տակ, ուր, իր այցելութիւնները այնքան յաճախադէպ չէին. սակայն, երբ ոտք կը դնէր այդ սրբազան երդիքին տակ՝ վարժարանն ամբողջ կը լուսաւոր-ուէր, կ'արշալուսնար: Աչակերտներուն առջեւէն կ'անցնէր դանդաղաքայլ, հակա-ռակ իր յիսուն տարիներուն՝ արդէն ղգա-լի կերպով ծռած դէպի հողը, ձեռքերը կռնակին, հազիւ նչմարելի ժպիտ մը չրթներուն:

Առաջնորդուած վարժարանին յաւէտ անմոռանալի տեսուչ Հ. Թադէոս Վ. Թո-մաճանէ, երբեմն կանգ կ'առնէր այս կամ այն աշակերտին առջեւ, անոնց ուղղե-լով, չափազանց ցած եւ թոթով ձայնով մը հինգ վեց բառերէ կազմուած հար-ցում մը: Երբ կը սառնար պատասխանը, քիչ մը ետ կը քաշուէր, խոնաւ եւ խորա-թափանց աչքերը կը յառէր իր առջեւ ոտ-քի կանգնած աչակերտին վրայ ու անայ-լայլ կը կրկնէր միշտ ու միշտ. — «Սի-րէ՛ք հայ լեզուն, սիրէ՛ք հայ գրականու-թիւնը, սիրէ՛ք մեր պատմութիւնը. ա՛հ...»: Այդ «ահ»ը, ինձ կը թուէր պատառիկ մը փրթած անոր սրտէն, յատ-կապէս իր առջեւ այնքան երկիւղածօրէն ոտքի կանգնած մեր տղէկ սրտերուն կապ-մաւորման համար: Ինչքան տպաւորիչ էր այդ անօրինակ մարդը, իր չարժուձեւե-րուն դանդաղ վսեմութեամբ, իր նայ-ուածքներուն հեռուն, հորիզոնները խու-զարկող ինքնամոռաց վերացումներով:

Օր մը, Ազոլոյի մէջ, փափաքեցաւ ճանչնալ Հ. Ղեւոնդ Ալիշանէ Սուլուվիկ անուանակոչուած հովտաբնակ ազգիւրը: Երեկոն արդէն իջնելու վրայ էր երբ բա-նաստեղծն ու ուսումնասէր հայրը առ-ջեւէն, իմ դասարանիս 13 աչակերտները քսան մեթրի հեռաւորութեամբ՝ ուղեւոր-ուեցանք դէպի Սուլուվիկ: Նախապէս պայմանաւորուած աղդանչանի մը վրայ, մենք, աչակերտներս, սկսանք մեղմա-ձայն երգել բանաստեղծին նախասիրած եւ այնքան ժողովրդականացած երգ-քեր-թուածներէն «Որսկան աղբէր»ը: Յստակ նչմարեցինք թէ ինչպէս քերթողը կանգ առաւ յանկարծ, դիտեց իր ոտքերէն մինչեւ երկինք բարձրացող կանաչայոյզ բնութիւնը, ապա, իր սովորական դան-դաղ քայլերով ուղղուեցաւ դէպի մեզ. կանգ առաւ առջեւիս, աղջատուրեց մեղ-մէ ոմանք, ու հատակոտոր բառերով յայտնեց իր չնորհակալութեան խօսքը, որ դժուարեան ղղացումը արտայայտելէ աւելի տխրութեան ղղացման ներկայու-թիւնն էր վերյիչումներու տառապոտ եր-կընքին տակ:

— «Որսկան աղբէ՛ր, սարէն կուգաս,
Սարի մարալ կը փնտռես.
Ասա՛, եարաբ, դուն չտեսա՞ր
Իմ մարալըս, իմ բալէս ...

ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆ

(Մնացեալը յաջորդով)

"ԴԱՏԱԿԱՆ ՅՈՒՇԵՐ ԱՐԵՒԵԼՔԷՆ"

Ասիկա խորագիրն է ճառի մը զոր ար-տասանած է հայազգի Պ. Վահան Փոր-թուգալեան Տուէի Վերաքննիչ Ատեանի բացման հանդէսին եւ որ հրատարակուած է առանձին:

Պ. Փորթուգալեան դատական իր եր-կարատեւ եւ բեղուն ասպարէզի ընթաց-քին, կարեւոր պաշտօններ վարած է Փը-րանսական չատ մը ատեաններու մէջ, ինչպէս Սուրիա, Լիբանան, Քոնկօ, Փը-րանսա: Իր ճառը, զոր աւելի ճիշդ պիտի ըլլար կոչել դասախօսութիւնը՝ իր քննա-կան ոգիի, վերլուծական ու բաղդատա-կան բնոյթին պատճառաւ, կը վերաբերի մի քանի Սուրիոյ եւ Լիբանանի մէջ դո-յութիւն ունեցող եւ, աւելի ուշ, Փրան-սական հոգատարութեան ստեղծած օ-րէնքներուն եւ դատական մարմիններուն:

Ցայտնի է որ այս երկու երկիրները, համաչխարհային Ա. պատերազմէն առաջ, մաս կը կազմէին Օսմանեան կայսրու-թեան. հետեւաբար ունէին Թրքական օրէնսդրութիւն, որ կը ներչնչուէր Գու-րանէն, հիմնուած մահմետական կրօնքի աւանդութեանց վրայ:

Կայսրութեան ոչ – մահմետական ազ-դութիւնները, Հայեր, Յոյներ, Հրեա-ներ, եւայլն, ունէին իրենց յատուկ օ-րէնքները, որոնց հիմը դարձեալ անոնցմէ իւրաքանչիւրին կրօնքն էր:

Անցեալ դարու երկրորդ կիսուն, օս-մանեան օրէնքները կրեցին կարգ մը փո-փոխութիւններ, եւրոպականացան՝ եթէ կարելի է այսպէս կոչել: Պահելով հան-դերձ իրենց հիմնական օրէնսդրութիւնը, Թուրքերը Նափոլէոնեան օրինագրքէն որ-դեգրեցին չատ մը տրամադրութիւններ, որոնք սակայն ի զօրու էին միաժամանակ մահմետականներուն, քրիստոնեաներուն եւ կայսրութեան մէջ բնակութիւն հաս-տատած օտարներուն: Այն ինչ որ կը վե-բաբերէր անհատի կանոնադրին, — ծննդ-եան եւ մահուան վկայագիր, կնունք, ա-մուսնութիւն, ապահարզան, եւայլն, — կը մնար միշտ առանձին ազգութեանց կամ կրօնական համայնքներու իրաւասու-թեան սահմանին մէջ:

Որոշ չափով միայն աչխարհիկ այս կա-նոնները («Նիզամիէ»), ամփոփուած «Մեճելլէ» կոչուած օրինագրքին մէջ, օսմանեան կայսրութեան քայքայումէն ետք, պահուեցան արեւելքի նորակազմ պետութեանց մէջ, որոնք ունեցան իրենց անկախ վճռաբեկ ատեանները:

Ֆրանսական հոգատարութիւնը Սու-րիոյ եւ Լիբանանի մէջ, տեղական դա-տարաններու կողքին, ստեղծեց խառն ատեաններ, կազմուած Ֆրանսացի եւ տեղացի դատաւորներէ, որոնց իրաւա-սութիւնը կը տարածուէր օտարներու մի-ջեւ կամ օտարի մը եւ տեղացիի մը միջեւ ծագած քաղաքային, պատժական, առեւ-տուրական եւ վարչական գործերու մէջ:

Ֆրանսական հոգատարութեան վերջա-նալէն ետք, Սուրիոյ եւ Լիբանանի մէջ, տեղական կառավարութիւնները ստիպո-ւեցան պահել այդ ատեանները, որոնք ներկայիս կը գործեն ինքնուրոյն կեր-պով:

Ատեանի բացման հանդէսին ներկայ էին Ֆրանսական Հոգատարութեան Գե-րագոյն Հիւպատոսը, Տուէի Նախագա-հը, Վերաքննիչ Ատեանի Նախագահը, Ա-ռաջին Ատենակալը, Գլխաւոր Դատա-խազը, Ատենակալներ, Դատախազներ, Դատաստանի Նախագահներ, Փաստա-բաններ, Նոտարներ, Դատական Ոս-տիկաններ, Դատական Պաշտօնեաներ, Ազգային Ընտրեալներ, Հոգեւորա-կաններ, Զինուորական Պաշտօնեաներ եւ Ազգային Ոստիկանութեան Պաշտօ-նեաներ:

Ատեանի Նախագահ Պ. Ժան Ռիշար Պրէտօ ներկայացուց Ատեանի Ատե-նակալները, Դատախազները, Դատաս-տանի Նախագահները, Դատական Ոս-տիկանները եւ Դատական Պաշտօնեա-ները, ապա ողջունեց ներկաները եւ ըսաւ թէ Ատեանի բացումը կը նչանակէ նոր դարաշրջանի մը սկիզբը Սուրիոյ եւ Լիբանանի մէջ:

Ապա խօսք առաւ Պ. Վահան Փորթու-գալեան եւ կարդաց իր ճառը, որ տեւեց աւելի քան մէկ ժամ:

Ճառին մէջ, Պ. Փորթուգալեան ան-դրադարձաւ Ատեանի ստեղծման պատ-մական նախադէպերուն, ինչպէս նաեւ Ատեանի ներկայ կազմակերպութեան եւ իրաւասութեան:

Ատեանի ներկայ կազմակերպութեան մասին ան ըսաւ թէ Ատեանը կը բաղկա-նայ Ատենակալներէ, Դատախազներէ, Դատաստանի Նախագահներէ, Փաստա-բաններէ, Նոտարներէ, Դատական Ոս-տիկաններէ եւ Դատական Պաշտօնեա-ներէ:

Ատենակալները կը նչանակուին Ֆրան-սական Հոգատարութեան Գերագոյն Հիւպատոսին կողմէ, Ատենակալներու Խորհուրդի առաջարկութեամբ, որ կը բաղկանայ Ատեանի Նախագահէն եւ Ատենակալներէն:

Ատենակալները կը նչանակուին ցմահ, եւ կրնան ենթարկուիլ կարգապահական տուգանքի, կասեցման կամ պաշտօնէ հեռացման, Ատենակալներու Խորհուրդի առաջարկութեամբ, որ կը գումարուի Ատեանի Նախագահին նախագահութեամբ:

Դատախազները կը նչանակուին Ֆրան-սական Հոգատարութեան Գերագոյն Հիւպատոսին կողմէ, Դատախազներու Խորհուրդի առաջարկութեամբ, որ կը բաղկանայ Ատեանի Նախագահէն եւ Դատախազներէն:

Դատաստանի Նախագահները կը նչանակուին Ֆրանսական Հոգատարու-թեան Գերագոյն Հիւպատոսին կողմէ, Ատենակալներու Խորհուրդի առաջարկութեամբ, որ կը բաղկանայ Ատեանի Նախագահէն եւ Ատենակալներէն:

Փաստաբանները կը նչանակուին Ատե-նակալներու Խորհուրդի կողմէ, Փաս-տաբաններու Խորհուրդի առաջարկու-թեամբ, որ կը բաղկանայ Ատեանի Նա-խագահէն եւ Փաստաբաններէն:

Նոտարները կը նչանակուին Ֆրան-սական Հոգատարութեան Գերագոյն Հիւպատոսին կողմէ, Նոտարներու Խոր-հուրդի առաջարկութեամբ, որ կը բաղ-կանայ Ատեանի Նախագահէն եւ Նո-տարներէն:

Դատական Ոստիկանները կը նչանակուին Ֆրանսական Հոգատարութեան Գերագոյն Հիւպատոսին կողմէ, Դատական Ոստիկաններու Խորհուրդի առաջարկու-թեամբ, որ կը բաղկանայ Ատեանի Նա-խագահէն եւ Դատական Ոստիկաններէն:

Դատական Պաշտօնեաները կը նչանակուին Ատենակալներու Խորհուրդի կողմէ, Դատական Պաշտօնեաներու Խորհուրդի առաջարկութեամբ, որ կը բաղկանայ Ատեանի Նախագահէն եւ Դատական Պաշտօնեաներէն:

Ատեանի Նախագահը կը նչանակուի Ֆրանսական Հոգատարութեան Գերա-գոյն Հիւպատոսին կողմէ, Ատենակալ-ներու Խորհուրդի առաջարկութեամբ, որ կը բաղկանայ Ատեանի Նախագահէն եւ Ատենակալներէն:

*Ատեանի Նախագահը կը նչանակուի ցմահ, եւ կրնայ ենթարկուիլ կարգա-պահական տուգանքի, կասեցման կամ պաշտօնէ հեռացման, Ատենակալներու Խորհուրդի առաջարկութեամբ, որ կը գումարուի Ատեանի Նախագահին նախագահութեամբ

ԿՈՅՐ

Բ9.

ՄԱՓԱԿԱՆ ՅՈՏՅ

Ելուստիվի մեջ ամուր, տուր մեջ ամուր, ինչպես վիզ, նա ամբողջ ամուր ձայնով կանչեց. — Ես ու ես, ես ու ես, ես ու ես... Ես ես ես

ՖՐԱՆՍԱՅԻ ՆԵՐՔԻՆ ՀՈԳԵՐԸ

Ելմտական նոր օրէնքին համաձայն կարգ մը յաւելումներ պիտի բլլան յառաջիկայ Ցունուար մէկէն սկսեալ :

Այսպէս, գործատէրերը որոնք հինգ առ հարիւրի տուրք մը կը վճարեն աշխատավարձերու վրայ (վերսրմըն փորֆէքէտ սիւր լէ սալէր) ամսական վեց հարիւր ֆրանք յաւելեալ տուրք մը պիտի վճարեն աշխատաւոր դլուխ :

Մեթրոյի եւ հանրակառքերու դիները յիսուն առ հարիւր յաւելում պիտի ունենան, այսինքն ֆռանկէն 200էն 300ի պիտի բարձրանայ, բայց ամփոփոխ պիտի մնան չաբաթական քառթերը : Այս վերջիններէ – րուն առեղծած բացն է զոր պիտի գոցեն գործատէրերը ամսական վեց հարիւր ֆրանք վճարելով աշխատաւոր դլուխ, իրբեւ տուրք :

Ցաւելման ենթարկուած են նաեւ ձայ – նասփիւռի եւ հեռատեսիլի գործիքներու տարեկան տուրքը . — 2000 ֆրանք ձայ – նասփիւռի, իսկ վեց հազար՝ հեռատեսիլի գործիքներուն :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ մէջ պատահած երկրա – չարժին մեռելներուն թիւը մօտեցած է երկու հազարի : Հազարէ աւելի վիրաւոր – ներ կան, իսկ քառասունէն յիսուն հազար հոգի անապաստան մնացած է :

ՖՐԱՆՍԱՑԻ, Անգլիոյ, Իտալիոյ եւ Զուիցերիոյ բազմաթիւ չրջաններու մէջ ակսած է ձիւնել : Սկովտիոյ մէջ ցուրտը նուազ 14 աստիճանի հասած է :

ՔԱՄԵՐՈՒՆԻ մէջ ահաբեկիչներու դն – դակին զոհ զնաց երեսփոխան մը : Հինգ հոգի սպաննուեցաւ եւ վեց հոգի ալ ծան – րօրէն վիրաւորուեցաւ՝ այս մահափոր – ձին հետեւանքով : Ահաբեկիչները կը փնտռուին :

ԼԻԲԱՆԱՆԻ Հանրապետութեան Նախա – գահ Քամիլ Շամուն նամակ մը ղրկած է Նախագահ Ալճընհաուըրի, որ Ատլան – տեան Ուխտի ժողովին մէջ զրաղին նաեւ Պալեստինցի տարագիրներու հարցով :

ՀՌՈՄԻ անգլեւեդիպտական խորհըր – դակցութեանց եդիպտական պատուիրա – կութեան նախագահը զնաց Գահիրէ, Հը – ռոմի աշխատանքներուն արդիւնքը հա – ղորդելու համար եդիպտական նախարարու – թեան : Ժողովին արդիւնքները պաչտո – նապէս չէ հաղորդուած տակաւին :

ՄԱՐՈՒԻ մէջ ողողումներ եղան, փո – թորիկին եւ անձրեւներուն հետեւանքով : Բազմաթիւ չրջաններու բնակչութիւնը տեղափոխուած է :

ՄՈՍԿՈՒԱՑԻ մէջ մէկ չաբաթէ ի վեր Խրուչչեւ չէ տեսնուած հասարակութեան : Կը կարծուի թէ Գերագոյն Խուրհուրդի յառաջիկայ ժողովին պատրաստութիւնը կը տեսնէ :

ՓԵՇՏԱՑԻ ձայնասփիւռին համաձայն, Ալժերիոյ, Մարոքի եւ Թունուզի համայ – նավար կուսակցութեանց զեկավարները զաղտնի ժողով մը կը դումարեն . վայրը յայտնի չէ :

ԿԻՊՐՈՍԻ մէջ անգլիացի զինուորները ստիպուած են կրակ բանալ քաղաքացինե – րու վրայ : Երկու խռովարարներ վիրա – տորուած են :

ԺԸՆԵՒԻ Ֆրանքեւեդիպտական խորհր – դակցութիւնը չորս չաբաթով յետաձգ – ուեցաւ :

ԻՖՆԻի հարցին կարգադրութեան հա – մար, կը կարծուի թէ Ֆրանսա միջամ – տութիւն մը պիտի ընէ Սպանիոյ եւ Ռա – պաթի կառավարութեանց մօտ : Մարոքի դիւանադիտական չրջանակներուն կար – ծիքն ալ այս է :

ՀԱՑԱՍՏԱՆ
ԱՄՍԱԹԵՐԹ
(Օրգան՝ Հ. Յ. Դ. Նոր Սերունդի)
Լոյս տեսած է 11րդ թիւը :
Ճոխ բովանդակութեամբ, պատկե – րազարդ :
Հայերէն եւ ֆրանսերէն :
Զեռքէ՝ հատը 50 ֆրանք :
Տարեկան բաժնեդին՝ 450 ֆրանք :
Պատուիրելու համար դիմել՝
M. K. PAPAZIAN
25, Rue Martial-Boudet, Chaville - S. et O.

Imprimé sur les presses du journal HARATCH
17, Rue Bleue, 17 — PARIS (9e)

ՄՇԱԿՈՑԹԻ ՏԱՆ

Ընկեր Թագուր Այվազեանի յիչատա – կին, Շաւարչ Հարէլեան (Լիոնէն) հազար ֆրանք կը նուիրէ Մշակոյթի Տան :
(Տառնալ «Յառաջ»էն) :

×

Մէօտոնէն Պ. Գազանճեան հազար ֆր. կը նուիրէ Շաւարչ Մխսքեան սրահին :
(Տառնալ «Յառաջ»էն) :

ՏՕՆԱԾԱՌ

Դպրոցասէր Տիկնանց վարժարանի տո – նածառի հանդէսը այս կիրակի կէսօրէ յետոյ ժամը 3ին, վարժարանին մէջ :
Կը հրաւիրուին բոլոր ծնողքները :

ԽՆԴՈՑՔ ՎԱՂԱՆՍԻ ՄԷՋ

Ֆ. Կ. Խաչի մասնաճիւղի խնջոյքը այս կիրակի, կէսօրէ վերջ ժամը 3ին, «Ահա – րոնեան» ակումբին մէջ :
Սրահի ջերմութիւնը ապահովուած է :
Ճոխ պիւֆէ :

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԼՍԱՐԱՆ

Հերթական դասախօսութիւնը այս չո – րեքչաբթի դիչեր, ժամը 21ին, Քատէի սրահը : Կը խօսի՝ Պ. Արտ. Գմբէթեան : Նիւթ՝ «Երկու Յովհաննէսները՝ Յովհ. Սեւումեան եւ Յովհ. Զարիֆեան» :
Կը խնդրուի ճչդապահ ըլլալ :

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՒԱՔԵՐՈՅԹԸ

ՄԱՐՍԷՅԼ

22 Դեկտեմբեր, կիրակի ամբողջ օրը, Պոմոնի Ս. Սահակ եկեղեցւոյ սրահին մէջ :

Հայկական համադամ կերակուրներ, նուագ, երգ, արտասանութիւն եւ ուրախ մթնոլորտ :

Ձաշագին 1000 ֆրանք :

Տեղերը ապահովել Համազգայինի ան – դամներուն մօտ :

Մասնագէտ թայէօր մը այր մարդու դասական ժիլէի համար : Դիմել՝

"ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐ"Ը

Ֆ. Կապ. Խաչի կեդր. վարչութիւնը, փարիզի չրջանի իր տասը մասնաճիւղե – րով կը տօնէ «Մանուկներու Օր»ը, Ցուն – ուար 2ին, ժամը 15 – 19, Սօսիէթէ Սավանիի մեծ սրահին մէջ, 8 Րիւ Տանի – թոն, մեթրօ Սէն Միշէլ կամ Օտէօն :
Մանրամասնութիւնները յայտրդով :

×

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

Կրընոպլի Ֆ. Կապ. Խաչի դպրոցի տո – նածառը տեղի պիտի ունենայ Ցունուար հինգին, Րիւ Ժէյի սրահը :

Հ. Մ. Ը. Մ.Ի ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ ՎԻՆԻ ՄԷՋ

Դեկտեմբեր 28ին, Շաբաթ իրիկուն, Սալ տէ Ֆէթի սրահներուն մէջ :
Մանրամասնութիւնները տեղւոյն վրայ

ԼԻԼԱՑԻՆ, ԼԻԼԱՑԻՆ...

ՁԵՐ ԶԱՐԹՕՆՔԸ՝
ԾՆՈՒՆԴ ԹԷ ԿԱՂԱՆԴ
կրնաք ճոխ սեղանի մը շուրջ, անցընել

ԼԻԼԱՑԻՆ

24, RUE ST-LAZARE PARIS 9e
TÉL. : TRI 31-62

Արեւելեան՝ թէ եւրոպական համադամ կերակուրներ, ընտիր խմիչքներ եւ մանաւանդ գուարթ մթնոլորտ մը հաճելի նուագով

եւ այս բոլորը 2000 ֆր.
— իւրաքանչիւր անձի —

Ապահովեցէք ձեր սեղանները հեռաձայնելով ժամը 9էն 15
TRI 31-62

ՅԱՌԱՋ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Փարիզէն Տէր եւ Տիկին Ազէմեան մէկ տարեկան «Յառաջ» կը նուիրեն Պ. Յակոբ Զաքարեանի (Քլամար) :

ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ

Պ. Յարութիւն Գումրուեանի մահուան առթիւ Այրի Տիկին Նինա Եպդուտեանց հազար ֆրանք կը նուիրէ «Յառաջ»ին, փոխան ծաղկեպսակի :

×

Նիկողոս Նիկողոսեանի մահուան առ – թիւ, Այրի Տիկին Խորէնէլեան եւ Տէր եւ Տիկին Յակոբ Խաչատուրեան իրենց ցա – ւակցութիւնները կը յայտնեն Նիկողոս – եան բանիքին եւ Տէր եւ Տիկին Հայկ Սէրէնկիւլեանի եւ փոխան ծաղկեպսակի երեք հազար ֆր. կը նուիրեն «Յառաջ»ի բարգաւաճման :

ՏՕՆԱԾԱՌ

ՍԱՄՈՒԷԼ – ՄՈՒՐԱՏԵԱՆ
ՎԱՐԺԱՐԱՆ
կիրակի, 22 Դեկտեմբեր

Ժամը 16 – 22 :

Գեղարուեստական ճոխ բաժին, պատ – րաստուած աչակերտներու կողմէ :

Կը ներկայացուի Շիրվանզատէի
ՍԿԶԲՈՒՆՔԻ ՄԱՐԴԸ
կատակերգութիւն մէկ արար
երգ, պար, արտասանութիւններ :

Հայկական համեղաճաշակ չքասեղան :

ԿՐ ՓՆՏՌՈՒԻՆ

Երեւանէն Վարդ. Պատուական Սիրա – կան Գրիգորեաններ, իրենց հօր անունը Ստեփան, ինչպէս նաեւ Դաւիթ Պուռնազ – եան, որոնք Հայաստանէն զինուորա – գրուած են 1941 – 1942ին : Տեղեկացնել Յորէն Մնացականեանի,
544 Cupp. St. San Francisco, California

ՀԻԻԱՆԴԱՊԱՀՈՒՀԻ ԿՈՒԶՈՒԻ

Հայկական ծերանոցներուն համար վը – կայեալ հիւանդապահուհի մը կը փընտ – տուի (պետական վկայականով) : Բնա – կարան եւ սնունդ ապահովուած են : Դիմել Աղքատախնամի գրասենեակը : 32, Բիւ տը Թրէվիզ, Փարիզ (9) :

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ, ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ
ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Կազմակերպուած Ֆ. Կ. Խաչի Փարիզի մասնաճիւղին կողմէ
28 Դեկտեմբեր, Շաբաթ կէս օրէ վերջ ժամը 4էն մինչեւ լոյս

Լիւքէսիայի գեղեցիկ սրահներուն մէջ

Orchestre Lutetia 43, BLD. RASPAIL, MÉTRO SÈVRES-BABYLONE

Գեղարուեստական բաժին, Պ. Կարպիս Ափրիկեանի երգի հուարթերքը
Մենապարեր՝
Օր. Թերեզ Քէօշկերեան՝ *Սուրերու պարը Խաչատուրեանի*, Օր. Անի Թարօն *Երեւանի հարսանիքը* եւ *եւրոպական պար մը :*

ՄԱՆՕԹ.— Տոմսերու վրայ նշանակուած է մինչեւ կէս դիչեր, բայց բոլորին ցանկութեան վրայ կարգադրուած է սրահի տնօրէնութեան հետ մինչեւ առաւտեան ժամը հինգ :

Մուտքը՝ 500 ֆրանք

Ուսանողներու համար՝ 300 ֆրանք, ներկայանալ իրենց ուսանող. քարտերով :

Նպատակն է՝ Կապոյտ Խաչի օգափոխութեան կայանը, ինչպէս նաեւ իր կրթա – կան եւ բարեսիրական գործերը :

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՓԱՐԻԶ.— Կապոյտ Խաչի մէջ – մաս – նաճիւղային ընդհ. ժողովը այս երկու – չաբթի, կէսօրէ վերջ, ժամը 16ին, Րէժո – նի սրճարանը : Կարեւոր օրակարգ :

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ի դիտութիւն չրջանիս հաւատացեալ ժողովուրդին կը յայտարարենք թէ հո – գաբարձութիւնս որոշած է Դեկտեմբեր 22ի կիրակին հոգեհանդստեան պաչտօն կատարել Ս– Եկեղեցւոյս մէջ յաւէտ ող – բացեալ Հայոց մեծ բանաստեղծին՝ հան– դուցեալ ԱՒԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆի յիչա – տակին :

Հոգաբարձութիւն վարագայ
Ս. Խաչ եկեղեցւոյ (Առնուվիլ)

Շաբաթ 21 Դեկտ. երեկոյեան ժամը 9ին իր մասին կը դասախօսէ Պ. ԳՐԻԳՈՐ ԳՈՐԵԱՆ, եկեղեցւոյս սրահին մէջ : Կը խնդրուի յիչատակը յարգողները ներկայ բլլան սոյն դասախօսութեան : Կը նա – խագահէ Հոգ. Հովիւ Ադդէ fhնյ. Փայ – լակեան :

ՇԱՒԻԼԻ ԵԿԵՂԵՑԻՒՆ

Պ. Արթաքի Գալայճեան տասը հազար ֆրանք, Պ. Կարպիս Պօյաճեան հինգ հա – զար, իր զաւկին զինուորութենէ վերա – դարձին առթիւ : Պ. Շ. Վահանեան, Տօքթ. Օտապաչեան, Օր. Խաչատուրեան, Պ. Ապէլ Համբարձումեան, Պ. Նիգոթ – եան, Պ. Բարսեղ Սերճանեան, Պ. Պ. Սարդիս Գոչեան, Տամլամեան, Անտոէ Պըլըքլեան, Տիգրան Գալայճեան հինգ հազարական, Յ. Յակոբեան, Գասապ – եան, Նիկողոսեան երեք հազարական, Գոտակեան, Լեւոն Խուպէսէրեան, Ա. Փափազեան, Մոսկոֆեան, Տ. Ալթուն – եան, Նուպար Գլըճեան երկու հազարա – կան, Փափազեան 1500, Տէվրիչեան, Տէ – միրճեան, Գրեճճեան, Նիգոսարլեան, Պ. Զապուճեան, Էպերիւշեանեան, Ժօրժ Ֆօրօպէտեան, Ալէքսանար Երանեան, Զանկեան հազարական, Ասատրճեան, Փայլակ Եղկիկլեան, Ալեքսանեան, Բանիկեան Պիւլպիւլեան հինգ հարիւրա – կան ֆրանք :

Շաւիլի հոգաբարձութիւնը մասնաւոր չնորհակալութիւն կը յայտնէ Ալֆորվիլի հայ հասարակութեան Տէր Եսայի քհնյ.ի միջոցաւ բրած նուիրատուութեան հա – մար, որուն ցանկը պիտի տանք յաջոր – դով :

ԾՆՈՒՆԴ ԵՒ ԿԱՂԱՆԴ Ձեր սեղանները զարդարեցէ՛ք
ԱՄԷՆ ՏԵՂ ՓՆՏՈՒԵՑԷՔ **ՊՈՄՓՕՐ**
ՀՐՁԱԿԱՒՈՐ ՀԷԼՎԱՆ ԵՒ ԼՈՒՔՈՒՄԸ
ԲԺԻՇԿՆԵՐՈՒ ԿԱՐԾԻՔՈՎ ԱՆՈՆՔ ԿԸ ՊԱՐՈՒՆԱԿԵՆ ՄԵԾԱԳՈՅՆ ՁԱՓՈՎ
ԳՈԼ (ֆլորի)
Անհրաժեշտ մանուկներու համար եւ օգտակար չափահասներուն ու ծերերուն
— որոնց կը պարգեւէ աշխոյժ եւ եռանդ —
ՊՈՍՓՈՐԻ ԱՐԴԻԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԳՏՐԱՁԱՆՁԷ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ ԻՍԿ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾՆԵՐԸ
2, Rue Louis Astoin - Marseille
Արտածման համար մասնաւոր պայմաններ

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 — Téléph. : PRO. 86 - 60
R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա եւ գաղութներ, տարեկան 3000 ֆր. վեցամս. 1600
Արտասահման՝ տարեկան 3500 ֆրանք: Հատը 12 ֆր.

ՋՈՐԵՔՇԱԲԹԻ
18
ԴԵԿՏԵՄԲԵՐ
MERCREDI
18 DECEMBRE
1957

33ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8071 — 33e ANNEE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 13ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3872

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՇԱՒԻԼԻ ԵԿԵՂԵՑԻՆ

«Երբ հայ գաղթականութիւն մը հաստատուի օտար երկրի մը մէջ, առաջին գործը կ'ըլլայ հիմնել եկեղեցի մը, դպրոց մը եւ լրագիր մը»:

Այս տողերը գրած է՝ հարիւր տարի առաջ՝ Խոտւար Տիւլօրիէ, Փարիզի Արեւելեան կենդանի լեզուներու վարժարանին հայերէնի դասախօսը, որ ա՛յնքան Թան – կարժէք ուսումնասիրութիւններ կատարած է Հայոց պատմութեան մասին եւ ի մէջ այլոց Հաւաճումն Խաչակրութեանց Պատմիչներու հոյակապ շարքին մէջ 1869ին հրատարակած է Հայկական վաւերագրերու առաջին հատորը, հայերէն եւ ֆրանսերէն:

Բազմերախտ հայկաբանին խօսքը ինչպէս գար մը առաջ, այսօր ալ ճշմարտութիւն է:

Եկեղեցի, դպրոց եւ լրագիր: Ազգապահպանման երեք զլխաւոր աղղակներ, որոնք ա՛յնքան մեծ գեր խաղացած են անցեալին մէջ ու կը շարունակեն խաղալ ներկային:

Մանաւանդ եկեղեցին ու դպրոցը փըրկած են մեր ժողովուրդը՝ իր պատմու – թեան ամէնէն փոթորկալից օրերուն: Նախախնամական եղած է անոնց դերը:

Հայաստանեայց եկեղեցին տարբեր է ուրիշ ազգերու եկեղեցիէն: Անիկա մեր ժողովուրդին համար լոկ աղօթավայր մը չէ, կոչուած՝ դոհացում տալու անոր Հոգեւոր, կրօնական պահանջներուն:

Մեր եկեղեցին այն բարոյական հիմ – նարկութիւնն է, որ իր չուրջ համախմբած է ազգին զաւակները ու փրկած զանոնք ձուլումէ եւ օտարացումէ:

Մեր դարաւոր պատմութեան այն մի – ջանկեալ երկարատեւ շրջաններուն, երբ կորնցուցած ենք մեր քաղաքական ան – կախութիւնը, եկեղեցիին ապաւինած ենք միշտ: Դպրոցին ուժ ենք տուած:

Այսօր ալ անկախութենէ զրկուած հայութիւնը արտասահմանի մէջ փարած է եկեղեցիին ու դպրոցին: Իսկ լրագիրը միութեան կապ մըն է չորս հովերուն տարաղնուած հայութեան մէջեւ:

Կիրակի օր վայելուչ հանդիսութեամբ տեղի ունեցաւ փարիզեան արուարձան Շավիլի նորակառոյց եկեղեցիին բացու – մը:

Քառորդ դար առաջ, Շավիլի շրջանի նորեկ հայ գաղթականները — որոնք այսօր «հին սերունդ» դարձած են — հիմը դրած էին տախտակաշէն համեստ մատուռի մը: Իրենց նիւթական պայմանները չէին ներեր աւելին ընելու:

Այս «վաստակաւոր» մատուռը, իսկա – պէս վաստակեալ եւ խորտակեալ, ժամա – նակավրէպ դարձած էր այլեւս: Ուստի մը զիտակից երիտասարդներ ու երիտա – սարդուհիներ, որոնք այդ մատուռին մէջ մկրտուած էին եւ անոր չոր սեղաններուն վրայ սորված մայրենի լեզուն, արժանապատուութեան զգացումէ տարուած՝ տապրի մը առաջ վճռած էին ներկայանալի եւ պատուաբեր եկեղեցի մը կանգնել անոր հողին վրայ:

Ու խօսքէն գործի անցնելով, մեր սոր սերունդը, աշակցութեամբ եւ քաջալե – րութեամբ ամէն դասակարգի պատկանող ազդասէր հայրենակիցներու, կարճ ժա – մանակի մէջ զլուխ հանեց ձեռնարկը եւ տօնական օրերէն առաջ կատարեց օծումն ու պաշտօնական բացումը:

Պատարագէն վերջ, Վէրսայլի ճաշասրահին մէջ խօսուած ճառերը չեչտեցին մեր երիտասարդներուն ցոյց տուած հայրենասիրական եռանդն ու զոհաբերու – թեան ոգին, որոնց չնորհիւ անոնք յաջողած էին լրացնել իրենց հայրերուն սկը – սած գործը, իրրեւ անոնց արժանաւոր ժառանգորդները:

Ու սրտաբուխ նուէրները իրար յաջորդեցին՝ հնարաւորութիւն տալու համար երիտասարդաց եկեղեցաշէնն Ցանձնա – խումբին, որ փակէ առկախ հաշիւները:

Ցիշատակութեան արժանի է ծանօթ ազգային բարերար Պ. Արմենակ Համբարձումեան, որ նուիրատուութեանց ընդհանուր գումարը կրկնապատկեց՝ քա – ջալերելու համար Շաւիլի մեր հայրենասէր երիտասարդները:

Եկեղեցիի աշակոդմեան սրահը պիտի ծառայէ իրրեւ դպրոց՝ մայրենի լեզուն եւ ազգային պատմութիւնը սորվեցնելու համար մեր նորատոհմ սերունդին:

Ապրի՛ք տղաք: Դուք բացիք ճամբայ մը, որուն պիտի հետեւին անկասկած ձեր տարեկիցները ուրիշ շրջաններու մէջ:

ՀՐԱՆՑ – ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԱՏԼԱՆՏԵԱՆ ՈՒԽՏԻՆ Ա. ՆԻՍՏԸ

Ինչպէս գրած էինք, Ատլանտեան Ուխտի անդամ 15 երկիրներու ներկայացու – ցիչներուն պաշտօնական առաջին նիստը գումարուեցաւ Բ. օր, կէսօրէ ետք՝ բացման հանդիսաւոր ժողովէն վերջ: Զանազան պատուիրակներու արտասանած ճառերէն այնպէս կ'երեւի, թէ Արեւ – մուտքը կարեւորութիւն կ'ընծայէ մաուր – չալ Բուլկանինի նամակներուն եւ առա – ջարկներուն: Ատլանտեան երկիրներու ղեկավարները յարմար կը սեպեն որ ու – սումնասիրութեան մը ենթարկուին ա – նոնք: Մինչեւ իսկ կ'առաջարկեն որ քըն – նուի Լեհաստանի կարծիքը — կեդրոնա – կան Եւրոպայի զինաթափութիւն՝ հիւ – լէական մարզի մէջ, մասնակցութեամբ երկու Գերմանիաներու, Լեհաստանի եւ Զեխոսլովաքիոյ:

Մինչ այդ, Դանիա եւ Նորվեկիա պաշ – տօնապէս յայտարարեցին, թէ իրենց կա – ռավարութիւնները պիտի ընդդիմանան հիւլէական զէնքերու պահեստին եւ հըր – թիռներու արձակարաններու կառուցման:

Ինչպէս ծանօթ էր արդէն, առաջին անդամ խօնք առաւ Ամերիկայի Արտաքին Նախարար Տըլլըս յայտարարեց, թէ Միացեալ Նահանգներ պատրաստ են մասնակցելու հիւ – լէական զինարաններու կառուցման: Միացեալ Նահանգները Ատլանտեան Ուխտի երկիրներուն պիտի տան նաեւ հեռա – ւար հրթիռներ:

Անգլիոյ վարչապետ Մաքմիլըն համա – կարծիք գտնուեցաւ Միացեալ Նահանգ – ներուն եւ յայտնեց թէ Արեւմտեանները պէտք է վերանորոգեն իրենց ուժը՝ ար – դիական զէնքերով: Թէեւ այս Ուխտին նպատակը խաղաղութիւնը պէտք է ըլ – լայ, ըսաւ Մաքմիլըն, բայց պէտք է հարկ եղած միջոցները ձեռք առնել անոր համար: Ցիշեց նաեւ՝ որ անարդարու – թիւն էր Գերմանիան բաժնուած պահել:

Քանատայի վարչապետ Բուլգանինի նամակին մասին խօսելով, ըսաւ թէ պէտք չէր մերժել խորհրդային ղեկավարներու հետ հանդիպում մը ունենալու առաջար – կը, թէեւ կասկածելի էր Ռուսերուն ան – կեղծութիւնը:

Ատլանտեան Ուխտի նախագահը՝ ըս – փաք, խնդք առնելով չեչտեց Ուխտին քաղաքական, տնտեսական եւ ընկերային հարցերուն վրայ: Այնուհետեւ, Սփաք յայտնեց, թէ էական էր արդիական զէն – քեր ունենալ՝ Ատլանտեան Ուխտի զօրա – բաժիններուն համար:

Միւս կողմէ, Սփաք մերժեց հաւատալ Ատլանտեան Ուխտին մէջ ծագած տագ – նապի մը.— Ջեմ հաւատար այդ տպաւո – պին, ըսաւ ան, որովհետեւ Ուխտին վա – րած քաղաքականութենէն դուրս դրական ոչինչ կայ: Նոյնիսկ եթէ անհամաձայ – նութիւններ ծագին Ուխտին անդամնե – րուն միջեւ, պէտք է գիտնալ այն իրա – ւունքները, որ անոնք հաւասար իրա – ւունքներ ունին:

Սփաք յատկապէս ըսաւ, թէ մարդկու – թիւնը իր աչքերը յառած է Ատլանտեան Ուխտին վրայ.— Բարեկամներ, եւ ա – նոնք՝ որ մեզի քիչ մը աւելի նուազ կը սիրեն, մեզմէ կը սպասեն ամէն բան:

Պատասխանելով այն հարցին՝ թէ ժո – ղովուրդները ի՞նչ կը սպասեն այս ժողո – վէն, Սփաք ըսաւ.— Պիտի ուզէի, որ ոչ ոքի սպառնալով, փորձելով հասկնալ բո – լոր տեսակէտները, ընդունելով բոլոր ա – ռաջարկները՝ որ տրամաբանական կը նը – կատուին եւ կուզան մեր հակառակորդ – ներէն, ինքնավստահ ժողովի մը տպաւո – րութիւնը ձգենք, ժողով մը՝ որուն նը – պատակները պարկեշտ են եւ որոշած է ոչ միայն պաշտպանել ու ազատել ժողո – վուրդներն ու անոնց երկիրները, այլ՝ նոր կեանք մը ստեղծել, բարոյական եւ քաղաքական սկզբունքներով:

Սփաք ընդունեցաւ որ կան քանի մը հարցեր՝ դաշնակիցներու լուրջ ուսում – նասիրութեան առարկայ: Հաստատեց, թէ անկարելի չէր ժամանակաւոր լու – ծում մը գտնել անոնց համար, կամ որո – շել մօտակայ թուական մը՝ քննելու հա – մար այդ բոլորը: Սփաք իր խօսքը վեր – ջացուց, ըսելով թէ վերջին շրջանի ամէ – նէն կարեւոր հարցը այն է, թէ Ա. Միու – թիւնը մերժեց արեւմտեան առաջարկը, ի մասին ընդհանուր զինաթափութեան:

Իտալիոյ Վարչապետ Մոլի յայտարա – րեց, թէ էական էր ընդհանուր զինաթա – փութիւն մը, մինչ այդ սակայն, հարկ էր ունենալ արդիական զէնքեր՝ ինքնա – պաշտպանութեան համար, միաժամանակ առաջարկելով զինաթափութիւն ու հա –

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

Մոսկուա նոր կոչ մը ըրաւ Արեւմուտքին՝ խաղաղութեան համար «Մեծերու» հանդիպում մը առաջարկելով: Կոչը եղած է Գերագոյն Խորհուրդի ժողովին առիթով, որ կը բացուի այս հինգշաբթի:

Սոհրիոճ Տեղեկատուութեան նախա – րար Սալիհ Ալիք արաբական երկիրներու մէջ ամերիկեան զինուորական խարիսխ – ներ հաստատելու հարցին չուրջ հարցա – պնդուելով, յայտարարեց թէ Արաբները պէտք չունին Արեւելք – Արեւմուտք պայքարին խառնուելու:

Պորիւքսելի կայսրանին մօտ երկա – թուղի արկած մը պատահեցաւ, որուն հետեւանքով երեք հոգի մեռաւ . քառա – սունի մօտ վիրաւորներ կան, որոնց մեծ մասը՝ ծանր:

Պարմկամատնի չահն ու կայսրուհին Բ. օր հասան Պէյրութ, պաշտօնական այցելութեան մը համար: Կը կարծուի թէ չահը խորհրդակցութիւններ պիտի ունե – նայ լիբանանցի ղեկավարներու հետ՝ պաղեստինեան հարցին չուրջ:

Ռոշինկրընի «Բանակին թերթը» կը խնդրէ Խորհրդարանէն, որ Նախագահ Այզընհաուըր զարձեալ մաս կազմէ բա – նակին:

Եոհկոսլաւիոճ մէջ ամերիկեան «Նիւզվիք» թերթի թղթակիցին կարճ ժամանակ մը տրուեցաւ՝ սահմանէն դուրս ելլելու համար. ամերիկացի լրա – գրողը կը մեղադրուի, որ Միլովան Ճի – լասի «Նոր Դասակարգը» գրքէն տպագր – ուած հատուածներ ցրուած է ժողովուր – դին մէջ:

Եգիպտոսի Նախագահ Նասր յայտա – րարեց, թէ մերժած է ընդունիլ կրթ. նախարարին հրաժարականը:

Անգլիոճ նախկին վարչապետ Անթընի իրըն հիւանդ է եւ յանձնուած՝ բժիշկնե – րու խնամքին:

Իրաքի նոր կառավարութիւնը կազմեց Խորհրդարանի նախագահ՝ Մուրժան: Ար – տաքին նախարար է Պաշայեան: Նոր դահլիճը կը հետեւի Նուրի Սայիտի քա – ղաքականութեան:

Ա. Միութիւն պատերազմական հինգ նաւեր յանձնեց Լեհաստանի:

.....

մագործակցութիւն:

Նախագահ Այզընհաուըր պաշտօնապէս յայտարարեց, թէ Միացեալ Նահանգնե – րը, հարկ եղած ուժով անմիջապէս օգ – նութեան պիտի դան Ատլանտեան բոլոր ազգերուն՝ երբ զինեալ յարձակում մը կրեն անոնք: Այզընհաուըր յետամնաց երկիրներու մասին ալ խօսելով, ըսաւ թէ ամերիկեան Խորհրդարանէն պիտի խնդ – րէ, որ 325 միլիոն տոլարով բարձրանայ այդ երկիրներուն ըլլալիք օժանդակու – թեան գումարը:

Միւս կողմէ, Ամերիկայի Արտաքին Նախարար Տըլլըս յայտարարեց, թէ ի – րենք պատրաստ են մասնակցելու հիւ – լէական զինարաններու կառուցման: Միացեալ Նահանգները Ատլանտեան Ուխ – տի երկիրներուն պիտի տան նաեւ հեռա – ւար հրթիռներ:

Անգլիոյ վարչապետ Մաքմիլըն համա – կարծիք գտնուեցաւ Միացեալ Նահանգ – ներուն եւ յայտնեց թէ Արեւմտեանները պէտք է վերանորոգեն իրենց ուժը՝ ար – դիական զէնքերով: Թէեւ այս Ուխտին նպատակը խաղաղութիւնը պէտք է ըլ – լայ, ըսաւ Մաքմիլըն, բայց պէտք է հարկ եղած միջոցները ձեռք առնել անոր համար: Ցիշեց նաեւ՝ որ անարդարու – թիւն էր Գերմանիան բաժնուած պահել:

Քանատայի Վարչապետ Բուլգանինի նամակին մասին խօսելով, ըսաւ թէ պէտք չէր մերժել խորհրդային ղեկավարներու հետ հանդիպում մը ունենալու առաջար – կը, թէեւ կասկածելի էր Ռուսերուն ան – կեղծութիւնը:

ԱԻԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆԻ

ԿԵԱՆՔԸ ՈՒ ԳՈՐԾԸ

(Ր. եւ վերջին մաս)

Իր գործը կը բաղկանայ բանաստեղծու – թիւններէ, պոէմներէ, առասպելներէ եւ պալլատներէ, առակներէ, պատմուածք– ներէ, արձակ պոէմներէ, եւ կը – բոլոցներէ, հէքեաթներէ, արձակ ա– ռակներէ, յուշագրութիւններէ, ինչպէս վէպ մը, խորագրեալ՝ Ուսդա Կարօ :

Կատարած է թարգմնութիւնները, ա– ռաւելապէս ռուս եւ արեւելեան դրակա – նութեան պատկանող մշակներէ :

Այս դրականութիւնը, որ իր ծաւալով այնքան ծաւալուն չէ, բայց բարձր է իբ– րեւ որակ՝ ամփոփուած է հետեւեալ խո– րագիրներուն տակ .—

Երգեր ու վէրճեր, Հայրենի Աղբիւրից, Արու Լալա Մահարի, Հին ու Նոր երգ ու վէրճերից, Արձակ էջեր, Ուսդա Կարօ :

Կարելի եղածին չափ ամփոփ, վերլու– ծական եւ համադրական խոզովակով՝ պիտի ջանամ տալ բանաստեղծին դրակա– նութեան նկարագիրը, զայն հիմնաւորե– լով ընդհանուր յայտարարի մը վրայ :

Ըստ իմ հայեցողութեան, Աւետիք Ի – սահակեան ամէն բանէ առաջ եւ ամէն բանէ վեր բանաստեղծ է, եւ մեծ բանաս– տեղծ մը : Իր գուսանական խառնուածքին ենթակայ տաղաչափական եւ լեզուական անհարազատութիւնները կը կորսնցնեն ի– րենց յարաբերական կշիռը երբ բանաս – տեղծութեան մէջ կը փնտռենք ճշմարիտ բանաստեղծութիւնը, այսինքն բառին, մտածման, զգացման եւ արտայայտու – թեան խաղը՝ ներշնչման պրիսմակին մէջ : Հոս, Աւետիք Իսահակեան կը կանգ– նի միեւնոյն լուսաչուիղին վրայ ուր կը դնուի իր մեծ բարեկամներէն Ցովհան– նէս Թումանեանը : Հոս, Իսահակեան ան– խոցելի է : Կ'երգէ սէրը, բնութիւնը, մարդկութիւնը, ազատութիւնն ու հայրե– նիքը, ու բոլորին մէջ կը տիրապետէ լըզ– գայման թափը քան թէ գաղափարին ուժգնութիւնը : Եթէ չունի իմաստասի – բական ինքնեկ տեսութիւն մը, սակայն ունի միտք մը որ կը խորհրդածէ, որ դի– տէ տեսնել անտեսանելին, զայն առաջ – նորդելով իրականութեան ճամբուն վրայ, միակ ուղեկից ունենալով բանաստեղծու– թեան գունագեղ մուսաները : Քիչ մը մարգարէ է, տեսանող :

Բանաստեղծութեան մէջ ըլլայ թէ ար – ձակին, Աւետիք Իսահակեան պատկեր – ներով, պոէներով, զիրար փնտռող հնչա– կանութիւններով եւ հրաւէրներով հա – րուստ անձնաւորութիւն մըն է : Իր զգայ– նականութիւնը ճոխ է նկարչական տպա – ւորութիւններով, բանաստեղծական եւ ե– րաժշտական միախառնումներով եզան – զաւորուած : Այս ընդհանուր յայտարարը իր բանաստեղծական երկունքին եւ ար – ձակ գրականութեան հիմքը կը կազմէ, ու չենք գիտեր որ մէկը գերազանցել ա – նոնցմէ : Այս յատկութիւնները կը տես – նան աւելի ցայտուն հանդամանք իր Արու Լալա Մահարիին մէջ : Քաջատեղեակ գերմաներէնի, աղբեցութեան տակ Ֆըլ – տրլին Նիցչէի, այս երկար մտածուած եւ երկար աշխատուած գործին մէջ Աւետիք Իսահակեան սկսաւ գրգռել համամարդ – կային եւ դասակարգային հարցեր. գե – րագրուած միտքն ու սիրտը դուռ տը– ւին խորհրդածութիւններու, որոնք իրենց կարգին յանդեցան արտակարգ յոռետե – սութեան. գրեթէ անըմբռնելի ուժգնու – թեամբ բանաստեղծը յարձակեցաւ կին էակին վրայ, մոռնալով որ ինչ որ անոր տկարութիւնն էր՝ էր նաեւ իր տկարու. – թիւնը, մարդ արարածին տկարութիւնը, բոլորիս տկարութիւնը. սակայն, ինչ որ ըսաւ՝ ըսաւ համոզումով, կիրքով, ան – միջականութեամբ եւ ներհայեցողական խորքով, որ իր գործը կը զարձնեն հե – տաքրքրութիւններով լեցուն, գրաւիչ եւ տպաւորիչ : Այն ատեն, երեսուն տարե – կանը հաղիւ անցուցած ըլլալու էր, երե– սունչորսի վրայ, եւ անտարակոյս, այս հանդամանքով պէտք է բացատրել կրքին եւ մոլուցքին ապերասան թափը՝ խոհա – կանութեան կշռին տուժումով : Այս գոր– ծին մէջ քնարերգակ բանաստեղծը յաղո– ղութեամբ կը միախառնուի դիւցազնա – չունչ վայելատակումներու, կորովի եւ լայն :

Այս գործը, որ Իսահակեանի գլուխ գործոցը կարելի է նկատել՝ իրրեւ գե – րակատար ունի Արու Լալա Մահարի ա – բար բանաստեղծը, որ ձանձրացած եւ զզուած մեծ քաղաքներու կեանքէն, ըն– կերներու ստորնութենէն, կին էակին

ՕՐՈՒԱՆ ՇԱՐԹՈՒՄԻՆ ՀԵՏ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱՐԴԻ ԲԱՆԱԿԸ

—o—

ՀԱՄԲ.— Վերջերս Արեւմտեան Գերմա– նիոյ կառավարութիւնը խումբ մը ֆրան– սացի լրագրողներ հրաւիրեց, որ այցե – լութիւն մը տան գերմանական արդի բա– նակին : «*Լը Մոնտ*»ի աշխատակիցը, ժան Փլանշէ հրատարակած է իր տպաւորու – թիւնները : Ստորեւ՝ գլխաւոր մասերը :

Արեւմտեան Գերմանիոյ Զօրհրդարանին մէջ՝ ուր տեղի կ'ունենայ Պառերազմա – կան նախարարութեան յանձնախումբին մէկ վիճաբանութիւնը «պառերազմական նախարարութեան պատգամաւորը Զօրհր– դարանին մէջ դառաւո՞ր մը պէտք է ըլ – լայ, թէ մարդկային զոհացումներով ան – հատ մը» նիւթին չուրջ : Թեր ու դէմ կար– ծիքներու փոխանակութենէն ետք, դին – ուորականներէ կազմուած այս յանձնա – խումբը կ'իւրացնէ սպայի մը տեսակէտը. — կարելի չէ՞ դառաւոր մը դանել մարդկային զոհացումներով ... :

Մինչ, ուրիշ սրահի մը մէջ կը քննուէր վերէն եկած հրահանգը զինուորականնե – րու անձնական ըմբռնումով գործադրելու հարցը : Այս սկզբունքը նոր չէ գերմանա– կան բանակին մէջ : 1936ին ընդունուած օ – րէնքի մը համաձայն, պառերազմի դաշ– նակիցքէն եւ ոչնչութենէն՝ գլուխ ա– ռած կ'երթայ անապատին մէջէն, ապրե – լու համար առանձնութեան մէջ, արե – ւուն ոսկեզօծ պատմուճանը նետած իր կքող ուսերուն : Զորաքանդակել նկա – յպրութիւններու կողքին, որունք կար – ծէք կը շարժին ու կ'ուռին ներշնչման եւ յուզականութեան հոզմերուն մէջ, կայ նաեւ անբուժելի միօրինակութիւն մը՝ յոռետեսութեան դիմակին տակ. սակայն, այս գործին մէջ զեղեցիկը իսկապէս գե– ղեցիկ է, լի չունչով եւ թռիչքով :

Ինչպէս Իսահակեանի մնացեալ ստեղ – ծագործութեան, այսպէս ալ այս գործին մէջ Նոր Վիպային գպրոցին հետքերը ներկայ են, սակայն բանաստեղծը կը ձերբազատուի ամէն կաշկանդումէ եւ հա– կակշռէ, որովհետեւ զօրաւոր է ոչ միայն իրրեւ քերթող՝ այլ նաեւ իրրեւ մարդ ա– րարած, մարքի անշեղ անձնականութեամբ տոպրուն : Իր գրականութեան մէջ, ա – րեւմտեան արուեստին լոյսը վերածուած է արեւելեան ծիածանին, բաբախուն եւ թաւչային :

Իր գործը տեւական պիտի մնայ :

Ջերբազատուած երկրաւորէն, հիմա հայ երկնակամարին բնակիչներէն մին է, ուր անտարակոյս վերապատած է իր երի – տասարդութեան եւ հասուն տարքին ըն – կերներէն Ահարոնեանը, Թումանեանը, Զօպանեանը, Աղայեանը, Պռոշեանցը, Աղբալեանը, Նաւասարդեանը, Շաւարշ Միսաքեան ու Եղիշէ Չարենցը. բոլորն ալ մարդիկ՝ որոնք հայրենի հոզին վրայ եւ հայրենի հոզէն գուրս ապրեցան, մա– քառեցան եւ մեռան մէկ գաղափարի հա – մար, հայրենեաց բարօրութեան սուրբ գաղափարին համար, ու ճիշդ ասոր հա – մար արժանի ոչ միայն մեր սիրոյն եւ ե– րախտագիտութեան՝ այլ անթառամ յի – շողութեան :

ԱՐԱՄ ԱՃԵՄԻ ՍՐԱՊԵԱՆ

Ե. ՉԱՐԵՆՑԻ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ

(ՅՆՆԴԵԱՆ ԳՕԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ.)

Կոմիտասի թաղումն էր : Դագաղը ղըր– ուած էր Կուլտուրայի տան դահլիճում : Ահագին բազմութիւն էր հաւաքուել հրա– ժեշտ տալու : Ներս եկողը չէր հեռանում : Լաւ յիշում եմ, այնտեղ էին Կոմիտասի ընկերները, հայ գեղարուեստական ին – տելիկենցիայի ներկայացուցիչները, ո – րոնք Կոմիտասի հետ բարեկամութիւն էին արել, հետը գործել, կանգնած էր Մա – նուկ Աբեղեանը, ինչպէս մի խոժոռ ժայ– ռաբեկոր, դէմքը խիստ էր, ոնց որ միշտ, եւ դժուար էր հասկանալ, թէ այդ պահին ինչ էր մտքինը : Այստեղ էր Փանոս Թէր– լէմէզեանը, որը, հակառակ Աբեղեանին, չէր կարողանում լուռ ու անխօս մնալ, եւ այդ օրը նրա ձեռքն աւելի էր դողում : Շատերը կային :

Ցանկարծ դրան մօտ եղած հասարակու– թիւնը ճեղքուեց՝ մէկին ճանապարհ տա– լու համար : Չարենցն էր : Ծխուր էր, մօ– բուսած, դէմքը դունատ : Բարձրացաւ պատուանդանին, զլուխը կախ կանգնեց, արտում հայեացքը դադարի ապակեայ դիմաշրջանակին, որի տակից երեւում էր Կոմիտասը :

Շատերը դիտէին, որ Չարենցը փակ – ուել է տանը եւ դուրս չի դալիս : Չա – րենցը մի պահ քարացած կանգնեց, ա – պա կռացաւ համբուրեց ապակին եւ լուռ քայլեց դէպի դուրս : Անմիջապէս ճանա – պարհ տուին : Գնում էր գլուխը կախ, ձեռքերի մէջ ճմրթկելով գլխարկը :

Երեկոյեան մօտ էր : Հեռաքրքրուեց յուզարկաւորութեան մանրամասնութիւն– ներով : Ասացի որ Հայկանուշ Դանիէլեա– նը երգեց, պատմեցի, թէ ինչպէս, վեր – ջում, Կոմիտասի հոզեթումբը չրջապա – տելով՝ կոնեբվատորիայի երգչախումբը երգեց «Անձրեւն եկաւ չաղալէն», իսկ այդ պահին մայր մտնող արեւն իր վեր– ջին չողերն էր արձակել, եւ միաժամա – նակ անձրեւ էր դալիս : Այնպիսի տպա – ւորութիւն էր, կարծես երկինքը լալիս էր, արցունք թափում :

Չարենցը յուզուեց :

Փորձեց ինքն իրեն տիրապետել, չկա – րողացաւ : Տեղից վեր կացաւ : Անցաւ սեղանակի միւս ծայրը եւ մէջք առած՝ բաւական երկար մնաց դրապահարանի ա– ռաջ, իրր ինչ որ գիրք է նայում, բայց ... լալիս էր :

Քիչ յետոյ մօտեցաւ դրասեղանին, վերցրեց մի թերթիկ, ուղեց կարդալ, բայց հաղիւ չչնչաց միայն վերնագիրը, յիշում եմ՝ «վերադարձի երգ», եւ այլ – եւս չկարողանակեց : Ես ոչ մի ձայն չհանե– ցի : Եւ կարիք կա՞ր արդեօք, որ մի բան ասէի :

Մի փոքր յետոյ խօսեց .

— Կ'անցնին տարիներ, շատ տարիներ ես չեմ լինի, գուցէ դու էլ չլինես : Կո – միտասի երգը դուրս կը գայ մեր երկ – րից, կը լսեն ու կը զարմանան : Կոմիտա– սը Հայ է, բայց աշխարհինն է, բոլորի – նը, մարդկութեանը : Ու այն ժամանակ Հայը, աւելի բախտաւոր, քան մենք, կը տեսնի Կոմիտասին անմահացած — Մո – ցարտի եւ Շուպերթի կողքին :

Քիչ անց ասաց .

— Լա՛ր ինձ ու հաւատա : Կը գայ ժա– մանակ, երբ Կոմիտասին հոզի տակից կը հանեն : Դամբան կը կառուցեն նրա հա – մար : Թող պահի այնտեղ եւ բոլորը դան ի տես : Նա արժանի է դրան, բոլորից աւելի, գուցէ միայն նա : Սա այլեւս ա – ճիւն չէ, այլ սրբազան մասունք, , ու – բեմն եւ մեզք է նրան հոզի տակ պահել :

Վկայութիւն մըն ալ բերեմ նոյն Ռու – բէն Չարեանէն եւ վերջացնեմ այս մասը : Ծռուիչ է այս լուրը, եւ կապ ունի Չա – րենցի անտիպ գործերուն հետ :

Չարենցը այդ օրերուն կ'երթայ Թիֆ – լիզ եւ իր կատարեալ վստահութիւնը վա– յելող՝ Արշաւիր Մելիքեանին կը յանձնէ քերթուածներու ծրար մը, ձեռագիր : Եւ կը խնդրէ անոր կարծիքը : Մելիքեանը կը խոստանայ նոյն գիշերն իսկ կարդալ եւ յաջորդ օրը իրեն վերադարձնել զանոնք : Որոշեալ ժամուն կը ներկայանայ Չա – րենցը : Իր բարեկամը կը հաղորդէ իրեն թէ չատ զեղեցիկ կը գտնէ այդ քեր – թուածները, բայց եւ վտանգաւոր : Կը թելադրէ, ոչ միայն մարդու չկարդալ, չհրատարակել, այլ նոյնիսկ ոչնչացնել :

Չարենցը կ'առնէ իր ձեռագիրները եւ Մելիքեանին աչքերուն առջեւ կը նետէ կրակը :

Նոյն Մելիքեանը սակայն զգուշութիւնն էր առած բարեկամի մը աջակցութեամբ ընդօրինակել տալու ամբողջ ձեռագիրը :

Արդ, այդ անտիպ գործը փրկուած է ուրեմն : Ե՞րբ պիտի հրատարակուի արդ– եօք : Ուրիշներ ալ կա՞ն : Օր մը թերեւս մեր ձեռքին մէջ ունենանք այդ բոլորը :

×

Այս երկար մէջբերումները ըրինք, թէ՛ իր գործին եւ թէ՛ իր մասին գրե – ուած վկայութիւններէն հասկնալի դար – ձնելու համար Չարենցի տաղանդը :

Ի՞նչ էր հոզեկան այդ խորունկ տագ – նապը, որ ան ապրեցաւ :

Մեծ յուսախաբութիւն մը :

Տարիներով ամենավառ երազները հիւ– սելէ յետոյ, հաւատալէ, գովելէ, իր ամ– բողջ հոզիով փառաբանելէ յետոյ, ահա՛ որ այդ «կարմիր ապագան» սեւ կը ներ – կուէր : Մեծ Լենինին տեղ եկած էին Ըս– թալինը, Պերիան :

Ամենաստոր բռնակալական կարգերը վերադարձած էին, ճնշելով ժողովուրդը, ամէն ազատութիւն խլելով անկէ, խոր – տակելով ամէն յոյս ու հոզեկան թռիչք :

Ահաւոր է յուսախաբութիւնը բուռն, անկաշկանդ ու մոլեռանդ հաւատացեալ – ներուն : Ահաւոր նաեւ անոնց հակազդե – ցութիւնը :

Ահա Չարենցի ամբողջ առամը :

Պղտիկ հակառակութիւնները, ֆիզի – քական, բարոյական սայթաքումները երկրորդական են, արդիւնք թերեւս մեծ յուսաբեկութեան մը :

Չարենցը երգեց Քրիստափորը, որով – հետեւ ընդվզեցաւ սթալինական բռնակա– լութեան դէմ : Հայր արքունեաւ, կատղե – ցաւ՝ համայնավարին դէմ : Ցանկարծ դպաց թէ ամէն բանէ առաջ, ամէն բանէ վեր հայ էինք :

Թէ՝ հայութիւնը իր միակ զեղեցկու – թիւնն է, իր միակ երջանկութիւնը : Ին – քը, նախ եւ առաջ հայ բանաստեղծ է — « Իմ կարօտած սրտի համար ո՛չ մի ու – րիշ հէքեաթ չկա՛յ ... » :

Եւ գրեց, պատմեց, ինչպէս մեր նա– հատակ անթիւ հերոսներն էին, կախաղա– նէն աղաղակելով «հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը քո հաւաքական ուժի մէջն է» :

Պիտի ուզէինք որ չդործէր այդ «խեն– թութիւնը», ապրէր ամէն դնով, ստեղ – ծագործէր, եւ այսօր ոտնէկինք իր ծննդ– եան 60ամեակը, առանց մահուան 20ամ – եակին :

Այնքան մեծ էր քերթողը, որ պիտի ու– զէինք որ ան դործէր այդ վատութիւնը :

Այդպէս չուզեց սակայն :

Չուզեց միայն մեծ բանաստեղծ մնալ :

Ուզեց Հայ մեծ բանաստեղծ դառնալ :

Վարուժանի մը պէս, Սիամանթոյի մը, Սայաթ – Նովայի մը պէս, ուզեց նահա– տակուիլ : Ուզեց իր բանաստեղծի պայ – ծառ ճակտին՝ կրել նաեւ Մարտիրոսի փշեայ լուսապսակը :

Այդ է թերեւս ճակատագիրը հայ բա – նաստեղծին :

Անոր գերագոյն երջանկութիւնն ու փառքը նաեւ :

Մեզի կը մնայ ընդունիլ բանաստեղծին կամքը :

Խոնարհիլ :

Կ. ՓՕԼԱՏԵԱՆ

(9 եւ վերջ)

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՅԱՐԱՏՈՒԹԻՒՆԸ

Թ.

Թիֆլիսի հայերուն վրայ ամէն մարդ կրնայ ինչ որ ուզէ ըսել, ինչ որ ուզէ գրել, ինչ որ ուզէ գրել տալ, ինչ որ ուզէ ընել տալ, ինչ որ ուզէ ընել, ինչ որ ուզէ ընել տալ, ինչ որ ուզէ գրել տալ, ինչ որ ուզէ գրել, ինչ որ ուզէ ըսել տալ, ինչ որ ուզէ ըսել, ինչ որ ուզէ ընել տալ, ինչ որ ուզէ ընել

ՅՈՒՆԱՍՏԱՆի առաջարկը՝ կիպրոսի հարցին չուրջ, ՄԱԿի մէջ չէ վաւերաց-ուած, ձայներու երկու երրորդը պէտք էր, մինչդեռ 31 թեր, 23 դէմ եւ 24 ձեռնպահութիւն եղած է :

ՍԱԿԱՐԱՆ (Դեկտ. 16).— Զոյգ ոսկի՝ 565·000, նափոլէոն 4150, դուխց 3890, անգլ. 4890, քսան տոլարնոց 19·720, թղթադրամ (անպաշտօն) սթերլին 1305, տոլար 481, դուխց 115·75, պելժ. 9·60, լիր 0·79:

ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Կապոյտ Խաչի Տէսինի մասնաճիւղը ցաւակցութիւն կը յայտնէ Տիկին Ալվազեանին ողբացեալ Թ. Ալվազեանի մահուան առթիւ եւ փոխան ծաղկեպսակի երկու հազար ֆր. կը նուիրէ օգափոխութեան կայանի չէնքին :

×

Ֆրանսահայ կապոյտ Խաչի Լիոնի մասնաճիւղի վարչութիւնը իր խորին ցաւակցութիւն կը յայտնէ ընկերուհի Տիրուհի Սէրէնկիւլեանի եւ իր պարագաններուն իր հայրը ՆԻԿՈՂՈՍ ՆԻԿՈՂՈՍԵԱՆի մահուան տխուր առթիւ : Այդ առթիւ փոխան ծաղկեպսակի երկու հազար ֆր. կը նուիրէ «Ցառաջ»ի բարգաւաճման :

×

ՄԱՐՍԷՅԼ.— Մանուկ Սէֆէրեանի վաղահաս մահուան առթիւ իր ընկերները ցաւակցութիւնները յայտնելով անոր վշտահար ծնողքին եւ եղբայրներուն, ողբացեալին յիշատակին հետեւեալ նուէրները կ'ընեն Սարաստիոյ Նահանգային Մուրատ Ուսումնասիրացի Մարսիլիոյ մասնաճիւղին :

Ֆ. Ալաճեան, Արմիկ Յակոբեան, Զաւէն Նահապետեան, Բժ. Ալֆոնս Պիպէրեան, Մորիս Քոքոյեան, Գրիգոր Ռափայէլեան եւ Հայկազուն Մարտիրոսեան հազարական ֆրանք :

Այս գումարները ստանալ Բժ. Ա. Պիպէրեանէ (ատամնաբոյժ), 8 Թրավէրսա Տիւ Թօնիէն, Փոն տը Վիվօ :

ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՄՍԱԹԵՐԹ

(Օրգան՝ Հ. Յ. Դ. Նոր Սերունդի)

Լոյս տեսած է 11րդ թիւը :

Ճոխ բովանդակութեամբ, պատկերազարդ :

Հայերէն եւ ֆրանսերէն :

Զեռքէ՝ հատը 50 ֆրանք :

Տարեկան բաժնեգին՝ 450 ֆրանք :

Ստանալու համար դիմել՝

M. K. PAPAZIAN

25, Rue Martial-Boudet, Chaville - S. et O.

ՏՕՆԱԾԱՌ

Ֆ. Կ. Խաչի Վիէնի մասնաճիւղի Մանուկներու Օրուան տօնածառը Ցունուար հինգին, կիրակի ժամը երեքին Սէրքլը Կաթոլիկ սրահը :

Երգ, արտասանութիւն, պար եւ կազդուն Պապայիի նուէրներու բաշխումը :

ԸՆԿԵՐԱԿԱՆ ՀԱՒԱՔՈՂՔ

Նոր տարուան առթիւ ընկերական հաւաքոյթ մը տեղի կ'ունենայ Դեկտեմբեր 22, կէսօրէ վերջ ժամը 16 – 22, 32 բիւ տը Թրէվիզ: Նախաճեռնութեամբ Հ. Բ. Ը. Մ. Երիտասարդաց վարչութեան :

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

Նիսի եւ շրջականերու Հայասատանեայց Առաքելական Կրօնական Ընկերակցութեան Բ. ընդհ. ժողովը տեղի կ'ունենայ 22 Դեկտ., կիրակի կէսօրէ վերջ, ժամը 15ին, Մաուչէնի եկեղեցւոյ սրահը :

Օրակարգ.— Ա) Զեկոյց հաչուեքննիչ մարմնի կողմէ : Բ) Քուէարկութիւն նոր շրջանի վարչական ընտրութեան :

Կրօն. Ընկ. եան վարչութիւնը կը հրաւիրէ իր բոլոր անդամ – անդամուհիները ներկայ գտնուելու սոյն ժողովին :

Ի դիմաց Կրօն. Ընկ. եան՝ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՇԱՆՕԹ.— *Իւրաքանչիւր անդամ – անդամուհի որ Կրօն. Ընկ. եան մաս կը կազմէ իրաւունք ունի մասնակցելու քուէարկութեան : Իսկ այն անդամ – անդամուհիները որոնք բանաւոր պատճառով կը բացակային ընդհ. ժողովէն, կրնան լիազօրել ուրիշ անդամ – անդամուհի մը իրենց կողմէ քուէարկելու իրաւասութեամբ : Իւրաքանչիւր ներկայ անդամ – անդամուհի կրնայ ներկայացնել մինչեւ մէկ լիազօրագիր :*

ԲԱՑԱՌԻԿ ԵՒ ՇՔԵՂ ՊԱՐԱՀԱՆԳԷՍ

Կազմակերպութեամբ Հ. Յ. Դ. Նոր Սերունդի Փրիստափոր խումբի :

Այս երեքշաբթի երեկոյ ժամը 21ին, Պոմոնի եկեղեցւոյ սրահին մէջ :

Կէս գիշերէն մինչեւ լոյս եւրոպական պարեր՝ ընտիր նուագախումբով :

Հայկական պարեր Հ. Յ. Դ. Նոր Սերունդի Պոմոնի պարախումբին կողմէ :

Պիւֆէ, դիւրամատչելի գիներով :

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Հ. Յ. Դ. Նոր Սերունդի Պանեէօ-Քաշանի մասնաճիւղը կը յայտարարէ թէ պարախումբը պատրաստութեան մէջ ղլալով, որեւէ հանդէսի չի կրնար մասնակցիլ, մինչեւ յառաջիկայ Մարտ : Պարախումբը վերակազմուելու վրայ է, ա-նոնք որ կ'ուզեն մաս կազմել, դասերուն կրնան հետեւիլ ամէն երեքշաբթի, ժամը 20·30էն 22·30, Էկլիզ Ս. Ռըճէի դպրոցին մէջ, 20, Րիւ Արբէօյ (Պանեէօ), Նասիոնալ 20 պողոտային քով : Օթօպիւս՝ 188, իջնել՝ Մարսէլ Պոննէ, մեթրօ՝ Պանեէօ (լիներ տը Սօ) :

×

Հ. Յ. Դ. Նոր Սերունդի հերթական ժողովները տեղի կ'ունենան նոյն սրահին մէջ, ամէն չորեքշաբթի : Այսօր՝ ընդհ. ժողով եւ կարեւոր օրակարգ : Անդամներու ներկայութիւնը պարտաւորիչ է :

ՏՕՆԱԾԱՌ

Դպրոցասէր Տիկնանց վարժարանի տոնածառի հանդէսը այս կիրակի կէսօրէ յետոյ ժամը 3ին, վարժարանին մէջ :

Կը հրաւիրուին բոլոր ծնողքները :

ՑՐԱՆՑԱՀԱՑ ԼՍԱՐԱՆ

Հերթական դասախօսութիւնը այս չորեքշաբթի պիչեր, ժամը 21ին, Քաաէի սրահը : Կը խօսի՝ Պ. Արտ. Գմբէրեան : Նիւթ՝ «Երկու Յովհաննէսները՝ Յովհ. Սեւումեան եւ Յովհ. Զարիֆեան» :

Կը խնդրուի ճշդապահ ըլլալ :

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՅԿԵՐՈՅԹԸ

ՄԱՐՍԷՅԼ

22 Դեկտեմբեր, կիրակի ամբողջ օրը, Պոմոնի Ս. Սահակ եկեղեցւոյ սրահին մէջ :

Հայկական համադամ կերակուրներ, նուագ, երգ, արտասանութիւն եւ ուրախ մթնոլորտ :

Ձաշագին 1000 ֆրանք :

Տեղերը ապահովել Համազգայինի ան-դամներուն մօտ :

Մասնագէտ թայէօր մը այր մարզու դասական ժիլէի համար : Դիմել՝

"ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐ"Ը

Ֆ. կապ. Խաչի կեդր. վարչութիւնը, Փարիզի շրջանի իր տասը մասնաճիւղերով կը տօնէ «Մանուկներու Օր»ը, Ցունուար 2ին, ժամը 15 – 19, Սօսիէթէ Սավանթի մեծ սրահին մէջ, 8 Րիւ Տանթոն, մեթրօ Սէն Միշէլ կամ Օտէօն :

Մանրամասնութիւնները յայտնուելով :

×

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

Կրպնոպլի Ֆ. կապ. Խաչի դպրոցի տոնածառը տեղի պիտի ունենայ Ցունուար հինգին, Րիւ Ժէյի սրահը :

Լիոնի մէջ կը տօնուի 12 Ցունուար, կիրակի կէսօրէ վերջ Ցոյներու սրահը : Կը խնդրուի նկատի ունենալ :

Հ. Մ. Ը. Մ.Ի ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ ՎԻԵՆԻ ՄԷՋ

Դեկտեմբեր 28ին, Շաբաթ իրիկուն, Սալ տէ Ֆէթի սրահներուն մէջ :

Մանրամասնութիւնները տեղւոյն վրայ

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

Հայկանոյշ Գուլումճեան կը փնտռէ իր ազգականներէն Պետրոս Ջաուշեանը որ Պոլիս, Խասգիւղի Հալըճըօղլու թաղը ծըննած է, մօտ յիսուն տարեկան է, հօրը անունը Երուանդ, մօրը՝ Նարդուհի, քրոջը Մաքրուհի : 1925ին Մարսէյլ եկած է եւ այժմ Փարիզ ըլլալ կը կարծուի : Տեղեկացնել Տիկ. Հ. Գուլումճեանի, 79 Րուր Նասիոնալ, Սէն Լուի, Մարսէյլ :

ՏՕՆԱԾԱՌ

ՍԱՄՈՒԷԼ – ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Կիրակի, 22 Դեկտեմբեր

Ժամը 16 – 22 :

Գեղարուեստական ճոխ բաժին, պատրաստուած աշակերտներու կողմէ :

Կը ներկայացուի Շիրվանզատէի

ՍԿԶԲՈՒՆՔԻ ՄԱՐԴԸ

Կատակերգութիւն մէկ արար

Երգ, պար, արտասանութիւններ :

Հայկական համեղահաճակ չքասեղան :

ՆՇԱՆՁՓ ՎԱՃԱՆՍԻ ՄԷՋ

Ֆ. Կ. Խաչի մասնաճիւղի խնջոյքը այս կիրակի, կէսօրէ վերջ ժամը 3ին, «Ահարոնեան» ակումբին մէջ :

Սրահի ջերմութիւնը ապահովուած է :

Ճոխ պիւֆէ :

ՆՇԱՆՁՓ

Սեբաստիոյ Նահանգային Մուրատ Ուսումնասիրացի կեդր. վարչութիւնը կազմակերպած է ընտանեկան խնջոյք մը այս կիրակի կէս օրէ վերջ ժամը 16էն մինչեւ 21 : Գեղարուեստական ճոխ բաժինով :— Երգ, նուագ, արտասանութիւն եւն. :

Իսկի Խրիմեան ակումբը :

Մուտքը ազատ է :

ՊԱՏԱՐԱԳ ԿՐԾՆՈՂԻ ՄԷՋ

23 Դեկտ., Զորեքշաբթի առաւօտ Ծը-ննդեան տօնի առթիւ Ս. Պատարագ պիտի մատուցուի Րիւ Ժէ, Սէն Լուի սրահին մէջ : Պիտի պատարագէ Թորգոմ քհնյ. Լիոնէն :

ՑՈՒՇԱՏԵՏՐ

ՇԱՒԻՂ.— Հ. Յ. Դ. «Արղութեան» խումբի ժողովը այս շաբաթ, ժամը 21-ին, սովորական հաւաքատեղին : Ներկայ կ'ըլլայ Շրջ. Կոմիտէի ներկայացուցիչը :

Ֆ. Կ. ԽԱՉի Փարիզի մասնաճիւղի ընդհանուր ժողովը այս Շաբաթ, կէս օրէ վերջ ժամը 3·30ին, ընկերուհի Պաչքըճեանի աշխատանոցը, 58 բիւ տ'Ապուէիր, 4րդ յարկ, մէթրօ Սաւրիէ : Կը խնդրուի ճշդապահ ըլլալ :

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսական Բանակի Հայ Կամաւորներու եւ Մարտիկներու Միութեան վարչութեան

Ֆր. Բանակի Հայ Կամաւորներու եւ Մարտիկներու Միութեան վարչութիւնս, այսու արտակարգ ընդհ. ժողովի կը հրաւիրէ Միութեանս բոլոր անդամները որոնք իրենց նիւթական եւ բարոյական պարտականութիւնները կատարած են մինչեւ 31 Դեկտ. 1956 :

Ընդհ. ժողովը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Դեկտ. 22ին, Կիրակի օր առաւօտեան ժամը 9ին, Հայ Ազգ. Տան մէջ, 32 բիւ Թրէվիզ, Փարիզ :

Եթէ կարեւոր օրակարգ եւ նոր վարչութեան ընտրութիւն :

Ֆրանսական Բանակի Հայ Կամ. եւ Մարտիկներու Միութեան Վարչութիւն

(ԿՆԻՔ)

Ա. Զ Դ

Այսու կը յայտնենք Ֆրանսայի բաժանորդներուն թէ ՀԱՍԿ պաշտօնաթերթի ներկայացուցիչ նշանակուած է Պ. Մկրտիչ Պարսամեանը :

Ցեասյսրիկ կը խնդրուի ամէն թղթակցութիւն կատարել իր միջոցաւ, հետեւեալ հասցէով՝

M. M. Barsamian, 46, Rue Richer, Paris 9· (France)

Վարչութիւն ՀԱՍԿ ամսաթերթի

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ, ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ ՊԱՐԱՀԱՆԳԷՍ

Կազմակերպուած Ֆ. Կ. Խաչի Փարիզի մասնաճիւղին կողմէ

28 Դեկտեմբեր, Շաբաթ կէս օրէ վերջ ժամը 20էն մինչեւ լոյս

Լիւթէսիայի գեղեցիկ սրահներուն մէջ

Orchestre Lutetia 43, BLD. RASPAIL, MÉTRO SÈVRES-BABVLONE

Գեղարուեստական բաժին, Պ. Կարպիս Ափրիկեանի երգի ֆուարթերքը

Մենապարեր՝

Օր. Թերեզ Քէօշկէրեան՝ *Սուրբերու պարը Խաչատուրեանի*, Օր. Անի Թարօն *Երեւանի հարսանիքը եւ եւրոպական պար մը :*

ՇԱՆՕԹ.— *Տոմսերու վրայ նշանակուած է մինչեւ կէս գիշեր, բայց բոլորին ցանկութեան վրայ կարգադրուած է սրահի տնօրէնութեան հետ մինչեւ առաւօտեան ժամը հինգ :*

Մուտքը՝ 500 ֆրանք

Ուսանողներու համար՝ 300 ֆրանք, ներկայանալ իրենց ուսանող. քարտերով :

Նպատակն է՝ կապոյտ Խաչի օգափոխութեան կայանը, ինչպէս նաեւ իր կրթական եւ բարեսիրական գործերը :

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ի պատուիրէ չրջանիս հաւատացեալ ժողովուրդին կը յայտարարենք թէ հոգաբարձութիւնս որոշած է Դեկտեմբեր 22ի կիրակին հոգեհանգստեան պաշտօն կատարել Ս– Եկեղեցւոյս մէջ յաւէտ ողբացեալ Հայոց մեծ բանաստեղծին՝ հանգուցեալ ԱՒԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆի յիշատակին :

Հոգաբարձութիւն Վարագայ Ս. Խաչ եկեղեցւոյ (Առնուվիլ)

Շաբաթ 21 Դեկտ. երեկոյեան ժամը 9ին իր մասին կը դասախօսէ Պ. ԳՐԻԳՈՐ ԳՈՐԵԱՆ, եկեղեցւոյս սրահին մէջ : Կը խնդրուի յիշատակը յարգողները ներկայ ըլլան սոյն դասախօսութեան : Կը նախագահէ Հոգ. Հովիւ Ադդէ Եհնյ. Փայլակեան :

imprimé sur les presses du journal HARATCH
17, Rue Bleue, 17 — PARIS (9e)

Réveillons
Chez SASSOUNI
ԿԱՂԱՆԴԻ ԵՒ ԾՆՈՒՆԴԻ
Ջուարթ ու հաճելի Զարթօնքը
(24 եւ 31 Դեկտեմբերի գիշերները)
Մի մտածէք ուր անցընելու մասին
ՍԱՍՈՒՆԻԻՆ մօտ ի հարկէ
Ուր պիտի գտնէք ճոխ ու պէսպէսուն ուտելիքներ եւ խմիչքներ
Բոլորդ ազգականներով եւ բարեկամներով ժամադրուեցէք
Եւրոպական եւ արեւելեան նուագ
ՍԱՍՈՒՆԻԻՆ
31. RUE D'ALEXANDRIE, PARIS - 2·
Tél. GUT. 92-65

Décoration — Agencement de Magasin
ANCIENS ÉTABLISSEMENTS
J. PAICHOUX et E. THION
149, RUE NATIONALE, PARIS 13E
TÉL : GOB. 19 52
SERRURERIE D'ART ET DE BATIMENT
Tous Travaux de Fer Forgé

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 — Téléph. : PRO. 86 - 60
R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա եւ գաղութներ, տարեկան 3000 ֆր. վեցամս. 1600
Արտասահման՝ տարեկան 3500 ֆրանք: Հատը 12 ֆր.

ՀԻՆԳՇԱԲԹԻ
19
ԴԵԿՏԵՄԲԵՐ
JEUDI
19 DECEMBRE
1957

33ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8072 — 33e ANNEE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 13ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3873

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ԿԱՑՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԱՐԱՐԸ

1956 Յունուար 2ի խորհրդարանական ընտրութիւնները առաջնակարգ դեր մը տուին ընկերվարական կուսակցութեան՝ Ֆրանսայի քաղաքական կեանքին մէջ :

Երկու տարիէ ի վեր կացութեան իրաւարարն է այս կազմակերպութիւնը, որ 1936էն՝ ժողովրդական Ճակատի կազմութենէն սկսեալ ա՛յնքան մեծ ծառայութիւն մատուցած է աշխատաւոր դասակարգին, բարելաւելով անոր ապրուստի պայմանները : Յաջողած է խաղաղ, օրի – նական միջոցներով իրագործել ընկերվարական վարութեան ղլխաւոր սկզբունքները :

Իր զգայնարախօսութեամբ դեռ – ւանցօրէն ժողովրդավար այս կուսակցութիւնը աստիճանական վերելքով հասած է այնպիսի դիրքի մը, որ զարճած է միակ իրաւարբ ծայրայեղ ձախին ու աջին մի – ջեւ :

Ազգային ժողովի ներկայ կազմը, խմբակցութեանց դասաւորումը այնպէս է, որ առանց ընկերվարական կուսակցութեան դեկավարութեան կամ մասնակցութեան կարելի չըլլար կառավարութիւն կազմել :

Կի Մոլէի գահլիճը Դ. Հանրապետութեան ամէնէն երկարակեաց նախարարութիւնն եղաւ :

Պուրժէս – Մօնուրի եւ Ֆելիքս Կայլաո չկրցան կառավարութիւն կազմել՝ առանց ընկերվարականներու աջակցութեան :

Կուսակցութեան անդամներու թիւը 125 հազար է, բաժնուած 102 կեդրոնական կոմիտէութեանց՝ մայր երկրի եւ գաղութներու մէջ: Առնք համապատասխան կը ներկայացնէն չորս հազար ձայն : 1956ի ընտրութեանց մէջ ստացան 3·200·000 քուէ եւ ունեցան հարիւր երեսփոխան :

Տարեկան ընդհանուր ժողովէն դուրս, ընկերվարական կուսակցութիւնը քաղաքական կարեւոր հարցերու առթիւ նիստի կը հրաւիրէ Ազգային Խորհուրդը : Վերջին նախաբարական տագնապի առթիւ Նոյեմբեր 3ին արդէն գումարուած էր Ազգային խորհուրդը :

Շաբաթ եւ կիրակի նոր խորհրդաժողով տեղի ունեցաւ, որոշելու համար թէ ընկերվարական չորս նախարարներն ու հինգ փոխ – նախարարները պիտի չարունակեն մնալ կաբինէի գահլիճին մէջ :

Ընդդիմադիր ուժեղ թեւ մը, որուն պլուխը կը գտնուին մեր բարեկամներէն Կաթօն Տէֆէր եւ Լուսար Տէփրէօ, կը պահանջէր որ ընկերվարական նախարարները քաշուին կառավարութենէն, քանի որ անիկա չէր գործադրեր Թուլուզի համաժողովին մէջ կուսակցութեան տուած որոշումները :

Ընդդիմադիրները մասնաւորաբար կը քննադատէին ներկայ գահլիճին քաղաքականութիւնը ընկերային, տնտեսական եւ ալժերիական ճակատներուն վրայ : Կը չեշտէին, որ դիներու բարձրացումը ամէնէն աւելի կ'ազդէ համեստ աշխատաւորներու վրայ, որոնց չահերու պաշտպան – նութիւնը առաջին պարտականութիւնն է ընկերվարական կուսակցութեան :

Բուռն եղան վիճաբանութիւնները : Ընդդիմադիր եւ մեծամասնական ազատորէն արտայայտուեցան : Ի վերջոյ յաղթականը ստացաւ ընդհ. քարտուղար կի Մոլէ :

Արդարեւ աշխարհի ներկայ քաղաքական անստոյգ կացութեան մէջ՝ մեծապէս վտանգաւոր պիտի ըլլար նախարարական նոր տագնապ մը ստեղծել Ֆրանսայի մէջ, իրրեւ հետեւանք ընկերվարական եւ բնոփոխաններու հրաժարումին :

Ընդունուած քաղաքական բանաձեւը կ'որոշէ պահել ընկերվարական նախարարները կաբինէի գահլիճին մէջ, պայմանաւ որ՝ նոր զիջումներ չընեն, աշխատաւորներու օրինաւոր պահանջները յարգուին, տնտեսական եւ ընկերային

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՆԱԽԱԳԱՀ ՔՈԹԻ ԱՄԵՐԻԿԱ ՀՐԱՒԻՐՐԻԵՑԱԻ

—o—

ԴԱՐՁԵԱԼ ԲՈՒԼԳԱՆԻՆԻ ՆԱՄԱԿԻՆ ՀԱՐՑԸ

Ատլանտեան Ուխտին Բ. Նիստէն ա – ռաջ, Գ. օր, առաւօտուն տեղի ունեցաւ Արտաքին Նախարարներու ժողով մը, որմէ հետք կառավարութեանց պետերը վերակոչուեցան իրենց աշխատանքին :

Երբ ժողովը բացուեցաւ՝ Նախագահ Այզընհաուըր ներկայ չէր ժամը 16·45 էր, երբ հասաւ Փալէ տը Շայեօ :

Ժողովին առաջին մասը յատկացուած էր Արտաքին Նախարարներու կողմէ ա – ռաւօտուն ուսումնասիրուած քաղաքական հարցերու քննութեան :

Գերմանիոյ խնդրին չուրջ բացուած վիճաբանութիւնները միաձայնութեամբ յանգեցան Փրնեւի ժողովին եզրակացութեան — երկու Գերմանիաններու վերամիացումը՝ ազատ ընտրութիւններով :

Այնուհետեւ, երկարօրէն խօսուեցաւ դինաթափութեան մասին : Պատգամաւորներէն չատեր ցաւ յայտնեցին, որ Խ. Միութիւն չընդունեցաւ Լոնտոնի ժողովին առաջարկները : Որոշուեցաւ զարձեալ հրատարակ նետել դինաթափութեան առաջարկը :

Կիպրոսի հարցը չարձարձուեցաւ, իսկ Հիւս. Ափրիկէի մասին Ֆրանսան ներկայացուց ամբողջական տեղեկագիր մը :

Այս նիստին մէջ այլեւս յստակ եղաւ, որ դաշնական երկիրներու ներկայացուցիչները համաձայն են Խ. Միութեան հետ ժողով մը դումարելու տեսակէտին : Մինչ չատեր թերահաւատ են խորհրդային դեկավարներու անկեղծութեան նկատմամբ, ուրիշներ կը մտածեն թէ մտահոգիչ բուլ – դանինի նամակները կրնան պատճառ մը բլլալ՝ որ միջպետային ներկայ լարուած կացութիւնը մեղմանայ, երկու կողմերու փոխադարձ համաձայնութեամբ :

Երկ առաւօտ, Պատերազմական նախարարները ժողով մը գումարեցին՝ իրենց գործունէութեան վերաբերեալ հարցերը ուսումնասիրելով . — Ջրածին եւ հիւլէական դէնքերու պահեստ, հրթիռներ, եւայլն : Պատրաստեցին ծրագիր մը պինուորական խնդիրներու համար :

Գ. օր, ժողովէն առք պաշտօնական հաղորդագրութիւն մը տրուեցաւ Էլիզէի մէջ, ուր ներկայ էին մօտ երկու հարիւր հոգի : Նախագահ Այզընհաուըր, ճաշի ընթացքին Նախագահ Քոթին պաշտօնապէս հրաւիրեց Միացեալ Նահանգներ : Ծանօթ է, որ Նախագահ Քոթի Ամերիկա պիտի երթայ անցեալ Յունիսին եւ յետադարձ նախարարական տագնապին պատճառով :

× Ատլանտեան Ուխտի ընդհանուր քարտուղար Սփաք մամուլի ասուլիս մը տուաւ, որու ընթացքին բազմաթիւ հարցումներ եղան իրեն. յատկապէս՝ մտահոգուած Բուլգանինի նամակին մասին : Սփաք պատասխանեց բոլոր հարցումներուն եւ յայտնեց թէ կարեւորագոյն խնդիրը դինաթափութիւնն է եւ, հատնարար ժողովին ընդհանուր դեկոյցին մէջ՝ կարեւոր բազոյն տեղը յատկացուի այս հարցին :

մարզերու մէջ առողջ քաղաքականութիւն մը հետապնդուի եւ կուսակցութեան Թուլուզի եւ 1957 Յունիս 3ի Ազգ. Խորհուրդին մէջ արուած որոշումները յարգուին :

Այլապէս նախարարները պիտի հրաժարին :

Հետզհետէ հոգ կը դանէ ներկայ Ազգային ժողովը լուծելու եւ նոր ընտրութիւններ կատարելու մխքը :

Կառավարութիւնը այդ միջոցին պիտի դիմէ այն ատեն միայն, երբ ընկերվարական կուսակցութիւնը դադրի կատարելէ իրաւարարի դերը :

ՀՐԱՆՏ – ՍԱՄՈՒԷԼ

Օր ը Օրէն

ԵՐԷԿՈՒԱՆ ԴԱՍԸ

Նոյեմբեր 22, 1920 :

15 երկիրներու ներկայացուցիչներուն խորհրդակցութեան պաշտօնական դեկոյցը հրատարակուած է արդէն. բաժնուած է վեց մասի — Միջազգային կացութիւնը, Ատլանտեան Ուխտին աշխատելու եղանակը, պինաթափութիւն, Ուխտին պաշտպանութիւնը, դիտական եւ մասնագիտական գործակցութիւն, տնտեսական գործակցութիւն : Ինչպէս կը տեսնուի գործակցութիւնները բաժանումէն՝ մասնաւոր նպատակ մը չկայ :

Զեկոյցին մէջ չեշտը գրուած է յատկապէս Գերմանիոյ վերամիացման եւ ափրիկեան ժողովուրդներու հետ գործակցութեան վրայ :

Ատլանտեան երկիրներու «Մեծ»երու այս հանդիպումը ցոյց տուաւ, թէ ազատ աշխարհը կ'ուզէ գործակցիլ Խ. Միութեան հետ՝ խաղաղութիւնը հաստատուն հիմերու վրայ դնելու համար : Բուլգանինի նիկի նամակները, այն պահուն՝ երբ ժողովը պիտի դումարուէր, որոշ բարեխառնութիւն մը ստեղծեցին մթնոլորտին մէջ : Թէեւ յիշատակուեցաւ այն պարագան՝ թէ Խ. Միութիւն Արեւմուտքի բոլոր առաջարկները մերժեց՝ պինաթափութեան մարդին մէջ, այսուհանդերձ, Ատլանտեան Ուխտը պատրաստ է Մոսկուայի հետ խորհրդակցելու, պինաթափութիւնը իրականացնելու համար :

Խ. Միութեան հետ մերձեցման աշխատանքը պիտի տանի Արեւմտեան Գերմանիոյ Վարչապետ Ատընաուըր : Առաջին առիթով, երկկ դիւեր Պոնի Խորհրդային դեսպանը հրաւիրելով իր մօտ՝ Ատընաուըր խօսեցաւ այս մասին. միաժամանակ՝ Մոսկուայի իր ներկայացուցիչը կանչած է Գերմանիա, խորհրդային մայրաքաղաքին մէջ տիրող մթնոլորտին չուրջ բացատրութիւններ ստանալու եւ թելադրութիւններ ընելու համար :

Թէեւ տակաւին որոշ տուեալներ չկան, բայց կը կարծուի թէ Արեւմուտքը պիտի յայդողի ներկայ լարուած կացութիւնը մեղմացնել՝ քաղաքական թէ տնտեսական ճակատներու վրայ :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՍՊԱՆԱԿԱՆ մարտանաւ մը առջի օր ռմբակոծեց Իֆնիի հիւսիսային շրջանը :

ԱՄԵՐԻԿԱ. մէջերկրային նոր հրթիռ մը արձակեց, յաջողութեամբ :

ՓԵՇՏԱՅԻ դատարաններուն առջեւ ներկայիս կը քննուի երեսուն բանուորներու եւ 15 կաթողիկէ վարդապետներու հարցը. ինչպէս ծանօթ եւ բոլորին ալ «մեղք»ը «հակայեղափոխական գործունէութիւն» է :

ՊԻՏՐՈՒԻԻի մէջ մեռած է Էլի Թիան, Քրանսերէն գրող լիբանանցի ծանօթ բանաստեղծը : Քերթուածներու իր լաւագոյն հատաքածոն է «Աքանչելի Դղեակը » :

ԱՐԺԱՆԹինի մէջ ոստիկանութիւնը ձերբակալեց փերոնական քսան ահաբեկիչներ, որոնք կը պատրաստուէին ձախողութեան մատնել յառաջիկայ Փետրուարի ընտրութիւնները : Երեսուն ելած է նաեւ կարեւոր պինաբան մը :

Զիլիի մէջ 1800 բժիշկներ եւ 800 ատամնաբուժներ, որոնք կը պատկանին Ազգ. առողջապահական ապահովութեան, ներկայացուցած են իրենց հրաժարականը. ամսականի յաւելում կը պահանջեն :

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ հիւլէական առաջին կեդրոնը սկսած է գործել Փեն – սիլվանիոյ մէջ. 60·000 քիլոուաթ է իր ուժը եւ կ'օգտագործուի միայն էլեկտրականութիւն արտադրելու համար :

ՍՈՒՐԻՈՅ Արտաքին նախարարութիւնը դրաւոր ծանուցագիր մը հրատարակեց, որուն մէջ կը չեշտէ յատկապէս, թէ Թուրքիոյ Վարչապետ Մենտերէս Ատլանտեան Ուխտի ժողովին մէջ պնդած է Սուրիոյ դէմ յարձակողական քաղաքականութիւն մը վարելու տեսակէտին վրայ :

ՎԱՍՏԱՀՈՒԹԵԱՆ ՔՈՒԷ ԿԱՅԵԱՌԻ
191Ի ԴԷՄ 264 ՁԱՅՆՈՎ

Եչ. օր Ազգ. Ժողովին մէջ 1958ի պիւտճէին առաջին ընթերցումէն ետք, 191ի դէմ 264 ձայնով երեսփոխանները վստահութիւն յայտնեցին Վարչապետ Ֆելիքս Կայեառի :

Վիճաբանութեանց ընթացքին, անկախ երեսփոխան Հէնօ ցաւ յայտնեց, որ կառավարութիւնը ժամանակ չէր տուած երեսփոխաններուն՝ պիւտճէն քննելու համար. — Ի՞նչ բանի կը ծառայէ Խորհրդարանը, բսաւ ան, եթէ կ'արգիլէ իր անդամներուն՝ որ հսկեն կառավարութեան վրայ :

Կարգ մը քննադատութիւններէ եւ Իչէի յայտարարութենէն ետք՝ թէ փուժատանները դէմ պիտի քուէարկեն, Տէքսոն բացատրեց ընկերվարականներու պարագան եւ լուսաբանութիւններ ուզեց կառավարութենէն, որմէ ետք կարգ մը քննադատութիւններ ըրաւ, մաղթելով որ ծերունիներուն յաւելեալ օգնութիւն մը ըլլայ : Ընկերվարականներու բանբերը յայտնեց թէ հակառակ կարգ մը թերի կողմերուն, որ ունի 1958ի պիւտճէն, իր կուսակցութիւնը վստահութիւն պիտի յայտնէ կառավարութեան :

Այնուհետեւ, Վարչապետ Կայեառ ճառ մը խօսելով, բացատրեց թէ Ազատագրութենէն ի վեր Խորհրդարանին ներկայացուած պիւտճէի ծրագիրներուն մէջ լաւագոյնն է այս վերջինը եւ քննադատութիւնները անտեղի էին : Վարչապետը յիշեց նաեւ արտածման եւ ներածման հաւասարակշռութիւն ստեղծելու պարագան, որ կենսական կարեւորութիւն ունէր երկրին համար :

Քուէարկութենէն ետք երեսփոխանները ցրուեցան, յառաջիկայ հինգշաբթի հաւաքուելու համար : Մինչ այդ, ծերակուտականները պիտի քննեն ելմտական օրէնքը, որ քուէարկութեան պիտի դրուի Փալէ Պուրպոնի մէջ՝ Դեկտեմբեր 26ին :

—o—

ԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԱԼՃԵՐԻՈՅ ՄԷՋ

Մինչ անձրեւը դադրած է Ալժերիոյ մէջ եւ ընդհատուած երթեւեկը վերսկսած՝ օդին բարելաւման չնորհիւ, խռովութիւնները կը չարունակուին սակայն, ինչպէս նաեւ՝ յաճախակի բախումները :

Անցեալ շաբաթ Ալժէի մէջ մահափորձ մը կատարուած էր. ոստիկանութիւնը դէպքին վայրը հասնելով յաջողած էր ձերբակալել ահաբեկիչներէն մէկը : Ասոր հետեւանքով, ապատամբ մը կրակ բացած է ոստիկան – զօրաց ջոկատի մը վրայ եւ զինամարտը սկսած : Ոստիկան մը եւ զինուոր մը վիրաւորուած են : Օգնական ուժեր հասնելով, յաջողած են ահաբեկիչը սպաննել՝ իր ապատամբ – նին մէջ :

Բախումներ կը պատահին նաեւ ամբողջ հողամասին վրայ : Օրանի շրջանին մէջ 36 ըմբոստներ սպաննուեցան : Երկրին կեդրոնական մասին մէջ, զանազան կռիւներէ ետք քանի մօտ ապատամբներ զինաթափ եղան : Կոստանդինի շրջանին մէջ ահաբեկիչներու խմբակի մը դեկավարը ձերբակալուեցաւ :

*Մինչ այս մինչ այն, Ծնունդին առիթով մօտ երեք հարիւր բանտարկեալներ ազատ արձակուին : Միաժամանակ կրճատի պիտի արձակուին : Միաժամանակ կրճատի պիտի արձակուին : Միաժամանակ կրճատի պիտի

ԿՐԹ. ՀԱՐՑԸ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ

Ֆրանսայի երեսփ. ժողովը կարեւոր հարցերու լուծումէն յետոյ պիտի զբաղի կուսակցութեանց ներկայացուցած ծրագիրներով։ Մօտ պիտի առնէն 26 երեսփոխանները, պիտի վիճին աշակերտեան – ներ, որոնք ուսուցման ազատութիւնը կը պահանջեն, ընտանիքին իրաւունքն է որ – դուն դաստիարակութիւնը կրնայ ընտրել, ձախակողմեանները պետութենէն պիտի պահանջեն ամբողջական պետականացում կրթութեան, որովհետեւ կ'ընդունին, որ դաստիարակութիւնը կը պատկանի մի – միայն պետութեան։

Ձախակողմեանները կը պահանջեն Սահմանադրութեան դործադրութիւնը. «Պետութեան պարտաւորութիւնն է ա – պահովել տղուն եւ չափահասին կրթու – թիւնը եւ մշակոյթը»։ Կը պահանջեն ձրի եւ պարտաւորիչ կրթութիւն վեցէն տասեւութ տարեկան։ Դպրոցական ընթացքը պիտի բաժնուի երեք շրջաններու. — տարրական, վեցէն 11 տարեկանին, տալու համար բոլոր տղոց հիմնական ծանօթութիւններ։ Երկրորդ շրջանին, 11էն 15 տարեկանին պիտղութեան եւ ուղղութեան շրջան մը, ուր պիտի որոշուի որդուն հետեւելիք ուղղութիւնը, պատեհութիւն տալով ընտրութիւն կատարելու ճիւղերուն մէջ։ Վերջին շրջանին, 15էն 18 տարեկանին, տղան պիտի հետեւի դործնական բաժինի մը, պիտի սորվի արհեստ տեսական եւ դործնական։

Ամէն վայրի մէջ պիտի հիմնուին մանկանոցներ երկուքէն վեց տարեկաններու համար։ Մանկական դասարան մը պիտի հիմնուի հոն, ուր դոնէ 15 տղայ կայ։ Իւրաքանչիւր դասարան պիտի ունենայ 30 աշակերտ, երկու տարի յետոյ առաւելագոյն 25 աշակերտ։ Դպրոցէն յետոյ պատանին երկու տարի ալ պարտաւորա – բար պիտի յաճախէ մասնաւոր վարժարաններ, ընդհանուր եւ արհեստական ուսում առանալու համար։

Ուսուցման նոր ծրագրի համաձայն, պատրաստուած ուսուցիչներ անհրաժեշտ են, ուստի կ'առաջարկուի բարեփոխել վարժապետանոցներու ծրագիրը եւ ուսուցման մեթոտները։

Հիմնական պահանջ է ուսուցման բա – ցարձակապէս ձրի ըլլալը ամէն աստիճանի։ Այս նպատակին համար կրթութեան յատկացնելու է ազգային պիւտճէին մէկ վեցերորդը։ Ուսուցման հիմ պիտի ըն – դունուի մայրական լեզուն, որ «աղգային իրականութեան հաստատող տարր է»։ Դպրոցը պէտք է ըլլայ աշխարհիկ, պարտաւոր է պատրաստելու բնապաշտ եւ քննադատ մտածումը, տղան սորվելու է դարաւոր պայքարները, ոչ թէ թագաւորներու այլ բնութեան եւ ընկերութեան վիճակը բարելաւելու համար մղուած պայքարները։

Ձախակողմեանները բացատրելու համար իրենց ներկայացուցած ծրագիրը կը վերադառնան ծանօթ բանաձեւին, սերտ առնչութիւն կայ արտադրող ուժերու եւ արտադրութեան միջեւ ընկերային տեսակէտով։ Աւատապետական շրջանին արտադրող միջոցները տակաւ էին, ուստի չկարողացան յարմարիլ նոր արտադրութեան պահանջներուն, որոնք զարգացան քաղքենի դասակարգին կողմէ։ Դասակարգի մը ձեռքը կը դտնուի արտադրութեան բոլոր միջոցները, որոնք արդելք են արտադրութեան իսկ, հետեւաբար ամբողջ ընկերութեան։

Ընկերվարական մեծ տեսաբանը չէր ուրանար քաղքենի դասակարգի դերը տնտեսական զարգացման մէջ։ Ձախակողմեանները ամէն աշխատանք կը ժխտեն եւ հակառակ ընկերային յառաջդիմութեան, ճարտարարուեստի զանազան ճիւղերու պետականացման, կը պահանջեն որ աշխատաւոր դասակարգի սեփականութիւնը դառնայ իր բոլոր արտադրութիւններուն։ «Դպրոցական հարցը մասնագիտական վիճաբանութիւններէ աւելի դետեղելու է դասակարգային պայքարի պատմական դետնին վրայ»։ Մինչդեռ կրթական ծրագիրը մը իր սեփական դետինին վրայ քննուելու էր։

Համաչափար կուսակցութիւնը կը պահանջէ նաեւ վճարում 15էն 18 տարեկաններուն երբ արհեստներու դպրոցներ կը յաճախեն, կրթաթոշակներ համալսարանական ուսանողներու։ Այս ամէնը կը միացնեն քաղաքականութեան։ Պետութիւնը կը յայտնէ, թէ կրթական պիւտճէն բաւարար չէ։ Հարկ է ուրեմն, որ «Ֆրանսական քաղաքականութիւնը փոխէ իր ուղղութիւնը»։

Նախարարական ծրագրիը կ'ընդունի արդէն ձրի կրթութեան առաջարկը մին – չեւ 16 տարեկան (յօդ. 1), բայց այդ պարագային ալ կը պակսին ուսուցիչներ եւ դրամ։ Կառավարութիւնը հպիւ կըրցաւ դեղչել տասը միլիառ պաշտպանութեան պիւտճէէն, որ երկու հազար երեք հարիւր միլիառ է։ Ֆրանսա պարտաւոր է միջազգ. յանձնառութիւնները կատարելու։ Տնտեսական կեանքի բոլոր տարրերը սերտօրէն միացած են եւ տեսաբաններ անկարող են տեսնելու իրականութիւնը։

Կ'առաջարկուի դասարաններու իւրաքանչիւրին աշակերտներուն թիւը 25ի իջեցնել 35էն։ Եթէ այսօր ուսուցիչներ կը պակսին, դասարաններու յաւելումով, կրկին թիւով ուսուցիչներ պէտք են։ Վարժապետանոցները տարին չորս հազար ուսուցիչներ կուտան։ Ուսուցչական միութեան հրատարակած պաշտօնաթուղթով, տարին եօթ հազար ուսուցիչ պէտք է։ Որքան թիւը պակսի, նոյնքան դժուար կ'ըլլայ մրցումներ կատարել եւ որակեալ ուսուցիչներ ընտրել։ Կրթական նախարարութիւնը սահպուհցաւ երկրորդական վարժարաններու չրջանաւարտներէն ուսուցիչներ հրաւիրել, պայմանաւ որ տարի մը վարժապետանոց յաճախեն։ Ասկա կացութեան դարմանում չէ սակայն։

Վարժապետանոցներու թիւն ալ աւելցնելով, պէտք պիտի ըլլայ նոյն դպրոց ներու համար մանկավարժ ուսուցիչներ դտնել։ Բարձրագոյն վարժապետանոց – ներ եւ համալսարաններ բաւարար թիւով ուսուցիչներ չեն պատրաստեր։ Այսօր վարժապետանոցներու ուսուցիչներուն թիւը 1200 է, անհրաժեշտ կը նկատուի կրկինը։

«Ֆիկարօ» թերթը լսելէն եւ յուսահատութեան դէմ արտայայտուած էր։ Համակարծիքները Մարքսի եւ Էնկէլսի անունով պաշտպան կը կանչեն դասական լեզուներուն, որովհետեւ «լատին եւ յոյն լեզուներու ջնջումով մշակոյթը յետ չջրեմ մը պիտի ունենայ»։

Ընկերվարականներ կ'ընդունին թէ «անհաւասարութիւնները բնական են, դպրոցը ընդհանրացնելով կրթութիւնը, զարգացնելով իւրաքանչիւր անհատի ընդունակութիւնները, հետզհետէ հաւասարութիւնը պիտի հաստատուի»։ Համայնավարներ կը մերժեն ընկերվարական տեսակէտը։ Անհաւասարութիւնները բնական չեն, այլ ընկերային միջավայրի արդիւնք։ «Անհաւասարութիւնները պիտի հարթուին, պրոլետարական յեղափոխութեամբ»։

Հաւանական է, որ համաձայնութիւն դոյանայ ծրագրի փոփոխութեան չուրջ, որովհետեւ ամէնէն դիւրինն է։ Անկարելի պիտի ըլլայ լուծել պիւտճէի հարցը, ուսուցիչներու եւ ամէն աստիճանի ուսուցիչներու հարցը, չէնքերու չինութեան, դասարաններու յաւելման եւ իւրաքանչիւր դասարանի 25 աշակերտով կազմուելու հարցերը։

Ե. ԳԱԲՐԻԿԵԱՆ

ՕՐՈՒԱՆ ՇԱՐԺՈՒՄԻՆ ՀԵՏ

ԴԺՈՒԱՐ ԵՐԿԸՆՏՐԱՆՔ

Միջին Արեւելքի մէջ արեւմտեան դաղափակաութեան դժուարին կացութեան մասին կ'ամփոփեմ Ձ. Օլսոփի մէկ յօդուածը, դաղուած՝ «Նիւ Եորք Հերալտ – ին»էն։

Կրեմլին արդէն իսկ խոստացած է ա – րաբական չահերը պաշտպանել՝ ընդդէմ Իսրայէլի։ Եթէ Ռուսերը իրենց այս խոստումը յարդեն, ամերիկացի քաղաքագէտները իրենք զիրենք պիտի դտնեն Ա – մերիկեան արտաքին քաղաքականութեան ամէնէն դժուարին երկընտրանքներէն մէկուն դիմաց։ Այս երկընտրանքը ոչ միայն դժուար պիտի ըլլայ, այլ նաեւ ճակատագրական։ Արդարեւ, եթէ Ռուսերը առաջարկեն աշխարհի քարտէսին վրայէն ջնջել Իսրայէլի անունը, եւ եթէ Ամերիկան ու Արեւմտեան միւս երկիրները հակառակին այս ծրագրին, հետեւանքը այն պիտի ըլլայ, որ արեւմտեան բոլոր կենսական չահու ապրիւրները մէկ օրէն միւսը պիտի դադրին դոյութիւն ունենալէ՝ արաբական աշխարհին մէջ։

Կրեմլինի քաղաքականութիւնը կը ձգտի երկու սուրի մէջ դնել արաբական այն բոլոր երկիրները որոնց կառավարութիւնը արեւմտեան քաղաքականութեան կը հետեւի, բայց ժողովուրդը կ'ուզէ տեսնել Իսրայէլի քայքայումն ու ընաջնջումը։ Ցորդանանի, Իրաքի, Սէուտական Արաբիոյ եւ նման այլ երկիրներու կառավարութիւնները կրնան մէկ օրէն միւսը ընդունիլ, որ Ռուսիա դառնայ հակա–իս – րայէլեան իրենց դատին ախոյեանը։ Սէուտական Արաբիա արդէն իսկ կը պատրաստուի այդ քայլը առնելու։ Միւսներն ալ անկասկած կրնան հետեւիլ այս օրի – նակին, եթէ Արեւմուտք չպատրաստակ պաշտպանել Իսրայէլը, մինչ Ռուսերը օրն ի բուն յարձակում կը գործեն անոր վրայ։

Կրեմլին կը հասկնայ, թէ Միջին Արեւելքի քարտէսին վրայ Իսրայէլի գոյութիւնը աւելորդ է։ բայց խորհրդային քաղաքականութեան հետապնդած բուն նը – պատակը ոչ թէ Իսրայէլի ընաջնջումն է, այլ՝ Արաբներու համար այդ չլացուցիչ հետանկարին չնորհիւ, Արեւմուտքի բա – ընկած մնացած արաբական երկիրներու կառավարութիւնները վար առնել ու ա – նոնց փոխարէն Սուրիոյ օրինակով նոր կառավարութիւններ տեղադնել է։

Հետզհետէ հասունցող տագնապը լիո – վին հասկնալու համար, անհրաժեշտ է յետադարձ ակնարկ մը նետել անցնող տասը տարիներու պատմութեան վրայ։ 1947ին, ՄԱԿի մէջ Պաղեստինի մասին որուած որոշումը չափազանց անհետաքրքրական կերպով պատրաստուած էր։ Արդարեւ, ՄԱԿի ժողովը, Պաղեստինը այդ թուականին բաժնեց արաբական փոքրիկ կառոյներու եւ հրէական նոյնքան փոքր բաժիններու։ Արաբական երկիրները պատերազմ հռչակեցին՝ բաժանումը արգիլելու համար։ Պատուհասեցան։ Հետեւանքը այն եղաւ, որ Իսրայէլ գրաւեց ՄԱԿի կողմէ Արաբներուն տրուած բաժիններուն մեծ մասը։

Այդ թուականէն ասդին, Արաբները կը պահանջեն «1947ին ՄԱԿի գծած սահմաններուն վերադարձ»ը։ Այս պահանջն է ա – հա, որ Ռուսերը կը պաշտպանեն, եւ որ կրնայ չատ օրինական ու տրամաբանա – կան թուիլ, քանի որ հիմնուած է ՄԱԿի որոշման վրայ։

Բայց 1948էն ի վեր, մէկ ու կէս միլիոնէ աւելի Հրեաներ Պաղեստին ներգաղթեցին աշխարհի ամէն կողմէն։ Իսրայէլ անկասկած կրնայ հետեւիլ այս օրի – նակին, եթէ Արեւմուտք չպատրաստակ պաշտպանել Իսրայէլը, մինչ Ռուսերը օրն ի բուն յարձակում կը գործեն անոր վրայ։

Կրեմլին կը հասկնայ, թէ Միջին Արեւելքի քարտէսին վրայ Իսրայէլի գոյութիւնը աւելորդ է։ բայց խորհրդային քաղաքականութեան հետապնդած բուն նը – պատակը ոչ թէ Իսրայէլի ընաջնջումն է, այլ՝ Արաբներու համար այդ չլացուցիչ հետանկարին չնորհիւ, Արեւմուտքի բա – ընկած մնացած արաբական երկիրներու կառավարութիւնները վար առնել ու ա – նոնց փոխարէն Սուրիոյ օրինակով նոր կառավարութիւններ ստեղծելն է։

Հետզհետէ հասունցող տագնապը լիո – վին հասկնալու համար, անհրաժեշտ է յետադարձ ակնարկ մը նետել անցնող տասը տարիներու պատմութեան վրայ։ 1947ին, ՄԱԿի մէջ Պաղեստինի մասին որուած որոշումը չափազանց անհետաքրքրական էր։ Արդարեւ, ՄԱԿի ժողովը, Պաղեստինը այդ թուականին բաժնեց արաբական փոքրիկ կառոյներու եւ հրէական նոյնքան փոքր բաժիններու։ Արաբական երկիրները պատերազմ հռչակեցին՝ բաժանումը արգիլելու համար։ Պատուհասեցան։ Հետեւանքը այն եղաւ, որ Իսրայէլ գրաւեց ՄԱԿի կողմէ Արաբներուն տրուած բաժիններուն մեծ մասը։

Այդ թուականէն ասդին, Արաբները կը պահանջեն «1947ին ՄԱԿի գծած սահմաններուն վերադարձ»ը։ Այս պահանջն է ա – հա, որ Ռուսերը կը պաշտպանեն, եւ որ կրնայ չատ օրինական ու տրամաբանա – կան թուիլ, քանի որ հիմնուած է ՄԱԿի որոշման վրայ։

Բայց 1948էն ի վեր, մէկ ու կէս միլիոնէ աւելի Հրեաներ Պաղեստին ներգաղթեցին աշխարհի ամէն կողմէն։ Իսրայէլ

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՀԻՆ ԴԷՄՔԵՐ

ՄԻՔԱՅԷԼ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

—o—

Հայ բեմերու վրայ դանուած են դե – րասանները որոնք հոյակապ կերպով խա – դացած են Ֆրանցի դերը։ Ստեփաննոս Սաֆրազեան, Գէորգ Պետրոսեան։ Արշաւիր Շահխաթունի եւ տակաւին ուրիշներ, սակայն ո՛չ ոք կարողացած է հասնիլ Մանուէլեան – Ֆրանցի կոթողային բարձրութեան։

Երեք տարի չարունակ, Միքայէլ Մանուէլեան զանազան վայրերու մէջ կը խաղայ 25 նոր դերեր, մինչեւ որ ձեռք կը զարնէ ուրիշ կոթողային գործի մը՝ Շէյքսպիրի «Վենետիկի վաճառականը»ին մէջ Շէյլոքի դերին։

Այդ դերով եւս, Միքայէլ Մանուէլեան կը տանի մեծ յաղթանակ, գլխով ու անցնելով բազմութեանց վրայ Ֆրանցի դերով գործած իր ազդեցութիւնները։

Հայ հեղինակներու գործերուն մէջ Միքայէլ Մանուէլեանի լաւագոյն ստեղծագործութիւնը իրաւամբ կը նկատուի Շանթի «Հին Աստուածները»ու Կոյր – Վանականը։

Այդ դերով իր առաջին անդամ երեւելուն առթիւ, հետեւեալը կը գրէ ականաւոր մը, Ս. Սարգսեանի «Միքայէլ Մանուէլեան» հատորին մէջ. —

«Նրա կլասիկական գլիմը՝ սեւ անթիկ կատրով, նրա մեծ, երկար զաւազանը, որի վրայ նա յենւում էր, նրա ձայնը՝ խիստ, այրող, խոր թափանցող, ընդհանուր եւ չեչտաւոր, հենց առաջին անգամից մեխեցին դէպի ինքը ամբողջ դահլիճի ուշադրութիւնը։

«... Միքայէլ Մանուէլեանին տեսել ենք չատ եւ չատ դերերի մէջ, սակայն ոչ մէկում նա այնքան ամբողջական, միաձոյլ եւ կլասիկ չի եղել, որքան Կոյր – Վանականի դերի մէջ։ Դա նրա գլուխ – գործոցն է»։

×

Միքայէլ Մանուէլեան երկու անգամ այցելած է Պոլիս։

Առաջին անդամ, Օսմանեան Սահմանադրութենէն եառ, Արէլեան – Արմենեան խումբով, եւ երկրորդ անդամ՝ 1912ին, Զարիֆեան – Սեւումեան խումբով։

Միքայէլ Մանուէլեան այս երկրորդ այցելութեան ընթացքին, խումբին ակտիւ մէկ անդամն էր։ Խումբը թէեւ կը կոչուէր Զարիֆեան – Սեւումեան անուն, սակայն իրականին մէջ այս երկու թանկագին անուններուն քով Միքայէլ Մանուէլեան արտակարգ փայլով մը ճառագայթելուն պատճառաւ, երեք անունները կը կազմէին հազուագիւտ երրորդութիւն մը։

Իր այս երկրորդ այցելութեան ընթացքին, Մանուէլեան Պոլսահայ հասարակութեան կը ներկայանայ իր Շէյլոքով եւ կը հիացնէ ու կը կախարդէ ամբողջ պոլսահայութիւնը։

Այդ առթիւ, օրուան մամուլը կ'արտայայտուի հետեւեալ կերպով.—

«Շէյլոքի տիպարը տարբեր է։ Անիկա իրականութեան մէջ չօշափելի, ապրող տիպար մըն է, եւ ոչինչ չափազանցուած է այդ դերին մէջ։ Ընդհակառակն, չափազանցութիւն կամ ակարութիւն խաղարկութեան առեն կը սպառնան ծիծաղելիութեան մը վերածել այդ դերը։ Ուրախ ենք որ, Պ. Մանուէլեան չատ յաճող Շէյլոք մը տուաւ մեզի։ Անխառն համոյք մըն էր տեսնել դինքը այդ դերին մէջ, միակ մեծ դերը, որ կը կատարէր այս անդամ, Պոլիս այցելելէն ի վեր։ Ընչաքաղց, արիւնաքամ, անդդամ վաչխառուի մը կատարեալ պատկերացումն էր սկիզբէն մինչեւ վերջը, յետին մանրամասնութիւններուն մէջ անդամ, եւ սրբատաշ ծափահարեցինք դինքը ...»։

Պոլսոյ մէջ Միքայէլ Մանուէլեանի Շէյլոքի «Կործանուած»ին մէջ Հրանտի դերը խաղալուն առթիւ, Վահան Թէքէեան ընդարձակ կերպով վերլուծելէ եառ հայ մեծ դրամատուրգին այս գործը, մէկիկ մէկիկ կանդ առնելով իւրաքանչիւր դերակատարի վրայ եւ գովելով անոնց բարձր արուեստով խաղը, առանձին հիացումով կ'արտայայտուի Միքայէլ Մանուէլեանին մասին, գրելով. —

«... Միւսը՝ Պ. Մանուէլեանն է, անթերի իբրեւ Հրանտ, եւ ի՞նչ ստեղծում, գեժան, մռայլ անիշխանականի։ Արուեստն ու բնականութիւնը այնքան մի – այն կրնան իրարու մէջ ձուլուիլ, նոյնանալ ...»։

×

Իմ նիւթիս մէջ չի կրնար մտնել Միքայէլ Մանուէլեանի դրագէտի հանդամանքը։ Իմ նպատակն է ներկայացնել դերասան Միքայէլ Մանուէլեանը, աւելի ձեռնհասներու թողլով խօսիլ անոր դրական վաստակի մասին։ Աւելորդ չեմ նկատեր սակայն յիշեցնել այստեղ որ մեծանուն դերասանը հայ թատերական խաղացանկին տուած է կարգ մը գործեր, որոնց – մէ «Հէքեաթ»ը բազմիցս անդամներ ներկայացած է արեւելահայ թէ արեւմտահայ բեմերուն վրայ։

Իր բովանդակ կեանքի ընթացքին Միքայէլ Մանուէլեան խաղացած է մեծ ու պզտիկ 150է աւելի դերեր։

ԱՐՏԱՇԷՍ ԳՄԲԻԹԵԱՆ

(3 Շար.)

ԿՅՈՒՆՔԻ

Թ.

ԱԺԱՎՍՈՒ ՏՂԱ ՎՉ ԱԼԱՎՍՈՒ Ի ՏՂԱ

Ասիա — դարձյալ մի մեծ մայրցամաք է, որ ունի 17 միլիոն քառակուսի մղոն տարածություն և 800 միլիոն բնակիչ։ Ասիան ամենամեծ մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենահին մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենաբնակեցված մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենաբարձր մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենաոսկեհանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենանավթահանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենաբրնձահանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենաթեյահանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենաբամբակահանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենամետաքսահանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենաքարածխահանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենաերկաթահանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենաարծաթահանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենաոսկեհանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենաադամանդահանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենաքարահանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենաավազահանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենահողահանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենաջրահանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենաօդահանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենաերկնահանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենաերկրահանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենաերկրագնդահանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենաարեգակնահանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենալուսնահանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենաաստղահանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենագալակտիկահանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենաանսահմանահանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենաանհունահանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենաանվերջահանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենաանծայրահանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենաանհատակահանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենաանհիմնահանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենաանպատճառահանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենաանբացատրելիահանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենաանհասկանալիահանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենաանիմանալիահանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենաանճանաչելիահանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենաանգիտելիահանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենաանտեսանելիահանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենաանլսելիահանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենաանզգալիահանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենաանհոտելիահանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենաանճաշակելիահանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենաանշոշափելիահանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենաանկշռելիահանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենաանչափելիահանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենաանհաշվելիահանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենաանթվելիահանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենաանհամարելիահանք մայրցամաքն է աշխարհի։ Ասիան ամենաանհամր

ՀՈԳԵՀԱՆԳՍՏ

Ալբ. Տիկն Ս. Տիկնեան, Տէր եւ Տիկին Ս. Տիկնեան իւրեանց գոհ զաւակներուն եւ հարազատներուն հետ կը հաղորդեն իրենց սիրելի հօր, պապուն եւ նախապապին

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ

Ս. Ծ. Ս. Ս. Ս

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 — Téléph. : PRO. 86 - 60
R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա եւ գաղութներ, տարեկան 3000 ֆր. վեցամս. 1600
Արտասահման՝ տարեկան 3500 ֆրանք: Հատը 12 ֆր.

ԿԻՐԱԿԻ
22
ԴԵԿՏԵՄԲԵՐ
DIMANCHE
22 DECEMBRE
1957

33ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8075 — 33e ANNEE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 13ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3876

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՋԻՆԵԱԼ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ

Խաղաղութեան եւ ազատութեան ծառայութեան մարդկութիւնը սրտատրոփ հետեւեցաւ Ալանտեան Ուխտի խորհրդաժողովին, ուր պիտի վճռուէր աշխարհի ճակատագիրը :

Պատերա՞զմ թէ խաղաղութիւն :

Ա՛յս երկընտրանքն էր դրուած նժարին վրայ :

Դադրած են թնդանօթի որոտումները 1945էն ի վեր : Ահազանգը չի հնչեր այլեւս՝ ազդարարելու համար ամէն ժամ ռմբաձիգ օդանաւերու գալուստը, թունդ հանելով ջիդերը : Շատոնց վերցած են պաբենաւորման տոմսերը : Պատերազմ չկայ :

Եւ սակայն կ'ապրինք զինեալ խաղաղութեան չրջան մը :

Նման չրջան մը ապրած է Եւրոպա՝ ամբողջ 44 տարի, 1870 – 71ի Ֆրանք-Պերմանի պատերազմէն մինչեւ համաշխարհային առաջին պատերազմը :

Ալպաս – Լօրէնի կորուստը՝ իրրեւ հետեւանք անիծառունակ պատերազմի մը, չատ ծանր ճնշած էր ասպետական Ֆրանսայի վրայ, որուն գաւակները հայրենասիրական չերմ զգացումներով մեծցան, դպրոցական գրասեղաններէն սկսեալ : Յիշատումները անպակաս էին Պալքաններէ-մէջ եւ այլուր :

Վեց մեծ պետութիւնները, որոնք կը կառավարէին աշխարհը, բաժնուած էին՝ մէկ խմբակցութեանց — երբեմն Զինակցութիւն եւ երբեմն Համաձայնութիւն — դէմ դիմաց կանգնած՝ կը սպառազինուէին խելայեղ վազքով :

« Եւրոպայի ներդաշնակութիւն» ը կը պահպանուէր արուեստական միջոցներով : Կողմերը ամէն ճիգ կ'ընէին չխանգարելու համար խաղաղութիւնը :

Սակայն բաժակը յորդեցաւ ի վերջոյ եւ փոթորիկը պայթեցաւ 1914ին : Անիծ-եալ պատերազմ :

1945ին չորս մեծ դաշնակիցներ չահեցան պատերազմը : Սակայն կո՞նցուցին խաղաղութիւնը :

Դաշնակիցներէն մէկը օգտուեցաւ առիթէն՝ մեծ յառաջդիմութիւն մը արձանագրելու համար դէպի « համաշխարհային յեղափոխութիւն » տանող ճամբուն վրայ, իր թաթին տակ պահելով զրաւեալ հողամասերը, մինչ միւսները զօրացրին ռումբ կատարելով ազատութիւն կը չնորհէին թշնամի տիրապետութեան ենթարկուած երկիրներուն :

Տասներկուքառորդին բաւական չեղաւ հաչտեցնելու արեւելքն ու արեւմուտքը :

Ու պայքարը կը չարունակուի երկուան դաշնակիցներուն միջեւ : Երկու համակոնեակ զաղափարախօսութեանց՝ ազատութեան ու բռնատիրութեան միջեւ (ընչազուրկներու բռնակալութիւն, ըստ մարքսեան վարդապետութեան) :

Ի՞նչ ոճիրներ գործուեցան քառասուն տարիէ ի վեր, որքա՞ն անմեղներ զոհ-ուեցան յանուն համայնավարութեան :

Ալանտեան Ուխտը մարմին առաւ ութ տարի առաջ՝ նոր սպանդներ խնայելու համար մարդկութեան : Խաղաղութիւն եւ ազատութիւն ապահովելու համար աշխարհի : Թումբ կանգնելու համար բոլչեւիկեան ծաւալումին առջեւ՝ դէպի ա-րեւմուտք ու դէպի Միջին Արեւելք : Մանաւանդ արգիլելու համար նոր պատերազմ մը :

« Եթէ կ'ուզես խաղաղութիւն ունենալ, չոր պահէ վառօդդ» կ'ըսէ ժողովրդական իմաստութիւնը :

Ալանտեանի ուխտակիցները կը սպառազինուին, անաւիկ ամբոցներու կ'ուզեն վերածել Եւրոպան, որպէսզի թշնամին երբեւիցէ չփորձուի նոր պատերազմ մը չղթայազերծել :

Արեւմուտքը նոյն ուժգնութեամբ կը պատասխանէ բոլչեւիկեան երկիրներու արտակարգ պատրաստութեանց :

Զինեա՛լ խաղաղութիւն : Կամ « խաղաղ համակեցութիւն » :

Ո՛րքան ալ երկար տեւէ այս չրջանը, ճակատագրօրէն օր մը անպայման վերջ պիտի գտնէ անիկա :

Ու մարդկութեան աղէտը պիտի սկսի այդ օրը :

ՀՐԱՆՏ – ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՖՐԱՆՍԱՑԻ ՆԵՐՔԻՆ ՀՈԳԵՐԸ

—o—

Ալանտեան Ուխտի ժողովը հաղիւ վերջացած, կառավարութիւնը ձեռնարկած է արդէն ելմտական եւ տնտեսական իր ծրագիրներուն իրագործման :

Ինչպէս պրած էինք, Ազգ. Ժողովը 191ի դէմ 264 ձայնով վաւերացուց արդէն 1958ի պիւտճէն : Երկմառօտ ալ նախարարական ժողով մը գումարուեցաւ, մանաւանդ պիներու հարցին քննութեան համար : Ինչպէս ծանօթ է, կառավարութեան մեծագոյն մտահոգութիւնն է ներկայիս պիները խնդիրը :

Կայ նաեւ այլ պարագայ մը. ներածում եւ արտածում : Սկիզբէն ի վեր նախապարները կը մտածեն հաւասարակչռել ապրանքներու առուծախը՝ արտասահմանի հետ :

Տնտեսական նախարարութեան քարտուղարը ծրագիր մը պատրաստած է նեռածման համար : Եթէ այս ծրագիրը ընդունուի, 1958ի ընթացքին 1700 միլիառի ներածում պիտի ըլլայ : Յառաջիկայ տարուան երկրին տնտեսական հաւասարակշռութիւնը պահելու համար՝ նուազագոյն պոյն ծրագիր մըն է պատրաստուածը :

Այսուհանդերձ, ծրագիրը վաւերացնելէ առաջ խորհրդակցութիւններ պիտի ըլլան. Ֆրանսա կը մտածէ դուրսէն փոխառութիւն մը ընել : 450 – 500 միլիոն տոլարի փոխառութիւն մը պէտք է ընել՝ այս ծրագրին յաջողութեան համար : Եթէ սակայն ձախողութեան մատնուի, երկրին տնտեսութիւնը ամբողջութեամբ պիտի խանգարուի :

ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Վարչապետ Ֆելիքս Կայեառ կարդ մը յայտարարութիւններ ըրաւ ուրբաթ դիչեր՝ ձայնասփիւռէն եւ հեռատեսիլէն : Ալանտեան Ուխտի ժողովին հաչուեկշիռը ներկայացնելով, Վարչապետը գոհունակութիւն յայտնեց. — Յարդ մեր պարտաւորութիւնները միայն դիներուն կան էին : Ժողովին մէջ համաձայնեցանք կրկին՝ դիմագրաւելու համար որեւէ վտանգ՝ որուն սպառնալիքին տակ կը գտնուինք արդէն :

Կայեառ « վտանգ»ին մասին խօսելով, ըսաւ թէ անիկա Եւրոպայի արեւելեան չրջանէն չէ որ կուգայ, այլ՝ Միջին Արեւելքէն՝ ուղղակի եւ Ափրիկէէն անուղղակիօրէն : Զեկոյցին մէջ ըսուած է արդէն, թէ որքան կարեւորութիւն կը ներկայացնենք այդ չրջաններուն :

Նախագահ Այզընհաուըրի մասին խօսելով, Վարչապետը ըսաւ թէ ան չէ մոռցած թէ հրամանատար եղած է բանակներու՝ որոնք ազատագրած են Ֆրանսան : Նախագահը, ըսաւ Կայեառ, բարեկամական վերաբերում ունի : Արտաքին նախարար Տըլլըս հարազատօրէն բացատրեց Այզընհաուըրի միտք բանին :

Առջի օր, Արտաքին նախարար Փինոյի դրասենեակին մէջ Եւրոպայի վեց երկիրներու Արտաքին նախարարներու ժողով մը գումարուեցաւ : Կը մասնակցէին՝ Ֆրանսայի, Գերմանիոյ, Իտալիոյ, Պելժիոյ, Հոլանտայի եւ Լիւքսէմպուրկի ներկայացուցիչները : Երեքուկէս ժամ վիճեցէք եղաք, Արտաքին նախարարները որոչեցին դարձեալ հաւաքուիլ Փարիզի մէջ, Ցունուար 6 – 7ին :

Հրատարակուած է կարճ դեկոյց մը, որ կը յայտնէ թէ նախարարները կարծիքի փոխանակութիւններ ունեցած են, առանձին առիթով : Իւրաքանչիւրը պարզած է իր տեսակէտը : Որոչում մը տալէ առաջ, նախարարները յարմար սեպած են խորհրդակցութիւն ունենալ իրենց կառավարութիւններուն հետ : Հետեւաբար, կը սպասուի Ցունուար 7ին :

Օր ըստ Օրէ

ԽՕՍՈՒՄ Է ԵՐԵՒԱՆԸ ...

«Խօսում» է դարձեալ Երեւանը, թոռ-ուբոռով, փողով՝ ու թմբուկով :

«Հայկական պետական ռատիոկայան»ը յաչորդական ձայնասփռումներ կատարեց «Արտասահմանի Հայերի»ն համար. (առաջինը՝ Դեկտեմբեր 12, եշ. օր, երկրորդը՝ Դեկտեմբեր 15, կիրակի գիշեր) :

Ի՞նչ կ'ուզէ որ ներկայացուցած ըլլայ «պետակա՞ն» մեր ձայնասփիւռը՝ տարահալած բազմութիւններուն : Կապուտիկ-եանէն բանաստեղծութի՞ւն մը կարդացած է խօսնակը, հայրենական յուշեր արթնցնելու համար սրտերու մէջ, թէ՞ հատուած մը ներկայացուցած է «Դաւիթ բէգ» օփերայէն, հոգիները ազնուացնելու համար :

Ընդհակառակն :

Փորձած է հոգիները պղտորել, կիրճերը գրգռել, պառակտումը խորացնել :

« Արտասահմանի Հայերի»ն համար Երեւանի ձայնասփիւռը ներկայացուցած է Դաշնակցութիւնը եւ Դաշնակցութեան գործունէութիւնը՝ գաղթաշխարհի մէջ.. աւելորդ է ըսել՝ թէ ի՛նչ լեզուով : Բաւարարուիլ, յայտնելով, թէ հայկական պետակա՞ն մեր ձայնասփիւռը, հայկական թիւով ու որակով մեծագոյն կազմակերպութեան մասին, արտերկրի իր ունկնդիրներուն յայտնած է կարծիքը .. Խալէտ Պէկթաշի, որ ուրիշ մէկը չէ, եթէ ոչ Սուրիոյ համայնավար պարագլուխը : Հարցը այն չէ, թէ արտասահմանի Հայերը «արտասահմանցի» Պէկթաշի մը կարծիքներո՞ւն պէտք ունէինք-աշնակցութեան պատմութիւնն ու գործունէութիւնը իմանալու համար, այլ՝ հարցը այն է, թէ Երեւանը *օտար* աղբիւրներու կը դիմէ, իր հարազատներուն ներկայացնելու համար իր ... հարազատները :

Կար ժամանակ մը, երբ « հայկական պետական ռատիոկայան»ը « արտասահմանի Հայերի»ն համար տեղեկութիւններ կուտար հայրենի երկրէն, հայրենի երգեր կը ձայնասփռէր եւ բանաստեղծութիւններ, որոնք հանոյքով, ու, ինչո՞ւ չէ, հոգեկան խորունկ հրճուանքով կ'ունկնդրուէին. չէ՞ որ, վերջապէս հայրենի երկրին գեղեցկութիւնները կը բերէին անոնք, հոգ չէ թէ ալիքներու ճամբով :

Ի՞նչ ըսել սակայն այս գրգռութիւններուն, որոնք ուրիշ նպատակ չունին, եթէ ոչ ե՛ւս առաւել պառակտել ցրտահար սրտերը :

Եթէ նիւթ չունէինք, կրնայինք գոնէ հաղորդել «Արտասահմանի Հայերի»ն, թէ քանի՞ ծառ տնկեցին, իրենք, սոցիալիզմ ... Տնկողները, «նոր ժամանակաշրջանում » ... :

ԱՐՄԵՆԱԿ

ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ԻՆՏՈՆԵԶԻՈՅ ՄԷՋ

Ինչպէս պրած էինք, յայտարարուած էր թէ Ինտոնեզիոյ Նախագահը՝ Սոքարնօ, արտասահման պիտի անցնի՝ հանդստանալու համար : Թուականն ալ որոչուած է ներկայիս — Ցունուար 5 : Հանրապետութեան նախագահը պիտի փոխարինէ Ինտոնեզիական Ժողովրդարանի նախագահ Տոքթ. Սարթօնօ, որ այս ուղղութեամբ երդման արարողութիւն մըն ալ ըրաւ :

Արարողութիւնը տեղի ունեցաւ Նախագահ Սոքարնոյի ներկայութեան, մինչ բանակը խիստ հսկողութիւն կ'ընէր Ժողովրդարանին չրջակայքը :

Ժողովրդարանին մէջ, Նաւատորմի նախարարը յայտարարեց, թէ Ժ. Միութիւն 140 միլիոն տոլարի նաւեր պիտի տայ Ինտոնեզիոյ : Նաւերուն մեծ մասը ռուսական պիտի ըլլայ : Ինչպէս ծանօթ է, Ինտոնեզիա ցարդ կը մտածէր ճախընդն ստանալ իրեն պէտք եղած նաւերը՝ արշիպելագոսին մէջ երթեւեկը կանոնաւորելու համար. Թոքիօ մերժեց պոհացում տալ այդ պահանջքին՝ այնքան առեն որ պատերազմի վնասներու հատուցման համաձայնագիր մը չէր ստորագրուած երկու երկիրներուն միջեւ :

Մինչ այս մինչ այն, Սէյլէպի հարաւային չրջանին մէջ ինտոնեզիական բանակին չրջանին մէջ կ'աչխատի զսպել ապստամբական չարժումի մը, որ բնակչութիւնը ահաբեկած է : 32·000 պիւզացիներ ապաստանած են արդէն ապահովութեան կեդրոններուն մէջ : Ապստամբներուն գործունէութիւնը այնքան մտահոգիչ դարձած է, որ օդանական ուժեր ղրկուած են բանակին : Չինուորական բանբեր մը յայտարարեց, թէ բանակը կացութեան տէրն է :

—o—

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՄՈՍԿՈՒԱՅԻ Գերագոյն Խորհուրդին հրամանագիրով Գողով նչանակուած է Ռուսական Դաչնակցային Հանրապետութեան Վարչապետ : Յարդ այդ պաչտօնը կը վարէր Եասնով, որ իր յաջորդին օգնականը եղաւ :

ՀՈՒՆԳԱՐԻՈՅ 1956ի ապստամբութեան ընթացքին, Իմրէ Նակիի կառավարութեան Պատերազմական նախարար Փալ Մալեթէր կը պահանջէր որ ռուսական բանակը հեռանար Հունգարիայէն. ասոր վրայ ձերբակալուեցաւ եւ բանտարկուեցաւ : Ներկայիս, Մալեթէրի երեք տղաքը նամակ մը ղրած են մառեչալ Բուլգանին, որ միջամտութիւն մը ընէ, ի նպաստ իրենց հօր :

ԱԼԺԵՐԻՈՅ Թունուզեան սահմանադրութիւնը վրայ ծանր բախում մը եղաւ բանակիններու եւ ապստամբներու միջեւ : Ըմբոստները 71 հոգինոց խումբ մը կը ներկայացնէին, որոնց 70 հատը սպանուած է եւ մէկն ալ՝ ձերբակալուած : Բազմաթիւ դէնքեր գրաւուած են : Բանակայինները երեք զոհ եւ 16 վիրաւոր տուած են :

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳԵՐՄԱՆԻՈՅ կառավարութիւնը օդանաւային պաչտպանութեան ծրագիր մը կը պատրաստէ՝ Ալանտեան Ուխտի ժողովին հետեւանքով հաւանական վտանգի մը առաջքն առնելու համար :

ՄՈՍԿՈՒԱՅԻ ձայնասփիւռը Անգլիոյ Արտաքին նախարար Լոյտի մասին խօսելով, յայտարարեց թէ անգլիական կառավարութիւնը Ժ. Միութեան հետ բարեկամական յարաբերութիւններ ստեղծելու նպատակ չունի :

ՊԵԼԿՐԱՏԻ մամուլի գործակալութիւնը կը հաղորդէ թէ հունգարացի չորս երեսփոխաններ իրենց հրաժարականը ներկայացուցած են, Խորհրդարանի վերջին ժողովին մէջ : Հրաժարման պատճառները ծանօթ չեն :

(Լուրերու շար.ը կարդալ Դ. Էջ)

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Մարմարա օրաթերթը Դեկտեմբեր 13–ին կը հաղորդէր թէ Պոլսոյ Հայոց Պատրիարքը « ծայրագոյն վարդապետի» աստիճան պիտի տայ... եպիսկոպոսի մը , որ նոր կը վերադառնար Էջմիածնէն , ուր գացեր էր եպիսկոպոսանալու , ինչպէս օրէնք է :

Պոլսոյ հայ ժողովուրդը... կատակ կարծեց այս լուրը : Ոմանք «հինգերորդ դասարանէն չորրորդ իջնելու պէս բան մը» համարեցան , բայց եւ այնպէս ուղեցին հասկնալ թէ... «ինչո՞ւմն է բանը» : Մարմարա կ'աւելցնէ թէ « մեր ժողովուրդը կ'ուզէ սորվիլ եւ դիտէ սորվիլ» , նոյնիսկ ... մանիէրիստներու «մխիթարնին» :

Հետաքրքիրները պոհացնելու համար , Պատրիարքարանէն կը թելադրուի կարդալ՝

Ոչ թէ Պոլսոյ նախընտիր աշակերտին յանձնարարութիւնը . — « Զեռս վազ – վազակի յուրուք վերայ մի' դնիցես » (Ա. Տիմ. Ե. 22) :

Ոչ թէ Ներսէս Շնորհալի կաթողիկոսին նշանաւոր «Թուղթը» (էջ 125 , տպ. Վենետիկ) .— « Զանարժանս յառաջ կոչել յաստուածայնոցն սպասաւորութիւն՝ ի կո – րուստ կոչողացն եւ կոչեցելոցն , եւ զարժանաւորս յետս կացուցանել , զպիղծս իբրեւ զսուրբս , եւ զսուրբս իբրեւ զպիղծս վարկանելով» , (կ'արժէ կարդալ այս «Թուղթը» ամբողջութեամբ) :

Ոչ ալ Հնգամատեանը .— « Մի' մատիցէ մատուցանել պատարագ Աստուծոյ ... այր կաղ կամ կոյր կամ կարճունչ կամ ականջատ , կամ այր ձեռնբեկ կամ ոտնբեկ , կամ սապատողն կամ չիլ կամ պըզակն , կամ այր՝ յորում իցէ քոս կամ քաղցկեղ կամ միւորձի» (Ղեւտ. ԻԱ. 18) :

Այլ Օրմանեանի Հայոց Եկեղեցին , — որ արժանացած է բազմաթիւ տպագրու – թեանց , փոյթ չէ թէ ոմանք (Գուէնոս – Այբէս) լեցո՛ւն տպագրական սխալնե – րով , — էջ 154 , ուր գրուած է .

« Վարդապետական աստիճանը , որ աստուածաբանական մագիստրոսութեան համապատասխանող աստիճան մըն է , տըւչութեան առեն ձեռնադրութեանց կերպարանը կ'առնէ : Երկու աստիճաններու կը բաժնուի , փոքր ու մեծ , կամ մանուր ու ծայրագոյն : Այս վերջինը եպիսկոպոսական աստիճանի համանման պատիւներ եւ առանձնաշնորհումներ կը վայելէր երբեմն , երբ քիչերու կը տրուէր այդ աստիճանը : Վարդապետութեան երկու աստիճաններն ալ կը տրուին ծայրագոյն աստիճան ունեցող եպիսկոպոսներու ձեռօվ» :

«Մարմարա»յի բերնով Օրմանեան կարդացողը հարկ կը համարի պարզաբանել Օրմանեանի հայերէնը եւ յայտարարել .

«Վերջին նախադասութենէն կը հետեւի թէ կրնայ պատահիլ , որ վարդապետ մը եպիսկոպոսանայ առանց «ծայրագոյն վարդապետի» աստիճան ունենալու . բայց որպէսզի եպիսկոպոս մը կարենայ վար – դապետական յիշեալ երկու աստիճանները տալ ուրիշի մը , պայման է որ նախ իճ ստացած ըլլայ ծայրագոյն վարդապետի աստիճանը » :

Հիմա մեր կարդն է բսելու .

« Օրմանեանի վերջին նախադասութե – նէն առանկ բան չի հետեւիր , բայց Օր– մանեանի մեկնիչին վերջին նախադասու– թենէն կը հետեւի թէ Ամենայն Հայոց կաթողիկոսը ծայրագոյն վարդապետի աստիճան չունէր որ տար այն եպիսկո – պոսին զոր նոր էր օծեր » :

Մարմարա չբսա՞ւ այս բանը : Պոլսե – ցի՞ն ալ չբսաւ ու ... կլլեց :

Մարմարային լո – լո , Պոլսեցիին լո–լո , մեկի՞ ալ լո–լո :

Արդ , Ամենայն Հայոց կաթողիկոսը «ծայրագոյն վարդապետ» էր՝ երբ եպիս– կոպոս չէր դեռ : Կարդալ «Էջմիածին » ամսաթերթին մէջ , 1950 Մարտ – Ապրիլ թիւը , էջ 86 , ուր յօդուածի մը տակ , որ խորագրուած է «Մեր հարազատ լեզուն» , այժմու կաթողիկոսը տառագրած է «ծայրագոյն վարդապետ» , առաւել եւս՝ կրելով համալսարանական տիտղոս :

Նպատակ չունիմ քննելու թէ ո՞ր ակն ջուր կը խմէ Օրմանեան՝ «վաւերական » բաներ ըսելու համար մեր եկեղեցական աւանդութեանց մասին : Ոչ ալ մատնա – ցոյց ընելու նոյն Օրմանեանին սա պար– բերութիւնը . «Հայ եկեղեցւոյ մէջ հաս– տատուած վարդապետութեան երկու աս– տիճանները , «մանուր» ու «ծայրա – գոյն» վարդապետ , ճշդիւ (?) կը համա– պատասխանեն եւրոպական համալսարան– ներու մէջ տրուած՝ աստուածաբանական դիտութեան արտօնեալի (լիսանսիէ) եւ սպրտրոսը (doctorat) աստիճաննե – րուն» (էջ 186) : Հարկ չեմ տեսներ կար – միր դիծով մը ցոյց տալու հեղնանքը , որ արտայայտուած է այս պարբերութեան յաջորդող տողերուն մէջ : Բայց պարտք կը համարիմ հասկնալ մեր այժմեան պատրիարքին , որ դոց դիտէ Օրմանեանի դիրքը՝ իրրեւ ... եօթներորդ Աւետարան կամ նոր Մաշտոց , թէ կանոնական աւան– դութի՞ւն մը կայ որ Ամենայն Հայոց կա– թողիկոսը նախ եպիսկոպոս ձեռնադրեց եւ օծեց , յետոյ դրկեց Պոլսոյ պատրիար – քին որ ծայրագոյն վարդապետ ձեռնա – դրէ , թէ Ամենայն Հայոց կաթողիկոսը ուրի՛չ պատճառներ ունէր՝ «ծայրագոյն վարդապետի» աստիճան չտալու համար անոր , զոր կ'աստիճանաւորէ այն որ չատ կը հոլովէ մէկ գլուխ եւ մէկ հօտ տա – բաղը : Կարեւորն այն չէ թէ «նախընթաց– ներ» կան «ծայրագոյն վարդապետի» աս– տիճան տալու յետ եպիսկոպոսացման , այլ այն թէ ինչո՛ւ կաթողիկոսը չի տար ու պատրիարքը կու տայ , մէկուն թերին միւսը լրացնելու ձեւով մը՝ մէկ ամիս չանցած , վերադարձի ճամբուն վրայ :

Տեղի չտալու համար նման կեղակար – ծութեանց , լաւ չէ՞ր կամբջադլուխ մը հաստատել Պոլսոյ մէջ , կանոնական ձե– ւով չարունակելու համար ճամբորդու – թիւնը զէպի Էջմիածին այն ջու– րի ճամբային վրայ , որ յա – տուկ է եպիսկոպոսներուն , փոխանակ Էջմիածնէն եառքը ճամբորդութիւնը վեր – ջացնելու Պոլիս՝ հուսկ ու պերազոյն օրհնութիւնը առանալու ձեւով մը :

Այլապէս պիտի պանուին չատեր , որոնք նման փիլիսաժնելը պիտի վերագրեն պե– տոսիկութեան , որ անսովոր էր Արմաչի պղբեվանքին սկեպտիկ աւանդութեանց մէջ , ուրիշներ ... մանիէրիսմի , որ յա – տուկ է առաւելապէս երիտասարդու – թեան , ոմանք ալ՝ «թերին եւ անընդունե– լին» ստուգող եկեղեցական բացառիկ ու բարձրագոյն կարգի մը , որ տրուած է միայն Պոլսոյ Հայոց պատրիարքին :

Վասն զի , եթէ աւանդութիւն դառնայ այս պարագան , ի վերջոյ մեղի կը մնայ սպասել որ Ամենայն Հայոց կաթողիկո – սը , առաւօտ մը , ճամբայ ելլէ Էջմիած – նէն Պոլիս , «ծայրագոյն վարդապետի» աստիճան առնելու համար Պոլսոյ մեր պատրիարքէն կամ օրինականացնելու համար իր «թերին եւ անընդունելին» :

ԱՐԱՋ

ՄԻՏՔ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

ՀԱՅ ԼԵԶՈՒԻՆ ԺԸՆԵՒԻ ՄԷՋ

Ժընեւի համալսարանին դասախօսներէն Փրոֆ. Կոտէլ , որ ծանօթ է իր հայասի– րական ուսումնասիրութիւններով , դըլ – խաւորապէս հրատարակուած Պոլսոյ Հա– յոց Ազգ. Հիւանդանոցին Տարեցոյցին մէջ եւ այլուր , դասախօս նշանակուած է նոյն համալսարանին հայ լեզուի դա – սընթացքին , որ նոր հաստատուած է :

Փրոֆ. Կոտէլի անդրանիկ զաւակը , Վահէ Կոտէլ , Ֆրանսերէնի թարգմանած է Վարուժանի բանաստեղծութիւններէն հատընտիր կտորներ , եւ հրատարակած զուիցերական գրական պարբերաթերթե – րու մէջ :

ՊՈԿՏԱՆ Փ. ՀԱԺՏԵՈՒԻ ԵՒ ԻՐ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Բազմակողմանի հմտութեամբ օժտուած ռումէն մտքի առաջաւոր դէմքերէն մէկն էր Պոկտան Փ. Հաժտեու , որ շարք մը պատմագիտական հետազօտութիւններով սերտօրէն կապուած պիտի մնայ ռումա– նահայ գաղութի անցեալի պատմութեան հետ :

Ծնած է 1838ին , Հոթիւնի Քրիսթինէլթ գիւղը , մօտաւորական ծագումով Փեթրի– չէյդու ընտանիքէն եւ մեռած՝ Քըմփո – նա , 1907ին :

Խարքովի համալսարանը աւարտելէ ետք , Փ. Հաժտեու ինքնագործակցումով կը տիրանայ գիտական ու լեզուաբանա – կան մեծ հմտութեան եւ անդամ կ'ընտ – րուի Փեթրոկրատի ակադեմիային : Իր հայրենիքին մէջ , մինչեւ մահը , նուիր – ուած է դրականութեան :

Փ. Հաժտեու միաժամանակ եղած է դրագէտ , բանաստեղծ , նորավիպագիր , թատերագիր , պատմագէտ , հնաբան , ցե– ղագիր , բանասէր , ստուգաբան , քրոնի – կագիր , քննադատ , երկիծաբան , սլաւա – գէտ , լատինագէտ , խորհրդարանի ան – դամ ու ակադեմական :

Ստեղծագործական իր կեանքը կը սկսի Խարքովի ուսանողութեան շրջանէն , երբ առիթը ունեցաւ ճանչնալու ռուս դրակա– նութեան ականաւոր դէմքերը :

Գրական ու գիտական ստեղծագործու – թեան զուգընթաց , Հաժտեու մասնակցե– ցաւ նաեւ ռումէն հասարակական կեանքի գործունէութեան :

Իր պատմական հետազօտութեանց կարգին , Հաժտեու զբաղած է նաեւ Հա– յերու անցեալով՝ ռումէն հողին վրայ , վեր հանելով Հայոց չինարար գերը Ռու– մանիոյ մէջ : Ան կը ծանրանայ հայ վա– ճառականներու ռումէն առեւտուրի զար– գացման մասուցած ծառայութեանց վը – րայ , յիշատակելով «հայ կառքերը» , ո – րոնց միջոցով տեղի կ'ունենային այդ ժամանակի Ռումանիոյ արտածման եւ ներածման ապրանքներու փոխադրութիւ– նը :

Հաժտեու իր « Էթիմոլոճիքում մակ – նում » (Պուքրէշ , 1887) բառգրքին մէջ կը խորացնէ իր ուսումնասիրութիւնը Հայոց կեանքի մասին՝ հին Ռումանիոյ մէջ , քն– նելով միաժամանակ ռումէն եւ օտար հին քրոնիկագիրները եւ սլաւական , յատ – կապէս եւ ռումէն կրօնական գրութիւնները :

Հաժտեու չատ կարեւոր ուսումնասի – րութիւն մը հրատարակած է նաեւ 1888– ին , ուր կ'ըսէ թէ Արճէշի վանքը հին հայ գաղթականներու ձեռակերտն է , յենուե– լով պատմական այն փաստին վրայ , թէ Ռումէնները երբեք գաղթականներ չեն ունեցած Հայաստանի մէջ , մինչդեռ Ար– ճէշի շրջանին մէջ հայ գաղթականութեան գոյութիւնը յիշատակուած է ԺԳ. դա – րուն : Հաժտեու կը յիշէ նոյնպէս թէ Ար– ճէշ գիւղաքաղաքի կնիքը , որ կը ներկա – յացնէ երկգլուխ արծիւ մը , հայկական ծագում ունի :

Արճէշ բառին կազմաբանական վեր – լուծումով՝ Հաժտեու կը յանգի միեւնոյն եզրակացութեան :

Հաժտեուի յայտնած կարծիքը յետա – գային հասատատեցին նաեւ Ա. Շուագլ պատմաբանը , Ֆրանց Եաֆէ , Սթըրժի – քովսկի եւ Թորոս Թորամանեան , հայ անուանի ճարտարապետը , որոնք պնդե – ցին թէ հայ վարպետները աշխատած են Արճէշի վանքին կառուցման համար :

Ռումէն հեղինակ Ալեքսանդրեսքու եւս , 1927 Ապրիլ 22ին , Փարիզ գումար – ուած Պատմական գիտութեանց Համաժո – ղովին մէջ «Հայկական ազդեցութիւնները ստորին Դանուբի կրօնական ճարտարա – պետութեան մէջ» իր ուսումնասիրու – թեամբ , ի մէջ այլոց կը գրէ .— Արճէշի եկեղեցիին զարդարանքը կը յիշեցնէ Ժ. – ԺԴ. դարերու հայ եւ վրացական եկեղեցիներու զարդարանքը :

Ուրեմն , հաւանական է , որ Արճէշի յի– շատակարանի զարդարանքին համար աշ– խատող արուեստագէտներուն մէջ Հայեր ալ կային , կամ , գոնէ անոնց դպ– րոցին մէջ կազմուած եւ իրենց գերազ – ուսատական եղանակներէն խորապէս ազ– դուած արուեստագէտներ :

Հաժտեու ռումէն մշակոյթի մեծագոյն դէմքերէն մէկը ըլլալով հանդերձ , ման– րակրկիտ պրպտումներ ըրած է՝ երեւան բերելով հայ մտքին ու արուեստին , լու– սաւոր հետքերը , Ռումանիոյ մէջ :

Թ. ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՀԻՆ ԴԻՄԱՔԵՐ

ՄԻՔԱՅԷԼ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

—o—

Խառնուածքով եղած է հաւաքական աշ– խատանքի մարդը : Զէ վնտռած ամէն ան– դամ մեծ դերերով հանրութեան ներկա – յանալու առիթներ : Առանձնած է սիրով ամէն դեր , համարելով որ թատրոնը հա– ւաքական աշխատանքի կրկէս մըն է , ուր անհատի պաշտամունքը կրնայ վնասակար հանդիսանալ ընդհանուր գործի յառաջ – դիմութեան տեսակէտէն :

Այդպէս են արուեստի ճշմարիտ երկր– պագուներն ու ծառայողները :

Ես առիթը ունեցած եմ , հոս , Փարիզի մէջ , Ֆրանսական Ազգային Թատրոնի բեմին վրայ տեսնելու խաղը մեծանուն ֆրանսացի դերասան Տըլնի տ'Ինէսին , Թէատոր տը Պանվիլի «Կրէնկուար»ին նոյնինքն հերոսին՝ Կրէնկուարի դերին մէջ : Հիացած եմ իր զմայլելի խաղով :

Ուրիշ օր մը , նոյն թատրոնին մէջ , ներկայ եղած եմ Ալֆրէտ տը Միւսէի « Լօրէնզաչիո»ին : Պզտիկ դեր մը , դրե – թէ անիսօս , Կարթինալի մը դերը խաղա– ցող դերասանը ուշադրութիւնս գրաւած է իր դեղեցիկ խաղով : Դիմած եմ յայտա– գրին եւ աչք մը նետելով անոր վրայ ատուգած եմ որ այդ «փոքր» դերը խա – ղացողը ուրիշ մէկը չէր եթէ ոչ մեծանուն Տըլնի տ'Ինէսը :

Մեծ ու փոքր դեր գոյութիւն չունի ճշ– մարիտ արուեստագէտին համար :

Այդ փաղանգին կը պատկանէր ողբաց– եալ Միքայէլ Մանուէլեանը :

×

Ինչպէս բեմին վրայ , այնպէս ալ կեան– քի մէջ , շատ սիրուած ու յարգուած անձ– նաւորութիւն մը եղած է Միքայէլ Մա – նուէլեան : Ազնիւ , բարի , արժանաւոր – ները յարգող ու սիրող , եւ անողոք՝ բո– լոր անտաղանդ կաչառակիներուն հանդէպ :

Ս. Սարգսեան «Միքայէլ Մանուէլեան» հատորին մէջ կը պատմէ հետեւեալ դէպ– քը , քաղուած մեծանուն դերասան Ստեփան Զօրեանի յուշերէն . —

« Մի անգամ երիտասարդ մի դերասա– նուրք լսելով որ Միշոն (մտերմական շրջանակներու մէջ այդպէս կը կոչէին Մանուէլեանը) աննպաստ կարծիք է յայտնել իր բեխասի մասին հարցնում է նրան .

— Ձի՞շդ է ընկեր Մանուէլեան , որ դուք ասել էք թէ իմ բեխսը վատ է :

— Ո՛չ : Ես այդպէս չեմ ասել , պատաս– խանում է Միշոն : Ես ասել եմ ոչ թէ վատ է , այլ չա՛տ վատ է » :

Ուրիշ օրինակ մը եւս , այդ կարգէն , որ կը հաստատէ Միքայէլ Մանուէլեանի ճշմարտախօս նկարագիրը . —

«Սունդուկեանի անուան թատրոնում ընթերցւում էր մի բիէս , որը վերջանում էր « ինտէրնացիոնալ»ով : Ունկնդիրներից շատերը գովում են , մի մասն էլ խոր – հուրդներ է տալիս հեղինակին՝ սիրտը չկոտրելու համար : Ասօք է վերցնում մա– նուէլեանը եւ , հաւատարիմ իր սկզբուն– քին՝ ճշմարտութիւնը , ասում է . «ինդեր– նացիոնալը աշխարհը կը փրկի , բայց այս բիէսը չի փրկի ...» : Եւ սառը ջուր լցնե – լով հեղինակի գլխին , նստում է իր տե – ղը» :

Հակառակ այն հանգամանքին , սա – կայն , որ անողոք կեցուածք ունէր պատ– տախօս եւ անարժան տօն – քիշոթներուն հանդէպ , այսուհանդերձ քաջալերող ե – դած է միշտ երիտասարդութիւնը եւ ա – մէն առթիւ ալ առաջնորդած է անոր քայ– լերը :

Հայաստանի կառավարութիւնը բարձ – րօրէն գնահատելով հայ թատրոնի ան – խոնջ առաքելային ծառայութիւնները , 1924 Փետրուար 27ին , մեծ չուքով կը տո– նէ անոր թատերական գործունէութեան 30ամեակը , եւ Մանուէլեան առաջիննե – րէն մէկը կ'ընտրուի վաստակաւոր արուես– տագէտի կոչումը ստացողներէն :

Ցօբելեանին հանդիսութեան օրը հա– րիւրաւոր հեռագիրներ եւ նամակներ կը տեղան զանազան վայրերէ , չնորհաւորե – լով անզուգական դերասան – դրողի յո – բելեանը : Եւ այնուհետեւ Միքայէլ Մա– նուէլեանի կուրծքը կը զարդարուի պե – տական չքանշանով :

Մինչեւ իր կեանքին վերջին չունչը , հայ բեմի «կախարդ»ը ծառայեց իր ժո – ղովուրդին եւ փառքով լինկաւ պատուոյ դաշտին վրայ 1944 Հոկտ. 7ին :

ՍԱՐՏԱՇԷՍ ԳՄԲԻԹԵԱՆ

(4 եւ վերջ)

ԿՈՅՐԸ

ԳԼՈՒԽ Ի ՀՅՈՒՐԻՆ ԵՒ ՅԱՋՈՐԴՈՒԹԻՒՆ ՎՐԴ.

Բ.

— Ես ձեզ կ՚ըսեմ, պարո՛ն Ռոպէր, որ ես ոչինչ գիտեմ այդ մասին, եւ որ ես ոչ մէկ կապ ունիմ այդ գողութեան հետ, որուն համար ձեր որդին կը մեղադրուի։ Ես ձեզ կ՚ըսեմ

ՄԱԿԻ Հունդարիոյ յանձնախումբը վճռեց կոչ մը ընել փեշտայի կառավարութեան, պահանջելով որ յարդուին յանձնախումբին որոշումները :

ԱՅՋԸՆՀԱՄՈՒԼԸԻ օդանաւը Ուշինկթըն հասաւ ուրբաթ օր՝ աննպաստ օդի հետեւանքով : Զինքը դիմաւորելու համար օդակայան դացած էր Նիքսըն :

ՄԱՏՐԻՏԻ մէջ Ամերիկայի Արտաքին նախարար Տըլլըս տեսակցութիւն մը ունեցաւ Ֆրանքոյի հետ : Տըլլըս յայտարարեց, թէ խօսակցութեան ընթացքին հետ – ռավար (թէլէկիպէ) հրթիռներու արձակարանները կառուցման հարցը չարձարծուեցաւ :

ՕՐԱՆ – ՓԱՐԻԶ ղիծին վրայ երթեւեկ կատարող օդանաւի մը մէջ ռումբ մը պայթեցաւ. 99 հոգի կար, ճամբորդ եւ օդաչու, որոնք հրաշքով անվնաս մնացին եւ օդանաւը յաջողեցաւ Լիոն իջնել : Ա – հաբեկիչը, որ ռումբը տեղաւորած էր լուացարանին մէջ, թէեւ ծանօթ չէ տա – կաւին, բայց այնպէս կ'երեւի թէ նման գործեր ընելու վարժ անձ մըն է :

ՊՐԱԶԻԼԻՈՅ բանակին կողմէ առջի օր երկսարկանի հրթիռ մը արձակուեցաւ, առաջինը՝ Հարաւային Ամերիկայի մէջ :

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԳԵՐՄԱՆԻՈՅ Վարչապետ Ատընաուըր տեսնուեցաւ խորհրդային դեսպանին հետ :

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսական Բանակի Հայ Կամաւորներու եւ Մարտիկներու Միութեան վարչութեան

Ֆր. Բանակի Հայ Կամաւորներու եւ Մարտիկներու Միութեան վարչութիւնս, այսու արտակարգ ընդհ. ժողովի կը հրաւիրէ Միութեանս բոլոր անդամները որոնք իրենց նիւթական եւ բարոյական պարտականութիւնները կատարած են մինչեւ 31 Դեկտ. 1956 :

Ընդհ. ժողովը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Դեկտ. 22ին, կիրակի օր ա – ռաւօտեան ժամը 9ին, Հայ Ազգ. Տան մէջ, 32 բիս Թրէվիզ, Փարիզ :

Խիստ կարեւոր օրակարգ եւ նոր վարչութեան ընտրութիւն :

Ֆրանսական Բանակի Հայ Կամ. եւ Մարտիկներու Միութեան Վարչութիւն
(ԿՆԻՔ)

ԲԱՑԱՌԻԿ ԵՒ ՇՔԵՂ
ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

կազմակերպութեամբ Հ. Յ. Դ. Նոր Սերունդի Քրիստափոր խումբի :

Այս երեքշաբթի երեկոյ ժամը 21ին, կը ցուցադրուի՝

«ՀԱՅՈՑ ՀԵՏՔԵՐՈՒՆ ՎՐԱՑ»
(Վենետիկ եւ Ֆիրինզէ)

դունաւոր ժապաւէնը :

Բացատրութիւն՝ Պ. Ֆէրտի Ապաճեան : Պոմոնի եկեղեցւոյ սրահին մէջ :

Կէս դիշերէն մինչեւ լոյս եւրոպական պարեր՝ ընտիր նուագախումբով :

Հայկական պարեր Հ. Յ. Դ. Նոր Սերունդի Պոմոնի պարախումբին կողմէ :

Պիւֆէ, դիւրամատչելի գիներով :

ՆՈՒԻՐ

Տէր եւ Տիկին Զաքիկեան եւ զաւակը կը նուիրեն երկու հազար ֆրանք Հայ կարմիր Խաչի Օդն. Մարմնի Ֆէստիվալ – լիէի օգափոխութեան կայանին :

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

Ֆ.Կ.Խաչի Մարսէյլի մասնաճիւղինկողմէ կը տօնուի Յունուար 5ին, ժամը 2ին, Ահարոնեան ակումբին մէջ :

Սիրուն անակնկալներ, երգ, պար, արտասանութիւն :

Սրահին ջերմութիւնը ապահովուած է :
Մուտքը ազատ է

ՓԱՐԻԶԻ ՀԱՅ ԱՂՔԱՏԱԽՆԱՄ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԺՈՂՈՎԻ ՀՐԱՒԷՐԸ

Յառաջիկայ Հինգշաբթի, 26 Դեկտեմբեր, ժամը 18·30ին, 32 Բիս տը Թրէվիզի մէջ տեղի պիտի ունենայ Փարիզի Հայ Աղքատախնամ Ընկերակցութեան արտակարգ ժողովը հետեւեալ օրակարգով . —

Վարչական ժողովի որոշումներուն վերացումը Անոխիի մէջ անրուժելիներու համար հիմնուելիք չէնքին չուրջ :

Ընկերակցութեան բոլոր անդամները կը հրաւիրուին այս չատ կարեւոր ժողովին :

Ի դիմաց Աղ–ի վարչութիւն

ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՕԴՆ· ՄԱՐՄՆԻ ՓԱՐԻԶԱՀԱՅ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԻՒՆ ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

LES AMBASSADEURS

Champs Elysées, 3 Avenue Gabriel

2 Փետրուար, 1958, ժամը 15 – 24

Կանխաւ ապահովել սեղանները հեռաձայնելով Էլիզէ 67–03,

ՊԱՏԱՐԱԳ ԿՐԸՆՈՂԻ ՄԷՋ

25 Դեկտ., Զորեքշաբթի առաւօտ Ծը – նընդեան տօնի առթիւ Ս. Պատարագ պիտի մատուցուի Րիւ Ժէ, Սէն Լուի սրահին մէջ: Պիտի պատարագէ Թորգոմ քհնյ. Լիոնէն :

Réveillon

ԾՆՈՒՆԴԻ ԵՒ ԿԱՂԱՆԴԻ ԳԻՇԵՐՆԵՐԸ

LE BOSPHORE

74, Rue Sedaine, Paris - Tél. ROQ. 53-70, métro Voltaire

Արեւելեան ճաշօք ճաշարանին մէջ ընտիր խմիչքներով, ախորժաբեր աղանդերներով եւ համեղ արեւելեան եւ եւրոպական կերակուրներով :

Արեւելեան նուագ Պոլսէն նոր ժամանած խումբով, մասնակցութեամբ ջութակահար ԱԼՖՈՆՍԻ եւ Պոլսոյ ռատիոյ երգչուհիին :

Imprimé sur les presses du journal HARATCH
17, Rue Bleue, 17 — PARIS (9e)

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ
ԳՈՒՐԳԷՆ Մ. ԱԼԷՄՇԱՀԻ
ՅԻՇԱՏԱԿԻՆ

Սիփան – Կոմիտաս երգչախումբի վարչութիւնը կը ծանուցանէ թէ հոգեհան – գստեան մասնաւոր պաշտօն պիտի կա – տարուի այս կիրակի առաւօտ, Փարիզի Ս. Յովհ. – Մկրտիչ եկեղեցին, իր ող – բացեալ դեկավար՝

ԳՈՒՐԳԷՆ Մ. ԱԼԷՄՇԱՀԻ

մահուան տասներորդ տարեդարձին առթիւ

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՇԱԻԻԼ.— Հ. Յ. Դ. «Արդութեան» խումբի ժողովը այս չաբաթ, ժամը 21–ին, սովորական հաւաքատեղին : Ներկայ կ'ըլլայ Շրջ. Կոմիտէի ներկայացուցիչը :

Ֆ.Կ.ԽԱՉի Փարիզի մասնաճիւղի ընդհ. ժողովը այս Շաբաթ, (Դեկտ. 21) կէսօրէ վերջ ժամը 3·30ին, ընկերուհի Պաբը – ճեանի աչխատանոցը, 58 բիս տ'Ապտէիր, 4րդ յարկ, մէթրօ Սաւրիէ : Կը խնդրուի ճշդապահ ըլլալ :

ՓԱՐԻԶ.— Հ. Յ. Դ. «Ռուբէն» Ուս. Միութեան ժողովը երկու չաբաթով յետաձգուած է :

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ, ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ
ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

կազմակերպուած Ֆ. Կ. Խաչի Փարիզի մասնաճիւղին կողմէ
28 *Դեկտեմբեր, Շաբաթ կէս օրէ վերջ ժամը 20էն մինչեւ լոյս*

Լիւքէսիայի գեղեցիկ սրահներուն մէջ

Orchestre Lutetia 43, BLD. RASPAIL, MÉTRO SÈVRES-BABYLONE

Գեղարուեստական բաժին, Պ. Կարպիս Ափրիկեանի երգի ֆուարթերքը
Մենապարեր՝
Օր. Թերեզ Քէօշկէրեան՝ *Սուրբերու պարը Խաչատուրեանի*, Օր. Անի Թարօն *Երեւանի հարսանիքը եւ Եւրոպական պար մը :*

ՇԱՆՕԹ.— Տոմսերու վրայ նշանակուած է մինչեւ կէս գիշեր, բայց բոլորին ցանկութեան վրայ կարղադրուած է սրահի անօրէնութեան հետ մինչեւ առաւտան ժամը հինգ :

Մուտքը՝ 500 ֆրանք

Ուսանողներու համար՝ 300 ֆրանք, ներկայանալ իրենց ուսանող· քարտերով :

Նպատակն է՝ կապոյտ Խաչի օգափոխութեան կայանը, ինչպէս նաեւ իր կրթական եւ բարեսիրական գործերը :

Սեղանները կանխաւ ապահովել հեռախօսելով Տիկ·Թաղէոսեանի Թրիւտէն 27–35 եւ Տիկին Նաղըչդարեանի Տօմէնիլ 13–27



réfrigération ménagère et commerciale

Kelvinator

le froid c'est moi ! | 40 ans d'expérience

Société ROHDANIENNE DU FROID - VALENCE (Drôme)

MARCARIAN JEAN (ԳՐԻԳՈՐ ՄԱՐԳԱՐԵԱՆ)

ELECTRICIEN, 1, RUE PELLETERIE, VALENCE,

ԾՆՈՒՆԴԻ ԵՒ ԿԱՂԱՆԴԻ Ձեր սեղանները զարդարեցէ՛ք

ԱՄԷՆ ՏԵՂ ՓՆՏՈՒԵՑԷՔ

ՊՈՍՓՈՐ

ՀՈՒԶԱԿԱՒՈՐ ՀԷԼՎԱՆ ԵՒ ԼՈՒՔՈՒՄԸ

ԲԺԻՇԿՆԵՐՈՒ ԿԱՐԾԻՔՈՎ ԱՆՈՆՔ ԿԸ ՊԱՐՈՒՆԱԿԵՆ ՄԵԾԱԴՈՅՆ ՁԱՓՈՎ ԳՈԼ (ֆլորը)

Անհրաժեշտ մանուկներու համար եւ օգտակար չափահասներուն ու ծերերուն

որոնց կը պարգեւէ աշխոյժ եւ եռանդ

ՊՈՍՓՈՐԻ ԱՐԴԻԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԳԵՐԱԶԱՆՑԷ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԼՔ ԻՍԿ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾՆԵՐԸ

2, Rue Louis Astoin - Marseille

Արտածման համար մասնաւոր պայմաններ

ARMENIE

Հայ Ֆոլորիք երաժշտութեան Բ· մեծագոյն սկաւառակը 30 սանթ·

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՄԲ ԱՐԱ ՊԱՐԹԵՒԵԱՆԻ

MICROSILLON 33 TOURS Nº MC 20136, DURÉE 45 MINUTES

VOGUE - CONTREPOINT

ԳԻՆ 2700 ՖՐԱՆՔ

Կը պարունակէ 14 հայկական կտորներ (նուագախումբ — երգչախումբ — մէներգ)
ՀԱՅՐԵՆԻՔ, ԷՐԶՐՈՒՄԻ ՊԱՐ, ԶՈՎ ԳԻՇԵՐ, ԿՈՒՒՆԿ, ԿԱՅՆԵԼ ԵՍ, ՄՇՈՑ ՊԱՐ, ԱՐԻ՛ ՍԷՅՐԱՆ, ԼԱԼԱ ԵԱՐՍ, ԵՏ ԱՌԱՋ – ՇՈՒՇԻԿ, ՊԱՆԴՈՒԽՏԻ ԵՐԳ, ՇՈՇՊԻ, ՄԱՐԱԼԻ: ՎԱՂԱՐԴԱՎԱՌ

Երգարանով միասին ստանալու համար դիմել

Ara Bartévian, 14, Rue Petit, Paris 19 - BOT. 99-22

Record Shop, 36, Rue de Moscou

Եկեղեցւոյ դիւանատունը *Սկաւառակի վաճառատուները*

Ա. Սկաւառակ հայկ. երաժշտութեան միքրոսիօն 20·103 (16 կտոր)
Փնտռել նաեւ·—
Երեւան, Եայլի, Թաթարական պար, Օրօր, Ալագեազ, Պիլիքի, Ատրպէյճան, Նազ պար, Գերիներու երգ, Եարօ ջան, Կամաւիկ, Արեւելեան պար, Քեզ նման, Ղայթարմա, Լէզգինկա, Կովկ· երգ :

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԱԺՇՏ· Պատարագ եւ Տաղեր, միքրոսիօն 20·114 (20 կտոր)
Ով գերահրաշ ծաղիկ, Գովեա երուսաղէմ, Սուրբ Աստուած, Փառք, Մարմին Տէրունական, Հրեշտակային, Սուրբ, Ցամեցայնի, Հոգի Աստուծոյ, Միայն Սուրբ, Օրհնութիւն, Տէր Ողորմեա, Հայր մեր, Եղիցի, Արծաթսիրութեամբ, Ով գարմանալի, Աղին ծով, Այսօր ձայնն Հայրական :
Փնտռել նաեւ նոր սկաւառակը Թիւ 20·150

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 — Téléph. : PRO. 86 - 60
R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա եւ գաղութներ, տարեկան 3000 ֆր. վեցամս. 1600
Արտասահման՝ տարեկան 3500 ֆրանք: Համը 12 ֆր.

ԵՐԵՔՇԱԲԹԻ
24
ԴԵԿՏԵՄԲԵՐ
MARDI
24 DECEMBRE
1957

33ՐԴ ՏԱՐԻ — 8076 | 33e ANNEE | Fondateur : SCHAVARCH MISSAKIAN | ՆՈՐ ՇՐՋԱՆ, 13ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3877

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՊԱՂԵՍՏԻՆԻ ԿՆՃԻՒՌԸ

Փակէ տը Շայեոյի Խորհրդաժողովին մէջ, Ամերիկեան Ուխտի արտաքին նախարարները զգալնի նիստի մը մէջ զբաղեցան նաեւ Մերձին Արեւելքի խնդիրնե – րով: Առանց կարգին ամէնէն կարեւոր տեղը կը զբաւէր արաբեւիսրայէլեան յա – րաբերութեանց հարցը :

Նախ քան փարիզի խորհրդաժողովը, Պաղտատի Ուխտին ներկայացուցիչները բացարիկ նիստ գումարեցին եւ պաշտօն յանձնեցին Թուրքիոյ վարչապետ Ատնան Մէնտէրէսի, որ Ամերիկան խորհրդա – ժողովին մէջ պաշտպանէ իրենց տեսակէ – տը :

Պաղտատի ուխտակիցները որոշած էին գործադրութեան դնել Մխայեալ Ազգերու կազմակերպութեան 1947 Նոյեմբեր 29ի ծրագիրը, որուն համաձայն, Պաղեստի – նը պիտի բաժնուէր երկու մասի, արա – բական եւ իսրայէլեան, երբ Անգլիա լքէր Ազգերու Դաշնակցութեան կողմէ 1920ին իրեն վստահուած հոգատարութիւնը :

Արաբական պետութիւնները բողոքեցին այս ծրագրին դէմ, որ կոչուած էր Պա – ղեստինի հողին վրայ ստեղծել Իսրայէլի անկախ պետութիւնը :

Ու երբ 1948 Մայիս 15ին Մեծն Բրի – տանիա ամբողջովին պարպեց Պաղեստի – նը, կիսատական, յորդանանեան եւ ի – րաքեան բանակները յարձակողականի անցան Իսրայէլը պարպելու համար Իսրայէլի պե – տութիւնը :

Յաղթականը մնաց այս վերջինին կողմը : Ու Իսրայէլ մեծապէս ընդարձակեց իր սահմանները՝ ի վնաս արաբական պե – տութեանց :

1949ին կնքուեցաւ ժամանակաւոր Զի – նադադար մը, որ ի զօրու է մինչեւ այ – սօր : Հաշտութիւն չէ կնքուած դեռ, ո – րովհետեւ Իսրայէլի ղրացիները ցարդ չեն ճանչցած զայն՝ իբրեւ անկախ պե – տութիւն :

Անոնք իբրեւ նախապայման կ'առաջար – կեն Պաղեստինի արաբ գաղթականներուն վերադարձը իրենց հայրենի հողերուն վը – րայ :

1948ին 700·000 կը հաշուուէին այդ գաղթականները : 1953ին անոնց թիւը բարձրացաւ 871·000ի, իսկ տարի մը ա – ռաջ՝ 1956 Դեկտեմբերին՝ 925·000ի : Ներկայիս կլոր թիւով մէկ միլիոն կը հաշուեն զանոնք, կէսէն աւելին Յորդա – նանի մէջ :

Շատ ծանրակշիռ էր Պաղտատի Ուխտի վերջին խորհրդաժողովին որոշումը : Անգլիա, Թուրքիա, Իրան եւ Փաքիստան, որոնք ճանչցած են Իսրայէլի պետութիւ – նը, այժմ կը միանան ուխտակից Իրաքի, Մ.Ա.Կի ծրագրած նեղ սահմաններուն մէջ ամփոփելու համար Իսրայէլը :

Շատ բնական կերպով «կենսական մի – ջոց»ի խնդիր կը ծագի այս վերջինին համար : Մանաւանդ որ 1949էն ի վեր զրեթէ կրկնապատկուած է Իսրայէլի բնակչու – թեան թիւը, չնորհիւ ամէն կողմէ կա – տարուած ներգաղթին :

Ֆրանսական լուրջ թերթ մը «Իսրայէլ վտանգուած »է կը դրէր վերջերս :

Փակէ տը Շայեոյի խորհրդաժողովին մէջ թուրք պատուիրակը մանրամասն զե – կոյց տուած է Պաղտատի Ուխտի վերջին որոշման մասին : Անգլիոյ արտաքին նա – խարարը Սէյլվին Լոյտ պաշտպանած է զայն : Միայն Ֆրանսայի արտաքին նա – խարար Քրիսթիան Փինօն է, որ հակա – ռակած է աւտր ու չեչտած Իսրայէլի ապառնացող վտանգը՝ եթէ գործադրուի Պաղտատի ուխտակիցներու որոշումը :

Մերձաւոր Արեւելքի մէջ խաղաղութիւն կարելի չէ հաստատել, մինչեւ որ արդար կարգադրութիւն մը չըլլայ Պաղեստինի կնճիռին :

ՀՐԱՆՏ – ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԺՈՂՈՎԸ ՎԵՐՋԱՑԱՒ

ԽՈՒՇՉԵՒԻ ԵՒ ԿՐՕՄԻՔՈՑԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ

Շաբաթ, Դեկտեմբեր 21ին Մոսկուայի Գերագոյն Խորհուրդի ժողովը վերջացաւ՝ արտաքին քաղաքականութեան վերաբեր – եալ հարցերու քննութեամբ :

Ամերիկեան Ուխտի «Մեծ»երուն հան – դիպումէն ետք, հետաքրքրութեամբ կը սպասուէր, թէ ինչ դիրք պիտի բռնեն Կրեմլինի վարիչները :

Ժամը 10ին · Արտաքին նախարար Կրո – միքօ խօսք առաւ պատասխանելու համար խումբ մը երեսփոխաններու, որոնք դի – նաթափութեան հարցին չուրջ մանրա – մասնութիւններ ուզեցին : Խ· Միւթեան Արտաքին նախարարը յայտարարեց, թէ ոչ մէկ լուծում կարելի եղած էր գտնել դինաթափութեան համար, որովհետեւ Միացեալ Նահանգները եւ Անգլիա մէկ կողմէն կը մտածեն լուծում մը գտնել զինաթափութեան համար եւ միւս կողմէ կը պարտադրեն Ամերիկեան Ուխտի ի – րենց դաշնակիցները՝ որ սպառազինման իրենց ծախքերը աւելցնեն, ինչպէս նաեւ՝ զինեալ ուժերը :

Մանօթ է, որ Ֆրանսայի Արտաքին նա – խարար Փինօ զինաթափութեան հարցը լուծելու համար առաջարկած էր Արտա – քին նախարարներու ժողով մը : Այս հար – ցին ալ պատասխանելով, Կրոմիքօ բաւա, թէ դժուար չէ նախատեսել այն՝ ինչ որ պիտի պատահի, եթէ այս պայմաններուն մէջ սկսինք վիճիլ· ո՛չ մէկ լուծում կա – րելի պիտի ըլլայ գտնել : Խ· Միւթիւնը չի կրնար ընդունիլ այս առաջարկը :

Կրոմիքօ աւելցուց, թէ Միացեալ Նա – հանգները կը չարունակեն իրենց տեսա – կէտը պարտադրել արեւմտեան իրենց բարեկամներուն, բայց Խ· Միւթեան պայմաններ պարտադրելով՝ ոչ մէկ ար – դիւնքի կը հասնին :

Այնուհետեւ, Արտաքին նախարարը ծանրացաւ խորհրդային առաջարկին վը – րայ· — Ստեղծել յանձնախումբ մը՝ որ կազմուած ըլլայ բոլոր երկիրներու ներ – կայացուցիչներէն : Այս ձեւով, Մ.Ա.Կի ան – դամ բոլոր երկիրները առիթը պիտի ու – նենան արտայայտուելու հարցի մը չուրջ, որ կը հետաքրքրէ բովանդակ աշ – խարհը : Ներկայիս, Խ· Միւթիւն կ'ա – ռաջարկէ Մ.Ա.Կի բացառիկ ժողով մը, խօսելու համար զինաթափութեան մասին, որմէ ետք՝ պատրաստել «Մեծ»երու հան – դիպում մը :

Կրոմիքօ չէշտեց, թէ Խ· Միւթիւն ա – ռաջարկեց զինաթափութեան հարցը դնել գործնական հիմերու վրայ, ինչպէս ծա – նօթ է, ըսաւ ան, Խ· Միւթիւն առա – ջարկեց արգիլելլ ջրածին զէնքերը, ու – սումնասիրել արեւմտեան առաջարկները, փնտռել համաձայնութեան եղրեր : Բայց, այն պահուն երբ Խ· Միւթիւնը կ'ընդու – նէր ամերիկեան որոշ առաջարկներ, Անգ – լիա եւ Ֆրանսա նոր բարդութիւններ ըս – տեղծեցին եւ հրաժարեցան այն առաջա – դրութիւններէն՝ որոնց վրայ կը պնդեն նախապէս :

Ամերիկեան Ուխտի ժողովին մէջ, ուր Դանիա եւ Նորվեկիա մերժեցին իրենց հողամասին վրայ հաստատել ամերիկեան հրթիռներու արձակարաններ, Գերմա – նիոյ որդեգրած դիրքին ակնարկելով Կրո – միքօ ըսաւ, թէ հիւլէական զէնքերու յանձնումը մեծ վտանգ մը պիտի ըլլայ անոնց՝ որ տակաւին դաս չեն առած երկ – րորդ աշխարհամարտէն : Եթէ Արեւմտ – եան Գերմանիա հիւլէական զէնքերը ու – նենայ՝ վտանգ մը պիտի ըլլայ Եւրոպա – յի համար, աւելցուց Կրոմիքօ :

Վերջապէս, 40 վայրկեան տեւած իր

Օրը Օրին

ՀՐԱՇԻՔԻ ՃԱՄԲՈՎ···

Նոր շարժում մը սկսած է, ինչպէս Խ· Միութեան՝ այնպէս ալ Խ· Հայաստանի մէջ: Սպաննուած մարդիկ սկսած են յա – րութիւն առնել, ցոյց տալով կոմունիզ – մին··· ամենակարող ուժը :

«Սով· Հայաստան» թերթը, միադաւան բայց այլաբարբառ իր ուղեկիցներէն ին չ մը աւելի ուշ սկսաւ այս··· հրաշքները գործել :

Այսպէս, մօտ երկու տասնամեակներ առաջ Հայաստանի մէջ տեղի ունեցած տխուր իրադարձութիւնները յիշողու – թիւններէ ջնջել կը փորձեն մարդիկ՝ որ գուցէ ապահով ալ չեն թէ ի՛նչ ճակատա – գիր վերապահուած է իրենց :

Չհետաքրքրուիճ յօդուածագիրներով, քանի որ խորհրդային կարգուսարքը հիմնուած է «հաւասարութեան» վրայ, եւ, հետեւաբար, հաւասար արժէք կը ներկայացնեն մի բանուոր Իվանի եւ պրոֆեսոր Մարգարի կարծիքները, բա – ւական է որ անոնք պաշտօնաթերթի մը մէջ հրատարակուելով սեփականացուին·· պետութեան կողմէ :

« Սով· Հայաստան »ը վերջերս նոր սիւնակ մը բացած է, իր Բ· էջին վարի մասը յատկացնելով « Հայաստանում սո – վետական կարգերի հաստատման համար զոհուած հերոսներին »:

Մոզական այս սիւնակը յարութիւն տը – ուաւ բազմաթիւ «ազնիւ բոլշեւիկ»ներու, որոնք մօտ հասն տարի առաջ մաբրագոր – ծուած էին իբրեւ «ժողովուրդի թշնամի», «նացիոնալիստ»···

Հետաքրքրական ··· չէ Աղասի Խան – ջեանի պարագան, քանի որ մաս կը կազ – մէ այս շարքին :

Իբրեւ «Դաշնակցների եւ ռամկավարների վաճառուած թթու նացիոնալիստ» եւ «դաւաճան» 1936 Յուլիս իննին Թիֆլիսի «պարտիայի Անդրեեվկոմ»ի շէնքին մէջ սպաննելէ ետք, այսօր Աղասի Խան – ջեանը կը փառաբանեն «մարքսիզմ – լե – նինիզմի մարտնչող պրոպագանտիստ »ի հինցած էութիւն ալ հագցնելով Հ.Կ.Պի (Հա – յաստանի կոմունիստական պարտիա) կեդր· կոմիտէի առաջին քարտուղարին :

«Սով· Հայաստան» Նոյեմբեր 28ի իր թիւին մէջ Ա· Խանջեանի լուսանկարն ալ հրատարակելով, չէ մոռցած շեշտելու, թէ «նա դիմակազերծ էր անում Դաշնակ – ցութիւնը· Ի՞նչ ըսել սակայն այն երե – ւոյթին, երբ օր չանցնիր որ կոմունիստ – ներ դիմակազերծ չըրնեն «հարազատ կո – մունիստներին», մինչեւ իսկ ախորի ու մահուան դատապարտելով զանոնք, շատ չանցած, մոզական հարուածով մը յա – րութիւն տալու համար անոնց :

Մոսկուա փոխած է իր բաղաքականու – թիւնը, ապահովաբար, հրաշքի խայծով ··· մեռելները որսալու համար :

ԱՐՄԵՆԱԿ

ճառը աւարտելով, Խ· Միւթեան Արտա – քին նախարարը յիշեց «Սպուտնիկ»ներու արձակումը, որ մեղմացուց աշխարհի քաղաքական կլիման եւ մառեչալ Բուլ – գանինի նամակները՝ որոնք նպաստաւոր ընդունելութիւն մը գտան :

Այնուհետեւ խօսք առաւ Խրուշչեւ եւ յայտնեց թէ Ամերիկեան Ուխտի ժողովը լաւ ու վատ կողմեր ունէր : Եթէ Ամ – երիկեան Ուխտի երկիրները երապէս կ'ուզեն խաղաղութիւնը, Խ· Միւթիւնը պատրաստ է ընդառաջելու այդ փափա – քին :

Աչխարհակալները չատ կը խօսին դեր – մանական հարցին չուրջ, սկսաւ Խրուշ – չեւ, բայց ի՞նչ է իրենց առաջարկը : Կ'ու – զեն միացնել երկու Գերմանիաները, այ – սինքն՝ դեղչել Արեւելեան Գերմանիան եւ այս ձեւով երկու Գերմանիաները կապել Ամերիկեան Ուխտի յարձակողական նը – պատակներ հետապնդող խմբակցութեան : Նման քաղաքականութիւն մը, աւելցուց Խրուշչեւ, յաջողութիւն չէ գտած երբեք, ու պիտի չգտնէ : Ուրեմն, մեր հարցերը լուծենք խաղաղ միջոցներով, հաւասա – րութեան դէմնին վրայ : Օրինազանցու – թիւն հռչակենք պատերազմը : Պահենք աչխարհի ներկայ բաժանումը՝ զրամա – տիրական եւ ընկերվարական : Զմիջամը – տենք ներքին հարցերու : Մեր հարցերը պէտք է լուծենք ոչ թէ պատերազմով, այլ՝ խաղաղ միջոցներով :

Անդրադառնալով հրթիռներու արձա – կարաններուն, Խրուշչեւ ըսաւ թէ ամէն բան պիտի ընեն՝ իրենց պաշտպանո – ղական միջոցները զօրացնելու համար եւ Դանիոյ ու Նորվեկիոյ մերժողական դիր – քը յիշելէ ետք աւելցուց ·— Զարմա – ցանք՝ լսելով թէ Թուրքիա եւ Իտալիա կ'ընդունէին որ նման խարխխներ հաս – տատուին իրենց հողամասին վրայ : Աչ – խարհագրական իր դիրքով՝ Իտալիա այդ հրթիռները չի կրնար գործածել, առանց անտեսելու Եուկոսլաւիոյ դերիչխանութիւնը : Իսկ, ինչ կը վերա – բերի Թուրքիոյ՝ եթէ այդ խարխխները հաստատուին այնտեղ, աղէտ մը պիտի ըլլայ Թուրք ժողովուրդին համար, ո – րովհետեւ այդ հրթիռները կրնան պայ – թիլ անոնց ձեռքին մէջ, առանց արձակ – ուելու ···:

Խրուշչեւ եւ Արտաքին նախարար Կրո – միքօ առաջարկեցին, որ ներկայ քաղա – քականութիւնը արմատական փոփոխու – թեան ենթարկուի եւ վերջ տրուի սպա – ռազինման արշաւին :

«ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐ»Ը

Խրուշչեւի ճառէն ետք, Գերագոյն Խորհուրդի Արտաքին յանձնախումբն նա – խադահ Սնէկնուս եօթը կէտերը բաղկա – ցած ծրագիր մը կարդաց, որ միաձայ – նութեամբ վաւերացուեցաւ երեսփոխան – ներուն կողմէ : Խորհրդային գլխաւոր ա – ռաջարկները խտացած են այս եօթը կէտերուն մէջ :

Խ· Միւթեան Գերագոյն Խորհուրդը կ'առաջարկէ ·

1·— Խ· Միւթիւն, Միացեալ Նահանգ – ները եւ Անգլիա համաձայնին՝ որ պիտի չգործածեն հիւլէական եւ ջրածին զէն – քեր :

2·— Նոյն կառավարութիւնները համա – ձայնին՝ Ցունուար մէկէն սկսեալ հիւլէա – կան եւ ջրածին զէնքերու փորձեր չընելու համար :

3·— Երեք կառավարութիւնները հա – մաձայնութիւն մը գոյացնեն՝ երկուԳեր – մանիաներու մէջ հիւլէական եւ ջրածին զէնքեր չդիզելու համար : Թող ընդունին Լեհաստանի, Չեխոսլովաքիոյ եւ Արե – ւելեան Գերմանիոյ առաջարկները՝ ապա – զինեալ զօտի մը ստեղծելու համար՝ երեք երկիրներով :

4·— Հիւլէական ուժի տէր երեք կառա – վարութիւնները զգալապէս թող պակսե – ցնեն իրենց զինուորական ուժերը :

5·— Ոչ – յարձակողական դաշինք մը՝ Ամերիկեան Ուխտի եւ Վարչաւայի Ուխ – տի երկիրներուն միջեւ :

6·— Համաձայնութիւն մը գոյացնել, որ Արեւելքի երկիրները պիտի պահեն ի – րենց անկախութիւնը եւ ուժ պիտի չգոր – ծածուի այդ չրջանին մէջ :

7·— Վերջ տալ պատերազմի քարոզ – չութեանց եւ ուժ տալ առեւտրական ու մչակութային յարաբերութեանց :

(Լուրերու շար·ը կարդալ Դ· էջ)

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ա.

Մարիկ մեր ամենափոքրիկն էր։ Ինը տարեկան էր նա, բայց ոչ ոքի չէր թողնում, որ իրեն փոքրիկ ասի։ Ամեն անգամ, որ մայրը կամ հայրը նրան փոքրիկ էին անվանում, Մարիկը նեղանում էր։

— Ես մեծ եմ, ես ինը տարեկան եմ, — ասում էր նա։

Մի անգամ Մարիկը հիվանդացավ։ Ամբողջ օրը նա պառկած էր անկողնում։ Մայրը նրան դեղ էր տալիս, ջերմաչափով ջերմությունը չափում, բայց Մարիկը ոչ մի կերպ չէր ուզում հանգիստ պառկել։

— Ես ինը տարեկան եմ, ես մեծ եմ, — կրկնում էր նա։

Մայրը ստիպված էր նրան հանգստացնել։

— Դու մեծ ես, Մարիկ, շատ մեծ ես, — ասում էր մայրը, — բայց հիվանդ ես, պետք է պառկես։

Ա.

Մարիկը հիվանդ էր, պառկած էր անկողնում։ Մայրը նրան դեղ էր տալիս, ջերմաչափով ջերմությունը չափում։

— Ես ինը տարեկան եմ, — կրկնում էր Մարիկը։

Մայրը նրան դեղ էր տալիս, ջերմաչափով ջերմությունը չափում։

— Դու մեծ ես, Մարիկ, շատ մեծ ես, — ասում էր մայրը, — բայց հիվանդ ես, պետք է պառկես։

ՎԻԵՆՆԱՑԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 1957ԻՆ

●

Աչխարհահռչակ երգահան Շթրաուսի երգած (Ան տէր շէօնէն պլաուէն տոնաու) հեղասահ Դանուբի հովիտին վրայ չին – ուած մայրաքաղաքը՝ իր բարեմոյն՝ աղնիւ, հիւրընկալ ժողովուրդովը – դով ու իր գիտութեանց ու գեղարուեստի բարձր հռչակով հաղարաւոր ուսումնա – տենչ ուսանողներ հրապուրեր է նոքէն իր ծոցին մէջ՝ Զիներ, Ճափոներ, Արաբ – ներ, Ցոյներ ու Հայեր: Այո Հայեր ալ՝ հեռաւոր Իրանէն, Իրաքէն ու Եգիպտո – սէն, որոնց մէկ ցանկը հաճոյքով պիտի ներկայացնեմ « Յառաջ »ի յարգելի ըն – թերցողներուն .

1· Վահէ Յակոբեան· — Ծնած Թեհրան 1936ին՝ յաճախած է տեղւոյն հայ եւ պե – տական վարժարանները : Վիեննա եկած է 1956ին եւ կը հետեւի համալսարանի ճարտարագիտական ճիւղին՝ նպատակ ու – նենալով աւարտել իր մասնագիտական ուսումը դոկտորի վկայականով :

2· Նորա Յակոբեան· — Ծնած Թաւրիզ 1933ին՝ մտած է ազգային վարժարան, յետոյ յաճախած երաժշտական դպրոցը : Վիեննա եկած 1954ին՝ կը հետեւի նոր – կառավարական լուրջ տաղնապի մը ա – ռաջքն առած էր :

Մինչ այդ սակայն, պատուիրակու – թիւն մը գացած էր Արեւմտեան Գերմա – նիա· դիւանագիտական շրջանակներուն կարծիքով, այս ճամբորդութիւնը նախա – բանն էր աւելի պաշտօնական խորհրդակ – ցութեանց · — զինուորական օժանդա – կութիւն՝ Իսրայէլի: Պատուիրակութեան անդամները Ադընաուըրի հետ տեսնուելէ ետք անմիջապէս վերադարձան Թէլ – Ա – վիվ, որ մերժեցին որեւէ յայտարարու – թիւն ընել մամուլի ներկայացուցիչնե – րուն :

Ամէն պարապայի մէջ, Իսրայէլի ձախա – կոմմեանները պիտի ընդդիմանան զեր – մանական օժանդակութեան մը: Հրեայ դիւանագէտներու Իսրայէլի պաշտպանու – թեան համար չկարողացան ապահովել Ադանաեան Ուխտին օժանդակութիւնը, մինչ որ ծանր ձախողութիւն մը կը նկատուի: Նոյնիսկ, իսրայէլեան հողամասին ամբողջութեան պահպանման համար որո – շում մըն ալ չկարողացան կորզել Փարիզի ժողովէն, մինչ որ եղաւ՝ Թուրքիոյ հա – մար :

Այս պայմաններուն տակ, ներկայիս Վարչապետ Պէն Կուրիոն ապահով զօրա – վիզ մը կը փնտռէ, Մոսկուայի օժանդա – կութեամբ արաբական հաւանական յար – ձակում մը դիմադրաւելու համար :

Թ. Ա. Թ.

ՀՐԱՒԻՐ ԾՆՈՂՔՆԵՐՈՒՆ

—o—

Ուզեցինք հրապարակաւ հրաւէր ուղ – ղել, այն յոյսով որ իրրեւ նախանձա – խնդիր ծնողքներ, պիտի ուղէք ձեր զա – ւակները անձամբ առաջնորդել դէպի հայ – կական վարժարանները, ուր որ ալ գըտ – նուին անոնք :

« Հայկազեան»ի հանգէսն ծանօթ է ար – դէն փարիզահայութեան, ինչպէս նաեւ՝ իր դաստիարակուհին Տիկին Ի· Այվազ – եան :

Յարգելի Տիկինը, նախկին տնօրինուհի Պոլսոյ Կեդր· Վարժարանին, իրրեւ ման – կավարժ, դուրգուրանքով ու լուրջ հըս – կողութեամբ կը հետեւի նոր սերունդի հայեցի դաստիարակութեան գործին : Կ'աւանդէ մայրենի լեզուին զուգընթաց Հայոց պատմութիւն, Հայաստանի աչ – խարհագրութիւն եւ կրօնագիտութիւն :

Երգի դասը յանձնուած է երաժիշտ Պ· Գ· Եանպէկեանի :

Սրտի անհուն գոհունակութեամբ կը հետեւինք մեր ուսուցչուհիին աչխա – տանքին, սիրելի ծնողքներ զուք եւս նոյն խանդավառութեամբ, նոյն ուշադրու – թեամբ հետեւեցէք ձեր զաւակներուն ը – րած յառաջդիմութեան :

Հայու ոտքին է որ կ'արթննայ անոնց ան – մեղ սրտերուն մէջ :

Ջ'արժէ՞ը արդեօք մտահոգուիլ քիչիկ մը, ու թեւ ու թիկունք հանդիսանալ մեր ուսուցիչներուն, հոգաբարձութեանց եւ բոլոր անձնուէր աչխատողներուն : Պէտք է սթափիլ ձեր հարազատ զաւակներուն ղարհուրելի կորուստին առջեւ :

Չի բաւեր ցանկալ որ հայ մնան մեր զաւակները· հարկ է գործել· ջերմ ու գի – տակից սիրով· այլապէ՞ս ...

— Այլապէս , քող աչխարհի աչխարհով միանայ, մեր զաւակները հայ պահելու համար, կատարուած եւ կատարուելիք

(Իրաք) 1936ին եւ յաճախած հայ ազգ· վարժարանէ զատ նաեւ ամերիկեան քոլէճ եւ երաժշտական վարժարան՝ Ջութակի մասնագիտութեամբ : Իրաքի կառավա – րութեան հաչուին 1957ին Վիեննա եկած է եւ երաժշտական ակադեմիայի մէջ կը կատարելագործէ Ջութակի իր մասնագի – տութիւնը :

14· ժան ժամ Շիրիճեան· — Ծնած է Գահիրէ 1937ին եւ յաճախած Ճիսուհեան – ներու Սէնթֆամիլ քոլէժը: Քաղաքա ե – կած է 1957 Նոյեմբերին եւ կը հետեւի փիլիսոփայական ուսման՝ դեղագործա – կան ճիւղին՝ նպատակ ունենալով դոկ – տորա :

Ճայտնելով մեր ուրախութիւնը հայ երկսեռ երիտասարդութեան ուսման եւ բարձրագոյն կրթութեան հանդէպ ունե – ցած այս մեծ եռանդին համար՝ կը մաղ – թենք սրտովին արիութիւն ու յարատե – ւութիւն ի պատիւ մեր սիրելի ազգին :

Հ· Ե· Պ·

անհաչիւ զոհողութիւնները նիւթական, բարոյական եւ ֆիզիքական պիտի անցնին ապարդիւն :

Հայերէն խօսէ զաւկիդ հետ որպէսզի այնքան զժուարութիւններով մեծցնելէ ետք, ի զուր ... չմթաստանուիս :

× «Յառաջ»ի միջոցով տիկին մը հա – զար ֆրանք տրամադրած է յառաջադէմ երկու աչակերտի, ուսուցչութիւնը յատ – կացուցած է Սուրէն Փափազեանի եւ Օ – տէթ Տատուրեանի :

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

ԾԱՆՕԹ·— Հայկազեանի դասընթացքներու ժամերը : Հինգշաբթի, կէսօրէ ետք ժամը 2 – 6 : Ուրբաթ երեկոյեան երի – տասարդներու դասաւանդութիւնները ժամը 7 – 10: 32 Բիւ տը Թրէվիզ, մէթ – րօ Քատէ :

ԽՐՈՒՇՁԵԻ ՓԱՓԱՒԸ

●

Խրուչչեւ երկու հազար հինգ հարիւր բառերէ բաղկացած նամակ մը ղրկած է անգլիական «Նիու Սթէյթմըն» շաբա – թաթերթին՝ պատասխանելու համար ի – մաստասէր Ռըսըլի բաց նամակին : Խրուչչեւի նամակը, ընդհանուր առմամբ կրկնութիւնն է ծանօթ բացատրութեանց, որմէ ետք գոհունակութիւն կը յայտնէ Ռուսըլի այն կարծիքին համար, թէ՝ «Ա – րեւելքն ու Արեւմուտքը պէտք է ճանչնան իրենց փոխադարձ իրաւունքները եւ սոր – վին՝ միասին ապրել» :

Այնուհետեւ խորհրդային պարագլուխը կը չեչտէ յատկապէս վտանգի մը վրայ, որ յառաջ կուգայ Անգլիոյ եւ եւրոպա – կան այլ երկիրներու մէջ ամերիկեան խարխափներու հաստատումով :

Խրուչչեւի նամակին ամէնէն ուշագրաւ մասը եզրակացութիւնն է սակայն, ուր ընդառաջելով Փիլիփոփայ Ռըսըլի առա – ջարկին, ինք ալ փափաք կը յայտնէ, որ ամերիկացի եւ խորհրդային ղեկավարնե – րու հանդիպում մը ըլլայ: Խրուչչեւ չատ բան կը սպասէ այդ հանդիպումէն, ան – չուշտ, եթէ փափաքը իրականանայ ...:

ՍՏԱՅԱՆՔ

ՀԱՅԱՐԵՆԻՔ ամսագրի 1957 Նոյեմբերի թիւը, ղրական, պատմական եւ բոլան – ղակութեամբ եւ բանաստեղծութիւններ, ամսական տեսութիւններ եւն· : Հրատա – րակութիւն «Հայրենիք» հրատարակչա – կանի Պոսթըն: 212 Սթուար Սթրիթ Պոս – թըն, 16 Մաս :

Ս· ՓՐԿԻՉ ամսաթերթ, Պոլսոյ Ազգա – յին հիւանդանոցի Նոյեմբերի թիւը 99:

ՀԱՍԿ, պաչտօնական ամսաթերթ կա – թողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ, Ան – թիլիաս, Լիբանան: Թիւ 11, Նոյեմբեր 1957:

ԿԱՅԾԵՐ

ԻԶ·

ԻՆՉ Է ՊԱՐՍԻԿԸ

Ես կը յիչեմ Ադրպատական նահանգի այն գաւառները միայն, ուր Հայեր էին բնակւում· դրանք էին՝ Սալմաստ, Ոյ, Մազու, Գունէյիսան, Մարանդ, Ուրմի, Սուղդուղ, Սօղուխբուլաղ, Դուխարղան, Մարաղա, Թաբրիզ, Ղարադաղ, Արդաբիլ: Բացի Հայերից յիչեալ գաւառներում բնակւում էին Ղըզլբաչ կոչուած Թուրքե – րը, որոնք կազմում էին ժողովրդի մեծ մասը, եւ այստեղ ու այնտեղ ցրուած է – լին՝ Հրեաներ, Ասորիներ, Քրդեր, Բո – չաներ :

Տիրող ազգը — պարսիկն է, որոնց մէջ նոյնպէս կային ցեղեր, որպէս էին՝ լա – քերը, աւշարները, թաթերը եւ Ղարադա – ղի զանազան էլաթները, որոնք ընդհան – րապէս խիստ հազիւ էին որոչւում մի – մեանցից, թէ տիպերով, թէ սովորու – թիւններով եւ թէ բարբառներով :

Ասում էին Թուրքերէն լեզուով, որ չատ տարբերւում է օսմանեան տաճկե – րէնից· կրօնքով մահմետականներ էին եւ պատկանում էին շիա աղանդին: Կրօնքի հոգեւոր ներկայացուցիչներն էին մօլլա – ները, չափազանց խորամանկ, փառասէր եւ կեղծաւոր մի հասարակութիւն, որ ար – տաքին բարեպաչտութեամբ, ծածկուած աւելի ճգնաւորական դիմակով, գրաւել էին ժողովրդի խորին յարգանքը, մի եւ նոյն ժամանակ մտցրել էին նրա մէջ կոյր անհատատութիւն եւ խաւար մոլեռան – դութիւն: Նախապաչարմունքներ մու – սուլմանների մէջ, մահմետականութեան չպատկանող ազգերի վերաբերութեամբ, հասնում էին խելագարութեան :

Ինչ ազգ չէր հետեւում իսլամին, նա համարւում էր պիղծ, ղրկուած թէ այս աչխարհի եւ թէ հանդերձեալ կեանքի ե – րանութիւններից, որոնց պատրաստել էր Ալլահը միմիայն Մուհամմէդի չիաների համար: Այս պատճառով, մահմետակա – նը, ոչ միայն ատելութեամբ էր նայում դէպի այլակրօնները, այլ իրան մեղք էր համարում սերտ յարաբերութիւններ ու – նենալ նրանց հետ: Մահմետականը չէր ուտում կերակուրը, որ պատրաստուած էր այլակրօնի ձեռքով, նա չէր հաղնում հագուստը, որ գործուած էր այլակրօնի ձեռքով· նա իր տան մէջ չէր բանեցնում կարասիք, որոնց արհեստագործել էր այ – լակրօն մարդը· մի խօսքով, նա պիղծ էր համարում բոլոր արդիւնաբերութիւնը, որ դուրս էր գալիս մահմետականութեան չպատկանող ազգերի ձեռքից: Նա պիղծ էր համարում եւ այլակրօնների անձը· օրինակ, մի հայ, մի հրեայ, մի ասորի անձրեւային օրերում, թաց հագուստով չէին կարող քսուել մահմետականին· այս համարւում էր սրբապղծութիւն եւ անըդ – դայչ յանցաւորը կրում էր իր պատիժը: Ահա այսպիսի եւ դրանց նման չատ խըտ – րութիւններ, որոնց դրել էր մահմետա – կանութիւնը մուսուլմանների մէջ, ոչ մի – այն քրիստոնեաներին եւ Հրեաներին են – թարկում էին իսլամի հալածանքին, այլ – եւ ղրկում էին նրանց չահուել իրանց ար – դիւնաբերութիւնից, եւ վնասում էին ի – րանց տնտեսութեանը: Դա էր գլխաւոր պատճառը Հայերի, Հրեաների եւ Ասո – րիների աղքատութեան :

Մօլլաները, բացի իրանց ժողովրդին հոգեւոր ուղղութիւն տալուց, կատարում էին եւ չատ թանկ գործադրութիւնը· այ – սինքն, նրանց ձեռքումն էր օրէնքը եւ արդարութիւնը, որ աւանդել էր Ալլահը Մուհամմէդի միջնորդութեամբ: Ամէն գործ, թէ քրէական, թէ քաղաքական վճռւում էր նրանց ձեռքով : Այստեղ եւս այլազանները ղրկւում էին չատ իրա – ւունքներից, որ վայելում էին մահմետա – կանները: Օրինակ, մի քրիստոնեայ ունէ դատաստանական գործ մահմետականի հետ· գործը քննւում է մօլլան· քրիստոն – եան իր իրաւունքը հաստատելու համար չէր կարող ներկայացնել վկաներ իր հա – ւատակիցներից, որովհետեւ քրիստոնեա – յի վկայութիւնն ընդունելի էր դատարա – նում այն ժամանակ միայն, երբ նա տը – ւած կը լինէր յօդուտ մահմետականի, իսկ ընդդէմ մահմետականի վկայելու նա իրաւունք չունէր:

Այսպիսի դէպքերում պահանջւում էր քրիստոնեայից մահմետական վկաներ· բայց ոչ մի մահմետական չէր ցանկանայ քրիստոնեայի օգտի մասին վկայել, ո – րովհետեւ այդ կը համարէր իր համար մեղք: Ուրեմն թէ առաջին եւ թէ վերջին դէպքերում քրիստոնեան զրկւում էր վը – կաներ ներկայացնելուց, եւ ի հարկէ, տարւում էր գործը, մի այնպիսի դատա – րանում, ուր գործերը վճռւում էին ըստ մեծի մասին հիմնուելով վկաների ցուց – մունքների վրայ :

Դատարաններում փաստաբան լինելու իրաւունք ունէին միայն մահմետական – ները : Իսկ մահմետական փաստաբանը չէր կարող պաչտպանել քրիստոնեայի գործը, երբ հակառակ կողմը մահմետա – կան էր :

ՐԱՖՖԻ

(Շար·)

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԱՐԵՒՄՏԵԱՆ երկիրները Յունուարի սկիզբը պիտի պատասխանեն մառեչալ Բուլգանինի նամակներուն :

ՄՈՍԿՈՒԱՅԻ ձայնասփիւռը չաբաթ օր յայտարարեց, թէ համայնավար կուսակցութիւնը պիտի չարունակէ պայքարիլ բոլոր անոնց դէմ՝ որ Սթալինը կ'ամբաստանեն, միաժամանակ քննադատելով ա-նոր գործած սխալները: Սթալին, ասելով ձայնասփիւռը, կարեւոր դեր մը խաղացած է ընկերվարութեան պայքարին եւ մարքսիզմ-լենինիզմի պաշտպանութեան մէջ, ընդդէմ՝ Թրոցքիի, Զինովի-եւի եւ այլ մատնիչներուն :

ՀՌՈՄԷն կը հաղորդեն թէ Ֆրանսայի, Իտալիոյ եւ Դաշնակցային Գերմանիոյ միջեւ համաձայնութիւն մը գոյացած է հեռաւար (թէլէկիւէ) եւ հակաօդնաւային հրթիռներու պատրաստութեան համար :

ՍԿՈՎՏԻԱԿԱՆ «Նորկա» բեռնատար նաւը առջի օր ընկղմեցաւ Հիւս. Ծովին մէջ: 28 նաւաղները խեղդամահ եղած են:

ԾՆՈՒՆԴի աւանդական իր պատգամին մէջ Պապը առաջարկեց որ վերջ մը տրուի սպառազինման արշաւին, որ վտանգ մը կը ներկայացնէ մարդկային ընտանիքին ու երկրին համար :

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԷՆ մեկնելու առեն, Մակարիոս Արք. յայտարարեց, թէ կիպրոսի հարցին մէջ Ամերիկա չէզոք դիրք մը բռնած է, բայց, աւելցուց ան, մեծ պետութիւն մը այսպիսի հարցի մը մէջ չէզոք պէտք չէ մնայ :

ՓԱՐԻԶի Ազգ. Թատրոններու աշխատաւորները զործադուլ պիտի ընեն՝ տօնական օրերուն, նկատելով որ տասը առհարիւր աշխատավարձի յաւելման իրենց պահանջքը մերժուած է: Հետեւաբար, Օփերան, Օփերա-Քոմիքը եւ Քոմէդի Ֆրանսէզը փակ պիտի մնան մինչեւ Ցունուար մէկ :

ՊԵԼՃԻՈ ստացաւ հակահրթիռային հինգ օդանաւներ: Ուոշինկթընի հետ կնքուած համաձայնութեամբ մը, պատերազմական 53 նման օդանաւեր պիտի ըստանայ պելժիական բանակը :

ԻՍՐԱՑԵԼԻ կառավարական տագնապը կը չարունակուի տակաւին. Վարչապետ Պէն Կուրիոն կը սպառնայ հրաժարիլ (տես Բ. էջ):

ԳԱՀԻՐԻ մէջ զահընկէց Թագաւորին-Թագաւորի անձնական իրերը աճուրդի դրուեցան :

ՌԱՊԱԹի մէջ Մուհամմէտ Ե. չաբաթ օր բացումը կատարեց Մարոքի արդիական առաջին համալսարանին :

ՄԱՐՍԷՅԼ.— Արծիւ Մարզականը չնորհակալութեամբ ստացած է Գարեգին Գազանճեանի մահուան առթիւ փոխան ծաղկեպսակի հետեւեալ նուէրները.—

Ա. Նազարէթեան հազար Ֆրանք, Թ. Աւագեան հազար, Ս. Գաբրիէլեան 500 :

Նոյնպէս Արծիւի պարահանդէսին եղած են հետեւեալ նուէրները.— Ե. Զարդարեան երկու հազար Ֆրանք, Ա. Զազարեան հազար, Ա. Թէճիրեան երկու հազար, Տօրումեան եղբայրներ երկու հազար, Հ. Քաչեան հազար, Ց. Թէճիրեան, Օ. Թէճիրեան երկու հազարական, Վ. Ասլիկեան հազար, Պ. Պիկօնը երեք հազար, Զուիցերիացի Վօլդա հինգ հազար, Ա. Քէօսէեան հազար, Ահարոնեան եղբայրներ երկու հազար Ֆրանք :

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽՆԴՈՑՔ-ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Կազմակերպուած՝ Ֆ. Կ. Խաչի Տէսինի Ազգ. վարժարանի Կրթ. Մարմնի կողմէ:

Հովանաւորութեամբ՝ Ֆ. Կ. Խաչի Տէսինի մասնաճիւղին :

Դեկտեմբեր 24ին, երեքշաբթի, փրանսական Ծնունդի երեկոյեան, ժամը 9ին, Հ. Ց. Դ. Տան մէջ:

Երգ, պար ու անակնկալներ :

Ճոխ պիւֆէ, առատ կերուխում, մատչելի դիներով: Թերթանուշ (փաքլաւա), ու միրգեր :

Հաճելի ժամանց: Հայկական տաքուկ մթնոլորտ :

Ըլլ հրաւիրուին բոլորը անխտիր:

Սրահին ջերմութիւնը ապահովուած է:

Մուտքը ազատ է :

Imprimé sur les presses du journal HARATCH
17, Rue Bleue, 17 — PARIS (9e)

ՑԱՌԱՋի ԳԻՆԸ

Ինչպէս պրած էինք թուղթի գինին յաւելման պատճառով մամուլի ընկերակցութիւնը բարձրացուց տեղական օրա-թերթերու գինը :

Ցունուար մէկէն սկսեալ «Ցառաջ» կը ծախուի՝

Հատը՝ 15 ֆրանք :

Բաժնեգին՝ Ֆրանսա եւ զա-

դութիներ, տարեկան՝	3500
Վեցամսեայ	1900
Արտասահման, տարեկան՝	4000
Վեցամսեայ	2500

×

«ՑԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃԱՐԱՆ ՀԱՄԱՐ

Տէսինէն ընկեր Ս. Առաքէլեան երկու հազար Ֆրանք «Ցառաջ»ի տպարանը իր այցելութեան առիթով :

× *Պ. Էքսէրեան հազար Ֆրանք կը նուիրէ իր զաւկին Պ. Ժ. Էքսէրեանի համալսարանական յաջողութեան առիթիւ* (Լիսաննէէ ան տրուա):

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Այրի Տիկին Այվազեան, Այրի Տիկին Պզտիկեան կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Լիոնի եկեղեցւոյ մէջ 29 Դեկտեմբեր, կիրակի առաւօտ, իրենց ամուսնոյն եւ եղբօր Թագուր Այվազեանի մահուան քառասունքին առթիւ :

Կը հրաւիրուին ողբացեալին յիշատակը յարգողները :

×

Պ. Ղազարոս Քէչիչեան կը ծանուցանէ թէ այս կիրակի (29 Դեկտ.) առաւօտ հոգեհանգստեան պատարագ պիտի կատարուի Պուլվար Օսմանի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ՝ իր կնոջ Վարդուհիի եւ փեսային՝ Փայլակ Մառալեանի մահուան տարելիցներուն առթիւ, նոյնպէս նորեկ Նիջեցեալ Տիկին Ովսաննայ Մանեփանի համար: Եւ մասնաւոր հոգեհանգստեան պատարագ Խաչատուրեան եւ Քէչիչեան զերդաստաններուն բոլոր ննջեցեալներուն յիշատակին :

Կը խնդրուի ողբացեալներուն յիշատակը յարգողներէն ներկայ գտնուիլ :

ԼԻԼԱՑԻՆ, ԼԻԼԱՑԻՆ...

ՁԵՐ ԶԱՐԹՕՆՔԸ՝
ԾՆՈՒՆԴ ԹԷ ԿԱՂԱՆԴ
կրնաք ճոխ սեղանի մը շուրջ, անցընել

ԼԻԼԱՑԻՆ
24, RUE ST-LAZARE PARIS 9e
TÉL. : TRI 31-62

Արեւելեան թէ եւրոպական համադամ կերակուրներ, ընտիր խմիչքներ եւ մանաւանդ զուարթ մթնոլորտ մը հաճելի նուագով

եւ այս բոլորը 2000 փր.
— իւրաքանչիւր անձի —

Ապահովեցէք ձեր սեղանները հեռաձայնելով ժամը 9ին 15
TRI 31-62

ԲԱՑԱՌԻԿ ԵՒ ՇՔԵՂ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Կազմակերպութեամբ Հ. Ց. Դ. Նոր Սերունդի Քրիստափոր խումբի :

Այս երեքշաբթի երեկոյ ժամը 21ին, կը ցուցադրուի՝

«ՀԱՅՈՑ ՀԵՏՔԵՐՈՒՆ ՎՐԱՑ»
(Վենետիկ եւ Ֆիրինզէ)

դունաւոր ժապաւէնը :

Բացատրութիւն՝ Պ. Ֆէրտի Ապաճեան: Պոմոնի եկեղեցւոյ սրահին մէջ :

Կէս գիշերէն մինչեւ լոյս Եւրոպական պարեր՝ ընտիր նուագախումբով :

Հայկական պարեր Հ. Ց. Դ. Նոր Սերունդի Պոմոնի պարախումբին կողմէ :

Պիւֆէ, դիւրամատչելի գիներով :

ՑՈՒՇԱՏԵՏՐ

ՓԱՐԻԶ.— Հ. Ց. Դ. «Ռուբէն» Ուս. *Միութեան ժողովը երկու չաբաթով յետաձգուած է :*

ՀԱՑ ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻ
Դեկտեմբեր 24 ԾՆՆԴԵԱՆ ՃՐԱԳԱԼՈՑՑ

Պատարագը եկեղեցւոյն նորոգութեան պատճառով տեղի պիտի ունենայ նոյն թաղին Սէնթ Էթիէն տիւ Մոն եկեղեցին, ժամը 17ին (մուտքը Րիւ Քլովիս):

×

ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏԱՐԱԳ

25 Դեկտեմբեր.— Ծննդեան պատարագը տեղի կ'ունենայ ժամը 10·30ին, Քրիստոս Թագաւոր եկեղեցին, 16 րիւ Թուրնըփոր, նոյն թաղին մէջ:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ, ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ
ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Կազմակերպուած Ֆ. Կ. Խաչի Փարիզի մասնաճիւղին կողմէ
28 Դեկտեմբեր, Շաբաթ կէս օրէ վերջ ժամը 20էն մինչեւ լոյս

Լիւքէսիայի գեղեցիկ սրահներուն մէջ

Orchestre Lutetia 43, BLD. RASPAIL, MÉTRO SÈVRES-BABYLONE

Գեղարուեստական բաժին, Պ. Կարպիս Ափրիկեանի երգի երբեակը կը մեներգէն Արա Սերոբեան (պարիթօն), Մկրտիչ Պօղոսեան (թենոր):

Մենապարեր՝

Օր. Թերեզ Քէօշկէրեան՝ *Սուրբերու պարը Խաչատուրեանի*, Օր. Անի Թարօն *Երեւանի հարսանիքը եւ եւրոպական պար մը :*

ԾԱՆՕԹ.— Տոմսերու վրայ նշանակուած է մինչեւ կէս գիշեր, բայց բոլորին ցանկութեան վրայ կարղադրուած է սրահի անօթեւնութեան հետ մինչեւ առաւտան ժամը հինգ :

Մուտքը՝ 500 ֆրանք

Ուսանողներու համար՝ 300 ֆրանք, ներկայանալ իրենց ուսանող. քարտերով:

Նպատակն է՝ կապոյտ Խաչի օգափոխութեան կայանը, ինչպէս նաեւ իր կրթական եւ բարեսիրական գործերը :

Սեղանները կանխաւ ապահովել հեռախօսելով Տիկ. Թաղէոսեանի Բրիւտէն 27–35 եւ Տիկին Նազըշդարեանի Տօմէնիլ 13–27

ՓԱՐԻԶԻ ՀԱՑ ԱՂՔԱՏԱՒԱՆԱՄ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԺՂՈՎԻ ՀՐԱՒԷՐԸ

Ցառաջիկայ Հինգշաբթի, 26 Դեկտեմբեր, ժամը 18·30ին, 32 Րիւ տը Թրէվիզի մէջ տեղի պիտի ունենայ Փարիզի Հայ Աղքատախնամ Ընկերակցութեան արտակարգ ժողովը հետեւեալ օրակարգով. —

Վարչական ժողովի որոշումներուն վաւերացումը Անտիլիի մէջ անրուժելիներու համար հիմնուելիք չէնքին չուրջ :

Ընկերակցութեան բոլոր անդամները կը հրաւիրուին այս չատ կարեւոր ժողովին :

Ի դիմաց Աղ–ի վարչութիւն

ՊԱՏԱՐԱԳ ԿՐԸՆՈՑԼի ՄԷՋ

25 Դեկտ., Զորեքշաբթի առաւօտ Ծը-նընդեան սօնի առթիւ Ս. Պատարագ պիտի մատուցուի Րիւ Ժէ, Սէն Լուի սրահին մէջ: Պիտի պատարագէ Թորգոմ քհնյ. Լիոնէն :

Réveillons
Chez SASSOUNI
ԿԱՂԱՆԴԻ ԵՒ ԾՆՈՒՆԴԻ
Զուարթ ու հաճելի Զարթօնքը
(24 եւ 31 Դեկտեմբերի գիշերները)
Մի մտածէք ուր անցընելու մասին
ՍԱՍՈՒՆԻԻՆ մօտ ի հարկէ
Ուր պիտի գտնէք ճոխ ու պէսպէսուն ուտելիքներ եւ խմիչքներ
Բոլորդ ազգականներով եւ բարեկամներով ժամադրուեցէք
Եւրոպական եւ արեւելեան նուագ
ՍԱՍՈՒՆԻԻՆ
31. RUE D'ALEXANDRIE, PARIS - 2e
Tél. GUT. 92-65

ՕԳՏՈՒԵՑԷՔ ԲԱՑԱՌԻԿ ԱՒԹՔԷՆ

CAMEL ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՄՕՏ՝ 102, BD VOLTAIRE, PARIS-XIe

ԿԸ ԾԱԽՈՒԻՆ՝ ԻՐԵՆՑ ՍԵՓԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԵՂՈՂ,

Անգլիական եւ Աւստրիական LODEN կերպասներէ, նորաձեւ

ՎԵՐԱՐԿՈՒՆԵՐ ԵՒ AUTOCOAT ՆԵՐ

(Զանազան գոյներ) 8000էն 12·500 փր.

Իրենց մօտ կարելի է գտնել նաեւ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿԻ ՆՈՐ ԵՒ ԳՈՐԾԱԾՈՒԱԾ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ Խիստ մատչելի գիներով :

SMOKINGի ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻԻՆ: Մեծաքանակի համար մասնաւոր սակագնյց

ՀԱՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ Բ. ՄԵԾԱԳՈՑՅ ԵՒ ԵՐԿԱՐԱՏԵՒ ՍԿԱՒԱՌԱԿԸ ԱՆՆԱԽԸՆԹԱՑ ԸԼԼԱԼՈՎ 55 ՎԱՅՐԿԵԱՆԻ ՏԵԽՈՂՈՒԹԵԱՄԲ 30 CM.

VOGUE-CONTREPOINT N° MC 20150

Պատրաստութեամբ եւ դեկավարութեամբ ԱՐԱ ՊԱՐԹԵԻԵԱՆԻ

Կոմիտասեան Քառաձայն պատարագի երգեցողութիւնք, եւ այլ կտորներ

Մասնակցութեամբ մեներգողներու, պատարագիչի զանազան բաժիններով եւ ընկերակցութեամբ ՄԵԾ ԵՐԳԻՈՆԻ

ՍԿԻԶԲ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳԻ·— (Խորհուրդ Խորին, Հրաշափառ, ընտրեալդ Աստուծոյ, Ուրախ լեր):

ԷՋՄԻԱԾՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԱՒ ԵՒ ԿՈՄԻՏԱՍԵԱՆ ԴԱՇՆԱԻՈՐՈՒՄՈՎ·— (Սուրբ, Հայր երկնաւոր, Ցամենայնի, Որդի Աստուծոյ, Հոգի Աստուծոյ)

եւ Եղիցի ողորմութիւն (Ա. Պարթեւեանի), Գոհաբանական Հայր մեր (Կոմիտաս Միայն Սուրբ, Հայր, Որդիդ, հոգիդ Սուրբ եւ Օրհնութիւն, Տէր Ողորմեա, Քրիստոս պատարագեալ, Աստուած մեր, Կեցո Տէր, Լցաք ի բարութեանց, Գոհանամք, Մաղթանք, Եղիցի : Էջմիածինն ի Հօրէ (Ա. Պարթեւեանի) Ձօն առ Տ. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոս

Ստանալու համար դիմել՝ *Գինն 2700 ֆրանք*

Ա. Պարթեւեանի՝ 14, Rue Petit, Paris 19 - BOT. 99-22 RECORD SHOP, 36, Rue de Moscou, Paris 8 *Եկեղեցւոյ Դիւանատունը*

Բոլոր երաժշտական վաճառատուններէն.— Գաւառի համար առաքում մասնաւոր խնամուած ծրարով

Փնտռել նաեւ կատալոգները՝ Թիւ 20·109 20·114 20·136 Contre remboursement

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 — Téléph. : PRO. 86 - 60
R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա եւ գաղութներ, տարեկան 3000 ֆր. վեցամս. 1600
Արտասահման՝ տարեկան 3500 ֆրանք: Հատը 12 ֆր.

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
25
ԴԵԿՏԵՄԲԵՐ
MERCREDI
25 DECEMBRE
1957

33ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8077 — 33e ANNEE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 13ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3878

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ԳՈՅԱՎԻՃԱԿԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ

Հազիւ վերջացած էր Ատլանտեան Ուխտի խորհրդաժողովը, երբ Մոսկուայի մէջ դումարուեցաւ Խորհրդային Միութեան Գերագոյն Խորհուրդի նստաշրջանը :

Կրէմլինի վարիչները ուշադրութեամբ հետեւեցան Փալէ տը Շայոյի վիճաբանութեանց : Ներկայացուցիչ չունէին խորհրդաժողովին մէջ, սակայն Բուլգանինի ծանօթ նամակը բոլոր պատգամաւորներուն կը զգացնէր Մոսկուայի բարոյական ներկայութիւնը Մեծերու արիւնպաղոսին մէջ :

Կը սպասուէր, որ խորհրդային վարիչները իրենց խօսքն ըսէին Փարիզի մէջ արուած որոշումներուն մասին : Այդ խօսքը չուշացաւ : Արտաքին նախարար Կրոմիքօ եւ ընդհանուր քարտուղար Խրուշչեւ Գերագոյն Խորհուրդին առջեւ պարզեցին իրենց տեսակէտը, ինչպէս մանրամասնօրէն գրած էինք երէկ :

Ատլանտեան Խորհրդաժողովին մէջ օրակարգի գլխաւոր հարցերէն մէկն էր Զինաթափութիւնը : Բոլորն ալ մտահոգ էին դինարշաւին համար, որ երկու ճակատներու վրայ ալ խելագար մրցակցութեան մը ձեւը ստացած է : Զինարշաւ՝ մանաւանդ հիւլէական ու ջրածին ռումբերու եւ հեռուղիղ ու երկնասլաց հրթիռներու առաւելագոյն արտադրութեան համար :

Կրմլիքօ եւ Խրուշչեւ համաձայն չեն կլոր սեղանի մը շուրջ նստելու արտաքին նախարարներու հետ եւ քննելու զինաթափութեան պայմանները, ինչպէս կ'առաջարկէր Քրիսթիան Փինօ : Ու կ'առաջարկեն արտակարգ նիստի հրաւիրել Միացեալ Ազգերու Կազմակերպութիւնը՝ նոյն հարցով զբաղելու եւ վարչապետներու ժողովի մը ճամբայ յարդարելու համար :

Մոսկուայի իշխանաւորները կ'ուզեն գլուխ – գլխի խօսակցութիւնները ամփոփել միայն զինաթափութեան հարցին շուրջ : Օրակարգին վրայ չեն ուզեր ուրիշ խնդիր դնել : Զեն ուզեր որ խօսք ըլլայ Գերմանիոյ երկու մասերու միացման, արբանեակ երկիրներու խորհրդային վարչաձեւին եւ առ հասարակ դաշտախառնաւոսական հարցերու մասին :

Մէկ խօսքով, կ'ուզեն պահպանել այս օրուան գոյավիճակը, որ չատ նպաստաւոր է Խորհրդային Միութեան համար :

Այս տեսակէտը բոլորովին կը հակասէ ազատ աշխարհի հետապնդած նպատակին : Մինչ Զինաթափութիւնը Մոսկուայի համար պատրուակ մըն է գոյավիճակը պահելու, արեւմուտքի համար պարտադրելու եւ բոլշեւիկեան վարչաձեւի ենթակայ երկիրները ազատագրելու :

Խրուշչեւ հակառակ է Գերմանիոյ միութեան, որովհետեւ, իր կարծիքով, միացեալ Գերմանիան՝ զինուորապաշտ ու վրէժխնդիր՝ Ատլանտեան Ուխտին միանալով պիտի զօրացնէ արեւմտեան ճակատը : Ու Միացեալ Նահանգներուն կ'առաջարկէ հրաժարիլ «ուժի քաղաքականութենէն» :

Ցետոյ կ'աւելցնէ .

« Խաղաղ միջոցներով եւ հաւասարութեան հիման վրայ կարգադրենք մեր խնդիրները : Օրէնքէ դուրս հոչակե՞նք պատերազմը : Իրարու ներքին գործերուն չմիջամտենք : Աշխարհի ապագան պիտի վճռուի ո՛չ թէ հրթիռներով եւ ջրածին ռումբերով, այլ այն իրողութեամբ թէ դրամատիրական վարչաձե՞ւն է որ լաւագոյն կեանք մը կ'ապահովէ զանազան երկիրներու ժողովուրդներուն՝ թէ ըն – կերվարականը » :

«Խաղաղութիւն » եւ «հաւասարութիւն» կը հոլովէ Սթալինի յաջորդը : Սակայն ո՛չ մէկ դիմում ընել կ'ուզէ դիմացի ճակատին :

Գոյավիճակի պահպանումը չատ սիրելի բառ մըն էր նաեւ ժամանակին վեց մեծ պետութեանց համար՝ զինեալ խաղաղութեան չրջանին :

Խորհրդային վարիչները չեն ուզեր ընդունիլ, որ գոյավիճակի պահպանումէն առաջ ուրիչ պարտականութիւններ ունին այն հարիւր միլիոնաւոր մարդոց հանդէպ, որոնք աւելի ակամայ քան թէ կամայ ենթարկուած են իրենց տիրապետութեան :

Գոյավիճակի պահպանում կը նշանակէ յաւերժացնել համայնավարական իշխանութիւնը պալթեան երկիրներու, Լեհաստանի, արեւելեան Գերմանիոյ, Հունգարիոյ, Ռումանիոյ, Պուլկարիոյ, Ալպանիոյ, Չեխոսլովաքիոյ, Կովկասի եւ Ծայրագոյն Արեւելքի զանազան հողամասերուն վրայ : Կը նշանակէ արդարութիւնը զոհել ուժին :

Ազատութի՞ւն կը պահանջեն այդ երկիրները ամէն բանէ առաջ :

Ազատութիւն տուէ՛ք անոնց՝ եթէ ճըշմարիտ ընկերվարականներ էք :

Խաղաղութեան նախապայմանը ազատութիւնն է :

Ու այսօր, երբ եւրոպական Ժնեւդին առթիւ ամէն տեղ կ'երգեն «Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն », *մենք ալ կը կրկնենք մեր առաջին ընկերվարական եւ հայրենասէր բանաստեղծ Միքայէլ Նալբանդեանցի անմահ երգին՝* Ազատ Աստուած այն օրիցդ *վերջին տունը.*

Ես մինչ ի մահ, կախազան,
Մինչեւ անարգ մահու սիւն
Պիտի գոռամ, պիտ' կրկնեմ,
Անդադար՝ ազատութի՛ւն :

ՀՐԱՆՏ – ՍԱՄՈՒԻԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՀՐԹԻՌՆԵՐՈՒ ԱՐՁԱԿԱՐԱՆՆԵՐԸ ԿԸ ՀԱՍՏԱՏՈՒԻՆ

ՆՈՐՍԹԱՏԻ ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Ամերիկայի հեռատեսիլի ընկերութեան չնորհուած տեսակցութեան մը ընթացքին, Ատլանտեան Ուխտի դիւանալ ուժերու ընդհանուր հրամանատար զօր. Նորսթատ յայտարարեց՝ թէ եւրոպայի հրթիռներու արձակարաններուն կառուցման աշխատանքները չուտով կը սկսին : 6 – 10 արձակարաններ պիտի հաստատուին Ատլանտեան Ուխտի երկիրներուն մէջ՝ առաջին տիպով : Արձակարաններէն իւրաքանչիւրը չի՛ւրը պիտի ունենայ 15 միջերկրային հրթիռներ : Այս խարիսխները պատրաստ պիտի ըլլան մէկ կամ մէկուկէս տարիէն :

Այնուհետեւ, Ատլանտեան Ուխտի ընդհանուր հրամանատարը յայտնեց, թէ ռազմական տեսակէտէն հարկ չկայ որ հրթիռներու արձակարաններ հաստատուին ատլանտեան բոլոր երկիրներուն մէջ : Բազմալի ալ չէ : Բաւական է պանոնք քանի մը երկիրներու մէջ կառուցանել . այս հրթիռները կրնան հասնիլ իրենց թիրախին, որեւէ կէտի վրայ ... :

Եւրոպայի մէջ խարիսխներ հաստատելու ծրագիրը մաս կը կազմէ պաշտպանական չատ աւելի ընդարձակ նախապատրաստութեանց : Ամէն պարագայի մէջ, ընդարձակ այս ծրագիրը պիտի իրագործուի «քայլ առ քայլ», ինչպէս կը հետէ Նորսթատ, աշխատանքները կը սկսին քանի մը օրէն կամ քանի մը չաբաթէն, բայց ո՛չ քանի մը ամիսէն :

Պատերազմի մը պարագային, աւելցուցած է, միայն հրթիռ ունեցող երկիրները յարձակում կրելու վտանգին ենթակայ պիտի չըլլան, այլ՝ բոլոր երկիրները :

(Շարունակութիւնը կարդալ .Դ. էջ)

Օրը Օրին

ԽԵՂՃ ԽՄԲԱԳԻՐՆԵՐ ...

— Դուն իմ խօսքս մտիկ ըրէ եւ գա՛րկ սա Գեղձասիրաց Ընկերութիւն կոչուած – ծին գլխուն ... ես ատ մարդիկը լաւ կը ճանչնամ ... Անոնք անվախ գրիչէն կը վախնան, կը սմքին, ու իրենց տեղը կը նստին ... Եղբա՛յր, բառասուն տարի է, ազգին համար, սանիկ, շնորհիւով բան մը բրա՞ծ են ... Ո՛չ, միայն կը խօսին ... Բաւական ալ կորկոտ կը բռնեն ... Ազգին բան մը տուած ունի՞ն ... Չէ՛, Աստուած չընէ ... Փարաւները առեր, վրան թուխս նստեր են ... Նորէն կ'ըսեմ, գա՛րկ, մի՛ վախնար ... Ամէն օր գա՛րկ ... Եւ : Ձեր լրագրին առաջին էջին վրայ ... Եթէ դուն չգարնես, ե՛ս պիտի գարնեմ : Ես ալ գրիչ ունիմ ... Հա՛, իրաւ է, ուղղագրութիւնս եւ բերականութիւնս բանի չեն գար, բայց երբ կարգը գարնելու գայ, կը գարնեմ .. Քեզ տեսնեմ ... Այս շարքու սկսէ ... Գա՛րկ, գա՛րկ, գա՛րկ ...

×

— Սիրելիս, այնչափ ալ խրատ կուտամ ձեզի՝ իբրեւ փորձառու մարդ, բայց ներէն խօսքս մտիկ չէք ըներ ... Մի՛ գարնէք սա Նարնջասիրաց Միութեան գըլխուն : Անօգուտ է ... Ատ մարդիկը խօսք չեն հասկնար ... Դուք ձիւնին համար «ներմակ է » ըսէք, անոնք «սեւ է» պիտի պոռան ... Եթէ կ'ուզէք որ անոնք ճըշմարտութիւնը գրեն, ինչ մը խնէրեցիք գործածեցէք եւ դուք, առաջուընէ, գրեցէք թէ «ձիւնը սեւ է» ... Յաջորդ օրը, անոնք պիտի ելլեն ձեր գրածին հակառակը պիտի գրեն : Նորէն կ'ըսեմ, մի՛ գարնէք, որովհետեւ գարնելով տեղ մը չէք հասնիր ... Հերիսայ չէք եփեր կոր, վերջապէս ... Արդէն այնչափ գարկած էք, ժամանակին որ խեղճերուն ուղեղը, հերիսայ եղեր է ... Կր կրկնեմ, մի՛ գարնէք, մի՛ գարնէք, մի՛ գարնէք ...

×

— Ձեր թերթին առաջին թիւէն մինչեւ այսօրուան թիւը ունիմ ... Ծայրէ ի ծայր կը կարդամ ... Ատեն մը աղէկ էիք — կը գարնէիք : Հիմա, կ'երեւայ որ յոգներ էք եւ պէտք եղածին պէս — այսինքն ի՛մ ուզածիս պէս — գարկած չունիք : Ձեզի հազար անգամ ըսած եմ — գարկէ՛ք սա Տանձասիրացներուն գլխուն ... եթէ չգարնէք, ձեր օրերն ալ համրուած են ... Գարկէ՛ք ... Առտուն ալ գարկէք, կէսօրին ալ գարկէք, կէս գիշերին ալ գարկէք ... Մեզ ալ հրաւիրեցէք, մենք ալ կը գարնենք ... Գրիչ եւ մուրճ ըսուած բաները իրարու խնամի են եւ միեւնոյն պաշտօնը ունին — գարնել ... Ասոր հետ մէկտեղ, ուրիշ խնդիր մըն ալ կայ — եթէ թեւերնիդ յոգնած է եւ պէտք եղածին պէս, գրիչով գարնելու ուժ չունիք, սանիկ, կրտոր մը ետ ֆաշուեցէք որ մենք գարնենք ... Ես անո՞նց գարնողներ կը ճանչնամ որ ... Իրենց գրիչէն շանթ ու կայծակ կը թափին ... Եւ ալ անոնցմէ վար չեմ մըներ ... Աստուած հեռու ընէ, մէյ մը գրիչս շարժեմ, դիմացինս տաս – տափակ կ'ընեմ ... Նորէն կ'ըսեմ, գարկէք, գարկէք, գարկէք ... Լուր օրերն ալ գարկէք, կիրակի օրերն ալ գարկէք ...

×

— Եղբա՛յր պատուական, ա՛լ կը բաւէ, մե՞ղք եմ ... Մի՛ գարնէք ... Քանի գարնէք, երես կ'առնեն եւ ինքզինքնին բանի մը տեղ կը դնեն ... Մի՛ գարնէք եւ սա գրիչնիդ ուրիշ բաներու համար գործածեցէք ... Դուք ձեր տեղը ծանր նստէք եւ մի գարնէք ... Պարտուողն է որ կը գարնէ, ոչ թէ յաղթողը ...

×

— Շատ ուրախ եմ, ի՞նչ աղուոր կը գարնէք կոր ... Ես ձեր գրիչին մատաղ ըլլամ ... Գարկէք, գարկէք ... Ազգին շահը կը պահանջէ որ գարնէք ...

×

— Չէ՛, աս ըրածնիդ չի վայլեր : Քիչ մը շատ կը գարնէք կոր ... Կարեւորը – քիւն մի տաք, ի՛նչ կ'ուզեն թող ըսեն .. Դուք մի՛ գարնէք ... Գրիչ ըսուած բանը մուրճ չէ որ անդադար գամին գլխուն իջեցնես ... Խօսքս մտիկ ըրէք ու մի՛ գարնէք ...

ԵՒՐՈՊԱՑԻ

ՆԱՄԲԻ ՆՈՐ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐԸ

Ինչպէս պրած էինք, Եգիպտոսի Նախագահ Նասր Փոր – Սայիտի մէջ ճառ մը խօսեցաւ՝ քաղաքին ազատագրութեան առաջին տարեդարձին առիթով : Արդարեւ, տարի մը անցաւ այն օրէն, երբ անգլեւ – ֆրանսական ուժերը կը հեռանային եւ – գիպտական հողէն :

Նախագահ Նասր կարեւոր ճառ մը խօսեցաւ, որուն մէջ յայտարարեց թէ իր անձին դէմ պատրաստած մահափորձ մը երեւան եկած էր : Միաժամանակ դատադրութիւն մը՝ վարչակարգը տապալելու համար : Դատադրութիւնը, որուն հեղինակին էր նախկին Ներքին նախարարը, բաւ Նասր, ձախողեցաւ :

Այնուհետեւ, Նասր մեղադրեց Արեւմտեանները, որ Պէյրութի մէջ հակագիպտական բջիջ մը ստեղծած էին՝ կազմուած նախկին վարչակարգի կողմնակից անձերէ, որոնք փախած են Եգիպտոսէն ու հաստատուած Լիբանան : Նասր յայտնեց, թէ այդ չարժումէն տեղեակ էր ինք, չնորհիւ անդամի մը, որ կապ կը պահէր Գահիրէի հետ :

Միւս կողմէ, Եգիպտոսի Նախագահը յայտարարեց, թէ Թուրքիոյ յանձնուելիք հիւլէական զէնքերն ու հրթիռները սպառնալիք են Գահիրէի կառավարութեան դէմ : Քննադատեց Ատլանտեան Ուխտի ծրագիրները՝ զանազան երկիրներու մէջ հիւլէական զէնքերու պահեստներ հաստատելու տեսակէտէն :

Եզրակացնելով իր խօսքը՝ Նասր խաղաղութեան կոչ ըրաւ բոլորերկիրներուն :

445 ԱԼԺԵՐԻԱՑԻՆԵՐ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԵՑԱՆ

Ինչպէս ծանօթ է Ֆրանսայի մէջ հետզհետէ աւելի մտահոգիչ կը դառնան Ալժերիացիներու կռիւները ու սպանութիւնները : Ազատագր. Ճակատի եւ Ալժերիոյ Ազգ. Շարժումի ոճիրներուն վերջ տալու համար, վերջերս խուզարկութիւններ են – դի : Անցեալ կիրակի դիշեր խուզարկութեանց հրահանգը տրուեցաւ ու երկու – չաբթի կէսօրին բանտերը լեցուած էին ահարեկիչներով :

Փարիզի մէջ ձերբակալուեցաւ 67 հոգի : Գրաւուեցան բազմաթիւ զէնքեր, ինչպէս նաեւ վեցուկէս միլիոն ֆրանքի դումար մը՝ զանազան չրջաններէն. այս դրամը յատկացուած էր ահարեկչական գործունէութեան :

Մինչ ձերբակալութիւնները կը չարունակուին մայր երկրին մէջ, կռիւները չեն դադրած Ալժերիոյ ապստամբներու եւ բանակայիններուն միջեւ : Առջի օր, Օրանի Տլեմսէն չրջանին մէջ պատահած բախումի մը ընթացքին 15 ապստամբներ սպաննուեցան : Այլ չրջաններու մէջ սպաննուեցան ութ ըմբոստներ եւ դրաւուեցան բազմաթիւ զէնքեր ու ռումբեր : Կոստանդինի մէջ ահարեկիչները ձեռնառում մը արձակեցին ժողովուրդին մէջ, որուն հետեւանքով քանի մը հոգի վիրաւորուեցան. երկու դինուորական :

Ծնունդի առթիւ «Ցառաջ» վաղը լոյս չի տեսներ : Մեր յաջորդ թիւը՝ Ուրբաթ Դեկտեմբեր 27 :

ՅՕՐ ՍՆՈՒԴԻ

(ՊԱՏՄՎԱԾՔ)

Մեր դիմաց մարդ կար, որ ոչ մի կերպ չէր կարողանում հանգիստ նստել տեղում։ Նա ոտքի էր թռչում, ինչ-որ բան էր ասում, ապա նորից նստում, բայց հազիվ էր նստում, որ նորից ոտքի էր թռչում։ Նա ինձ ոչ մի կերպ չէր հետաքրքրում, ես նրան չէի նկատում։ Ես ուզում էի միայն մի բան իմանալ, թե ինչո՞ւ է նա այդպես անհանգիստ։ Ինչո՞ւ նա ոտքի է թռչում, ինչո՞ւ նորից նստում։ Ինչո՞ւ նա ինձ չի նկատում։ Ինչո՞ւ նա ինձ հետ չի խոսում։ Ինչո՞ւ նա ինձ հետ չի ծանոթանում։ Ինչո՞ւ նա ինձ հետ չի ուզում ճանաչել։ Ինչո՞ւ նա ինձ հետ չի ուզում ընկերանալ։ Ինչո՞ւ նա ինձ հետ չի ուզում ծանոթանալ

ԿՅՈՒՆՔԻ

ՀԱՅԿԱՆՈՒՇ Ի ՇՂ.Վ

Մանր և ցիտուս.

Ինչպես ամեն տարի, այնպես էլ այս տարի ամռան սկզբին մեր գյուղի մոտ գտնվող ջրհորի մոտ հավաքվեցին գյուղի աղջիկները։ Ամեն մեկն իր հետ բերել էր մի կճուճ։ Ամեն մեկն ուզում էր առաջ ջուր լցնել։ Ամեն մեկն ուզում էր առաջ տուն գնալ։ Ամեն մեկն ուզում էր առաջ ընկերուհիների հետ խոսել։ Ամեն մեկն ուզում էր առաջ ընկերուհիների հետ ծիծաղել։ Ամեն մեկն ուզում էր առաջ ընկերուհիների հետ երգել։ Ամեն մեկն ուզում էր առաջ ընկերուհիների հետ պարել։ Ամեն մեկն ուզում էր առաջ ընկերուհիների հետ խաղալ։ Ամեն մեկն ուզում էր առաջ ընկերուհիների հետ վազել։ Ամեն մեկն ուզում էր առաջ ընկերուհիների հետ ուրախանալ

Իսկ զալով Ա. Միութեան հետ կըն-քուելիք հաւանական համաձայնութեան մը, զօրավար Նորթհատ յայտնեց, թէ ո՛չ մէկ հակասութիւն կայ հրթիռներու արձակարաններուն կառուցման եւ համա-ձայնութեան մը միջեւ. իսկ խորհրդակ-ցութեան սկսելու համար յայտնուած փափաքը՝ արդիւնք է ուժի եւ ո՛չ թէ տը-կարութեան :

Հրթիռները պիտի յանձնուին քաղաքա-կան ու զինուորական համաձայնութիւն ունեցող երկիրներուն. եւրո-պական իւրաքանչիւր երկիր այս հրթիռ-ները պիտի ունենայ իր սեփական պաշտպանութեան համար :

Հրթիռներու ամէն մէկ արձակարանին ծախքը չիսուն միլիոն տոլար է (16 մի-լիառ ֆրանք) եւ յայտնի չէ տակաւին թէ ո՛վ պիտի վճարէ այդ գումարը :

Ամէն պարագայի մէջ, հեռավար հըր-թիռներու արձակարանները ՇԱՓի հըս-կողութեան ներքեւ պիտի գտնուին :

———o———

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԱՄԵՐԻԿԱՅԻ Նախագահ Այզընհաուըր ընդառաջելով Ա. Միութեան վարիչնե-րուն փափաքին, յայտարարեց թէ Միաց-եալ Նահանգները պատրաստ են ամէն զո-հողութիւն ընել՝ զինաթափութեան ծրա-գիրը յաջողութեամբ պսակելու համար : Այզընհաուըր միաժամանակ հասկցուց թէ Ամերիկա պատրաստ է Արեւելք – Արեւ-մուտք խորհրդակցութեան, ինչ որ կը փափաքին Ռուսերը :

ԼԻԲԱՆԱՆԻ մէջ յիսնեակ մը անձանօթ-ներ յարձակում գործած են էհտընի ոս-տիկանատան վրայ : Ո՛չ մէկ զոհ կայ : Ոստիկանութիւնը ձերբակալած է 83 կա-կածեալներ :

ԱՄԵՐԻԿԵԱՆ հիւլէական երրորդ սու-զանաբը՝ «Սքէյթ», ծով իջաւ :

ՃԱՓՈՆԻ Վարչապետը յայտարարեց, թէ իր երկիրը պիտի չարտօնէր որ հըր-թիռներու արձակարաններ հաստատուին ճափոնի մէջ :

ԻՆՏՈՆԵԶԻՈՑ մէջ պատերազմական վիճակ հաստատուեցաւ, նկատելով որ երկիրը սպառնալիքի տակ կը գտնուի, յայտարարեց Վարչապետը, որ միաժա-մանակ պատերազմական նախարար է :

ԻՍՐԱԷԼԻ կառավարական տաղնապը հետզհետէ աւելի լուրջ բնոյթ մը կը ստանայ եւ կրնայ ըլլալ որ Վարչապետը չուտով հրաժարի :

ՓԱՐԻԶԻ համայնավար պաշտօնաթերթ «Իւմանիթէ» երէկ առաւօտ բաժնուելէ առաջ հաւաքուած է :

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ թերթ մը կը հաղորդէ թէ խորհրդային վիտունները արդէն Լուսին հասած են :

ՓԱՐԻԶի մէջ Արտաքին նախարար Փինօ հայկերոյթ մը տուաւ Լատին Ամերիկայի քանի երկիրներու դեսպաններուն :

ԱՆԳԼԻՈՑ մէջ զինուորական օդանաւ մը չախչախուեցաւ. չորս զոհ կայ :

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Բիւթանիոյ բազմարդիւն առաջնորդ Տ. ՍՏԵՓԱՆՈՍ ԱՐՔ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆի յի-չատակին հոգեհանգիստ կը կատարուի այս կիրակի առաւօտ ժամը 10ին, Փարի-զի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցին, կարգ մը Նիկոմիտիացիներու եւ Ատափազար-ցիներու փափաքով :

Յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ :

×

Ալֆորվիլի Ս. Պօղոս – Պետրոս եկե-ղեցւոյ հոգաբարձութիւնը պարտական-նութիւն նկատած է, այս կիրակի 29 Դեկտեմբեր, եկեղեցւոյ անուան տօնին առիթով հոգեհանգստեան Ս. պատարագ եւ պաշտօն կատարել տալ եկեղեցւոյս բարերար Պ. Արմենակ Համբարձումեանի հանգուցեալ ծնողաց եւ ընտանեկան պարագաներուն ի յիշատակ :

Կը խնդրուի բարեպաշտ հաւատացեալ-ներէ եւ հանգուցեալներու յիշատակը յարգողներէ, ներկայ ըլլալ այն արարո-ղութեան :

Պիտի պատարագէ եւ քարոզէ հոգեւոր հովիւը Տ. Պարգեւ Քհնյ. Մերճաճեան : Պատարագը պիտի երգեն խաչակիր մա-նուկները, առաջնորդութեամբ Տոքթ. Լ. Համբարձումեանի, որ պիտի նուագէ նա-եւ երգեհոնը :

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Ալէմշահ ընտանիքը խորին շնորհակա--լութիւն կը յայտնէ ամէն ասոնց որ գրա--ւոր, բարեպաշտ մտածումով եւ ներկա-յութեամբ, աղօթակից եղան

ԳՈՒՐԳԷՆ Մ. ԱԼԷՄՇԱՀԻ

մահուան տասնամեակին նուիրուած պա-տարագներուն ի Ս. Ղազար եւ Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցիին մէջ :

ՆՈՒԷՐ

Այրի Տիկին Մաննիկ Գէորգեան իր ա-մուսնոյն մահուան տարելիցին առթիւ կը նուիրէ հազարական ֆրանք երկու ծերա-նոցներու համար :

Տառնալ «Յառաջ»էն :

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Տէր եւ Տիկին Արիէլ Ամէմեան (Պրուք-լին), Տէր եւ Տիկին Յակոբ Ամէմեան (Վիէն) շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց որոնք ցաւակցութիւն յայտ-նեցին իրենց մօր՝

ԱՆՆԻԿ ԱՃԷՄԵԱՆԻ

մահուան առթիւ, որ պատահեցաւ Դեկ-տեմբեր 2ին :

"ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐ"Ը

Ֆ. կաթ. Խաչի Շրջ. վարչութիւնը, Փարիզի չրջանի իր տասը մասնաճիւղե-րով կը տօնէ «Մանուկներու Օր»ը, Յուն-ուար 2ին, ժամը 15 – 19, Սօսիէթէ Սավանթի մեծ սրահին մէջ, 8 Րիւ Տան-քոն, մեթրօ Սէն Միշէլ կամ Օտէօն :

Գեղարուեստական բաժին, կապոյտ Խաչի Իսիի Արիմեան դպրոցի աչա-կերտներու երգչախումբը, ղեկավարու-թեամբ ուսուցիչ Պ. Ս. Քալֆեանի :

Տիկին Էլ. Բիւզանդի յատկապէս պատ-րաստած մէկ գաւեշը «ՀՕՓԼԱ ՍՊՈՒՏՆԻԿ» կը ներկայացուի Ալֆորվիլի փոք-րիկներով :

Մենապարեր Օր. Թ. Քէօշկէրեանէ եւ Օր. Թարօնէ :

Ձեռնադաշնակ Պէրնար Տէտէեան :

Ամպարար ԺԷՕ – ԹԷՐՈՍ : Կաղանդ Պապա :

Մուտքը ազատ է :

Ուշադրութիւն.— Իսիէն օթօբասը կը մեկնի ժամը 14·30ին, Արիմեան վարժա-րանէն :

×

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

Կրընոպլի Ֆ. կաթ. Խաչի դպրոցի տօ-նածառը տեղի պիտի ունենայ Յունուար հինգին, Րիւ Ժէյի սրահը :

Լիոնի մէջ կը տօնուի 12 Յունուար, կի-րակի կէսօրէ վերջ Յոյներու սրահը : Կը խնդրուի նկատի ունենալ :

×

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

Ֆ. կաթ. Խաչի Պոմոնի մասնաճիւղի վարչութիւնս կը փութայ յայտնել Պոմո-նի յարգելի ծնողներուն եւ հայ հասարա-կութեան թէ՝ պիտի տօնէ «Մանուկներու Օր»ը՝ հինգ Յունուար, կիրակի, կէսօրէ վերջ ժամը 5ին, Ս. Սահակ – Մեսրոպ սրահին մէջ : Այս առթիւ տեղի պիտի ու-նենան՝ յաւուր պատշաճի արտասանու-թիւններ եւ բաշխում կաղանդի նուէր-ներու :

Կը հրաւիրուին՝ ծնողքները եւ մանուկ-ներ :

Հ. Մ. Ը. Մ.Ի ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ ՎԻՆՆԻ ՄԷՋ

Դեկտեմբեր 28ին, Շաբաթ իրիկուն, Սալ տէ Ֆեթի սրահներուն մէջ :

Մանրամասնութիւնները տեղւոյն վրայ

ՓԱՐԻԶԻ ՀԱՅ ԱՂՔԱՏԱՒԱՆՆԱՄ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԺՈՂՈՎԻ ՀՐԱՒԷՐԸ

Յառաջիկայ Հինգշաբթի, 26 Դեկտեմ-բեր, ժամը 18·30ին, 32 Րիւ տը Թրէվիզի մէջ տեղի պիտի ունենայ Փարիզի Հայ Աղքատախնամ Ընկերակցութեան արտա-կարգ ժողովը հետեւեալ օրակարգով. —

Վարչական ժողովի որոշումներուն վա-ւերացումը Անտիլիի մէջ անբուժելիներու համար հիմնուելիք հիւանդանոցի մասին :

Ընկերակցութեան բոլոր անդամները կը հրաւիրուին այս չատ կարեւոր ժողովին :

Ի դիմաց Աղ–ի վարչութիւն

Imprimé sur les presses du journal HARATCH
17, Rue Bleue, 17 — PARIS (9e)

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻ

———o———

ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏԱՐԱԳ

25 Դեկտեմբեր.— Մանդեան պատարա-գը տեղի կ'ունենայ ժամը 10·30ին, Քրիս-տոս Թագաւոր եկեղեցին, 16 րիւ Թուր-նըֆոր, նոյն թաղին մէջ :

ՅՈՒՇԱՏԵՏՐ

———o———

ՓԱՐԻԶ.— Հ. Յ. Դ. Պէվիւի «Ռոստոմ» խումբի ժողովը այս չաբաթ, ժամը 21ին, ընկեր Մանուկի բնակարանը : Ներկայ կ'ըլլայ Շրջ. կոմիտէի ներկայացուցիչը :

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ, ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ
ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Կազմակերպուած Ֆ. Կ. Խաչի Փարիզի մասնաճիւղին կողմէ
28 Դեկտեմբեր, Շաբաթ կէս օրէ վերջ ժամը 20էն մինչեւ լոյս

Լիւքէսիայի գեղեցիկ սրահներուն մէջ

Orchestre Lutetia 43, BLD. RASPAIL, MÉTRO SÈVRES-BABVLONE

Գեղարուեստական բաժին, Պ. Կարպիս Ափրիկեանի երգի երբեակը կը մեներգեն Արա Սերոբեան (պարիթօն), Մկրտիչ Պողոսեան (թենօր) :
Մենապարեր՝
Օր. Թերեզ Քէօշկէրեան՝ *Սուրերու պարը Խաչատուրեանի, Օր. Անի Թարօն Երեւանի հարսանիքը եւ եւրոպական պար մը :*

ՄԱՆՕԹ.— Տոմսերու վրայ նշանակուած է մինչեւ կէս գիշեր, բայց բոլորին ցանկութեան վրայ կարզադրուած է սրահի տնօրէնութեան հետ մինչեւ առաւօտ ժամը հինգ :

Մուտքը՝ 500 ֆրանք

Ուսանողներու համար՝ 300 ֆրանք, ներկայանալ իրենց ուսանող. քարտերով :
Նպատակն է՝ կապոյտ Խաչի օգափոխութեան կայանը, ինչպէս նաեւ իր կրթա-կան եւ բարեսիրական գործերը :
Սեղանները կանխաւ ապահովել հեռախօսելով Տիկ. Թաղէոսեանի Թրիւտէն 27–35 եւ Տիկին Նազըշդարեանի Տօմէնիլ 13–27

ՄԱՐՍԷՑԼԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՑՑ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆՑ

25 Դեկտեմբեր, Չորեքշաբթի.—Տօն Ս. Ստեփանոսի Նախավկային, Ս. պատա-րագ ժամը 10ին :

1 Յունուար 1958, Չորեքշաբթի. — Ամանորի պաշտամունք, Ս. պատարագ ժամը 11ին :

4 Յունուար, Շաբաթ.— Ճրագալոյց Ս. Ծնունդի, առաւօտեան ժամերգ. 9, իրիկ-նան ժամերգ. 4·30, Ս. պատարագ 5·30 :

5 Յունուար, Կիրակի.— Ս. Ծնունդ եւ Աստուածայայտնութիւն, Ս. պատարագ (երկսեռ երգչախումբով) ժամը 10. Մե-ռելոց եւ Ջրօրհնէք 12 :

12 Յունուար, Կիրակի.— Տօն Անուա-նակոչութեան, Ս. պատարագ (երկսեռ երգչախումբով)10, Հոգեհանգիստ 11·45 :

ԿԱՐՄԻՐ ԽԱՉ

Պ. Վարժապետեան կը նուիրէ երկու հազար ֆրանք Հայ Կարմիր Խաչի Օգն. Մարմնի Ֆէսանվիլիէի օգափոխութեան կայանին :

Տիկին Շամպէրի կը նուիրէ հազար ֆրանք Հայ Կարմիր Խաչի Օգն. Մարմնի Փարիզի դարմանատան :

ԿՈՒԶՈՒԻՆ

———o———

Տունը աշխատող գործաւորուհիներ fourագի համար : Դիմել՝

ELISABETH CONFECTION
67, Rue du Cléry Paris 2 - Métro Strasbourg St.-Denis

ՄԱՐՍԷՑԼԻ ՄԷՋ
ԿԱՐՕ ԳԷՈՐԳԵԱՆԻ
1958ի
"ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵԳԻՐՔԸ"

Ստանալու համար դիմել Պ. Ա. Շահպազլեանին
83, Chemin des Mazargues. Bat 20, Et. 6
Le Grand St. Giniez, Marseille

Հակառակ ծաւալի բնդարձակման (720 մեծադիր էջեր), գինը կը մնայ անփոփոխ — 1200 ֆրանք :

Իր մօտը կը գտնուին նաեւ 1957ի Տարեգրքէն սակաւաթիւ օրինակ-ներ :

ԳԱՂԱՆԴ Չեր սեղանները զարդարեցէ՛ք
ԱՄԷՆ ՏԵՂ ՓՆՏՈՒԵՑԷՔ **ՊՈՍԾՈՐ**
ՀՈՒԶԱԿԱՒՈՐ ՀԷՎՎԱՆ ԵՒ ԼՈՒՔՈՒՄԸ
ԲԺԻՇԿՆԵՐՈՒ ԿԱՐԾԻՔՈՎ ԱՆՈՆՔ ԿԸ ՊԱՐՈՒՆԱԿԵՆ ՄԵԾԱԳՈՅՆ ՉԱՓՈՎ ԳՈՒԼ (խալորի)
Անհրաժեշտ մանուկներու համար եւ օգտակար չափահասներուն ու ծերերուն
որոնց կը պարգեւէ աշխոյժ եւ եռանդ
ՊՈՍԾՈՐԻ ԱՐԴԻԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԳԵՐԱԶԱՆՑԷ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ ԻՍԿ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾՆԵՐԸ
2, Rue Louis Astoin - Marseille
Արտածման համար մասնաւոր պայմաններ

Décoration — Agencement de Magasin
ANCIENS ÉTABLISSEMENTS
J. PAICHOUX et E. THION
149, RUE NATIONALE, PARIS 13E — TÉL. : GOB. 19 52
SERRURERIE D'ART ET DE BATIMENT
Tous Travaux de Fer Forgé

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 — Téléph. : PRO. 86 - 60
R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա եւ գաղութներ, տարեկան 3000 ֆր. վեցամս. 1600
Արտասահման՝ տարեկան 3500 ֆրանք: Հատը 12 ֆր.

ՈՒՐԲԱԹ
27
ԴԵԿՏԵՄԲԵՐ
VENDREDI
27 DECEMBRE
1957

33ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8078 — 33e ANNEE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 13ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3879

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ԱՐԴԱՐ ԵՒ ՏԵՒԱԿԱՆ

—o—

Մինուդը առիթ տուաւ աչխարհի մե – ծերուն խաղաղութեան պատգամներ ուղ – ղելու մարդկութեան, որ կը սարսափի պատերազմէն, քանիցս ճաշակած ըլլա – լով անոր արհաւիրքները :

Առաջին պատգամը արձակեց, ըստ ա – նանգութեան, Հռոմի Քահանայապետը : Պիոս ԺԲ. դիտութեան վերջին արտա – կարգ նուաճումներուն մէջ վտանգ կը տեսնէ մարդոց համար : Մինչ ներդաչնա – կութիւն կը տիրէ բնութեան մէջ, մարդ – կային կեանքը հակասութեանց չղթայա – ւորում մը կը ներկայացնէ : Գիտական յա – ռաջդիմութիւնը իր օգակներուն մէջ կը բանտարկէ մարդը՝ տիեզերքի մնացեալ մասէն զատելով զայն : Հետեւանքն այն կ'ըլլայ, որ յառաջդիմութիւնը խորունկ անհաւասարակշռութիւններ կը ստեղծէ արդի մարդուն մէջ :

Պապը յոռետես չէ սակայն : «Աչխարհ կրնայ ներդաչնակութեան ճամբուն մէջ մտնել, եթէ Քրիստոսի յարի » :

Ու իրաւամբ կը քննադատէ զինարշա – ւը, որուն համար ա՛յնքան նիւթական զո – հողութիւններ կ'ըլլան, ամէն կողմ տագ – նապ ստեղծելով : Մինչդեռ փոխանակ նոր զէնքերու համար ահագին դրամագլուխ վատնելու, կարելի էր մարդուս համար աւելի օգտակար բաներ հնարել՝ նուազ ծախքով :

Խաղաղութեան համար սրտառուչ պատգամներ արձակեցին նաեւ Ֆրանսայի Հանրապետութեան նախագահը, Անգլիոյ թագուհին, նախագահ Այզընհաուըր, Գերմանիոյ վարչապետը եւ ուրիշ պետա – կան դէմքեր : Բոլորն ալ չեշտեցին ար – դար ու տեւական խաղաղութեան անհրա – ժեշտութիւնը :

Նոյն յանկերգը կրկնեցին Խրուչչեւ եւ զնդապետ Նասր, որոնք Մինուդը չէին տօներ, սակայն օգտագործեցին ներկա – յացած առիթը :

Կրէմլինի հերթական զրկատարը Տէյ – լի Էմսփրէսի թղթակցին յայտարարեց թէ՝ անհրաժեշտ է վերջ տալ պաղ պա – տերազմին, ձերբազատել ժողովուրդները զինարշաւի ծանր բեռէն, քանականօն կեանքի պայմաններ ստեղծել եւ բարելա – ւել կառավարութեանց փոխ – յարաբե – րութիւնները :

Այս զեղեցիկ նպատակները իրագործե – լու համար, Խրուչչեւ կ'առաջարկէ բա – նակցիլ արեւմտեան պետութեանց հետ : Ու իրրեւ նախապայման կ'առաջարկէ իր ծանօթ «լօզունգ»ները .— «խաղաղ հա – մակեցութիւն» եւ «գոյավիճակի պահպա – նում » :

Խրուչչեւ եւս Պապին պէս յոռետես չէ, քանի որ, կ'ըսէ, «ընկերվարական երկիր – ները երբեք չեն մտածած յարձակողական պատերազմի մը մասին, եւ մարդիկ մեծ մասով, նոյնիսկ դրամատիրական երկիր – ներու մէջ, խաղաղութիւն կ'ուզեն» :

Նախագահ Այզընհաուըր իր կարգին յայտարարեց թէ Խորհրդային Միութիւնը իր երկդիմի ընթացքով — մերթ սպառ – նալից , մերթ ժպտադին — ցարդ չկրցաւ վստահութիւն ներշնչել ազատ մարդոց : Միայն մէկ միջոց կայ աչխարհի ներկայ տագնապը փարատելու համար, «Խ. Մի – ութիւնը պէտք է իր բարի կամեցողու – թեան եւ անկեղծութեան ապացոյցը տայ : Տիեզերական ապահովութիւն եւ խաղա – ղութիւն հաստատելու միակ միջոցն է եր – կուստեք ցոյց տալ բարոյական ազնուու – թիւն, անկեղծութիւն եւ հաշտարար ոգի : Ռուսերու կողմէ բարի կամեցողութեան քայլ մը՝ Մինուդի լաւագոյն նուէրը պի – տի ըլլայ աչխարհի համար » :

Նախագահ Ռընէ Քոթի Փարիզի օտար դեսպաններու շնորհաւորութիւնները ըն – դունելուն առթիւ խօսեցաւ զեղեցիկ ճառ մը : Աչխարհի խաղաղութեան համար , ըսաւ, լաւագոյն միջոցն է «հոգիներու եւ սրտերու զինաթափութիւնը » :

Որքան ատեն, որ բարոյական զինաթա – փութիւնը կարելի չըլլայ իրագործել, մարդիկ երբեք պիտի չվայելեն արդար եւ տեւական խաղաղութիւն :

ՀՐԱՆՏ – ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՈՒՆ ԹԻՒԸ ԿԸ ՊԱԿԱՍԻ՞

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՔԻԵԻ ՄԷՋ

Ուկրանիոյ հանրապետութեան քառա – սուներորդ տարեդարձին առիթով, Մը – րուչչեւ ճառ մը խօսեցաւ Քիեւի մէջ , երկրին Գերագոյն Խորհուրդին առջեւ : Համայնավար պարագլուխը իր չեչտը դը – րաւ խորհրդային զինուորներուն թիւը պակսեցնելու առաջադրութեան վրայ :

Անդրադառնալով Ատլանտեան Ուխտի ժողովին մէջ եղած կարդ մը յայտարա – րութեանց, Խրուչչեւ յայտարարեց թէ այդ ժողովին արդիւնքը տեսնելով, Խ. Միութիւնը կը մտածէ ներկայիս իր զին – ուորներուն մէկ մասը տուն ճամբել, այ – սուհանդերձ, երկրին պաշտպանութեան համար հարկ եղած բանակը պիտի պահ – ուի — Գիտութեան յառաջդիմութիւնը՝ մեր երկրին մէջ, թոյլ կուտայ մեզի որ մեր ծախքերը նուազեցնենք եւ զանոնք յատկացնենք խաղաղասիրական նպատակ – ներու. Խ. Միութիւն, աւելցուց Խրուչ – չեւ, պայքար կը մղէ խաղաղութեան հա – մար եւ պիտի չարունակէ այդ պայքարը. խաղաղութեան համար մեր ըրած յայտա – րարութիւնները տկարութեան նշան չեն. պէտք եղած ուժն ու միջոցները ունինք մեր երկրին պաշտպանութեան համար :

Մոսկուայի ձայնասփիւռին համաձայն, Խրուչչեւ խօսած է նաեւ անցեալ Նոյեմ – բերին Մոսկուայի մէջ գումարուած հա – մայնավար ղեկավարներու ժողովին մա – սին, աւելցնելով թէ միջազգ. համայնա – վարութեան չարժումն ու միասնականու – թիւնը ամուր հիմերու վրայ հաստատ – ուած են :

Ուշադրաւ է այն պարագան, որ երեք օրուան ընթացքին Խրուչչեւ խօսեցաւ եր – կու անգամ՝ զինեալ ուժերու թիւը պակ – սեցնելու մասին : Կը կարծուի, թէ երեք հարիւր հազարէն հինգ հարիւր հազար զինուոր տուն պիտի ղրկուի, ինչ որ տն – տեսական մեծ առաւելութիւն մը պիտի ներկայացնէ երկրին համար : Այս զին – ուորները կրնան լծուիլ այլ աչխատանքի՝ երկրին զանազան չրջաններուն մէջ :

Այս քայլը մեծ ազդեցութիւն կրնայ դործել ինչպէս ներքին՝ այնպէս ալ ար – տաքին հանրային կարծիքին վրայ :

Հետաքրքրական կը նկատուի սակայն այն պարագան, որ նման քայլ մը առնե – լու համար Խրուչչեւ կը հիմնուի Ատլան – տեան Ուխտի ժողովին վրայ, մինչդեռ , ծանօթ է թէ ոչ միայն ժողովին այլեւ զե – կոյցին մէջ ալ այս ուղղութեամբ նորու – թիւն չկայ. ընդհակառակն, ատլանտեան երկիրները կը մտածեն աւելի զօրանալ :

Այնպէս կը տեսնուի, թէ Խ. Միութիւն պահեստի աչքառու բանակ ունի տակաւին եւ այդ զինուորներն է որ տուն պիտի ճամբէ, ինչ որ ազդեցութիւն չի կրնար դործել ընդհանուր բանակին վրայ :

× *Մոսկուայի մէջ խորհրդակցութիւն մը սկսաւ խորհրդային եւ եւրոպացի ներկայացուցիչներու միջեւ, երկու եր – կիրներու մշակութային յարաբերու – թեանց համար : Առաջին հանդիպումէն իսկ նկատելի դարձած է, թէ ժողովը յա – ջողութեամբ պիտի պսակուի :*

Օր ը Օր ի ն

ՀԱՅՐ ԵՒ ՈՐԴԻ

— Պատմէ՛, հայրիկ, ինչպէ՞ս եղաւ որ մենք մեր անկախութիւնը կորսնցուցիք՞ 1920ին ...

— Պատմեմ, տղաս... Այդ օրերուն , սպեգակը տակաւին համբուրած չէր Ռու – այտերդ... Դեռ մը, Առաջին Աչխարհա – մարտին, գազանաբար խոյացաւ մեր ժո – ղովուրդին վրայ, Արեւմտեան Հայաս – տանի մէջ, ու կոտորեց մեր հայրերը, մեր մայրերն ու քոյրերը եւ մեր երախաները ... Մեր համրաւիէն մաս մը կովկաս ան – ցաւ... Այնտեղ ունէինք ուրիշ հայեր եւ ուրիշ մայրեր ու քոյրեր... Կռիւ կար , իմիջապաշտպանութեան ամեհի կռիւ ... Տեւեց երեք տարի : Երբ 1918ը իր աչքերը բացաւ, փլուզումը սկսած էր Ե՛ւ Ռու – սաստանի, Ե՛ւ Թուրքիոյ մէջ... Այդ տարուան, Մայիսին մեր հայրերուն քա – զուկով ազատեցինք մեր հայրենիքին մէկ մասը եւ անկախ Հանրապետութիւն հըր – չակեցինք : Մենք մեր ձեռքով պիտի տը – ւորիներինք մեր հայրենիքին ու մեր ժո – ղովուրդին ճակատագիրը... Բայց, Լենին անունով մարդ մը, «վախցաւ»... Երբ Հայաստան անկախ պետութիւն մնար, բանուորներուն ու գիւղացիներուն շա – հերը ոտքի տակ առնուած կ'ըլլային ... Ի՞նչ ըրաւ... Բուռերով ոսկի ու զենք բաշխեց չարդարար Դեւերուն, որոնք ա – ռաջնորդն էր Մուսթաֆա Քեմալ անու – նով մէկը... Մնացածը կրնաս երեւակու – յել ... Մեր աչ կողմը վիթխարի բազ – մութիւն մը... Մեր ձախ կողմը գազան – ներու վոհմակ մը... Մենք, ըսես, խեղ – ճուկրակ համրաւիք մը : Թնդանօթ չունէ – ինք, գնդացիր չունէինք, հրասայլ չու – նէինք... Իսկ մեր ունեցած հրացաննե – րուն թիւը՝ Աստուա՛ծ ոդորմի ... Մեր գինուորը բոպիկ էր ու կէս աւօթի ... Ձմռոնա՛մ — բարեկամներ ալ չկային մեր բոլորտիքը ... Եղածները՝ անուշ – ջուրի բարեկամներ — արշալոյսին հետդ են, վերջալոյսին՝ երեսդ ալ չեն նայիր.. Եւ պատահեցաւ անխուսափելին. զարկին աչէն, զարկին ձախէն ու մենք պարտուե – ցանք ...

— Լաւ կռուեցա՞նք, հայրիկ ...

— Եթէ առիւծները տեսնէին մեր կռի – ւը, բաջութեան շքանչանը իրենք կը կա – խէին մեր արիարանց գինուորներուն կուրծքէն :

— Հայրի՛կ, չըսիր թէ կռիւը դեկավա – րողը ո՛վ էր, որ կազմակերպութիւնն էր ...

— Դաչնակցութիւն Լուսաւորիչը ...

— Հիմա, ըսէ տեսնեմ, հայրիկ — երբ Բոլչեւիկը մեր հայրենիքը գրաւեց , ինչ – պէ՞ս վարուեցաւ մեր ժողովուրդին հետ :

— Ըսե՛մ — հաստատեց վարչաձեւերուն ամէնէն ահաւորն ու ամէնէն անասելին .. Փանդեց մեր եկեղեցիները, ջարդեց Աւ – տուծոյ պաշտօնեաները, մտաւորական – ները, գիւղացիները եւ սկսաւ անբարոյա – կան վարդապետութեան մը դասերը տալ, մեր նոր սերունդին... Բանտ, աքսոր ու գնդակահարութիւն եղան ամէնէն բանուկ գէնքերը նոր վարչաձեւին : Պատեցին նետեցին մեր Աստուածացուցիչը ու թո՛ղ չտուին որ հայ մամիկը իր Նարեկը բա – դէր ու խունկ վառէր Աստուածամօր սպատկերին առջեւ ... Փոխեցին մեր ւէ – զուն ալ... Պինդ փակեցին դուռները..

— Լաւ գործեր ալ տեսա՞ն ...

— Հայաստանի մէջ, այսօր, լաւ գոր – ծերու փաստերը կան, ի հարկէ... Այդ լաւ գործերը Բոլչեւիկին շնորհները չեն ... Մեր ժողովուրդը, Սահարան ալ, ծաղկաստանի կը վերածէ ...

ԵՒՐՈՊԱՑԻ

ԳԱՀԻՐԷԻ ԺՈՂՈՎԸ ԲԱՑՈՒԵՑԱՒ

—o—

«ԼԻԲԱՆԱՆ ՍՈՒՐԻՈՅ ԴԷՄ՞ Է»

Կ'ԸՍԷ ՍԱԼԱՀ ՊԻԹԱՐ

Երէկ, Դեկտեմբեր 26ին Գահիրէի մէջ բացուեցաւ աֆրիկեւասիական երկիրնե – րու երկրորդ ժողովը : Իր բացման ճա – ռին մէջ, Նախագահ Նասր թուեց այն յա – ռաջդիմութիւնները, որ այս խմբակցու – թիւնը ձեռք ձգած է առաջին ժողովէն ի վեր (Պանտունկ) :

Նասր յիչեց նաեւ Նախագահ Սոքար – նօն, որ 1955 Ապրիլ 18ի ժողովը կը բա – նար, յայտարարելով . — Ափրիկէի եւ Ասիոյ ազգերը, այս օրուընէ սկսեալ այլ եւս ուրիչներու գործիք չեն. նայեցէ՛ք, մեր ժողովուրդները կը բարձրացնեն ի – րենց ձայնը եւ աչխարհ կը լսէ զանոնք :

Ժողովը պիտի քննէ քաղաքական ներ – կայ կացութիւնը, ինչպէս նաեւ իւրա – քանչիւր երկրի տնտեսական ու ընկերա – յին կեանքը :

Պէտք չէ մոռնալ, որ ափրիկեւասիա – կան երկիրները, աչխարհագրական իրենց դիրքով, մեծ դեր կը խաղան . անոնք կրնան Արեւմուտքի տնտեսութեան ուժ տալ կամ, ականահարել զայն :

47 պատուիրակութիւններ մաս կը կազ – մեն այս ժողովին, իսկ համայնավար եր – կիրներ ալ իրենց ներկայացուցիչները պիտի ղրկեն՝ որպէս զի անոնք ներկայա – ցնեն իրենց կառավարութեան տեսակէտը : Ներկայացուցիչներ պիտի ունենան նաեւ Ալժերիոյ, Քամբրունի եւ Օմանի ազգայ – նական կազմակերպութիւնները :

Այնպէս կը տեսնուի թէ ժողովը թի – կունք պիտի կանգնի Նեհրուի առաջար – կին՝ ջրածին ռումբի փորձերը դադրե – ցնելու համար, ինչպէս նաեւ նպաստաւոր դիրք մը պիտի բռնէ զինաթափութեան միջազգային ժողովի մը համար :

ԼԻԲԱՆԱՆ ՍՈՒՐԻՈՅ ԴԷՄ Է»

Կ'ԸՍԷ ՍԱԼԱՀ ՊԻԹԱՐ

Լիբանանի Արտաքին նախարար Մալիքի պէյրութի մէջ տուած մամուլի ասուլիսին անդրադառնալով, Սուրիոյ Արտաքին նա – խարար Սալահ Պիթար ըսաւ.— Շարլ Մալիքի յայտարարութիւնները իրակա – նութեան չեն համապատասխաներ, ոչ ալ լիբանանեան կառավարութեան հետեւած քաղաքականութեան, որովհետեւ Լիբա – նան, աչխարհակալներու դործունէու – թեան թատր եղաւ եւ Սուրիոյ ապահո – վութեան դէմ դործող խարիսխ մը :

Լիբանանեւսուրիական յարաբերու – թեան համար թերթերուն կարծիքը յիչելով, Պիթար աւելցուց թէ խօսքերը բաւական չեն. — Լիբանանեան կառավա – րութիւնը ծանօթ է հակասուրիական ու հակաեղիպտական այն դործունէութեան, որ կը տարուի իր հողամասին վրայ՝ սուրիացի եւ եղիպտացի փախստական – ներու կողմէ :

Միւս կողմէ, եղիպտական թերթերը կը դատապարտեն եղիպտոսի դրացի միա – պետական երկիրներու մասնակցութիւնը՝ Նախագահ Նասրի դէմ կատարուած դա – ւադրութեան մէջ :

Թերթերը կը մեղադրեն յատկապէս ար – քայական ընտանիքները՝ որ ամէն ճիգ ի դործ կը դնեն, Գահիրէի կառավարու – թիւնը տապալելու համար :

Եղիպտական իչխանութիւնները քննու – թենէ անցուցած են եղիպտոսի արքայա – կան ընտանիքին անդամները՝ որ կը գըտ – նուին երկրին մէջ : Ապէտ Մունէյմ իչխա – նին բնակարանը խուզարկուած է եւ կա – րեւոր փաստաթուղթեր երեւան ելած են :

ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԱՊՐՈՒՄՆԵՐ

(Ս. ԹԱԴԷԻ ՎԱՆՔԻ ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ)

«Թադէի վանուց, ձեռիկդ ինձ դպաւ, Սրտիկս որ ի խաչն էր կիպ թունդ ա–ռաւ»:

Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ

Ա.

Այս խօսքերը եկան չըթներուս վրայ, երբ երկար ու տառապալից ճամբորդու–թենէ մը եաք, վանքի երկու գմբէթները վեհաշուքօրէն երեւցան բլուրներու եւ լեռներու ծոցին մէջ:

Իրական յուզումները կը սկսին այն վայրկեանէն, երբ ոտքդ կը դնես այդ պատմական վայրերուն՝ Արտազ եւ Հեր դաւառներուն մէջ: Մաքիզ ու հոզևիզ մէջ կը խուժեն հին հին դարուց զէպքերն ու դէմքերը, — Տգմուռը, Աւարայրը, Վարդանանց հերոսական ճակատամարտը, Վարդան, Ղեւոնդ երէց, Խորէն, Արտակ, Արսէն. ապա «Պլպուլն Աւա–րայրի»՝ եղիչէն եւ, ինչու չէ, նաեւ Վա–սակ Սիւնին եւն. եւն.:

×

Մեր օթօպիւսը, աւելի քան վեց հա–րիւր փլոմպեր կորելով, Թեղրանէն Թաւրիզ հասաւ փոչեթաթախ:

Ցաջորդ քանի մը օրերուն՝ առիթ ու–նեցայ չրջելու եւ տեսնելու երեսուն եւ հինգ տարի առաջ արդէն ինձ ծանօթ հաստատութիւնները, փողոցները, զբօսա–վայրեր, ընկերներ եւն.:

Ուխտաւորներու մեր խումբով — մօտ ասնեւչորս հոգի — այցելեցինք Աստը–պատականի Հայոց Առաջնորդարանը, որտեղ առաջնորդական ծերունի, այլ ժը–րաչան տեղապահ Աբժ. Տ. Կարապետ ա–ւագ քահանայ Մանուկեանը թոյլտիկ տեղեկութիւններ տուաւ իր թեմի ընդհա–նուր վիճակի մասին:

Ապա այցելեցինք դերեզմաններուն մէ պզտլոնց մը խունկ ծխելով օրհնել տը–ւինք Մելիք – Թանղեան Սրբազանի գե–րեզմանը, «վասն յիշատակի հին եւ նոր ննջեցելոց»:

Եղանք Հայոց երկու թաղերը՝ Լիլաւա եւ Ղալա, երկու եկեղեցիները, դպրոց–ները, Արամեան Թատերասրահը, տպա–րանը եւն.:

Իմ ընդհանուր տպաւորութիւնը տը–խուր էր:

Թէեւ քաղաքի որոշ մասերը այժմ ունին լայն, արձակ ու կարապատ պողոտաներ, ճոխ ու զարդարուն խանութներով, սա–կայն հայկական իր նախկին եռուզեռն ու շարժունութիւնը չունի:

Այս չրջանի մտաւորականութիւնը ա–մէն ինչ լքեց ու հեռացաւ, առանց եա նայելու: Պատճառները ու չքմեղանքները տրդտարացուցիչ կրնան համարուիլ, բայց փաստը անհերքելի է:

Ուրախալի մէկ երեւոյթ, որ ակնբախ է, սա է,— վերջին քանի մը տարիներուն ընդհանուր ոչեւորութիւն եւ չնորհ վերա–բերմունք կայ դէպի եկեղեցական, ազ–գային – հասարակական, մշակութային աշխատանքները: Այս երեւոյթը կը սըր–տագնդէ այցելուն, յոյս ներչնչելով, որ Թաւրիզը կրնայ կազդուրուիլ, վերադա–նալով եթէ ոչ իր լրիւ փայլն ու անցեա–լը, ապա գոնէ ինչ որ ունէր վերջին 10–15 տարիներուն:

Այստեղ պէտք է նչել, որ Թաւրիզի Հա–յութեան թիւը զրեթէ նոյնն է: եթէ բուն Թաւրիզցիները հեռացեր են, չրջաննե–րէն՝ Սալմաստ, Ուրմի, Ղարատաղ եւն., եկողները պահած են հայութեան թիւը: Պարզումը եղած է զաւառներու հաչուին: Այս ալ մէկ ուրիչ ախտ կորմ է, որ դժբախտաբար ընդհանուր երեւոյթ է ամբողջ Պարսկաստանի համար եւ որ ունի իր ընկերային եւ անտեսական պատճառ–ները:

×

Կը փութամ բսելու, որ այս ուչացած զրութեամբ ես նպատակ չունիմ ներկայ տարուայ ուխտագնացութեան նկարա–զրութիւնը ընելու: Իմը ընդհանուր տը–պաւորութիւններ եւ ապրումներ են մի–այն, ուրիչ ոչինչ:

Շնորհակալ ըլլանք Աստպատականի Թեմական Խորհուրդին եւ առաջնորդա–կան տեղապահին, որ թէեւ ուչ, սակայն ի վերջոյ կազմակերպեցին ուխտագնա–զութիւն դէպի այդ պատմական վանքը: Այնքան ուչ, որ երիտասարդներէն ո–մանք, որոնք չատ աղօտ պաղպաղ մի–այն ունին մեր անցեալի եւ պատմութեան մասին, զարմանքով հարց կուտային, թէ մինչեւ հիմա ինչո՞ւ չէին մտածեր այդ մասին: Վանքը նո՞ր գտնուեցաւ արդեօք:

Իրապէս, երկար տարիներու լռութենէ եամ, աւելի ճիշդ, անտարբերութենէ եաք, — զուցէ աննպատակ պայմաններու հետեւանքով, — միայն վերջին չորս տարին է որ ուչադրութեան առարկայ է վանքը: Այդէն տարի ոչ միայն ուխտա–գնացութիւն, այլեւ վերաչինութեան աչ–խատանքներ կը կատարուին, մանաւանդ այս տարի: Մեր հասնելէն առաջ, հիւս–ները փութոյ պնդութեամբ կ'աչխատէին գմբէթներու պատուհաններուն չրջանակ–ները չինել եւ ուրիչ նորոգութիւններ ը–նել: Մեզմէ եաք զրկած էին նաեւ չա–գախ, ճերմակ ծեփ եւն.:

Անկարելի է անտարբերութեամբ անց–նել եւ չյիչատակել անունը մէկու մը, որ իրապէս գնահատութեան արժանի ե–րանդով եւ զոհողութեամբ կը հանի ա–մէն բանի, եւ Թաւրիզի, եւ զաւառնե–րուն մէջ. այդ՝ Պ. Հայկ Մեսրոպեանն է:

×

Օգոստոս 2ին, երեկոյեան ժամը մօտ 10·30ին, մեր բեռնատար ինքնաչարժը, 30 – 35 հոգիով, ճամբայ կ'իյնայ գէպի վանք: Արշալոյսին կը հասնինք Խոյ եւ ա–նանց զադար առնելու կը չարունակենք մեր ճամբան:

Տգմո՛ւռը, Տգմո՛ւռը, — լիահզապզ եւ յուզումով կը բացագանչեն ինքնաչարժի առջեւի մասին մէջ նստողները:

Ա. ՊՈՒԼՈՒՔՉԵԱՆ

(Մնացեալը յաջորդիվ)

ԳԵՐՄԱՆԻԱ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱՔԱՐ

Պատմաբան եւ Մոսկուայի մէջ ամե–րիկեան նախկին դեսպան Ճորճ Քէննան, ռուցիալները դասախօսութեանց շարք մը տուաւ Լոնտոնի ձայնասփիւռէն: Նիւթն էր՝ արեւելեան Եւրոպայի արբանեակ եր–կիրներուն եւ Գերմանիոյ ապագան: Այս ասթիւ, Անգլիոյ Աշխատաւորական կու–սակցութեան պետը, Պէվան, խիստ շահե–կան ջօդուած մը ստորագրած է Նիւ Եորք Հերալտի մէջ: Ստորեւ՝ այդ ջօդուածին թարգմանութիւնը:

Անցեալ տարուան Հոկտեմբերին հուն–գարական ապստամբութեան ճգմուխը բացայայտ ապացոյց մը տուաւ, թէ որ–քան դառն է ռուսական լուծը: Ապստամ–բութիւնն ու ձեռք առնուած խիստ սեղ–մումները, սակայն, երեւան հանեցին ու–րիչ պարագայ մը եւս, որուն իսկական տարողութիւնը սկսած է հասկցուիլ. այդ՝ արեւմտեան պետութեանց քաղա–քական անտեղութիւնն է: Այս պարագան անցեալները մատնանչուեցաւ անգլիական ճայնասփիւռէն՝ ճորճ Քէննանի կողմէ, որ Մ. Նահանգներու Փրինսթըն համալը–ռարանի պատմութեան դասախօսն է ու Մոսկուայի մէջ ամերիկեան նախկին դես–պան:

Իր պաչտօնին ու բնաւորութեան բեր–մամբ, ճ. Քէննան իր տեսակէտները ար–տայայտեց դիւանագիտական լեզուով, բայց իր խօսքերուն իմաստն ու ոգին, ա–նոնք նորութիւններ չէին, չափազանց սարսռ էին: Ես ինքս, աւելի քան չորս ու կէս տարիէ ի վեր, նոյն տեսակէտները կը պաչտպանեմ. այսինքն, երբ արեւմտեան պետութիւնները կը պահանջեն Գերմա–նիոյ միացումը եւ կը չեչտեն թէ միաց–եալ Գերմանիան պատ պէտք է ըլլայ իր ուղած դաչնակիցներուն միանալու, ի–րենց այս պահանջներով կը յետաձգեն ու կ'արդիլեն Գերմանիոյ միացումը: Եւ ան՝ այն պարզ պատճառով, — պէտք է իրատես ըլլայ, — որ Ռուսիա որեւէ մէկ պարագայի չի հեռանար Արեւելեան Գեր–մանիայէն, եթէ նուազագոյն կասկած մը ունենայ թէ Միացեալ Գերմանիան պիտի միանայ Արեւմուտքին:

Այս իրողութիւնը այնքան ակներեւ է, որ Գերմանիոյ բաժան – բաժան վիճակին հանդէպ անտարբերութիւն ցուցադրողներն են միայն զայն տեսնել չուզողները, ըլ–լա՛յ արեւմտեան երկիրներու, ըլլա՛յ Ա. – բեւմտեան Գերմանիոյ մէջ:

Պ. Քէննան այլ կերպ կը մօտենայ հար–ցին, բայց կը յանգի միեւնոյն եզրակա–ցութեան: Կը մատնանչէ թէ Ռուսիոյ արբանեակ երկիրներու ճակատագիրը կապուած է գերմանական հարցին լուծ–ման հետ: Երբ ռուսական զրահապատ – նաւերը կը տղայնցնեն Պուտափէշթի փո – ղոցներուն մէջ, ՄԱԿի եւ մասնաւորաբար ա–րեւմտեան պետութեանց առջեւ սարսա–փելի հարց մը կը դրուէր. պէ՞տք էր մի–ջամտէինք՝ հունգարացի ժողովուրդին օգնութեան փութալու համար. թէ՝ ան – կարողութեան կատաղութեամբ մեր ձեռ–քերը ճմլէինք եւ բաւականանայինք ան – զօր անէզքով: Եթէ միջամտէինք, պարզ էր որ Երրորդ Աչխարհամարտ մը պիտի ծագէր:

Այսպիսի դժուար երկընտրանքի մը դիմաց, համոզուած եմ որ ամէնէն ի – մատուն դիրքը բռնեցինք. համաչխար – հային պատերազմ մը եւ մարդկային ցե–ղին հնարաւոր բնաջնջումը չատ սուղ գին էր հունգարացի ժողովուրդին ազա–տութիւնը վճարելու համար:

Ի՞նչ պէտք է ընէինք, ուրեմն: Քէննան կ'ըսէ որ եթէ կացութիւնը այսպէս չա–րունակուի, Արեւելեան Եւրոպայի ժողո–վուրդները բոլորովին պիտի յուսահատին եւ յուսալքուին: Ուրիչ երկրի մը մէջ ծայր տուած ուրիչ ապստամբութեան մը ապաստել գատ ուրիչ ելք մը ունի՞նք: Քէննան կը պատասխանէ, եւ ես ալ հա – մաճայն եմ իրեն հետ այս կէտին չուրջ, — որովհետեւ բազմաթիւ առիթներով նոյն բանը ըսած եմ,— այո, ելք մը կայ. առնուազն՝ միջոց մը կայ, որ պէտք է փորձենք, բոլորովին յուսահատելէ եւ հարցը երեսի վրայ ձգելէ առաջ:

Խրուչչեւ բազմաթիւ առիթներով հա–կրցուցած եւ նոյնիսկ հաւկցնելէն ալ ա–ւելի ըրած է, թէ խորհրդային բանակներ կարելի է քաչել կարգ մը երկիրներէ, եթէ Ռուսիա լուրջ հաւաստիքներ ունե – նայ որ Միացեալ Գերմանիայէ մը վախ – նայու պատճառներ չունի: Այս երկիրնե–րէն առաջին հերթին կուզայ Լեհաստա – նը: Ռուս դեկավարները որոշապէս կը դիտակցին թէ իրենց արեւմտեան սահ – մաններուն վրայ զրաւման տակ գտնուող երկիրներու ժողովուրդներուն համակ – րանքը չեն վայելեր: Հասկցած են թէ յե–ղափոխութիւն կարելի չէ արտածել զէն–քի ուժով: Հունգարական ապստամբու – թեան ու Արեւելեան Գերմանիոյ բանուո–րական ցոյցերուն ճնչումը մեծ հարուած տուաւ Ռուսիոյ վարկին:

Ռուս դիտուններու արձանագրած մեծ յաջողութիւնները չեն կրնար հաւաստրա–կչել խորհրդային դեկավարութեան քա – ղաքականութեան անանկութիւնը, որ փաստուեցաւ վերոյիչեալ դէպքերուն առթիւ: Բայց եթէ երեւան եկան խորհր–դային քաղաքականութեան տկարութիւն–

ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԱԾՔ

ՀԵՐՈՍ ՄԸ

1861ի օրթակէզ ամառն էր:

Ամբողջ Եւրոպայի մէջ այդ չրջանին բերնէ բերան զրոյցներ կը չրջէին եւ կը պատմուէին այն բոլոր բարբարոսական արարքներուն մասին, զորս իտալացի ա–ւազակները, մեծ ճանապարհները բռնած, կը զործէին առանց վախի ու առանց խղճահարութեան:

Ցուլիսի տաք օր մը, արեւի առաջին ճառագայթներուն երեւումէն անմիջապէս եաքը, հրացանակիր ոստիկան – զինուոր մը Քափիթանաթէ Նահանգին ամայի դաչտավայրէն կը յառաջանար՝ հեծած իր նժոյգին վրայ:

Նախընթաց գիչերը Սան – Սէվէրոյէն ճամբայ ելած էր, պաչտօն ունենալով հրաման մը տանիլ մօտակայ պահականո–ցի մը հրանամանատարին, եւ իր համազ–գեստին ներքին զրպաններէն մէկուն մէջ խնամով պահած էր հրամանագիրը – նա – մակը:

Հրացանակիրը մօտաւորապէս երեսուն տարու անձ մըն էր, երկայնահասակ, նիհար, փայլատակող աչքերով, սրածայր պեխերով: Իր զիմազիծէն կ'արտաբերէր կանխահաս լրջութիւն մը, որուն՝ իր սեւ զլխարկը՝ երկու սուր ծայրերով, զրեթէ թախծոտ երեւոյթ մը կուտար:

Իր լրջախոհ կեցուածքը, իր հաստատ եւ կարուկ չարժումները կը հաստատէին պարագային չարմար կորովամտութիւն մը:

Իր նժոյգը զրեթէ քառամբակ կ'ըն–թանար, քարքարուտ ճամբայէ մը: Հրա–ցանակիրը մերթ ընդ մերթ մէկ կողմէն միւսը կը դարձընէր իր գլուխը եւ խու–զարկու աչքերով կը զննէր ամէն բան՝ ջինջ երկինքէն սկսած մինչեւ ամենա – ջինջ երկինքէն սկսած մինչեւ ամենա – մանրամասն անկիւնները չրջապատին, եւ ուրիչ ձայն չէր լսէր այլ միայն իր ձիուն ռունաճայնն ու կողքէն կախուած իր սու–րին յառաջացուցած աղմուկը:

Երբ կ'անցնէր ճամբուն երկու կողմե – րուն վրայ բարձրացած բաւական բարձր հողաթումբերու մէջէն, յանկարծ իր զի–մաց նչմարեց հրացանի մը փողին չողը եւ լսեց պայթիւն մը:

Ձեռքը տարաւ իր տարճանակներուն եւ նժոյգին կատարել տուաւ յետս ընկրկու–մի չարժում մը: Կենդանին տատանեցաւ, հրացանակիրը նոյն միջոցին ծռեցաւ նը–ժոյգին վրայ տտուզելու համար թէ արդ–եօք վիրաւորուա՞ծ էր ան:

Այդ պահուն զգաց որ երկու ուժեղ բա–զուկներ եաեւէն կը բռնէին զինքը: Ուզեց եաեւ դառնալ, սակայն զիմացէն՝ մացա–ռուտներուն մէջէն դուրս ցատկեց մարդ մը եւ յարձակեցաւ իր վրայ: Երրորդ անձ մը՝ զարձեալ եաեւէն, եկաւ միացաւ միւսներուն, եւ երեքը միասին, ակռա – թարթի մը մէջ կապեցին – կապկպեցին հրացանակիրը, հակառակ վերջնոյն քա – ջարի ընդդիմութեան:

Այնուամենայնիւ, սակայն, այս հերո–սական պայքարին կարճ ժամանակամիջո–ցի ընթացքին, հրացանակիրը, առանց որ յարձակողները նչմարէին, միջոցը ունե–ցաւ համազեստին զրպանը գտնուող նա–մակը արագ չարժումով մը նետել իր բե–րանը:

Երբ յարձակողները տեսան որ ձիաւո–րը բոլորովին անվնաս զրութեան մը մէջ կը գտնուէր, արձակեցին անոր կապերը, ոտքի կեցուցին զայն, եւ թեւերը եաեւ տանելով ու ամուր մը կապելով, հրամա–յեցին որ քալէր իրենց առջեւէն, չմոռնա–լով անոր ուսին բեռցնել իր սուրը եւ թամբին վրայ ծածկուած ծանր վերար–կուն:

Հրացանակիրը, ծանրաբեռնուած, սկը–սաւ յառաջանալ, իրեն կը հետեւէին ա – ւազակները, որոնք զարհուրելի աղմուկով մը կ'անարգէին խեղճը եւ հայհոյանքնե–րու տարափ մը կը տեղացնէին անոր վը–րայ:

Ժամ մը այսպէս յառաջանալէ եաք, երբ աւազակները տեսան որ չիտակ ճամ–բէն բաւական հեռացած էին եւ թէ որեւէ անակնկալի մը վախը բոլորովին անհե – տացած էր, դանդաղեցուցին իրենց քայ–լերը:

Հասած էին լերան մը ստորոտը, ուր ոչ մէկ բնակութեան նչոյլ կար:

Իր ծանր բեռան տակ կքած, հրացանա–կիրը ցոյց չէր տար վախի ու բարկու–թեան որեւէ նչան:

Դէմքը՝ ժժտոյն, առանց սակայն ընկ–ճումի, ցոյց կուտար կարծր հոգի մը, պատրաստ դիմագրաւելու այն բոլոր դա–ուն հետեւանքները որոնք կը սպասէին իրեն:

Աւազակներու դէմ մղուած մաքրադոր–ծումի կատաղի պայքարի այս օրերուն անոնց ձեռքը իյնալը գիտէր որ մէկ բա – նով միայն կը վերջանար.— Մահ:

Ատոր համար ալ, վերջին ժամու վե – հափառ խաղաղութիւն մը կը պարուրէր հետզհետէ իր էութիւնը, այնպէս որ զին–քը տեսնողը անպայման մէկ բան կրնար խորհիլ՝ «Այս մարդը պիտի մեռնի...»:

Ցանկարծ, աւազակներէն մին, որ խումբին պետը ըլլալու երեւոյթը ունէր, իր հրացանը եւս բեռցնելով հրացանակի–րին ուսին, ըսաւ.

— Ասիկա ալ կրնաս փոխադրել...

ԷՄՄՈՆՏ ՏԻ ԱՄԻՉԻՍ

(1 Շար.)

ԿՅՆՔԻՆ

Բ.

ԻՆՉ ՊԱՏՃԱՌԵՑ ՀԱՅՐԻՍ

Ես ծնվել եմ Ղարաբաղի Ջրաբերդ գավառի Ղարաքենդ գյուղում։ Հայրս գյուղի ամենահարուստ մարդկանցից մեկն էր։ Ունեցվածքի մեծ մասը նա ստացել էր իր հոր՝ Ղարաքենդի ամենահայտնի ավազակապետ Ալեքսանի ժառանգությունից։ Ալեքսանը մահացել էր 1905 թվականին, երբ հայրս ընդամենը տասներեք տարեկան էր։ Ալեքսանի մահից հետո հայրս ստանձնել էր ավազակախմբի ղեկավարությունը։ Ես հորս չեմ հիշում, որովհետև նա մահացել էր, երբ ես ընդամենը երկու տարեկան էի։ Մայրս ինձ պատմել է, որ հայրս շատ էր սիրում ինձ, և ես նրա միակ զավակն էի։ Ես ունեցել եմ նաև մի քույր, որը մեծ է ինձնից տասներկու տարով։ Նրա անունը Վարդանուշ է։

Հորս մահից հետո մայրս ինձ և քրոջս տարավ Ղարաքենդ գյուղից ոչ հեռու գտնվող Ծաղկավան գյուղը, որտեղ ապրում էին մայրս հորեղբայրները։ Նրանք մեծ ունեցվածքի տեր էին։ Նրանց տունը գյուղի ամենամեծ տունն էր։ Այն կառուցված էր քարից և ուներ մեծ բակ։ Բակում կային ձիեր, կովեր, ոչխարներ և հավեր։ Ես մանկությունս անցկացրել եմ այդ տանը։ Հորեղբայրներս ինձ շատ էին սիրում, քանի որ ես միակ տղան էի ընտանիքում։ Նրանք ինձ տվել էին Ալեքսան անունը՝ ի պատիվ պապիս։

Ես սկսել եմ հիշել իմ մանկությունը մոտ հինգ տարեկանից։ Հիշում եմ, որ ամեն առավոտ արթնանում էի հորեղբայրներիցս մեկի ձայնից, որը կանչում էր ինձ դուրս գալ բակ։ Ես վազում էի դուրս և տեսնում էի, որ նա արդեն հեծած է ձին։ Նա ինձ դնում էր ձիու առջևը և տանում էր դաշտ։ Այնտեղ նա ինձ սովորեցնում էր ձիավարել։ Ես շատ արագ սովորեցի ձիավարել և շուտով սկսեցի ինքնուրույն ձիավարել։ Հորեղբայրներս ինձ նվիրեցին մի փոքրիկ ձի, որին ես անվանեցի Արծիվ։ Ես նրան շատ էի սիրում և ամեն օր նրան կերակրում էի։

Երբ ես եղել եմ 8 տարեկան, մայրս ինձ ուղարկեց Ղարաքենդի դպրոց։ Դպրոցը գտնվում էր գյուղի կենտրոնում։ Այն երկհարկանի շենք էր, որի առաջին հարկում գտնվում էին դասարանները, իսկ երկրորդում՝ ուսուցիչների բնակարանները։ Դպրոցում սովորում էին գյուղի բոլոր երեխաները։ Ես շատ ուրախ էի, որ կարող եմ գնալ դպրոց, քանի որ շատ էի սիրում կարդալ և գրել։ Ես շատ լավ սովորող էի և միշտ առաջին տեղերում էի։ Ուսուցիչներս ինձ շատ էին սիրում և միշտ գովում էին ինձ։

Դպրոցում ես ընկերացա մի տղայի հետ, որի անունը Արամ էր։ Նա իմ հասակակիցն էր և նույն դասարանում էր սովորում։ Մենք միասին էինք խաղում, միասին էինք գնում դպրոց և միասին էինք վերադառնում տուն։ Արամի հայրը գյուղի քահանան էր։ Նրանց տունը գտնվում էր եկեղեցու կողքին։ Ես հաճախ էի գնում նրանց տուն և խաղում էի Արամի հետ։ Նրա մայրը՝ տեր Հոհաննեսի կինը, շատ բարի կին էր և միշտ մեզ համար ինչ-որ ուտելիք էր պատրաստում։

Մի անգամ, երբ ես 9 տարեկան էի, մենք Արամի հետ գնացինք գետափ՝ ձուկ բռնելու։ Մենք ձողեր էինք վերցրել և որդեր էինք դրել կեռիկների վրա։ Մենք նստել էինք գետափին և ձողերը ջրի մեջ էինք գցել։ Հանկարծ ես զգացի, որ ինչ-որ բան է կպել իմ ձողին։ Ես սկսեցի քաշել ձողը, և տեսա, որ մեծ ձուկ է կախված կեռիկից։ Ես ուրախությունից գոռացի և սկսեցի ձողը ավելի արագ քաշել։ Ձուկը ընկավ ափին, և ես վազեցի նրա մոտ։ Ձուկը մեծ էր, նրա քաշը մոտ 3 կիլոգրամ էր։ Մենք շատ ուրախացանք և որոշեցինք տանել ձուկը տուն։

Երբ մենք տուն հասանք, մայրս շատ զարմացավ ձկան չափերից և գովեց մեզ։ Նա ձուկը տվեց հորեղբայրներիցս մեկին, որպեսզի նա պատրաստի ձուկը ճաշի համար։ Հորեղբայրս ձուկը տարավ խոհանոց և սկսեց մաքրել։ Ես նրան օգնում էի։ Ձուկը մաքրելուց հետո հորեղբայրս այն տապակեց և մատուցեց սեղանին։ Ես շատ էի սիրում ձուկ ուտել, և այդ օրը ես շատ համեղ ձուկ կերա։

Ես շատ ուրախ էի, որ կարող եմ օգնել մայրիկիս տնային գործերում։ Ես սիրում էի նաև ձիավարել։ Ես հաճախ էի գնում դաշտ և ձիավարում էի Արծվի վրա։ Ես շատ էի սիրում Արծվին, և նա ինձ էլ էր սիրում։ Ես կարող էի ժամերով նստել նրա մեջքին և ման գալ դաշտում։ Ես նաև սիրում էի լողալ գետում։ Ես շատ լավ լողորդ էի, և ինձ համար դժվար չէր լողալ գետի մի ափից մյուսը։

Մի անգամ, երբ ես 10 տարեկան էի, ես և Արամը որոշեցինք գնալ անտառ՝ հապալաս հավաքելու։ Մենք վերցրինք զամբյուղներ և գնացինք անտառ։ Անտառում շատ հապալաս կար, և մենք սկսեցինք հավաքել։ Մենք այնքան էինք զբաղված հապալաս հավաքելով, որ չնկատեցինք, թե ինչպես հայտնվեցինք անտառի խորքում։ Մենք սկսեցինք վախենալ, որ կարող ենք կորչել անտառում։ Մենք սկսեցինք գոռալ, որպեսզի մեզ լսեն մեծահասակները։ Մեր ձայները լսեցին հորեղբայրներս, որոնք եկան մեզ փնտրելու։ Նրանք մեզ գտան և տարան տուն։ Մայրս շատ էր վախեցել մեզ համար և սկսեց մեզ նկատողություն անել։ Մենք ներողություն խնդրեցինք և խոստացանք այլևս այդպես չանել։

Ես շատ ուրախ էի, որ կարող եմ օգնել մայրիկիս տնային գործերում։ Ես սիրում էի նաև ձիավարել։ Ես հաճախ էի գնում դաշտ և ձիավարում էի Արծվի վրա։ Ես շատ էի սիրում Արծվին, և նա ինձ էլ էր սիրում։ Ես կարող էի ժամերով նստել նրա մեջքին և ման գալ դաշտում։ Ես նաև սիրում էի լողալ գետում։ Ես շատ լավ լողորդ էի, և ինձ համար դժվար չէր լողալ գետի մի ափից մյուսը։

Մի անգամ, երբ ես 10 տարեկան էի, ես և Արամը որոշեցինք գնալ անտառ՝ հապալաս հավաքելու։ Մենք վերցրինք զամբյուղներ և գնացինք անտառ։ Անտառում շատ հապալաս կար, և մենք սկսեցինք հավաքել։ Մենք այնքան էինք զբաղված հապալաս հավաքելով, որ չնկատեցինք, թե ինչպես հայտնվեցինք անտառի խորքում։ Մենք սկսեցինք վախենալ, որ կարող ենք կորչել անտառում։ Մենք սկսեցինք գոռալ, որպեսզի մեզ լսեն մեծահասակները։ Մեր ձայները լսեցին հորեղբայրներս, որոնք եկան մեզ փնտրելու։ Նրանք մեզ գտան և տարան տուն։ Մայրս շատ էր վախեցել մեզ համար և սկսեց մեզ նկատողություն անել։ Մենք ներողություն խնդրեցինք և խոստացանք այլևս այդպես չանել։

Ես շատ ուրախ էի, որ կարող եմ օգնել մայրիկիս տնային գործերում։ Ես սիրում էի նաև ձիավարել։ Ես հաճախ էի գնում դաշտ և ձիավարում էի Արծվի վրա։ Ես շատ էի սիրում Արծվին, և նա ինձ էլ էր սիրում։ Ես կարող էի ժամերով նստել նրա մեջքին և ման գալ դաշտում։ Ես նաև սիրում էի լողալ գետում։ Ես շատ լավ լողորդ էի, և ինձ համար դժվար չէր լողալ գետի մի ափից մյուսը։

Մի անգամ, երբ ես 10 տարեկան էի, ես և Արամը որոշեցինք գնալ անտառ՝ հապալաս հավաքելու։ Մենք վերցրինք զամբյուղներ և գնացինք անտառ։ Անտառում շատ հապալաս կար, և մենք սկսեցինք հավաքել։ Մենք այնքան էինք զբաղված հապալաս հավաքելով, որ չնկատեցինք, թե ինչպես հայտնվեցինք անտառի խորքում։ Մենք սկսեցինք վախենալ, որ կարող ենք կորչել անտառում։ Մենք սկսեցինք գոռալ, որպեսզի մեզ լսեն մեծահասակները։ Մեր ձայները լսեցին հորեղբայրներս, որոնք եկան մեզ փնտրելու։ Նրանք մեզ գտան և տարան տուն։ Մայրս շատ էր վախեցել մեզ համար և սկսեց մեզ նկատողություն անել։ Մենք ներողություն խնդրեցինք և խոստացանք այլևս այդպես չանել։

ԲՐԻՒՆՎԱԾ ԱՐՏԱՍԱ ԵՒ ՀԱՅՈՑ ԼԵԶՒՆ
Ամերիկայի Յայ Դատի և Տեղեկատուական Կեդրոնի Հրատարակութիւն
Տպարան Ալպաճեան, Պոսթըն, Մասաչուսեթս, ԱՄՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԱՐԱՆ
Շաբաթաթերթ կոգտրմկրն 1000
Տպարան «Ալպաճեան», Պոսթըն, Մասաչուսեթս, ԱՄՆ։ Հեռ. 1300
Խմբագրատուն՝ 212 Էսթըն Փարքուէյ, Պրուքլին, Նիւ Եորք, ԱՄՆ։ Հեռ. 84 2100
Գրասենեակ՝ 212 Էսթըն Փարքուէյ, Պրուքլին, Նիւ Եորք, ԱՄՆ։ Հեռ. 84 2100
Ամերիկայի Յայ Դատի և Տեղեկատուական Կեդրոնի Հրատարակութիւն
Տպարան Ալպաճեան, Պոսթըն, Մասաչուսեթս, ԱՄՆ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՄՈՍԿՈՒԱՅԻ ձայնասփիւռը կը հաղորդէ թէ խորհրդային գիտուններըը արուեստական երկրաչարժ մը ըրին Ուզպէկիս – տանի անապատային շրջանին մէջ: Հա – զարաւոր թոն ռազմանիւթ դրուած էր 40 մեթր խորութեան մը մէջ՝ արուեստական այս երկրաչարժը ընելու համար :

ՀԱՄԱՑՆԱՎԱՐ ՋԻՆԱՍՏԱՆԻ մամուլը կը դրէ թէ կառոյի պայքար մը սկսած է համայնավար կուսակցութեան աջակողմեան տարրերուն դէմ, աւելցնելով թէ այդ անձերը արժանի չեն համայնավար կու – սակցութեան անդամ կոչուելու :

ԻՍՐԱՑԼԻ վարչապետը յայտարարեց, թէ Արեւմտեան Գերմանիա առաքելու – թիւն մը ղրկելու իր ծրագիրէն չէ հրա – ժարած :— Իսրայէլ՝ իր պաշտպանու – թեան համար զէնքերու պէտք ունի , ը – սաւ ան, որ միայն Արեւմտեան Գերմա – նիայէն կարելի է ստանալ : կը կարծուի թէ կառավարական տագնապը լուծուելու վրայ է :

ՈՒՈՇԻՆԿԹՐՆի խորհրդային դեսպան նշանակուեցաւ Մէնչիկով, որ նախապէս նոյն պաշտօնը կը վարէր Հնդկաստանի մէջ: Հինգ տարիէ ի վեր Ուոշինկթընի խորհրդային դեսպանն էր Զարուպին , որ Արտաքին փոխ նախարար պիտի նշա – նակուի :

ՄԱԿի ընդհանուր քարտուղար Տակ Համմարշոլտ գահիրէ դնաց , ուր տեսակ – ցութիւն մը պիտի ունենայ Նասրի հետ :

ՍՈՒՐԻՈՑ եւ Իսրայէլի սահմանագլու – խին վրայ նոր միջադէպ մը պատահած է : Դամասկոսէն եկած լուրերու համաձայն, իսրայէլեան զինուորներ փորձած են Սուրիա մտնել՝ սակայն ետ մղուած են:

ԱՄԵՐԻԿԱՑի Նախագահ Այզընհաուըր Սուրիոյ նոր դեսպան նշանակեց Եոսթը, որ չուտով պիտի ձեռնարկէ իր պաշտօ – նին :

ԱՆԳԼԻՈՑ եւ Ֆ. Մրութեան միջեւ համաձայնութիւն մը գոյացաւ՝ Լոնտոնի եւ Մոսկուայի միջեւ օդանաւային դիծ մը հաստատելու համար, կը հաղորդեն Մոս – կուայէն :

ԳԱՀԻՐԷՆ խորհրդային օդանաւ մը մեկնեցաւ Մոսկուա՝ եգիպտական պատուիրակութիւն մը փոխադրելով Ֆ. Մրութիւն: 42 հոգինոց այս առաքելութիւնը մօտ երկու ամիս պիտի մնայ Ռուսիա :

ԱԹԻՆՔի մէջ Ծնունդի տօնին առիթով յունական մայրաքաղաքին Առաջնորդը քարոզ մը տուաւ եւ կոչ ըրաւ «աչխարհի տէրաւորներուն», որպէսզի կիպրոսի պատուութիւնը տան, ինչպէս նաեւ ազա – տութիւն՝ բոլոր ճնշուած ժողովուրդնե – րուն: Առաջնորդին կոչը մեծ խանդավառութիւն ստեղծած է Ցունաստանիեւկիպրոսի յունական շրջանակներուն մէջ :

ՓԱՐԻԶի մէջ Ծնունդի տօնակատարու – թիւնը կատարուեցաւ՝ աւանդութեան համաձայն: Ճամբու բազմաթիւ արկած – ներ պատահեցան՝ երկու հոգիի մահուան պատճառ ըլլալով. 29 վիրաւոր կայ :

Այրի Տիկին Արփենիա Արզումանեան, Տէր եւ Տիկին էմի Պետրոսեան եւ զա – ւակը, ինչպէս նաեւ բոլոր պարագաները խոր ցաւով կը ծանուցանեն իրենց ամուս – նոյն, հօր եւ մեծ հօր՝

ԹԱԼԻԾ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆի

մահը, որ պատահեցաւ Դեկտեմբեր 24ին, յետ կարճատեւ հիւանդութեան :

Ցուղարկաւորութիւնը կը կատարուի Շաբաթ, Դեկտեմբեր 28ին, ժամը 11ին, փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցին , ուրկէ մարմինը պիտի փոխադրուի Պան – նէօյի գերեզմանատունը :

Մասնաւոր մահագդ չստացողներէն կը խնդրուի ներկայս իբրեւ այդ ընկատել :

ՀԱՅ - ԲՈՅԺ

ԺՈՂ. ԱՄՍԱԹԵՐԹ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ

Խմբագիր՝ Շ. ՆԱՐԴՈՒՆԻՆ

Մամուլի տակ է Նոյեմբեր – Դեկտեմ – բեր թիւը, 48 էջ, ճոխ բովանդակու – թեամբ: Այժմէն բաժանորդագրուիլ 1958 տարուան համար :

Տարեկան բաժնեգինը 1000 ֆրանք Ֆր – բանսա, 1200 Ֆր. արտասահման : Ուշ վճարողները պիտի վճարեն նոր սակով :

"ՅԱՌԱՋ" ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԱՌԹԻԻ

—o—

Մ. Նահանգներէն Իզմիրցի Երուանդ Ղազարեան այս տարի եւս մէկ տարեկան «Յառաջ» կը նուիրէ Պէյրութի Փալան – ճեան ճեմարանին :

× *Ս. Մարիս տը Պէնոյէն Պ. Սօմուն – ճեան մէկ տարեկան «Յառաջ» կը նուիրէ լիոնաբնակ Պ. Գրիգոր Պօյաճեանի :*

× *Պէյրութէն Պ. Կ. Գ. մէկ տարեկան «Յառաջ» կը նուիրէ Պ. Նշանեանի (Պոն Ալժերի) :*

× *Տէր եւ Տիկին Գամպէրեան (Սէն Ժոնէն) մէկ տարեկան «Յառաջ» կը նուի – րեն իրենց ծնողքին Քլէման Ժողեանի (Մարսէյլ) :*

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Բիւթանիոյ բազմարդիւն առաջնորդ Տ. ՍՏԵՓԱՆՈՍ ԱՐՔ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆի յի – չատակին հոգեհանգիստ կը կատարուի այս կիրակի առաւօտ ժամը 10ին, փարի – զի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցին, կարգ մը Նիկոմիտիացիներու եւ Առաքելա – գիներու փափաքով :

Ցիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ :

×

Ալֆորվիլի Ս. Պօղոս – Պետրոս եկե – ղեցւոյ հոգաբարձութիւնը պարտական – նութիւն նկատած է, այս կիրակի 29 Դեկտեմբեր, եկեղեցւոյ անուան տօնին առիթով հոգեհանգստեան Ս. պատարագ եւ պաշտօն կատարել տալ եկեղեցւոյս բարերար Պ. Արմենակ Համբարձումեանի հանգուցեալ ծնողաց եւ ընտանեկան պարագաներուն ի յիշատակ :

Կը խնդրուի բարեպաշտ հաւատացեալ – ներէ եւ հանգուցեալներու յիշատակը յարգողներէ, ներկայ ըլլալ այն արարո – ղութեան :

Պիտի պատարագէ եւ քարոզէ հոգեւոր հովիւը Տ. Պարգեւ Քհնյ. Մերճաճեան : Պատարագը պիտի երգեն խաչակիր մա – նուկները, առաջնորդութեամբ Տօքթ. Լ. Համբարձումեանի, որ պիտի նուագէ նա – եւ երգեհոնը :

×

Այրի Տիկին Այվազեան , Այրի Տիկին Պզտիկեան կը ծանուցանեն թէ հոգե – հանգստեան պաշտօն պիտի կատարուի Լիոնի եկեղեցւոյ մէջ 29 Դեկտեմբեր, կիրակի առաւօտ, իրենց ամուսնոյն եւ եղբօր Թագուր Այվազեանի մահուան քա – ռասունքին առթիւ :

Կը հրաւիրուին ողբացեալին յիշատակը յարգողները :

×

Պ. Ղազարոս Քէչիչեան կը ծանուցանէ թէ այս կիրակի (29 Դեկտ.) առաւօտ հո – գեհանգստեան պատարագ պիտի կատար – ուի Պուլվար Օսմոյի Ս. Յակոբ եկեղե – ցւոյ մէջ՝ իր կնոջ Վարդուհիի եւ փեսա – յին՝ Փայլակ Մատալեանի մահուան տա – րելիցներուն առթիւ, նոյնպէս նորեկ նըն – ջեցեալ Տիկին Ովսաննայ Ստեփանի հա – մար : Եւ մասնաւոր հոգեհանգստեան պա – տարագ Յակոբեան եւ Քէչիչեան գեր – դաստաններուն բոլոր ննջեցեալներուն յիշատակին :

Կը խնդրուի ողբացեալներուն յիշատա – կը յարգողներէն ներկայ գտնուիլ :

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

Ֆ.Կ.Խաչի Մարսէյլի մասնաճիւղինկողմէ կը տօնուի Յունուար 5ին, ժամը 2ին, Ահարոնեան ակումբին մէջ :

Սիրուն անակնկալներ, երգ, պար, ար – տասանութիւն :

Սրահին ջերմութիւնը ապահովուած է: Մուտքը ազատ է

ՑՈՒՇԱՏԵՏՐ

—o—

ՓԱՐԻԶ.— Հ.Ց.Դ. Պէլվիլի «Ռոստոմ» խումբի ժողովը այս շաբաթ, ժամը 21ին, ընկեր Մանուկի բնակարանը: Ներկայ կ'ըլլայ Շրջ. կոմիտէի ներկայացուցիչը :

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ, ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

կազմակերպուած Ֆ. Կ. Խաչի Փարիզի մասնաճիւղին կողմէ
28 Դեկտեմբեր, Շաբաթ կէս օրէ վերջ ժամը 20էն մինչեւ լոյս

Լիւքէսիայի գեղեցիկ սրահներուն մէջ

Orchestre Lutetia 43, BLD. RASPAIL, MÉTRO SÈVRES-BABVLONE

Գեղարուեստական բաժին, Պ. Կարպիս Ափրիկեանի երգի երրեակը կը մեներգեն Արա Սերոբեան (պարիթօն), Մկրտիչ Պօղոսեան (թենոր) :
Մենապարեր՝
Օր. Թերեզ Քէօշկէրեան՝ *Սուրերու պարը Խաչատուրեանի*, Օր. Անի Թարօն *Երեւանի հարսանիքը եւ եւրոպական պար մը :*

ԾԱՆՕԹ.— Տոմսերու վրայ նշանակուած է մինչեւ կէս գիշեր, բայց բոլորին ցանկութեան վրայ կարզադրուած է սրահի անօրէնութեան հետ մինչեւ առաւտան ժամը հինգ :

Մուտքը՝ 500 ֆրանք

Ուսանողներու համար՝ 300 ֆրանք , ներկայանալ իրենց ուսանող. քարտերով : Նպատակն է՝ կազդալ Խաչի օգափոխութեան կայանը, ինչպէս նաեւ իր կրթա – կան եւ բարեսիրական գործերը :

Սեղանները կանխաւ ապահովել հեռախօսելով Տիկ. Թաղէոսեանի Թրիւտէն 27–35 եւ Տիկին Նազըշդարեանի Տօմէնիլ 13–27

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Ս. Մուրատեան վարժարանի Ծնողաց Միութիւնը չնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց որոնք նուէրներով կամ ի – րենց մասնակցութեամբ նպաստեցին տօ – նածառի հանդէսին յաջողութեան :

×

Վիճակահանութենէն չհանդ հետեւեալ թիւերը՝ 235, 252, 253, եւ 264 կրնան իրենց նուէրները ստանալ վարժարանէն :

ԹԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ՈՒ ԾՆՈՒՆԴԻ ԱՌԱՒՈՏՈՒԹԵԱՆՑ

ՓԱՐԻԶ, Ս. ՅՈՎՀ. ՄԿՐՏԻՉ

Այս կիրակի պիտի մատուցուի հանդէ – սաւոր քառաձայն Ս. պատարագ ժամը 10– ին: Ղեկավարութեամբ՝ Արա Պարթեւ – եանի :

Հայ հասարակութիւնը կը հրաւիրուի ներկայ ըլլալ :

Նոյն օրը Հոգաբարձութիւնս կազմա – կերպած է յետ պատարագի Դպրաց Դա – դու ի պատիւ ընդունելութիւն մը խորհ – դարանին մէջ, նախապահութեամբ՝ Հայ – րապետական Պատուիրակ Սերովբէ Եպիս. Մանուկեանի:

ԼԻՈՆի ԵԿԵՂԵՑԻ

Իմմիթի բարեխնամ եւ չինող առաջնորդ Մեսրոպեան Ս. Աբգ. եպիսկ. Յովակիմ – եանի յիշատակին հանդիսաւոր հոգեհան – դիստ պիտի կատարուի Լիոնի եկեղեցւոյն մէջ, իր անմոռաց յիշատակը յարգողները կը հրաւիրուին ներկայ գտնուիլ :

ՍԷՆԹ ԱՆԹՈՒԱՆ՝ Ս. ԹԱԴԷՈՍ ԵԿԵՂԵՑԻ

Այս կիրակի Ս. Մեսրոպեան տօնակատ – արութիւն (4րդ տարելից Դպրաց Դասու) հանդիսաւոր Ս. Պատարագ եւ հոգեհան – դիստ Դպրաց Դասու անդամներու հին եւ նոր ննջեցեալոց, ինչպէս նաեւ օծում Ս. Թադէոս եւ Բարդողիմէոս նկարներու :

Սկիզբ ժամեր. ժամը 8ին :
Ս. պատարագ ժամը 10ին :
Պատկերներու օծում ժամը 11ին :

ՆՈՒԻՐ

Նոր տարուան առթիւ Տիկ. Տէօքմէճեան երկու հազար ֆրանք կը նուիրէ Աղգա – տախնամին : (Ստանալ Յառաջէն) :

Հ. Մ. Ը. Մ.Ի ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ ՎԻԼՆի ՄԷՋ

Դեկտեմբեր 28ին, Շաբաթ իրիկուն , Սալ տէ Ֆէթի սրահներուն մէջ:
Մանրամասնութիւնները տեղւոյն վրայ

ԿՈՒԶՈՒԻՆ

Տունը աչխատող գործաւորուհիներ fopuաժի *համար : Դիմել՝*

ELISABETH CONFECTION
67, Rue de Cléry Paris 2 - Métro Strasbourg St.-Denis

Réveillons

Chez SASSOUNI

ԿԱՂԱՆԴԻ

Ջուարք ու հաճելի Զարթօնքը
(24 եւ 31 Դեկտեմբերի գիշերները)
Մի մտածէք ուր անցընելու մասին
ՍԱՍՈՒՆԻՆ մօտ ի հարկէ
Ուր պիտի գտնէք ճոխ ու պէսպի – սուն ուտելիքներ եւ խմիչքներ
Բոլորդ աղդականներով եւ բարե – կամներով ժամադրուեցէք
Եւրոպական եւ արեւելեան նուագ
ՍԱՍՈՒՆԻՆ
31. RUE D'ALEXANDRIE, PARIS - 2e
Tél. GUT. 92-65

Imprimé sur les presses du journal HARATCH
17, Rue Bleue, 17 — PARIS (9e)

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ Բ. ՄԵԾԱԴՈՑՆ ԵՒ ԵՐԳԱՐԱՏԵՒ ՍԿԱՒԱՌԱԿԸ ԱՆՆԱԽԸՆԹԱՑ ԸԼԼԱԼՈՎ 55 ՎԱՅՐԿԵԱՆԻ ՏԵՒՈՂՈՒԹԵԱՄԲ 30 CM.

VOGUE-CONTREPOINT N° MC 20150

Պատրաստութեամբ եւ ղեկավարութեամբ **ԱՐԱ ՊԱՐԹԵՒԵԱՆԻ**
Կոմիտասեան խառնաձայն պատարագի երգեցողութիւնք, եւ այլ կտորներ

Մասնակցութեամբ մեներգողներու , պատարագիչի զանազան բաժիններով եւ ընկերակցութեամբ ՄԵԾ ԵՐԳԻՆԻ

ՍԿԻԶԲ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳԻ.— (Խորհուրդ խորին, Հրաշափառ, ընտրեալդ Աստուծոյ , Ուրախ լեր) :
ԷՋՄԻԱԾՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԱԻ ԵՒ ԿՈՄԻՏԱՍԵԱՆ ԴԱՇՆԱԻՈՐՈՒՄՈՎ.— (Սուրբ, Հայր երկնաւոր, Ցամենայնի, Որդի Աստուծոյ, Հոգի Աստուծոյ)
եւ եղիցի ողորմութիւն (*Ա. Պարթեւեանի*), Գոհաբանական Հայր մեր (Կոմիտաս Միայն Սուրբ, Հայր, Որդիդ, հոգիդ Սուրբ եւ Օրհնութիւն, Տէր Ողորմեա, Քրիստոս պատարագեալ, Աստուած մեր, կեցո Տէր, Լցաք ի բարութենց, Գոհանամք, Մաղթանք, եղիցի : Էջմիածինն ի Հօրէ (*Ա. Պարթեւեանի*) Զօն առ Տ. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոս

Գին 2700 ֆրանք

Ստանալու համար դիմել՝

Ա. Պարթեւեանի՝ 14, Rue Petit, Paris 19 - BOT. 99-22 RECORD SHOP, 36, Rue de Moscou, Paris 8 *Եկեղեցւոյ Դիւանատունը*

Բոլոր երաժշտական վաճառատուններըը.— Գնաւոի համար առաքում մասնաւոր խնամուած ծրարով
Փնտռել նաեւ կասետաձայնները՝ թիւ 20·109 20·114 20·136 Contre remboursement
Մանրամասն բացատրութիւններ եւ թարգմանութիւնը՝ գեղարուեստական կողմին վրայ :

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 — Téléph. : PRO. 86 - 60
R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա եւ գաղութներ, տարեկան 3000 ֆր. վեցամս. 1600
Արտասահման՝ տարեկան 3500 ֆրանք: Հատը 12 ֆր.

ՇԱԲԱԹ
28
ԴԵԿՏԵՄԲԵՐ
SAMEDI
28 DECEMBRE
1957

33ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8079 — 33e ANNEE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 13ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3880

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ԿԱՊՈՅՏ ԽԱՉԻ ՁԵՌՆԱՐԿՆԵՐԸ

Ֆրանսահայ Կապոյտ Խաչի Փարիզի մասնաճիւղին պարահանդէսը տեղի կ'ունենայ այսօր՝ չաթէ դը Լիւթեսիայի սրահներուն մէջ :

Կանանց բարեսիրական այս կազմակերպութիւնը երեսուն տարիէ ի վեր կը զօրծէ մեր գաղութին մէջ՝ անձայն, անչքուղ եւ նուիրուած աղքատասպանման վսեմ գործին :

Ընդարձակ է իր գործունէութեան դաշտը : Իր ղլխաւոր մտահոգութիւնն է նոր սերունդի փրկութիւնը : Մասնաւորաբար – թիւն զարձուցած է ամառնային օգափո – խութեան կայանը, ուր ամէն տարի Ֆը – րանսայի բոլոր ջրջաններէն մեծ թիւով երկսեռ մանուկներ կ'ապրին իսկական հայկական միջավայրի մէջ, Խաչուհիներ – րու մայրական հոգածութեան տակ : Կը սորվին մայրենի լեզուն : Կը ճանուղեն հայերէն, ու կ'երգեն ազգային երգեր :

Հասոյթի մեծ աղբիւրներ չունի կա – պոյտ Խաչը : Անդամատուրքերն ու պա – տահական նուէրները հնարաւորութիւն տուին իրեն քանի մը տարի առաջ գնելու չէնք մը՝ փիւռայի օդասուն եւ զովարա – գեղ մէկ անկիւնը՝ իրրեւ կայան : Նան – ակնեան դրօշմանիշերու հասոյթէն որոշ դումար մը կը յատկացուի օգափոխու – թեան կայանին համար : Կառավարու – թիւնն ալ, գնահատելով Կապոյտ Խաչի այս օգտաչատ ձեռնարկը, նիւթական փոքրիկ օժանդակութիւն մը կ'ընծայէ՝ կարենալ ապրուստի պայմանները բարելաւելու համար :

Սակայն տակաւին մեծ դումարներու պէտք կայ՝ չէնքը ներկայանալի վիճակի մէջ դնելու համար :

Ֆրանսահայ Կապոյտ Խաչի գործու – նէութիւնը ի յայտ կուգայ նաեւ կրթա – կան մարդին մէջ : Հայերէնի դասընթացք – ներ հաստատած է փարիզեան ջրջանին եւ դաւառներու մէջ : Նիւթականի պակասը արգելք կ'ըլլայ աւելին ընելու : Կ'օժան – դակէ աղքատ աշակերտ – աշակերտու – հիներու, որպէս զի իրենց ուսումը չա – րունակեն :

Մեր հիւանդ ու աղքատ հայրենակից – ները մասնաւորապէս կ'արժանանան կա – պոյտ Խաչի գուրգուրանքին : Անճնուէր Խաչուհիներ պարբերական այցելութիւն – ներ կուտան հիւանդանոցներու մէջ խը – նամող անոէր հիւանդներու :

Փարիզի մեր աղգային տօներու չարքին աւանդական դարձած է Մանուկներու Օ – րը, զոր Ֆ. Կապոյտ Խաչի կեդրոնական վարչութիւնը կը կազմակերպէ ամէն տա – րի փարիզեան ջրջանի իր տասը մասնա – ճիւղերով :

Այդ տօնը առիթ կուտայ հարիւրաւոր մանուկներու, որ ամիսներ առաջ սորվին հայերէն երգեր ու արտասանութիւններ : Ամէն տարի 350 – 400 մանուկներ ներկայ կ'ըլլան կաղանդի հանդէսին ու հայաշունչ մթնոլորտի մէջ կը վայելեն քանի մը ղե – ղեցիկ ժամեր : Կը ղգան իրենց հայու – թիւնը եւ հպարտութեամբ կը լեցուին :

Ֆրանսահայ Կապոյտ Խաչին չուրջ բո – լորուած են ո՛չ միայն մեր մայրերն ու կիները, այլ նաեւ երիտասարդ քոյրերն ու աղջիկները : Անոր չարքերը միշտ կը թարմանան : Երէցներու օրինակին կը հե – տեւին դեռահասները, նոյն սիրով ու զո – հաբերութեամբ չարունակելու համար այդ գերազանցօրէն հայրենասիրական ու մարդասիրական գործը :

Փարիզահայ մեր հայրենակիցներուն համար նուիրական պարտականութիւն մը պէտք է ըլլայ քաջալերել Ֆրանսահայ Կապոյտ Խաչի ձեռնարկները, հնարաւո – րութիւն տալու համար կանացի մեր այս մեծ կազմակերպութեան, որ աւելի մեծ եռանդով կատարէ իր առաջադրած նպա – տակները :

ՀՐԱՆՏ – ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՖՐԱՆՍԱՑԻ ՆԵՐՔԻՆ ՀՈԳԵՐԸ

ԵՐԵՍԷՓՈԽԱՆՆԵՐԸ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԷՋ

Առջի օր Նախարարաց Խորհուրդը ժո – ղով մը գումարեց : Բազմաթիւ հարցեր քննութեան ենթարկուեցան :

Ատլանտեան Ուխտի ժողովէն եւ խոր – հրդային զեկավարներու յայտարարու – թիւններէն եաք, կառավարութեան ան – դամները այնպէս կը մտածեն թէ Արե – ւելք – Արեւմուտք խորհրդակցութեան մը կարելիութիւնները ստեղծուած են այլ – եւս :

Դեսպանատուներու խորհրդակցու – թիւնները կը չարունակուին այս ուղղու – թեամբ : Ատլանտեան Խորհուրդը պիտի դումարուի յառաջիկայ Յունուար 8ին : Յունուարի մէջ է դարձեալ որ Ֆրանսա պիտի պատասխանէ մառեչալ Բուլգանինի նամակին : Փարիզ պիտի պնդէ սպառա – զինումը հսկողութեան ենթարկելու իր առաջարկին վրայ :

Ֆրանսական թէզը այն է, որ հաւա – սարակշռութիւնը պէտք է պահուի երկու կողմերուն միջեւ, կամ՝ պատերազմական միջոցներու հաւասարութեամբ, կամ հա – ւասար զինաթափութեամբ : Ամէն պա – րագայի մէջ սակայն, Ֆրանսա պիտի աշ – խատի որ այդ հաւասարակշռութիւնը ստեղծուի զինուած յանելումով : Փարիզի խորհրդակցութեանց ընթացքին, Նախա – գահ Այզընհաուըրն ալ համաձայն էր այս տեսակէտին :

Նախարարաց Խորհուրդին կարեւորա – գոյն օրակարգներէն մէկն ալ Սահմանա – դրութեան մէջ կատարուելիք բարեփո – խութիւններն էին . այս հարցը նախա – րարներէն աւելի՝ կազմակերպութիւնները յուզումի մատնեց : Այս պարագան ցոյց կուտայ, թէ հարցը բաւական աղմուկ բարձրացուցած է արդէն : Առաջին քայ – լը՝ Սահմանադրութեան բարեփոխման համար, դէշ էր ,կը ըրէ տեղական մամու – լը : Ահա՛ թէ ինչո՞ւ Անդրծովեան Ֆրան – սայի ներկայացուցիչը միջամտելով յայ – տարարած է, թէ կառավարութեան կա – յուն վիճակը աւելի քան էական է մայր երկրին մէջ՝ օրինակ ծառայելու համար Ափրիկէի երկիրներուն :

Երկու ղլխաւոր տեսակէտներ կան այս հարցին մէջ : Թէեւ մը կը պահանջէ որ մի – այն ընտրական օրէնքը բարեփոխուի , իսկ ուրիշ թէեւ մը սահմանադրական բա – րեփոխում կը պահանջէ՝ առանց ընտրա – կան օրէնքի փոփոխման :

Ռոպէր Լքուր պատրաստած էր ծրա – գիր մը՝ այս ուղղութեամբ : Վարչապետ կայեռ կոչ ըրաւ նախարարներուն՝ որ այդ ծրագիրը պաշտպանեն իրենց խըմ – բակցութեանց մէջեւ. կարելի է նաեւ բարեփոխել զայն : Վարչապետին մտահո – գութիւնը այն է, որ պէտք է մեծամաս – նութիւն գոյացնել՝ ամէն գնով : Երէկ, ուրբաթ ,նախարարները դարձեալ ժողովի հրաւիրուած էին՝ այս բարդ խնդիրը լու – ծելու համար :

Սահմանադրական բարեփոխման մէջ կարեւոր կէտ մըն է նաեւ այն պարա – գան՝ որ կառավարութիւնը իրաւունք պիտի ունենայ Ազգ. ժողովը ցրուելու , իսկ նախարարական տաղնապի մը պարա – գային՝ այդ իրաւունքը պիտի ունենայ Հանրապետութեան Նախագահը, որ Հան – րապետութեան Խորհուրդին (Ծերակոյտ) հետ համախորհուրդ՝ ձեռք պիտի առնէ հարկ եղած միջոցները :

Մինչ այս մինչ այն Ազգ. ժողովը 233ի դէմ 288 ձայնով վաւերացուց 1958ի պիւտճէն (Բ. ընթերցումէ եաք) : Երես – փոխանները եւ ծերակուտականները ար – ձակուրդ առացան՝ մինչեւ Յունուար 14 :

Օրը Օրին

ԴՈՎԵԼԻ ՁԵՌՆԱՐԿ ՄԸ

Պէյրութի *Ազգակը*, նախաձեռնու – թեամբ «Զաւարեան» Ուսանողական Մի – ութեան, հրատարակած է բացառիկ թիւ մը՝ նուիրուած հայ ուսանողութեան :

Միութեան վարչութիւնը կը ներկայա – ցընէ իր առաջադրութիւնները, խանդա – վառ հաստատումով մը.— *Կա՛յ հայ ու – սանողութիւնը՝ աւելի քան երբեք. կա՛յ հայ երիտասարդութիւնը՝ աւելի կենսու – նակ ու տրամադիր նոր խոյանքներու , քան յիսուն տարի առաջ :*

Տարբեր երկիրներէ հայ թէ օտար մը – տաւորականներու հայ ուսանողութեան մասին գրած յօդուածներու հաւաքածոյին առաջին էջին մէջ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Զարեհ Ա. հայրական իր խօսքը կ'ուղղէ ուսանողութեան, շեշտե – լով թէ ան «անսահման գիտութեանէն օգ – տուելու իր կոչումին կողքին, հայ մշա – կոյթի լուսաբորբ ջահը մի՛շտ վառ պա – հելու եւ «փոքր ածու»ին ջրտուրը կանո – նաւորաբար կատարելու խոր գիտակցու – թիւնն ու սէրը պէտք է ունենայ» :

Ընդհանուր առմամբ, այս հրատարա – կութիւնը հայ ուսանողներու մտաւոր թէ հոգեկան երազներուն, ապրումներուն պատկերն է : Ուսանողութեան դերին ու յատկանիշներուն մասին՝ առաջադրու – թիւններ : Հաստատումներ :

Հետաքրքրականը, այս հաւաքածոյին մէջ, բարձրագոյն կրթարաններու եւ հա – մալսարաններու դասախօսներուն հետ կատարուած տեսակցութիւնները են : Ա – ռանձին հարց մը՝ որ համալսարաններու դասախօսներուն մէջ շա՛տ է թիւը Հայե – րու : Ուշագրաւ է սակայն օտար դասա – խօսներու, փրանսացի թէ ամերիկացի , կարծիքը հայ ուսանողութեան մասին : Գրեթէ բոլորն ալ կը մատնանշէին Հայուն մրցակցութեան եւ յառաջդիմութեան ո – գին : Աշխատասիրութիւնը : Ուշիմութի – ւնը : Շեշտուած նախասիրութիւնը՝ ար – ուեստներու մէջ :

Անշուշտ, այս բոլորին ամէնէն առաջ ծանօթ են իրե՛նք, ուսանողները : Կը տես – նեն իրենց ազգակիցներուն յառաջդիմու – թիւնը՝ ամէն ճիւղի մէջ : Գիտակցութի – ւնըն ալ ունին՝ ցեղային իւրայատուկ ի – րենց արժանիքներուն :

Ի՞նչ կը մնայ սակայն այդ արժանիքին՝ իբրեւ ազգային գործ , Եւրոպա թէ Ամե – րիկա :

Ահա՛ թէ ուր է հարցը :

Արեւելքը պիտի կարենա՞յ զօրաշարժի ենթարկել եւրոպական ու ամերիկեան հայ ուսանողութեան աշխարհը :

Դերերը շրջուած կը տեսնուին, քայց «Զաւարեան»ի ուսանողները կը հաւատան ասոր :

Յաջողութի՛ւն : *ԱՐՄԵՆԱԿ*

ԳԵՐՄԱՆԻԱ ՉԷՆՔ ՉԻ ՏԱՐ ԻՍՐԱՅԷԼԻ

Ինչպէս պրած էինք, Իսրայէլի մէջ կա – ռավարական ծանր տաղնապ մը ծայր տուած էր՝ երբ Պէն Կուրիոն կը մտածէր պէնք դնել Արեւմտեան Գերմանիայէն : Մինչդեռ, Պոնի չրջանակները հաւանա – կան չեն նկատեր Իսրայէլի պէնք տալու պարագան :

Գերմանիա պէնք պիտի չտայ Իսրայէլի, որովհետեւ կը մտածէ դիւանագիտական լաւ յարաբերութիւններ ստեղծել արաբա – կան երկիրներուն հետ : Գերմանացիք կը յիշեն, թէ Հրեաներուն հետ դիւանագի – տական յարաբերութիւններ ստեղծելու համաձայնագիրն անգամ ինչ յուզում պատճառեց Արաբներուն : Այսքանը բա – ւական էր, որպէս զի Պոնի կառավարու – թիւնը ընդդիմանար Իսրայէլի հետ որեւէ նոր կապ հաստատելու տեսակէտին : Իսկ գալով հրեայ զօրավար Տայեանի Գերմա – նիա այցելութեան, Պոնի չրջանակները կը հաղորդեն թէ անոր առաքելութիւնը պարզապէս քաղաքավարական բնոյթ ու – նէր : Իսրայէլեան առաքելութիւնը խոր – հրդակցութիւններ ունեցած է կիսապաշ – տօնական չրջանակներու հետ : Հրէա – կան թերթերը կը գրեն թէ Գերմանացիք ո՛չ մէկ առարկութիւն ըրած են զօրավար Տայեանի առաքելութեան դէմ :

Մինչդեռ ուրիշ թերթեր կը գրեն թէ Պոնի կառավարութիւնը ցուրտ վերաբե – րում ունեցած է այդ առաքելութեան հանդէպ, նոյնիսկ կը փափաքէր որ Իս – րայէլացիք այցելութիւն չտան իրեն :

Ինչպէս կը տեսնուի Գերմանիա ոչ մէկ նպատակ ունի ընդառաջելու Թէլ – Ավիվի կառավարութեան փափաքներուն : Նոյն – իսկ, Պէն Կուրիոնի տեսակէտը երբ յաղ – թանակէ եւ հրեայ առաքելութիւն մը ղրկուի Գերմանիա՝ Պոն պէնք պիտի չտայ Իսրայէլի :

—o—

ՓԱՐԻԶԻՆ Դեկտեմբեր 18 – 24ի ըն – թացքին 701·000 հոգի արձակուրդի մեկ – նեցաւ :

ՄԱԿի ընդհանուր քարտուղար Համըր – շոլտ տեսակցութիւն մը ունեցաւ Նաթոյի հետ, Գահիրէի մէջ :

ՆՈՐ ՇԱՐԺՈՒՄ ՄԸ ՀԱՄԱՁՆԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆՑ ՄԷՋ

Մոսկուայի ձայնասփիւռը կը հաղոր – դէ, թէ Ուկրանիոյ համայնավար կու – սակցութեան ընդհանուր քարտուղար Ա – լէքսիս Քիրիչենկօ իր պաշտօնէն արձակ – ուած է, նկատելով որ Մ. Միութեան հա – մայնավար կուսակցութեան կեդր. կոմի – տէի քարտուղար ընտրուեցաւ. Փոտկորնի դրաւած է իր նախկին պաշտօնը : Իսկ Օ – տեսայի համայնավար կուսակցութեան քարտուղար Նայտէք դրաւած է Փոտկոր – նիի տեղը :

Այս փոփոխութիւնները կատարուած են Ուկրանիոյ համայնավար կուսակցութեան կեդր. կոմիտէի ընդհանուր ժողովին մէջ, ուր ներկայ եղած է նաեւ Խրուչչեւ :

Իսկ Ղազախստանի համայնավար կու – սակցութեան Ա. եւ Բ. քարտուղարները արձակուած են իրենց պաշտօններէն :

Այս փոփոխութիւնները ցոյց կուտան թէ երկու չարժումներ կան Մ. Միութեան Նախագահ Խորհուրդին մէջ, որոնց պայքարը կը չարունակուի նոյնիսկ՝ Ժու – կովի հարցէն եաք :

Միւս կողմէ Միացեալ Նահանգներու համայնավար կուսակցութեան գործադիր մարմինը ժողով մը գումարելով մերժեց իր օժանդակութիւնը տալ՝ Մոսկուայի մէջ համայնավար 12 կուսակցութիւննե – րուն կատարած յայտարարութեան : Ինչպէս ծանօթ է, այդ յայտարարու – թեամբ համայնավար աշխարհին դէմ կա – վարութիւնը կը վերապահուէր Մ. Միու – թեան :

Ամերիկայի համայնավարները որոշած են նաեւ դադրեցնել իրենց պաշտօնա – թերթ՝ Տէյլի Ուորքըրի հրատարակու – թիւնը :

—o—

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ արեւմտեան չրջանին մէջ նոր երկրաչարժներ պատահեցան :

ԻԶՄԻԹԻ մէջ (Թուրքիա) երկրաչարժ մը պատահեցաւ. բազմաթիւ չէնքեր ճեղ – քուեցան : Քսան վայրկեան եաք նոր չարժ մը պատահեցաւ, աւելի զօրաւոր , որ զգալի դարձաւ մինչեւ Պոլիս :

ԵՈՒՀԱՆԵՍԲՈՒՐԳԻ մէջ Ծնունդի օրը խռովութիւններ ծագած են, որոնց հետե – ւանքով քսան Ափրիկեցիներ սպաննուած եւ 800 ուրիշներ վիրաւորուած են :

ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԱՊՐՈՒՄՆԵՐ

(Ս. ԹԱԴԷՈՍԻ ՎԱՆՔԻ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ)

(Բ. եւ վերջին մաս)

Բոլորս իրար կ'անցնէինք, փորձելով վայրկեան առաջ տեսնել այդ պատմական դեմը: Իսկ ինքնաշարժը զառիթափէն ազատուելով վար կ'իջնէ, կամուրջը կ'անցնի եւ կանգ կ'առնէ միւս ափը, ծառախիտ պարտէզի մը եզերքին:

Ամէն ոք կ'աշխատի չուտ իջնել եւ մօտենալ Տղմուտին:

Ակամայ կը յիշեմ ծանօթ երգը·

«Որ Տղմուտի ափերուն ﬠով,
Վաթսուն հազար կտրիճներով,
Զարկիր, զարկուար, ինկար ﬠալ, ﬠալ,
Պարսիկ սփռած, ի ձախ ու յայլ»:

Կինս եւ աղջիկս կը ձայնակցին ինծի:

Եւ այն ջուրը, որով մեր հերոս պապերը, հազար հինգ հարիւր վեց տարի ա – ռաջ, գրեթէ այս օրերուն, իրենց վէրքերը լուացին, մենք հազիւ կրցանք մեր ը – լտխներուն նստած փոչիները մաքրել ...

Տղմուտէն քանի մը քիլոմեթր անդին, ճամբան աւելի խորտուբորտ է եւ ցեղ – ցումները աւելի նեղացուցիչ են, քանի որ խճուղին կը վերջանայ ու կը սկսի այս – պէս կոչուած ոչ – պաշտօնական եւ քիչ բանուկ ճանապարհը: Մօտ երեսունեւ – հինգ հոգի թիմուած ենք բեռնատար ինք – նաշարժին մէջ: Ուրիշ տեսակի ինքնա – շարժները չատ դժուարութեամբ կրնան տեղ հասնիլ:

Փոչին թանձր շերտ է կապեր բոլորիս վրայ:

Դժդոհութիւնը ընդհանուր է:

Գմբէթները, գմբեթները ... , կ'ազա – ղակեն նորէն առջեւ նստողները:

Ընդհանուր իրարանցում: Ամէն ոք կը փորձէ մեր տառապանքի վերջը աւետող եւ այդ պատմական սրբավայրի մօտիկու – թիւնը հաստատող փաստերը տեսնել:

Երկու ճառագայթող եւ չողարձակ գմ – բէթներ, որոնք զարերով մխուած են եր – այս անբերբ աշխարհին ու մարդկու – թեան՝ իրենց լքուած վիճակը, բայց նա – եւ յաւիտենականութիւնը, իրրեւ չունչ եւ ոգի:

Քաղաքներու ժխորէն, կրօնական զգա – ցումներու թուլութենէն եաք, այս զոյգ գմբէթները՝ խաղաղ լեռներու ծոցին մէջ, շատ բան կը խօսին հայ մարդուն:

Լեռներու եւ բլուրներու եաեւ, գմբէթ – ները բացխփիկ կը խաղան կարծես:

Եւ ահա մեր համբերութիւնը վերջ կը գտնէ· վանքը իր ամբողջութեամբ կ'երե – ւի՝ փոխն ի փոխ ուրախութեան, հպար – տութեան եւ տխրութեան զգացումներ արթնցնելով մեր մէջ:

Ճամբուն հետ վերջ կը գտնէ նաեւ մեր յոգնութիւնը:

Փոչեթաթախ վար կ'իջնենք ու առանց վայրկեան մը կորսնցնելու, կը շտապենք վանքը:

Մեր առաջին գործը եղաւ տաճարը մտնել ու ջերմօրէն համբուրել սրբատաշ սեւ քարերը, համբուրած ըլլալու նաեւ մեր պապերու հրաշագործ ձեռքերը:

×

Երեկոյեան ժամերգութիւն եւ նախա – ճոնակ կը կատարուի: Ներկայ են երկու քահանայ հայրեր, Տ. Լեւոն՝ Ուրմիա – յէն, Տ. Մեսրոպ՝ Սալմաստէն, ինչպէս նաեւ Փուլատեան վրդ.՝ կաթողիկէ Հա – յոց հայրերէն:

Վանքը լուսաւորուած է հաւատացեալ ուխտաւորներու վառած հազարաւոր մո – մերով, որոնք առատօրէն «կ'արտասուեն» բազում ուխտաւորներու նման:

Հայ ժողովուրդը, տարիներու հար – կադրական բացակայութենէն կամ երե – ւութական անտարբերութենէ եաք, ահա վերջին չորս տարին, կուգայ իր յարգան – քըն ու պաշտամունքը մատուցանելու եւ սուրբին, եւ մեր երախտաւոր ու հրա – շակերտ պապերուն:

Յաջորդ օրը Ս. Պատարագ կը մատու – յանէ Տ. Լեւոն, ոգեշունչ քարոզ մը խօ – սելով: Ուխտաւորները բոլորն ալ երկիւ – ղածօրէն կ'աղօթեն, իւրաքանչիւրը իր խնդրանքը ներկայացնելով:

Փուլատեան վարդապետ նոյնպէս յու – զումով կը քարոզէ քրիստոնէական ոգիի, վանքի եւ մեր երախտաւոր պապերումա – սին: Պատարագէն եաք կը բաշխուին մա – տաղ, ուխտաւորներու կողմէ՝ ուխտա – ւորներուն:

×

Կը շրջինք վանքի պարիսպէն ներս: Բակը ծածկուած է թանձր խոտաբոյսե – րով: Տեղ տեղ կ'երեւին հին հեթանոսա – կան շրջանէն մնացած քանդակազարդ քա – րեր:

Պարիսպին շուրջ գտնուող քարաչէն խուցերէն չատերը կամարակապ են, չատերը քանդուած են դրեթէ բոլորը անբնակելի: Կայ խոշոր ձիթա – հանը, նոյնպէս աւերակ:

Աւերա՛կ, աւերա՛կ, աւերա՛կ ...

Կրնա՞ս անտարբեր մնալ ու չարտաս – ուլ:

Ուրիշ խոհեր ալ կը պաշարեն քեզ, – մեր մօտաւոր անցեալը, յեղափոխական ռամիկներու եւ անվհեր հայդուկներու անյողդողդ երթը դէպի «զուլումի աչ – խարհը»:

Քանի՛ քանի՛ նոր սուրբեր ապաստան գտան այս վանքի խուցերուն մէջ, դին – ուած՝ նոր հաւատքով ու գացին նոր լոյս տարածելու Հայոց աշխարհին մէջ, իրենց արիւնը խառնելով Ս. Թադէոսի արեան: Վանքի պատերուն վրայի վէրքերը — գնդակներու տեղերը — կը մատնեն այս տապնապներն ու բախումները:

Նորէն յուզեր, այս անգամ մեր հայրե – նիքէն, մեր վանքերու՝ Վարագ, Կարմր – ուոր, Ս. Գրիգոր, Ս. Խաչ, Նարեկ, Ագ – թամար, Լիմ, Կոտց եւն., եւն. ուխտա – գնացութենէն: Այս բոլորը նկարագրելու համար նորէն պէտք է վերապրիլ մեր մանուկ եւ պատանի օրերը:

Յուշերու կապակցութեամբ լսեմ, որ վանք հասնելու երեկոյեան խսկ, Մասիս – ները տեսնելու փափաքով, ուխտաւորը – ներէն չատեր բարձրացան ոարն ի վեր: Հոն երիտասարդները կարօտի ու խան – դավատութեան երգեր կ'երգեն, բաժակ կը բարձրացնեն եւ... կուլան որ «այս – քան մօտ են Մասիսներուն եւ այնքան հե – ռու ...»:

Ես ալ, յաջորդ օրը, կնոջս հետ լեռ բարձրացայ, տարապրութենէս երեսուն – եւվեց տարի եաքը նորէն «Արարատի ճերմակ գագաթը» տեսնելու ...:

Կրնա՞մ արդեօք թուղթին յանձնել ապ – րումներս: Ոչ, չեմ կրնար: Ու չեմ չա – րունակեր:

Միայն ըսեմ, — ուր երեւանէն դիտ – ուած Մասիսները եւ ուր լեռներու արան – քէն միայն երեւացող Մեծ Մասիսի գա – գաթը:

Ես այդ գագաթը մշուշոտ տեսայ, սը – գաւոր:

Այդ բարձունքէն լաւ դիտեցի վանքի դիրքը եւ յիշեցի Անին, որ երեք կողմէն շրջապատուած է սարսափազդու անդնդա – խոր ձորերով եւ միայն մէկ կողմէն՝ երկ – տակ պարիսպներով:

Գրեթէ նոյն դիրքն ունի Ս. Թադէի վանքը, միայն այստեղ ոչ այնքան խոր ձորեր կան, ոչ ալ ահեղավաղ Ախուրեա – նը: Այս ձորերէն կը վազէ առուակ մը, տեղ տեղ եզերուած ուռենիներով:

Ասոր փոխարէն, սակայն, Թադէի վանքը գրեթէ երեք կողմէն շրջապատ – ուած է բարձրարերձ լեռներով, որոնք կարծես պահակ են կանգնած այս հինա – ւուրց սրբավայրին:

×

Յաջորդ օրը կիրակի է: Պատարագիչն է Տ. Մեսրոպ:

Հայ Կաթողիկէ վարդապետ Փուլատ – եանը Հայր Ոսկեանէն ընծերցումները ը – նելով կը ներկայացնէ վանքը եւ անոր անցեալը, կոչ կ'ընէ ամուր պահել մեր պապերէն եկած բոլոր աւանդները: Կը խօսի նաեւ Պ. Հայկ Օհանեան:

Ս. Պատարագէն եաք, երախտապետ ուխտաւորները, խունկ ու մոմով, Տ. Լե – ւոնեանի կը քալեն դէպի վանքի արեւելեան կողմի բլուրներու լանջերուն տարածուող նահատակներու գերեզմանները, հոգե – հանգստեան արարողութիւն կատարելու: Արարողութենէն եաք, տէր Հայրը յուզու – մով կը խօսի մեր հայդուկներու եւ յե – ղափոխական առաջնորդներու մասին եւ կուլայ՝ արցունքներ յօղելով մեծ մեռել – ներու գերեզմանաքարերուն վրայ: Կու – լանք մենք ալ:

Այստեղ կը յիշեմ Մ. Պէչիկթաշլեանի «Քաջորդւոյն Թադէոսի».

«Ապրիս, ըսիճ ամէնիս իրեն մէկ բերան,
Ազգիդ համար մեռար, դուն շատ ապրե – ցար»:

Եւ իրօք անոնք մեռան մեզի համար, հայ ազգին համար:

Վանքին մէջ մեր ապրած երեք դիչեր – ներէն երկուքը մէկ փոքր պատրանք տը – ւին մեր անցեալ ուխտագնացութիւննե – րէն, պար, երգ, արտասանութիւն, խօսք, նուագ եւն.:

Պիտի ըսել, որ հոգեկան անխառն հա – ճոյքով ըմբոշխնեցինք Գեղարդպատցինե – րու (հայկական դիւզ մը Ուրմիոյ մօտիկ) այնքան բազմապիսի պարերը, որոնք, ա – ւտղ, կորսուելու վրայ են եւ արհամար – հանքի ու ծաղրի առարկայ՝ քաղաքներու մէջ: Ակամայ կը մտածես՝ ուր մեր տոհ – մական պարերը եւ ուր այժմեան «ռոքըն – ռոլլը»...

Կիրակի դիչեր, Թաւրիզի «Արարատ» Մխիթեան մասնաճիւղի հայ արի – արե – նուչները հրավառութիւններ ըրին:

Մօտ վեց հարիւր ուխտաւորներու մեծ մասը երիտասարդ – երիտասարդուհիներ էին:

Այս պարապմունքը արժանի է ուչադրու – թեան եւ խորհրդածութեան:

Երկուչաբթի առաւօտ, Օգոստոս 5, տաճարին մէջ կրկին մոմեր վառելով կը թողունք այդ հինաւուրց վանքը, մեզի հետ տանելով անմոռաց օրերու յիչատա – կը:

Մեր բեռնակառքը կը վազէ դէպի պատ – մական Զարեւանդ՝ Սալմաստ. այժմ՝ Շահփուր:

Ապատաճ Ա. ՊՈՒԼՈՒՔԵԱՆ

ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ

Հայաստանի Գիտութիւնների ակադե – միայի հէղրոնական գրադարանը, «Միաս – նիկեան» գրադարանէն եաք երկրի երկ – րորդ մեծ գրադարանն է, որ ունի աւելի քան 700·000 գիրք եւ ամսագիր: Գրա – դարանն սպասարկում է ոչ միայն Ակա – դեմիայի ցանցում աշխատող գիտնական – ներին, այլ եւ գիտա – հետազօտական եւ բարձրագոյն ուսումնական հաստատու – թիւնների հարիւրաւոր գիտական աշխա – տողների: Տարեց տարի գրադարանը հարստանում է հայրենական եւ արտա – սահմանեան տասնեակ հազարաւոր ար – ժէքաւոր գիրքերով, ամսագրերով եւ թերթերի տարեկան հաւաքածոներով: Գրադարանն մուտք գործած արտասահ – մանեան հրատարակութիւնների մի զգալի մասը ստացւում է գանազան երկիրներից միջազգային գրքի փոխանակութեան մի – ջոցներով:

Գրեթէ ամէն օր, երկրագնդի տարբեր վայրերից գրադարանի հասցէով ստաց – ւում են բազմաթիւ նամակներ, որոնց հե – ղինակները խնդրում են իրենց ուղարկել Հայաստանի ակադեմիայի հրատարակու – թիւնները: Այդպիսի նամակներ ստաց – ւում են Ամերիկայի Միացեալ Նահանգ – ներից, Աւստրալիայից, Անգլիայից, Հնդկաստանից, Բելժիայից, Լեհաստա – նից, Շուեդիայից, Հունգարիայից եւ ու – րիշ շատ երկրներից:

Ակադեմիայի գրադարանի հրատարակու – թիւնների փոխանակութեան ծաւալները տարեցտարի աճում են: Եթէ 1945 թուին գրադարանը ստացել է 1·500 տպագիր միաւոր, ապա 1946 թուին այդ թիւը հասել է 3·000-ի, իսկ 1947 թուին՝ 5·000-ի: Ներկայումս գրադարանն ունի 1·500 մշտական փոխանակութեան գործընկերներ:

Գրադարանի հարստացման գործում մեծ դեր է խաղում նաեւ նուէրների ձեւով ստացուող գրքերի հոսքը: Միայն 1947 թուին գրադարանը ստացել է 1·500 նուէրներ:

Գրադարանի ֆոնդերում կան հազարա – ւոր հնատիպ գրքեր, որոնք ունեն մեծ գի – տական արժէք: Գրադարանի ձեռագրերի բաժնում պահպանւում են հարիւրաւոր ձեռագրեր, որոնց մեծ մասը հայերէն է:

Գրադարանի ընթերցասրահներում ամէն տարի սպասարկւում են հազարաւոր ըն – թերցողներ, որոնց մեծ մասը գիտական աշխատողներ են:

Գրադարանի ներկայ շէնքը կառուցուել է 1939 թուին: Այդ ժամանակ գրադարանի ֆոնդերում եղել է 200·000 միաւոր գրքեր: Ներկայումս գրադարանի ֆոնդերի ծաւալը հասնում է 700·000 միաւորի, եւ գրադարանի շէնքը դարձել է նեղ: Ակադեմիայի նախագահութիւնը որոշել է գրադարանի համար կառուցել նոր շէնք:

Նոր շէնքի նախագիծը կազմել է ճար – տապետ Ա. Թամանեանի անուան պետական նախագծային գրասենեակի ճարտարապետ Ա. Թամանեանի նախագիծը: Նոր շէնքի նախագիծը հաստատուել է Ակադեմիայի նախագահութեան կողմից:

Նոր շէնքը կանգնելու է Երեւանի կենտրոնում, Մաշտոցի պողոտայի եւ Ալաւերդեանց փողոցի անկիւնում: Շէնքի ընդհանուր մակերեսը կը կազմի 20·000 քառակուսի մետր: Շէնքի մէջ կը տեղաւորուեն ընթերցասրահներ 1·000 տեղերի համար, գրքերի պահեստներ 1·500·000 միաւոր գրքերի համար, ինչպէս նաեւ գրադարանի աշխատանքային սենեակներ:

Նոր շէնքի կառուցման աշխատանքները սկսուելու են 1948 թուին:

ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԱԾՔ

ՀԵՐՈՍ ՄԸ

—o—

Միւս աւազակը, հետեւելով պետական օրինակին, իր հրացանն ալ աւելցնելով հրացանակիրին ուսին, ըսաւ.

— Իմս ալ կրնաս տանիլ ...

— Է՛, դո՞ւն, հարցուց պետը դառնա – լով երրորդ աւազակին:

— Ե՞ս, պատասխանեց երրորդը, ես կը նախընտրեմ հրացանս կրել իմ ուսիս, կ՛ո՛հ, չվիտցուիր ...

— Վախկոտ ... բացագանչեց պետը, արգահատական հայեացքը սեւեռելով ա – ւազակին վրայ:

Եւ յետոյ, դառնալով դէպի հրացանա – կիրը եւ ձեռքը դնելով անոր ուսին, յարեց·

— Ըսէ՛ տեսնենք, բարեկա՛մ, ո՞ւր կ'երթայիր այսպէս:

Ոչ մէկ պատասխան:

— Օ՛հ, ըսաւ աւազակը, կը հասկը – նա՞ս ըսածս:

Ու ծռելով, դեռնէն վերցուց բաւական հաստատուն ծառի ճիւղ մը ու անով հար – ուածեց կալանաւորին մատները:

Այս վերջինը չարունակեց քալել առանց ըսած մը արտասանելու:

— Պիտի խօսիս, պիտի խօսիս, խեղճ մարդ, վերսկսաւ աւազակը, մէկ կողմ նետելով ծառին ճիւղը: Բոլորն ալ քեզի պէս սկսած են, դուն ալ անոնց պէս պիտի վերջանաս: Դուն ալ միսէ եւ ոսկորէ ես չինուած: Երբ պիտի զգաս մարմնոյդ վրայ խոցոտումները, այն ժամանակ ո՛չ թէ պիտի խօսիս այլ պիտի պոռաս նոյն – իսկ: Անհոգ եղիր ...

Այս ըսելով, բերտ չարժումով մը հրեց խեղճ կալանաւորը ճամբուն մէջտեղը:

Անցան փոքրիկ կամուրջ մը, դարձաւ դէպի աջ եւ մտնելով ուրիշ ճամբու մը մէջ սկսան ծառախիտ զառիվերէ մը բար – ձրանալ:

Կալանաւորը, որուն ուսէն կախուած հրացաններուն կաչինները սկսած են դին – քը գրեթէ խեղդամահ ընել, իր ծանր բեռան տակ բոլորովին յոգնաբեկ, կը չա – րունակէր յառաջանալ, իյնալով յաճախ ծունկերուն վրայ եւ դժուարութեամբ վերստին ոտքի կենալով, մինչ աւազակ – ները կը չարունակէին իրենց հայհոյանքի տարափը եւ անարդական բացագանչու – թիւնները·

— Ցառա՛ջ, ծոյլ արարած ... դուք երբ մեզ կը ձերբակալէք ձեր ձիերուն պոչին կը կապէք: Ամէն բան հերթով է ..., քալէ՛ ...

Զառիվերին կիսուն իրենց կը սպասէին: Հասած էին տեղ մը ուր չորս կողմը սըփ – ռուած էին ժայռակոյտեր:

Աւելի յառաջանալով, կանգ առին բար – ձրութեան մը վրայ, ուրկէ կը տեսնուէր ամբողջ տարածութիւն մը, մինչեւ հեռա – ւոր հորիզոնը:

Ժայռերով շրջապատուած այդ բար – ձրաբերձ դարաստանին վրայ չինուած էր փայտէ խոշոր տուն մը:

Դուրսէն դիտելով այս տունը բնակու – թեան որեւէ նշոյլ ցոյց չէր տար: Ներսը սակայն՝ կը ներկայացնէր կատարեալ մարտակոցի մը, ճշմարիտ բերդի մը պատ – կերը:

Հոն չարուած էին սեղաններ, ընդար – ձակ սրահի մը մէջ, որոնց վրայ անխնամ կերպով տարաղնուած էին փայլուն եր – կաթեայ զաւաթներ, խոհանոցի սաներ, դանակներ եւ հաց: Փայտեայ այդ տու – ներն պատերէն կախուած էին լեցուն պար – կեր եւ չիչեր: Անկիւն մը, պատին մէջ փորուած վառարան մը, որուն մէջ կը նշմարուէին տակաւին փայտի ու մացառի վառած ճիւղեր եւ մոխիր: Կային նաեւ հաստ ծածկոցներով գոցուած թախթեր, որոնք հաւանարար կը ծառայէին իրրեւ այդտեղ բնակողներուն անկողին:

Փայտեայ տունին կողքին կանգնած էր քարէ չինուած տեսակ մը աչտարակ, ո – րուն սանդուղներուն վրայ կանգնած էր մարդ մը, որ ակնյայտնի կ'նրեւէր թէ այդ բարձրաբերձ թաքստոցին հերթա – պահ պահակն էր:

Այս մարդը, նշմարելով նորեկները եւ անոնց մէջ կալանաւոր հրացանակիրը, ուրախութեամբ սկսաւ երկու ձեռքերը իրար զարնել, եւ վարիչներով իր բար – ձրութենէն եկաւ դիմաւորելու իր ընկեր – ները:

Աւազակները բրդութեամբ մը հրեցին կալանաւորը դէպի առաջ, այնպէս որ այս վերջինը իր հաւատարակչռութիւնը կորսընցնելով դեռեւ փռուեցաւ, մինչ յե – տադարձները, իւրաքանչիւրը իր կարգին կռնակի բեռը վար դնելով, ճակատէն հոսող իրենց քրտինքները սրբելով, նըս – տեցան հոս ու հոն ցրուած քարերու վրայ եւ սկսան իրենց խոնչած մարմինները հանգստացնել:

— Ահա՛ քեզի հատ մը, բացագանչեց պետը, դառնալով այն աւազակին որ իր բարձրութենէն իջնելով եկած էր զիրենք դիմաւորելու:

— Հա՛տ մը, այն ալ ի՞նչ տեսակէն, ողջ եւ առողջ, գոչեց այս վերջինը:

Եւ մօտենալով կալանաւորին, օգնեց որ վեր ելլէ իր ինկած տեղէն եւ զայն ուչի ուչով գնելէ եաք առաւ անոր ուսերուն վրայ բեռցուած հրացանները, անոր սու – րը, վերարկուն, հուսկ ուրեմն անոր գըլ – խարկը, որուն մէջն ու դուրսը լաւ մը զննելէ եաք զայն նետեց անկիւն մը՝ չը – նայած ժպիտով մը:

ԷՏՄՈՆՏ ՏԷ ԱՄԻՉԻՍ

(2 Շար.)

ԿՅՈՒՆՔ

ԿՈՎՈՐՈՆ Ի ՇՂԱ

Գ.

Ինչպես ամեն տարի, այնպես էլ այս տարի, 1956ին, մարտի 21ին, Ալավերդու հանքային շրջանի մշակույթի տունը լեցուն էր հանքագործներով, որոնք եկել էին իրենց ակումբների ներկայացուցիչների ընտրությունների։ Ընտրությունների օրակարգում էր նաև հանքագործների մշակութային կյանքի հարցը։

Ընտրությունների նախօրեին ես հանդիպեցի ընկ. Ա. Ղազարյանին, որը ակումբների ընտրությունների հանձնաժողովի նախագահն էր։ Ընկ. Ղազարյանը ինձ հետ զրույցի բռնվեց հանքագործների մշակութային կյանքի մասին։

— Ընկեր Ղազարյան, ասացի ես նրան, ինչպե՞ս է ընթանում ակումբների ընտրությունների նախապատրաստությունը։

— Ընտրությունների նախապատրաստությունը ընթանում է կազմակերպված կերպով, պատասխանեց ընկ. Ղազարյանը։ Ընտրությունների նախապատրաստության ընթացքում մենք ունեցանք մի շարք ժողովներ, որոնց ներկա էին հանքագործների մեծ մասը։ Ժողովներում ելույթ ունեցողները քննադատության ենթարկեցին ակումբների աշխատանքի թերությունները, ցույց տվեցին, թե ինչպես պետք է աշխատեն ակումբները, որպեսզի հանքագործների մշակութային կարիքները ավելի լավ բավարարվեն։

Ընկ. Ղազարյանը ինձ ծանոթացրեց ընտրությունների նախապատրաստության ընթացքում կազմված ցուցակների հետ։ Ցուցակներում ընդգրկված էին ակումբների ղեկավար մարմինների նոր կազմերը։ Ցուցակներում ընդգրկված էին հանքագործների ամենահեղինակավոր մարդիկ։

Ընկ. Ղազարյանը ինձ ծանոթացրեց նաև ակումբների ընտրությունների նախապատրաստության ընթացքում կազմված ծրագրերի հետ։ Ծրագրերում նշված էին այն միջոցառումները, որոնք ակումբները պետք է կատարեն ընտրություններից հետո

Կ. ԽԱՉԻ Պոմոնի վարչութիւնը իր խորին ցաւակցութիւնը կը յայտնէ Տէր եւ Տիկին Սէրգնկիւլեանին, Տէր եւ Տիկին Վազգէն Սէրգնկիւլեանին, Տէր եւ Տիկ. Տօլպաչեան ընտանիքին եւ բոլոր պարագաներուն, ողբացեալ Նիկողոս Նիկողոսեանի կսկծալի մահուան առթիւ.

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Բիւթանիոյ բազմարդիւն առաջնորդ Տ. ՍՏԵՓԱՆՈՍ ԱՐՔ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ յիշատակին հոգեհանդիստ կը կատարուի այս կիրակի առաւօտ ժամը 10ին, Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցին, կարգմը Նիկոմիտիացիներու եւ Առաւիաղար - ցիներու փափաքով:

Ցիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:

×

Պ. Սիմոն Օհանեան եւ զաւակները կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի այս կիրակի առաւօտ Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցին իրենց կնոջ եւ մօր՝

ԱՂԱՒՆԻ ՕՀԱՆԵԱՆի

մահուան 6րդ տարեդարձին առթիւ:

Կը հրաւիրուին աղրացեալին յիշատակը յարգողները:

×

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՊՈՄՈՆԻ ՄԷՋ

Պոմոնի թաղականութիւնը կը ծանուցանէ թէ այս կիրակի հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Պոմոնի եկեղեցւոյն մէջ, ժամը 11ին, Տէր եւ Տիկին Արամ Գաբրիէլեանի քրոջ՝ Տիկ. Զուարթ Մարալանեանի հոգւոյն ի յիշատակ: Կը խնդրուի հանգուցեալի յիշատակը յարգողներէն ներկայ գտնուիլ:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

Ֆ.Կ.Խաչի Մարսէյլի մասնաճիւղինկողմէ կը տօնուի Յունուար 5ին, ժամը 2ին, Ահարոնեան ակումբին մէջ:

Սիրուն անակնկալներ, երգ, պար, արտասանութիւն:

Սրահին ջերմութիւնը ապահովուած է:

Մուտքը ազատ է

×

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

Կրընոպլի Ֆ. Կապ. Խաչի դպրոցի տօնածառը տեղի պիտի ունենայ Յունուար հինգին, Բիւ Ժէի սրահը:

Լիոնի մէջ կը տօնուի 12 Յունուար, կիրակի կէսօրէ վերջ Յոյներու սրահը: Կը խնդրուի նկատի ունենալ:

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՑՑ

ՆՈՐ ՏԱՐՒԱՆ ՈՒ ԾՆՈՒՆԴԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆՑ

ՓԱՐԻԶ, Ս. ՅՈՎՀ. ՄԿՐՏԻՉ

Այս կիրակի պիտի մատուցուի հանդէսաւոր քառաձայն Ս. պատարագ ժամը10ին: Ղեկավարութեամբ՝ Արա Պարթեւեանի:

Հայ հասարակութիւնը կը հրաւիրուի ներկայ ըլլալ:

ԼԻՈՆԻ ԵԿԵՂԵՑԻ

Իր մեծ բարեխնամ եւ չինող առաջնորդ Ստեփանոս Ս. Արք. Եպիսկ. Յովակիմեանի յիշատակին հանդիսաւոր հոգեհանգիստ պիտի կատարուի Լիոնի եկեղեցւոյն մէջ, իր անմոռաց յիշատակը յարգողները հրը հրաւիրուին ներկայ գտնուիլ:

ՍԷՆԹ ԱՆԹՈՒԱՆ՝ Ս. ԹԱԴԷՈՍ ԵԿԵՂԵՑԻ

Այս կիրակի Ս. Ստեփանոսի տօնախմբութիւն (4րդ տարեվից Դպրաց Դասու) հանդիսաւոր Ս. Պատարագ եւ հոգեհանգիստ Դպրաց Դասու անդամներու հին եւ նոր ննջեցելոց, ինչպէս նաեւ օծում Ս. Թադէոս եւ Բարդողիմէոս նկարներու:

Սկիզբ ժամեր. ժամը 8ին:

Ս. պատարագ ժամը 10ին:

Պատկերներու օծում ժամը 11ին:

Յունուար 1, Ս. պատարագ, սկիզբ ժամը 8:30ին, Ս. պատարագ ժամը 10ին:

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ — ՊՈՄՈՆ

Յունուար 1, Շաբաթ ԿԱՂԱՆԴ Նոր Տարուան առաւօտեան արարողութիւնը ժամը 8:30ին, Գոհաբանական Ս. պատարագ ժամը 10ին:

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

Պ. Արտաւազդ Պօղոսեան կը փնտռէ իր եղբայրը՝ Գնէօն Պօղոսեան, ծնած Լէնինականի շրջանը 1912ին, կը կարծուի Ամերիկա ըլլալ: Տեղեկացնել՝

M Arakélian, 7 Rue Chaumont, Paris 19,

կը խնդրուի «Հայրենիք»էն արտատպել:

"ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐ"Ը

Ֆ. Կապ. Խաչի Շրջ. վարչութիւնը, Փարիզի շրջանի իր տասը մասնաճիւղե - րով կը տօնէ «Մանուկներու Օր»ը, Յունուար 2ին, ժամը 15 - 19, Սօսիէթէ Սավանթի մեծ սրահին մէջ, 8 Րիւ Տանթոն, մեթրօ Սէն Միշէլ կամ Օտէօն:

Գեղարուեստական բաժին, Կապոյտ Խաչի Իսիի Խրիմեան զպրոցի աշակերտներու երգչախումբը, ղեկավարու - թեամբ ուսուցիչ Պ. Ս. Քալեանի:

Տիկին Էլ. Բիւզանդի յատկապէս պատրաստած մէկ գաւեշտը «ՀՕՓԼԱ ՍՊՈՒՏՆԻԿ» կը ներկայացուի Ալֆորվիլի փոք - րիկներով:

Մենապարեր Օր. Թ. Քէօչկէրեանէ եւ Օր. Թարօնէ:

Ձեռնադաշնակ Պէրնար Տէտէեան:

Ամպարար ԺԷՕ - ԹԻՐՈՒ: Կաղանդ Պապա:

Մուտքը ազատ է:

Ուշադրութիւն.— Իսիէն օթօբասը կը մեկնի ժամը 14·30ին, Խրիմեան վարժա - րանէն:

Ֆ. Կ. Խաչի Մանուկներու Օրուան տօնին առթիւ Յունուար 2, Հինդշաբթի Ա - ֆորվիլէն հանրակառք կը մեկնի ժամը 13 - ին, Պուլվ. Քառնօէն:

Կը խնդրուի ճշդապահ ըլլալ:

Հ. Մ. Ը. Մ.Ի ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ ՎԻԼՆԻ ՄԷՋ

Դեկտեմբեր 28ին, Շաբաթ իրիկուն, Սալ տէ Ֆէթի սրահներուն մէջ:

Մանրամասնութիւնները տեղւոյն վրայ

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՑՑ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆՑ

1 Յունուար 1958, Ջորեքշաբթի. — Ամանորի պաշտամունք, Ս. պատարագ ժամը 11ին:

4 Յունուար, Շաբաթ.— Ճրագալոյց Ս. Ծնունդի, առաւօտեան ժամերգ. 9, իրիկուան ժամերգ. 4·30, Ս. պատարագ 5·30:

5 Յունուար, կիրակի.— Ս. Ծնունդ եւ Աստուածայայտնութիւն, Ս. պատարագ (երկսեռ երգչախումբով) ժամը 10, Մեռելոց եւ Ջրօրհնէք 12:

12 Յունուար, կիրակի.— Տօն Անուա - նակոչութեան, Ս. պատարագ (երկսեռ երգչախումբով)10, Հոգեհանգիստ 11·45:

Կ'ՈՒԶՈՒԻՆ

Տունը աշխատող գործաւորուհիներ ֆօրսաժի համար: Դիմել՝

ELISABETH CONFECTION

67, Rue de Cléry Paris 2e - Métro Strasbourg St.-Denis

ՄՇԱԿՈՑԹԻ ՏԱՆ

Քաշանէն Գ. Ֆէրմանեան իր բարեկամ Թ. Այվազեանի մահուան առթիւ հազար ֆրանք կը նուիրէ Հայ Մշակոյթի Տան:

(Տառանալ «Յառաջ»էն):

ՆՈՒԻՐ

Պ. Սահակ Յարութիւնեան երկու հազար ֆրանք կը նուիրէ Մոնմորանսիի ծերանոցին, Նոր Տարուան առթիւ:

Տառանալ «Յառաջ»էն:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՓԱՐԻԶ.— Հ. Յ. Դ. Պէլվիլի «Ռոստոմ» խումբի ժողովը այս շաբաթ, ժամը 21ին, ընկեր Մանուկի բնակարանը: Ներկայ կ'ըլլայ Շրջ. կոմիտէի ներկայացուցիչը:

ՓԱՐԻԶ.— Հ. Յ. Դ. «Քրիստափոր» խումբի ժողովը Ուրբաթ, 3 Յունուար, ժամը 9ին, Ռեժանի վերնայարկը: Կարեւոր օրակարգ:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ, ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Կազմակերպուած Ֆ. Կ. Խաչի Փարիզի մասնաճիւղին կողմէ

28 Դեկտեմբեր, Շաբաթ դիշեր, ժամը 20էն մինչեւ լոյս

Լիւքէսիայի գեղեցիկ սրահներուն մէջ

Orchestre Lutetia 43, BLD. RASPAIL, MÉTRO SÈVRES-BABYLONE

Գեղարուեստական բաժին, Պ. Կարպիս Ափրիկեանի երգի երբեակը կը մեներգէ Արա Սերոբեան (պարիթոն), Միքրտիչ Պօղոսեան (թենոր):

Մենապարեր՝

Օր. Թերեզ Քէօչկէրեան՝ Սուրերու պարը Խաչատուրեանի, Օր. Աննի Թարօնի Երեւանի հարսանիքը եւ եւրոպական պար մը:

ԾԱՆՕԹ.— Տոմսերու վրայ նշանակուած է մինչեւ կէս դիշեր, բայց բոլորին ցանկութեան վրայ կարգադրուած է սրահի անօրինութեան հետ մինչեւ առաւօտեան ժամը հինգ:

Մուտքը՝ 500 ֆրանք

Ուսանողներու համար՝ 300 ֆրանք, ներկայանալ իրենց ուսանող. քարտերով:

Նպատակն է՝ կազմյա Խաչի օգափոխութեան կայանը, ինչպէս նաեւ իր կրթական եւ բարեսիրական գործերը:

Սեղանները կանխաւ ապահովել հեռախօսելով Տիկ. Թադէոսեանի Թրիւտէն 27-35 եւ Տիկին Նազըշդարեանի Տօմէնիլ 13-27

ԼԻԼԱՑԻՆ, ԼԻԼԱՑԻՆ...

ՁԵՐ ԶԱՐԹՕՆԸ՝

ԿԱՂԱՆԴ

Կրնաք ճոխ սեղանի մը շուրջ, անցընել

ԼԻԼԱՑԻՆ

24, RUE ST-LAZARE PARIS 9e

TÉL. : TRI 31-62

Արեւելեան թէ եւրոպական համադամ կերակուրներ, ընտիր խմիչքներ եւ մանաւանդ զուարթ մթնոլորտ մը հաճելի նուագով

եւ այս բոլորը 2000 ֆր. — իրաքանչիւր անձի —

Ապահովեցէք ձեր սեղանները հեռաձայնելով ժամը 9էն 15

TRI 31-62

Réveillons

Chez SASSOUNI

ԿԱՂԱՆԴԻ

Զուարթ ու հաճելի Զարթօնքը

(24 եւ 31 Դեկտեմբերի գիշերները)

Մի մտածէք ուր անցընելու մասին

ՍԱՍՈՒՆԻԻՆ մօտ ի հարկէ

Ուր պիտի գտնէք ճոխ ու պէսպիսուն ուտելիքներ եւ խմիչքներ

Բոլորդ ազգականներով եւ բարեկամներով ժամադրուեցէք

եւրոպական եւ արեւելեան նուագ

ՍԱՍՈՒՆԻԻՆ

31. RUE D'ALEXANDRIE, PARIS - 2e

Tél. GUT. 92-65

Imprimé sur les presses du journal HARATCH
17, Rue Bleue, 17 — PARIS (9e)

ԾՐԱՐՆԵՐ ԿԸ ՂՐԿՈՒԻՆ ԱՆԳԼԻՈՑ ՃԱՄԲՈՎ ԴԷՊԻ Ե. ՄԻՈՒԹԻՒՆ, ՄԷՋՆ ԸԼԼԱԼՈՎ ՊԱԼԹԵԱՆ ԵՐԿԻՐՆԵՐԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

Մասնաւոր արտօնութիւնը որ տրուած է մեզի ֆրանսական կառավարութեան կողմէ, մեզի թոյլ կուտայ պատասխանելու մեր բազմաթիւ յաճախորդներուն որոնք կը փափաքին ծրարներ ղրկել Հայաստան

ՏՕՆԵՐԸ ԿԸ ՄՕՏԵՆԱՆ

ՄՏԱԾԵՑԷՔ ՁԵՐ ԱԶԳԱԿԱՆՆԵՐՈՒՆ ԵՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՆ

Իրենց մեծ համոյք պատճառած կ'ըլլաք ղրկելով, հիմակուընէ, մեր ստեղծած վեցնմոյշ-ծրարներէն մէկը, որոնք պատրաստուած են մեծ խնամքով: Մեր բոլոր ապրանքները վաստահօրէն անկլիական են:

ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ ԾՐԱՐ – 20·000 ՖՐԱՆՔ

Վերարկու-կերպաս 2 մեթր 75
Հագուստի կերպաս 2 մեթր 75
աստառ 4 մեթր
2 զոյգ ճայլըն գուլպայ
2 ֆոմպինէզոն ճայլըն
2 վարտիք ճայլըն

ԱՑՐ ՄԱՐԴՈՑ ՀԱՄԱՐ – 20·000 ՖՐԱՆՔ

3 մեթր կերպաս հագուստի
3 մեթր փոփլինի շապիկի համար
1 ներքին ճերմակեղէն (մայօ տը ֆոր եւ մէկ էնթերլոֆ (վարտիկ)
2 զոյգ բուրդէ գուլպայ
1 զոյգ պոֆս կօշիկ

ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ – 30·000 ՖՐԱՆՔ

2 մ. 75 բուրդէ թաւիշ վերարկուի համար
3 մեթր աստառ
2 մ. 75 զուտ բուրդէ կերպաս հագուստի համար
1 բուրդէ ֆառտիկան
1 զոյգ ճայլըն գուլպայ
1 չալ բուրդէ (110×110)
6 թաշկինակ

ԱՑՐ ՄԱՐԴՈՑ ՀԱՄԱՐ – 30·000 ՖՐԱՆՔ

3 մեթր կերպաս զղեստի համար
3 մեթր աստառ
1 զուտ բուրդէ փուլ-օվըր
1 զոյգ կօշիկ պոֆս
1 ներքնազգեստ (մայօ տը ֆոր եւ էնթերլոֆ)
3 մեթր փոփլինի շապիկի
1 զոյգ բուրդէ գուլպայ

2 մ. 75 թաւիշէ բուրդ վերարկուի համար
2 մ. 75 զուտ բուրդ թայէօրի համար
5 մեթր աստառ
1 ֆառտիկան զուտ բուրդ
1 փլէտ էֆոսէ 160×160
2 զոյգ ճայլըն գուլպայ
1 բուրդէ չալ 110×110

ԱՑՐ ՄԱՐԴՈՑ ՀԱՄԱՐ – 40·000 ՖՐԱՆՔ

3 մեթր կերպաս փենիէհագուստի համար
2 մ. 75 զուտ բուրդէ կերպաս փարտեսիւի համար
5 մեթր աստառ սաթէն
1 փալթօվէր զուտ բուրդ
1 զոյգ գուլպայ զուտ բուրդ

ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ – 40·000 ՖՐԱՆՔ

ՇԱՏ ՈՒՇԱԴՐԱՎԱՐՈՒԱԾ ԳԻՆԵՐ որոնց մէջ՝ մաֆս, ապահովագրութիւն, առաքման ծախքեր եւ ամէն տուրք

— ՍՏԱՑՈՂԸ ՎՃԱՐԵԼԻՔ ՉՈՒՆԻ —

Կարելիութիւն կայ ձեր ընտրութեամբ ծրարներ կազմել մեր գուցակին ապրանքներով՝ ԺԱՄԱՑՈՑՑ, ԴԵՂ, ՁԵՐՄԱԿԵՂԷՆ ամէն տեսակի ՀԱԳՈՒՍՏԵՂԷՆ եւ ՀԻՒՍՈՒԱԾԵՂԷՆ

ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՑՈՒՑԱԿ՝ ՁՐԻ

S I C O M E X

MÉTRO MADELEINE OU CONCORDE

20, RUE ROYALE, PARIS 8e

TÉL : OPE. 67-77

C. C. P. PARIS 11964-43

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 — Téléph. : PRO. 86 - 60
R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա եւ գաղութներ, տարեկան 3000 ֆր. վեցամս. 1600
Արտասահման՝ տարեկան 3500 ֆրանք: Հատը 12 ֆր.

ԿԻՐԱԿԻ
29
ԴԵԿՏԵՄԲԵՐ
DIMANCHE
29 DECEMBRE
1957

33ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8080 — 33e ANNEE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 13ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3881

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՄԵՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ

Վերջացող տարուան ընթացքին հայու – թիւնը կորսնցուց որոշ թիւով մտաւո – րականներ, — գրագէտ, բանաստեղծ, կղերական եւ հանրային գործիչ, — Սփիւռքի եւ հայրենիքի մէջ :

Ծանր հարուած կրեց Ցառաջի ընտա – նիքը :

Ցունուար 24ի երեկոյեան գուարթ տը – րամադրութեամբ տուն վերադարձած էր մեր անզուգական խմբագրապետը՝ վեր – ջին սրբագրութիւնները կատարելէ ետք ղրկացեալ Հ. Սահակ վրդ. Տէր – Մով – սէսեանի նուիրուած թիւին, զոր ա՛յնքան սիրով ու խնամքով կազմած էր եւ որուն համար իր խօսքը պիտի գրէր յաջորդ առտուն :

Յանկարծական ուղեղային արիւնահո – սութիւն մը դիւերանց զինքը առաջնոր – դեց հիւանդանոց, ուսկից ա՛լ պիտի չվերադառնար : Յաւէտ պիտի լռէր իր հեղինակաւոր ձայնը, որ ահազանգի մը նման կը հնչէր այս սիւնակներէն, ամէն անգամ որ վտանգ մը կը սպառնար հա – յութեան :

Գերազանցօրէն հայրենասէր ու ծայրա – յեղօրէն անյարմախնդիր, Շաւարշ Միսաք – եան իր կէս դարու հանրային գործունէ – ութեան մէջ երբեւ միակ առաջնորդ ու – նեցաւ ազգին չափը :

Բացառիկ դուրգուրանք ցոյց տուաւ ե – րիտասարդութեան, մասնաւորաբար օ – տար աստղերու տակ հասակ նետող հա – յորդիներու հանդէպ : Փոքր տարիքէն դաշափարական երիտասարդութեան ա – ռաջին չարքերուն վրայ էր գտնուած : Այնտեղ ալ մնաց՝ մինչեւ մահը : Սիրեց երիտասարդները եւ փոխադարձաբար սիրուեցաւ անոնցմէ :

Իր տեղը միշտ բաց պիտի մնայ հայ պրակտնութեան, մանաւանդ հրապարա – կագրութեան մէջ :

Նոյն օրը Լոնտոնի մէջ իր մահկանա – ցուն կը կնքէր Որ. Զապէլ Պօյաճեան, բազմատաղանդ արուեստագէտ ու գրող, որուն անդլերէն լեզուով հրատարակած հայագիտական բանաստեղծութեանց հատորը՝ նկարազարդուած իր իսկ գծած գունաւոր պատկերներով, արուեստի հրաշակերտ մըն է : Իւր ծերութեան հասած այս հա – մեստ հայուհին մեծապէս ծառայած է իր ազգին, հայկական մշակոյթին ու Հայ Դատը ծանօթացնելով օտարներուն, մա – նաւանդ Անգլիացիներուն :

Ցունուար 14ին 84 տարեկանին Ժընեւի մէջ մեռաւ Յովսէփ Թադէոսեան, Քրիս – տափոր Միքայէլեանի քեռորդին, որ իր կեանքն ամբողջ նուիրած էր հանրային գործին՝ նախ Կովկասի ու Հայաստանի, յետոյ՝ վերջին 35 տարիներու ընթացքին՝ Պարսկաստանի մէջ : Ատեն մը խմբագրած էր Թէհրանի «Ալիք»ը, յետոյ նաեւ՝ Ար – փի մանկական հանդէսը ու հրատարակած քանի մը գրքեր :

Դարձեալ Ժընեւի մէջ փետրուար 25ին յանկարծամահ եղաւ Լօզանի համալսա – րանի դասախօս Փրոֆ. Լեւոն Բարայ – եան, հեղինակ յիսունէ աւելի գիտական ուսումնասիրութեանց :

Մայիս 3ին Երեւանի մէջ մեռաւ պրոֆ. Գրիգոր Ղափանցեան, անդամ Հայաստա – նի Գիտութեանց Ակադեմիային եւ տնօ – րէն լեզուաբանական կաճառին : Հմուտ արեւելեան հին լեզուներու, կը թողու պատմագիտական եւ ստուգաբանական արժէքաւոր երկեր :

Հայ կաթողիկէ Համայնքը կորսնցուց երկու բարձրաստիճան արժէքաւոր եկե – ղեցականներ :

Առաջինը Գեր. Յովհ. Արք. Նազիեան, որ վախճանեցաւ Լիբանանի մէջ Սեպտ. 13ին, տեւանելէ վերջ հրատարակութիւնը հայկական ջարդերու մասին իր հեղինա – կած երկհատոր հոյակապ գրքին (Փը –

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԳԱՇԻՐԷԻ ԺՈՂՈՎԸ ԵՒ ՄՈՍԿՈՒԱՅԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ

ՍՐՋՈՒՄԱՆԵԱՆ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑԱՆԷ Խ. ՄԻՈՒԹԻՒՆԸ

Ափրիկեւասիական երկիրներու խորհր – դաժողովին մէջ երէք կարեւոր յայտարա – րութիւններ եղան առջի օր, Խ. Միու – թեան ներկայացուցիչին, Եգիպտոսի եւ Սուրիոյ կողմէ :

Եգիպտոսի ներկայացուցիչը ժողովին տնտեսական յանձնախումբին ներկայա – ցուց Ափրիկէի եւ Ասիոյ երկիրներու Հա. սարակաց Շուկայ մը ստեղծելու ծրագի – րը, այս ձեւով, պիտի կարենան հակադ – դել Եւրոպայի Հասարակաց Շուկային :

Եգիպտական առաջարկին համաձայն, ափրիկեւասիական Հասարակաց Շուկայի մը հաստատումը ուժ պիտի տայ տնտե – սական համագործակցութեան. կարելի պիտի ըլլայ նաեւ պայքարիլ եւրոպակա – նին դէմ :

Կոչ եղաւ բոլոր կառավարութիւննե – րուն, որ այս ուղղութեամբ հարկ եղած աշխատանքները տանին եւ իրենց տեսա – կէտը ներկայացնեն :

Եգիպտոսի համաձայն, այս ժողովը դէմ չէ օտար դրամագլուխներու օգտա – գործման : Պայմանաւ սակայն, որ այդ դրամագլուխները փոխ տրուին միայն եւ չկապուին քաղաքական հարցերու :

Ափրիկէի եւ Ասիոյ երկիրներուն մէջ տնտեսական յառաջդիմութիւն մը արձա – նագրուելու վրայ է, բայց ներկայացու – ցիչներէն չատեր մերժեցին խօսիլ այդ ուղղութեամբ եւ առաջարկեցին որ նախ Խ. Միութիւնը պարզէ տնտեսական իր ծրագիրը : Հետեւաբար, հարկ եղաւ սպա – սել մինչեւ կէսօր, որմէ ետք խորհրդա – յին պատուիրակութիւնը ըսաւ իր խօսքը :

Խորհրդ. պատուիրակութեան դեկա – վարն է Արզումանեան, որ Գահիրէի ժողովին մասնակցող բոլոր երկիրներուն տնտեսական լայն օժանդակութիւն առա –

բանսերէն) : Իր մատուցած ծառայու – թիւնները հայութեան եւ հայկական դա – տին՝ անմոռանալի պիտի մնան :

Երկրորդը՝ Գեր. Պետրոս արք. Քէտի – ճեան, Հոմի Լեւոնեան վարժարանին տնօրէնը եւ Փարիզի նախկին ժողովրդա – պետը, որ ի Տէր հանդեաւ Սեպտ. 17ին Հոմի մէջ : Կրթական, կրօնական եւ հանրային ասպարէզներու մէջ օգտաշատ եղաւ իր գործունէութիւնը, Պոլիսէն ըս – կսեալ :

Ցիշենք նաեւ Աշօ Շահխաթունին՝ ար – ուեստագէտ ու նախկին զինուորական, Դաւիթ Դաւիթխանեանը՝ հանրային գոր – ծիչ, Գարեգին Նժդեհը՝ զինուորական – մտաւորականը, որ փոթորկալից կեանքէ մը վերջ Սիպէրիոյ աքսորավայրին մէջ չիջեցաւ, Պաղտատի Արամ Տիւզեանը՝ համեստ նուիրեալ մը հանրային գործին եւ Աթէնքի Գրիգոր Բարադամեանը՝ յու – նահայ գաղութին երկարամեայ «վարչա – պետ»ը : կարելի չէ թուել բոլորը :

Հայ ժողովուրդի վերջին կորուստն ե – ղաւ Աւետիք Իսահակեան, որ Հոկտեմ – բեր 17ին յանկարծամահ եղաւ Երեւանի մէջ : Իրբեւ ժողովուրդի սրտին խօսող բանաստեղծ՝ իր աչուղական ու քնարեր – գական ստեղծագործութիւնները չատ կա – նուխէն սիրելի դարձուցած էին զինքը բոլորին : Իր գործը պիտի ապրի միշտ :

Կը նօսրանան մեր մտաւորականութեան շարքերը : Նորեր չեն հասնիր՝ լեցնելու անդարձ մեկնողներու ձգած բացը :

Մաղթե՛նք որ 1958ը նուազ անգութ ըլ – լայ հայ ժողովուրդին համար :

ՀՐԱՆՏ – ՍԱՄՈՒԷԼ

ՏԱՂ ՋՄԵՌՆԱՄՈՒՏԻ

—o—

Խաղաղութի՛ւն դաշտերին ,
Ոսկեսաղարթ պարտէզին,
Որոնց պտուղն ու բարին,
Մեր աշխարհը շէ՛ն արին :

Խաղաղութի՛ւն գետերին,
Արծաթացոլ վտակին,
Որոնք պապակ մեր հողին,
Ամրան տապին ջո՛ւր տուին :

Խաղաղութի՛ւն ծառերին ,
Ծաղիկներին մացառին,
Որոնք մարմանդ զո՛վ բերին
Ցոգնավաստակ հողուորին :

Խաղաղութի՛ւն սարերին ,
Ծործորներին, ձորերին,
Որոնց կանաչ լանջերին՝
Մե՛ր հօտերը կեանք առին :

Խաղաղութի՛ւն լճերին,
Աղբիւրներին, ակերին ,
Որոնք կեանքը ցօղեցին
Ու միշտ պայծառ մնացին ...

Մ. ՎԵՍՊԵՐ

ՀԱՑ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԸ ԿԻՑՆԱՑ ԱԼՃԵՐիՈՑ ՃԱԿԱՏԻՆ ՎՐԱՑ

Ցունուդի գիշերը, Դեկտեմբեր 24ին, Ալժերիոյ կռիւներուն ընթացքին մեռած է փիէր Նորհատեան, Ժանթիյէն : Երի – տասարդը տասը ամիս է զօրակոչի են – թարկուած էր եւ ղրկուած Ալժերիա :

ԻՆՏՈՆԵԶԻԱ ՉԻՆՔ Կ'ԱՌՆԷ ՀԱՄԱՑՆԱՎԱՐՆԵՐԷՆ

Ինչպէս ծանօթ է, վեց ամիսէ ի վեր Ինտոնեզիա զինք կ'ուզէր Միացեալ Նա – հանգներէն : Ներկայիս, Ճաքարթայի կա – ռավարութիւնը իր յոյսը կտրած է այլեւս եւ դարձած՝ համամյնավար աշխարհին :

Խ. Միութիւնը իր առաջին օժանդակու – թիւնը ըրած է արդէն : Ինտոնեզիացիք այս քայլը առին՝ Ամերիկացիներէն դժ – գոհ մնալէ ետք :

Խ. Միութիւնը հարիւր միլիառ ֆրանք տուաւ Ինտոնեզիոյ կառավարական բան – կերի մը համաձայն՝ այդ դումարին մեծ մասը պիտի յատկացուի զէնքերու : Այս առաջադրութեամբ՝ յառաջիկայ չաբաթ պատուիրակութիւն մը ճամբայ կ'ելլէ չի – նաստոյտ ընելու համար Արեւելեան Եւ – րոպայի երկիրներուն մէջ : Չինուորական ուրիշ պատուիրակութիւն մը արդէն Եու – կոսլաւիա գացած է :

Ինտոնեզիոյ Հանրապետութեան Նա – խագահ Սոքարնօ Հնդկաստան երթալէ առաջ տեսակցութիւն մը պիտի ունենայ Նախկին փոխ – Նախագահ Հաթայի հետ . այս հանդիպումին ներկայ պիտի ըլլան նաեւ կառավարութեան եւ Խորհրդարա – նին ներկայացուցիչները :

Միւս կողմէ, Պեռական Խորհուրդը հաստատեց 1955ին Պանտունկի ժողովին մէջ համաձայնաւար Զինադադարի կողմէ ե – ղած այն յայտարարութիւնը, որուն հա – մաձայն երկուքուկէս միլիոն ծագումով չինացի Ինտոնեզիացիներ այլեւս չինացի չեն համարուիր : Հետեւաբար, 2·500·000 հոգին այսուհետեւ կը նկատուի Ինտոնե – զիացի :

Ինտոնեզիա այս մէկոցներուն դիմելով՝ կը մտածէ վճռական քայլեր առնել երկ – րին զօրացման համար : Այսուհանդերձ , կը յայտարարեն թէ այս կամ այն խմբ – ակցութեան հետ գործակցիլ՝ չի նշա – նակեր անոնց կողմը յարել կամ որդեգրել անոնց քաղաքականութիւնը :

(Լուրերու շար.ը կարդալ Դ. էջ)

ՆԿՈՒՅԹ ...

—o—

Ես ՈՍՅՂՆ

Հեծելազորի գնդապետ Ալեքսանդր Ալեքսանդրովիչ Ռոստովցևի կինը՝ Նատալյա Իլյինիչնան, ամուսնու հետ միասին ապրում էր Պետերբուրգում, Ֆոնտանկա գետի ափին գտնվող մեծ տանը։ Նրանք ունեին երեք երեխա՝ երկու աղջիկ և մի տղա։ Ամուսինները միմյանց շատ էին սիրում, և նրանց ընտանեկան կյանքը անցնում էր խաղաղ ու երջանիկ։

Գնդապետ Ռոստովցևը ծառայում էր Պետերբուրգի զորանոցներում, իսկ ամռանը ամբողջ գունդը ճամբար էր գնում Կրասնոյե Սելոյում։ Ռոստովցևների ընտանիքը միշտ ամառն անցկացնում էր Կրասնոյե Սելոյի մոտ գտնվող մի գյուղական տանը։ Այդ տունը պատկանում էր Նատալյա Իլյինիչնայի հորեղբորը՝ Ալեքսանդր Ալեքսանդրովիչ Ռոստովցևին, որը ծերացած էր և ապրում էր միայնակ։ Նա ուրախ էր, որ տունը մարդաշատ է լինում, և ամեն ամառ հրավիրում էր իր եղբորորդուն՝ գնդապետին, նրա կնոջը և երեխաներին։

Ռոստովցևների տունը գտնվում էր գյուղի ծայրին, մի բլրի վրա։ Տան առջևից սկսվում էր մեծ պուրակը, որի միջով անցնում էր մի լայն ճանապարհ։ Ճանապարհի երկու կողմերում կանգնած էին հին կաղնիներ և լորենիներ։ Պուրակի հետևում տարածվում էին դաշտերը, որոնց վրա ցորենն ու վարսակը հասունանում էին։

Ամռան մի գեղեցիկ առավոտ Նատալյա Իլյինիչնան իր երեխաների հետ նստած էր տան առջևի պատշգամբում։ Նրանք թեյ էին խմում։ Հանկարծ նրանք լսեցին, որ ճանապարհի կողմից զանգակների ձայն է գալիս։ Ձայնը գնալով մոտենում էր։ Շուտով նրանք տեսան, որ ճանապարհով գալիս է մի մեծ սայլ, որի վրա նստած էին գյուղացիներ։ Սայլը քաշում էին երկու ձիեր։ Սայլի առջևից գնում էր մի գյուղացի, որը ձեռքում բռնել էր մի երկար ձող։ Ձողի ծայրին կապված էր մի զանգակ։

Սայլը մոտեցավ տանը և կանգ առավ։ Գյուղացիները իջան սայլից և սկսեցին հավաքվել տան առջևում։ Նրանք եկել էին Ռոստովցևներից ձկնկիթ գնելու։ Ամեն տարի, երբ Ռոստովցևները գալիս էին Կրասնոյե Սելո, գյուղացիները միշտ գալիս էին նրանց մոտ ձկնկիթ գնելու։

Նատալյա Իլյինիչնան ուրախացավ, որ գյուղացիները եկել են, և ուզեց նրանց հետ խոսել։ Նա հարցրեց, թե ինչպես են նրանք ապրում, ինչ նոր բան կա գյուղում, և այլն։ Գյուղացիները պատասխանում էին նրան։ Նրանցից մեկը՝ ծեր մարդ, ասաց, որ գյուղում ամեն ինչ լավ է, միայն թե ձկնկիթ շատ քիչ կա։ Ասաց, որ ձկները շատ են, բայց ձկնկիթ քիչ։

Նատալյա Իլյինիչնան հարցրեց, թե ինչու է այդպես։ Գյուղացին պատասխանեց, որ ձկները ձմռանը սառցի տակ են ձմեռում, և շատերը սառցի տակ խեղդվում են։ Ձկնկիթ էլ քիչ է լինում, որովհետև ձկները ձվադրելու ժամանակ ցանցերով են բռնում։

Նատալյա Իլյինիչնան ասաց, որ ինքը ձկնկիթ չի ուզում, այլ ուզում է, որ ձկները ձվադրեն։ Գյուղացին պատասխանեց, որ ձկները ձվադրելու ժամանակ ցանցերով չեն բռնում, որովհետև այդ ժամանակ ձկները մոտ չեն գալիս

ԿՅԱՆՔԻ

Թիվ 42.

ԱՂՋԻԿՆԵՐ Ի ՔՂԻ

Ինչպես ամեն տարի, այնպես էլ այս տարի, ամռան սկզբին, մեր գյուղի մոտ հայտնվեցին ամեն տեսակ ցեղերի ներկայացուցիչներ՝ ղարաչիներ, ղարաչիներ, ղարաչիներ,

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԵՈՒԿՈՍԼԱՒԻՈՑ կառավարութեան մէկ բանբերը յայտարարեց, թէ ռուսեւսլաւ յարաբերութիւնները բարելաւուելու վրայ են՝ Խրուշչեւի վերջին յայտարարութե – նէն ետք :

ՄԱԿի ընդհանուր քարտուղար Տակ Համմըրշոլտ ուրբաթ դիչեր Փարիզ հասաւ եւ վարչապետին ու Արտաքին նախարա – բին հետ խորհրդակցութիւններ ունենա – լէ ետք, չաբաթ օր մեկնեցաւ Նիւ Եորք :

ԹՈՒՐՔԻՈՑ երեսփոխան. ազգային ժո – ղովը առջի օր քուէարկեց ներքին կանո – նագրի բարեփոխման սկզբունքը : Եթէ ասիկա վերջնական հանգամանք ստանայ, բաւական ծանրակարգապահութիւն մըպէ – տի պարտադրէ երեսփոխաններուն : Ա – մաձայն առաջին յօդուածին, միայն պի – տի կարենան երեսփոխանական խմբակ – ցութիւն մը կազմել այն կուսակցութիւն – ները որ ունին առնուազն 15 երեսփոխան : Այս յօդուածը կը վերաբերի ուղղակի Հիւրիէթին եւ Միլլիէթին :

Ծրագիրը ներկայացուած է Դեմոկրատ – ներու կողմէ (ներկայիս իշխանութեան դլուխ) որ բացարձակ մեծամասնութիւն մը ունին : Կը նախատեսէ նաեւ թէ ինչ պայմաններու տակ կրնայ վերցնել երես – փոխանական անձեռնմխելիութիւնը : Կ'արտօնէ նաեւ Նախագահին որ արդիլէ, նիստերու պաշտօնական հրատարակու – թեանց մէջ, երեսփոխանի մը կողմէ ար – տասանուած վիրաւորիչ խօսքերը :

ԱՐԹՈՒՐՕ ՊԱՌԷԼ սպանցի գրագէտը որ Անգլիա գաղթած էր, առջի օր մեռաւ : 1940էն ի վեր անգլիական ձայնասփիւ – ռին մէջ կը վարէր Հարաւային Ամերիկա – յի յատկացուած յայտագիրը, Խուան տէ Քաստիլլօ ծածկանունին տակ :

ՖՐԱՆՍԱՑԻ երկաթուղիի ընկերութիւ – նը ճամբորդական տոմսերու դիներու յա – ւելումը պիտի կատարէ յունուար վեցին, փոխանակ Ցունուար մէկին :

ՆՈՒԻՅ

Տէր եւ Տիկին Ուզունեան կը նուիրեն տասը հազար ֆրանք, հետեւեալ կազմա – կերպութիւններուն.—

Հայ Մշակոյթի տան երկու հազար, Լիոնի եկեղեցիի չինութեան երկու հա – զար, Վիէնի Ֆ. Կ. Խաչին երկու հազար, «Ցառաջ»ի բարդաւաճման համար հա – զար, Հ. Ց. Դ. Նոր Սերունդի Հայաստան Թերթի բարդաւաճման հազար :

Իրենց տղուն Բարդէնի ապաքինման եւ Ալժերիայէն վերադարձին առթիւ :

×

Տէր եւ Տիկին Գրիգոր, Ֆլօրա Տո – տաքեան տօներու առթիւ տասը հազար ֆրանք կը նուիրեն Ֆ. Կ. Խաչի օգափո – խութեան կայանին :

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Վիէն.— Այրի Տիկին Մարի Զօրեան եւ զաւակները կը ծանուցանեն թէ այս չո – րեքշաբթի Սէն Մարթէնի եկեղեցիին մէջ, ժամը 9ին, Ս. պատարագ եւ հոգեհան – գստեան պաշտօն կը մատուցուի

Ողբ. ԳՐԻԳՈՐ ԶՕՐԵԱՆԻ

մահուան տարելիցին առթիւ :

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ԿԱՊՈՑՏ ԽԱՉԻ ԱԼՖՈՐՎԻԼԻ
ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ
ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ
ՑՈՒՆՈՒԱՐ 26ԻՆ
Մանրամասնութիւնները յայտրդով :

×

ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ՖՈԼԿԼՈՐԻ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԴԷՍԸ
ՄԱՐՏ 16ԻՆ
Սորպոնի մեծ ամփիթատրոնին մէջ :
Մանրամասնութիւնները յայտրդով :

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ՈՒ ԾՆՈՒՆԴԻ
ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆՑ
ՍԷՆԹ ԱՆԹՈՒԱՆ՝ Ս. ԹԱԴԷՈՍ ԵԿԵՂԵՑԻ
Ցունուար 1, Ս. պատարագ, սկիզբ ժամը 8·30ին, Ս. պատարագ ժամը 10ին :
Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ — ՊՈՄՈՆ
Ցունուար 1, Զորեքշաբթի ԿԱՂԱՆԴ Նոր Տարուան առաւօտեան արարողութիւն ժամը 8·30ին, Գոհաբանական Ս. պատա – րագ ժամը 10ին :

"ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐ"Ը

Ֆ. Կապ. Խաչի Շրջ. վարչութիւնը, Փարիզի շրջանի իր տասը մասնաճիւղե – րով կը տօնէ «Մանուկներու Օր»ը, Ցուն – ուար 2ին, ժամը 13 – 19, Սօսիէթէ Սավանթի մեծ սրահին մէջ, 8 Րիւ Տանի – թոն, մեթրօ Սէն Միշէլ կամ Օտէօն :

Գեղարուեստական բաժին, Կապոյտ Խաչի Իսիլ Խրիմեան դպրոցի աշա – կերտներու երգչախումբը, ղեկավարու – թեամբ ուսուցիչ Պ. Ս. Քալէեանի :

Տիկին Էլ. Բիւզանդի յատկապէս պատ – րաստած մէկ գաւեշտը «ՀՕՓԼԱ ՍՊՈՒՏՆԻԿ» կը ներկայացուի Ալֆորվիլի փոք – րիկներով :

Մենապարեր Օր. Թ. Քէօչկէրեանէ եւ Օր. Թաւօնէ :

Զեռնադաշնակ Պէրնար Տէտէեան :

Ամպարար ԺԷՕ – ԹԻՐՈՒ : Կաղանդ Պապա :

Մուտքը ազատ է :

Ուշադրութիւն.— Իսիէն օթօքարը կը մեկնի ժամը 14·30ին, Խրիմեան վարժա – րանէն :

Ֆ. Կ. Խաչի Մանուկներու Օրուան տօ – նին առթիւ Ցունուար 2, Հինդշաբթի Ա – ֆորվիլէն հանրակառք կը մեկնի ժամը 13 – ին, Պուլվ. Քառնօէն :

Կը խնդրուի ճշդապահ ըլլալ :

×

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

Ֆ. Կապ. Խաչի Պոմոնի մասնաճիւղի վարչութիւնս կը փութայ յայտնել Պոմո – նի յարգելի ծնողներուն եւ հայ հասարա – կութեան թէ՝ պիտի տօնէ «Մանուկներու Օր»ը՝ հինգ Ցունուար, կիրակի, կէսօրէ վերջ ժամը 5ին, Ս. Սահակ – Մեսրոպ սրահին մէջ : Այս առթիւ տեղի պիտի ու – նենան՝ յատուր պատշաճի արտասանու – թիւններ եւ բաշխում կաղանդի նուէր – ներու :

Կը հրաւիրուին՝ ծնողքները եւ մանուկ – ները :

×

ՏՕՆԱԺԱՌ

Ֆ. Կ. Խաչի Վիէնի մասնաճիւղի Մա – նուկներու Օրուան տօնածառը Ցունուար հինգին, կիրակի ժամը երեքին Սէրքլը Կաթոլիկ սրահը :


Երգ, արտասանութիւն, պար եւ Կա – դանդ Պապային նուէրներու բաշխումը :

×

ԿՐԸՆՈՂԸ.— Կապոյտ Խաչի մասնա – ճիւղի Մանուկներու Օրուայ տօնածառ հանդէսը մեծ պատրաստութեամբ Ցուն – ուար 19ին, Րիւ Ժէի սրահին մէջ :

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Պորտոյէն Տիկին Մարիամ Վարդանեան իր եղբօրը Խաչատուր Օհանեանի մահ – ուան տարելիցին առթիւ (Հայաստան) հոգեհանգստեան պաշտօն կատարել կու տայ Ցունուար 7ին, Փարիզի Հայոց Ե – կեղեցին :



Նոր կատարելագործում կօշիկի կրունկներու պատրաստութեան մէջ

Առաջին հայ հաստատութիւնը որ յա – ջողած է մաթիէռ փլաստիք եւ ալիւ – մինիումէ մխացումով չինել անբէկ (էնֆա – սապլը) եւ ճկուն կօշիկի կրունկներ ամէն բարձրութեամբ :

Դիմել՝

VANPLAST
(ՎԱՆԼԵԱՆ)
7, RUE GODOT DE MAUROY
Tél. : OPE. 01-08
Առաւօտները հեռաձայնել՝ ITA 33-38

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԸՐՔ

Ֆ.Կ.Խաչի Մարսէյլի մասնաճիւղինկողմէ կը տօնուի Ցունուար 5ին, ժամը 2ին, Ալհարոնեան ակումբին մէջ :

Սիրուն անակնկալներ, երգ, պար, ար – տասանութիւն :

Սրահին ջերմութիւնը ապահովուած է : Մուտքը ազատ է

×

Կիրնոպլի Ֆ. Կապ. Խաչի դպրոցի տօ – նածառը տեղի պիտի ունենայ Ցունուար հինգին, Րիւ Ժէի սրահը :

Լիոնի մէջ կը տօնուի 12 Ցունուար, կի – րակի կէսօրէ վերջ Ցոյներու սրահը : Կը խնդրուի նկատի ունենալ :

×

ՏՕՆԱԺԱՌ

Իսիլ Խրիմեան վարժարանի տօնածառի հանդէսը տեղի կ'ունենայ, կիրակի 5 Ցունուար, ժամը 16ին, վարժարանին սր – րահին մէջ :

Աշակերտներու կողմէ պիտի ըլլան, արտասանութիւններ, երգեր, պարեր :

Տրամախօսութիւն մը, եւ կաղանդ Պա – պային ժամանումը :

Կը հրաւիրուին բոլոր ծնողքները եւ դաղութը անխտիր :

Ս. ՑՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ

Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնու – թեան տօներուն առթիւ Փարիզի Ս.Ցովհ. Մկրտիչ մայր եկեղեցւոյն մէջ կիրակի 5 Ցունուար, 6 Երկուշաբթի եւ 7 Երեքշաբ – թի տեղի պիտի ունենան հանդիսաւոր ա – րարողութիւններ, նախագահութեամբ՝ Հայրապետական Պատուիրակ Գերչ. Տ. Սերովբէ Եպիսկ. ՄԱՆՈՒԿԵԱՆի :

5 Ցունուար, կիրակի ձրագալոյց Ս. Ծննդեան, սկիզբ ժամերգութեան ժամը 3·30ին, հանդիսաւոր քառաձայն Ս. պա – տարագ ժամը հինգին, ղեկավարութեամբ Արա Պարթեւեանի :

6 Ցունուար երկուշաբթի Տօն Ծննդեան եւ Աստուածայայտնութեան սկիզբ ժա – մերգութեան ժամը 7·30ին, պատարագ ժամը տասնին, կը պատարագէ եւ կը քա – րոզէ Սերովբէ Եպիսկ. ՄԱՆՈՒԿԵԱՆ : Ցաւարա Ս. պատարագի Ջրօրհնէքի կարգ կը կատարուի :

ՑՈՒՇԱՏԵՏՐ

ՓԱՐԻԶ.— Հ. Ց. Դ. «Քրիստափոր» խումբի ժողովը Ուրբաթ, 3 Ցունուար, ժամը 9ին, Ռեժանի վերնայարկը : Կա – րեւոր օրակարգ :

ՄԱՐՍԷՑԼԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆՑ

1 Ցունուար 1958, Զորեքշաբթի . — Աստուծոյ պաշտամունք, Ս. պատարագ ժամը 11ին :

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

Կարդացէք Ծատուր Պէրպէրեանի

ԿԱՐՄԻՐ ՓՈՔՈՐԻԿԸ

(Վէպ՝ երկունքի օրերէն)

Որուն հերոսները, իրենց յանդուգն կեցուածքով ձեղ պիտի ապրեցնեն մերթ ուրախ, մերթ տխուր, բայց յաճախ ծա – փահարելի պահ մը :

Այժմէն օրինակ մը ապահովելու համար դիմել հեղինակին՝

1 bis, Av d'Italie, Paris 13e

կամ հայ գրավաճառներուն :

Գինը՝ 500 ֆրանք : Թղթատարի ծախս – քը գնողին հաշուոյն :

Réveillon

ԿԱՂԱՆԴԻ ԳԻՇԵՐԸ

LE BOSPHORE

74, Rue Sedaine, Paris - Tél. ROQ. 53 70 métro Voltaire

Արեւելեան ճաշօթ ճաշարանին մէջ ընտիր խմիչքներով, ախորժաբեր աղան – դերներով եւ համեղ արեւելեան եւ եւ – րոպական կերակուրներով :

Արեւելեան նուագ Գոլէն նոր ժամա – նակ խումբով, մասնակցութեամբ Ալ. – ՖՈՆՍԻ (ուտ եւ քեմանչէ), ԳԱՐԱԳԻՆի (ջութակ), եւ Գոլոյ ռատիոյի երգչու – հին :

imprimé sur les presses du journal HARATCH
17, Rue Bleue. 17 — PARIS (9e)



réfrigération ménagère et commerciale
Kelvinator
le froid c'est moi ! | 40 ans d'expérience
Société ROHDANIENNE DU FROID - VALENCE (Drôme)
MARCARIAN JEAN (ԳՐԻԳՈՐ ՄԱՐԳԱՐԵԱՆ)
ELECTRICIEN, 1, RUE PELLETERIE, VALENCE,

ԿԱՂԱՆԴԻ Ձեր սեղանները զարդարեցէ՛ք
ԱՄԷՆ ՏԵՂ ՓՆՏՈՒԵՑԷՔ ՊՈՍՏՈՐ
ՀՈՒԶԱԿԱՒՈՐ ՀԷԼՎԱՆ ԵՒ ԼՈՔՈՒՍԸ
ԲԺԻՇԿՆԵՐՈՒ ԿԱՐԾԻՔՈՎ ԱՆՈՆՔ ԿԸ ՊԱՐՈՒՆԱԿԵՆ ՄԵԾԱԳՈՅՆ ՁԱՓՈՎ
ԳՈԼ (ֆալորի)
Անհրաժեշտ մանուկներու համար եւ օգտակար չափահասներուն ու ծերերուն
որոնց կը պարգեւէ աշխոյժ եւ եռանդ
ՊՈՍՏՈՐԻ ԱՐԴԻԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԳԵՐԱԶԱՆՑ�է ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ ԻՍԿ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾՆԵՐԸ
2, Rue Louis Astoin - Marseille
Արտածման համար մասնաւոր պայմաններ

ՕԳՏՈՒԵՑԷՔ ԲԱՑԱՌԻԿ ԱՒԹՔԷՆ
CAMEL ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՄՕՏ՝ 102, BD. VOLTAIRE, PARIS-XI
ԿԸ ԾԱԽՈՒԻՆ՝ ԻՐԵՆՑ ՍԵՓԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԵՂՈՂ,
Անգլիական եւ Աւստրիական կերպասներէ, ճորաձեւ LODEN
ՎԵՐԱՐԿՈՒՆԵՐ ԵՒ AUTOCOAT ՆԵՐ
(Զանազան գոյներ) 8000էն 12·500 ֆր.
Իրենց մօտ կարելի է գտնել նաեւ
ԱՄԷՆ ՏԵՍԱԿԻ ՆՈՐ ԵՒ ԳՈՐԾԱԾՈՒԱԾ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ հիւստ մատչելի գիներով :
SMOKINGի ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ : Մեծաքանակի համար մասնաւոր սակացոյց

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 — Téléph. : PRO. 86 - 60
R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա եւ գաղութներ, տարեկան 3000 ֆր. վեցամս. 1600
Արտասահման՝ տարեկան 3500 ֆրանք: Հատը 12 ֆր.

ԵՐԵՔՇԱԲԹԻ
31
ԴԵԿՏԵՄԲԵՐ
MARDI
31 DECEMBRE
1957

33ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8081 — 33e ANNEE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 13ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3882

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՄԵՐՁԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔԸ 1957ԻՆ

—o—

Տարին կը վերջանայ խաղաղութեամբ :

Երջանիկ է մարդկութիւնը, որ պաղ պատերազմը տաքի չվերածուեցաւ :

1957ի ընթացքին «Ջիղերու պատերազմը» իր դերապոյն աստիճանին հասաւ :

Պահ մը Մերձաւոր Արեւելքի մէջ ներքին խմորումներ եւ արտաքին ազդեցութիւններ նոյնիսկ լրջօրէն սպառնացին խաղաղութեան, նոր աշխարհամարտի մը մղձաւանջին տակ պահելով ժողովուրդները արեւելքի եւ արեւմուտքի մէջ :

Տարին սկսած էր անստոյգ, աւելի ճիշդ մութ հեռանկարներով :

Արեւելքի մէջ Սուէզի անփառունակ արշաւանքը վերջացած էր՝ առանց իրա-ղործելու ծրագրուած նպատակը : Ընդհակառակն՝ այդ շրջանի արդիւն իսկ բարդ խնդիրները աւելի կնճռոտած էին եւ անլուծելի դարձած : Այն աստիճան, որ տակաւին Անգլիա եւ Ֆրանսա կը չարունա-կեն իրենց բանակցութիւնները Եգիպտոսի հետ եւ չեն կրցած վերջնական համաձայնութեան մը յանգիլ՝ գոնէ մասամբ վերականգնելու համար նախկին դոյավճակը եւ նուազագոյնին իշեցնելու իրենց կրած նիւթական ու բարոյական վնասները :

Ջրանցքին վերաբացումն իսկ ամիսներ տեւեց, ահագին կորուստներու ենթար-կելով ո՛չ միայն բաժնետէրերը, այլ ամբողջ Եւրոպան, որուն քարիւղի ճամբան փակուած էր : Սուրիա՝ կանգնած Եգիպտոսի կողքին՝ քանդած էր Իրաքի նաւթամուղ խողովակները՝ արգիլելու համար քարիւղի փոխադրութիւնը դէպի Միջերկրական :

Սուէզի տագնապը ցոյց տուաւ թէ Ֆ. Միւթիւնը ո՛րքան կը չահագրգռուի Մերձաւոր Արեւելքով : Արշաւանքի ամէնէն տաք չրջանին, երբ այլեւս օրերու խնդիր էր յաղթանակը, վճռական դեր խաղացած էին Բուլգանինի ծանօթ նախարարները՝ ուղղուած Անգլիոյ եւ Ֆրանսայի : Ֆորհրդային Միութեան վարչապետը կը սպառնար հիւլէական հրթիռներ ղրկել այդ երկիրներուն վրայ, եթէ չդադրեցնէին Եգիպտոսի դէմ կատարուած յարձակումը՝ զօրակցութեամբ Իսրայէլի :

Այդընհանուրը չէր ուզած ետ մնալ Բուլգանինէն եւ իր կարգին ազդարարութիւն մըն էր ուղղած իր երկու դլխաւոր դաշնակիցներուն :

Այդ թուականէն սկսեալ մրցակցութիւնը Ուաչինկթընի եւ Մոսկուայի միջեւ մեծ համեմատութիւններ ստացաւ : Ու դեռ կը չարունակուի :

Ցունուարի սկիզբը նախագահ Այզընհաուըր հասուբը լիազօրութիւն ստացաւ խորհրդարանէն՝ Միջին Արեւելքը պաշտպանելու համար Ֆ. Միւթեան յարձակումնեբուն դէմ, այս նպատակին յատկացնելով 400 միլիոն տոլար երկու տարուան համար, Ցուլիսէն սկսեալ :

Ամիսկ կոչուեցաւ Այզընհաուըրի վարդապետութիւն, որուն յարեցան Սէուտի Արաբիա, Լիբանան, Իրաք եւ Ցորդանան :

«Պաղտատի Ուխտ»ն էր, որ պատճառ դարձած էր Կրէմլինի մերձարեւելեան նոր քաղաքականութեան : Անգլիա ծրագրած էր Թուրքիոյ, Իրանի, Իրաքի եւ Փաքիստանի միջոցաւ Թումբ կանգնել Ռուսիոյ դէմ : Մոսկուայի վարիչները յաջողեցան՝ Եգիպտոսէն վերջ՝ իրենց կողմը չահիլ նաեւ Սուրիան : Վերջին ամիսներու ընթացքին իր վրան չատ խօսեցնել տուաւ այս երկիրը, որուն սահմաններուն կը սպասնար Թուրքիա :

Բոլչեւիկ գործակալները Ապրիլին ծանր խռովութիւններ յարուցին Ցորդանանի մէջ : Ամերիկեան վեցերորդ նաւատորմը իր սպառնական կեցուածքով փրկեց Հիւսէյն Թագաւորն ու իր վարչաձեւը :

Ներկայիս կացութիւնը որոշ չափով մեղմացած է Միջին Արեւելքի մէջ : Զին-եալ բախումի մը վտանգները անհետացած են : Բուլգանինի գոյդ սպառնագիր-ներէն վերջ, Թուրքիա դղստացած է :

Սուրիոյ վարիչները հետեւելով գնդապետ Նասրի օրինակին, որոշ քանակութեամբ զէնք ստանալէ վերջ, Ֆորհրդային Միութեան հետ կնքեցին տնտեսական ու առեւտրական դաշնագրեր : Քաղաքական դետնի վրայ, երկու երկիրներուն մէջ ալ կը տիրէ նախկին վարչաձեւը, միեւնոյն վարիչներով, որոնք գաղափարախօսական եւ հոգեկան ո՛չ մէկ կապ ունին համայնավարութեան հետ :

«Արաբական Լիկա»ն կը ջանայ համերաչխութիւն ստեղծել անդամ երկիրնե-րու միջեւ, բառնալով տարակարծութիւնները : Դժուարին գործ : Տեղական չահեր, աչխարհագրական ուրոյն պայմաններ արգելք կ'ըլլան չամախ համերաչխ գործակցութեան՝ իրենց ներքին փոխադարձ յարաբերութեանց մէջ :

Սակայն քաղաքական աչխարհի առջեւ, մանաւանդ Միացեալ Ազգերու կազմակերպութեան մէջ միացեալ ճակատով կը ներկայանան միշտ :

Տարին վերջացաւ Գահիրէի խորհրդաժողովով, որուն մասնակցեցան ասիական եւ ափրիկեան 42 երկիրներու դանազան յառաջդիմական կամ ազգայնական կուսակցութեանց ուղեի քան 500 պատգամաւորները պահանջելու համար գաղթատիրութեան բարձումը, 150 միլիոն սըրտուկ ժողովուրդներու ազատագրութիւնը եւ միացեալ չուկայի հաստատումը : Նոր յաջողութիւն մը՝ Մոսկուայի համար :

Նոր տարուոյ սեմին կարելի չէ ըսել թէ մութ ամպերը բոլորովին անհետացած են Մերձաւոր Արեւելքի քաղաքական հորիզոնէն : Նոր տագնապներ կրնան ծագիլ : Մաղթե՛նք որ չվտանգուի խաղաղութիւնը :

ՀՐԱՆՏ – ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՀԱՄԸՐՇՈԼՏԻ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

•

Ինչպէս գրած էինք, ՄԱԿի ընդհանուր քարտուղար Տակ Համըրչոլտ վարչապետ Կայլաուի եւ Արտաքին նախարար Փինոյի հետ խորհրդակցութիւններ ունենալէ ետք, չարաթ օր մեկնեցաւ Նիւ Եորք : Կարճատեւ այս այցելութիւնը «բարեկամական» եւ «անձնական» բնոյթ կը կրէր, այնպէս որ՝ հարցին ծանօթ չրջանակները դաղտնապահ կը մնան :

ՄԱԿի ընդհանուր քարտուղարը բազմաթիւ տեսակցութիւններ ունեցած է բարեկան աչխարհին մէջ՝ արաբ դեկավարներու հետ : Հաւանական է, որ Ամերիկա չհասած չատ չէր ուզեր աղմուկ բարձրացնել Փարիզի մէջ : Բնականաբար Ֆրանսացի դիւանագէտներուն հետ խօսած է Միջին Արեւելք իր կատարած այցելութեան չուրջ : Կը թուի թէ Արտաքին նախարար Փինօ իր մտահոգութիւնը չէ ծածկած այդ երկիրներուն մէջ Մոսկուայի տարած գործունէութեան մասին. սպառնալիք մը կայ ներկայիս Արեւմուտքին մատակարարուող քարիւղին վրայ : Գահիրէի ժողովին մէջ խորհրդ. պատուիրակութեան ձեռք առած միջոցները ուրիչ բանի չեն յանդիր : Սակայն, տակաւին չատ ուչ չէ՝ միջոցներու մասին մտածելու համար : Համըրչոլտ որոչ ապահովութիւններ տուած է՝ որ արաբ իր սպառնական կեցուածքով փրկեց Հիւսէյն Թագաւորն ու իր վարչաձեւը :

Ներկայիս կացութիւնը որոշ չափով մեղմացած է Միջին Արեւելքի մէջ : Զինեալ բախումի մը վտանգները անհետացած են : Բուլգանինի գոյդ սպառնագիրներէն վերջ, Թուրքիա դղստացած է :

Սուրիոյ վարիչները հետեւելով գնդապետ Նասրի օրինակին, որոչ քանակութեամբ զէնք ստանալէ վերջ, Ֆորհրդային Միութեան հետ կնքեցին տնտեսական ու առեւտրական դաշնագրեր : Քաղաքական դետնի վրայ, երկու երկիրներուն մէջ ալ կը տիրէ նախկին վարչաձեւը, միեւնոյն վարիչներով, որոնք գաղափարախօսական եւ հոգեկան ո՛չ մէկ կապ ունին համայնավարութեան հետ :

«Արաբական Լիկա»ն կը ջանայ համերաչխութիւն ստեղծել անդամ երկիրներու միջեւ, բառնալով տարակարծութիւնները : Դժուարին գործ : Տեղական չահեր, աչխարհագրական ուրոյն պայմաններ արգելք կ'ըլլան չամախ համերաչխ գործակցութեան՝ իրենց ներքին փոխադարձ յարաբերութեանց մէջ :

Սակայն քաղաքական աչխարհի առջեւ, մանաւանդ Միացեալ Ազգերու կազմակերպութեան մէջ միացեալ ճակատով կը ներկայանան միշտ :

Տարին վերջացաւ Գահիրէի խորհրդաժողովով, որուն մասնակցեցան ասիական եւ ափրիկեան 42 երկիրներու դանազան յառաջդիմական կամ ազգայնական կուսակցութեանց ուղեի քան 500 պատգամաւորները պահանջելու համար գաղթատիրութեան բարձումը, 150 միլիոն սըրտուկ ժողովուրդներու ազատագրութիւնը եւ միացեալ չուկայի հաստատումը : Նոր յաջողութիւն մը՝ Մոսկուայի համար :

Նոր տարուոյ սեմին կարելի չէ ըսել թէ մութ ամպերը բոլորովին անհետացած են Մերձաւոր Արեւելքի քաղաքական հորիզոնէն : Նոր տագնապներ կրնան ծագիլ : Մաղթե՛նք որ չվտանգուի խաղաղութիւնը :

—

ԳԱՀԻՐԷԻ ԺՈՂՈՎԸ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ ԽԱՆԴԱՎԱՌՈՒԹԻՒՆ ԿԸ ՍՏԵՂԾԵՆ

Կիրակի օր Գահիրէի ափրիկեասիական երկիրներու ժողովը չարունակուեցաւ. բոլոր պատգամաւորներն ալ խօսուքն քննադատեցին «եւրոպական աչխարհա-կալութիւն»ը : Այնուհետեւ, ժողովը յետաձգուեցաւ երկուչաբթի օրուան : Պատգամաւորներուն մեծ մասը այցելութիւններ տուաւ եդիպտական գործարարներուն :

Ժողովին կարեւորագոյն հարցը խորհրդային առաջարկն էր. — Տնտեսական, ելմտական եւ արհեստագիտական օժանդակութիւն բոլոր երկիրներուն՝ առանց պայմանագրութեան : Պէտք է ըսել, թէ հարցը մեծ խանդավառութիւն ստեղծած է ափրիկեասիական երկիրներու մէջ եւ պատգամաւորներուն խօսակցութեանց դլխաւոր նիւթը կը կազմէ : Խորհրդային պատուիրակութեան բաները յիչեցուց, թէ անհատական հաստատութիւնները, օտար ընկերութիւններն ու երկրին արդիւնաբերութիւնը ազգայնացնելէ ետք՝ քառասուն տարուան ընթացքին կարեւոր արդիւնքներ ձեռք ձգեցին եւ երկրին արտադրութիւնը 33 անդամ աւելցաւ :

Խորհրդային բաները ծափահարութեանց պատճառով ընդմիջելէ ետք իր խօսքը, չարունակեց. — Այսօր, Ափրիկէի եւ Ասիոյ աղդերը չատ աւելի լաւ պայմաններու մէջ կը դտնուին՝ քան Ֆ. Միութիւնը, ասկէ քառասուն տարի առաջ : Ներկայիս, դրամատիրական յառաջադէմ երկիրները մենաչնորհներ չունին Ռուսիոյ մէջ :

Հակառակ անոր, որ պատուիրակութեանց մեծ մասը խանդավառ ընդունելութիւն մը ցոյց տուաւ խորհրդային տեղակալին, կարգ մը երկիրներ պաղ վերաբերում մը ունեցան խորհրդային առաջարկներուն նկատմամբ :

Առաջին առիթով Տիկին Նեհրու (Հնդկաստան) և Անուէ Շինկ յայտնեցին թէ նորութիւն չկար խորհրդային առաջարկներուն մէջ եւ ցաւ յայտնեցին, որ ռուսական պատուիրակութիւնը ձգտումնաւոր կերպով զուգահեռ մը ըրաւ իր եւ ամերիկեան օժանդակութեան միջեւ : Ղանայի պատուիրակութիւնը վերապահ էր եւ Սուտանի պատուիրակութեան նախագահը, Ներքին նախարար Ապտէլ յայտարարեց, թէ իր կառավարութիւնը կ'ընդունէր խորհրդային օժանդակութիւնը, բայց երբեք թոյլ պիտի չտայ որ համայնավարները երկիր մտնեն :

Ժողովին մեծագոյն անակնկալը այն էր, որ եդիպտական պատուիրակութիւնը հրաժարեցաւ Ափրիկէի եւ Ասիոյ երկիր-ներու Հասարակաց Շուկայ մը ստեղծելու իր առաջարկէն :

Ցանկարծական այս փոփոխութեան պատճառները թուելով, պատուիրակութեան նախագահ Ռաղէք ըսաւ.

1.— Համայնավար Չինաստան ճանչ-ցուած չըլլալով՝ դժուարութիւններ պիտի ստեղծէ առաջարկուած Հասարակաց Շուկային մէջ :

2.— Արեւմտեան երկիրները արդելք կրնան ըլլալ ափրիկեասիական հասարակաց Շուկային, այն երկիրներու միջոցաւ՝ որոնք տակաւին վարչական ենթակայութիւն ունին Արեւմուտքին :

Միւս կողմէ, Աղեքսանդրիայէն կը յայտնեն, թէ եդիպտոս նոր մարտանաւեր գնած է, ծանօթ չէ՝ թէ ո՞ր երկրէն : Արդարեւ, դեր – Ժողովակալ Սոլիման Նիզէթ, եդիպտական նաւատորմին սպայակոյտին պետը, յայտարարեց.— կրնամ ըսել թէ եդիպտոս այսօր բաւարար թիւով մասնագէտներ ունի՝ կարենալ գործածելու համար ամէնէն արդիական զէնքերը. այս մասնագէտները կրնան օգտագործել նոր մարտանաւերը՝ որ ներկայիս ճամբայ ելած են արդէն, զօրացնելու համար եդիպտական նաւատորմիդը :

Դեր – Ժողովակալը չյայտնեց թէ ո՞վ կը ղրկէր այդ մարտանաւերը. ծանօթ է սակայն, որ վերջերս երկարատեւ պատրաստ մը ըրած էր ան՝ Ֆ. Միութեան մէջ :

Մինչ այս մինչ այն, յեղափոխութենէն ի վեր առաջին անգամ ըլլալով, Նախագահ Նասր հինգ բարձրաստիճան զինուորականներու մատնեչալի տիտղոս ստուաւ :

63 ՊԱՏԱՆԻՆԵՐ ԱՆՑԱՆ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՇԱՐՔԵՐԸ

Դեկտեմբեր 24ին Պէյրութի «Գերմանիկ» սրահին մէջ 63 պատանիներ իրենց երդման արարողութիւնը ընելով անցան Հ. Յ. Դաչնակցութեան չարքերը : Նորադիրներու կնքահայրութիւնը յանձնուած էր ընկեր Կոմսի, որ բացատրեց Դաչնակցութեան էութիւնը :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԱՆԳԱՐԱՑԻ մէջ ցունուար 27 – 30ին տեղի պիտի ունենայ Պաղտատի Ուխտին ժողովը : Ամերիկեան պատուիրակութիւնը պիտի դեկավարէ Արտաքին նախարար Տալլըս :

ՆԱԽԱԳԱՀ ԱՑՁընհաուըր յայտարա-րեց թէ հունգար տարագիրները Միացեալ Նահանգներ ընդունելու համար պատրաստած ծրագիրը վերջ պիտի գտնէ Դեկտեմբեր31ին : 38·000 տարագիրներ ընդունուած են Ամերիկա՝ փեչտայի ա-պրստամբութենէն ի վեր :

ՍԻՊԵՐԻՈՑ մէջ խորհրդային գիտուն-ները ջրածին ռումբի փորձ մը կատարեցին, կը հաղորդէ ամերիկեան հիւլէական ուժի յանձնախումբը :

ՄՈՍԿՈՒԱՑի մէջ Ֆրանսայի եւ Ֆ. Միութեան միջեւ համաձայնութիւն մը ըստորագրուեցաւ՝ 1958ի ընթացքին 700 միլիոն ռուպլիի փոխանակութիւն կատարելու համար : 30 առ հարիւր աւելի՝ քան նախորդ տարին :

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳԵՐՄԱՆԻԱ տնտեսական օժանդակութիւն մը առաջարկեց Սուրիոյ :

ԻՍՐԱՑԷԼի կառավարական տագնապը բարդ հանդոյցի մը վերածուեցաւ : Բազմաթիւ հերքումներէ ետք, այսօր կը յայտարարուի թէ Վարչապետը դարձեալ պատրաստ է հրաժարելու :

ՍԻՑԼԱՆի մէջ պատահած ողողումներու հետեւանքով երկու հարիւր հոգի խեղդամահ եղաւ : 300·000 հոգի անապատան մնացած է :

Ֆ. ՄԻՈՒԹԵԱՆ մէջ յառաջիկայ Մարտ 16ին տեղի պիտի ունենան Գերագոյն Խորհուրդի ընտրութիւնները, կը հաղորդէ մամուլի «Թաս» գործակալութիւնը :

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԳԵՐՄԱՆԻՈՑ Վարչապետ Ատենաուերը Ցունուարի կիսուն պիտի պատասխանէ մատնեչալ Բուլգանինի նամակին :

ԳԱՀԻՐԷի մէջ երեւան ելած են տաս-նեակ հազարներով եդիպտական հինգ ոսկինոցներ, որոնք կը չրջին Եդիպտոսի, Լիբանանի եւ Ֆրանսայի մէջ :

ՊՈՆԷն կը հաղորդէն թէ Արեւմտեան Գերմանիոյ եւ Ֆ. Միութեան միջեւ վերջին հանդիպում մըն ալ պիտի ըլլայ, որմէ ետք յառաջիկայ Մարտին համաձայնագիրը պիտի ստորագրուի : 3·2 միլիառ մարքի փոխանակութեան պիտի ըլլայ երեք տարուան ընթացքին : Գերմանիա քարիւղ եւ բամպակ պիտի դնէ, փոխարէն նաւեր եւ մեքենաներ տալով :

ՀԱՄԱՑՆԱՎԱՐ ՉԻՆԱՍՏԱՆի կուսակցութեան չարքերուն մէջ բազմաթիւ փոփոխութիւններ եղան, կը հաղորդեն փէքինէն :

ՅՈՒՆԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

ԵՒ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆԸ

Բարեգործականը, քանի մը տարի ա – ռաջ, սկսաւ պայքարիլ Լիբանանի եւ Սուրիոյ ազգային իշխանութիւններուն դէմ, որովհետեւ, անկէ հեռացուած էին խորհրդային համակիր տարրերը :

Անցնող պատերազմի չրջանին, դաշ – նակիցները, լայն ազատութիւններ տուած էին համայնավարներուն՝ գործելու մաս – նաւորապէս Լիբանանի մէջ : Համայնա – վար կուսակցութեան հայկական հատ – ուածը, ունէր իր պաշտօնական օրկանը՝ « Ժողովուրդի Ձայն» անունով :

Արաբական պետութիւնները, իրապէս անկախ դառնալէ ետք, աւելի չրջահայ – եաց եղան եւ վերջ տուին հայ համայնա – վարներու սանձարձակ գործունէութեան :

Այս պետմաններու հետեւանքով, ծա – նօթ հոսանքը որդեգրեց նոր գործելա – կերպ մը : Իր մարդիկը տեղաւորեց հայ – կական կազմակերպութիւններու մէջ եւ անոնց խողովակով սկսաւ պատակել գա – դութները :

Պատակումի քաղաքականութիւնը ա – ւելի բացայայտ եղաւ, երբ պայքար ըս – կսաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկո – սութիւնը քանդելու համար : Այս մխուր արարքին դլխաւոր դերակատարները, պո – նէ հրապարակի վրայ, Բարեգործականի վարիչներն էին : Անոնք էին որ փորձեցին « Համախմբականն»ներու նոր կաթողիկո – սութիւն մը ստեղծել : Բայց, Լիբանանի եւ Սուրիոյ կառավարութիւնները մերժե – ցին զայն ճանչնալ եւ ներկայիս պոյու – թիւն ունենալէ զրկած է ան :

Աւելի փոքր չափի վրայ, տարիէ մը ի վեր, նոյն պատակումը սկսաւ յունա – հայ դաղութին մէջ : Ազգ. Կեդր. Վար – չութեան մաս կազմող մէկուկէս ռամկա – վար անդամները, դուրսէն ստացուած հրահանգներու վրայ, քաչուեցան ազգա – յին իշխանութիւններէն, այն ենթադրու – թեամբ՝ թէ պիտի կրնային զայն քայքա – յել՝ յենուելով դաւադիր վարդապետի մը վրայ :

Ազգ. Կեդր. Վարչութիւնը, իր հետ ու – նենալով ամբողջ յունահայ դաղութը, կորուկ միջոցներու դիմեց, պահպանելու համար տարիներէ ի վեր հաստատուած դոյավիճակը :

Ցաւով պիտի ըսենք, թէ Իսահակ վար – դապետի ձախողանքէն ետք, Բարեգոր – ծականն է որ այս անդամ հրապարակ կ'իջնէ չարունակելու համար պատակում – ի քաղաքականութիւնը :

Բարեգործականի անպատմօն օրկան՝ չարաթաթերթը, Նոյեմբեր 30ի թիւով, իր դժգոհութիւնը կը յայտնէր որ, այդ Միութիւնը, մինչեւ հիմա օժանդակած էր յունահայ վարժարաններուն եւ կ'աւելցը – նէր :

« Դաշնակ մարմիններու կամ ուսուցիչ – ներու խնամքին յանձնուած աշակերտնե – րը, վարժարանին գրասեղանները լման են՝ կանխահասօրէն թունաւորուած ու մոլեռանդ հոգիով :

« ... Հ. Բ. Ը. Միութիւնն է, որ նիւ – թական եւ բարոյական բոլոր միջոցները ունի իրեն կապելու համար ժողովրդային զանգուածները եւ ՈՒԶԱՒ ՈՒՂՂՈՒ – ԹԵԱՄԲ (ընդգծումը մեր կողմէ. «Ազատ Օր») պատրաստելու համար նոր սերուն – դը ...») :

Ցունահայ վարժարաններու հայ դամ – պարակներու պատրաստած սերունդը փառաւորեց Հ. Բ. Ը. Միութեան յիս – նամեակի հանդէսները Ալէնբի եւ Սեյա – նիկի մէջ : Նոյն սերունդը նաեւ հրապա – րակ եկաւ Մայիս 28ի հանդէսին, ուր նա – խարար Պ. Քասխամթիսի հիացումին ա – ռարկայ դարձաւ :

Բարեգործականի մէջ վերջերս սպըր – դած քաղաքածուկները, դժգոհ են այս արդիւնքէն եւ որոշապէս կ'ուզեն որ «ու – զած ուղղութեամբ» դաստիարակուի նոր սերունդը :

Այդ ուղղութիւնը այնքան ալ անհաս – կընալի չէ, երբ նախապատերազմեան չր – ջանին, Գոքինիոյ մէջ, ամենայն ապա – տութեամբ, կը հետապնդուէր Գալֆայ – եաններու կողմէ, մուրճ – մանդապի յար – թանակի քարոզչութեամբ : Դեկտեմբեր – եան ոճիրներուն ատեն, դիտենք թէ այդ սերունդը ի՛նչ ծառայութիւններ մատոյց :

Բարեգործականի նոր վարիչները «էջ – միածին»ի անունը չհաղորդելով՝ կ'ու – զեն վերադառնալ նախապատերազմեան չրջանը :

Բայց թող չմոռնան անոնք մեր կեան – քէն ներս տեղի ունեցած երկու հիմնական փոփոխութիւնները :

Առաջինը՝ Ցունաստանի ներկայ փոքր – թիւ դաղութը, տարիներու դառն փորձա – ռութիւններէ ետք, այլեւս չենթարկուիր արտաքին ազդեցութիւններու, չահա – գործումներու : Ան դիտէ այլեւս անտե – սել թէ Բարեգործականի տոլարները եւ թէ Խորհրդային Հայաստանէն եկած կոնդակները :

Երկրորդ՝ Ցունաստան՝ որ ահագին դոհեր տուաւ բոլորովին ձերբազատուե – լու համար կամիրներու խնամակալու – թենէն, ներկայիս խիստ չրջահայեաց եւ զգուշաւոր է արտաքին թափանցումներու դէմ :

Չենք ուզեր աւելի ծանրանալ այս կա – տութեան վրայ, զոր կրնան չտեսնել մի – այն տխմարները եւ քաղաքածուկները :

Էջմիածինը եւ Բարեգործականը, ազատ են ու թող հետեւին իրենց ուզած քաղա – քականութեան՝ օգտագործելով չհասկր ու փառասէր փոքրաթիւ քլիք մը :

Ցունահայ դաղութը, բացարձակ մեծա – մասնութեամբ եւ ազգային խոր գիտակ – ցութեամբ՝ բոլորուած է իր եկեղեցինե – րուն եւ ազգային մարմիններուն չուրջ : Մեր վարժարաններուն մէջ, նոր սերուն – դը պիտի ստանայ հելլենական եւ հայ – կական ազգային դաստիարակութիւն, կատարեալ ներդաշնակութեամբ :

ԹՐՔԱՊԱՏՈՒՄ

ՑՈՅՑԵՐ ԵՒ ԳՐԳՈՒԹԻՒՆԵՐ
ՀԱՅ, ՑՈՑՆ ԵՒ ՀՐԵԱՅ
ՎԱՃԱՌԱՏՈՒՆԵՐՈՒ
ԵՒ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆՑ ԱՌՋԵՒ

—o—

Փոքրամասնութեանց դէմ նոր չարժում մը սկսած է Պոլսոյ մէջ : Այդ պայքարին լծուած է համալսարանական թուրք ու – սանողութիւնը, կարդ մը ծայրայեղու – թիւններու դիմելով : «Հայրենակից, թըր – քերէն խօսէ» վերտառութեամբ ցուցա – տախտակներ պատրաստած են եւ կախած բոլոր թաղերու, հրապարակներու եւ չու – կաներու մէջ : Հայ, յոյն եւ հրեայ վա – ճառատուներու եւ հաստատութեանց տա – ղեւ ալ նախատական արտայայտութիւն – ներ եւ տղեղ վիճաբանութիւններ ունե – ցած են, ստեղծելով դրդռուած մթնոլորտ մը :

Ազահովութեան տնօրէնութիւնը տես – նելով որ գրգռութիւններն ու ծայրայե – ղութիւնները մեծ համեմատութիւններ կը ստանան եւ Սեպտեմբեր վեց – եօթի դէպ – քերը կը յիշեցնեն, հաւաքած է բոլոր ցուցատախտակները եւ արդիլած ցոյ – ցերը :

ՄԻԱՅՆ ԹՐՔԵՐԷՆ ...

« Ազդակ» Թրքական Թերթը այդ առ – թիւ կը գրէ .—

— Երիտասարդութիւնը պայքար մը կը բանայ որպէսզի Ցոյները, Հրեաները եւ Հայերը հանրային վայրերու մէջ Թրքե – րէն խօսին : Խօսք չունինք այս մասին : Նոյնիսկ ուշ մնացած ենք այս ուղղու – թեամբ : Պէյօղլուի փողոցներուն, կղզիի չոգենաւերուն, եւ սինէմաներուն մէջ կը կարծէք թէ Թուրքիոյ մէջ չէք գտնուիր :

Բարեգործականի նախապահներու եւ դանձապահներու ծանօթ գայթակղու – թիւնները կը բաւեն, հասկնալու համար թէ՝ ինչքան անտէր է այդ կազմակերպ – պութիւնը : Ան միշտ պիտի մնայ ենթա – կայ՝ նիւթական ու քաղաքական չահա – գործումներու :

Ժամանակը եկած է, որ ամբողջ Ցու – նաստանի մէջ մեր ունեցած երկու ազգա – յին վարժարանները՝ բոլորովին ձերբա – զատուին Բարեգործականի պայմանաւոր օժանդակութենէն :

Ազգ. Կեդր. Վարչութիւնը, կը վայե – լէ մեր ժողովուրդին անվերապահ վստա – հութիւնը եւ այլեւս ի վիճակի է հոգա – լու իր կրթական կարիքները : Միւս կող – մէ, Հ. Կ. Խաչը պատրաստ է նոր գոհո – ղութիւններ յանձն առնելու եւ օժանդա – կելու՝ առանց պայմաններ պարտադրելու ազգային իշխանութեան :

Բոլորովին վստահ ենք ու լաւատես՝ թէ յունահայ դաղութին առջեւ կը բացուի նոր չրջան մը, ուր ան ձերբազատուած պիտի ըլլայ կաչկանդումներէ եւ վնասա – կար ազդեցութիւններէ :

(Խմբագրական ԱԶԱՏ ՕՐԻ)

Երբ կը խօսինք հայ, յոյն եւ հրեայ հայ – րենակիցի մը հետ, անմիջապէս կ'անդ – րադառնանք թէ մշակոյթի մեծ տարբե – րութիւն մը կայ մեր միջեւ :

Անոնք չատ լաւ գիտեն ֆրանսական, ամերիկեան դրականութեան նորութիւն – ները, գիտեն նաեւ թէ Ցունաստանի մէջ ո՞րն է վերջին հրատարակուած վէպը, սակայն մեզմէ բան չեն գիտեր :

Լաւ, սակայն իրաւունք ունի՞նք վրէ – տանալու եւ ամբաստանելու փոքրամաս – նութեան պատկանող հայրենակիցները : Մենք չենք այս կացութեան պատասխա – նատուն : Մշակոյթն է որ մարդիկը կը մօտեցնէ իրարու : Ես ընտանիքներ կը ճանչնամ, որոնք իրենց լեզուն չեն դի – տեր : Հիմա իրենց զաւակները թրքերէն չեն գիտեր : Ի՞նչու, որովհետեւ պայման – ները փոխուած են :

Հայրենակից թրքերէն խօսէ ըսելով խնդիրը չի լուծուիր :

Աշխարհի ոչ մէկ կողմը այսքան չատ փոքրամասնութեան վարժարան կայ : Ա – մերիկայի մէջ ուր փոքրամասնութիւննե – րը մեծամասնութիւն կը կազմեն, ամէն ոք կը յայտարարէ թէ Ամերիկացի է, ո – րովհետեւ Ամերիկեան վարժարան կը յա – ճախէ եւ ամբողջ ազգը նոյն լեզուն կը խօսի :

Եթէ կ'ուզենք որ հայրենակիցը թրքե – րէն խօսի եւ մեզի մօտենայ մենք ալ պէտք է նոյն բանը ընենք : Պէտք չէ առիթ տանք որ փոքրամասնութեան պատկանող տղաքը ուրիշ մշակոյթ եւ ուրիշ լեզու սորվին :

ԻՆՉ ՊԻՏԻ ԸԼԼԱՆ
ԱՆՈՆՑ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ

« Մխիթար»ն ալ փոքրամասնութեանց վարժարաններուն մասին հետեւեալը կը գրէ .

« Ճնշումներ կը կատարուին ու – սուցման նոր դրութիւն մը հաստատելու համար փոքրամասնութեանց վարժարան – ներուն մէջ : Անդարայի Կրթական Նախա – րարութեան կողմէ ճշդուած մարմին մը, նաեւ ճնշումներ պիտի կատարէ քա – դաքիս մէջ եւ մասնաւորաբար «Քիւլ – թիւր»ի Թուրք ուսուցիչներուն կարծիքը պիտի առնէ այս մասին : «Նախապատ – րաստական մարմինը» որ պիտի ճշդէ փոքրամասնութեանց վարժարաններու ուսուցման նոր դրութիւնը, հետեւեալ ո – րոշումները տուած է իր առաջին աշխա – տութիւններէն ետք :

Ա. Փոքրամասնութեանց վարժարան – ներուն մէջ մայրենի լեզուն պիտի ըլլայ Թրքերէնը, միւս լեզուները պիտի ուսան – դուին իբրեւ օտնական դաս :

Բ.— Այս վարժարաններուն մէջ պիտի չորուի որեւէ ծանօթութիւն, որ դէմ է մեր ազգային չահերուն : Անոասատողները պիտի արգիլուին ուսուցչագործելէ :

Գ.— Վարժարաններու տնօրէնները Թուրք պիտի ըլլան եւ առաջին դիրքը պի – տի գրաւեն դպրոցին վարչական մեքե – նային մէջ :

Դ.— Բոլոր դասագրքերը Թրքերէն պի –

ՀԵՐՈՍ ՄԸ

—o—

Եւ պարպեց իր դինիին բաժակը :

— Նայէ, ըսաւ ուրիշ մը, ցոյց տալով հրացանակիրը, նայէ, սկսաւ մտածել :

— Ի՞նչ բանի վրայ կը խորհիս, հար – ցուց պետը, ոլորելով իր պեխերը :

— Մօ՞րդ մասին :

— Ո՞ւր ձգեցիր զայն :

Երեքը մէկ դարձան դէպի իրեն : Խեղճ մարդը փակեց իր աչքերը եւ խկկոյն վերսին բացաւ զանոնք, որոնք թրջուած էին : Նայեցաւ հեռուն, լեռներէն անդին :

Աւազակները սկսան ծիծաղիլ :

— Ամէնէն զարմանալին այն է, ըսաւ անոնցմէ մին, որ բնաւ չի խօսիր : Ինչո՞ւ համար : Արդեօք հպա՞րտ է ...

— Ո՛չ, համեստ է, ըսաւ ուրիշ մը :

— Վախէն է, եղրակացուց պետը :

Հրացանակիրը ժխտական ձեւով շար – ժեց իր գլուխը :

— Ո՛չ, ո՛չ, գոչեց պետը վճռականու – թեամբ ոտքի կենալով, հիմա կը տես – նենք :

Եւ դառնալով իր ընկերներուն, աւել – ցուց .

— Անպայման հրամանատիր մը կը տա – նէր որուն մէջ հրահանգուած է զմեզ կո – խել : Արդէն չատ ժամավաճառ եղանք : Պէտք է որ որեւէ կերպով փախել տանք իրեն իր զաղտնիքը :

Կալանաւորը սարսռաց եւ վերցուց իր գլուխը, կարծես ըսել ուզելով. «պատ – րաստ եմ» :

Երեք աւազակները եկան ու կանդնեցան անոր առջեւ :

Այդ միջոցին եթէ որեւէ մէկը ուշէր ուշադրութիւն դարձնել երիտասարդ ա – ւազակին որ բարձրութեան վրայ իր պա – հակի պաշտօնը կը կատարէր, պիտի տես – նէր որ ան տերեւի մը պէս կը դողար եւ իր դէմքը պատած էր մահատիպ դալկու – թեամբ մը :

Պետը, նշմարեց այդ բանը, եւ սպառ – նալից ակնարկով մը երիտասարդին յիշե – ցուց իր պարտականութիւնը : Այս վեր – ջինը վերսին ստացաւ իր նախկին վի – ճակը :

— Ուրեմն, ըսաւ պետը վերադառնա – լով գոհին այնպիսի չեչտով մը որ ոչ մէկ առարկութիւն կրնար վերցնել, ուրկէ՞ կուգայիր :

Կալանաւորը կիտեց իր յօնքերը, սեւե – ռեց աւազակին վրայ խօրաթափանց հայ – եացք մը, որուն մէջ կը կարդացուէր իր կորովի կամքին զօրութիւնը, եւ չպա – տասխանեց :

Առանց ուրիշ որեւէ խօսքի, պետը այն – պիսի ուժգնի հարուած մը տուաւ խեղճին ճիշդ ծնօտին, որ լսուեցաւ փշրուող ակ – ռաներու աղմուկ մը :

— Պիտի պատասխանե՞ս հիմա ...

Մարդը կքեց իր դլուխը, թողուց որ իր բերնին մէջ հաւաքուած արիւնը հոսի, իր ակնարկը կեդրոնացուց աւազակին վրայ եւ դլխով դարձեալ ժխտական նշան մը ըրաւ, անեղիտալի հպարտութեամբ մը :

Աւազակը բարկութենէն խածաւ իր շըր – թունքները, զողունի ակնարկ մը փոխա – նակեց իր ընկերներուն հետ, դաժան ժը – պիտ մը երեւցաւ իր դէմքին վրայ, եւ ապա, հանդարտօրէն, քաշեց դրպանէն դանակ մը, բացաւ զայն, մօտեցաւ կա – լանաւորին եւ դանակին սուր ծայրը դրաւ անոր կոկորդին : Խեղճը բնազդաբար ըն – կրկումի չարժում մը ունեցաւ, իրր թէ դանակը արդէն կը մտնէր իր միսին մէջ :

— Մի վախնար, մրմնջեց աւազակը :

Եւ դանակին սուր ծայրը դանդաղօրէն, թեթեւ հպումով մը, կոկորդէն մինչեւ պորտը վար սահեցուց, ճիշդ այնպէս, ինչպէս տախտակի մը վրայ զուգահեռա – կան գիծ մը պիտի քաշէր :

Կարմիր, բարակ գիծ մը նշմարուեցաւ որ յետոյ ժայթքող արիւնին տակ կոր – սուեցաւ : Եւ այդ արիւնը հեղհեղեաւ ին – կաւ դետին կաթիլ առ կաթիլ, արտասու – քի պէս :

— Օ՛հ, օ՛հ, դոչեց պետը, իր անաս – նական ձայնով, կարծեմ կը սկսիս հաս – կընալ ու տեսնել ...

– –Նայէ՛, ինչպէս կը հոսի, ըսաւ մի – սը :

Հրացանակիրը դիտեց վազող արիւնը, դլուխը ցցեց, չեչտակի նայեցաւ աւա – զակներուն քիչ առաջուան արտայայտու – թեամբ, եւ դարձեալ ժխտական նշան մը ըրաւ դլխովը :

Երեք դաղանները իրարու նայեցան, աւելի զարմացած քան բարկացած :

— Ուրեմն դուն մեռնի՞լ կ'ուզես, յի – մար, զոռաց յանկարծ պետը : Զե՞ս տես – ներ որ հոս մինակ ես եւ մեր տիրապե – տութեան տակ կը գտնուիս եւ թէ մենք կրնանք քեզ չան մը նման սատկեցնել : Ի՞նչ կը յուսաս : Քեզ ազատելո՞ւ կու – գան : Ըսէ՛, բան մը ըսէ որ խմանանք, գոնէ բառ մը արտասանէ :

Հրացանակիրը համր կը մնար :

Բարկութենէն մոլեղնած, աւազակնե – րէն մին մերկացուց իր դաշոյնը եւ մօ – տենալով կալանաւորին ուղեց զայն տեղն ու տեղը սպաննել, սակայն պետը արագ չարժումով մը բռնեց անոր թեւը, եւ իր հրացանը ձեռք առնելով, ըսաւ.

— Այս միջոցն ալ փորձենք ...

ԷՄՄՈՆՏ ՏԷ ԱՄԻՃԻՍ

(4 Շար.)

ԿՅԱՆՔԻՑ

(Մահուան էաunուեիճ արբր)

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԸ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՀԱԿԵԱՆԻ

Լիտասէրաբեկ , — եթէ ոչ կեղծ- անուն մը ունի Պետերբուրգը Յովհաննէս Մահակեան , որ ծանօթ է մեր գրական աշխարհին իր գրչանուան տակ , որ մեզի կը գրէ հետեւեալ նամակը :

Ես ոչ միայն Պետերբուրգի , այլ եւ Ռուսիոյ մէջ ամենէն հին հայերէն թերթի խմբագիրն եմ , որ 1828 թուականին սկսաւ հրատարակուիլ Թիֆլիսի մէջ , եւ որ կը շարունակէ մինչեւ այսօր : Ես ալ ունիմ իմ ազգային գործունէութեանս պատմութիւնը , որ կը սկսի 1858 թուականէն , եւ որ կը հասնի մինչեւ 1878 թուականը : Ես ալ ունիմ իմ յուշերս , որոնք կը սկսին 1858 թուականէն , եւ որոնք կը հասնին մինչեւ 1878 թուականը : Ես ալ ունիմ իմ նամակներս , որոնք կը սկսին 1858 թուականէն , եւ որոնք կը հասնին մինչեւ 1878 թուականը : Ես ալ ունիմ իմ ...

Ի՞նչ կ՚ուզէ ինձմէ Յովհաննէս Մահակեան , որ ինծի կը գրէ այսպիսի նամակ մը , որ ինծի կը թուի ինքնագոհ , եւ որ ինծի կը թուի նաեւ ինքնասիրական : Ինչո՞ւ ինծի կը գրէ այս բոլորը , եթէ ոչ որպէսզի ես ալ գրեմ իրեն , եւ ըսեմ իրեն , թէ ես ալ ունիմ իմ գործունէութիւնս , իմ յուշերս , իմ նամակներս , եւ թէ ես ալ ունիմ իմ ...

Ես ալ ունիմ իմ ...

Ես ալ ունիմ իմ ...

կան աչխարհին եւ Արեւմուտքի մէջեւ տնտեսական ու մշակութային յարաբե – րութիւնները պիտի չարունակուին :

Արծարծուած է նաեւ Սուէզի ջրանցքին խնդիրը, ոչ միայն փինոյի եւ Հոլտի, այլ՝ նաեւ ՄԱԿի քարտուղարին եւ Սուէզի ընկերութեան ընդհանուր տնօ– րէն Ժորժ – Փիքոյի միջեւ :

Անկախ այս բոլորէն, միջազգային զա– նազան հարցերու շուրջ ալ խորհրդակ – ցութիւններ եղած են : Վարչապետ Կայ – ետա չէշտը դրած է պինաթափութեան կէ– տին վրայ, յայտնելով թէ փարիզի կա – ռավարութիւնը լրջօրէն չհաւատրդուած է այս խնդիրով : Աւլանտեան Ուխտի ժո– ղովին մէջ Ֆրանսական պատուիրակու – թեան բռնած դիրքն ալ այդ ցոյց կու – տայ :

Վարչապետին եւ Արտաքին նախարա – րին հետ ունեցած խորհրդակցութիւննե – րէն զատ, Համբրչոլտ խօսակցութիւններ ունեցած է նաեւ կարգ մը երեսփոխաննե– րու հետ : Տեղական մամուլը կը հաղոր – դէ, թէ ՄԱԿի քարտուղարը կարեւոր մտտնանչումներ րրած է Ֆրանսացի ե – րեսփոխաններուն :

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԱՌԹԻՒ

Տիկին Նատիրեան հայրարական Ֆրանք կը նուիրէ Փարիզի Մշակոյթի տան Շ. Միսաքեան սրահին եւ Մոնմորանսիի հանդստեան տան : Ստանալ «Ցառաջ»էն :

ՑԱԻԱԿՑՈՒԹԻՒՆ

ԵՒ ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ

Սէն Ժերմէ (Մարսէյլ) Ս. Սահակ – Մեսրոպ եկեղեցւոյ թաղ. խորհուրդը իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ թաղիս ազգայիններէն Տէր եւ Տիկին Մա– նուկ Գասպարեան եւ Տէր եւ Տիկին Ցա – րութիւն Մինասեանի (Փարիզ) իրենց մօր Այրի Տիկին Մագրուհի Վարպետեանի տխուր մահուան առթիւ :

Այս առթիւ խորին չնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուէրները փոխան ծաղկեպսակի, ի նպաստ թաղին եկեղե – ցիին եւ դպրոցին : Պ. Արչամ Պապաեան երեք հազար ֆրանք, Այրի Թագուհի եւ Նարին Մակարեան երկու հազար ֆր. , Պ. Անթուան (Պառ Թապա) 1500 ֆր. , իսկ Այրի Տիկին Վեհանուշ Ասուրեան , Տօքթ. Ցակոբ Սիվրիհսթրլեան , Պ. Ան– թառամեան հազարական Ֆրանք, թաղիս դպրոցին, Պ. Հմայեակ Կարապետեան , Մկրտիչ Աւետիսեան, Պօղոս Ցակոբեան , Հայկ Զուգուրեան, Նազար եւ Գրիգոր Իննէճեան, Օննիկ Նիկողոսեան, Ոսկիան Շէրպէթեան, Աբրահամ Մանկասարեան եւ Պ. Սվազլեան հինգ հարիւրական Ֆր. դպրոցին : Պ. Կարապետ Կասաճեան հա – զար Ֆր. թաղիս աղքատներուն :

Պ. Պ. Ռուբէն Ասաբլըքեան , Ցարու – թիւն Ժամկոչեան հազարական Ֆրանք , իսկ Կարապետ Աճէմեան, Ցովհ. Ժամ – կոչեան, Կարապետ Եսաեան, Պ. Անթա – ռամեան հինգ հարիւրական Ֆր. թաղիս եկեղեցւոյ պայծառութեան :

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Մարսէյլի Ամասիոյ Հայր. Միութեան վարչութիւնը իր խորին չնորհակալու – թիւնները կը յայտնէ տարեկան պարա – հանդէսին մեծապէս սատարող բարեկամ– ներուն եւ յանձնախումբի անդամներուն, որոնք ամէն կարելի ջանք թափեցին պա – րահանդէսի յաջողութեան :

× Օպընայէն հայրենակից Բիւզանդ Ժամկոչեան հազար Ֆր. կը նուիրէ Մի – ութեան, իր աղջկան Օր. Զուարթի, անց– լերէն լեզուի դասախօս նչանակուելուն առթիւ պանեոլի քոլէժին մէջ : Մեր չնոր– հաւորութիւնները :

Ամասիոյ Հայր. Միութիւն

×

Ս. Անթուանի Ս. Թագէոս եկեղեցւոյ թաղականութիւնը չնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուէրները :—

Տիկին Իսկուհի Մանուկեանի մահուան քառասունքի առթիւ Մարտիրոս Մանուկ– եանի կողմէ դպրոցին հազան հինգ հա – րիւր , Դպրաց Դասին հինգ հարիւր , Ժաչիկ Նոնոյեան հազար, եկեղեցւոյ բա– րեզարդութեան Ցարութիւն Փիլիկեանի մահուան առթիւ Պ. Ցակոբ Թորոսեան հազար Ֆրանք փոխան ծաղկեպսակի :

ՑԱՒԱՂ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԱՌԹԻՒ

Պ. Նչան Փալտեեան մէկ տարեկան «Ցառաջ» կը նուիրէ Տէր եւ Տիկին Գրի– գորեանի (Ամերիկա) :

Նոր Տարուան առթիւ Մարսէյլէն Պ. Ս. Համալեան մէկ տարեկան «Ցառաջ» կը նուիրէ Տէր եւ Տիկին Լ. Օտապաչեանի (Մարսէյլ) :

"ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐ"Ը

Ց. կապ. Խաչի Շրջ. վարչութիւնը , Փարիզի չրջանի իր տասը մասնաճիւղե – րով կը տօնէ «Մանուկներու Օր»ը, Ցուն– ուար 2ին, ժամը 15 – 19 , Սօսիէթէ Սավանթի մեծ սրահին մէջ, 8 Րիւ Տանի– քոն, մեթրօ Սէն Միշէլ կամ Օտէօն :

Գեղարուեստական բաժին, կապոյտ Խաչի Իսիի Խրիմեան զպրոցի աչա – կերտներու երգչախումբը, ղեկավարու – թեամբ ուսուցիչ Պ. Ս. Քալչեանի :

Տիկին Էլ. Բիւզանդի յատկապէս պատ– րաստած մէկ գաւեշտը «ՀՕՓԼԱ ՍՊՈՒՏ – ՆԻԿ» կը ներկայացուի Ալֆորվիլի փոք – րիկներով :

Մենապարեր Օր. Թ. Քէօչկէրեանէ եւ Օր. Թարօնէ :

Ձեռնադաչնակ Պէրնար Տէտէեան :

Աճպարար ԺԷՕ – ԹԷՐՈՍ : Կաղանդ Պապա :

Մուտքը ազատ է :

Ուչադրութիւն.— Իսիէն օթօքառը կը մեկնի ժամը 14·30ին, Խրիմեան վարժա – րանէն :

Ց. Կ. Խաչի Մանուկներու Օրուան տօ– նին առթիւ Ցունուար 2, Հինգչաբթի Ա.– ֆորվիլէն հանրակառք կը մեկնի ժամը 13– ին, Պուլվ. Քառնօէն :

Կը խնդրուի ճշդապահ ըլլալ :

×

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

Ց.Կ.Խաչի Մարսէյլի մասնաճիւղինկողմէ կը տօնուի Ցունուար 5ին, ժամը 2ին, Ահարոնեան ակումբին մէջ :

Սիրուն անակնկալներ, երգ, պար, ար– տասանութիւն :

Սրահին ջերմութիւնը ապահովուած է :

Մուտքը ազատ է

×

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

Ց. կապ. Խաչի Պոմոնի մասնաճիւղի վարչութիւնս կը փութայ յայտնել Պոմո– նի յարգելի ծնողներուն եւ հայ հասարա– կութեան թէ՝ պիտի տօնէ «Մանուկներու Օր»ը՝ հինգ Ցունուար, կիրակի , կէսօրէ վերջ ժամը 5ին, Ս. Սահակ – Մեսրոպ սրահին մէջ : Այս առթիւ տեղի պիտի ու– նենան՝ յատուր պատչաճի արտասանու – թիւններ եւ բաչխում կաղանդի նուէր – ներու :

Կը հրաւիրուին՝ ծնողքները եւ մանուկ– ները :

×

ՏՕՆԱԾԱՌ

Իսիի Խրիմեան վարժարանի տօնածառի հանդէսը տեղի կ'ունենայ, կիրակի 5 Ցունուար, ժամը 16ին, վարժարանին սը– րահին մէջ :

Աչակերտներու կողմէ պիտի ըլլան , արտասանութիւններ, երգեր, պարեր :

Տրամախօսութիւն մը, եւ կաղանդ Պա– պային ժամանումը :

Կը հրաւիրուին բոլոր ծնողքները եւ դաղութը անխտիր :

×

ՏՕՆԱԾԱՌ

Ց. Կ. Խաչի Վիէնի մասնաճիւղի Մա – նուկներու Օրուան տօնածառը Ցունուար հինգին, կիրակի ժամը երեքին Սէրքըլը Կաթոլիկ սրահը :

Երգ, արտասանութիւն, պար եւ կա – դանդ Պապային նուէրներու բաչխումը :

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Լիոնի եկեղեցաչէն Ցաճնախումբը չը – նորհակալութեամբ ստացաւ հետեւեալ դումարները , հաւաքուած Ազգ. Միու – թեան ատենադպիր Պ. Ց. Վարժապետ – եանի եւ Պ. Մարզար Մարզարեանի կող– մէ.— Պ. Պ. Ճ. Պահատուրեանէ 50·000 Ֆրանք, Գրիգոր Հաւկոտուքեան 10·000 Ֆրանք, Ստեփան Խոչորեան 10·000 Ֆր., Գէորգ Հաւկոտուքեան հինգ հազար, Կա – րապետ Հաւկոտուքեան հինգ հազար, Ցա– րութիւն Թօփսաղալեան երկու հազար :

Կ'ՈՒԶՈՒԻ՝

Երիտասարդ օրիորդ մը գրասենեակի աչխատանքի համար (տաֆթիլօ եւն.) Դիմել անձամբ «Ցառաջ»ի վարչութեան :

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ՈՒ ԾՆՈՒՆԴԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆՑ

Ս. ՑՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ

5 Ցունուար, կիրակի ձրագալոյց Ս. Ծննդեան, սկիզբ ժամերգութեան ժամը 3·30ին, հանդիսաւոր քառաձայն Ս. պա– տարագ ժամը հինգին, ղեկավարութեամբ Արա Պարթեւեանի :

6 Ցունուար երկուչաբթի Տօն Ծննդեան եւ Աստուածայայտնութեան սկիզբ ժա – մերգութեան ժամը 7·30ին, պատարագ ժամը տասնին, կը պատարագէ եւ կը քա– րոզէ Սերովբէ եպիսկ. ՄԱՆՈՒԿԵԱՆ : Ցաւարտ Ս. պատարագի Ջրօրհնէքի կարգ կը կատարուի :

ՄԱՐՍԷՑԼԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆՑ

1 Ցունուար 1958, Չորեքչաբթի . — Ամանորի պաչտամունք, Ս. պատարագ ժամը 11ին :

ԼԻՈՆԻ ԵԿԵՂԵՑԻ

Շաբաթ երեկոյ ձրագալոյց, սկզբն. ժամը հինգին : Ս. պատարագ ժամը եօ – թին : Գիրքերու ընթերցումը կը կատար– ուի երկսեռ աչակերտութեան կողմէ :

Կիրակի Ս. Ծննդեան պատարագ , սկզբ– նաւորութիւն ժամերգութեան ժամը եօ– թին, Ս. պատարագ ժամը տասնին : Ջրօրհնէքի արարողութիւն ժամը 11·30– ին : Կը հրաւիրուի Լիոնի եւ չրջաններու հաւատացեալ հայ ժողովուրդը ներկայ ըլլալու հոգեչունչ արարողութեանց :

ՍԻՆԹ ԱՆԹՈՒԱՆ՝ Ս. ԹԱԴԷՈՍ ԵԿԵՂԵՑԻ

Ցունուար 1, Ս. պատարագ , սկիզբ ժամը 8·30ին, Ս. պատարագ ժամը 10ին :

4 Ցունուար, Ճրագալոյց, երեկոյեան ժամերգութիւն ժամը հինգին, Ս. պատա– րագ ժամը վեցին :

5 Ցունուար, Ս. Ծնունդ : առաւօտ, Սկիզբ ժամերգութեան ժամը ութին, Ս. պատարագ ժամը տասնին, Ջրօրհնէք 11– ին :

Այս արարողութիւններ կը կա – տարուին Ս. Եկեղեցւոյ երկսեռ Դպրաց Դասու կողմէ, ղեկավարութեամբ Օր. Սիւզան Պօյաճեանի :

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ — ՊՈՄՈՆ

Ցունուար 1, Չորեքչաբթի ԿԱՂԱՆԴ Նոր Տարուան առաւտն արարողութիւն ժամը 8·30ին, Գոհաբանական Ս. պատա– րագ ժամը 10ին :

4 Ցունուար, Շաբաթ, Ճրագալոյց , երեկոյեան արարողութիւն եւ Ս. պատա– րագ ժամը 3·30ին :

5 Ցունուար, կիրակի, Ծնունդ ,

Սկիզբ առաւտեան արարողու – թեանց ժամը 7·45ին, հանդիսաւոր Ս. պատարագ ժամը 9·30ին, Ջրօրհնէքի արարողութիւն 11·45ին :

6 Ցունուար , երկուչաբթի, Ճիչատակ Մեռելոց, առաւտեան արարողութիւնք ժա– մը 8·30ին, Ս. պատարագ եւ հոգեհան – գստեան պաչտօն կը մատուցուի

Ողբ. ԳՐԻԳՈՐ ՉՕՐԵԱՆի մահուան տարելիցին առթիւ :

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Վիէն.— Այրի Տիկին Մարի Չօրեան եւ զաւակները կը ծանուցանեն թէ այս չո – րեքչաբթի Սէն Մարթէնի եկեղեցիին մէջ, ժամը 9ին, Ս. պատարագ եւ հոգեհան – գստեան պաչտօն կը մատուցուի

Ողբ. ԳՐԻԳՈՐ ՉՕՐԵԱՆի մահուան տարելիցին առթիւ :

ՑՈՒՇԱՏԵՏՐ

ՓԱՐԻՉ.— Հ. Ց. Դ. «Քրիստափոր» խումբի ժողովը Ուրբաթ, 3 Ցունուար , ժամը 9ին, Ռեժանի վերնայարկը : Կա – րեւոր օրակարգ :

ՄԱՐՍԷՑԼ.— Գղձի Հայր. Միութեան ընդհ. ժողովը այս կիրակի կէսօրէ վերջ, ժամը երեքին, Րիւ տէ Քոնվալէսան, Ա– հարոնեան սրահը : Շատ կարեւոր օրա – կարգ : Շրջաբերականներու ընթերցում, Ամերիկայի կեդր. վարչութենէն : Կը հր– աւիրուին բոլոր հայրենակիցները ան – խտիր :

ԽՆՋՈՅՔ

Համա–Ջարսանճաղի Հայր. Միութեան Լիոնի մասնաճիւղին ընտանեկան խնջոյքը նոր տարուան առթիւ , այս կիրակի կէս օրէ ետք ժամը 2ին, Ցոյներուն սրահը, 5 Րիւ Պոնըփուա :

Հայկական եւ եւրոպական պարեր եւ անակնկալներ : Ճոխ պիւֆէ, համեղի ժա– մանց :

Մուտքը ազատ է :

Réveillons

Chez SASSOUNI

ԿԱՂԱՆԴԻ

Զուարթ ու հաճելի Զարթօնքը

(24 եւ 31 Դեկտեմբերի գիշերները)

Մի մտածէք ուր անցընելու մասին

ՍԱՍՈՒՆԻԻՆ մօտ ի հարկէ

Ուր պիտի գտնէք ճոխ ու պէսպի– սուն ուտելիքներ եւ խմիչքներ

Բոլորդ աղդականներով եւ բարե – կամներով ժամադրուեցէք

Եւրոպական եւ արեւելեան նուագ

ՍԱՍՈՒՆԻԻՆ

31. RUE D'ALEXANDRIE, PARIS - 2e

Tél. GUT. 92-65

ԼԻԼԱՑԻՆ, ԼԻԼԱՑԻՆ...

ՁԵՐ ԶԱՐԹՕՆՔԸ՝

ԿԱՂԱՆԴ

Կրնաք ճոխ սեղանի մը շուրջ, անցընել

ԼԻԼԱՑԻՆ

24, RUE ST-LAZARE PARIS 9

TÉL. : TRI 31-62

Արեւելեան թէ եւրոպական համադամ կերակուրներ, ընտիր խմիչքներ եւ մանաւանդ զուարթ մթնոլորտ մը հաճելի նուագով

եւ այս բոլորը 2000 ֆր.

— իւրաքանչիւր անձի —

Ապահովեցէք ձեր սեղանները հեռաձայնելով ժամը 9ն 15

TRI 31-62

Imprimé sur les presses du journal HARATCH

17, Rue Bleue. 17 — PARIS (9e)

ԿԱՂԱՆԴԻ Ձեր սեղանները զարդարեցէ՛ք

ԱՄԷՆ ՏԵՂ ՓՆՏՐԵՑԷՔ ՊՈՄՓՈՐ

ՀՐՁԱԿԱՒՈՐ ՀԷԼՎԱՆ ԵՒ ԼՈՒՌՈՒՄԸ

ԲԺԻՇԿՆԵՐՈՒ ԿԱՐԾԻՔՈՎ ԱՆՈՆՔ ԿԸ ՊԱՐՈՒՆԱԿԵՆ ՄԵԾԱԳՈՅՆ ՁԱՓՈՎ

ԳՈԼ (ֆալորի)

Անհրաժեշտ մանուկներու համար եւ օգտակար չափահասներուն ու ծերերուն

— որոնց կը պարգեւէ աշխոյժ եւ եռանդ —

ՊՈՍՓՈՐԻ ԱՐԴԻԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԳԵՐԱԶԱՆՑԷ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ ԻՍԿ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾՆԵՐԸ

2, Rue Louis Astoin - Marseille

Արտածման համար մասնաւոր պայմաններ